Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Lwu
448

$\int_n^{\infty} \frac{dy}{y}$ —

H
P 90.

~~H. 7~~ 2

252

Heurtaux.

Traité de Théologie

Vol. II

№ 1134.
II 5.
П 4
№ 901.

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿԱՆ

ՀԱՏՈՐ Բ

Լաց
448

Ա Տ Տ Ո Ւ Ա Ծ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Տ Ե Ս Ա Կ Ա Ն

ՀԱՄԱՌՕՏԵԱԼ Ի ՋԵՌՆ

ՏԵԱՌՆ ԵԳՈՒԱՐԴԱՑ Վ. ՀՈՒՐՄՈՒԶԻ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՇԻՐԱԿԱՑԻ

Ի ՄԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

№ 1134-Х
901-2

10,0
40704

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

БИБЛІОТЕКА
ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԱՐՏԻՒՏԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՏԵՓ. ՀԿ.

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՍ

1862 ՌՅԺԲ

448-2009

Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Տ Ե Ս Ա Կ Ա Ն

Ճ Ա Ռ Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ

Ց Ա Ղ Ա Գ Ս Մ Ա Ր Դ Ե Ղ Ո Ւ Թ Ե Ա Ն

Մարդեղութեանն խորհուրդ ոչ որպէս գ՚երրորդութեանն է. զի սա՛ ի նոյն ինքն յիսկութենէ աստուածութեան հարկաւ և՛ ի յաւիտենից միշտապոյ, իսկ մարդեղութիւն ազատաբար և՛ ի ժամանակի նեթ գործեալ յ՚աստուծոյ, սքանչելիք գերագոյն իմաստութեան նորա՝ բարութեան և ողորմութեան, և հանդէս հրաշից մարդասիրութեան նորա. "Ո՛վ ի այնպէս սիրեաց յ՚աստուած զաշխարհ, մինչև զորդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ՛ ի նա՝ մի կորիցէ, այլ ընկալցի զկեանս յաւիտենական,,. (Յհ. ՟ի. 16): Եւ առաքեալն կոչէ զսա խորհուրդ աստուածպաշտութեան. "Եւ յայտնի իսկ մեծ է խորհուրդն աստուածպաշտութեան, որ երևեցաւ մարմնով,,. (Ա. Տիմ. ՟ի. 16): Վասնզի մարդեղութիւնն Քրիստոսի է հիմն և հաստատութիւն Ճշմարիտ աստուածպաշտութեան:

Յերկուս դասս բաժանին հակառակորդք խորհրդոյս. զի կէսք չհաւատան ամենևին՝ որպէս Հրեայք, անհաւատք, և բանականքն աղանդաւորք. և կէսք ոչ որպէս էն՝ հաւատան յայն, որպէս հերեսիոսեալքն: Ընդդէմ երկաքանչիւրոցն միայ մեզ ցուցանել ուրոյն ջՃշմարտութիւն:

ՄԱՍՆԱ

ՑԱՂԱԳՍ ԱԻԵՑԵԱՑ ԵՒ ԱԿՆԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԵՍԻԱՑԻՆ

Եղեն իսկ, որք ուրացան՝ Թէ ուրեք երբեք խոստացեալ էին Աստուծոյ առաքել զԱեսիան, կամ երբեք ակնկալեալ նմա. որպէս Աղոթիոս, և ոչ սակաւք՝ ինքեանդիցն գերմանացւոց, և ես և Ալ ոլթէռ։ Եւ եղեն դարձեալ, որք Թէպէտ և զաւետին Աստուծոյ և զակնկալութիւն երբեք ընկալեալ՝ այլ զնշանակութիւն Աեսիային կամակորեցին, ոչ զԱրիստոս իմանալ այնուիկ՝ այլ տարտամ իմն և բազմապատիկ. որպէս Աալաթիոր անհաւատ հրեայն, որ Աեսիայիս իմացաւ զազատիչ ոք՝ի քաղաքական գերութենէ իմաստուն և հզօր, Թէպէտ և հեթանոս և կռապաշտ, որպիսի ոք Ալիւրոան էր՝ զոր սուրբ գիրք օծեալ կոչեն որպէս զԱեսիայն. վասն որոյ համարի և եկեալ զԱեսիայն և զաղոց։

Ալ ինչ ընդհատ՝ի սմանէ և սկզնահմանեաւնք վրէժխընդիր ոք ազատութեան համարին զԱեսիայն և նոքօղոշ ազգի մարդկան ըստ բարոյականին։

Իսկ բանականք առ՝ի խուսել՝ի զօրութենէ բանից սուրբ գրոց՝ իմանալի իմն զԱեսիայն համարին հաստատիչ երջանիկ Թագաւորութեան, այսինքն ոսկեղենիկ դարուն, զոր մարգարէքն նկարագրեն և աւետեն Երեից, և յորում ազգ Հնմարիտ աստուածապաշտից բարեկրօն և բարեկեցիկ կենօք յերկրի աստ կենցաղավարեալ, ՚ի նոյն և ՚ի Հանդերձեալն յարատեւեցեն՚ի նոր երանութիւն, զոր յաձախ ուրեք աւետեն սուրբ գիրք։

Ընդդէմ ամենեցուն սոցա ասացուք յայլ և այլ գլուխս։

ԳԼՈՒԽ Ա

ՋԻ ԽՈՍՏԱՑԱԻ ԱՍՏՈՒԱԾ Ի ՀԻՆ ՕՐԻՆՍ ՋՄԵՍԻԱՑՆ, ԵԻ ՆՄԱ ՅԱՄԵՆԱՑՆ ԹԱՄԱՆԱԿԻ ԱԿՆԿԱԼԵԱԼ ՄՆԱՑԻՆ ՀՐԵԱՑՔ

Սպառնացաւ Ա՛ստուած սատանայի՛ ի դէմս օձին, և ասէ. "Արձից թշնամութիւն՛ ի մէջ քո և՛ ի մէջ կնոջդ, և՛ ի մէջ զաւակի քո և՛ ի մէջ զաւակի նորա. նա սպասեսցէ քում գլխոյ, և դու սպասեսցես նորա գարշապարի,,. (Ծն. Գ. 15): Որով նախ զպատիժ սատանայի ազդ առնէ. երկրորդ՝ զի՛ ի ձեռն Ա՛ստիայի ըզպատիժն զայն մնայր նմա կրել. և երրորդ՝ զի նովաւ լինելոց էր ազգի մարդկան ազատութիւն՛ ի գերութենէ սատանայի: Ա՛ռաջինն յիրաց իսկ անտի յայտ է, զի ոչ էր մարթ անբան օձին հրապուրել զնախամայրն. վասն որոյ որպէս դևն էր՛ ի դէմս օձին հրապուրօղն, նոյնպէս և ընդդէմ նորա էր սպառնացեալն պատուհաս: Եւ այսպէս իմացան զայս գարուց՛ ի գարս նախնիք, որպէս իմաստունն ասէ. (Խոսպ. Ը. 24.) "Ա՛խտանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ,,: Եւ փրկիչն մեր ասէ. (Յհ. Ը. 44.) "Ո՛ւ նա մարդասպան էր՛ ի սկզբանէ,,: Եւ առաքեալն Յովհաննէս ասէ (Յայտ. ԺԲ. 9.) "Եւ անկաւ վիշապն մեծ, օձն առաջինն՝ որ անուանեալ կոչի բնեղզեբուզ և սատանայ, որ մոլորեցոյց զամենայն տիեզերս երկրի,,:

Յարձեալ և երկրորդն, այսինքն զի՛ ի ձեռն Ա՛ստիային մնայր սատանայի կրել զսպառնացեալն պատերազմ, յայտ է՛ ի բանէ անտի՝ զի ասէ. "Ա՛յս (այսինքն զաւակ նորա) սպասեսցէ քում գլխոյ,,:

Եւ՛ ի յաղթանակէ Ա՛ստիային զՀետ գայ ինքնին և երրորդն, այսինքն ազատութիւն ազգի մարդկան՛ ի գերութենէ դիւին:

Ո՛նոյն խոստումն յանցանել ժամանակաց հաստատեաց Ա՛ստուած ստէպ առ նահապետս, զի անմոռաց կացցէ առ նոսա. որպէս առ Ա՛բրահամ (Ծն. ԺԲ. 3.) "Ո՛րհնեացին՛ ի քեզ ամենայն ազգք երկրի,,: Եւ յարձեալ (ԻԲ. 18.) "Ո՛րհնեացին՛ ի զաւակի քում

ամենայն ազգք երկրի ,,։ Եւ առ Իսահակ և առ Յակոբ ընոյն երկրորդեալով (ԻՇ. 4։ ԻԸ. 14)։ Եւ զի ՚ի բանս յայտնութիւն զիրկինչն պարտ է իմանալ, յայտ է ՚ի հինաւանդ իմացուածոյ հրէական ազգին. զոր և առաքեալն բացատրէ. (Գաղ. գ. 8.) “Յառաջագոյն գիտեր գիր՝ եթէ ՚ի հաւատոյ անտի արդարացուցանէ Աստուած զհեթանոսս, յառաջագոյն խոստացաւ Աբրահամ՝ եթէ ՚ի քեզ օրհնեսցին ամենայն ազգք ,,։ Ոյոյն հաստատեն և գուշակութիւնքն Յակոբայ և մարգարէից, որք զժամանակ գալստեան Քրիստոսին և զտեղի, զհանգամանս նորա և զգործս նախասպատմեցին, որպէս տեսցուք ատ ՚ի տարի։

Իսկ ակնկալութիւն Աբրահամին, զոր և նահապետն Յակոբ յօրհնութիւնս իւր աւանդեաց (ԾՆ. խթ. 10.) “Մինչև եկեսցէ նա՝ որոյ իւրն է հանդերձեալքն, և նա է ակնկալութիւն հեթանոսաց ,,, այնպէս հաստատուն էր առ Հրեայս, զի աղանդք նոցին՝ ՚ի բազում ինչ իրս տարաձայնեալք ՚ի միմեանց՝ միաբանք էին առնելոցն ՚ի մասին յայսմիկ։ Զայն որոյ և ատամբացիք՝ որ բազում գարուք յառաջ քան զգերութիւնն Բաբելոնի հերձեալ էին ՚ի հրէական ազգէն, և ըստ յօգուտս քննաբանից՝ զհնգամատեանն եւեթ մխիթարական ընդունէին, սակայն և նոքա հաւատային յակնկալեալն Աբեսիա, որպէս յայտ է ՚ի բանից սամարուհւոյն (Յհ. դ. 25. 29. 42.) “Գիտեմք զի Աբեսիա գայ, անուանեալն Քրիստոս։ ... Տեսէք զայր մի՝ որ ասաց ինձ զամենայն, որ ինչ իմ գործեալ է. միթէ նա իցէ Քրիստոս ...։ Եւ ևս բազումք հաւատացին ՚ի նա վասն բանին նորա, և ասէին ... գիտեմք եթէ գա է Քրիստոս աշխարհի ,,։

Այսր աղագաւ ոչ փրկիչն մեր և ոչ առաքեալք նորա վիճեցան երբեք զայսմանէ ընդ Հրեայս, հաւատոյ ամենեցուն համարեալ զաբեսիա և զակնկալութիւն Աբեսիային, և զանձնէ եւեթ նորին էր խնդիր։ Այլ եթէ էր այսպէս, չգտաներ տեղի բանն տէրտնական. “Ոչ ինձ ասեմ ձեզ, զի բազում արդարք և մարգարէք ցանկացան տեսանել՝ զոր դուքդ տեսանէք, և ոչ տեսին ,,։ Եւ ոչ ՚ի Հրեաստանի եւեթ սահմաներ աւանդութիւնս այս, այլ և յամենայն գաւառս արևելից, որպէս վկայեն

Սուետոնիոս և Տակիտոս. (՚ի Կէսպ. գլ. ՟ը: պար. գլուխ Ե. գլ. ԺԴ): Նա և տեսանել զաղօտ լինչ հետս այսր աւանդութեան խառն ընդ մտաւն պաշտամունս հեթանոսաց առհասարակ: Յնագէտք բազմահմուտք երկարապատում ձառիւք ցուցին զայս ակնկալութիւն հեթանոսաց, ըստ մասին ՚ի սկզբնական աւանդութենէ, և ըստ մասին ՚ի մարգարէութենէն Հաղքայամու, առաւել կամ նուազ պահեալ առ ամենայն ազինս. մինչև մոգուցն երեցունց երևմամբ անսովոր աստեղն, առանց ընդ քանս լինչ ածելոյ, ելանել ՚ի խնդիր նորին: Այսոյն աւանդութիւն և Պլուտարքոս Հաստատէ լեալ առ եգիպտացիս ՚ի գիրսն յաղագս Իսեայ և Ոսիրեայ. և ՚ի գիս անդ եգիպտացւոց էր և մի անուանեալ ԷՐՀԷՂ Տարդիան: Պատձեալ և ՚ի գիցաբանութեան հիւսիսային ազանց յիշատակի Պերսափոնէ Ադեն դաժնէն, դԼնորդ Ասպուածոյ և Տարդիան, գլխաւոր Ախշապէն ունէր:

Այսոյն իմաստք են և ՚ի տրամախօսութեան ուրեք Պղատոնի, յորում վկայեն Սոկրատ և Ասկիբիադ. և ՚ի նոյն ակնարկեն տողք լինչ Յորդորի վերպիլեան հովուաբանութեան.

« Դարձ այժմիկ առնէ Կոյան, և գարձ կրուիլեանն ալքայութիւն.
Նոր այժմ աւասիկ ելջանէ զարմ յերկինից բարձանց...
Մանկանըն նորածնի, իւ երկաթեայն առեալ գազար՝
Ընդ հանուր ախէզերս յարկէ գարն ոսկեվննիկ »:

Ա Ո Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Ասէ. ա. Ո՞ խոստացեալ Աեսիային ոչ յԱրկինս, ոչ ՚ի տաճնաբանեայ պատուիրանս, և ոչ ՚ի ձեռս տակաս և յայլ գիրս Աովսէսի գտանեմք ասացեալ լինչ. և ոչ ուրեք պատուիրան աւանդեալ հաւատալոյ ՚ի Աեսիան. վասն որոյ և ոչ ՚ի մասն հաւատոյ համարէր այն առ Հրեայս:

Պէս. Ի ծննդոց գրոց անտի ածաք վկայութիւնս՝ որ յայտնապէս ակնարկեն ՚ի Աեսիայն. ՚ի վերայ այնոցիկ և ՚ի գիրս երկրորդ օրինացն առ Աովսէս (ԺԸ. 15.) “Աարգարև յեղբարց քոց իբրև զիս յարուսցէ քեզ տէր Աստուած քո, նմա լուիջիք,,: Եւ գարձեալ խոս-

տանայ անդ Պետուաճ, և ասէ. "Պարգարէ յարու-
ցից նոցա յերկրէ իւրեանց իբրև զքեզ, և տայ զպատ-
գամն իմ՝ ի բերան նորա, և խօսեսցի ընդ նոսա որպէս
և պատուիրեցից նմա. և մարդ՝ որ ոչ լսիցէ զոր խօ-
սիցի մարգարէն յանուն իմ, ես խնդրեցից զվրէժ ի
նմանէ,,: Այս ոչ է մարթ իմանալ զմարգարէից առ-
հասարակ, որպէս Աղդիոս և Մալաւաճոր իմանան և
պնդեն, այլ զմարգարէիցն վերհատուածն հարկ է իմա-
նալ՝ որպէս նախանձք առհասարակ ազբիւրէ Հրէից իմա-
ցան. վասն որոյ և Պետրոս և Ստեփանոս (գործ. Բ.
է.) ի սոյն միտս զբանն գայն ի դէմս աճխին նոցա, ա-
ռանց ուրուք ի նոցանէ կարեալ ժխտել զայն. ապա ի
Վրիստոս ևեթ ակնարկէ բանն այն էբէ պէ:

Ցանուագանեայն պատուիրան ոչ զմասունս հաւատոյ
սահմանէ, այլ զբարոյականին. և ինքատական գիրք զա-
րարողութիւնս քահանայից. վասն որոյ չիք ի նոսա տե-
ղի հաւատոյ Եսիային: Իսկ եթէ չիցէ ուրեք ի գիրս
պատուիրան հաւատալոյ ի Եսիայն բատ բառից, այլ
գոյ իսկ համազօր բատ իմաստից. զի Հնմարտութեանց
յայտնելոց Աստուծոյ ինքնին զհետ գան պարտք հա-
ւատալոյ: Չիք ուրեք ասացեալ ի հին օրէնս "Հա-
ւատալ Աստուած,,. այլ ոչ ումեք եղև երկբայել
թէ չիցէ պարտ հաւատալ Աստուած: Եւ ընդէր իսկ
մարգարէք խօսէին յաձախ առ Հրեայս զԵսիայէն,
բայց զի հինն հաւատոց նոցա էր այն. և չէ իսկ Հնմա-
րիտ՝ չհամարել ի մասն հաւատոյ առ Հրեայս ակնկա-
լութեան Եսիայէն. զի ի վարդապետական գիրս նո-
ցա աւանդի այն իբրև զլխաւոր մասն հաւատոյ. և ի
Աղտմատան նոցա գրեալ կայ, զի "Ընդհանայն մարգա-
րէք զաւուրց Եսիայէն ևեթ մարգարէացան,,:

Ընդ. Բ. Ընկալութիւն Եսիայէն է յոյս հին
մտացածին երջանիկ Թագաւորութեան աւանդեալ ի
նահապետաց, զոր մարգարէքն և ևս պանծացուցին,
և մանաւանդ Դանիէլ յաւուրս գերութեան Հրէից
առ ի քաջալերութիւնս նոցա այլաբանօրէնն ներկարագրեաց
ընդ իմանալի աստուածպետութեամբ որդւոյն մարդոյ:

Պէ. Այդ իմաստք հակառակ հասարակաց և հինա-
ւանդ իմացուածոց են. և մարգարէիցն բանք յայտնա-
պէս ի հոգևոր բարութիւնս ակնարկեն, և յիշխանու-

Թիւն վրկչին, որով ոչ այլաբանօրէն՝ այլ իսկապէս իշխեալց էր ի վերայ ապգի մարդկան, «Իշխանութիւն յաւիտենական՝ որ ոչ անցանէ, և Թագաւորութիւն նորա ոչ եղծանիցի»։ (Դան. Է. 14)։

ԳԼՈՒԽ Բ

ՉԻ ՄԵՍԻԱՑՆ ԽՈՍՏԱՑԵԱԼ, ՅԱՍՏՈՒԽՄՈՑ ԵՒ ԱԿՆԿԱԼԵԱԼ, Ի ՀՐԷՒՑ ՄԻ ԵՒԹՔ ՈՔ ԷՐ

Սուրբ գիրք եզակի խօսին ամենայն ուրեք զՅԵսիայէն. Իրեայք միւսմ ևեթ յամենայն ժամանակի ակնկալեան Յեսիայի. և տիւք Յեսիային նկարագրեալք ի մարգարէից պահանջեն զմի ոք. ապա Յեսիայն խոստացեալ Յ՚աստուծոյ՝ է-միակ։

Յպաքէն սուրբ գիրք, ուր ուրեք զմիրկչէն խոստացեալ խօսին, Քրիստոս զնա կամ ()ծեալ և կամ եբայերէնն Յեսիայ անուանեն եզակի. որպէս (Դանիէլ. ոչԲ. Ջ. 20.) «Հոգի երեսաց մերոց տէր Քրիստոս», և դարձեալ (Դան. Թ. 25.) «Մինչև յօծեալն առաջնորդ՝ եօթնեւտղք եօթն»։ Եւ (Ի ող. Բ. 2.) «Ժողովեցան Ի միասին վասն տեառն և վասն օծելոյ նորա»։ Նոյնպէս և զվկայութիւնն՝ զոր Ի ծնընդոց ածաք. «Ձա սպասեցէ քում գլխոյ»։ Եւ դարձեալ. «()րհնեացին Ի զաւակի քում ամենայն ազգք երկրի»։ Եւ դարձեալ (ԱՊ. խԹ. 10.) «Մինչև եկեսցէ նա՝ որոյ իւր է հանդերձեալքն, և նա է ակնկալութիւն հեթանոսաց»։ Եւ դարձեալ. (Դաւիթ. ժե. 10.) «Եւ Ի նա հեթանոսք յուսասցին»։ Նոյնպէս զնոյն ինքն յաղագ Դաւթի նախասպատմեն գիրք, վասն որոյ և ոչԲ Դաւթի կոչեն զնա, և զժամանակ և զտեղի ծնընդեան նորա Քրիստու ցուցանեն։ Այսպա ոչ է մարթ աւելի քան զմի ոք իմանալ զՅեսիայն խոստացեալ Յ՚աստուծոյ։

Եւ ոչ Իրեայք այլուստ ումեք քան Ի միոջէն ակնկալեան երբեք։ Ո՛չ Թէպէտ քաջազունք առնոսա կացին ազատարարք ազգին Ի դերութենէ, և աշխարհակալք՝ որք զսահմանս պետութեան նորա ընդարձակե-

յին, և Թադաւորը հզօրք և անուանիք. այլ ոչ որ ՚ի նոցանէ համարեցաւ Աստիա, և ոչ երբէք դադարեաց աղքն հրէական ՚ի սպասելոյ խոստացեալումն Աստիայէ: Իսկ յանկանել Թադաւորութեան նոցա կամ ՚ի վախճան խոնարհել, համարեցան եկեալ կամ մերձ ՚ի գալուստ գԱստիային՝ ըստ մարգարէիցն պատգամաց և ըստ հայրենի աւանդութեան: Ո՛ ի յայնժամ, որպէս պատմէ Ղուկաս (գ. 15.) "Կային ունկնդիր ժողովրդին, և խորհէին ամենեքեան ՚ի սիրտս իւրեանց վասն Յովհաննու՝ միթէ սա՛ իցէ Քրիստոս,,: Նա միւս աւետարանիչն պատմէ (Յհ. ա. 19.) զի "Ղրկեցին առնա Հրեայքն Երուսաղէմէ քահանայս և ղևտացիս, զի հարցցեն ցնա՝ Թէ դու ո՞ ես: Նա խոստովան եղև, և ոչ ուրացաւ, եթէ ես ոչ եմ Քրիստոս,,: Նա զարձեալ վկայեաց սամարուհին (անդ. դ. 25.) "Գիտեմք զի Աստիա գայ, անուանեալն Քրիստոս,,: Նա ՚ի հարցանել մոգուցն՝ Թէ "ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից,,, ժողովեալ Հերովդէ զամենայն զքահանայապետս և զգրագիսս ժողովրդեանն, հարցանէր ՚ի նոցանէ՝ Թէ ո՞ւր ծնանիցի Քրիստոս. և նոքա ասեն ցնա ՚ի Բեթղեհէմ Հրէաստանի, և զվկայութիւնն Միքիայ մարգարէի ածեն ՚ի հաստատութիւն: Ո՛այս և Յովսեպոս պատմէ ՚ի Հրէական պատերազմին. (գլուխ դ. գլ. ե.) և այլուր:

Ո՛նոյն հաստատեն և տիպք խոստացեալ Աստիային, նկարագրեալք ՚ի մարգարէից: Գանդի Նասայի նկարագրէ զամենայն ձիրս նորա (ԺԱ. 2.) զի հանգիցէ ՚ի վերայ նորա եօթնապիսեան Հոգւոյն զօրութիւն, զի ոչ ՚ի կարծ դատեսցէ, զի արասցէ իրաւունս տնանկին, զի հարցէ զերկիր բանիւ բերանոյ իւրոյ, զի եղիցի արդարութիւն ածեալ ընդ մէջ իւր, և Ճշմարտութեամբ պատեալ զկողս իւր. նախատպատմէ զծնանել նորա ՚ի կուսէ, զկոչումն հեթանոսաց ՚ի ձեռն նորա, զերկին և արջոյ ՚ի միասին բնակել, և զորդւոց նոցա խառն շրջել, զննուլ ամենայն երկրի գիտութեամբ տեառն, զբղխել նորա յարմատոյն Յեսսեայ, և զհեթանոսաց ամենեցուն յուսալ ՚ի նա. (խբ. 2.) զգալ նորա առանց աղաղակի հեզ և խոնարհ, մինչև զեղէգն խոկ ջաղջախեալ ոչ բեկանել ընդ ոտամբ, և ոչ զպատրոյգ

առկայծեալ շինջացանել. (կա. 1.) զաւետարանել նորա աղքատաց, բժշկել զբեկեալս սրտիւք, քարոզել գերեաց զԹողութիւն և կուրաց տեսանել. զհատուցանել նորա փոխանակ մեր հատուցումն Աստուծոյ մերոյ, զկոչել օտարածին հալիւս խաշանց իւրոց, և քահանայս տեառն անուանել զնոսա, և՝ ի լոյս իւր ածել զհեթանոսս: Այս ամենայն, և որ սոցին սակի ամենայն ուրեք՝ ի սուրբ գիրս տիպք նկարագրի ընծայեալք Աեսիային, չմարթեն՝ ի դէպ զալ այլոմ ումեք քան՝ ի միոջէ փըրկչէն խոստացելոյ, Այլ ուրեմն Աեսիայն խոստացեալ Աստուծոյ և ակընկալեալ՝ ի Հրեից մի միայն է:

ԱՌԱՔՈՒԹԻՒՆ

Ա՛տ. — ա. Սուրբ գիրք ցուցանեն ազատարար հրեական ազգին զԱեսիայն այր հզօր, — բ. Արդ և Նահաւամ զնոյն մարգարէացաւ. (Նէտ. իշ. 17.) "Ծագիցէ աստղն Յակոբայ, և յարիցէ այր յԻսրայէլէ, և հարցէ զիշխանս Մոաբայ, և առցէ աւար զամենայն որդիս Սեթայ... և Իսրայէլ արար զօրութիւն,,: — գ. Նա յամենայն գերութիւնս Հրէից եղև որ նոցա ազատարար. որպէս և Մխուրս, որ Թէպէտև Հեթանոս՝ այլ օծեալ կոչի՝ ի սուրբ գիրս, այսինքն Աեսիա (Ես. խե. 1.) "Աւասիկ աստ Աստուած ցօծեալն իմ ցԿիւրոս,,:

Պէ. — ա. Սուրբ գիրք զԱեսիայն ցուցանեն փրկիչ և ազատարար հոգեւոր, և ամենայն որ ինչ գործս ընծայեն նմա՝ աքանչելիք են աստուածային զօրութեամբ գործեալ. և Հրեայք իսկ այսպիսւոյ փրկչի ակն ունէին, որպէս յայտ է՝ ի բանէն (Հն. պ. 42.) "Վասն եմք զի գան Հեթանոսք փրկիչ աշխարհաց,,. (անդ. չ. 14.) "Ուր արար զինշանան՝ զոր արար, ասէին՝ եթէ սա է Հրեշտակն մարիա մարգարէին, որ գալոց էր յաշխարհ,,: Աստուածն եղեն աս Հրեայս և կարծիք ժամանակաւոր Թագաւորութեան Աեսիային՝ ի կեանս ժամանակս. այլ և ոչ մնջորութիւնս այս բաւական եղև բառնալոյ զՀնամարիտ աւանդութիւն փրկութեան ազգի մարդկան և յաւիտենական արքայութեան փրկչին. այլ այն՝ ի վերայ այսորիկ յաւելաւ:

— ե. Ի միաբան և ի հաստատուն առանդութենէ Հրէից յայտ է, զի գուշակութիւնք Յահազայմայ ի Հրէս մարիա Աեսիայն ակնարկեն. այլ թէ որպիսի ինչ զէնքն նորա էին՝ որովք հարկանելոյն էր զամենայն որդիս Աեթայ, և առնելոց զօրութիւն յԱրայէլ, ցուցանէ զայն Յոայի (ԺԳ. 4.) յասելն. "Հարցէ զերկիր բանիւ բերանոյ իւրոյ, և հոգւով շրթանց իւրոց սատակեսցէ զամբարիշտս ,,:

— զ. Յղեն իսկ և այլ ազատարարք Հրէից, այլ ոչ յաւէրք՝ ի նոցանէ արդիւնացան մարգարէիցն պատգամք՝ որ զՀնամարիտ փրկչէն առացեալք: Եւ եթէ ըստ Ակերտս օծեալ անուանեն սուրբ գիրք, վասն բերելոյ նորա է յանձին զդէմս Քրիստոսի, և ազատելոյ ըստ Հրեայս ի ժամանակաւորն գերութենէ՝ որ հոգեկանին էր օրինակ, յորմէ ազատելոցն էր զնոսա Քրիստոս և զամենայն իսկ ազգ մարդկան ի գերութենէ մեղաց և սատանայի:

ԳԼՈՒԽ Գ

ՋԻ ԺԱՄԱՆԱԿ ԳԱԼՍՏԵԱՆ ԽՈՍՏԱՑԵԼՈՑ ՄԵՍԻԱՑՒՆ ՀԱՒԱՏՏԵԱԻ ԵՒ ՃՇԳՐՏԻՒ ՍԱՀՄԱՆԵԱԼ Է Ի ՍՈՒՐԲ ԳԻՐՍ

Են և որք զժամանակ գալստեան Աեսիային անդիտելի ասեն և ոչ սահմանեալ ի գրոց: Այլ մելորութիւնն սոցա յանդիմանի նախ ի մարգարէութեանցն Յակոբայ, Դանիէլի, Ագգէայ և Մաղաքիայ, որք ըստ բարձումն իշխանութեան ի տանէն Յուդայ և զկործանումն Երուսաղէմի և զտաճարին՝ սահմանեն ժամանակ գալստեան փրկչին: Երկրորդ յանդիմանի Հրէից, որք գալստեան Աեսիային ակն ունէին ի չորեքհազարերորդի ամի ի ստեղծմանէ աշխարհի. որում երաշխաւորեն խառնել Հերովդէի և ամենայն Երուսաղէմի ընդ նմա ի հասանել անդր մոգուցն, մանկանցն կոտորած, երեւումն մելորեցուցչաց՝ որք առէին զանձնէ գոլ Աեսիա, և այլ ևս սոցին սակի դէպք՝ որ յայտնապէս ցուցանեն, զի զայնու ժամանակաւ էր ակնկալութիւն Հրէից գալստեան Աեսիային: Երրորդ՝ յանդիմանի մե-

լսելն ինձ նոցա՝ ի խոստովանութենէ յոգունց բաբունեաց, որք վկայեն զի արդարև հասեալ և անցեալ իսկ է ժամանակ գալստեան Եսայիայն, Յովրովդ՝ ի գալ- ձէ հեթանոսաց յաստուածպաշտութիւն, որ սքանչե- լահրաշ օրինակաւ համաձայնի ժամանակին և հանգա- մանացն նախասպատմելոց՝ ի մարգարէից վասն գալըս- տեան Եսայիայն։

Յայսմ ամենայնի սակայն լսելոց բաբունեաց, որպէս նաւակոծեալք ապաստան եղեն՝ ի փայտ փրկութեան՝ ասել յամեցուցեալ Աստուծոյ զաւետիսն վասն մեղաց հրէական ազգին։ Այլ առ՝ ի հաստատել զայս՝ պարտ էր նոցա ցուցանել պայմանաւ խոստացեալ Աստուծոյ զաւետիսն, կամ մարգարէից պայմանաւ սահմանեալ ժամանակ գալստեան Եսայիայն։ Այլ նախ՝ զի պայ- ման այսպիսի ոչ ուրեք՝ ի սուրբ գիրս է գտանել. այլ ընդ հակառակն ամենայն ուրեք յայտնապէս սահման- նեալ ժամանակ աւետեացն։ Արմրովդ՝ զի ոչ՝ Երեից հեթ էին աւետիքն, այլ և հեթանոսաց. վասն որոյ մեղք նոցա չկարէին խափան լինել փրկութեան հեթա- նոսաց։ Արմրովդ՝ զի ընդունայն էր յայնժամ մարգա- րէից այնքան նշանս սահմանել ժամանակի գալստեան փրկչին։ Յովրովդ՝ զի յառաջ քան զգալուստ փրկչին ոչ ումեք՝ ի Երեից՝ ի միտս անկաւ կասկած այսպիսի, այլ՝ ի հարկէ բռնադատեալ հնարեցան զմեկնութիւնս զայս օտար՝ ի սուրբ գրոց Երեայք յուսահատեալք՝ ի գալստենէ Եսայիայն։ Ինգերովդ՝ զի որ գալոցն էր առ՝ ի բառնալ զմեզս, անտեղի է համարել Թէ վասն մեղաց չէին եկեալ։ Ասն որոյ զՀետ գայ ասել, զի պատճառանք են հնարեալք՝ ի յետնոց աստի Երկից՝ առ՝ ի խոյս տալ՝ ի ձեռնարկութենէ քրիստոնէից։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆ

Ասէ. Ա. Ժամանակ գալստեան Եսայիայն հա- մարին առաքեալք կոչեալ առ Աստուած և անգիտելի մարգ. զի՝ ի հալածանել զայն Հռոմէլի, պատասխանէ հրեշտակն. (ԺԲ. 9.) "Արդեօք և կոչեալ են բանքս միևնոյն ժամանակ վախճանի,,։

պէս. Ընդհատեալ մարդոյ համարին զայն այնոքիկ եւեթ ՚ի բաբունեաց, որք յետ գալստեանն Ա՛րիմաթեայ կացին, և հարկ էր նոցա զամենայն գուն գործել առ արդարացուցանելոյ զանհաւատութիւն իւրեանց ՚ի չգտանելն Ա՛եսիա։ Այլ դանիել յետ չիգրիտ գտակաւ պիտելոյ ՚ի հրեշտակէն զժամանակ գալստեան Ա՛եսիային ՚ի գլուխն իննեւորդ՝ ապա ըհարցուածն զայն մատուցանէ ՚ի գլուխն երկոտասաներորդ. և ոչ ոք ՚ի մեկնչաց և յառաջնոց բաբունեաց այնպիսի խնաստս հարցուածոյն այնմիկ ընծայեն. զի չէր մարթ մարգարէին հարցանել զոր հրեշտակն ստուգապատում արար եաև էր նմա։ Ապա խնաստք բանին այնորիկ հայեին յերկրորդ գալուստն Ա՛րիմաթեայ, զորմէ խօսի ՚ի գլուխն յայն։

Ա՛տրկ. Բ. Նախասացութիւնք են ՚ի սուրբ գիրս անպայմանաբար ասացեալք, յորս զօրութեամբ է իմանալ զպայման. ապա և ՚ի խոստումն Ա՛եսիային օրէն է իմանալ զայն. այսինքն "Եթէ դարձցիս առ տէր Ա՛ստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ,,, որպէս ասեն խակ սուրբ գիրք այլուր (Բ. օր. Ը. 10)։ Վասն որոյ ասացեալն զյամենայնումն գալստեան Ա՛եսիային արդարութեամբ Համարին վասն մերոյ հրէական ազգին։

պէս. Այն արդարև ՚ի սուրբ գիրս կանխասացութիւնք՝ զորս իմանալոք պայմանաւ, զի սպառնականք են, կամ ՚ի յարակից բանիցն տան իմանալ զպայման, և կամ այլուր յաւելուն զայն։ Խակ զժամանակէ գալստեան Ա՛եսիային ոչ ինչ ոչ ուրեք յաւելուն գիրք զպայման, և կամ այնպիսի ինչ բանս՝ որ զօրութեամբ տայցեն զայն իմանալ. որպէս յաղագս երկրաւոր բարեաց յաւելուն գիրք սահպ զառարկեալք բան։ Պարտ էր բաբունեաց զպատճառս զայդ յամեցման Ա՛եսիային գտանել ածել յումեքէ յառաջնոց բաբունեաց երիցագունից ժամանակաւ քան զՆ՛րիմաթեա։ Ա՛պաքէն յեղեռնագոյնն խակ ՚ի մեղաց յոյժ անկղնտանայր ազգն հրէական ՚ի հառապաշտութիւն, ոչ այսպէս երկարատեւեր պատուհաս գերութեան նորա. այլ ՚ի գուն ածեալ ամենազօրին Ա՛ստուած՝ ազատեր զնոսա ՚ի գերութենէն, Ւարկ է ապա զի մեծ ևս քան զհառապաշտութիւն իցէն նորա

մեղք այժմեա. և է իսկ անհաւատութիւն ինձնոցա՝ ի Աստուածոյ սիայն վաղ իսկ եկեալ, և արիւնն՝ որում պարտաւորք գտաք, և զոր՝ ի վերայ իւր և որդւոց իւրոց խնդրեաց անէծս։

ԳԼՈՒԽ Դ

ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹԻՒՆ ՅԱԿՈԲԱՑ ՆԱՀԱՊԵՏԻ ՋԹԱՄԱՆԱԿԷ ԳԱԼՍՏԵԱՆ ՄԵՍԻՒԱՅԻՆ

Նահապետն Յակոբ՝ ի վախճանի կենաց իւրոց կոչեալ առ ինքն զորդիս իւր, և միւսում միւսում՝ ի նոցանէ զպատշաճն ասացեալ, իսկ առ Յուդա ասէ. (Ծն. խԹ. 8.) "Յուդա, զքեզ օրհնեսցեն եղբարք քո... երկիր պագցեն քեզ որդիք հօր քո։ Կորիւն առիւծու Յուդա, ի շառաւիղէ ելեր որդեակ իմ, ելեր բազմեցար, ննջեցեր իբրև զառիւծ և իբրև զկորիւն առիւծու, ո՞վ յարուցանէ զնա։ Ո՛չ պակասեսցէ իշխան Յուդայ, և մի պետ յերանաց նորա, մինչև եկեսցէ նա՝ որոյ իւրն է հանդերձեալքն, և նա է ակնկալութիւն հեթանոսաց"։ Ընդ պարտ է մեզ ցուցանել նախ՝ զի պատճառն այս հայր՝ ի Աստիայն, երկրորդ՝ զի սահմանէ ժամանակ գալստեան նորա, և երրորդ զի վաղ իսկ լցեալ է մարգարէութիւնս այս։

Աստուածաբան եբրայեցիք, և Յաղմուտն իսկ, զարմանահրաշ միաբանութեամբ՝ ի գերանուանն մինչև եկեսցէ նա՝ իմանան զԱստուած, Թէպէտ և այլազգ՝ ի միմեանց մեկնեալ զբառն եբրայական ընկալեալ՝ զոր մեքս Թարգմանեն նա։ Այլ եթէ անյայտ իսկ գերանուանն այնորիկ էր նշանակութիւն, սակայն քաջայայտ առնէին զայն յաջորդ բանքն, "որոյ իւրն է հանդերձեալքն, և նա է ակնկալութիւն հեթանոսաց"։ Ո՞վ ոք ինչ և զանազանութիւնք Թարգմանութեանց եբրայական բառնագրին յարաբացին և յասորին, և որ ինչ՝ ի բաբառնեաց ընծայեալ իմաստք, ամենայն զնոյն ցուցանեն, և ոչ ոմեք բաց՝ ի Աստիայէն՝ ի դէպ գան։

Ժամանակ գալստեան նորա սահմանէ նախ բառս Շիլէ. այսինքն զի՝ ի պակասել իշխանութեան՝ ի Յու-

պայ՝ գալոց է Աեսիային։ Արկղորդ՝ գիտաւորութիւն նահապետին, որ յայտնապէս առ ի սահմանել ժամանակն զայն բարբառի. զի եթէ ոչ զայն կամէր յայտ առնել, իմաստ ինչ ի բանէ անտի ոչ գոյր ի միտ առնուլ։ Արկղորդ՝ նախնեացն ամենեցուն վկայութիւն, որք ի պակասել իշխանութեան ի Յուդայ՝ համարեցան հասեալ ժամանակ գալստեան Աեսիային։

Իսկ զի վաղ իսկ ժամանակն այն սահմանեալ էանց, քաջայայտ է ի պակասելոյ իշխանութեան ի Յուդայ։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ

Աբել. ա. Առաս գիրն ոչ սահմանէ ժամանակ, որպէս յայտ է ի բաղում վկայութեանց սուրբ գրոց. որպէս ուր ասէն (պղմ. ճԺ.) "Այսոց տէր յաւէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց"։ Եւ գարձեալ (Աես. ա. 25.) "Եւ ոչ գիտէր զնա մինչև ծնաւ զորդին իւր զանդրանիկ"։ Այսպա իմաստք բանից նահապետին են՝ չպակասել իշխանութեան ի Յուդայ, եւս առաւել ի գալ Աեսիային։ Այսմ երաշխաւորէ ասելն Այտուծոյ ցՅակոբ (ծն. լը. 15.) "Ոչ թողից զքեզ մինչև արարից զամենայն զոր խոսեցայ ընդ քեզ"։ այսինքն մինչև տարայց զքեզ յերկիրն աւետեաց, եւ առաւել եւս յայնժամ ոչ թողից զքեզ։

Պե. Յայտնի է նշանակութիւն բառիդ գինչ, որ ոչ միշտ նշանակէ դադարումն. վասն որոյ ըստ պատշաճի տեղւոյն հարկ է իմանալ զայն։ Այդ նահապետն աւետեալ նախ զգալուստ Աեսիային յազգէն Յուդայ, յաւելու ապա ցուցանել եւ ժամանակ գալստեան նորա. եւ եթէ ոչ դադարումն անդ իմանայցեմք զիշխանութեան ի Յուդայ, ոչ եւս ինչ նշանակէ յաւելուած բանիդ նահապետին։ Եւ գարձեալ արդիւնք իրացն եւս ցուցանեն զայս նշանակութիւն գինչ բառին, զի դադարեալ է, եւ ոչ եւս է իշխանութիւն ի Յուդա։ Աան որոյ եթէ յարատեւական իսկ նշանակութեամբ գինչ-ը կամիցիմք իմանալ, այսինքն զի եւ յետ գալոց Աեսիային աւելոյ իցէ իշխանութիւն Յուդայ, սակայն ուրեք

տան գալք պահասելոյ իշխանութեանն ընդդէմ ելանեն այնմ իմացուածոյ։

Ա՛ստղ. Բ. Զնդպետ և պահասեալ իշխանութիւն ՚ի Յուդայ, այլ իրաւունք իշխանութեան յարտահանեն ՚ի նմա, յորմէ անիրաւութեամբ հռոմայեցւոց կապտեցան տարապարտուց։ Ո՛չ ի՞նչ եթէ չքաւէին իրաւունքս այս առ ՚ի համարելոյ յարտահեալ զիշխանութիւն ՚ի Յուդա, հարկ էր ասել՝ հնդկաց դադարեալ իշխանութեան նորա յառաջ քան զյետինն զայն դադարումն։

Պե. Նթէ նահապետն զնրաւանց խօսէր անդ և ոչ զարդեանց իրացն, դարձեալ նոյն անտեղութիւն զհետ գայր՝ ոչ ինչ նշանակելոյ բանիւն. և դարձեալ՝ զի զայս այսպէս իմացաւ միշտ նախնի եկեղեցին հրեական։

Նակ գերութիւնքն առաջինք ոչ բարձին զիշխանութիւն ՚ի Յուդայ, նախ՝ զի առժամանակեայք էին և կարճատևք, և ՚ի ձեռն մարգարէից՝ հաւատոյ առնէր Ա՛ստուած զդարձ նոցա յազատութիւն. և երկրորդ՝ զի ոչ երբէք յաւուրս գերութեան նոցա սպառսպուռ պատկասեաց ՚ի հրէական ազգէն իշխանութիւն։

ԳԼՈՒԽ Ե

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԴԱՆԻԷԼԻ ԶԺԱՄԱՆԱԿԷ ԳԱԼՍՏԵԱՆ ՄԵՍԻԱՅԻ

Յաւուրս գերութեան հրէական ազգին ՚ի Նաբելն, մինչգեռ Նանիել զմեզս նր և զժողովրդեան ողբայր, և խնդրէր զթողութիւն և ազատութիւն, և զկանգնումն քաղաքին և տաճարին ՚ի ձեռն խոստացելոյ Ա՛եսիայինն, եկաց առ նմա հրեշտակապետն Գաբրիէլ և ասէ. (Դան. Թ. 24.) “Նօթանասուն եօթնեւորդք համառօտեցան ՚ի վերայ ժողովրդեան քո, և ՚ի վերայ քաղաքին սրբոյ. ՚ի վախճանել մեղաց, և ՚ի կնքել անօրէնութեանց, և ՚ի ջնջել անիրաւութեանց, և ՚ի քաւել ամպարշտութեանց, և ՚ի գալ յաւիտենական արդարութեան, և ՚ի կնքել տեսլեան և մարգարէի, և յօծանել սրբութեան սրբութեանցն. և գիտասցես և խելամուտ լիցիս յելոյ բանին տալ պատասխանի։ Նա ՚ի գիտենալն Նրուսաղէմի մինչև յօծեալն առաջնորդ՝ եօթնեւորդք

եօթն, և եօթներորդը վաթսուն և երկու. և գարձցին և շինեսցին Հրապարակքն և պարիսպք, և նորոգեսցին ժամանակք։ Եւ յետ վաթսուն և երկուց եօթներորդաց թագաւորի օծութիւնն, և իրաւունք ոչ իցեն՝ ի նմա. և քաղաքն և սրբութիւնն ապականեսցին առաջնորդաւն հանդերձ՝ որ գայցէ, և ջնջեսցին հեղեղաւ. և մինչև՝ ի վախճան պատերազմին համառօտեալոց կարգեցէ զապականութիւն, և զօրացուսցէ զուխտ բազմաց. եօթներորդ մի, և կէս եօթներորդի, դադարեցուսցէ զպեղանս և զպատարագս, և մինչև՝ ի ծայրս անկեանն ապականութիւն, և մինչև ցվախճան և ցամպնապ կարգեսցէ՝ ի վերայ ապականութեանն, և զօրացուսցէ զուխտ բազմաց։ Եօթներորդ մի, և կէս եօթներորդի, բարձցին զոհք և նուէրք, և՝ ի վերայ տաճարին պղծութիւն աւերածոյն կացցէ, և մինչև՝ ի վախճան ժամանակի կատարած տացի՝ ի վերայ աւերածին ,,։

Արդ ինչ գարձեալ և՝ ի մարգարէութենէ աստի է մեզ՝ ի միտ առնուլ. նախ՝ զի խօսի հրեշտակապետն զԵսայեայն, երկրորդ՝ զի սահմանէ զժամանակ գալստեան նորա, և երրորդ՝ զի վաղ իսկ ժամանակն այն անցեալ է։

Առդ բանք մարգարէութեանն, հանգամանք և նշանք ցուցեալք՝ ի հրեշտակէն, և իմացուած՝ ի հին եկեղեցւոյ անտի աւանդութեամբ առ մեզ հասեալ, քանզայայտ առնեն՝ զի զԵսայեայն է պատգամն։ Օ՛ի օ՛ծեալն և առաջնորդ, սբբութի՛ւն սբբութեանցն և ո՛ւխտ բազմաց, անուանք են՝ զորս առ սբբ զինքն յատկապէս ընծայեն Եսայեայն. ըստ այնմ. "Յառ զքեզ յուխտ ազգի և՝ ի լոյս հեթանոսաց ,,. (Եսա. խբ. 6)։ "Յառ զքեզ յուխտ հեթանոսաց ,,. (խլԲ. 8)։ "Իշխանք ժողովեցան՝ ի միասին վասն տեառն, և վասն օծելոյ նորա ,,. (սղմ. բ. 2)։ "Հոգի տեառն՝ ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս ,,. (Եսա. կա. 1)։ Գարձեալ "վախճանել մեղաց, ինքեալ անօրինութեանց, ջնջել անիրաւութեանց, քաւել ամպարշտութեանց, գալ հասանել յաւիտենական արդարութեան ,,, այս ամենայն յայտնապէս հային՝ ի Եսայեայն, զի զեօթից զնամանէ առեն և այլ մարգարէք։ Ասպէս Դաւիթ. (կա. 1)։ Օ՛ աբարիա (ը. 8)։ Անալաքիա (ը և ը)։ Ասպէս զի առել առաքեալ-

պետին Համարձակապէս (գործ. Ժ. 43.) “Այս ամենայն մարգարէք վկայեն՝ թողութիւն մեղաց առնուլ անուամբ նորա ամենայն հաւատացելոց ի նա,,: Այսպա ոչ է մարթ յայլ ոք զմարգարէութիւնս զայս յարել քան ի Յեսայիէն: Ւ սոյն միտս միաբանին և նախնիք առհասարակ հրեական ազգին րաբբունիք, զորոց աւետ լորդ է մեզ ածել այսր գվկայութիւնս. և Յովսեպոս ոչ միայն ի հնախօսութեան իւրում (գիրք ա. գլ. ԺԱ.) վկայէ այսմ, այլ և ի հրեական պատերազմին (գիրք Չ. գլ. Չ):

Ւսկ զԺամանակ գալստեան Յեսուայինն բազում իրօք յայտ առնէ մարգարէութիւնս այս: Այսո՝ հաստատութեամբ եօթնեկայն եօթանասնից ընդ եօթանասնից գերութեանն Բաբելոնի սահմանեալս ի Երեմիայէ, եօթնեակ ընդ տարւոյ. և քանզի եօթանասուն ամ սահմանեալ ժամանակ է, ապա և եօթնեակքն եօթանասուն: Երկրորդ՝ բաժանմամբ եօթնեկայն եօթանասնից յերիս շրջանս, այսինքն յեօթն, ի վաթսուն և երկու, և ի մի՝ որ է յեսունն. զի ընդունայն էր այս բաժանումն, եթէ չէին զսահմանեալ ժամանակէ բանքն Երրորդ՝ սկսմամբ եօթնեկայն եօթանասնից և զդադարեցուցիչ. զի զսկիզբն այնոցիկ սահմանէ ի շինուածենէ Երուսաղէմի, և զդադարումն յաւերածն նորին և տաճարին: Չորրորդ՝ համեմատութեամբ ընդ բանն՝ զոր ի գլուխն ժբ և այլուր մարգարէանայ զԺամանակէ գալստեան Յեսուայինն: Եւ հինգերորդ ի միաձայն խմայուածոյ նախնեացն Հրէից, որպէս ի վեր անդր ասացաք: Վեցերորդ է յատայելոցս և գալուստ Յեսուայինն յետ եօթնեւեակ եօթանասնից այսինքն 490 ամաց սկսեալ ի հրամանատուութենէ վերստին շինուածոյ Երուսաղէմի առ Արտաշէս, մինչև ի խաչելութիւն Յիսուսի նազովրեցւոյ Թագաւորին Հրէից. և յետ այնորիկ, խափանումն հին օրինաց, քակել ամպարշտութեանց, գալ յաւիտենական արդարութեան, և կնքել տեսլեան մարգարէին, Օ՛ի վաղ իսկ յուԹևտասն դարուց հետէ կործանեցաւ քաղաքն և տաճար և բարձան զոհք և նուէրք, ապա վաղուց էս եկեալ է և Յեսուայն՝ գալով ջոկ տեսլեան մարգարէին:

ԱՌԱՔՈՒԹԻՆՔ

Բ՚ոլկ. ա. Ձէ արժան համարել՝ զի Բ՚ստուած կա-
միցի զՀաւատս հաստատել յամս և՚ի ժամանակս։

պե. Եթէ չէր արժան, ապա և ոչ՚ի քազում այլ
ինչ իրս կամէր զայն Բ՚ստուած. որպէս ուր ասէն (Ծն.
ԺԵ. 13.) "Պանդխտ եղիցի զաւակ քո յերկիր՝ որ
ոչ իւր իցէ... և ծառայեցուսցեն զնոսա ամ չորեքհա-
րիւր... և ապա ելցեն այսր քազում ստացուածովք,,։
Եւ գարձեալ (Բե. Է. 8.) "Բ՚յր և վաթսուն և
հինգ ամ, և պակասեցէ Թագաւորութիւնն Եփրեմի,,։
Եւ գարձեալ (ԺՂ. 14.) "Յերից ամ ըստ ամաց վարձ-
կանի անարգեսցին փառքն Մովաբու,,։ Եւ գարձեալ
(ԻԳ. 16.) "Եւ յետ ամաց եօթանասանից եղիցի Տիւ-
րոս իբրև երգ պոռնկի միոջ,,։ Եւ գարձեալ (Երեմ.
ԼԵ. 11.) "Ի կատարել ամաց եօթանասանից՝ խնդրեցից
զվրէժս՚ի Թագաւորէն բաբելացւոց,,։ Եւ այլ քազում
ուրեք. քանզի և ոչ ամք և ժամանակք այլազգ ինչ յայ-
լոց Հանգամանաց իրաց են առաջի Բ՚ստուծոյ, զի նման
յանդիման կան Հանդերձեալքն, վասն որոյ և կարող
է յայտնել և զժամանակս իրաց. և՚ի յայտնել նորա
զայն, պարտ է մեզ Հաւատալ այնմ։

Բ՚ոլկ. Բ. — ա. Մարթ իսկ է զեօթնեակս Դա-
նիէլի Հաշուել եօթնեբեակս ամաց եօթն՝ կամ տաս-
նամեակս և կամ յոբելեանս նոյնչափ, որով յոյժ ա-
նելի լինին ամք։ — Բ. Եւ գարձեալ չէ իսկ յայտ՝ զի
երեքին շրջանքն ամաց շարայարելիք իցեն անընդհատ,
թէ միջոցս՚ի նոսա համարելի։

պե. — ա. Ակ է մարթ զեօթնեակս Դանիէլի ոչ
եօթնամեակս եօթն, ոչ տասնամեակս, և ոչ յիսնե-
րեակս ամաց Հաշուել՝ զի մեծ կէս ժամանակին ըստ
այդմ ճնայր տակաւին, ուր սահմանեաւն՚ի մարգարէին
եղը աւերածոյ քաղաքին և տաճարին՝ վաղու և ան-
ցեալ է։ Եւ գարձեալ՝ զի յաձախ է՚ի սուրբ գիրս օ-
րինակ Հաշուելոյ եօթնեակս ամաց պարզապէս. օրի-
նակ իմն (Ա Եսդ. իե. 8.) "Եւ Թուեցեալ գաս քեզ
եօթն Հանգիստս ամաց, և եօթն ամ եօթնեակին, և ե-

ղևոյին եօթն. եօթնեւորդքն ամաց՝ քառասուն և հինն ամ ,,։ Նմանպէս և այլուր (Ծնն. իմ. 27։ Ղ Եզր. ին. 34։ Ըե. 43։ Ը. Ա՚ն. իզ. 21.) ուր և եօթնեւորդն ամ կոչի շաբաթ յար և նման մարգարէական բանիս. ,,Ա՚ինչև ընկալաւ երկիրն զշաբաթս իւր, և շաբաթ ացաւ՝ի կատարումն ամացն եօթանասնից ,,։ Նա ոչ միայն առ Հրեայս, այլ և առ հեթանոսս էր այս սովորութիւն հաշուելոյ ըստ եօթնեւից, որպէս ցուցանէ Պօղոս (գիրք Ը. գլ. 10)։

Իսկ պատճառ ըստ այսմ հաշուելոյ մարգարէին՝ է համեմատութիւն ժամանակին ընդ եօթանասուն ամ գերութեանն Բաբելոնի՝ զոր մարգարէանայ Երեմիա. զի ամաց իրաքանչիւր բաբելոնական գերութեանն կշռէ եօթնեակս ամաց մինչև ցառերած քաղաքին։

— ԺՈ. Նոքա էլ ամենևին միջոցս ընդ երեսին շըրջանս եօթանասնից դնել։ Նանգլի մարգարէն սահմանէ նախ՝ի համարն 24 զեօթանասուն եօթնեակսն 490 ամաց, և ապա ըստ երևելի անցից ժամանակին սահմանելոյ զանազանէ զայն յերից շրջանս՝ի համարն 25։

ԳԼՈՒԽ Զ

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆՔ ԱՆԳԵԱՑ ԵՒ ՄԱՂԱՔԻԱՑ ՉԺԱՄԱՆԱԿԻՆ ԳԱԼՍՏԵԱՆ ՄԵՍԻԱՅԻ

Չերկոցունց պատգամացս միանգամայն խօսիմք, վասն լուսաբանելոյ նոցա զմիմեանս։ Սկզբ առ՝ի սկսվիլ զՀրեայս, որ այն ինչ գարձեալ՝ի գերութենէն Բաբելոնի՝ յիշատակաւ փառաւորութեան սոլոմոնեան տաճարին տրամեալ կային՝ի տեսիլ անփառունակ նոցոյ տաճարին՝ որ՝ի Ո՚. որոքաբելէ կանգնեալ, խօսի՝ի դիմաց Ա՚ստուծոյ և ասէ. (գլ. Ը. 4.) ,,Ա՚յր՝ի ձէնջ տեսեալ իցէ զտունս զայս՝ի փառաւորութեան իւրում զառաջինն, և ո՞րպէս արդ տեսանէք զդա որպէս զոչինչ առաջի ձեր։... Գարձեալ միւսանգամ շարժեցից զերկինս և զերկիր և զծով և զցամաք, և միանգամայն շարժեցից զամենայն ազգս. և եկեսցէ ընտիր ընտիր ընչից ամենայն ազգաց, և լցուցից զտունդ զայդ փառաւք... զի

մեծ եղևոյն փառք տանդ այդորիկ վերջինդ քան զառաջինն ... և ՚ի տեղւոջդ յայդմիկ ասց խաղաղութիւն, ասէ տէր ամենակալ, և խաղաղութիւն ոչ ասց փրկութիւն ամենայնի ,,։

Իսկ ՚ի տրտնջել Թերահաւատից բազմաց Իսրէից զաստուածախնամ տեսչութենէ, խօսեցաւ Ղատուած ՚ի ձեռն Մաղաքիայի մարգարէի առ նոսա և ասէ (գլ. գ. 1.) "Ընդ ես առաքեմ զհրեշտակ իմ, և տեսցէ զճանապարհս իմ առաջի իմ. և յանկարծակի եկեսցէ ՚ի տաճար իւր տէր՝ զոր դուքն խնդրէք, և հրեշտակն ուխտի՝ զոր դուք կամիք. ահաւադիկ գայ, ասէ տէր ամենակալ ,,։

Ընդ նախ՝ երկոքեան պատգամքս այսոքիկ հայհոյ յայտնապէս ՚ի Մեսիայն. զի ոչ այլազգ փառաւորագոյն քան զսոյնմանեւանն գտանէր տաճարն զորոբաբելեան, բայց միայն գալստեամբն ՚ի սմա Մեսիային՝ զոր Իրեշտակ ուխտէ կոչէ, և ոլոր գալստեամբն շարժելոյ էին երկինք և երկիր, որ զկերպարանափոխոմն լինել յուցանէ զերկինի և զերկրի յօրինացս աւետարանին՝ որ հաստատուն և անշարժ կալցին և մինչև ՚ի սպառ ըստ առաքելոյն (Հբր. ժբ. 27)։ Ընդ ՚ի հաստատել նորոյ օրինացս ՚ի Քրիստոս, և ՚ի տարածանել աւետարանին, երկինք և երկիր և բնութիւնք ամենայն ըստ իւրաքանչիւր պատշաճի այլայլեցան. կրօնն քրիստոնէական հաստացաւ ՚ի վերայ աւերակաց հրէական և հեթանոսական կրօնից, ժողովուրդն Իսրայէլեան աշխարհաւ և աղգաւ քանդեցաւ, օրէնք մովսիսականք խափանեցան, նանրահաւատ պաշտամունք հեթանոսաց շարժեալ կործանեցան յերեսաց աւետարանին։ Ի լինել այսր ամենայնի՝ զմի ամբոխ և հակառակութիւն ոչ կրեաց եկեղեցի Քրիստոսի հաստատութենէ Իրէից և հեթանոսաց ընդ ամենայն երկիր. աւերումն Երուսաղէմի և տաճարին և բովանդակ ժողովարանին Իրէից դղրդեցոյց զաշխարհս և զբնութիւնս, և դժոխային ևս զօրութիւնք շարժեցան առ ՚ի խափանումն աւետարանին, Թէպէտ և ամենայնն ՚ի զուր։ Այլ յայտքան և յայտոյիսի շարժմունս ակնարկէն բանք մարգարէին. զորմէ և Նոյայ ասէ (կղ. 18.) "Կամ ժողովել զամենայն ազգս և զլեզուս ... և ՚ի նոցանէ առից ինձ ՚ի քահանայս և ՚ի ղևտացիս ... զոր

օրինակ երկինք նոր և երկիր նոր՝ զոր ես առնեմ կալ առաջի իմ, ասէ տէր, նոյնպէս կացցէ զաւակն ձեր ,, : Նրևեելիք ևս ՚ի բաբեռնեաց զպատգամքս զայսոսիկ յաբեն ՚ի Ա՛եսիայն, ընդ որս և Աիրա՝ որ նախ քան զկոչծանումն երկրորդի տաճարին եկաց :

Երկրորդ՝ սահմանեն պատգամքս այսոքիկ ժամանակ գալստեան Ա՛եսիային յառաջ քան զկործանումն զորօբաբելեան տաճարին . զի ըստ երկոցունցն ևս պատգամաց՝ ՚ի տաճար անդր գալոց էր Ա՛եսիայն , որով և փառաւորագոյն զայն՝ քան զտաճարն սողոմոնեան կացուցանելոց էր :

Ա՛պա յայտ է՝ զի եկեալ իսկ է Ա՛եսիայն , քանզի վաղու ևս յուդևտանն գարուց հետէ տաճարն զորօբաբելեան հիմնայատակ լեալ է :

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ա՛ոարկ . ա . Սողոմոնեան տաճարին փառք ՚ի մեծութենան էր , յոսկի և յարծաթ . ապա պարտ էր և փառաւորութեան երկրորդ տաճարին նոյնպիսի գոլ . զի և ՚ի բեաբք , զորս մխիթարեն կամքն մարգարէն , վասն մերկութեան և աղքատութեան նորոյ տաճարին տըրտմեալ կային՝ յիշեալ զմեծութիւնս առաջնոյն :

պխ . Ա՛ղցինք երանի վկայեն՝ զի յերկրորդումն տաճարի անդ չեղեն երբեք մեծութիւնք առաջնոյն ըստ ոսկւոյ և արծաթոյ և ըստ երևելի փառաւորութեանցն : Ա՛պա յայտ է՝ զի զայլ ազգ ինչ փառաց խօսի Ա՛ստուած ՚ի ձեռն մարգարէին . վասն որոյ և յաւելու թէ Ա՛մ է արծաթ , և իմ է ոսկի ,, . յայտ արարեալ զի տէրն և տուիչ մեծութեանց գալստեամբն իւրով անդր՝ փառաւորագոյն կացուցանելոց էր զտաճարն զայն քան զառաջինն ոսկեհուռ զարդարեալ : Ա՛ստ այամ է խնդալ և զսփոփել Ա՛ստուծոյ ՚ի ձեռն մարգարէին զտրտմեալսն վասն աղքատութեան երկրորդի տաճարին , իբր ասել . զի հոգայք զոսկւոյ և զարծաթոյ , զայդ ամենայն դիւրին է ինձ գարձուցանել , իմ է արծաթ և ոսկի . այլ ես այնպիսի փառս յաւելից դամ , որ անհամեմատ առաւելուցու քան զփառս առաջնոյն : Ա՛ստ ամին օրինակի և ՚ի ձեռն սաղմոսեր-

զուլն Յոսէ Արտուած (խթ. 12.) "Իմ է աշխարհ լրիւ իւրով. ոչ ուտեմ ես զմիս զուարակաց քոց, և ոչ զարիւն նոխազաց քոց ըմպեմ. մատո Արտուծոյ պատարագ օրհնութեան ,,:

Արտ. Բ. Կարդ բանից մարգարէութեան Աքաքեայ ի քաց տանի զիմաստ Եսայեայն, զի անդէն և անդ ի վերայ ածէ. "Եւ ո՞ ժուժկալեսցէ աւուր մեծ նորա, և կամ ո՞ հանդարտեսցէ յայտնութեան նորա. զի նա մտցէ իբրև զջուր հալոցի, և իբրև զաճառ լուանալեաց. և նստցի ձուլել և սրբել իբրև զարծաթ և իբրև զոսկի. և սրբեսցէ զորդիս Լեւեայ ,,: Արդ այս առանձին ոչ միաբանի ընդ մեզմիկ գալստեան Եսայեայն, զորմէ ասէ "Օ եղէգն ջաղջախեալ ոչ փշրեսցէ, և ըզպատրոյգն առկայծեալ ոչ շիջուսցէ... իջցէ որպէս զանձրեւ ի վերայ գեղման... ոչ ոք լուիցէ ի հրապարակս զբարբառ նորա ,,:

Պէս. Այլ կարի իսկ քաջ ի դէպ եւ անդեն Եսայեայն բանք Աքաքեայ: Զանգի Երեայք տրտնջէին "Ամենայն որ զչար գործէ՝ բարւոք թուի առաջի տեառն,... և ո՞ր է Արտուած արդարութեան ,,. (Աղաս. Բ. 17.) ասէ. ահա ես առաքեմ զհրեշտակ իմ, որ պատրաստեսցէ զճանապարհ ի չարաց. և զկնի իմ խնդրեսցէ, ոչ իւրովի, այլ ի ձեռն վինուց հեթանոսաց. որպէս արդիւնք իրացն կատարեցան ի վերայ Հրաւաքեմի, և մանաւանդ ի վերայ քահանայիցն և ոտիւոց Լեւեայ՝ զորս մերժեաց Արտուած, և կացոյց փոխանակ նոցա նոր քահանայութիւն:

ԳԼՈՒԽ Է

ՉԻ ՈՐ ԻՆՁ ՆՇԱՆՔ Ի ՄԱՐԳԱՐԷԻՑՆ ԸՆԾԱՑԵԱԼՔ ՄԵՍԻԱՑԻՆ ՅՈՒՅԱՆՆՆ ՅԱՑՏՆԱՊԷՍ ՉԳԱԼՈՒՍՏ ՆՈՐԱ

Երկու զվխաւոր նշանս կամ գործս ընծայեն Աքեսիայեն մարգարէք. խոստանալ զհին օրէնս պաշտամանց և զքահանայութիւն, նորս փոխանակ այնոյ սահմանեալ. և կոչել զհեթանոսս յաստուածպաշտութիւն, մերժելով զժողովուրդն հրէական: Արդ եթէ նշանքս այ-

սոքիկ իցեն կատարեալ, նովին իսկ յայտ է գալուստ Աստիային խոստացելոյ։

Օ խափանումն հնոյ քահանայութեան՝ ի գալ Աստիային՝ յայտ առնէ Մալաքիա. (ա. 10.) "Ոչ են կամք իմ՝ ի ձեզ, ասէ տէր ամենակալ, և զպատարագս ոչ ընկալայց՝ ի ձեռաց ձերոց. զի յարևելից մինչև՝ ի մուտս արևու փառաւորեալ է անուն իմ՝ ի մէջ ազգաց, և յամենայն տեղիս մատչին խունկք անուան իմոյ և պատարագ սուրբ։" Եւ դարձեալ Յասայի (կգ. 21.) "Ոսկես մատուցին ինձ որդիքն Իսրայէլի զպատարագս իւրեանց սաղմոսիւք՝ ի տան տեառն. և՝ ի նոցանէ առից ինձ՝ ի քահանայս և՝ ի ղևտացիս ասէ տէր։" Ընդ փոխումանէ պատարագին՝ որ զկնաւոր և երևելի մասն է կրօնիցդ, յայտ առնէ մարգարէն զփոխումն հնոյն օրինացդ և քահանայութեան. զոր և՝ ի բանիդ Դաւթի յառաջագոյն ցուցաք զբառնալ զոհից և նուիրեաց ընդ աւետարանդ տաճարին։ Եւ քանզի յուղևտեան գարուց հետէ բարձան զոհք և նուէրք՝ ի հրէական ազգէն, ամենայն ուրեք նոր պաշտօն սահմանեալ, ապա ուրեմն վաղու ևս եկեալ է Աստիայն։

Օ երկրորդ նշան Աստիային, զկոչումն հեթանոսաց յաստուածպաշտութիւն, նախապատմելովնահապետք և մարգարէք։ Նահապետն Յակոբ կոչէ զնա անկալուն հեթանոսաց. և սաղմոսերգուն զնոյն ստէպ յեզրէ. "Ամպրեա յինէն, և տաց քեզ զհեթանոս՝ ի ժառանգութիւն, և իշխանութիւն քեզ ընդ ամենայն ծագս երկրի։ ... Յիշեսցեն և դարձցին առ տէր ամենայն ծագք երկրի. երկիր պագցեն նմա ամենայն տոհմք ազգաց, և նա տիրէ՝ ի վերայ ամենայն հեթանոսաց." (սղմ. ք. 8։ ծա. 28)։ Եւ Յասայի ամենայն ուրեք, և մանաւանդ՝ ի ք, ծէ, կա, և կգ. գլուխս ասէ. "Օ՛ի եղիցի յաւուրս յետինս յայտնի լեառն տեառն, և տուն Յակոբայ՝ ի վերայ գլխոց լերանց... և եկեսցեն՝ ի նա ամենայն հեթանոսք։... Հաւասիկ՝ ի վկայութիւն հեթանոսաց եատու զնա, իշխան և հրամանատար ազգաց. ազգք՝ որ ոչ գիտիցեն՝ կարդասցեն առ քեզ, և ժողովուրդք՝ որ զքեզ ոչ ճանաչէին՝ ապաստան արասցեն զքեզ։... Եւ կոչեսցինքնոքա ազգք արդարութեան, տունկ տեառն՝ ի փառս... և եկեսցեն օտարազինք հո-

վիւք խաշանց քոց, և պղտզիւք մաձակալք և այգե-
պոծք քո. բայց դուք քահանայք տեառն կոչեսջիք,
պաշտօնեայք Աստուծոյ մերոյ անուանեսջիք։ ... Կամ
ժողովել զամենայն ազգս և ղեզուս ... որոյ չկայէ լը-
ւեալ զանուն իմ, և ոչ ևս տեսեալ զփառս իմ. և պատ-
մեացեն զփառս իմ և զանուն իմ ի մէջ ազգաց, և ած-
ցեն զեղբարս իւրեանց յամենայն ազգաց պատարագ
տեառն ,,։ Եւ գարձեալ Ասէ. (ԺԴ. 24.) “Եւ ասա-
ցից ցոչ ժողովուրդ իմ, ժողովուրդ իմ ես դու. և նա
ասասցէ, տէր Աստուած իմ ես դու ,,։ Եւ ընդհակա-
ռակն նոյնք զմերժումն հրէական ազգին նախասպատ-
մեն. “Ո՛վ ասուրս բազումս նստոյին որդիքն Իսրայէլի
առանց Թագաւորի, և առանց իշխանի, և առանց պա-
տարագաց, և առանց սեղանոյ, և առանց քահանայու-
թեան, և առանց յայտնութեանց ,,. (Հե. Ը. 4)։ “Եւ
ինձէն պատմեցից զինչ արարից ընդ այգի իմ. քակե-
ցից զպատկնորա, և եղիցի յափշտակութիւն ,,. (Դաւ.
Ե. 5)։ “Ժողովուրդ՝ որ գնայր ընդ խաւար՝ ետես լոյս
մեծ, և որ բնակեալ էք յաշխարհի և՛ ի ստուերս մա-
հու՝ լոյս ծագեսցի ձեզ։ ... Ո՛վ մանուկ ծնաւ մեզ,
որդի տուաւ մեզ, որոյ իշխանութիւն իւր եղև՛ ի վե-
րայ ուսոց իւրոց, և անուն կոչեցաւ նմա հրեշտակ մե-
ծի խորհրդոյ ... Աստուած հզօր իշխան, հայր հան-
դերձելոյ աշխարհին ... Յաթոռն Դաւթի նստցի, և
զարքայութիւն նորա յաջողեսցէ ... և ժողովուրդն ոչ
գարձաւ ... և զտէր զօրութեանց ոչ խնդրեցին։ Եւ
բարձ տէր Իսրայէլէ զգլուխն և զվերջն, զմեծն և ըզ-
փոքր՛ ի միում աւուր։ ... Եւ եղիցի՝ որ երանիցեն ժո-
ղովրդեանս այսմիկ, մեղուեալք և մեղուեցուցանիցեն ,,.
(Դաւ. Ը. 2 և այլն)։

Ընդ հեթանոսք վաղ իսկ եկին յաստուածգիտու-
թիւն, և ազգն հրեական ցան և ցիր ընդ երկիր սա-
հեալ նժդեհութեամբ, առանց Թագաւորի, առանց
քահանայութեան և պատարագաց, յուր և ասաց գա-
րոյց հետէ ստուգիւն. և չիք նոցա այցելութիւն՛ ի
տեառնէ, թէպէտ և չիցեն նոցա որպէս երբեմն մեղք
կռապաշտութեան. ապա յայտ է՝ զի եկեալ իսկ է Ա՛ե-
սիան, և զպատուհաս անհաւատութեան իւրեանց կրեն
իրեաք։

ԱՌԱՐԿՈՒԹԻՆՔ

Ա՛ռաւ. ա. Որ ինչ զկոչմանէ Հեթանոսաց նախատպատուին մարգարէքն, պարտ է իմանալ՝ զի՝ ի ձեռն Իւրեց գալոց են Հեթանոսք յաստուածգիտութիւն. և կատարեսցի այս, յորժամ՝ ի ձեռն Ա՛եսայեայ յաղթահարեալ նուաճեսցին ընդ ձեռամբ Իւրեց. և յետ այնորիկ տիրեսցէ խաղաղութիւն ընդհանուր, և՝ի լինութեան բարեաց վայելեսցեն յայնժամ Իւրեայք ըստ յաձախ աւետարանութեան մարգարէից։ Ա՛ան որով միայ տակաւին մարգարէութեանց բազմաց ընդ, նուաճել Ա՛եսայեայ զԱ՛ոգ և զԱ՛ազգ ըստ Նպատակելի բանին (լԸ.) և կանգնել վերստին զտաճարն ըստ նմին մարգարէի (Խ.) և յայտնել ըստ Նմայեայ յաւուրս յետինս լերինն տեառն, և բարձրանալ տանն Ա՛ստուծոյ՝ի վերայ գլխոց լերանց, և յոգունց այլոց նշանաց զալ՝ի կատարումն նախ քան զերևել Ա՛եսայեայ։

Պե. Վարձ Հեթանոսաց ըստ սուրբ գրոց պահեալ էր Ա՛եսայեայ, զոր ակնկալութեամբ Հեթանոսաց կոչեն մարգարէ, և յանուն նորա յուսալ Հեթանոսաց, և նմա պատեալ պՀեթանոսս՝ է ծառանգութիւն։ Ա՛պաքէն Իւրեայք նախ քան զաւերն Նաբուսաղէմի գրուեալք Ա՛ստուածեստան և՝ի Պարսս և՝ի սահմանս Հռոմայեցւոց, չկարացին երբեք դարձուցանել կռոցն՝ի պաշտելութենէ և ոչ զոք՝ի Հեթանոսաց։ Նա զկնի ուրեք՝ի սուրբ գիրս նուաճել Ա՛եսայեայ ընդ իշխանութեամբ Իւրեց զՀեթանոսս, մանաւանդ զհակառակն նորին Հեզ և խաղաղարար աւետեն զԱ՛եսայի. որպէս Ո՛բաբիա, զի ասէ (լԲ. 10.) "Ա՛յո թագաւոր քո գայ առ քեզ արդար և փրկիչ, նոյն Հեզ... և սատակեսցէ զկառս Ա՛յրեմայ և զերիվարս Նյերուսաղէմ, և խորտակեսցի աղեղն պատերազմողի, և բազմութիւն և խաղաղութիւն ազգաց։" Ա՛պա ուրեմն ոչ զՀեթանոս, այլ զՀեթանոսական կրօնս միայն նուաճել Ա՛եսայեայ. Հոգևորականն էր պատերազմին, որպէս և՝ի զինուցն յայտ է՝ զոր նկարագրէ Նյայի. (ԺԱ. 4.) "Ո՛ստոյգ զերկիր բանիւ բերանոյ իւրոյ, և Հոգւով շրթանց իւրոց սատակեսցէ

զամպարիշտս. և եղիցի արդարութիւն ածեալ ընդ մէջ իւր, և ճշմարտութեամբ պատեալ վիզս իւր ,,: Այսու ասէ զխաղաղութիւնն զայն և զլիութիւն բարեաց աւետարանեալ ի մարգարէից ըստ օրինակի պատերազմին՝ հոգևորական է իմանալ, զարքունի խղճի մտաց, հանդերձ ամենայն մասամբք առաքինութեանց: Իսկ եթէ ժամանակաւորս ևս զբարութիւնն զայնոսիկ կամիցին իմանալ իրեայք, ոչ մերժեմք. այլ վասն անհաւատութեան իւրեանց ի Յեսիայն հաճարիմք զնոսա ի վայելից անտի զրկեալս:

Իսկ յառարկելոյ կանխատացութեանդ ինչ ինչ ցուցաք վաղ իսկ լցեալ գալստեամբ Յեսիային. իսկ այլքն, որպէս Գոգ և Մագոգ, և տեսիլ տաճարին, զորոց ոչ մեկնիչք և ոչ բաբունիք միաբան են զնմանտիցն, ոչ ի նշանակ գալստեան Յեսիային ցուցեալ են ի մարգարէից. և այս շատ իսկ է առ խնդիրս մեր:

Ընդդէմ. Բ. Ասէ, զոր ուխտեաց Յստուած ընդ Իսրայէլի, կոչն ստէպ ի սուրբ գիրս յաւիտենական. ապա չէ մարթ համարել զայն ցրեալ: Եթէ յանցուցեալ էին իրեայք, կարող էր Յստուած պատուհասել զնոսա առանց մերժելոյ ի սպառ, որպէս արարն բազում անգամ, և ի զգաստանալ նոցա՝ ընդունել զնոսա վերստին: Այսու որոյ հրէական ազգին այժմու աչէտք ոչ զգրուծն ուխտին ցուցանեն, այլ զաստուածատաստ ցասմանն խրատ հայրենի. որոյ իբրև լցին ժամանակք, հաշտեսցի անդրէն Յստուած ընդ ժողովրդեան իւրում, գալով չափ մովսիսական բանին (Բ. օր. Է. 2.) “Ընժշկեսցէ տէր զմեզս քո, և ողորմեսցի քեզ. և դարձեալ ժողովեսցէ զքեզ յամենայն ազգաց՝ ուր ցրուեացէ զքեզ տէր անդր. եթէ իցէ ցրուումն քո ի ծագս երկրի մինչև ի ծագս երկրի, և անտի ժողովեսցէ զքեզ տէր Յստուած քո,,: Եւ աստուածախնամ զգուշութեանն այսորիկ ապացոյց, զի ազգն այն ցրուեալ ընդ աշխարհս ամենայն և ի մէջ ամենայն ազգաց՝ պահի տակաւին անկորուստ:

Պե. Հաւիտենական կոչն և ե ուխտն Յստուծոյ ի ձեռն Յովսիսի եդեալ ընդ հրէական ազգին, զի գալստեամբ Յեսիային ոչ ցրեցաւ այն՝ այլ ի կատարումն ածաւ, յաւելուլ և ազգաց հեթանոսաց ի իրեայս՝ ե-

Թէ կացեալ էր նոցա յոխտին։ Այնպէս ուխտն օրինական պատրաստուածիւն լինի էր քրիստոսականին, և տիպ նորին ստուերակերպ, որում ՚ի գալ Աչմարտութեանն պարտ էր դադարել, և տեղի տալ իսկականին և կատարելոյն. և այս է՝ զոր ասէն Երեմիա. (լա. 31.) "Ահաւասիկ աւուրք գան ասէ տէր, և ուխտեցից տանդ Իսրայելի և տանդ Յուդայ ուխտ նոր. ոչ ըստ ուխտին՝ զոր ուխտեցի ընդ հարս նոցա յաւուր յորում առի զձեռանէ նոցա հանել զնոսա յերկրէն եգիպտացւոց. զի նոքա ոչ կացին յոխտին իմում, և ես անփոյթ արարի զնոցանէ ասէ տէր,,։ Օնոյն և Նաայի ասէ. (ծե. 4.) "Անդից ընդ ձեզ ուխտ յաւիտենական զսրբութիւնան Դաւթի ճշմարտարիմս. ահաւասիկ ՚ի վկայութիւն հեթանոսաց ետու զնա, իշխան և հրամանատար ազգաց. ազգք որ ոչ գիտիցեն, կարդասցեն առ քեզ. և ժողովուրդք՝ որ զքեզ ոչ ճանաչէին՝ ապաստան արասցեն զքեզ,,։

Յորչափ Երեայք կային յոխտին՝ խնամէր զնոսա Աստուած, և ՚ի յանցանելն իսկ նոցա՝ խրատէր զնոսա հայրօրէն, և ներէր նոցա։ Այլ ՚ի ցրել նոցա զուխտն անհաւատութեամբ ՚ի Բաբիլոն, մերժեաց զնոսա և Աստուած. և յորչափ կացցեն յանհաւատութեանն, մի յուսացին առ ՚ի ՅԱստուծոյ այցելութեան։ Օ ի մերժուն նոցա և աղէտք ոչ սպակս յայլ նուաստս է, յորս մխիթարէր զնոսա Աստուած ՚ի ձեռն մարգարէից յուսով ազատութեան նոցա ՚ի գերութենէ. այլ յորմէհետէ պարտաւոր գտան արեան Բաբելայն, և ոչ միոք մարգարէ եկաց ՚ի նոսա, և ոչ նշոյլ լինչ յուսոյ ուսուցեք առկայծեալ քաղաքին նոցա և տաճարին վերստին շինութեան։

Ընդունիմք և մեք՝ ոչ ՚ի սպառ մերժեալ Աստուծոյ զժողովուրդ իւր, և միխիթարութեամբ մեծաւ հաւատամք առաքելական բանին՝ (հռ. ժա.) "Ոչ մերժեաց Աստուած զժողովուրդ իւր, զոր յառաջն ծանեաւ,,։ Օ ի թէպէտ և վասն ոչ կալոյ նոցա յոխտին՝ անփոյթ արար զնոցանէ, այլ գայցեն աւուրք՝ զի յիշեսցէ զՀարս նոցա՝ ընդ որս ուխտեաց, և կոչեսցէ զնոսա ՚ի հաւատս Քրիստոսի՝ զոր մերժեցինն, "Օ ի և նոքա ողորմութիւն գտցեն... և ամենայն Իսրայէլ կեցցէ,,։

ԳԼՈՒԽ Ը

ՋԻ ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ՃՇՄԱՐԻՑ ՄԵՍԻԱՑՆ Է ԽՈՍՏԱՑԵԱԼ Ի ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ԵՒ ԱԿՆԿԱԼԵԱԼ Ի ՀՐԷԻՑ

Յիսուսի նազովրեցւոյ՝ ի դէպ ելանեն և ժամանակին և նշանք Աստիայեին ցուցեալք՝ ի մարգարէից. ապա նա ինքն է Քրիստոս Աստուած:

Պարտ էր Աստիայեին գալ մինչեւ էր կործանեալ քաղաքն և տաճար, ՝ի բառնալ իշխանութեան՝ ի Յուդայ, ՝ի լռանալ եօթանասուն եօթնեւկայն Դանիէլի, յորում ժամանակի պարտ էր դադարել զոհից և նուէրք, ՝ի ժամանակի պաշտաման, և ահարոնեան քահանայութեան: Որդի Յիսուս յայնմ իսկ ժամանակի եկն յաշխարհ, այսինքն մինչդեռ կանգուն կայր քաղաքն և տաճար, յանկանել իշխանութեանն Հրէից՝ ի ձեռս Հերովդի այլազգւոյ, ՝ի լրումն եօթանասնիցն Դանիէլի. զի՝ ի սկիզբն եօթանասներորդի եօթնեւկին սկըսաւ քարոզել, և՝ ի կէս նորին՝ ի մահ մատնեցաւ, և զկետ մահու նորին բառնան զոհք օրինականք և ահարոնեան քահանայութիւնն կործանմամբ քաղաքին և տաճարին. և եկն՝ ի ժամանակի յորում գալոցեան Աստիայեին սպասեին Հրեայք առհասարակ, և շուրջ զնոքօք բնակեալ ազգք. ապա ուրեմն նա ինքն է Քրիստոս Աստիայն:

Դարձեալ նմին Յիսուսի՝ ի դէպ գան նշանք Աստիայեին ցուցեալք՝ ի մարգարէից: Գանգի եկն յազգէ Յուդայ, ՝ի ցեղէ Դաւթի, և ծնաւ՝ ի Բեթղեհէմ քաղաքի, ըստ Եսայեայ և ըստ Միքիայ բանին. (Եսա. ե. 14: Միք. ե. 2.) "Ահա կոյս յղասցի և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ:... Եւ դու Բեթղեհէմ տուն Եփրաթայ սակաւաւոր, եթէ լինել՝ ի հազարաւորս Յուդայ, ՝ի քէն ելցէ ինձ լինել իշխան Իսրայելի, և ելք նորա՝ ի սկզբանէ աւուրց աշխարհի": Օ՛ի հեզ և խոնարհ եկեաց կեանս ըստ Զաքարիայ (Ը. 9.) "Ահա Թագաւոր քո գայ առ քեզ արդար և փրկիչ, նոյն հեզ և հեծեալ՝ ի

վերայ իշց ,, : Ո՛չ հրաշս և սքանչելիս արար բա-
զումս ըստ Նայեայ (լԶ . 5 .) “Յայնժամ աչք կու-
րաց բացցին , և ականջք խլից լուիցեն . յայնժամ վա-
զեսցէ կաղն իբրև զեղջերուս , և պարզ լիցի լեզու ձան-
բախօսաց ,, : Եւ զի այս ամենայն զՅեսայիէն են ա-
սացեալ , միաբանին և բաբունիք առհասարակ : Եւ զար-
ձեալ զի ՚ի ժողովրդենէ իւրմէ սպանաւ խաչեալ ըստ
սաղմոսերգուին և ըստ Նայեայ (ագ . թես . 19 : Նա .
ծԳ .) “Ծակեցին զձեռս իմ և զոտս իմ , և Թուեցին
զամենայն ոսկերս իմ : . . . Յանօրէնութեանց ժողո-
վրդեան իմոյ ՚ի մահ վարեցաւ ,, : Ժողովուք ՚ի բաց
զայլ ամենայն մարգարէութիւնս լռեալս ՚ի նմա , զորս
յիշատակեցաք ՚ի Գառս աստուածայնութեան քրիստո-
սական կրօնից ՚ի ցուցանել զառաքումն Քրիստոսի առ
՚ի Հայաստօծոյ (Հատ . ա . էջ 104) :

Ընդ քանզի զմերժումն հրէական ազգին , զկործա-
նումն քաղաքին և տաճարի և զդադարումն զոհից օրի-
նականաց և ՚ի վեւտական քահանայութեան կցորդեն մար-
գարէք ընդ անհաւատութեան Հրէից ՚ի Յեսայեան՝ որ-
պէս հետևանս նորին , և եկին հասին այս ամենայն ըզ-
հետ մահուն Քրիստոսի . և զի դարձեալ նոր պաշտա-
մունս , նոր պատարագ , և նոր քահանայութիւն փոխան
հնոյն սահմանեաց Քրիստոս , և ՚ի ձեռն առաքելոց
իւրոց էած զՀեթանոսս ՚ի գիտութիւն Հաւատոյն Հայ-
տնոյ , ապա ամենայն նշանք Յեսայեան ՚ի նմա կա-
տարեցան , և նա ինքն և Հիմարիան Յեսիա :

Ա Ո Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Ընդ. ա . — ա . Պատռել իշխանութեան ՚ի Յու-
դայ , որ համարի նշան ժամանակի գալստեան Յեսիայ-
ին , եթէ զբառնալ թագաւորութեանն ՚ի Հրէից ցու-
ցանիցէ , սխալէ մարգարէութիւնն . զի վաղ իսկ յա-
ւուրց անտի Նաբուգոդոնոսորայ բարձեալ թագաւո-
րութիւն ՚ի Յուդայ և ոչ ևս դարձաւ . զի Հրեայք
յայնմհետէ նախ ընդ ձեռամբ Պարսից , և ապա Յու-
նաց , և ապա մակաբեանց ՚ի վեւտացւոց կացին : — բ . Նակ
եթէ զբարձումն ցուցանիցէ ամենայն քաղաքական

ինքնուրոյն իշխանութեան՝ ի Հրէից, պարձեալ ոչ Հըշմարտի մարգարէութիւնն. զի՝ ի ծնանել Յիսուսի տևէր և տևեաց դեռևս իշխանութիւն՝ ի Հերովդէս որ ոչ այլազգի էր, որպէս վկայէ Յովսեպոս՝ ի հնաստութեան իւրում, (գիրք ե. գլ. ջ.) այլ ազգաւ և կրօնիւք Հրեայ։

Պե. — ե. Վասպիտ և բարձեալ թագաւորութիւն՝ ի Հրէից, այլ ոչ առ գերութեամբն բաբելացւոց, և ոչ յետ գերեդարձին դատարեաց ցեղն Յուդայ. այլ եկաց միայն քաղաքական միութիւն նորա Հանդերձ իւրովք օրինօքն և իշխանութեամբ, Թէպէտ և ընդ ձեռամբ այլոց. և ոչ երբէք խառնեցաւ ցեղն այն որպէս զայլս՝ ի ցեղից մինչև ցպալուստ Քրիստոսի։

— բ. Իսկ Յովսեպոս ամենայն ուրեք եդեալմայեցի առ զՀերովդէս, և Հերքէ իսկ զբանս Նիկովդեմայ դամասկացւոյ՝ որ Հրեայ զինա Համարէր։ Վասն որոյ այդ բանք Յովսեպոսի ոչ նորա են, այլ Հրէից՝ որք ընդ Վաստիս վիճէին զերազանց՝ ի վերայ Աեսարիոյ, զոր Հերովդէս շինեաց։ Վայլ ոչ ինչ փոյթ է մեզ՝ Թէ Հրեայ և կամ այլազգի էր Հերովդէս. և ոչ ընդդեմ ինչ ելանէ կատարման մարգարէութեանն՝ տևել իշխանութեան՝ի Յուդա առ փոքր մի ևս յետ գալստեանն Քրիստոսի։ Օ՛ի՝ ի յեզափոխութիւնս այսպիսիս քաղաքականս շատ է զի տակաւ գայցեն յարդիւնս կանխատեսութիւնք. ապաքէն իշխանութիւն Յուդայ նուաղեաց ընդ Պոմպէիւ, և առաւել յաւուրս Հերովդէի, մինչև՝ ի սպառ դադարեաց առ Տիտոսիւ. և որպէս որ՝ ի հոգեվարսն կայ՝ մեռեալ Համարի, այսպէս և իշխանութիւն Յուդայ պակասեալ Համարէր՝ մերձ՝ ի կործանումն Հասեալ։

Վաւկ. բ. — ե. Քրիստոնեայք ևս ոչ միաբանին՝ ի սկիզբն և՝ ի վերջ գանութեան եօթանասնից. և ոչ մարթ է ցուցանել զՅիսուս նազովրեցի՝ ի կէս եօթանասնամերորդի եօթնամեկին մեռեալ, և ոչ զջնջն և զսատարակս՝ ի նմին եօթնամեկի գադարեալ, և ոչ յայնժամ վախճան լեալ մեղաց, փառաւորեան ամպարշտութեանց, և գալստեան յաւիտենական արդարութեան։ — բ. Այլ ոչ երբեք ուրեք գտանի Թէ Յիսուս նազովրեցի էին օծեալ, որպէս Վանիել գուշակէ զՎեսիային։ Վպա ոչ ժա-

մանակն և ոչ յարակից հանգամանք ձշմարտին ՚ի Յիսուս նաղովլեցի։

Պե. — ս. Տարաձայնութիւն քրիստոնէից ամիսոլի ՚ի գանազանութիւն տասանցևեթ ամացաւելի կամ նուազ թագաւորելոյ Ա.ղտաշէսի՝ որ գՀրոմկարտակ շինութեան քաղաքին և տաճարին Եռ. իսկ ՚ի հաշիւ եօթանասնից եօթնեւկացն միաբան են ամենեքին, զի ՚ի շինուածոյ քաղաքին և տաճարի սկսեալ ՚ի կործանումն նոցին պաղարէ, որպէս և նոքին իսկ նախնի բաբունք վկայեն։ Ո՞ւ եթէ ՚ի քառներորդ ամ Ա.ղտաշիսի սկսանիցիմք գՀաշիւն, մինչև ՚ի հնգետասաներորդ ամ Տիբերի յորում աւետարանին Ղ ուկաս դնէ գսկիզբն քարոզութեան Վրիստոսի, լինին 483 ամք, այսինքն վեցտուն և ինն եօթնամեակք։ Ա.ղդ Վրիստոս երեք և կէս ամ քարոզեաց մինչև ցամահ իւր, որ ՚ի կէս եօթանասներորդին եօթնամեակին կշիռ պատահէ, ապա ժամանակն կանխաւագեալ ՚ի մարդարէէն կատարի ՚ի մահուանն Վրիստոսի։

Այլ քանզի գոհքն օրինականք ստուերք էին մեծի պատարագին՝ զոր Վրիստոս ՚ի խաչին մատոյց ՚ի քաւութիւն մեղաց մարդկան, նովին իսկ դադարեցին ըստ իրաւանց օրինակք նորին ստուերակերպք, զոր և ցեղուլ վարագուրին յայտ արար։ (Մտթ. իէ. 51.) “Այս ահա վարագոյր տաճարին ցեղաւ յերկուս ՚ի վերուստ մինչև ՚ի վայր,,։ Այս արդեամբք իսկ յետ սակաւ ամաց դադարեցին այրեացաւեր կործանմամբ տաճարին։

Պատարագաւն այնուհետև վախճան եղև մեղաց, քաւութիւն ամենայնի շնորհեցաւ, և կատարումն յաւիտենական արդարութեան. իսկ ոչ եթէ քարձեալ ազատութիւն մեղանչելոյ ՚ի մարդկանէ, այլ քաւութիւն եաւ մեղաց և պատժոյ նոցին, և արբանեակ և ներգործական շնորհայ պատրաստեալ նոցա ընդունելութիւն ՚ի ձեռն վաստակոյ և արժանեացն Վրիստոսի՝ որով արդարանամք։

— ր. Ո՞վ ուրեք Յիսուս նաղովլեցի ասի օծեալ նիւթական օծութեամբ, այլ խորհրդականաւ և հոգևոր. նախ ՚ի սաղմոսի (խդ. 8.) “Վ ան այսորիկ օծ զքեզ Ա.ստուած Ա.ստուած քո իւղով ուրախութեան,,։ Եւ զարձեալ ՚ի ձեռն Դանիէլի (կթ. 1.) “Յոտն տեառն

’ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս, աւետարանել աղքատաց առաքեաց զիս ,,։ Ա.յս օծումն ’ի վայրկենի մարդեղութեան ներգործեալ՝ յորժամ բանն Աստուածոյ էառ զմարդկութիւնն, որպէս ցուցցուք ’ի տառս, յայտնեցաւ աշխարհի միրտութեամբն։

Ա.–ԺԷ. Գ. Ա՛եսիայն ակնկալութեամբ հընձանոսաց կոչի, իսկ ընդդէմ Յիսուսի նազովրեցւոյ յարեան ամենայն ազգք. ապա ոչ էր նա Ա՛եսիայն։

Պէ. Ա.պաքէն հետանոսք հալածեցին զՔրիստոս յառաջ քան զՃանաչելն զնա. այլ իբրև ծանեան, ’ի սէր նորա վառեալ՝ զկեանս իսկ իւրեանց ’ի վերայ նորա փոխանակեցին։ Եւ դարձեալ ակնկալութիւն առել հետանոսաց՝ նոյն է, որպէս թէ առեր յոյս և փրկութիւն հետանոսաց. որպէս և ասէ իսկ միւս մարգարէն՝ թէ ’ի նա հետանոսք յուսասցին։ Ա՝ան որոյ հալածեալ հետանոսաց զՔրիստոս՝ ոչ վերջանայր նա ’ի փրկիչ նոցին գոլոյ. զի և Աոձոս ’ի հալածել անդ գնա՝ փրկեցաւ ’ի նմանէ. և ազգք, որք ոչ Ճանաչէին զնա, կարդացին առ նա ըստ մարգարէին։

Ա.–ԺԷ. Դ.—ե. Ա.նդեայ և Ա՛ահլաբեայ պատգամքն ոչ ’ի դէպ ելանեն Յիսուսի նազովրեցւոյ. քանզի ըստ նոցա պատգամացն պարտ էր Ա՛եսիային յերկրորդ տալ Ճարն գալ, այսինքն ’ի զորօքաբեալեանն՝ որ յայնժամ կանգնէր. իսկ Յիսուս եկն յերկրորդն՝ զոր Յովսեպոս ’ի Ֆերովղեայ ասէ շինեալ։ — ե. Եւ դարձեալ զի պարտ էր Ա՛եսիային վաղվաղակի գալ ’ի տաճար անդր, իսկ Յիսուս յետ ամաց իբր հինգհարիւրոց եկն։ — Դ. Եւ դարձեալ ’ի գալստեանն Յիսուսի ոչ շարժեցան երկինք և երկիր, որպէս գուշակէ Ա.նգէոս վասն գալստեան Ա՛եսիային։

Պէ. — ե. Ֆերովղեանն կոչեցեալ տաճար ոչ այլ է յերկրորդէն. զի Ֆերովղէս ոչ նոր ինչ կանգնեաց տաճար, այլ զզորօքաբեալեանն նորոգեաց, վասն որոյ բնդէկ կոչէ զայն Յովսեպոս բազում ուրեք. և Ֆրեայք երկրորդ միշտ համարեցան զայն, և զերկրորդ՝ ըստ նոցա՝ ակնկալեալն ’ի նոցանէ Ա՛եսիայն կանգնելոց է։

— Ե. Ա.ռաւն վաղվաղակի ակնարկէ ’ի միաց որդ ժամանակին, որ առ անցեալսն ’ի սկզբանէ յետ խոստման Ա՛եսիային՝ դոյզն ինչ էր, և մարթ էր այնուհետև համարել մերձ հասեալ զժամանակ գալստեանն։

— Ե. Խակ շարժել երկնի և երկրի ՚ի գալստեանն Քրիստոսի, ոչ միայն ըստ օրինաց բնութեան եկն յարդիւնս այնքան հրաշիւքն՝ զորս գործեաց և ՚ի մահուն, (Մտթ. իէ. 51), այլ և ըստ բարոյականին՝ կերպարանափոխ առնելով զապգ մարդկան։

ԳԼՈՒԽ Թ

ՋԻ ԴԱՏԱԿՆԻՔՆ ԸՆԴԴԷՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՆԻՐԱԻԻ ԵՒ ՈՉ ԸՍՏ ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ՕՐԻՆԱՑ ՏՈՒԵԱԼ, ԵՒ ԱՆԳԹԱԲԱՐ Ի ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՒԵԱԼ, ԱՊԱՑՈՑՑ ԼՐ ԳՈԼՈՑ ՆՈՐԱ ՀՇՄԱՐԻՏ ՄԵՍԻԱ

Սաղմոսարանի Դաւթեայ անհատատ, ամպարշտութեանն Աղոքիոսի զհետ երթեալ, հայհոյէ նախ՝ իրատացի լեալ զգատակնիքն Քրիստոսի, դատաւորացն ըստ սահմանադրութեան երկրորդ օրինաց դատապարտելով զինա։ Երկրորդ՝ ըստ առաջնական օրինացն այնր ժամանակի լեալ զհարցափորձն։ Երրորդ՝ զԴրեայս և մանաւանդ զերիցունս և զքահանայապետս անպարտ լեալ ՚ի սպանմանէն Քրիստոսի։ Ապա ընդդէմ երեցունց ամպարիշտ հայհոյութեանցն ասեմք նախ՝ զսահմանադրութիւնս Երկրորդ օրինաց անիրաւաբար ընդդէմ Քրիստոսի ածեալ։

Սահմանադրութիւնքն այնոքիկ ՚ի մահ դատապարտեն՝ որ զգաստաշտութիւն կամ բազմատուածութիւն քարոզէ ժողովրդեան, զի ասեն (Դ. 15.) "Եմանուէլ ինչ ոչ տեսէք յաւուրն յայնմիկ՝ յորում խօսեցաւ ընդ ձեզ տէր ՚ի Քորեբ լերինն ՚ի միջոց հրոյն„։ Եւ դարձեալ (ԺԳ. 1.) "Եթէ յառնիցէ ՚ի միջի քում մարգարէ ... և ասիցէ. երթիցուք պաշտեսցուք զաստուածս օտարս ... մարգարէին այն մեռցի, զի խօսեցաւ ապստամբեցուցանել զքեզ ՚ի տեառնէ Աստուծոյ քումմէ„։ Եւ դարձեալ (ԺԸ. 20.) "Այսպարգարէն եթէ ամպարշտեսցի խօսել յանուն իմ բան ինչ՝ զոր ես ոչ հրամայեցի խօսել, և կամ եթէ խօսիցի յանուն աստուածոց օտարաց, մեռցի մարգարէին այն„։ Եւ Քրիստոս ոչ միայն կռապաշտութիւն և բազմա-

տուածուԹիւն ոչ ուսոյց, այլ և զհակառակն այնոցիկ քարոզեաց իւրև և 'ի ձեռն առաքելոցն։ Վասնզի որպէս առաքեալ Յ.ստուծոյ Ն.բրահամու, Իսահակայ և Յակոբայ, մերթ ասէր՝ԹԷ "Ես եմ Տայր, որ յերկինս է ,,. (Մատ. իԳ. 9.) և մերթ՝ԹԷ "Ոչ ոք բարի, բայց մի Յ.ստուած ,,. (Մրկ. Ժ. 18.) և այլուր "Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն Ճշմարիտ Յ.ստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս ,,. (Յհ. ԺԷ. 3.) որովք զամենայն դիս և զկուռս 'ի բաց մերժէր։

Իսկ եԹէ որպէս Յ.ստուծոյ զանձն քարոզէր, մի ընդ Տօր յաւելցէ ասել զինքն. "Ես և Տայր իմ մի եմք ,,. (Յհ. Ժ. 29.) և համազգայակից նմին ըստ աստուածուԹեան։ Իսկ զանազանուԹիւն անձանց, որպէս յիւրում տեղւոջն ցուցաք, ոչ ինչ հակառակ ելանէ միում աստուածուԹեան ըստ քրիստոնէական վարդապետուԹեան. զի և 'ի հին կտակարանս անդ ոչ դուն ուրեք յայտնապէս աւանդեալ է այս վարդապետուԹիւն, որ և 'ի նախնեացն եբրայեցւոց չէր ինչ զանխտիր։ Այս անհրաժեշտ էր ըստ այդմ սահմանադրուԹեան Երկրորդ օրինացդ դատապարտել զՔրիստոս։

Երկրորդ՝ զի և ոչ ըստ առեղնական օրինացդ այնր ժամանակի եղև հարցափորձ նորա՝ Որպէս ինքն ամպարիշտն Սաղուաթոր եօԹն պայմանս առ այս սահմանէ. ա. ելից առեղից քննել զամբաստանեալն. բ. ոչ ինչ պատ 'ի պատ և դաւոյական հարցուածս առնել ամբաստանելոյն. գ. տեղի տալ նմա պատասխանւոյ. դ. յապաղել զկատարումն դատաւճռոյն երկուս և երիս աւուրս. ե. առաւելուԹեամբ վարկից դատապարտել զամբաստանեալն. զ. երկուց 'ի դատաւորաց ընկերել դատապարտելոյն մինչև 'ի տեղի պատուհասին, որպէս զի ԹԷ 'ի նպաստ նորին գայցէ ինչ 'ի յայտ՝ կարասցեն փոխել զվճիռն. է. 'ի խոստովանուԹիւն յանցանացն ածել զպարտաւորն։

Ընդ աւետարանիչք, յորոց հակառակորդն խնդրէ վկայուԹիւնս, վկայեն զի ոչ միայն ոչ պահեցան պայմանքս այսոքիկ 'ի դատելն զՔրիստոս, այլ և առ ատն կոխեցան։ Վասնզի փարիսեցիք առ նախանձու մատնեցին զնա. (Մատ. իէ. 18)։ Ետրհուդ առին զինը-

մանէ՝ Թէ ուրպէս կորուսցեն զնա (ԺԲ. 14)։ Ա՛րարին խորհուրդ զի նենդաւԹեամբ կալցին զնա և սպանցեն (ԻԳ. 4)։ Ա՛ւրն խորհուրդ զնմանէ՝ Թէ ուրպէս գնիցեն նմա որոգայԹ բանիւք. (ԻԲ. 15)։ Ա՛ռաքեն առնա զոմանս՝ ի փարիսեցւոց... զի զնա որսացեն բանիւ. (Ա՝ԻՒ. ԺԲ. 13)։ Ո՛ղովէցին քահանայապետքն և փարիսեցիք ատեան, և ասեն. զի՞նչ արասցուք, զի այրն այն բազում նշանս առնէ. (ՅՒ. ԺԱ. 47)։ Ա՛յր քահանայապետքն կշռեցին նմա (այսինքն Յուդայի) երեսուն արծաԹի. և յայնմ հետէ խնդրէր պարապ, զի մատնեսցէ զնա նոցա. (Ա՝ՌՆ. ԻԳ. 16)։ Ա՛յր այն ինչ կալեալ զնա, խորհուրդ արարին ամենայն քահանայապետքն և ծերք ժողովրդեանն, սպանանել զնա. (Ա՝ՌՆ. ԻԷ. 1)։ Ա՛յր դարձեալ դատախազքն՝ դատաւորք լինէին. զի ածին զնա նախ առ Ա՛ննա՝ որ էր աներ Կայիափայի. այս այն Կայիափա էր՝ որ խրատն ետ Հրէից, Եթէ լաւ է առն միում մեռանել՝ ի վերայ ժողովրդեանն (ՅՒ. ԺԸ. 13)։ Ա՛յր հաւատօքիւ ասացեալ, ամենայն ինչ՝ ի սակաւ ինչ ժամս ափ յափոյ վճարեցաւ. ունել զՅիսուս, ամբաստանել, դատել, ՚ի խաչ հանել, ոչ վասն կրօնից ինչ՝ այլ զրպարտուԹեամբ քաղաքական վնասու, առանց վկայից, ընդդէմ կամաց դատաւորին՝ զոր ահարկուԹեամբ ստիպեցին մատնել զՅիսուս՝ ի ձեռս իւրեանց. այսոքիկ եղեն պայմանք հարցափորձին, զոր հայհոյիչն ՊաղուաԹոր օրինաւորս համարի՝ ի դատապարտուԹիւն այնորիկ՝ յորմէ զյաւիտենական դատապարտուԹիւնն յաշխարհական ատենին ընդունելոց է։

Ի՛սկ անողոքմ պատուհասի և սպանման նորա՝ ի նոցունց իսկ՝ ի գլխաւորաց ազգին՝ վկայէ ապտակն ածեալ Յիսուսի յատենի անդ՝ ի հարցափորձին, զորմէ չեզև ինչ փոյԹ ոչ քահանայապետին և ոչ այլոմ ումեք յատենակալացն։ Ա՛յլ կայէ ըմբռստուԹիւն արանցն՝ որով մատնեաց զնա քահանայապետն զդիշերն ողջոյն այսր առնել զնա և հարկանել, Թքանել ընդ երեսս նորա և տանջել զնա ընդդէմ օրինաց։ Ա՛յլ կայէ նոցին իսկ քահանայապետին խնդրել՝ ի Պիղատոսէ՝ ՚ի խաչ հանել զնա, և ՚ի խաչն անդ զառնակոխ նախատինս և հայհոյանս ՚ի նա արձակել։ Ա՛յս ոչ խռովուԹիւն եԹէ ռամկին և զօրականին եղև պատճառ մահուն Ա՛յրմ-

տոան, այլ նոքին իսկ գլխաւորք ազգին, երիցունք գըլխիք և քահանայապետք եղեն սպանողք նորին։

Եւ այս ամենայն հաստատեն գործեալ, զի Յիսուս նազովրեցի նա ինքն էր Աչմարիտն Աստուած՝ զորմէ գայս ամենայն նախատպատմեն մարգարէք. "Ասացին շըրթամբք և շարժեցին գլուխս իւրեանց. յուսացաւ՝ի տէր, և փրկեացէ զնա... ժողովք չարաց պաշարեցին զիս. ծակեցին զձեռս իմ և զոտս իմ, և թուեցին զամենայն ոսկերս իմ... բաժանեցին զհանդերձս իմ՝ի մէջ իւրեանց, և՝ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին,,. (աղ. իա. 18)։ "Ա՝ան քո համբերին նախատանաց, և ծածկեաց ամօթ զերեսս իմ... եւտուն՝ի կերակուր ինձ լեղի, և՝ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ,,. (կը. 9. 22)։ "Ո՛ Թիկունս իմ եւտու՝ի հարուածս, զծնօտս իմ յապտակս, և զերեսս իմ ոչ դարձուցի յամօթոյ ընդ երեսս Թքանելոյ։... Ի մահ մատնեցաւ անձն նորա, և ընդ անօրէնս համարեցաւ,,. (Ես. ծ. 8։ ծգ. 22)։ "Արեցին զվարձս իմ երեսուն արծաթի,,. (Ո՛ա. ժա. 13)։ Եւ ինքն իսկ Յրիստոս զայս ամենայն կանխաւ ասացեալ էր (՝է Ա՛ած. ժգ. 21։ ժէ. 21։ ի. 18։ ՝է Ա՛ել. լթ. 30։ ճ. 33։ ՝է Ղ է. լթ. 44։ ժը. 31)։ Ա՛պա ուրեմն Յիսուս նազովրեցի էր Աչմարիտն Ա՛եսիա։

ԱՌԱՔՈԻԹԻՒՆՔ

Ա՛ուկ. ա. Յիսուս զանձն որդի Ա՛աւուծոյ քարոզէր, և հաւատար առնէր զանձն Ա՛աւուծոյ. իսկ օրէնք հրէականք ոչ ընդունէին նոր վարդապետութիւն. ապա իրաւամբք Յրեայք վէմս առին, զի քարկոծ արասցեն զնա։

Պե. Եթէ Յիսուս աստր եւթ, և ոչ ցուցանէր զաւազեանն հրաշիւք և աստուածային զօրութեամբ, յիրաւի թերեւս էր գայթակղել Յրէից. այլ եթէ այնպիսի նշանս տայր, որոց չէր մարթ ժխտել զհաւատս, պարտ էր Յրէից անսալ նոր վարդապետութեանն, և զորպէսն՝ի նմանէ խնդրել հլութեամբ։ Ո՛ւ ի՞նքն իսկ աստր նոցա. (Յհ. Ժ. 37.) "Եթէ ոչ գործեմ զգործս

Ն՝օր իմոյ, մի՛ հաւատայք ինձ. ապա թէ գործեմ, թէ և ինձ ոչ հաւատայք՝ սակայն գործոցն հաւատացէք... եթէ Ն՝այր իսկ, և ես՝ ի Ն՝այր ,,:

Ծ՝երևոյ ասեմ, զի և առանց գործոցն այնոցիկ էին բաւական նշանք գոլոյ նորա Ա՝եսիա. վասն որոյ յաւելու. (Յհ. Ե. 46.) "Եթէ հաւատայիք դուք Ա՝ովսեսի, հաւատայիք արդեօք և ինձ. զի նա վասն իմ խօսեցաւ ,,: Օ՝ի եթէ ընդունէին զնա իբրև Ա՝եսիա, ոչ ևս օրէն էր նոցա զատել զբանս նորա, այլ լսել ևեթ նմա որպէս Ա՝ովսէսեան պատուիրէր (Բ. օր. ԺԸ. 15). "Ա՝արդարև յեղբարց քոց իբրև զիս յարուսցէ քեզ տէր Ա՝ստուած քո, նմա լուիջիք ,,:

Ա՝ասկ. Բ. Յետս վասն խառնելոյ զԺողովուրդն սպանաւ. զի հերձուածս արկանէր՝ ի Ժողովրդեան. զի զարս մեղաւորս ընդունէր զհետ իւր, որով կասկած տայր ազգին. զի ընդդէմ մեծատանց խօսէր առ Ժողովուրդն: Վ՝ասն այսր ամենայնի դատապարտեաց զնա ատեանն:

Պե. Պարտ էր Վ՝րիստոսի զերկնային վարդապետութիւն իւր աւանդել, և արար զայն և հաստատեաց ամենայն ազգի ազգի սքանչելեօք: Ա՝թէ քահանայապետին և դպրաց հաւատացեալ էր՝ի նա, և Ժողովուրդն համօրէն ընդ նոսա հաւատայր, և հերձուած ինչ ոչ լինէր՝ի Ժողովրդեան: Ա՝յլ՝ի հակառակել նոցա Ճշմարտութեան, զեռևս բազումք՝ի Ժողովրդենէն ողջամիտք և ազատք՝ի կրից հաւատացին՝ի նա, և հարկաւ զհետ գայր տարաձայնութիւն յազգին. այլ տարաձայնութիւնս այս ոչ էր հերձուած քաղաքական, և չկարէր տալ ումեք կասկած իրաւացի, որպէս և չիք ուրեք՝ի պատմութեան աւետարանին լեալ զնմանէ կասկած այնպիսի: Օ՝ի կոչէր նա առ ինքն զմեղաւորս առ՝ի զգաստութիւն որպէս Տայր զորդիս խեռեալս, որպէս Հովիւ զչխարս կորուսեալս, և իբրև բժիշկ զհիւանդս: Յանդիմանել յանդիմանէր, ոչ միայն զմեծատունս ագահս և զօշաքաղս՝ զորս և այլոց մարդարէից խստագոյնս քան զնա կշտամբեալ էր, (Ա՝մո. Ե. 8. լԺ. 9: Ա՝ռեմ. ԺԵ. 13: Ա՝մովս. Գ. 1. և այլն.) այլ և զնոսին իսկ զդպիրս և զփարիսեցիս վասն յայտ յանդիմանն անկարգութեանցն. զի յայս իսկ եկեալ էր Ա՝ստուծոյ ըստ սաղ-

մաերդուին . “Այս կայի Թագաւոր ’ի նմանէ ’ի վերայ Աիանի լերին սրբոյ նորա , պատմել ինձ վհրամանս տեառն ,, . (ը . 7) : Աակայն ոչ վասն այսր ամենայնի դատապարտեցաւ Ոզնիատոս ’ի մահ , այլ վասն յայտուցանելոյ իւրոյ զի աղաւ . “Յայնմ օրէ խորհուրդ արարին , զի սպանցեն զնա ,, . (Յհ . ԺԱ . 53 .) և վասն բազում նշանս առնելոյ . “Ո՞ ինչ արասցուք , զի այրն այն բազում նշանս առնէ . եթէ թողումք զնա այնպէս , ամենեքին հաւատան ’ի նա ,, (անդ . 47) :

Ա-ատ . գ . Յորժամ քահանայապետքն խնդրէին ’ի Յիսուսէ նշան առ ’ի հաւատալ նմա , ասելով (Ա՛ղ . իէ . 42 .) “Եթէ Թագաւոր է Իսրայէլի , իջցէ այժմ ’ի խաչէդ , և հաւատասցուք դմա ,, . ընդէր ոչ արար յայնժամ զսքանչելին , որում չկարէին ընդդէմ դառնալ :

Պե . Ոզնիատոսի քահանայապետքն ախերիմ Թշնամիք Ոզնիատոսի , որոց այնչափ նշանս տեսեալ էր ’ի նմանէ՝ որ առաւելեան բաւական էին ցուցանել զաստուածութիւն նորա , զառն երկիւղանօք ոտնհար լինելով խաչելոյն՝ զկարծելեալ ամբիծարուն նորա Թշնամանէին , և ոչ Թէ առ ’ի հաւատալ խնդրէին ’ի նմանէ նշան . վասն որոյ և բազմապատիկ անարժանք էին սքանչելեացն , զոր եթէ արարեալ իսկ էր՝ չէին հաւատալոց : Ա՛յլ եթէ ոչ էջ ’ի խաչէն վասն փրկութեան նոցին իսկ հայհոյեցան , սակայն ետ նոցա այլ նշանս՝ զգետլ վարագուրն տաճարին , զերկրն սասանել , զվիմաց պատառել , զմեռեալոց ’ի գերեզմանաց յառնել , և զիւր իսկ զփառաւորեալ յարութիւնն . իսկ նոքա կային մնացին յամառեալք յանհաւատութեանն :

ՄԱՍՆ Բ

ՅԱՂԱԳՍ ԽՈՐՀՐԴՈՑ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԻՄ ՀԵՐԵՍԻՈՎՏԱՑՑ

Մարդեղութիւն կոչի Բանին Աստուծոյ մարմնաւորութիւն, որ այլազգ ևս՝ ասի նեղմարդութիւն, տնօրինութիւն, անտեսութիւն։ Այս և անձնաւորապէս կամ էնեթակայապէս միաւորութիւն աստուածային բնութեան ընդ մարդկայնութի՛ւն մի անձն Բանին մարմնացելոյ։ Այնուհայապէս ասեմք, զի մի բարոյական ինչ կարծիցի միաւորութիւն՝ որպէս Աստուծոյ ընդ արդարս, և կամ այլ ինչ ազգ միաւորութեան։ Աստ զարձեալ աստուածային բնութեան ընդ մարդկայնութեան. զի իսկապէս երկու բնութիւնք, աստուածային և մարդկային միաւորին՛ի Քրիստոս, առանց շփոթութեան և այլայլութեան։ Աստ զի՛ և ոչ Բանին, առ՛ի քաց տանել զամենայն կարծիս երկուութեան անձին. վասն որոյ և ասեմք անձնաւորապէս միաւորութիւն. զի մի անձն է՛ի Քրիստոս յերկուս բնութիւնս, որպէս մի տեսութիւն յերկուս աչս. և է անձն Որդւոյն Աստուծոյ, երկրորդ անձն ամենասուրբ Երրորդութեան. ոչ Հայր, և ոչ Հոգի, այլ Որդի. "Եւ Բանն մարմին եղև,,. (Յհ. ա. 14.) "Զաքեաց Աստուած զորդի իւր, որ եղև՛ի կնոջէ,,. (գաղ. դ. 4)։ Այսպա ջինք անձն մարդկայնի՛ն Քրիստոս, այլ բնութիւն ևեթ մարդկայինն՝ ընդ աստուածայնութեան անշփոթ միաւորեալ. մի Քրիստոս որդի Աստուծոյ, Աչմարիտ Աստուած, և մարդ Աչմարիտ. վասն որոյ և յաւելումբ՝ Բանին մարմնացելոյ, այսինքն մարդ եղեալ։

Ի սահմանել աստի ինքնին զՀետ գան մասունք Քառիս, զորս պարտ է մեզ ցուցանել մի ըստ միոջէ. այսինքն նախ՝ զաստուածային բնութիւն՛ի Քրիստոս. երկրորդ՝ զմարդկային բնութիւն. երրորդ՝ զանշփոթ միաւորութիւն երկուց բնութեանցն՛ի մի անձն Բանին. չորրորդ՝ զամբողջութիւն երկոցունցն և յետ միաւորութեան. հինգերորդ՝ զերկաքանչիւրոցն նեղմար-

ծուԹիւն և զկամս. վեցերորդ՝ զհաղորդուԹիւն յաւիտենական երկաքանչիւր քնուԹեանցն ի Քրիստոս, որ ի գոյացապէս միաւորուԹենէն յառաջ եկեալ, վասն որոյ և պարտ իսկ է աստուածական մատուցանել երկրպագուԹիւն և մարդկուԹեանն Քրիստոսի. եօԹներորդ՝ զիաւաց անուանս կամ զնշխանուԹիւնս նորա. ուԹերորդ՝ զարժանաւորուԹիւն վաստակոց նորա. ինն՝ներորդ զհատուցումն արարեալ ի նմանէ վասն մեղաց ի փրկուԹիւն մեր։

ԳԼՈՒԽ Ա.

ՅԱՂԱԳՍ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԲՆՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ընդդէմ աստուածուԹեանն Քրիստոսի մարտեան ուղղակի սոկինեանք, զմեղուԹիւնս Ադամայ՝ զՎնասոդոտեայ և զՊօղոսի սամոստացւոյ նորոգելով։ Իսկ բանականքն աղանդաւորք գլեալ զնոցա ամպարշտուԹեամբն, հաստարեցան զՔրիստոս իբրև զմի յիմաստնոց օրէնսդրաց՝ հաւասար Օ. դարգաշտի, Նումիտուկիոսի և այլոց, յարուցեալ յաստուածախնամ տեսչուԹենէ ի նորոգումն բարուց այնր ժամանակի։

Այլ քանզի զաստուածուԹիւն Բանին և զհամագոյ ընդ Հօր բնուԹիւն նորին ցուցաք լինելի ի Ձառեն զԱրարողուԹենէ, առ ի ցուցանել արդ զաստուածուԹիւնն Քրիստոսի՝ շատ է մեզ ցուցանել, զի նոյն ինքն Բանն Աստուծոյ է եղեալն մարդ Յիսուս Քրիստոս։

Արդ այսպէս ցուցանի նախ ի սուրբ գրոց. Բանն, զորմէ աւետարանիչն Յովաննէս ի սկզբան աւետարանին իւրոյ խօսի, է Հնմարիտն Աստուած արարիչ երկնի և երկրի միանջնաւորակից Հօր։ Արդ զայդ առաջին տուն աւետարանին, այսինքն "Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն"։ ոչ է մարթ զայլմէ ումեքէ իմանալ, բայց միայն զՔրիստոսէ, որպէս և նորին իսկ աւետարանչի բանք յայտ առնեն. "Եւ Բանն մարմին եղև, և բնակեաց ի մեզ. և տեսաք զփառս նորա զփառս իբրև զմիածնի առ ի

Հօրէ լի ընարհօք և ճշմարտութեամբ ,, : Այսպա ուրեմն աւետարանիչն տայ մեզ դաւանիլ զնա Ճշմարիտ Աստուած . և զայն մեծավայելուչ սկիզբն աւետարանին ոչ առ այլ ինչ դնէ , բայց առ ի յայտ առնել որ ինչ ապա զնամանէ ասելոցն էր զաստուածայինս՝ որ առանց այնր սկզբան անհնանալիք լինէին :

Եւ գարձեալ Վկրիստոս ինքնին զիւր աստուածութիւնն յայտ առնէ , և Հրեայք ի նոյն միտս իմանան զասացեալսն . և սրբազան մատենագիրք առհասարակ հինն Հաւատոցն Վկրիստոսի հաստատեն զայս դաւանութիւն : Վկրիստոս ասէպ որդի Աստուծոյ զինքն անուանէ , որպէս յասելն . " Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ , մինչև զորդին իւր միածին ետ . զի ամենայն որ Հաւատայ ի նա՝ մի կորնչի , այլ ընկալցի զկեանս յաւիտենական ,, (Յհ . Գ . 16) : Եւ այնպէս որդի Աստուծոյ զանձն անուանէ , զի Հաւատար առնէ զինքն Աստուծոյ , և մի իսկ ընդ նմա . " Այս և Հայր իմ մի եմք ... զի գիտասջիք և ծանիջիք եթէ Հայր յիս , և ես ի Հայր ,, . (Ժ . 30 , 38) : " Ո՛ի ամենեքեան պատուեսցեն զՈրդի որպէս պատուեն զՀայր . (Ե . 23) :

Այսպէս և ստէպ յեղյեղէ զինջանել իւր յերկնից , զառաքումն և զգալ իւր ի Հօրէ , զյաւիտեանական և զամենազօր տէրութիւն իւր , և զայլ աստուածայինն ստորոգելիս . " Ո՛ի ես յԱստուծոյ եկի և եկի ... նա առաքեաց զիս ,, . (Ը . 42) : " Փառաւորեա զիս , Հայր , առ ի քէն փառաւքն՝ զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի առ ի քէն ,, . (ԺԷ . 5) : " Ո՛ի զոր նայն առնէ , զնոյն և Որդին նմին նման գործէ ... զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ , նոյնպէս և Որդի զոր կամի՝ կենդանի առնէ ,, . (Ե . 19 . 21) : " Ոչ ոք Հանապէ զՈրդի , եթէ ոչ Հայր . և ոչ զՀայր ոք Հանապէ , եթէ ոչ Որդի ,, . (Մատ . ԺԱ . 28) :

Եւ գարձեալ պահանջէ Հաւատալ յինքն որպէս Աստուած . " Դու Հաւատա՞ս Որդի Աստուծոյ ,, , ասէ ցկոյրն . և նա պատասխանէ , " Տէր ո՞վ է զի Հաւատացից ի նա ,, . և ինքն ասէ . " Եր խօսիդ ընդ քեզ , նա է ,, . և կոյրն ասէ . " Հաւատամ տէր . և երկիր եպագ նմա ,, . (Յհ . Թ . 36) : Եւ գարձեալ յաւաքեալսն ասէ . " Հաւատայջիք Աստուած , և յիս Հաւատայջիք ,, .

(Ժղ. 1.) "Օ՛ր ինչ խնդրիցէք յանուն իմ, արարից զայն ,,. (13):

Եւ զի զայս ամենայն բանս Հրեայք և առաքեալք զաստուածութենէ իմանային, անտի իսկ յայտ է՝ զի վասն այսորիկ Հրեայք խնդրէին սպանանել զնա իբրև հայհոյիչ. "Վասն այսորիկ առաւել խնդրէին Հրեայք սպանանել զնա, զի ոչ միայն լուծանէր զշաբաթս, այլ և հայր իւր կոչէր զԱ՛ստուած, և հաւասար առնէր զանձն Ա՛ստուծոյ ,,. (Է. 18.) "Վասն բարւոյ գործոյ ոչ առնեմք զքեզ քարկոծ. այլ վասն հայհոյութեան, և զի դու մարդ ես, և զանձն քո Ա՛ստուած առնես ,,. (Ժ. 34): Եւ յորժամ քահանայապետն եհարց զնա յաւետն երդմնեցուցեալ զնա Ա՛ստուած կենդանի՝ ասել թէ ինքն էցէ Քրիստոս որդի Ա՛ստուծոյ, պատասխանի ետ թէ ես եմ. մինչև քահանայապետին պատառել զպատմուճան իւր և ասել թէ հայհոյեաց. (Մտթ. ԻԶ. 63: Մրկ. ԺԴ. 61): Օ՛նոյն յանցանս արկին զնովաւ և յաւետն Պիղատոսի. "Մեք օրէնս ունիմք, և ըստ օրինացս մերոց պարտի մեռանել, զի զանձն իւր որդի Ա՛ստուծոյ արար ,,. (Յհ. ԺԹ. 7): Եւ զայս կոչումն ոչ ըստ որդեգրութեան ինչ անյատուկ նշանակութեամբ իմանային Հրեայք, զի ըստ այնմ և զանձինս ևս որդիս Ա՛ստուծոյ կոչէին. (Ը. 40.) այլ ըստ յատուկ նշանակութեան, զոր պարտ էր Քրիստոսի ուղղել եթէ չէր արդարև որդի Ա՛ստուծոյ, և մի պատճառս տալ մերոց նոցա, զոր կարծել իսկ ամպարշտութիւն է:

Եւ մանաւանդ և առաքեալք յայտնապէս զաստուածութիւնն Քրիստոսի քարոզեն: Պօղոս կոչէ զնա "Լոյս փառաց և նկարագիր էութեանն Ա՛ստուծոյ, որ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ ,,. (Եբր. Ա. 3): Եւ նմա ընծայէ զբան սաղմոսին՝ զոր մարգարէն յայտնապէս ասէ առ Ա՛ստուած. "Աթոռ քո՛ Աստուած յաւիտեան է և յաւիտեան, և գործք ձեռաց քոց երկինք են. նոքա կորնչին, և դու կաս և ծնաս ,,. (10): Եւ այլուր ասէ. "Ոչ հրեշտակաց ինչ ասաց ,,. (Հբ. Ը. 32.) Եւ այլուր. "Ամենայն ինչ նոքա և՛ ի նոյն հաստատեցաւ, և նա է յառաջ քան զամենայն, և ամենայն ինչ նովաւ եկաց բովանդակ ,,. (Կող. Ա. 15): Եւ այ-

լուր. "Ով է՛ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս,,. (հռ. Թ. 6): Նոյնպէս այլուր. "Ով՛ի կերպարանս Աստուծոյ է, ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զինեալ հաւասար Աստուծոյ, այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ,,. (փիլ. Բ. 6):

Նոյնպէս և այլ առաքեալք, և առաքելապետն պատանէ զնա որդի Աստուծոյ կենդանւոյ. և աւետարանիչք իւրեանց զԱստուծոյ զպատմութիւն աւետարանին առանդեն. (Մտէ. ա.) "Սկիզբն աւետարանի Յիսուսի Քրիստոսի որդւոյ Աստուծոյ,,: Մարդ յայս ամենայն բանից չկարէ գայ, զի կամ Քրիստոս փրկիչն մեր Աստուած է ճշմարտապէս, և կամ ինքն և առաքեալք իւր ուսուցանեն մեզ ամպարշտել՝ հաւասար Աստուծոյ առնելով զարարածն, և զի ամենայն հաւատացեալք՝ որք՛ի սկզբանէ և այսր ճշմարիտ Աստուած պաւանեն զՔրիստոս՝ ոչ ինչ ընդհատ լեալ իցեն քան զկուսապսակն:

ԱՌԱՔՈՒԹԻՒՆՔ

Աստ. ա.—ա. Քրիստոսի՝ զանուն և զյատկութիւնս Աստուծոյ և զպաշտօն աստուածայինն վասն այն ընծայեն սուրբ գիրք, զի որպէս հրեշտակ և պատգամաւոր Աստուծոյ զգեան Աստուծոյ կրէ. վասն որոյ և զնոյնս զանձնէ ասաց:— բ. Ո՞վ է եթէ հրեշտակին՛ի հին օրէնս զանուն Աստուծոյ և զյատկութիւնս կրելով՝ պահանջէր պաշտօն աստուածայինն՛ի Մովսիսէ, յասելն (ելս. Գ. 5.) "Ես եմ Աստուած հօր քո, Աստուած Աբրահամու, և Աստուած Իսահակայ, և Աստուած Յակոբայ... ես եմ Աստուած որ էն... լոյծ զկօշիկս քո յոտից քոց, զի տեղին՝ յորում կաս դու՛ի դմա՝ երկիր սուրբ է,,. ծրջապէս ես առաւել Քրիստոս կարէր պահանջել, որ ըզգեցեալ Աստուծոյ կրէր՝ պատգամաւորեալ՛ի նմանէ առմարդիկ:

Պե. — ա. Ով ուրեք երբէք Քրիստոս պատգամաւոր Աստուծոյ զանձն յայտ արար, այլ Աստուծոյ ծնեալ և առաքեալ. զամենայն աստուածայինն ստորադելիս ասէր ընկալեալ՛ի Հօրէ՛ի յաւիտենից. և զար-

ձեալ՝ թէ ինքն զանձնէ և թէ սուրբ գիրք զնմանէ այնպիսի ինչ ասեն, զոր ըստ սովինեան ամպարշտութեան ևեթ մարթ է ասել զՅօրէ. այսինքն ծնեալ ի Յօրէ, միածին Յօր, ի ծոց Յօր, ելեալ ի Յօրէ, ի ընդ Յօր, հաւասար Յօր. գոլով ի կերպարանս Յօր՝ ծառայի առեալ զկերպ, և նուաւս հնազանդ լեալ մահուչափ, և այլ այսպիսի բանս՝ զորս անձին Յօր ընծայել հայհոյութիւն է։

— ր. Եւ զարձեալ նախանձ Յայրք առհասարակ առնուամբ հրեշտակէ ոչխոյ լսանան զՈրդին Աստուծոյ, որ երևէրն Մովսիսի և նահապետաց։ Այլ համարեալ ևս՝ զի հրեշտակ էր որ խօսէրն ընդ Մովսիսի, ոչ ինչ զօրէ վասն աննմանութեանն՝ զոր ցուցաք։

Ածի. ի. — ե. Սուրբ գիրք յայտ առնեն՝ թէ ընդ դէր որդի Աստուծոյ կոչէր Քրիստոս. նախ՝ վասն զարմանահրաշ յղութեանն, զի ասէ հրեշտակն ցՄարիամ. "Որդին սուրբ եկեսցէ ի քեզ, և զօրութիւն բարձրելոյն հովանի լինի ի վերայ քո. քանզի և որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ է, և որդի Աստուծոյ կոչեսցի"։ Ապա այսմ և Աւգամ կոչի որդի Աստուծոյ՝ (Ղ ոմ. ճ. 38.) ոչ ըստ օրինակի այլոց յերկրաւոր հօրէ ծնեալ։ — բ. Երկրորդ՝ վասն յարութեանն ի մեռելոց, որպէս յայտ առնէ առաքեալն (գործ. ժճ. 33.) "Յարուցեալ զՅիսուս, որպէս և ի սաղմոսին գրեալ է երկրորդում. Որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ"։ Եւ այլուր (հռ. ա. 3.) "Սահմանելոյ որդւոյն Աստուծոյ զօրութեամբ ըստ հոգւոյն սրբութեան ի յարութենէ մեռելոց Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ"։ — գ. Երրորդ՝ վասն առաքմանն և սրբութեան, որպէս ինքն իսկ յայտ առնէ. (Յհ. ժ. 36.) "Իսկ զոր Հայր սրբեաց և առաքեաց յաշխարհս, դուք ասէք թէ հայհոյես, զի ասացի՝ թէ որդի Աստուծոյ եմ"։ Այլ եթէ իսկապէս որդի Աստուծոյ էր, էր մարթ լսել նմա զայն առ Հրեայս։

Պե. — ե. Հրեշտակն ոչ վասն զարմանահրաշ յղութեանն Քրիստոսի ասէ կոչել նմա որդի Աստուծոյ. այլ վասն զոյց նորա որդի Աստուծոյ՝ այնու զարմանահրաշ օրինակաւ յղանալ։ Քանզայայտ ևս ի նախորդ բանից հրեշտակին է՝ ի միտ առնուլ զայս, զի ասէ.

"Ահա յղաւջիկը, և ծնցես որդի... նա եղիցի մեծ, և որդի Բարձրեալ կոչեսցի, և տացէ նմա տէր Աստուած զաթոռն Դաւթի հօր նորա, և թագաւորեսցէ ի վերայ տանն Յակոբայ ի յաւիտեանս, և թագաւորութեան նորա վախճան մի լիցի ,,: Աստ միտքն ցայսվայրս չիք ինչ յիշատակ եղանակի յղութեանն, և սակայն որդի Աստուծոյ կոչի: Նա ապա ի հարցանել Կուսին՝ թէ զիարդ լինիցի ինձ այդ, յայնժամ ի վերայ աճէ ըստպէտն:

Առակ բառն կոչել ոչ ինչ ստնանէ, զի ըստ եբրայեցւոյ նուիթեան հաւասարօր է ընդ գոլոյ, որպէս և այլուր ի տուրբ գիրս է տեսանել. զոր օրինակ Նահայի (գ. 3.) փոխանակ ասելոյ և մնացորդքն Երուսաղէմի տուրբք լիցին, ասէ. "տուրբք կոչեսցին ,,: Նա զոր պատուիրէ Աստուած (եւէց. ԺԳ. 2.) "Արբեա դու ինձ զանդրանիկ ,,, ի նմին Ղուկայ աւետարանին (բ. 23.) գնի. "Ամենայն արու, որ բանայ զարգանդ, տուրբ տեառն կոչեսցի ,,. փոխանակ ասելոյ՝ սրբեսցի տեառն, տուրբ տեառն լիցի: Նա ի նմին բանի հրեշտակն ասէ զՅովսաբեթէ՝ "որ ամուլն կոչեցեալ էր ,,, փոխանակ ասելոյ՝ որ ամուլն էր: Առակ զԱդամ ոչ որդի Աստուծոյ կոչէ աւետարանիչն, այլ ասէ. "Որ Ադամայն, որ Աստուծոյն ,,. այսինքն Աստուծոյ լեալ, Աստուծոյ ստեղծեալ:

— ը. Համաստ առաքելական բանին է, զի Քրիստոս յարութեամբն ի մեռելոց ցուցաւ որդի Աստուծոյ ի ձեռն սքանչելեացն, սրբութեամբ Հոգւոյն. և փառաւորեալ յարութեամբն եղեալ զաստուածութիւն իւր: Աստ բնաբեցաւ, և իբր սահմանաւ կնքեցաւ, զի որդի Աստուծոյ էր. զի սահմանել ասի ինչ, որով բնութիւն նորա Աստուածն և որոշի յայլոց. այդ զօրութիւն սքանչելեաց, սրբութիւն Հոգւոյ և անմահ յարութիւն յայտ արարին զաստուածութիւնն Քրիստոսի. այս է ասելն "Սահմանելոյ որդւոյն Աստուծոյ զօրութեամբ ըստ Հոգւոյն սրբութեան ի յարութենէ մեռելոց ,,:

Օրոյն է իմանալ և ի բան սաղմոսին. տուրբ գիրք գլխաւորեն ի մեռելոց կոչին ծնանել, իբր վերսին ծնունդ. ըստ այնմ (բ. Կդ. է. 14.) "Յուսոյն ակն ունիմք միւսանգամ ծննդեանն, յարութեան մեռե-

ըոց ,, ։ Վ ասն որոյ և Վրիստոս յարութեամբն ի մեռե-
ըոց Համարի վերստին ծնեալ, ըստ որում և առաքեալն
կոչէ զնա անդրանիկ ի մեռելոց ։ Պպա իմաստ սաղմոսին
է . Վանդի որդի իմ ես դու , ոչ թողից զքեզ ընդ մե-
ռեալս , այլ յարուցից զքեզ ։ Օր եթէ ոչ այսպէս ի-
մանայր առաքեալն , ոչ ասէր նովին բանիւ սաղմոսեր-
դուին ցուցանէր որդի Պստուծոյ զՎրիստոս (Նէբ . ա .
Յ .) ուր ասէ . “ Յո՞ երբէք ասաց ի հրեշտակաց . Որդի
իմ ես դու , ես այսօր ծնայ զքեզ ,, ։

— գ . Վրիստոս զառաքումն իւր ի Հօրէ և զարքու-
թիւն ի դէմս ածէ Հրէից՝ ի փոքուէ առ մեծն ձեռ-
նարկելով . որով զՀայհոյութեանն կարծիս ի բաց մեր-
ժեալ, ցուցանէ ապա և զաստուածութիւն իւր ասելով
“ Հայր յիս , և ես ի Հայր ... եթէ ոչ գործեմ ըզ-
գործս Հօր իմոյ , մի հաւատայք ինձ . ապա թէ գոր-
ծեմ, թէ և ինձ ոչ հաւատայք , սակայն գործոցն հա-
ւատացէք ,, ։ Որով այնպէս քաջ ի միտ առնն Հրեայք
զոր հաստատէրն՝ իսկապէս որդի Պստուծոյ գոլ, զի ա-
ռաւել ևս զայրացեալ՝ կամէին ունել զնա , և Յիսուս
ել ի ձեռաց նոցա ։

Պ-ութ . գ . Պռաքեալն ասէ (ա . կոր . ԺԲ . 24 .) “ Վ-
ապա կատարած , յորժամ տացէ ի ձեռս զԹագաւո-
րութիւնն Պստուծոյ և Հօր ... յորժամ հնազանդես-
ցի նմա ամենայն , յայնժամ և ինքն որդի հնազանդես-
ցի այնմ՝ որ հնազանդեցոյց նմա զամենայն , զի եղիցի
Պստուած ամենայն յամենայնի ,, ։ Պրդ Վրիստոս ա-
ւանդէ զԹագաւորութիւն իւր Հօր իւրում, որպէս զո-
րալոր զի ի վախճան լինել պատերազմին՝ ասանդէ
զիշխանութիւն իւր Թագաւորի . և հնազանդի Հօր՝ որ
հնազանդեցոյցն նմա զամենայն . ապա չէ ինքն Պս-
տուած ։

Պե . Պռաքեալն զմարդկային բնութենէ Վրիստոսի
ասէ զայդ . զի որպէս կարող էր ըստ մարդկութեան
հնազանդել նմա ի ջարչարանսն , նոյնպէս և ի յաղ-
թողական Թագաւորութենէն կարասցէ . Եւ Թէպէտ
Վրիստոս ըստ այսմ միշտ իսկ հնազանդեալ է Պս-
տուծոյ Հօր , բայց յայնժամ՝ այսինքն յետ հնազան-
դեցուցանելոյ ընդ իւրև զամենայն՝ յայտնի արասցէ ա-
մենեցուն , զի աննուաղելի ունի զՀնազանդութիւնն ,

և զի ինքն ևս յամենիշխան փառս իւր ներքոյ կայ իբրև մարդ՝ իշխանութեան Հօր. ցուցցէ թէ յԱստուծոյ ունի զամենայն, և զոր արարն՝ աստուածային զօրութեամբ և իշխանութեամբ արար առ՝ ի ընուլ զկամս Հօր. և այսպէս զինքն և զտէրութիւն իւր բովանդակ ընծայեաց յԱստուծոյ Հօր: Օ՛ի եթէ ոչ այսպէս էր, ոչ ևս Ձեմարտէր քան հրեշտակին. "Նա թագաւորութեան նորա վախճան մի լինի,,: Ա՛ան որոյ անդէն խակ՝ի վերայ ածէ առաքեալն. "Օ՛ի՝ պարտ է նմա թագաւորել մինչև դնէցէ զամենայն թշնամիս՝ի ներքոյ ոտից իւրոց,,: Խակ յետ նուաճելոյն զնոսա, չէք այլ ևս երկբայել ընդ տէրութիւն նորա. զի յայտ է՝ թէ առաւել ևս յայնժամ տիրեսցէ առանց ուրուք դիմակալի:

Յ՚ոաւկ. Դ. Գարձեալ ասէ առաքեալն (Եբր. ա. 4.) "Յինչափ առաւել եղեալ քան զհրեշտակս, որչափ լաւ ևս քան զնոսա անուն ժառանգեաց: Վանդիր ցո՞ երբեք ասաց՝ի հրեշտակաց. Որդի իմ ես դու. ես այսօր ծնայ զքեզ. և դարձեալ թէ ես եղէց նմա՝ի հայր, և նա եղիցի ինձ յորդի,,: Ա՛րդ նախ զԱրիստոս բաղդատէ ընդ հրեշտակս, որ անտեղի էր՝ եթէ Վարիստոս իսկապէս որդի Յ՚աստուծոյ էր: Արկրորդ՝ լաւագոյն քան զհրեշտակս ասէ նմա անուն ժառանգեալ. իսկ որ ինչ ժառանգութեամբն է, չէ յատուկ:

Պէտ. Յ՚առաքեալն աստ ևս զմարդկութենէն Վարիստոսի Ձառէ, յառաջագոյն ասացեալ զաստուածութենէն. "Խակ ցորդին ասէ. Յ՚Ձոռ քո Յ՚աստուած յաւիտեանս յաւիտենից,,:

Յ՚ոաւկ. Ե. Նկատական է խորհուրդն մարդեղութեան. զի ոչ է մարթ որդւոյն Յ՚աստուծոյ լինել միանգամայն Յ՚աստուած և մարդ:

Պէտ. Ի՝նչեր իսկ հակատակ, եթէ զնոյն անձն աստուածային խոստովանիս՝ և անձն մարդկային. այլ արդ չէք ինչ հակառութիւն. ոչ՝ի կողմանէ առօղ անձին՝ որ առ անսահմանութեան իւրոյ՝ կարող է քաց յիւրմէն տալ ենթակայութիւն և այլոց բնութեան: Ա՛յ՝ի կողմանէ առեալ բնութեան՝ որ իրօք զանազանի յեն-թակայութենէ իւրմէ, և մարթ է նմա անձնաւորիլ սեփական և սեփականեալ ենթակայութեամբ: Ա՛յ ոչ՝ի կողմանէ անձնաւորական միաւորութեանն. զի առանց

շիոթելոյ երկաքանչիւրոցն քնութեանց՝ մարդկայինն առեալ լինի յաստուածայինն ։ Եւ ոչ անփոփոխութեանն Աստուծոյ հակառակի. զի ոչ եթէ փոփոխի Աստուած, այլ հաղորդէ զինքն մարդկային քնութեան՝ կատարելագործելով զայն ։ Ազօտ իմն օրինակ առ այս ածէ սուրբ Գրիգորիոսն. "Ուսանիմ ես զգիտութիւն առանց փոփոխումն ինչ ածելոյ զգիտելեօք. հաղորդի առ իս գիտութիւնն առանց փոփոխելոյ. կատարելագործէ զիս, և ինքն ոչ փոփոխի ,, ։

ԳԼՈՒԽ Բ

ՑԱՂԱԳՍ ՄԱՐԴԿԱՑԻՒ ԲՆՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Յառաջ իսկ քան զուրացօղս աստուածութեանն Քրիստոսի՝ եղեն ուրացօղք մարդկութեան նորա ։ Ակնք ոչ արժան համարեալ Աստուծոյ միաւորել ընդ մարդկային քնութեան, և զգիարութիւնս նորա յանձն առնուլ, առաչօք զմարմին նորա համարեցան, որպէս մանկիկք և յուլիանիտք և այլք՝ որ առհասարակ երևութականքն անուանին ։ Այլք ասէին չունել նմա հոգի և միտք մարդկային, այլ զտեղի նոցին ընուլ աստուածութեան Բանին ։ Եւ այլք՝ թէ օդեղէն ինչ մարմին երկնային բերեալ, իբր ընդ խողովակ էանց ընդ կոյս Մարիամ ։ Իսկ այլք դարձեալ որդի Յովսեփայ զնա հայհոյեցին. որոց և արդ իսկ քանականքն աղանդաւորք զկնի եղեալ, զանսերմնաբար յղութիւն նորա և ջննունդ կուսական առասպելս վարկանին ։

Եւ քանզի առաջնոցն մոլորութիւնք վաղ իսկ խափանեցան, առանց դեգերելոց ընդունայն՝ ի հերքումն նոցին՝ ցուցցուք զՀնմանիտ և զկատարեալ մարդկային քնութիւն՝ ի Քրիստոս, որով և այն ամենայն մոլորութիւնք ինքնին եղծանին ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Զի բանն Աստուած զնարդկային բնութիւն հաւազոյակից ելոյռւս էառ ստեղծ և անթևրի :

Վարդապետութիւնս այս մանն է հաւատոց, և ստըբ գիրք յայտնի վկայեն՝ մարդ և որդի մարդոյ կոչելով զՔրիստոս, և ընծայելով նմա զամենայն յատկութիւնս՝ որ մարդոյ և եթ պատկանին : Քանզի պատմեն զլղութիւն նորա և զծնունդ և զաղգաբանութիւն, զկեանս, զմահ և զյարութիւն, զորս առանց մարդկային բնութեան ոչ է մարթ իմանալ :

Քարձեալ և զայլ առհասարակ զայս այսպէս վարդապետեն, և յաւելուն՝ զի եթէ պակասէր ինչ ի մարդկայնոցս ի Քրիստոս, ոչ ևս լինէր կատարեալ մարդ, և ոչ ևս կարէր փրկել զմարդ, ոչ միջնորդ ընդ Աստուած և ընդ մարդ կալ, և ոչ բովանդակ բժշկել ըզմարդ : Ի սան որոյ ստըբ եկեղեցի հաստատուն յամենայն ժամանակի կալաւ զայս վարդապետութիւն, որպէս յայտ է ի խոստովանութեանց հաւատոյ և ի սահմանադրութեանց ժողովոց, յորս կատարեալ Աստուած և կատարեալ մարդ դաւանէ զՔրիստոս, որպէս և ի հանգանակն Աթանասի ասի . “ Կատարեալ Աստուած և կատարեալ մարդ, ի բանական հոգւոյ և ի մարդկային մարմնոյ բաղկացեալ ,, :

ՅՕԴՈՒԱԾ Բ

Զի մարմինն Քրիստոսի չէր իսկապէս մարմին, ոչ էր նմա ասել (Ղուկ. ԻԴ. 39.) “ Ձօշափեցէք զիս և տեսէք, զի ոգի մարմին և ոսկերս ոչ ունի որպէս զիս տեսանէք՝ զի ունիմ ,, : Ի սան որոյ ստըբն ( )գոսաւնոս ասէ (ի ձթ գէրս կնդրոյ. ԺԴ.) “ Եթէ առ աչօք էր

մարմին Քրիստոսի, խաբեայն նա զառաքեալս. և եթէ խաբեաց, Աչմարտութիւն ոչ է. և զի է իսկ Քրիստոս Աչմարտութիւն, ապա մարմին նորա առ աչօք ոչ էր»։ Օնոյն ձեռնարկութիւն և Նրանոս և Տերտուղիանոս և Նպիփան և այլք ի Հայոց ձեռնարկեն։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆ

Պաւղեան ասէ (Էփ. Ը. 7.) «Օանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ, ի նմանութիւն մարդկան եղեալ, և կերպարանօք գտեալ իբրև զմարդ»։ Ապա Քրիստոս չէր Հաւասարեալ մարդ, այլ կերպարանօք և նմանութեամբ եւեթ՝ զոր և Հաստատէ այլուր նոյն առաքեալ. (Հռ. Ը. 3.) «Ապստաւած զորդին իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց»։ Եւ դարձեալ (Ը. Կոր. Ե. 16.) «Պայսուհետև մեք ոչ զոք գիտեմք մարմնով. զի Թէպէտ և գիտեաք մարմնով զՔրիստոս, այլ արդ ոչ ևս նոյնպէս գիտեմք»։ Ապա երևեալ Քրիստոսի մարմնով որպէս զԱրեշտակացն էր և որպէս զիւր իսկ երևումն առ նահապետս. զի և դժպատեհ իսկ էր Աստուծոյ ընդ ապականացու և ընդ մեռելոտի մարմին միաւորել։

Պե. Պայդ ամենայն բացատրութիւնք առաքելոյն՝ ի նմանութիւն մարդկան ասել զՔրիստոս և կերպարանօք գտեալ իբրև զմարդ՝ առ ի քաց տանելոյ է զկարծիս այլատեսակ ինչ մարդկութեան, և հաստատելոյ՝ զի զայն բնութիւն էառ, որ հասարակաց է. և այնպէս էառ, զի եղև նման նոցա. որպէս այլուր նոյն առաքեալ ասէ. (Եբր. Բ. 16.) «Ոչ անգէլս ոչ երբէք զԱրեշտակաց բռնն հարկանէ, այլ զզաւակն Աբրահամու բռնն հարկանէ. ուստի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանեալ»։

Իսկ յերկրորդումն բանի, «Նմանութիւն մարմնոյ մեղաց», ցուցանէ առաքեալն. զի Թէպէտ և նմանութիւն մեղանչական մարմնոյ եղև՝ ի Քրիստոս ըստ բնաւորական կրից և ըստ մահուն, այլ ոչ իսկութիւն այնպիսւոյ մեղանչական մարմնոյ, այսինքն մեղանչականութիւն և հարկ կրելոյ. զի Թէև բնաւորապէս էր չարչարելի, այլ ոչ բռնադատութեամբ և ակամայ։

Իսկ երրորդի առաքելական բանին այլ են ամենևին իմաստք, համեմատ տերունական բանին՝ "Հաշխարհէ աստի չեն, որպէս և ես չեմ յաշխարհէ,,։ Նա՛ի կարգէ իսկ բանից առաքելոյն քաջայայտ է, զի կամի ասել։ Առաքեալեա մանուամբն Քրիստոսի մեռաք հին մարդոյն, և նորա անմահ յարութեամբն փոխարկեցաք՛ի նոր յերկնային կեանս, այսուհետև ոչ զոք ըստ մարմնական և երկրաւոր իրաց համարիմք ինչ։ Արդէս զի Թէպետ և զնա ինքն զՔրիստոս յառաջ քան զկոչումն մեր՛ի հաւատս՝ հրէական մտօք գիտէաք ըստ մարմնական հանգամանաց համազգի մեզ, և մարմնաւոր բարեաց՛ի նմանէ ակն ունէաք, սակայն այժմ լուսաւորեալք հաւատով՝ ոչ ևս իբր յայնպիսի պարծիմք՛ի նա, և ոչ որպէս այնպիսի պաշտեմք զնա։ Այլ բարձրագոյն և վսեմական միտս բերելով, նկատեմք զնա յերկինս Թագաւորեալ, և որպէս մարդոյ աստուածարելոյ և պարգևատուի ամենայն շնորհաց՝ ծառայեմք նմա, և իբր այնպիսի պաշտեմք զնա և քարոզեմք։ Եթէ ոչ այս էին միտք առաքելոյն, հարկ էր ասել զի և զամենայն հաւատացեալս անմարմին համարէր, կամ առաջօք ունել նոցա մարմին, յասել անդ. "Ով զոք գիտեմք մարմնով,,։

Իսկ որ դժպատեհն Թուի միաւորել Տանին Աստուծոյ ընդ մահկանացու մարմին, ապացոյց մեծի և անհասանելի մարդասիրութեան նորա է, որում շնորհապարտ սրտիւ պարտ է մեզ երկիր պագանել։

ԳՕԴՈՒԱԾ Գ

Զի մարմինն Քրիստոսի ոչ՛ի յերկնից աճեալ, և ոչ օդեղէն իւիչ է, այլ ևիւթեղէն մարդկային և առեալ՛ի կուսէն։

Եթէ չէր այսպիսի մարմինն Քրիստոսի, ոչ էր մարթ ասել զնա՛ի զաւակէ Նահապետաց, չէր մարթ կոչել զնա ըստ գրոց որդի Դաւթի և որդի Աբրահամու, ըստ խոստացեալ Աստուած՛ի զաւակէ նոցին տալ ըզՔրիստոս։ Եւ ոչ հրեշտակին մարթ էր ասել ցՄարիամ. "Եւ ահա յղասջիր, և ծնցես որդի,,. (Ղ Է. ա. 31)։

Նա ոչ առաքելոյն մարթ էր ասել. "Ա՛ստն որդւոյ Իւրոյ եղելոյ՝ ի զաւակէ Դաւթի ըստ մարմնոյ,,. (Հռ. ա. 3.) և զարձեալ թէ "Ի՛ առաքեաց Ի՛ստուած զորդի Իւր, որ եղև՝ ի կնոջէ,,. (Գաղ. դ. 4):

Ասացք ոչ միայն վաղենտինեանցն և այլոց նախնի հերետիկոսացոյց մոլորութիւնքն դատապարտին, այլ և նոցա բաղանդիցն՝ որք մարմին ինչ երկնայինս, չգիտեմ որպիսի, ընծայեն Քրիստոսի ընդդէմ ամենայն գրոց և աւանդութեան, և անյեղլի վարդապետութեան ամենայն եկեղեցւոյ:

ԱՌԱՔԿՈՒԹԻՒՆ

Ոչ՝ի Կուսէն ծնեալ զՔրիստոս ասէ Հրեշտակն, այլ "Որ՝ի նմանէ ծնեալ է՝ի Հոգւոյն սրբոյ է,,. (Մտթ. ա. 20): Եւ զարձեալ առաքեալն Համեմատեալ զՔրիստոս ընդ Ադամայ, ասէ. (ա. Կոր. ԺԵ. 47.) "Ա՛ռաջին մարդն յերկրէ՝ հողեղէն, իսկ երկրորդ մարդն տէր յերկնից,,:

Պե. Հրեշտակին՝ ի նմայն ասելոյ ոչ գՀետ գայ՝ զի չլսցէ՝ ի նմանէ. քանզի և ըստ միում աւետարանչին ասէ. (Ղ է. ա. 35.) "Քանզի որ ծնանելոցն է՝ի քէն՝ սուրբ է,,: Եւ զարձեալ առաքեալն ասէ. (Գաղ. դ. 4.) "Ա՛ռաքեաց Ի՛ստուած զորդին Իւր, որ եղև՝ ի կնոջէ,,:

Իսկ ասել առաքելոյ զերկրորդ մարդն յԵրկնից կամ Երկնային, ոչ ըստ պոյացութեան մարմնոյն է խմանալ՝ իբր թէ երկնային մարմին ընկալեալ և ոչ զառդամայնն. այլ նախ՝ ըստ աստուածայինն ծագմանն, որպէս ծնեալ յերկնաւոր Հօրէ. որպէս խմանան և Քրիսոր աստուածաբան, և Ծգռոսինոս, և մեկնիչք և աստուածաբանք: Երկրորդ՝ զի մարմին նորա կազմեցաւ երկնային զօրութեամբ՝ ի Հոգւոյն սրբոյ, և նոյնին զօրութեամբ միաւորեալ յոգեցաւ մարդկութիւնն ընդ աստուածայինն բնութեան. որպէս խմանան սուրբն Կղեմէս, և այլք՝ ի վարդապետաց: Յայս հայի և Ե նորհալեցին մերոյ ասելն՝ ի Թղթին առ Ա՛լեքս՝ զմարմինն Քրիստոսի "Ըստ աստուածայինն բնութեանն՝ երկնաւոր, իսկ ըստ մարդկայինն բնութեանն՝ երկրաւոր,,. և Ա՛յսօր անձառն.

“Ընդ բաղարջին հայց անխմոր՝
Եւ զմարմին իւր վերինաւոր
Ընկուսածինն անսերմնաւոր ,, :

Նորոգ՝ ըստ երկնաւոր և անմեղանչական սրբութեանն, որպէս Ընդամ երկրաւոր ասի ըստ մեղանչականութեանն. այսպէս իմանան Ասկեբերան և Տեր-տուղիանոս : Եւ ջորոգ՝ որպէս նա ինքն Տերտուղիանոս և այլք իմանան, ըստ փառաւորեալ անապականութեանն իբրև զերկնայինն մարմինս :

ՅՕԴՈՒԱԾ Դ

Չի բանն Աստուած էառ և զհոգի բանական :

Եթէ գաւանեմք զԲրիստոս մարդ կատարեալ, ապա է նորա և հոգի բանական. զի որպէս սուրբն ( )գոստինոս ասէ (Ընդ. ՃՀԷ. 4.) “Ամէն է մարդ կատարեալ, որոյ մարմին առանց հոգւոյ է, կամ հոգի առանց մարդկային մտաց ,, :

Գտանել զի ըստ նախնի ձարց՝ բանն Աստուած՝ ի ձեռն կամ միջնորդաւ հոգւոյ էառ զմարմին : Գտանել զի էառ զայն ամենայն, զոր բժշկելոյն էր. արդ կարօտ ևս բժշկութեան հոգի մարդկայինն էր, ապա ընկալաւ և զայն :

Գտանել զի ըստ առաքելական հանգանակին՝ Բրիստոս ի մեռանելն էջ ի լսմալոս առ նահապետս. արդ ըստ աստուածութեանն էր նա ամենայն ուրեք, ըստ մարմնոյն ի գերեզմանի, ապա հոգւովն էջ անդր. որպէս և առաքեալսն ասէ ըստ սաղմոսերգութեան. “Օ՛ի ոչ թողաւ ոգի նորա ի դժոխս ,, :

Գտանել զի խոստովանիմք զնա Բրիստոսի. արդ մեռանել ոչ այլ ինչ է, եթէ զատանել հոգւոյ ի մարմնոյ :

Գտանել զի և ինքն վկայէ ունել հոգի՝ յասելն. “Տրտում է հոգի իմ ,,. (Մատ. ին. 38) : Եւ թէ “Ձայր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ ,,. (Ղուկ. ին. 46) :

Եւ զատանել վկայեն մարդիօրէն կիրք նորա և տաք,

և ներգործութիւնք մարդկային կամաց, զորոց միայ մեզ ասել՝ ի տառև։

Օնոյն հարկաւ ցուցանէն և ներգործութիւնք մարդկային մտաց՝ ի Քրիստոս, ստէպ նշանակեալ՝ ի տուրըդ գիրս. որպէս գիտել, իմանալ, զարմանալ, խոհ֊ վիլ և այլն, որ են գործք մտաց, և չէ մարթ ընծայել զայնոսիկ աստուածութեան՝ որ ամենապէտն է և ան֊ փոփոխելի։ Ա՛ ման որոյ և դաւանեմք՝ ի հանդանակին. "Հրով էառ մարմին, հոգի, միտք, և զամենայն որ լինչ է՝ ի մարդ, ձշմարտապէս և ոչ կարծեօք։

ԱՌԱՔԿՈՒԹԻՒՆ

Ընտարանիչն ասէ. "Եւ Յանն մարմին եղև,,. ապա մարմին ևեթ էառ, քանզի աստուածութիւն Յա֊ նին ընդ զտեղի մարդկային հոգւոյ և մտաց. ապա թէ ոչ, ՝ի մարդկային միտս նորա տեղի գտանէին և խոր֊ հուրդք մարմնոյ, զորս պարտաւէ առաքեալն (Կո. ը. 6)։

Պէ. Սուրբ գիրք բազում ուրեք մարմին կոչեն՝ ի մանէ զմարդն բոլոր, որպէս ուր ասեն. "Երկիցէ ա֊ մենայն մարմին յերեսաց տեառն,,. (Ծա. ը. 13.) "Տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Ընտուծոյ մե֊ ծոյ,,. (Եսայ. խ. 7.) "Ընդունեաց ամենայն մարմին զձանապարհս իւր՝ ի վերայ երկրի,,. (Ծն. գ. 12)։ Եւ այսմ ձևոյ բանից աւետարանչին բազում ինչ պատ֊ ձառս ածեն սուրբ Հարք, զորս է տեսանել՝ ի Պետա֊ ւիոս (գիրք ձ. գլ. ք)։ Եթէ աստուածութիւն Յա֊ նին ընդ զտեղի բանական հոգւոյ, ոչ ևս լինէր Քրիս֊ տոս մարդ կատարեալ։ Եւ ոչ հարկ էր՝ զի՝ ի մարդ֊ կային միտս նորա տեղի գտանէին խորհուրդք մարմնոյ. քանզի ՅԱդամ, մինչև էր մեղուցեալ, ոչ ունէին տե֊ ղի խորհուրդք մարմնոյ. և դարձեալ զի մարդկային բնութիւն միաւորեալ ընդ աստուածայնումն՝ ի Քրիս֊ տոս, անընդունակ էր խորհրդոց մարմնոյ։

ԳՕԴՈՒԱԾ Ե

Զի Քրիստոս ըստ մարդկային բնութեանն պայմանի ներքոյ անկեալ էր կրից և ցաւոց :

Նովին իսկ գաւանելով ՚ի հանգամանակին զՔրիստոս չարչարեալ և մեռեալ, խոստովանիմք զնա ներքոյ անկեալ կրից և ցաւոց : Ո կայեն այսմ տուրբ գիրք ՚ի պատմել զքաղց նորա և զծարաւ , զլալ նորա և զվաստակել ՚ի Ճանապարհէ , զտրտմել և զհոգալ . մինչև խնդրել ՚ի Հօրէ անցուցանել յիւրմէ զբաժակն զայն , և կարօտել զօրանալոյ ՚ի հրեշտակէն . (Ո Ղ . ԻԲ . 42 .) “ Ներևեցաւ նմա հրեշտակ , և զօրացուցանէր զնա . և էր ՚ի տագնապի ,, : Ո՞ ի եթէ ոչ Ճշմարտապէս զայսոսիկ կրեր Քրիստոս , ամենայն բանք աւետարանչացն Թարմատրք լինէին , և գործք տնօրէնութեանն Քրիստոսի և փրկութիւն մարդկան առ աչօք . քանզի իսկապէս մեռանելովն Քրիստոսի եղև փրկութիւն մեր :

Ո՛ան որոյ և ժողովք Ե իրակաւանի և Տարսոնի համաձայն սրբոյ եկեղեցւոյ հաստատեն զայս Ճշմարտութիւն ըստ վարդապետութեան հայաստանեայց եկեղեցւոյ , որպէս և ՚ի Ե արականս մեր երգեմք . “ Ո՛ր յանպատում փառաց խնդարհեցար , ախտակիր եղեր հոդեղէն բնութեանս ,, . (Ձնն . Ղ .) “ Ո՛ր խոնարհեցար ՚ի տկարութիւնս մեր մարդասէր տէր ,, . “ Խոնարհեցար ՚ի չարչարանս չարչարելի բնութեամբ մարդկան ,, . (Ո՛ գրաբարին .) “ Ասմաւ կրելով զերկիւղ՝ զօրանայիր ՚ի հրեշտակէն . (՚ի կան . ա—ա գ—բէ) : “ Ն՛անապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց ,, . (՚ի Պարտմաստոյց) : Ո՛ր Սարկիս վարդապետ մեր . “ Ո՛ր զի հանդերձեալ էր Ո՛ստուծոյ ման մարդկան չարչարիլ , և ման զի այս անկարելի էր Ո՛ստուծոյ առանց միջնորդի մերկ աստուածութեամբն չարչարիլ , նորին աղագաւ էառ զմարմինն չարչարելի ,, (Ձառ Թ) : Ո՛րչափ Թէ արդեօք այս ամենայն կիրք մարդկային բնութեան բնաւորապէս կրէին ՚ի Քրիստոս , այսինքն ՚ի տկարութենէ մարդկային բնութեան , Թէ գերբնական

և աքանչելեօք իմն Պրիսկոսի զանձնեերջոյ արկանելով կրնչ և ցաւոց, վէճ սաստիկ երբեմն յուզեցաւ ընդ Փիլիպպոս աբբայ և ընդ Յովաննէս վանահայր, որ ի տուրբ գրոց և ի Նարց ցուցաներ քնաւորապէս կրել զայնս Պրիսկոսի ըստ պայմանի մարդկային քնութեանն։ Պայլ եկեղեցի տուրբ ոչ սահմանեաց զվէճն. բայց միայն կարծիք Յովաննու հասարակաց եղեն կարծիք որպէս համաձայն բանից առաքելոյն. "Պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանել, զի ողորմած լինի և հաւատարիմ քահանայապետ յաստուածակոյս կողմանէ անտի, առ ի քաւել զմեղս ժողովրդեանն. զի որով ինքն չարչարեցաւ, զիորձ առեալ՝ կարող է և փորձանաւորաց օգնական լինել,, (եբր. բ։17)։ Նա դարձեալ "Ոչ եթէ ունիմք քահանայապետ՝ որ չկոչ կարող չարչարակից լինել տկարութեան մերում, այլ փորձ է ամենայնիւ ըստ նմանութեան առանց մեղաց,, (անդ դ. 15)։

Ա Ն Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Նշան. Ա. Նարք ուրեք ուրեք անարժան համարին Պրիսկոսի զկիրս մարդկայինս. և այլ ուրեք թուին ի բաց տանել ի նմանէ զամենայն իսկ զգացումն ցաւոց և երկիւղի։

Պե. Նարք անարժան համարին Պրիսկոսի, և յիւրեաւն, զկիրս պարտաւելիս՝ որ ի յուսացեալ կամաց մարդոյ գան յառաջ. քանզի զանպարտաւելիսն ոչ է մարթնոցա անարժան համարել Պրիսկոսի յետ միանգամ կամելոյ նորա մարդասիրատես զգեներ զմերս մարմին հողեղէն։

Իսկ ուր ուրեք թուին Նարք ի բաց տանել զկիրս ի Պրիսկոսէ զցաւ և զերկիւղ, կամ ըստ աստուածայինն քնութեանն իմանան՝ որ անկրեականն է, և կամ ըստ զանազանութեան կրից նորա ի մերոցս։ Պանզի մերքս հարկաւ են և ըստ պարտեաց, տիրեն ի մեզ և չէ ի կամս մեր չանկանել ընդ նոքօք։ Իսկ ի Պրիսկոս՝ տկարութիւնք մարդկայինք կամաւորք էին, վասն մեր յանձն առեալ անպարտականն, և ըստ կամաց և ի Թողացուցանելոյ իւրոց կրէին ի նմա։

Ա՛տեէ. Բ. Տրտմութիւն և ցաւ չկարեն կալ՝ի միաւսին ընդ ուրախութեան երանական տեսութեան՝ յոր վայելէրն Քրիստոս, վասն որոյ և յերանեալսն չիք տեղի տրտմութեան և ցաւոց: Ապա եթէ Քրիստոս կրեր ցաւս և տրտմութիւնս, յայտ է թէ ոչ ըստ պայմանի մարդկային բնութեանն կրեր, այլ արտաքոյ բնութեան աբանչելապէս:

Պէ. Յառնուլ Յանէին Յստուծոյ զմարդկայինս բնութիւն առ՝ի կրել և մեռանել վասն փրկութեան մերոյ, զերանական տեսութեանն բերկրութիւն այնպէս ամփոփեաց, զի հոգւոյն և մարմնոյ կրիցն և զգացմանց մի լինի խափան: Նակ երանելոց, առ՝ի չգոյէ՝ի նոսա այսր պատճառի, այլազգ է պայման. քանզի նոքա հասեալ նակ են, նակ Քրիստոս և հասեալ էր և ուղեւոր:

ՅՕԴՈՒԱԾ Զ

Թէ ի՛չ ապականացու և ի՛չ անապական ասիցի մարմինն Քրիստոսի:

Յուլիանոս ոմն այնիկառնացի՝ի հինգերորդ դարու եկաց աղանդապետ այնոցիկ, որք զմարմինն Քրիստոսի ոչ համագոյակից մերում ասէին՝ այլ անօար, անապական, անկրակաս, անչարչարելի և փառաւորեալ. որով և զամենայն անապարսաւ կիրս մարդկայինս մարմնոյ, զորս կրեացն Քրիստոս, առ աչօք համարէին կրեալ՝ի նմանէ:

Ընդդէմ սոցա ուսուցանէ եկեղեցի, զի մարմինն Քրիստոսի նախ քան զյարութիւն ապականացու էր ըստ ամենայն անպարսաւ և բնական կրից մարդկային հոգանութեան բնութեանս, և զի չհմարտապէս և ոչ առաչօք կրեր զայնս Քրիստոս. քաղցնոյր, ծարաւէր, վաստակէր, չարչարէր, վիրաւորէր և մեռանէր, որպէս վերագոյն ցուցաք:

Վասն որոյ մարմինն Քրիստոսի կոչի ապականացու նախ՝ ըստ այսմ մտաց, այսինքն ըստ կրական և մահկանացու գոլոյ. և ըստ այսմ՝ի կիր առնուն զարք ըզբառդ ապականացու, որպէս Աւրեղ յետ յիշատակելոյ

զլաւ, զտրտմել, զնոգալ և զերկնչել Քրիստոսի, ասէ. "Ալ ան զի մահկանացու և ապականացու էառ մարմին, և ընդ այսպիսեօք ախտիւք անկեալ՝ հարկաւորապէս ընդ մարմնոյն իւրացուցանէ և զնորայն կիրս, և նուաւ (կամ նորա) կրելով զայս՝ որպէս ինքն կրեալ ասի ,,:

Եւ Շ նորհալի Հայրապետն ասէ. "Ասկ կիրք ապականութեան ասել՝ի նմա ըստ օրինաց մարմնոյն՝ զքաղցն և զծարաւն, զվաստակելն և զննջելն և զայլսն, ոչ է անտեղի. զի վկայէ նոցումն և կիրք սրբոցն (այսինքն Հարց.) բայց յայտ առնեն դարձեալ՝ եթէ ոչ ինքն հետևէր կրից ակամայ որպէս մեք, այլ կիրքն ծառայաբար նորին կամացն. ոչ ժուժկալութեամբ ըստ առաքինեացն, այլ իշխանաբար ըստ աստուածութեանն ,,: Եւ վասն թևեռելոյ նորա՝ի խաչին և տիգահոց լինելոյ՝ ասէ. "Որ Թուին կիրք ապականութեան ,,:

Երկրորդ՝ կոչի ապականացու ըստ այնմ, զի ամենայն բնախօսք կոչեն ապականութիւն զիր և է այլայլութիւն մարմնոյ, զաճումն նորա և զնուազումն, զաշխատութիւն և զցաւ, և առաւել զբաժանումն հոգւոյ՝ի մարմնոյ՝ որ է ապականութիւն բոլորին, այսինքն եղծումն մարդոյ, Թէպէտ և յետ մահուն անեղծ և անապական մընայէ մարմինն: Զդ տէրն մեր կրեաց զայս ամենայն այլայլութիւնս մարմնոյ, ապա մարթ է և սրբոտ իսկ ըստ բնախօսից կոչել զմարմինն Քրիստոսի ապականացու:

Ընդդէմ Յուլիանոսի անիկաւնացւոյ՝ որ ոչ իւիք նշանակութեամբ ընդունէր ասել ապականացու զմարմինն Քրիստոսի, ի ծայրայեղ կարծիս անկաւ Սեւերոս անտիոքացի՝ ոչ իւիք նշանակութեամբ զմարմինն Քրիստոսի ասել անապական, որուլ՝ի վասնզ աստուածաչարչարութեան զառաջաւ: Զդ ընդդէմ վարդապետութեան սորա՝ մարմինն Քրիստոսի կոչի անապական նախ՝ վասն անեղծ մնալոյ՝ի գերեզմանի, ըստ այնմ. "Ոչ ի ոչ Թողցես զանձն իմ՝ի դժոխս և ոչ տացես սրբոյ քումմ տեսանել զապականութիւն ,,. (սղմ. ԺԵ. 10): Որ և առաքելապետն երկրորդէ (գործ. Բ. 31.) "Ոչ ի ոչ Թողաւ ոգի նորա՝ի դժոխս, և ոչ

մարմին նորա եւս զապականութիւն ,, : Ա՛ւ ան որոյ քաջ զանազանէ Կոստանդին՝ զի ապականութիւն ասի երբեմն զկրից , զորս կրեաց տէրն մեր . “Կատարեցաւ նշանակութեան ապականացու զմարմին տեառն ասեմք ,, : Եւ կ՚ըսէ զի զուծմանէ մարմնոյ , զոր ոչ կրեաց Կիրիանոս . “Կատարեցաւ նշանակութեան անապական կամ անեղծ խոստովանիմք զտեառն մարմին , որպէս մեզ աստուածազգեաց Հարքն աւանդեցին ,, :

Անկրօտդ՝ կոչի անապական վասն աննիւթ և անարատ զոլոյ յապականութենէ մերմէ :

Անկրօտդ՝ ըստ կուսածնին զոլոյն և ըստ կուսական մաքրութեանն , և ըստ բնաւից իսկ աստուածահրաշ բնաւորութեանց աստուածախառն մարմնոյն . քանզի բառս անապական Համեմատի յունականացն ἄφθαρτος և ἄχραντος , և լատինականացն incorruptibilis, inviolatus, immaculatus և intactus, որպէս յայտ է ՚ի թարգմանութենէ նախնեացն մերոց Հարց :

Ողորմած՝ ըստ ազատ զոլոյ ՚ի հարկաւորէ կրից . և ըստ այսմ քաջ տրամաբանէ Շ նորհալի Հայրապետն , զի ոչ տիրապէս ՚ի դէպ զայ մարմնոյն Կիրիանոսի բառս ապականացու : Կանզի մանաւանդ այս նշանակէ զլինելոյն՝ եթէ ապականելի ՚ի գերեզմանի , ուր անապական մնալոցն էր : “Ո՛չ եթէ ՚ի գերեզմանի անդ՝ որ վայր է ապականութեան բնութեան , առաջաւ զնմանէ ոչ տեսանել զապականութիւն , զինչ երկբայելի է ՚ի կեանսն ոչ զոլ ապականացու . քանզի ամենայն ապականացու ըստ հանդերձեալ կատարումն նշանակէ՝ որպէս ՚ի սահմանի մարդոյս մահկանացուն . և մանկան Թադաւորի հանդերձելոյ Թագաւորել (Թագաւորացու) , և կամ այլոց և՝ որք ընդունակք են յաւաջատութեան բարւոյ իրի և կամ վատնարի . այսպէս և մերում մարմնոյ՝ որոյ առաջի կայ ապականիլն ՚ի գերեզմանի , յիրաւի ասի ապականացու ... իսկ այնմ որ յապականութենէն տեղոջ հանդերձեալ էր անապական մնալ , զինքրզ զ՚ի հաւատացելոց յանդգնի ասել նման ապականացու ,, : (Ընդ . առ Յհ . Վարդապետ ասմէ) :

Իսկ յաղագս Աստուծոյ զմերոյն հանախտիս ընդ յուլիանիտս զրպարտելոյ՝ ասէ նոյն լինքն տուրբ Հայրապետն , Թէ ,, Աչմեաւ ե ՚ի մինչ Յուլիանէն այն ո-

աղանդ նորա ,, ։ Եւ Յոհան խնամատարէր ինոյն նզովս հանդերձ ժողովուրդ եղ. և Պօղոս հաստատեաց յաշխարհին Ասիոյ զսերմանացանս աղանդոյն ։ Եւ Յոհան մայրապահէր, որ ընդ աշակերտին իւրում Պարզոի ձեռն ետ ի յուլիանիտա, ազատասպրոշին խոստանալ արտասահմանեցաւ յաւուրս Ներոնի Ը ինն։ և բազումք ի վարդապետաց մերոց հզօր բանիւք և գրովք հերքեցին զմոլորութիւնն զայն, կշտամբեալ և զյուլիանիտա և զՊօղոսեցին ։

ԳՕԴՈՒԱԾ Ի։

Զի ի մեռանիլն Քրիստոսի, անբաժանելի էր աստուածութիւնն նորա երկու ի հոգւոյն և մարմնոյ ։

Վարդապետութիւնս այս մասն է հաւատոյ, խոստովանեալ միշտ ի կաթողիկէ եկեղեցւոյ. վասն որոյ առաջի եկ ե՞ծ աբանից՝ առեալ ի Գամաղիայէլէն. զի զոր ինչ միանգամ էառ Բանն Աստուած՝ ոչ երբէք եմոլ։

Ասաքեաէն ասէ. "Յետուս Քրիստոս երկիւղ և այսօր, նոյն եւ յաւիտեանս ,, . (եբր. ԺԳ. 8) ։ Այդ եմէ աստուածութիւն Քրիստոսի յետ օրենայ մահուն բաժանեալ էր ի հոգւոյ նորա կամ ի մարմնոյ, լինէր երբեմն՝ զի ոչ ևս նոյն էր Քրիստոս, այսինքն Բանն Աստուած ունակ հոգւոյ և մարմնոյ ։

Գրեալ ի բանն առաքելապետին (գործ. բ. 31.) "Օ՛ի ոչ թողուս զոգի նորա ի դժոխս, և ոչ մարմին նորա եռնս զապականութիւն ,, , ասէ տերեն Աթանաս. "Օ՛նթող մարմինն՝ յանապականէն Աստուծոյ մեկնեալ՝ յանապականութեան կայր միայր ,, ։

Գրեալ նոյն ինքն առաքելապետն ասէ (ա. կոր. գ. 18.) "Ոչնչեալ և մեռաւ մարմնով, այլ կենդանի է հոգւով. որով և ոգւոյն՝ որ էին ի բանտին՝ երթեալ քարոզեաց ,, ։ Ուր հաւատարմապէս Բանին Աստուծոյ ընծայէ զկեանն մարմնով ի գերեզմանին, և զերթ անն հոգւով առնահատեաց. և եմէ երկոքին ևս ներգործութիւնք էին Բանին Աստուծոյ, մին ի ձեռն մարմնոյ՝ և միւսն ի ձեռն հոգւոյ ներգործեալ, ապա յերկաբանչիւրոցն ևս անբաժանելի էր աստուածութիւն այսինքն անձն Բանին ։

Ոյնոյն ձեռնարկութիւն առնէ ( )գրասխնա ի բանն

տէրունական՝ Այսօր ընդ իս եղիս ի դրախտին։ “Արդէս ուղղութեամբ ասացաւ տէրն փառաց խաչեալ՝ թէպէտ և մարմնոյն ևեթ էին չարչարանքն, նոյնպէս ուղղութեամբ մարթացաւ ասել՝ այսօր ընդ իս կացես ի դրախտին. զի ըստ մարդկային խոնարհութեան՝ մարմնով ի գերեզմանի և հոգւով ի դժոխս հանդերձեալ էր լինել ի նմին աւուր։

Խովանդակութիւն ձեռնարկութեանցս է, զի որպէս հաւատամք՝ թէ Աստուած մարդացաւ խաչեցաւ և մեռաւ, նոյնպէս ևս հաւատամք թէ թաղեցաւ և էջ ի դժոխս։ Զի որպէս առաջինքն անձին աստուածայնոյ են, նոյնպէս և երկրորդքն՝ թէպէտ և ի ձեռն մարմնոյ և հոգւոյ բաժանաբար ներգործեալ. ապա յերկուցունցն ևս անբաժանելի էր աստուածութիւն։ Զայս վարդապետութիւն հաստատեն միաբան Աթանաս, Կիւսաղին, Գրիգորիոս, Թուղենաիոս, Խեռնարդոս, Դամասկացին, և այլք ի նմանէ։ Այլ ի մերոցս Կարեկացին ի բանն Երգոց՝ էս ննջեմ, և սիրտ իմ արթուն կայ, ասէ. “Աստուածութեամբն ի գերեզմանի արթուն էր, և մարմնոյն մեռելութեամբն ի քուն։ Այլ Օգաքարիա կաթուղիկոս ասէ. “Արմնով մեռանիմ, և աստուածութեամբս կառավարեմ զարարածս։ Այլ Ընորհալին յօրինակ մարդեղութեան ածեալ զմիաւորութիւն հոգւոյ և մարմնոյ, յաւելու.

“Հայց չէ և այս ձըշմարտելով,
Օ ի բաժանի մեռանելով.
Խնկ էութիւնն աստուածական
Յառեալ բնութեանըն նիւթական
Ընդակատելի է միական
Յորովայնէ մինչ յաւիտեան.
Ասաի հոգի իւր մարդկային,
Օր աւանդեաց առ Հայր յերկինն,
Հանդերձ բնութեամբն աստուածային
Էջ ի հոգիսն որ ի բանտին.
Իր բովանդակ և ի մարմինն
Մինչ բաժանեալ եղև հոգին։”

Այլ ի սոյն միտս երգեմք ի Շարականի. “Օ անապական զաստուածացեալ մարմինդ պատեալ սուրբ կտաւովք և եդ ի գերեզմանի։”

ԳՕԴՈՒԱԾ Ը

Զի՝ ի Հոգւոյն սրբոյ յղացաւ Քրիստոս, և ծնաւ ի կուսէն, անապրատ մնալով կուսութեան նորա:

Ի հաւատոյ է վարդապետութիւնս, և գաւանեմք զայն յաստէն ի նիկիական հանգանակին. "Ընդառ կատարեալսն ի Յարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով,,. և յառաքելական հանգանակին "Յղացաւ ի Հոգւոյն սրբոյ, և ծնաւ ի Յարիամայ կուսէն,,:

Սուրբ գիրք յայտնապէս ցուցանեն զայն. զի յաւետ տել Հրեշտակին առ Յովսէփ զծնունդ փրկչին ի նմանէ, ասէ Աստուած Հրեշտակին. "Ո՛չ իմիջ լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ,,: Նոյն Հրեշտակն առ այս տալ Աստուած պատասխանէ՝ բացատրելով զեղանակ ծննդեանն, զի ոչ ըստ մարդկային օրինի՝ այլ Հոգւով սրբով հանդերձեալ էր ծնանել զՔրիստոս, այսինքն կուսական սրբութեամբ, և զպատճառն ևս յաւելու. "Քանզի և որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ է,,: Այլ ազգ զբանս զայս մեկնել առանց կամակորելոյ ոչ է մարթ. և Հարկ առհասարակ զայս այսպէս իմանալ:

Քաջայայտ է և բանն Եսայեայ (է. 14.) "Ահա կոյս յղասցի և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նորա Եմմանուէլ,,: Որպ աւետարանչին ի պատմել անդ զյղութիւնն և զծնունդ Քրիստոսի՝ զայս վկայութիւն մարգարէին ի մէջ բերեալ առ ի յայտ առնել զերազնական յղութեանն և զծննդեան նորա, ասէ. "Այս այս ամենայն եղև, զի լցցի որ ասացաւն ի տեառնէ ի ձեռն Եսայեայ մարգարէի. Ահա կոյս,,, և այլն: Ուստի բան մարգարէին ակնարկէ և Հրեշտակին ասել ցՅովսէփ. "Ահա յղասցիր, և ծնցես որդի,, (Ղուկ. ա. 32). Այլ եթէ ըստ բնական օրինի էր յղութիւն Աստուածին, ոչ որպէս նշան արտաքոյ օրինաց բնութեան տայր զայն Աստուած ասելով. "Տացէ Ձեզ տէր ինքեանին նշան,,: Այլ զի բաբունիք ևս Երեից զայս այսպէս իմանային, յայտ ի բանէ անտի է՝ զոր ասացին (Յհ. է. 27.) "Քրիստոսն յորժամ գայցէ՝ ոչ ոք գի-

տէ ուսանի է ,,։ Օ վկայութիւնս նոցա զայսմանէ ժողովեցին ամենք յեբրայեցիսս, և՛ ի լոյս ետուն։ ընդ որս և Տրաք քաջահմուտ, և՛ հրէութենէ եկամուտ։ Ի սկզբանէ և այսր եկեղեցի զայս այսպէս կալաւ աւանդութեամբ, այսպէս հաւատացին յամենայն ժամանակի հաւատացեալք, և Հայր առհասարակ զայս այսպէս վարդապետեցին, և՛ սուրբ Կոյս յարելով զբան Տէրնկնելն (խղ. 2.) "Ա՛յդ դուն փակեալ կացցէ, և մի՛ ոք անցցէ ընդ դա. զի տէր Աստուած Իսրայէլի մտցէ ընդ դա, և եղիցի փակեալ,,։ Օ որ և Հայաստանեայցս եկեղեցի երդէ՛ի Ը արականի. "Ա՛զբեզ երևեալ դուռն առ Տղեկնելու մարգարէիս, ընդ որ ոչ ոք կանգ՝ եթէ ոչ Աստուած միայն, աստուածածնին Կոյս,,։ Եւ գարձեալ թէ "Օ քեզ Տղեկնել հառեա երկնային դուռն և հարան անփոյձ,,։ Ա՛ան որոյ Հայրք պահապան եւեթ Ա՛րիամայ, զամենայն աստուեր ամուսնութեան կամ հարսանեաց մերժեալ՛ի նմանէն։

Սուրբն Աթիփան (Հերէ. կը. 8.) "Խօսեալ ասէ աւետարանին զՄ՛արիամ, և ոչ ամուսնացեալ,,։ Եւ՛ի նեբբեալ նուսին. "Օ լսա՛րդ Կոյս՝ երկնային գտանի հարան, զիա՛րդ մայր յաւուրջ քան զՀարսանիս,,։

Եւ Ա՛սկեբերան զնոյն հաստատեալ (՛ի Ա՛ղբ. Հառ ջ.) յաւելու և զվատներն բնակակցութեան նոցա. "Ա՛նդղի սովորութիւն էին եր առաջնոցն՝ անդէն յիւրացանչելս տան պահել զԽօսեալն,,։

Ա՛ևբեմ Նրուսաղէմի (՛ի կոչ. ընծ. ժբ. 42.) ընդդէմ առարկութեան աղանդաւորաց՝ որ կամակորէին զասելն Եսա. յինէն կին եր, ասէ. "Ձիշեցուք մեք անդ Ձ՛Յակոբ, զի մինչև առեալ եր զՀռաքէլ՝ ասէ յԱբան. ՛ի քաց տուր զկին իմ։ Օ որ օրինակ անդ յաւուրջ քան զամուսնութիւն հարսանեացն՝ ըստ խոստացողին միայն կին կոչեցաւ Յակոբայ, սոյն օրինակ և աստ յաւետարանն անդ։ Ցնա դու զՀնարտութիւնն քանին. յամենայնն վերծերծուի, ասէ, առաքեցաւ հրեշտակապետն Գաբրիէլ՛ի քաղաքն Նազարէթ առ կոյս մի՝ որ խօսեցեալ եր առն, որ անուն եր նորա Յովսէփ։ Եւ գարձեալ իբրև աչխարհապէս լինէր, և գայր Յովսէփ տէմ գրել տալ զանուն իւր Ա՛րեամաւ հանդերձ՝ որ խո-

սեղեան էր նմա, և էր յղի։ Յղի իսկ էր, բայց ոչ ա-
սաց՝ Թէ զայր կնաւն իւրով, այլ զայր այնուհիկ՝ որ խո-
սեղեան էր նմա։ Որպէս սակ առաքեալն. Ընդ-
Ընծաուած զօրգին իւր, ոչ եթէ յառնէ և՛ի կնոջէ՝ այլ
ծնանել՛ի կնոջէ միայն, այսինքն՛ի կուսէ անտի։ Այլ
զի կին կոյս ինքն անուանեալ է, յառաջագոյն ցուցաք,
զի՛ի կուսէ ծնանելոց էր կուսասրանն Հոգւոց ,,։

Ընտ այսմ ՝նարք Յունաց և մերքս ստէպ անգիտանա-
ցեալ կոչեն զկոյսն. զի առ մեզ ամուսնութիւն և հար-
սանիքք համանշանակք են. որպէս զի զբան առաքելոյն,
Պատուական է ամուսնութիւն, թարգմանել նախնեաց
մերոց՛ի կոչումն ընծայութեան կուսին և՛ի մեկնու-
թեանն Ա՝ատեմ էի յամուսնեցեալսն, Պատուական են հաց-
առնէ։ Ընդեղ կոյսն Մարիամ պատկեալ եւեթ էր ընդ
Յովսեփայ, և ոչ ամուսնացեալ ընդ նմա. նմին իրն որ-
պէս Յոյնք կոչեն զնա անխմբեքնօս, և Լատինք ինամե-
նա, նոյնպէս և առ մեզ ասի անգիտանացեալ. և՛ի կոչել
իսկ գոլոն զՏիրամայրն, յաւելուամբ հարան անփորձ։

Ընդ հարևանցի զեկուցումն, ոչ ինչ զարտաւոլել յա-
ռաջարկութենէս, տարապրէ զդժուարալուծ մակդիրն
առանձնական, ընդ անհարմնացելոյն անձամբ փոխանա-
կեալ։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆՔ

Ընտրէ. — ս. Հեթանոսական իմն է՛ի կուռս ասել
ծնեալ զՅիսուս, զի և ամենայն ազգք առ՛ի պանծա-
ցուցանել զկիրքն իւրեանց՝ հրաշալիս առասպելեն։ —
ս. Ո՞ւրեք յայտնապէս կոչէ հայր Յիսուսի զՅով-
սէփ (ը. 48.) "Հաւասիկ հայր քո և ես տառապեալք
և խնդրեցաք զքեզ,,։ Ո՞ր և ինքն իսկ Յիսուս ոչ ու-
զացաւ յասել Հրէից՝ Թէ "Ո՞ւս զիտեմք ուստի է,,։
— գ. Ընդ առաքեալն՛ի զաւակէ Աւրահամայ զնա լեալ
(կռ. ա. 3.) և այլուր՛ի կնոջէ (գաղ. դ. 4)։ — դ. Ընդ
ոչ իսկ մարթ է ընդ կուսութեան միաբանել զասա-
ցեալն՛ի Ո՞ւսայ (ը. 22.) "Ընդ իրրև լցան աւուրք
սրբութեան նորա... որպէս և գրեալ է՛ի գիրս օրի-
նացն՝ Թէ ամենայն արու, որ բանայ զարգանդ, սուրբ
տեառն կոչեցցի ,,։

պէս. — ա. Այսինքն իսկ առաքելեօք, որով հեթանոսք կուսածինս զգիւցազունս իւրեանց պանծացուցանեն, հաստատի Աչմարտութիւնն աւանդութեամբ պահեալ առ նոսա, թէպէտ և առաքելախառն աղաւաղեալ: Օ՛ի և ոչ թերևս՝ ի միտս նոցա անկանէր Կուսի ծնանել, եթէ չէր հասեալ՝ ի ծանօթութիւն նոցա պատգամ մարգարէին: Ա՛յլ զարդիւնս իրաց պարտ է մեզ խնդրել. նոքա չունին զինչ հաստատութիւն զրուցացն իւրեանց, իսկ մեր՝ յարդեանցն ապացուցեալ անժխտելի:

— բ. Այր Յիսուսի կոչէ աւետարանիչն զՅովսէփ ըստ կարծեաց հասարակաց և ոչ ըստ իրացն Աչմարտութեան, որպէս ինքն իսկ ապա յայտ առնէ (գլ. գ. 23.) "Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրև երեսնից սկսեալ, որոց որպէս և կարծէր որդի Յովսեփայ,,*: Եւ աստի յայտ է՝ թէ ընդէր Մարիամ յասել՝ ուրեից թէ զաս գիտեմք ուստի է, ոչ յայտնեաց զծննդեանէ իւր՝ ի Կուսէն. զի մինչև էր յարուցեալ՝ ի մեռելոց, խնաստութիւնն աստուածային այնպէս լաւ համարէր թողուլ զՔրեայս՝ ի կարծիս իւրեանց:

— գ. Ուրաքեանչ՝ ի զաւակէ Դաւթի ասէ զՄարիամ ըստ աղգաբանութեանն, և ոչ ըստ եղանակի ծնընդեանն. և՝ ի կնոջէ, զի զմարմինն իւր՝ ի մարմնոյ կուսին էառ. իսկ հինն զնա կոչէ ըստ երբայեցութեան, որպէս՝ ի վեր անդր վկայութեամբ սրբոյն Կիւրղի ցուցաք:

— դ. Եւ կարի իսկ քաջ կուսութիւն Տիրամօրն միաբանի ընդ աւետարանչին բանի, եթէ ըստ միաբան ուսուցանելոյ Հարց իմանայցեմք Կուսին կամակար խոնարհել ընդ օրինաց՝ որոց չէրն պարտական ըստ կուսական մաքրութեանն: Իսկ աւետարանչին զբանս օրինացն յիշատակել, ոչ վասն մարդկօրէն կարծեցուցանելոյ և զկղութիւն և զծնունդ Կուսին, որ իւրում իսկ պատմութեանն ընդդիմ ելանէ, այլ զի յիշեցուսցէ զօրէնսն, որոց կամակար խոնարհութեամբ հպատակէր Կոյսն սուրբ:

* Յոյնն պարզ ևս ունի «Որ էր, որպէս և կարծէր, որդի Յովսեփայ»:

ԳԼՈՒԽ Գ

ՑԱՂԱԳՍ ԵՐԿՈՒՑ ԲՆՈՒԹԵԱՆՑՆ ԱՆՁՆԱՒՈՐԱՊԷՍ ՄԻԱՒՈՐՈՒԹԵԱՆ Ի ՓՐԻՍՏՈՍ

Յայսմ իսկ է էութիւն խորհրդոյ մարդեղութեան, վասն որոյ պարտ է Ճշգրիտ զայսմանէ ունել տեղեկութիւն, որպէս զի որ ինչ գՀետան գան՝ դիւրաւ լցցի՛ ի միտ առնուլ։

Ասեմ՝ երկուս բնութիւնս ասելով՝ երկուս անձինս եղ՛ ի Քրիստոս, և զաստուածայինն և զմարդկայինն բնութիւնս ոչ՛ ի միում անձին Բանին միաւորեալս ասէր, այլ անձն ընդ անձին բարոյականաւ իմն միաւորութեամբ կցորդեալ, որպէս գրեթէ զնակէ Պատուածՙ ի տուրբս։ Որով բառնայր՛ ի սպառ զանձառելի խորհուրդ մարդեղութեան Բանին, որ էապէս հաստատեալն է՛ ի միաւորութիւն երկուց բնութեանցն՛ ի մի անձն Որդւոյն՝ որ անձնաւորէր զմարդկութիւնն. որով վաստակք Քրիստոսի իբրև աստուածայնոյ անձին՝ առեալ անհուն արժանիս՝ կարէին հատուցանել լիուլի զպարտս մեղաց նախահօրն։ Պայսպէս՛ ի բաց մերժէր Եւտով զմիաւորութիւն ըստ բնութեան և ըստ անձնաւորութեան. յորմէ զՀետ գայր և բարձումն հաղորդութեան յատկութեանց՛ ի Քրիստոս, զորմէ մնայ մեզ խօսել, և տուրբ Կոյսն ոչ ևս լինէր աստուածածնին՝ այլ մարդածին, մարդկայնոյ անձինն ևԹ եղեալ մայր։

Իսկ Նեստիքէս ոչ ըստ բնութեան միայն և ըստ անձնաւորութեան առէր զմիաւորութիւն երկուց բնութեանցն՛ ի Քրիստոս, այլ և խառնակումն և փոխարկութիւն՛ ի նեղքս մուծանէր, յերկոցունց բնութեանց անտի ձուլեալ նոր իմն՝ ոչ աստուածայինն և ոչ մարդկայինն, այլ միւն՛ ի բնութեանց ընկղմեալ՛ ի միւսն, շփոթեալ և յեղափոխեալ։

Ընդդէմ երկոցունց ծայրայեղ մոլորութեանցս ելեալ սուրբ հաւանէ զերկոսին ևս բնութիւնս, զաստուածայինն և զմարդկայինն, ամբողջ անապակ և ան-

ջիտի՝ հանդերձ իւրեանց յատկութեամբքն և ներգործութեամբ՝ միացեալ անյեղլի ՚ի միում անձին Քրիստոսի։

Ի սահմանել ասեն զՀետ դայ նախ՝ զի ի՞նչ է ինքնութիւն երկաքանչիւրոց բնութեանցն։ Երկրորդ՝ զի ոչ թուիցեւ անձն Քրիստոսի էր միշտ և յառաջ քան զմարդեղութիւն, Հետ դայ զի մարդկայինն բնութիւն ոչ ՚ինեղբօք մտանէ որպէս մասն կացուցիչ անձինն Քրիստոսի՝ որ պարզական բնութիւնն է, այլ ըստ այնմ և եթ յետ մարդեղութեան ասի քաղաքրեալ, զի անձն կամ ենթադրեալն բոլոր՝որ է Քրիստոս՝ յերկուց բնութեանց է քաղկացեալ։ վասն որոյ անձն Քրիստոսի տեսակապես է պարզ, իսկ նիւթապէս քաղադրեալ։ Երրորդ՝ զի մարդկայինն բնութիւն ոչ իբրև մակեղուտ ինչ պատահումն յարնչի յանձն Քրիստոսի որպէս յենթակայ՝ որ յինքն զայն բերիցէ, այլ որպէս յեզը՝ յոր երկոցունցն միաւորութիւն ՚ի մի անձն դադարէ։ Չորրորդ՝ զի որովհետև ինքնութիւն Քրիստոսի է որ ինքնաւորէ և զմարդկայինն բնութիւն, լինի մարդկութիւնն յատուկ և իրական Քրիստոսի. վասն որոյ անձն Քրիստոս յետ մարդեղութեան իբրև իւրովին վարի՝ մարդկայինն բնութեամբն, և ՚ի նմա և նովաւ գործէ իբր սկիզբն ոք, ըստ բացատրելոյ աստուածաբանից, որպէս յառաջ քան զմարդեղութիւն վարէր աստուածայինն բնութեամբն, որպէս և յետ մարդեղութեանն վարի յայնս՝ որ աստուածայնոյ բնութեանն հետ են անկ։ Հակ բնութիւնք երկաքանչիւր գործեն իբր սկիզբն ոմն։ Հինգերորդ՝ զի այնչափ սերտ և ներքին է երկոցունցն բնութեանցն միաւորութիւն, թէպէտ և անշփոթ և զանազանեալ, զի մօտ հետ մարթ է մեզ ըմբռնել զայնս ինքնութեան։ Վեցերորդ՝ զի որովհետև բնութիւն առնու կայուն յենթակայն, զմարդկայինն բնութիւն՝ որ զգոյութիւն իւր առնու յանձնէ Քրիստոսի՝ ոչ է մարթ ըմբռնել, բայց միայն յանբաժանելի կէտ վայրկենի՝ յորում Քրիստոս զինքնութիւն իւր նմա հաղորդեաց յառնուլն զմարդկութիւն. վասն որոյ ինքնութիւն այսր մարդկութեան հաղորդական է բոլորովին ՚ի Քրիստոս, որպէս զի ՚ի բառնալ անտի ինքնութեան Քրիստոսի՝ մարդկութիւնն Քրիստոսի լինէր էակ

մեռաւորական անգոյ։ Յօժմներորդ՝ զի որովհետև միաւորութիւնս այս անմիջաբար ներգործեալ է յանձին և ոչ ՚ի բնութիւնս, նմին իրի զանազանին իրապէս բնութիւնքն յիրերաց՝ պինդ պահեալ երկաքանչիւր զայլ և այլ յատկութիւնս իւրեանց և զսեփական ներգործութիւնս։ Այլ քանզի բնութիւնք զօրութեամբ ևեթ զանազանին յանձնէ, զհետ գայ միջնորդաբար միաւորութիւն երկուց բնութեանց ընդ իրեարս, որ և վասն այնորիկ կոչի բնական միաւորութիւն։ Ութերորդ՝ զի միաւորութիւնս այս և ոչ ՚ի մահուն Քրիստոսի ընդհատեցաւ. այլ անձն Բանին, որպէս էր ընդ մարդկային հոգւոյն ՚ի ստորին վայրս ընդ նահապետսն, էր և ընդ մարմնոյն ՚ի գերեզմանի, որպէս ուսուցանեն Հարք և ժողովն տրիդենտեան։

ԳԼՈՒԽ Դ

ՑԱՂԱԳՍ ՉԻ ՄԻ ՆԻՒԹ ԱՆՁՆ Է Ի ՔՐԻՍՏՈՍ, ՆԻ ԱՅՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ

Ասպէս սահմանեցաւ ՚ի տիեզերական ժողովն Քաղկեդոնի ընդդէմ Նեստորի. և դարձեալ յերկրորդ ժողովն Կոստանդնուպոլսի։

Պիտի ստորեք, հանդամանակք հաւատոյ, և Հարք առհասարակ միտմ ևեթ անձին ընծայեն՝ որ ինչ Քրիստոս երկաքանչիւր բնութեամբքն արար, և զնոյն մի Քրիստոս՝ Աստուած և մարդ ուսուցանեն, և իբրև զմիմիոքն խօսին զաստուածամարդոյն. ապա միակ ՚ի նմա է անձն, և մի Քրիստոս է։ Պօղոս ասէ զնմանէ. "Որ ՚ի կերպարանս Աստուծոյ է, ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ, այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ, ՚ի նմանութիւն մարդկան եղեալ, և կերպարանօք գտեալ իբրև զմարդ,,. (Փիլ. Բ. 7)։ Այն և մի Բանն Աստուծոյ՝ որ ՚ի կերպարանս Աստուծոյ էր, ասէ, զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ, այսինքն զմարդկային բնութիւն. որով յաւելու ապա ասել հնարաւոր լեալ մահու ջաւի, վասն որոյ և Աստուծոյ զնա առաւել բարձրացուցեալ։

Նա զարձեալ աւետարանիչն ասէ. "Նա Նանն մարմին եղև". ապա նոյն ինքն Նանն՝ որ էր առ Աստուած, և Աստուածն էր, եղև մարմին այսինքն մարդ. ապա նոյն մի անձն Նանին Աստուծոյ եկաց միաց ի մարդեղութեան։ Յայնպէս և առաքեալ ասէ. "Ի հաքեաց Աստուած զորդին իւր որ եղև ի կնոջէ". (գաղատ. գ. 4)։ Զարձեալ նոյն գիրք իբրև զմի և զնոյն անձնէ խօսելով՝ կոչեն զնա մերթ որդի Աստուծոյ և մերթ որդի մարդոյ. "զտեր փառացն ի խաչ եհեաւ". (ա. կոր. բ. 8.) "զորդին մարդոյ՝ որ էն յերկինս". (Յհ. գ. 13). և այլ այսպիսի բանք ամենայն ուրեք՝ զորս չէ մարթ զերկուցունց ումանց իմանալ։ Ապա ըստ սուրբ գրոց՝ մի և եթ անձն է ի Քրիստոս, և այն աստուածային, և մի Քրիստոս՝ Աստուած և մարդ։

Օնոյն և հանգանակք հաւատոյ տան մեզ դաւանել, եթէ առաքելականն, եթէ նիկիականն, և թէ Կոստանդնուպօլսին, զնոյն ինքն որդին Աստուծոյ ասելով մարմնացեալ, մարդացեալ, ծնեալ ի սրբոյ Կուսէն, և վասն մերոյ փրկութեան չարչարեալ խաչեալ թաղեալ և յերրորդ աւուր յարուցեալ, և այլն. յորս նմին միտս անձին ընծայեն զպատկանեալս երկաքանչիւրոցն ևս բնութեանց։

Վասն որոյ և Տէրք միաբան զնոյն աւանդեն։ Քրիստոս (Ք. Գէդ Վկայաբանից) երկար բանիւք ցուցանէ՝ զի "Նա մարդ և Աստուած է Քրիստոս. յերկաքանչիւր ազգէ թանձրացեալ, զի մարթասցի միջնորդ լինել ընդ մեզ և ընդ Հայր"։ Ասէ Նարսէս. "Ոչ երկու ասեմք, Աստուած առանձին և մարդ առանձին. վասն զի մի է. այլ ըստ մտածութեան զերկաքանչիւրումն զբնութիւն իմացեալք"։

Գրիգոր աստուածաբան. (Խառ լա.) "Ոչ երկու ես զեալ, այլ մի յերկուց լինել յանձն առեալ. վասն զի Աստուած երկաքանչիւրքն, առօղն և առեալն. երկու բնութիւն՝ ի մի ընթացակցեալք. ոչ որդիք երկու, մի՝ ի տուտ հանցի խառնուածն"։

Աթրոսիոս. (Հանգանակ առաք. գլ. լա.) "Ոչ որպէս թէ ումն Աստուած և ումն մարդ, այլ մի և նոյն որդի Աստուծոյ և որդի մարդոյ"։

Գոստինոս (Հերետիկեան գլ. լէ.) "Ո՞ր օրինակ մի

անձն է անձնիւր մարդոյ, այսինքն հոգի բանական և մարմին, նոյնպէս և Քրիստոս մի անձն, Աստուած և մարդն,,։

Ախերեղ (պատմ. ժդ. եր. 41.) "Ի ուրեմն է, որ և նախ քան զմարդանալն Որդւոյ Աստուծոյ Հիմարիտ, և ի մարդանալն միացեալ որ ինչ էրն և է և եղիցի։ Որդի ոչ է ուրեմն ի բաց սահմանելի զմին տէր Յիսուս Քրիստոս ի մարդ առանձին և ի Որդւոյ Աստուծոյ առանձին. այլ մի և նոյն գոլ ասեմք զՅիսուս Քրիստոս, զմարմնոյ և զաստուածութեան գիտելով զզանազանութիւն, և անշփոթս զնոսա ի միմեանց պահելով,,։

Եւ Նայաստանեայց եկեղեցի երգէ ի շարականի

"Ով ոմն ուժեղ և զօրաւոր,
Եւ ոմն անզօր վըտանգաւոր.
Որդւ մի և նոյն գոլ միաւոր,
Որոց զկիրսըն կամաւոր,,։

Եւ ի մանկունքն Հայրապետացդ. "Որոյ Թանձրացայ ի մարմնի, մարմնանալդ անմարմինն, միացեալ բնութեամբ* (խնկապէս, գոյացապէս) ի յերկուց, ախտակրեալ ի վերայ քառաթև խաչին, և վերառեալ ի Թաղմանէ անապական. նզովեցին զՆեստոր և զաղանդ իւր սիղծ,,։

Յուցանի և աստուածաբանօրէն, զի եթէ չէին ի Քրիստոս գոյացապէս միաւորեալ երկոքին բնութիւնք, եղծանէր ի սպառ խորհուրդն մարդեղութեան, Որոնին Աստուծոյ բնակելոյ ի մարդում որպէս ի տաճարի, բարոյական միաւորութեամբ։ Եւ գոյացական միաւորութեան ոչ էր մարթ կալ, եթէ ոչ մի անձն էր ի Քրիստոս։ Ի սոյն ասէ տուրբ Աթուինացին. "Եթէ մարդկային բնութիւն ոչ միաւորի ընդ Որոնին Աստուծոյ յանձին, ոչ այլ իւիք միաւորի ընդ նմա, և բնաջինջ լինին հաւատք մարդեղութեան,,։

* Ա յս բացատրութիւն է կիւրեղի ածէքսանդրացւոյ ընդդէմ Նեստորի. որ զի ասէր նա թէ բանն Աստուած շնորհօք և մերձաւորութեամբ միացաւ ընդ մարդկութեանն՝ որպէս ընդ այլոց արդարոց, ընդդէմ նորա ասէր Կիւրեղ. ոչ այդպէս, այլ բնաւնէամբ միացաւ. լի են գիրք Պարապմանց այսպիսի բանիւ. որպէս՝ի Թղթին առ Նեստոր (երես 464.) ասէ. «Միացեալ՝ի մարմնի բնաւնէամբ հոգւով, բանաւորութեամբ խոստովանիմք զբանն». և գինի (465) «Ոչ եթէ որպէս և՝ի սուրբսն բնակեալ ասի, բաս նմին հաւասար և՝ի նմա ասիցեմք զբնակելն, այլ միութիւն բնաւնէամբ»։ Նոյնպէս և գինի (466. 471. 472 և այլն)։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆՔ

Ա֊ՓԱԹԷ Ա. — Ա. Որբք զիրք երկուս ծնուն֊դս ընծայեն Քրիստոսի, մի յԱստուծոյ և միս ևս ի Մա֊րիամայ. ապա երկուս որդիս պարտ է ձանաչել ի նմա, մի՝ որդի Աստուծոյ, և միս ևս՝ որդի մարդոյ.—Բ. Ա֊ան որոյ և ուր ուրեք որպէս զմարդոյ խօսքն գնամանէ, կո֊չեն գնա Յիսուս կամ տէր։ — Գ. Ա֊ն յաւելուն ևս զպատճառն, վասն որոյ Աստուած ի ձեռն շնորհաց միա֊ցաւ ընդ մարդն ի Քրիստոս, որպէս ինքն իսկ Յիսուս ասէ (Յհ. Ը. 29.) "Ա֊ր առաքեացն զիս՝ ընդ իս է, ոչ եթող զիս միայն. զի ես զհաճոյս նորա առնեմ հանա֊պազ"։ Ա֊ն աւետարանիչն ասէ զՔանէն՝ թէ "Ընտա֊կեցաւ ի մեզ. (Ա. 14.) այսինքն ի մարմնի կամ ի մարդկային բնութեան։ — Դ. Ա֊յսր աղագաւ Քրիս֊տոս կոչէ զմարմին իւր փառաւոր. (Ը. 19.) և առաքեալն կոչէ զայն խորան. (ԵԲր. Ը. 2. Թ. 11)։ Ա֊րդ ընդ տա֊ճար կամ ընդ խորան և ընդ բնակիչ նորա չինք այլ ինչ կցորդութիւն, բայց արտաքին և բարոյական. ապա նոյն կցորդութիւն է և ընդ Աստուած և ընդ մարդ ի Քրիստոս։

Պե. — Ա. Ա֊պաքէն կրկին ծնուն֊դ է Քանին Աստու֊ծոյ, մի՝ յաւիտենական յէութենէ Հօր, և միս ի ժամանակի ըստ մարդկային բնութեանն. այլ անձն մի և նոյն է յերկաքանչիւր ծնուն֊դս, այսինքն Քանն Աս֊տուած. վասն որոյ մի որդի է, որ ըստ երկուց բնու֊թեանցն՝ որ են ի նմա՝ միով ասի որդի Աստուծոյ, և միով որդի մարդոյ. զի նոյն անձն է ի յաւիտենից և ի ժամանակի ծնեալ։

— Բ. Մուրբ զիրք որ ամենայն ուրեք, ուր զմարդ֊կութենէ Քրիստոսի խօսքն, կոչեն գնա Յիսուս կամ տէր, անխտիր ընծայեննամ և զաստուածայինն անուանս Որպէս առաքեալն ասէ (փաղ. Գ. 4.) "Ա֊ռաքեաց Աս֊տուած զորդի իւր, որ եղև ի կնոջէ"։ Եւ այլուր. (Գաղ. Դ. 6.) "Որ ի կերպարանս Աստուծոյ է, ոչ ինչ յա֊փշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստու֊ծոյ, այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի ա֊ռեալ"։

— ԳԿ. Տէրունական բանին այս է իմաստ. պարտ է ձեզ աստի՛ւ միտ առնուլ զառաքեալսն իմ Յ՚ստուծոյ, զի ես զՀաձոյս նորա առնեմ հանապազ. քանզի յաւետ ասաց. "Օ՛ւ ես Յ՚ստուծոյ եղի և եկի, և ոչ եթէ յանձնէ ինչ եկի,,: Ա՚ան որոյ անտեղի է մեկնութիւնդ բնակելոյ Բանին՚ի մարդկային բնութեան, ուր աւետարանիչն ասէ. "Բանն մարմին եղև, և բնակեցաւ՚ի մեզ,,. այսինքն մարդ եղեալ՝ բնակեցաւ՚ի մէջ մերում:

— ԳԿ. Վրիստոս զմարմին իւր տաճար կոչէ Հոգւոյն՝ որ մահուամբն բաժանելոյ էր՚ի նմանէ, և ոչ աստուածութեանն՝ որ ոչ երբէք բաժանեցաւ՚ի մարմնոյն:

Նոկ առաքեալն զմարմին Վրիստոսի խորան կոչէ այսպանութեն և խորհրդաբար, որպէս և այլուր այլաբանէ՚ի վարագոյր, ՚ի պատարագ, յերկինս և այլն, ըստ խորհրդոյ՝ զոր՚ի նմանութեանց անտի վերբերէ:

Ա՚ատկ. Ը. Ոչ գուն ուրեք չարք ըստ Նեստորի խօսին զՎրիստոսէ. զի մերթ ասեն՝ Բանին Յ՚ստուծոյ առեալ զմարդ. և մերթ կոչեն զՎրիստոս մարդ աստուածակիր կամ աստուածային:

ՊԿ. Չարք ուրեք ուրեք ըստ ձևոյ բանիցն հաւանձայն՝ Նեստորի խօսին, այլ ոչ ուրեք ըստ մտաց. և միտք նոցա՚ի կարգէ բանիցն յայտնի են: Ա՚ան որոյ և ըստ մարդ փոխանակ մարդկութեան կամ մարդկային բնութեան՚ի կիր արկանեն, և ոչ ուրեք փոխանակ անձին մարդոյ: Նոյնպէս և աստուածակիր կամ աստուածային մարդ զՎրիստոս կոչեն վասն անձնաւորապէս երկուց բնութեանցն միաւորութեան, որպէս ինքնին իսկ բացատրեն Ա՚աքսիմոս վկայն և Թէոդորետոս: Այլ ոչ է մարթ ժխտել, զի ձևք բանից այսպիսեաց չեն ինչ յատուկ և Ճշգրիտ, որպէս խոստովանի և ասէրն Թէոդոտինոս՚ի գիրս Նահանջման. (գիրք ա. գլ. 30.) ուզղելով՚ի ձև Ճշգրիտ զյառաջագոյն ասացեալսն:

Ա՚ատկ. Գ. — Ե. Ա՚ արդապետութիւնդ այդոքիկ՚ի ծանօթութիւնս իմանատասիրականս անձին և բնութեան հաստատեալ են: — Բ. Ա՚րդ ընդ բնութիւն և ընդ անձն չիք իրական զանազանութիւն, որպէս՚ի բնաւից իսկ գոյատոր եից յայտ է: — Գ. Ա՚պաքէն առ՚ի կացուցանել զմարդ, շատ է մարմին և հոգի բանական.

որ եթէ չըաւէր, մարթ էր մեզ երկբայել, թէ իցէ արդեօք՝ ի մեզ անձն : — ԻՍ. Այլ եդեալ ևս՝ զի մարդկութիւնն Քրիստոսի աստուածային զօրութեամբ կապրէին կալ յանձին Որդւոյն Աստուծոյ, ոչ լաւ ևս էր՝ զի անձն մարդկային միաւորէր գոյացապէս ընդ աստուածայնում անձին : Ո՞չ այսպէս ոչ միայն դիւրաւ էր բացատրել զխորհուրդն, այլ և բառնայր՝ ի միջոյ անտեղութիւնն ընծայելոյ միում և եթ անձին յատկութիւնս հակառակս միմեանց : — Ս. Անսաւանդ զի անձնաւորութիւն՝ կատարելութիւն է մարդկային բնութեան, յորմէ զրկեալ գտանի մարդկութիւնն Քրիստոսի :

ՊԽ. — Ս. Խորհուրդն մարդեղութեան, հանգոյն այլոց խորհրդոց, հաստատեալ է՛ի յայտնութիւն աստուածային. այլ քանզի՛ ի յայտնութենէ անտի ուսանիմք, զի ով է՛ի Քրիստոս անձն կամ էնութիւն՝ որ Աստուած է և մարդ միանդամայն, առ՛ի բացատրել զայն ըստ կարի՝ ծանօթութիւնս յիմաստասիրութենէ՛ի կիր առեալ, որ ով ինչ է՝ անճն կոչեմք, և որ ինչ բազմապատիկ՝ բնութիւն : Անանձն անձն է՝ որ ունի զբնութիւն, և վերբերէ զայն. իսկ բնութիւն՝ կացուցիչ յատկութեանց, որովք ըմբռնեմք զկոչ ինչ կամ զիմն ով՛ի զոլ իւրում :

Իսկ՛ի խորհուրդ ամենասուրբ Հրաշագործութեան՝ որ ինչ հասարակաց է երից անձանց՝ ասի բնութիւն, որ ինչ առանձինն է և վերբերէ զբնութիւն՝ ասի անձն : Եւ զայսոսիկ այսպէս հարկ է մեզ զանազանել վասն մոլորութեան հերետիկոսացն, յորոց կէսք շփոթեն զանձինս Աստուած, այլք զբնութիւնս՝ի Քրիստոս : Ասն որոց զծանօթութիւնս զայսոսիկ պատշաճեմք ըստ խորհրդոյ, և ոչ եթէ զխորհուրդս ըստ ծանօթութեանց՝ զի խորհուրդք յաստուածային յայտնութենէ ծանօթք են մեզ և հաւաստի :

— Ս. Ասեպէտ և էիցէ մարթ բնութեան կալ առանց էնութեան, այլ զանազանի բնութիւն էնութենէ. զի այլ է զոլ, և այլ եզանակ զոլոյ : Արդ զոլութեանս այսմիկ և եղանակի զոլոյ՝ մարթ է զոլ յաւուկ և զոլ այլոց, գոնե աստուածային զօրութեամբ. որպէս՛ի խորհրդեանս յայսմիկ, յորում բնութիւն մարդկային կայ՛ի Քրիստոս յէնութեան Նահանին. և միտք ջամբռնեն ինչ անտեղութիւն :

— դ. Ոչ ՚ի կայուցանել զմարդ՝ ինդիւն և ինքնութիւն, որ ինչ տէր բնութեան իւրոյ՝ այսինքն հոգւոյն և մարմնոյ, և վարիցի նոքօք. զի ինքնութիւնն այն է, որ յենթակայութեան իւրում վերբերէ զնութիւնն։ Ոչ ոչ զհետ գայ այսմ երկբայել մեզ զմերմէ ինքնութենէս. քանզի ներքին զգայմամբ գիտեմք, զի ոչ յայլ մէ շարժիմք և գործեմք։

— դ. Որ ինչ հակառակեանն է՝ անհնարին է. վասն որոյ չէր մարթ Ոչխտուածոյ առնել զնոյն ինչ՝ մի և երկու միանգամայն։ Զոր եթէ մարդկային անձն ևս էր ՚ի Վէրխտոս ընդ աստուածայինն անձինն, կամ երկու լինէին անձինք, և կամ եթէ մի՝ լինէր այն միանգամայն և չլինէր Որդին Ոչխտուածոյ. որով ոչ թէ դիւրագոյն բացատրէր, այլ եղծանէր խորհուրդն։ Զոր զմիոջէ անձնէ զատ այլ և այլ բնութեանցն ասել ներհակաւոր՝ ոչ ինչ է անտեղի. զոր օրինակ զի նոյն անձն ըստ աստուածային բնութեանն ասի յաւիտենական և անմահ, իսկ ըստ մարդկային բնութեան՝ ծնեալ ՚ի ժամանակի և չարչարելի. որպէս և զմարդոյ ասելն անմահ ըստ հոգւոյն, և մահկանացու ըստ մարմնոյ։

— ե. Զկնի երկբայել զի ենթակայութիւն կատարելութիւն է մարդոյ. այլ նոյնպէս աներկբայելի է՝ զի աստուածային զօրութեամբ մարթ է ենթակայութեան զոր յատուկ կամ այլոց, մանաւանդ Ոչխտուծոյ. և ըստ այսմ ոչ ինչ պակասէ մարդկային բնութեան կատարելութիւն, այլ մանաւանդ յաւելու, վերառեալ սքանչելապէս յաղնուականութիւն, որպէս թէ հողեղէն յարկ ՚ի հինանս աղամանդեայս կացեալ։

ԳԼՈՒԽ Լ

ՋԻ ԿՈՑՍՆ ՄԱՐԻԱՄ ՃՇՄԱՐՏԱԳԻՍ ԿՈՉԻ ԵՒ Լ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐ

Ասյս ճշմարտութիւն, սահմանեալ ՚ի ժողովն Նիկիոսի և յԲ. Կոստանդնուպօլսի, հարկաւ զհետ գայ նախասահմանելոցս. զի եթէ անձն՝ որ ծնաւն ՚ի Կուսէն՝ է աստուածային, ապա և որ ծնաւ զնա՝ է աստուածածին։ Սուրբ գիրք յայտնապէս ուսուցանեն զայս, զի հրեշ-

տակն ասէ ցկոյն. “Վասնզի և որ ծնանելոյն է՛ի քէն սուրբ է, և որդի Աստուծոյ կոչեսցի,,. (Ա Է. ա. 35)։ Ասէր և զայն ոչ է պարտ անյիշատակ առնել, զի սուրբն յատուկ անուն Աստուծոյ է՛ի սուրբ կիրս. որպէս այն՝ ուր ասէ (Ածեմ. ը. 3.) “Ի գալ քեզ ձկետ սրբոյն Իսրայէլի,,։ Եւ գարձեալ (Եսա. խգ. 3.) “Ես եմ տէր Աստուած քո սուրբն Իսրայէլի,,. և այլ բազում ուրեք։

Եւ առաքեալն ասէ. “Աւաքեաց Աստուած զորդի իւր, որ եղև՛ի կնոջէ,,. (Գաղատ. դ. 4)։ “Յորոց և Քրիստոս ըստ մարմնոյն, որ է՛ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս,,. (Հռ. թ. 5)։ Եւ Նիկոդեմոս լեալ առաջի սրբոյն կոչէ զնա մայր տեառն իւրոյ, այսինքն Աստուծոյ. “Եւ ուստի է ինձ այս, զի եկեսցէ մայր տեառն իմոյ առ իս,,։

Եւ այնու հաստատուն ասանդուիեամբ յառաքելոց անտի ձշմարտուիեւնս այս լինել, զի Աստուած հասարակ, և և յառաջ քան զՆեստոր, կոչեցին աստուածածին զսուրբ կոյսն. մինչև նորին իսկ Յոհաննու անտիոքացւոյ համախոհին Նեստորի զրել առնս յորոշանս՝ մի հակառակելոյ անուանն այնմիկ, զոր յոմանց յայժ՛ի Աստուց՛ի կիր արկեալ էր։ “Վասնզի, ասէ, ոչ ոք՛ի վարդապետաց մերոց զայն. յոլովք՛ի նոցանէ և պերճահռչակեալք՝ վարեցան նմանաւ, և որք ոչն՛ի կիր արկին զայն՝ ոչ անգոհանեցին զայնոսիկ, որք վարեցանն նմանաւ,,։

Եւ միւս այլ ոք գարձեալ՛ի համախոհին Նեստորի Թէոդորետոս վկայէ, զի “Նիկոպոլիսք ժամանակաւ ուղղափառ հաւատոյ վարդապետք յառաքելական ասանդուիենէ ուսուցին յիշատակել զՆիրամարին, և պատուել զնա որպէս աստուածածին,,։

Եւ ուրացողն Յուլիանոս ծաղր առնէր զքրիստոնեայս վասն կոչելոյ նոցա աստուածածին զմայր Քրիստոսի, որպէս վկայէ սուրբն Կիւրեղ ածէքսանդրացի։

Աստուածաբանական պատձառ ձշմարտուիեանս այսորիկ անդամին՛ի նշանակուիենէ ծնելոյն յառաջ գայ. զի ծնեալն է անձն և էնիթակայուիենն բոլոր, և ոչ մասն ինչ նորա։ Աստ անձն այն, էնիթակայուիենն այն բոլոր, է Աստուած և որդի Աստուծոյ՝ զոր Կոյան ըստ մարդկային բնուիեանն ծնաւ, վկայուիեամբ իսկ

՝Աբեսաղոմ. ապա Այան մայր է Յուդայ և աստուածածին:

Յամէ՛ն ի միտ առնումք՝ զի կրկնակի է իմանալ աստանօր զԱյր կամ զԱ՛յր, վասն որոյ և զԱրդի. մի՝ ըստ ծննդեան, այսինքն ըստ հաղորդելոյ զնովն գոյացութիւն, որպէս է իսկ սահման ծնանելոյ. և միւս և՝ ըստ անձնաւորապէս միաւորութեան, որպէս անձն աստուածային՝ յորում էնթակայեցաւ առեալ բնութիւնն մարդկային: Ըստ ծննդեան՝ Աբրահամ որդի է Աւսէնն, յորմէ Յեսսէ Յուդայ էած և միաւորեաց ընդ իւր անձնաւորապէս զմարդկայինն բնութիւն. և ըստ այսմ անձնաւորապէս միաւորութեան սուրբ Այան է մայր Յուդայ: Իսկ Այրն Յուդայ իսկապէս հայր Աբրահամի է ըստ նմին անձնաւորապէս միաւորութեան, որով մարդկայինն բնութիւն էնթակայի՛ ի Աբրահամ. և է հայր Յեսսէին ըստ յաւիտենական ծննդեանն միայն: Ընդարձակագոյն է ապա նշանակութիւն որդիութեան քան զծննդեան. զի ամենայն որ ծնանի՝ որդի է, որպէս Աբրահամ Աւսէնն. այլ ոչ ամենայն որ որդի է՝ ծնեալ է, որպէս Աբրահամ մարմնով չէ ծնեալ՛ի Քրիստոս:

Յայտ է ապա աստուածաբանօրէն է տրամաբանել. Ասրիամ ծնաւ զԱբրահամ՝ որ է Աշմարիտ Յուդայ, ապա Աշմարտապէս է մայր Յուդայ և աստուածածին: Յեսսէ Յուդայ մարմնացաւ՛ի Աւսէն, ապա Այան է մայր Յեսսէին Յուդայ և աստուածածին: Ընդունդն ցուցանէ զանձն ծնեալ. իսկ՛ի Քրիստոս ծնեալ՛ի Աւսէն չէք այլ անձն՝ բայց աստուածային, ապա Այան Հարկաւ է աստուածածին: Ասյն որոյ Քաստանեայցս եկեղեցի երդէ Հանապազօր. "Ով անապական Այան Ասրիամ՝ աստուածածին խոստովանի սուրբ եկեղեցի, ուստի տուաւ Հայդ անմահութեան և բաժակ մեզ ուրախարար":

ԱՌԱՔԻՆԻ

Յաւել. ա. — ա. Այ էր մարթ Աւսէնն սկիզբն տալ աստուածութեան, վասն որոյ և ոչ ծնանել զնա: — բ. Քրիստոսի ևեթ է մայր Այան, զի ծնաւ զմարդն՝

ընդ որում միացեալ Աստուած, էանց և եթե ընդ նա։ — գ. Ա ան որպ աստուածածին կոչել զԱյան՝ հաւասար է Հնթանոսացն զԱխրբելէ մայր աստուածոյն իւրեանց առնելոյ։ — դ. Սուրբ գիրք ոչ ուրեք կոչեն զնա աստուածածին. և ժողովն նիկիական սահմանեաց յղացեալ և ծնեալ ի կոյս մօրէ զԱրիստոս, և ոչ զԱստուած. և ոչ զԱյան կոչեաց աստուածածին։

պե. — ա. Սուրբ Այան մայր Աստուծոյ է ըստ էնթակայապէս միաւորութեան մարդկային բնութեան ընդ անձն Բանին Աստուծոյ ի Քրիստոս, և ոչ ըստ աստուածութեան նորա։ Ցէս զղանազանութիւն կըրկնակի մայրութեան և որդիութեան, զոր ի վեր այսր քառատրեցաք։

— բ. Այան ծնաւ զմարդն, կամ մանաւանդ զմարդկային բնութիւնն՝ ընդ որում էնթակայապէս միաւորեալ էր անձն Բանին Աստուծոյ, և ոչ զմարդկութիւնն ինքնուրոյն։ Որով ինքնին անկանի՝ Աեստորի ասելն՝ թէ Բանն Աստուած էանց և եթե ընդ Այան. զի անձն Բանին Աստուծոյ էառ և միաւորեաց ընդ իւր զմարդկային բնութիւն ի Յուսէն։ Այլ քանզի ծնեալն ի Յուսէն Աստուած է, ապա և ծնօղն աստուածածին։ Ընդունելիք և Քրիստոսածին կոչել զնա, որպէս և է. այլ քանզի կամակորեաց մարդասպանն Աեստոր զնշանակութիւն բառիս՝ մարդածին լսանալով ըստ իւրում մոլորութեան, վասն որոյ եկեղեցի սուրբ ընդդէմ մոլորութեան նորա սովորեցաւ կոչել աստուածածին զսուրբ Այան։

— գ. Ոտոշ անդր ի բաց զանտեղի նմանութիւնդ. զի հեթանոսք զդիս իւրեանց համարէին ըստ աստուածութեան ծնեալս ի Ախրբելէայ. յորմէ այնչափ հեռի եմք ի մոլորութենէ, որչափ ձշմարտութիւն յանձառն առասպելոց։

— դ. Սուրբ գիրք թէպէտ և ոչ կոչեն աստուածածին զԱյան ըստ նիւթական բառին, սակայն զնոյն ասեն համազօր բառիւ։ Քանզի Աթիսաբեթ ի ձայն բարձր աղաղակեաց (Ղ ՟ի. ա. 43.) "Եւ ուստի է ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս"։ Որ և ինքն իսկ Այան անդ ըստ նմին նշանակութեան վարէ յասելն. "Մեծացուսցէ անձն իմ զՏէր"։ Եւ գիրք սուրբք նո-

վին իսկ զի զորդին Աստուծոյ ծնեալասէն ՚ի Կուսէն, մայր Աստուծոյ զնա յայտ առնեն։

Անհիական ժողովն ոչ կոչեաց աստուածածածին զԿոյսն ըստ բառին, զի չէ նա ուրուք զաստուածամայրութիւն Կուսին ուրացեալ էր. այլ նովին իսկ ասելովն յղացեալ և ծնեալ ՚ի Կուսէն զԱրիստոս, զոր Աստուած յԱստուծոյ և հաճափոյակից Հօր դաւանեաց, յայտ առնէ մայր Աստուծոյ և աստուածածածին զԿոյսն։

Աստղ. Բ. — ա. Գնչպէտ և հոգի մարդոյ նեղբին կցորդութեամբ միաւորեալ է ընդ մարմնոյ, սակայն ոչ առեմք հոգեծին զմայր մարդոյ. ապա և ոչ աստուածածածին օրէն է ասել զմայր Արիստոսի, քանզի և անձն Բանին ենթակայապէս միացեալ ընդ մարդկութեան նորա. այլ պարտ է կոչել մայր Արիստոսի, այսինքն բոլոր ենթակայութեանն՝ որ է Արիստոս։ — բ. Ապա թէ ոչ, պարտ էր կոչել աստուածածահայր զՀոգին սուրբ՝ որով յղացաւն Արիստոս և ծնաւ։ — գ. Եւ ընկալեալ միանգամ զաստուածամայրութիւն Կուսին, ըզհետ գայ և պապ և մամ Բանին Աստուծոյ կոչել ըզՅովակիմ և զԱննա, որ անտեղի է։

Պե. — ա. Ասին իբրև իսկ Տէրտածին կոչեմք զմայր և ոչ հոգեծին, զի Հոգի մասն է մարդոյ, և մայր՝ բոլոր մարդոյն է ծնօղ, և ոչ մասին ինչ նորա։ Այնպէս և ըզԿոյսն կոչեմք աստուածածածին, վասն զի բոլոր անձն ծնեալ ՚ի նմանէ՝ Բանն մարմին եղեալ՝ Աստուած է։ Եւ ըստ այսմ կոչել զնա օրէն է և Արիստոսածին, որպէս ՚ի վեր անդր ասացաք. այլ քանզի մոլորեալք եւ խնայատ անուանակոչութեանս այսմիկ՝ Նեստոր, նմին իբրև ոչ ՚ի կիր առնու զայն ուղղափառ եկեղեցի։

— բ. Ել է մարթ հայր Արիստոսի կամ աստուածահայր կոչել զՀոգին, զի ոչ ինչ ՚ի գոյացութենէ իւրմէ ետ Արիստոսի՝ ՚ի յղութեան, այլ աստուածայինզօրութեամբն հովանի եւեթ եղև Կուսին. վասն որոյ յատկապէս նմա ընծայի մարդեղութիւն Բանին, թէպէտ և երեցուն եւս անձանց գործակցեալ ՚ի նոյն։

— գ. Արթ իսկ է զՅովակիմ և զԱննա հաւ և հան կոչել Բանին՝ յաւելուածովս ըստ Տրփնոյ. որպէս աւրբ գիրք եղեալ պեսոն անուանեն, և Հարք զԱստուած կոչեն աստուածահայր, յայտ է թէ ըստ մարդկութեան. և գիք ինչ յայսմ անտեղութիւն։

ԳԼՈՒԽ Զ

ԶԻ ՓՐԻՍՏՈՍ ԲՆՈՒԹԵԱՄԲ Է ՈՐԴԻ ԱՍՏՈՒԾՈՑ, ԵՒ ՈՉ ԸՍՏ ՈՐԴԵԳՐՈՒԹԵԱՆ

Ի միում ենէ անձին՝ ի Քրիստոս, որպէս ձգեաց գայ աստուածամայրութիւն Կուսին, նոյնպէս և ձգեաց գայ ասել՝ զի Քրիստոս իսկապէս է որդի Աստուծոյ։ Քանզի զի անուն որդի՝ անձնական է, այսինքն յատկութիւն՝ որ անձին ևէթ պատկանի. արդ՝ զի՝ ի Քրիստոս չէք այլ անձն՝ քայց Որդւոյն Աստուծոյ որ քնութեամբ է որդի Հօր՝ ապա Քրիստոս է որդի Աստուծոյ իսկապէս, միանգամայն և որդի մարդոյ. որդի Աստուծոյ՝ զի ծնեալ Աստուծոյ նախ քան զամենայն յաւիտեանս. և որդի մարդոյ՝ զի ծնեալ ժամանակաւ՝ ի Կուսէն։ Քրիստոս է որդի Աստուծոյ իբրև Աստուած, և իբրև մարդ. իբր ոչ ևթէ և մարդկութեամբն ծնեալ՝ ի Հօրէ, այլ զի անձնն՝ որ էառ զմարդկութիւն՝ է անձն որդւոյն Աստուծոյ։

Պարզութիւն է ապա ասել՝ թէ Քրիստոս ըստ մարդկութեան որդեգիր ևթէ էոյէ Աստուծոյ, դրիւ և ոչ քնութեամբ որդի. որպէս Թէոդիքոս եպիսկոպոս Կեսարէայ, և Աղիսանդր արքեպիսկոպոս Տոլեդայ ուսուցին։ Որոց վարդապետութիւն դատապարտեցաւ՝ ի ժողովս, և ըստ սուրբ գրոց և ըստ միաձայն վարդապետութեան սրբոց Հարց սահմանեցաւ՝ զի ամպարշտութիւն է ասել որդի Աստուծոյ ըստ որդեգրութեան զայն, որ ըստ քնութեան է որդի Աստուծոյ։ Որդեգրականացն մոլորութիւն մարթ է համարել սերունդ նեստորական աղանդոյն։ Քանզի զանազանէին նոքա՝ ի Քրիստոս երկուս որդիս ըստ երկուց քնութեանցն, մի՝ ըստ քնութեան որդի Աստուծոյ, և միւս ևս որդեգրութեամբ ըստ ընտրհաց. և ըստ այսմ զանազանութեան յաւելուն դնել երկուս անձինս՝ ի Քրիստոս։

Կիւրեղեայ սուրբ խոստովանի և ուսուցանէ մի Քրիստոս յերկուս քնութիւնս. այլ թէ զքնութիւնն մարդկային մտածեալ յինքեան, կամ խնայականապէս ևթէ

զանազանեալ ՚ի Քրիստոս յանձնէ Հանգին՝ յորում ենթակայէ, մանրթ իցէ ասել որդեգրեալ, ինդիր է առ դասական աստուածաբանս։ Այլ մեր աւետրդ համաբեալ զինդիրն զայն, ցուցանեմք ընդդէմ որդեգրականաց զուղղափառ վարդապետութիւնն սահմանեալ ՚ի սուրբ եկեղեցւոյ, նախ՝ ըստ սուրբ գրոց։

Հանդիր սուրբ գիրք ցուցանեն իսկապէս և ըստ բնութեան որդի Աստուծոյ զՔրիստոս, զոր Հայրն երկնաւոր ետ ՚ի փրկութիւն աշխարհի. “Հնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զորդին իւր միածին ետ,,. (Յհ. գ. 16)։ “Որ իւր որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա,,. (հռ. ը. 32)։ Յոր հաձեցաւ Հայր. “Դու ես որդի իմ սիրելի, ընդ քեզ հաձեցայ,,. (Ղ Է. գ. 22)։ “Դա է որդի իմ սիրելի՝ ընդ որ հաձեցայ, դմա լուարուք,,. (Ա՝ԹՂ. ԺԷ. 5)։ Ընդ զնա որպէս մարդ ետ վասն մեր ՚ի մահ, և որպէս ՚ի մարդ՝ հաձեցաւ ՚ինն Հայր, ապա Քրիստոս որպէս մարդ է որդի Աստուծոյ իսկապէս և ըստ բնութեան, վասն որոյ և ոչ որդեգրութեամբ և ըստ շնորհաց։

Եւ դարձեալ՝ զոր Պետրոս որդի Աստուծոյ դաւանեաց, (Ա՝ԹՂ. ԺԶ. 16.) որում կոյրն ՚ի ծնէ որպէս որդւոյ Աստուծոյ երկիր եպագ, (Յհ. Թ. 38.) զոր որպէս հայհոյիչ դատապարտեացն Կայիափայ ՚ի մահ, էր մարդն Յիսուս Քրիստոս. ապա նոյն ինքն մարդն Յիսուս Քրիստոս, այն՝ որ վասն մեր մատնեցաւ, այն՝ որ մկըրտեցաւ, այն՝ որ խօսէրն ընդ Պետրոսի և ընդ կուրին, իսկապէս և ըստ բնութեան է որդի Աստուծոյ։

Երկրորդ ցուցանի ՚ի Հայոց, որք ամենեքեան առհասարակ ուսուցանեն զՔրիստոս Ճշմարիտ Աստուած, որպէս յայտ է ՚ի վկայութենէն՝ զոր ՚ի վեր անդր ածաք, և մի անձն ՚ինն նմա, մի որդի, մի Քրիստոս Աստուած և մարդ, որպէս դարձեալ զվկայութիւնս նոցա ընդդէմ նեստորականացն ածաք։ Եւ յաւելումք յայնոսիկ զՀանգանակս Հաւատոյ, յորս դաւանեմք զՔրիստոս որդի Աստուծոյ ծնեալ ՚ի Կուսէն. և զսահման ժողովոյն Կաղկեդոնի. “Ընդ զՀետ երթեալ Հարցն սրբոց, զնոյն ինքն խոստովանիմք և որդի Աստուծոյ և տէր մեր Յիսուս Քրիստոս,,։ Վասն որոյ ժողովն փրանկփորդեան այսպէս ՚ի ժողովական Թղթին խօսի

առ աղանդապետ որդեգրականացն. "Նոկ գոս, ով որ և իցես՝ որ որդեգիր զՔրիստոս ուսուցանես, ուստի ընկալար զայդ՝ աղէ ասա։ Ընդհատացան զայդ նահապետք, զայդ ոչ ուսուցին մարգարէք, առաքեալք ոչ զայդ քարոզեցին, սուրբք որք խօսեցան զայդմանէ՝ չետոն զանուանդ զայդ, և վարդապետք հաւատոյս մերոյ զայդ ոչ վարդապետեցին"։

Արդարդ՝ ցուցանի աստուածաբանօրէն յիսկութենէ որդեգրութեան։ Անպէ որդեգրութիւն է զօտար որ առնուլ՝ի ժառանգութիւն. իսկ Քրիստոս որպէս մարդ՝ ոչ է անձն օտար Աստուծոյ, եթէ ոչ երկուս անձինս՝ի նմա՝ի ներքս մուծանիցեմք. ապա Քրիստոսի աստուածամարդոյն անձն, որ բնութեամբ որդի Աստուծոյ է, չկարէ որդեգիր գոլ. զի նոյն անձն ոչ է մարթէ լեալ նորին Հօր և բնութեամբ որդի և որդեգիր։

ԱՌԱՔԻՆՔ

Ղուկ. Ա.—Ա. Գաբրիէլն ասէ (հմ. ա. 4.) "Ահմանեալ որդւոյն Աստուծոյ զօրութեամբ ըստ Հոգւոյն սրբութեան"։ արդ սահմանելն չէ այլ ինչ, եթէ ոչ որդեգրութիւն. իսկ Քրիստոս չմարթի ըստ աստուածութեան գոլ որդեգիր, ապա ըստ մարդկութեանն է։ — Բ. Այսպէս առաքեալ համեմատելով զՔրիստոս ընդ արդարս՝ որ են որդիք Աստուծոյ, յաւելու (ը. 17.) "Եթէ որդիք, ապա և ժառանգք. ժառանգք Աստուծոյ, և ժառանգակիցք Քրիստոսի"։ Այսպէս որոյ և կոչի Քրիստոս "անդրանիկ՝ի մէջ եղբարցն բազմաց" (անդ. 29)։ Արդ եթէ արդարքն որդեգիրք Աստուծոյ են, և ըստ չնորհաց ժառանգակիցք Քրիստոսի, և Քրիստոս անդրանիկ՝ի նոսա, յայտ է զի և Քրիստոս ըստ մարդկութեանն՝ հանգոյն նոցին ըստ չնորհաց է որդի։

Գա. — Ե. Քրիստոս սահմանեալ էր՝ի յաւիտենից, ոչ՝ի չնորհս որդեգրութեան, այլ որպէս սուրբն Գրիգորիոս ասէ՝ յորդիութիւն Աստուծոյ՝ի ձեռն միաւորութեան երկոցունց բնութեանցն՝ի ժամանակի, որով Աստուած մարդացաւ և մարդն աստուածա-

ցաւ : Պանդխտութիւն անկանի իսկ ընդ յաւիտենական նախատահմանութեամբ, որով Քրիստոս ասի առհմանեալ ոչխարաց :

—ԲՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏԵԼ առաքելոյն զՔրիստոս ընդ արդարս՝ ըստ ժառանգութեան նոցա է, և ոչ ըստ իրաւանց ժառանգութեան : Պանդխտութիւն Քրիստոսի իբր Տարագատ որդւոյ անկ է ժառանգութիւնն այն, իսկ արդարոց՝ որպէս յորդեգրութիւն կոչեցեալոց : Պայսպէս և ըստ հաւատակից բնութեան, քանզի զմեզ ընտրեաւ, կոչն եղբայրս մեր և անդրանիկ՝ ի մէջ եղբարց բազմաց՝ որ ընտրհօք յորդեգրութիւն Պատուոյ վերառեալ են. այլ ընտրեին այսմիկ անընդունակ է բնութիւնն միաւորեալ ընդ Հաւնին, վասն որոյ կոչի նա՝ ի տուրբ գիրս դաժէն որդէ. և նոյն առաքեալ ասէ զՀօրէ. "Ոչ յիւր որդին ոչ խնայեաց ,,:

ՊՀԱՒԷ. Բ. — ա. Քրիստոս ըստ աստուածութեանն ծնեալ՝ի Հօրէ և համագոյակից նորին է, իսկ ըստ մարդկութեան ոչ ծնեալ՝ի նմանէ և ոչ համագոյակից Հօր. վասն որոյ ասեմք զՔրիստոս անմայր ըստ աստուածութեան, և անհայր ըստ մարդկութեան. զի մարդոյ ոչ է հնար գոլ ըստ բնութեան որդի Պատուոյ : — բ. Պաքէն Քրիստոս որպէս մարդ ընկալաւ զկնութիւն ընտրհաց, որով լինիմք Պատուոյ յորդեգիրս. և ըստ այսմ Քրիստոս է գլուխ մեր համեմատ անդամոց : — գ. Պայս թէ ոչ, զհետ գայր անտեղութիւն՝ ունել Քրիստոսի երկուս հարս ըստ բնութեան, զՊատուած և զմարդ : — դ. Եւ եթէ կարեմք ասել զՔրիստոսէ ծնեալ յարչարեալ և մեռեալ, ընդէր չկարեմք ասել զնա և որդեգրեալ :

ՊԿԲ. — ա. Քրիստոս ըստ մարդկութեան ոչ է ծնեալ՝ի Հօրէ և ոչ համագոյակից Հօր, այլ որդի նորին է ըստ բնութեան վասն անձնաւորական միաւորութեան մարդկութեանն ընդ աստուածութեան : Ցնա զոր ասացաքն՝ի վեր անդր՝ թէ ծրագիս Քրիստոս իբրև Պատուած՝ ասի որդի Հոսին ըստ բնութեան, և իբրև մարդ՝ ասի որդի Պատուոյ Հօր ըստ բնութեան :

Պնմայր ասեմք զՔրիստոս ըստ աստուածութեան, այսինքն զի ոչ ՅՊատուծոյ մօրէ է ծնեալ. և անհայր ասեմք ըստ մարդկութեան, այսինքն զի ոչ՝ի մարդոյ

հօրէ է ծնեալ. այլ յաւելաք՝ թէ չէիցէ Աբրահամ որդի Նոր Աստուծոյ և որդի Աւսէնն ըստ բնութեան. զի է իսկ երկաքանչիւրոցն որդի ըստ բնութեան, վասն անձնաւորապէս միաւորութեան երկուցն բնութեանց ի Աբրահամ:

— ԺԲ. Աղագաւ ընկալաւ Աբրահամ իբրև մարդ ըզլուծիւն ընծրհայ վասն անձնաւորապէս միաւորութեանն. այլ քանզի մարդկութիւն նորա անդէն ընդէանալն եղև ըստ բնութեան որդի Աստուծոյ վասն այնր միաւորութեանն, ոչ ևս մնայր ի նմա տեղի որդեգրութեան վասն ընծրհայն ի վերայ հասելոյ. զի բնականն որդիութիւն ի բաց մերժէ զորդեգրութիւն: Վասն որոյ չէր մարթ նմա հաւաստաբել մեզ, որ իբրև գլուխ մեր՝ ըստ առաւելազանցութեան բերել յինքն որ ինչ էրն ի մեզ նուաղօրէն:

— ԺԳ. Ոչ ինչ անտեղի ըստ այլ և այլ տեսութեան լինել Աբրահամի բնութեամբ որդի Աստուծոյ և Նաւթի: Քանզի իբրև Աստուծոյ՝ յաւիտենական ծնընդեամբն ի Հօրէ՝ ըստ բնութեան հայր է նմա Աստուած. և իբրև մարդոյ՝ ըստ անձնաւորապէս միաւորութեանն՝ նոյն ինքն հայր է նմա: Իսկ ընդ հակառակն իբրև մարդոյ՝ մարմնաւոր ծննդեամբն՝ հայր է նմա ըստ բնութեան Նաւխէ, և իբրև Աստուծոյ՝ նոյն ինքն դարձեալ ըստ բնութեան հայր է նմա՝ վասն անձնաւորապէս միաւորութեանն:

— ԺԴ. Ընդունել չարչարեալ և մեռեալ զասեմք զԱբրահամ ըստ մարդկութեանն, զի մարդկային բնութեան է ծնանել և մեռանել, և ոչ զաստուածային անձնէն ուղղակի կարեմք ասել զնոյն. իսկ որդիութիւն անձին Աբրահամի է ուղղակի, և ոչ է մարթ այնմ՝ որ ըստ բնութեան որդին է՝ գոլ և որդեգիր:

ԳԼՈՒԽ Է

ՅԱՂԱԳՍ ՉԱՆԱՉԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒՑ ԲՆՈՒԹԵԱՆՑՆ Ի ՔՐԻՍՏՈՍ ԵՒՏ ԱՆՁՆԱԻՈՐԱՊԷՍ ՄԻԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ

Եւտիքէս, որպէս ասացաք, ընդ հակառակն Նեստորի՝ ի ծայրայեղ մոլորութիւն զառածեալ՝ մի բնութիւն՝ ի Քրիստոս յետ մարդեղութեանն քարոզէր։ Ալ ասն որոյ ամբաստանեալ առ Փլաբիանոս եպիսկոպոս Կոստանդնուպոլսի, և ոչ հրաժարեալ՝ ի մոլորութենէն, դատապարտեցաւ՝ ի ժողովի, և անտի առ Լևոն քահանայապետն Հռոմայ բողոքեաց։ Նա՝ ի ստուգել քահանայապետին զնրան, և զվէիս ժողովոյն հաստատել, յամառեալ նորա՝ ի մոլորութեանն, և բազում ջանասիրեալ լեալ, մինչև՝ ի ժողովն Քաղկեդոնի հաստատեալ իւրովք դատապարտեցաւ։

Եւտիքեանցն մոլորութիւն ըստ էութեան այն էր, խոստովանել՝ ի Քրիստոս մի բնութիւն. այլ թէ երկոցունց բնութեանցն շփոթմամբ եղեալ մի, թէ միոյն՝ ի միւսն փոխոխմամբ կամ թէ բաղադրութեամբ, ոչ ինքն Եւտիքէս և ոչ հետևողք նորա պիտոյին սահմանել։ Այնմանապէս տարաձայնք՝ ի միմեանց գոան վասն ժամանակին երկուցն՝ ի մի յեղաշրջելոյ. կիսոց՝ ի վայրկենի մարդեղութեան հաստատելով զայն լեալ, այլոց յետ յարութեան, և ոմանց՝ ի համբարձմանն։ Պարտէս զնատղ և փոփոխեալ նոցէ հանգամանաց այսր մոլորութեան, սակայն ոչ ինչ ընդհատ քան զնեստորեանն մոլորութիւն եղծանել զմարդեղութեան Բանին խորհուրդ։

Ի միջատահմանին երկաքանչիւր մոլորութեանցս կացեալ ուղղափառ վարդապետութիւն, անշփոթ զերկուսին բնութիւնս խոստովանի՝ ի միում անձին Բանին, այսպէս սահմանեալ՝ ի տուրբ ժողովին Քաղկեդոնի։ Նա ցուցանի վարդապետութիւնս այս վկայութեամբքն՝ զորս՝ ի վեր անդր՝ ի ցոյց երկաքանչիւրոց բնութեանցն՝ ի Քրիստոս, աստուածութեան և մարդկութեան նորա, ածաք՝ ի տուրբ գրոց և՝ ի Հարց. յորս յաւելումք.

Օ՛ի առաքեալն ասէ. "Ալ ինչ յափշտակութիւն հաւասար Ա՛ստուծոյ, այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ,,. (Փիլ. Բ. 6): Ա՛րդ կերպարան առեալով զԱ՛ստուծոյ և զծառայի՝ զբնութեանցն զանազանութիւն յայտ առնէ. և չէ մարթ ասել՝ թէ յառաջ քան զմիաւորութիւն Ա՛նձին ընդ մարմնոյ այլ կերպարան էր աստուածութեան և այլ մարդկութեան, իսկ յետ միաւորութեանն լոցեն լեալ մի. վասն զի ըստ այդմ չէր պարտ ասել զկերպարանս ծառայէ առեալ, այլ՝ ի կերպարանս ծառայի յեղեալ. զի առնուլն ցուցանէ զանփոփոխութիւն առողջին և առեղծն. և միանգամ զանազանեալքն՝ ցորչափ գոն, միշտ զանազանին:

Վարձեալ և աւետարանչին Յովաննէս, յետ Ձառեցոյ զաստուածութենէ Ա՛նձինն, ի վերայ ածէ. "Ա՛նձն մարմին եղև, և բնակեաց ի մեզ,,. և այլ աւետարանչք զԱ՛նձին մարմնացելոյ ածեն զապգաբանութիւն. ապա ուրեմն ի Ա՛նձն մարմին եղեալ՝ երկու այլ և այլ բնութիւնք են, աստուածային և մարդկային:

Եւ դարձեալ ի նմին աւետարանի ասէ Վ՛րիստոս (Ը. 40.) "Խնդրէք սպանանել զիս, զայր մի՝ որ ձեզ զճշմարտութիւն խօսեցայ,,: Եւ նոյն աւետարանիչ յառաջնումն ի Կաթուղիկեացդ (Է. 20.) ասէ. "Օ՛ի նա է Ձիմարիտ Ա՛ստուած և կեանք յաւիտենական,,: Ա՛րդ զնոյն ինքն և մարդ և Ա՛ստուած կոչէ. և քանզի չէք ի նմա զանազանութիւն անձին և անձին, ապա Ձարկ է զի բնութիւնք երկու այլ և այլք լցեն ի նմա:

Եւ դարձեալ ասէ առաքեալն (Ա՛ր. Գ. 3.) "Վ՛ան որդւոյ Իւրոյ եղեալ ի ձառակէ Կաւթի ըստ մարմնոյ,,: Ա՛պա ուրեմն և յետ միաւորելոյ բնութեանցն՝ անշփոթ երկոքեան զանազանեալ, և կոչի նոյն ինքն Ա՛ստուած և որդի Ա՛ստուծոյ, և մարդ և որդի մարդոյ ի ձառակէ Կաւթի:

Ըստ այսմ և բազում այլ ուրեք ի սուրբ գիրս ընծային Վ՛րիստոսի Ձակառակ ստորոգելիք, որք չկարեն պատշաձել նմա ըստ միում և եթ բնութեան. որպէս որդի Կաւթի, և տէր Կաւթի. Հաւասար Հօր, և Հայր մեծ քան զնա. նախայաւիտեան, և ի ժամանակի եղեալ ի կնոջէ. զոյս չէ մարթ այլազգի խմանալ,

առանց խոստովանելոյ երկուս քնութեիւնս ի Քրիստոս։

Դարձեալ և ասէր զնոյն իմաստս յայտնագոյն զերկոցունց քնութեանցն քացատրեն։

Կիրակոս եպիսկոպոս Պափոսի, մին ի սուրց Նիկիական ժողովոյն. "Ստարեալ յերկաքանչիւր գոյացութիւնս, համագոյակից Երրորդոյ և ասր, և համագոյակից Աստուծոյ և մարդ. անմայր ի վեր ի ասրէ, անհայր ի վայր ի մորէ "։ Ի ոչ ուղղակի զդեմ ունի Նեստորիքեայ՝ որ ոչն կամէր երկուս գոյացութիւնս ասել ի Քրիստոս, և ոչ զմարդկութիւնն Քրիստոսի համագոյակից մեզ։

Գրիգոր աստուածաբան (առ Կլեդոնիոս.) "Քնութիւնք երկու, քանզի Աստուած և մարդ... ոչ այլ ոք և այլ, մի լիցի. վասն զի երկոքեան մի՝ խառնելովն "*։

Եւ զարձեալ (յղ. Հրպ. Ճառ Ե.) « Լոյս որ զհովուաքն փայլատակեաց, յորժամ անժամանակեայ լոյսն ընդ ժամանակէիս խառնէր »։

Աթանաս (ընդդէմ արիան. Ճառ Ե.) « Մխանայ մարդասիրատէս ընդ մեզ, զառաջինն մեր զգեցեալ, և ընդ նմին վերախառնեալ »։

Գրիգոր Նիւսացի (ընդդէմ Եւնոմ. ա.) « Եւ այսպէս շարախառնեցաւ ընդ Աստուծոյ մարդկայինս, որ ի Քրիստոս մարդոյն կատարելով զմիջնորդութիւն »։

Եւ այլուր (Հրահանգ. գլ. ԺԱ.) « Խակ զվերախառնութեան յեղանակ աստուածայինն ընդ մարդկայինս նկատել չէմք բաւական »։

Ոսկեբերան (առ Դամասկ.) « Խառնեալ ընդ աստուածութեան զմարդկութիւնն »։

Կիւրեղ այնքսանդրացի (գանձ. Ե.) « Քանզի մի Քրիստոս ի մարդկութենէ և Աստուծոյ Բանէն խառնեալ »։

Եւ այլուր (ընդդէմ Նեսթորի գիրք ա.) « Ջխառնուածոյդ անուն եդին ամենք և ի սրբոց Հարց. այլ քանզի զանգիտեալ ասես՝ մի գուցէ

* Բառս խառնել ոչ է նոյն ընդ խառնակել կամ շփոթել, այլ յաճախ ևս նշանակէ զօդել, միաւորել, զուգել, կցորդել։ Որպէս ի սուրբ գիրս և առ նախնիս մեր է տեսանել. « Խառնել օղ ընդ ձարմանդ. խառնել անկեանց ընդ իրեարս. ձեռն ընդ ձեռն խառնել. յօդակապութեամբ սիրոյն ընդ միմեանս խառնեալք. որ ընդ հոգեղէն բնութեան մերոյ խառնեցեր զբանական հոգիս »։ Վասն որոյ և Հարք մեր առ ի ցուցանել զանբաժանելի միաւորութիւն երկուց բնութեանցն ի Քրիստոս, առեալ զբառս զայս ի կիր արկանեն՝ առեալ ի Հարց Յունաց և Լատինաց. յորոց շատ լիցին օրինակք։

Աքվիլեմ (պապ. մարգարէին) «Կատարեալ և կրկին ունի բնութիւն ... զի ոչ՝ ի մի միայն բնութեան Աստուած յերկրի երևեցաւ, և ոչ՝ ի միւս այլ միայն մարդն յերկինս վերացաւ»:

Ակիւրեդ այլեքսանդրացի (Պարապմանց գլ. ԺԱ.) «Ի միաւորութիւն Հիմարիտ եկեալ Բանին առ մարդկութիւնն, անշփոթ մնացին գոյացութիւնքն, անշփոթ մնացին բնութիւնքն: ... Բանզի մի և տէր Յիսուս Քրիստոս, թէ և բնութեանցն զանազանութիւն ոչ անպիտացեալ յորոց զանձառ միութիւնն խոստովանիմք»:

Օ այս Հիմարտութիւն ընկալան միաբան Հաւանութեամբ հնգեքին ուղղափառ ժողովք ազգիս, այսինքն են Կարնոյ, Ե Իրակաւանի, Տարսոնի, Սսոյ, և Բոտանոյ, վկայեալ և հաստատեալ բանիւք ազգայնոց և Հարց և եկեղեցական գրոց: Բանզի Հայաստանեայցս եկեղեցի երգէ՝ ի Ե արարականն. «Խոկասէս Բանն Աստուած միացաւ * ՝ի մարմնի, անփոփոխ գոլով յեութեան»:

«Օ՛ի կատարեալ էառ զբնութիւն
Աստուածըն Բան ըզմարդկութեան»:
«Վարդի՝ ի պանչելեաց
Աստուած մարմնով վառն իմ խաչեալ»:

ոք չիոնթուն հանդիպել համարիցի երբու՝ ի հերձանիւթիւ սակի խառնակելոց ընդ միմեանս, զերծ գնել յերկիւղէ կացուցանեմ. քանզի ոչ այդպէս երբեք խմացան, այլ վարեցան բառիւդ զծայրագոյն միաւորութիւնն առ միմեանս եկաւորելոցն արտայայտել գան գործեալ»:

Սուրբն Օգոստինոս (Ընդ. ձ.) «Զոր օրինակ՝ ի միութեան անձին՝ հոգին միանայ ընդ մարմնոյ, զի մարդ լինի, այնպէս՝ ի միութեան անձին՝ Աստուած միանայ ընդ մարմնոյ, զի Քրիստոս լինի. ապա յայնմ խառնուն է հոգւոյ և մարմնոյ, և յայսմ անձին՝ խառնուն Աստուծոյ և մարդոյ»:

Լևոն պապ. (յղ ճն. Հատ. ձ.) «Ոչ այնպէս բնութիւնս յընկերութիւն առեալ եղև արարչին իւրոյ՝ որպէս թէ սա բնակիչ էցէ, և այն բնակարան, այլ այնպէս՝ զի բնութիւն ընդ բնութեան խառնեսցի»: Այնպէս և Տերտուլիանոս և Կիպրիանոս և Վիկլեոս պատ և այլք՝ ի Հարց լատինացւոց, որպէս է տեսանել առ Պետաւիոսի:

* Բառս դիանալ յաձախագոյնս նշանակէ յօդել, զուգել, միաւորել, կցորդել. որպէս ուր առեմքս. «Յորժամ եկեղեցի հարթանացեալ միանայ ընդ փեսայիդ». (Ըստ.): «Կապեալ ընդ շնորհիդ՝ ի քեզ միանալ: Մխութեամբ հոգւոյս իմ ընդ քեզ». (Նար.): «Նախատրաքն Հայոց, որ յաջ և յահեակ Թևան էին, ՝ի նա խառնեալ միանային». (Խոր. բ. 42):

"Բանն Թանձրանայ՝ ի մարմին, մարմնանայ անմար-
մին, միացեալ բնութեամբ՝ ի յերկուց ,,:

Ա՛աշտոց՝ ի կանոն ձեռնադրութեան եպիսկոպոսի.
"Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ, որ ի Հնմարիտ
Աստուածէ, և եղև կատարեալ և անշփոթ մարդ, ան-
փոփոխելի և անբաժանելի գոլով՝ յերկու բնութեանն
ի Քրիստոս, և ի անձնաւորութիւն Աստուծոյ Բո-
ղոքէ և՝ ի Աարիամայ աստուածածնին կուսէ, միածին
որդի Աստուծոյ ,,:

Սուրբ Ղազարոսին. "Օ՛ր մեր Տողեղէն բնութիւնս
զգեցաւ, և Հաւանեաց անխառն յաստուածութիւնն ,,:

Յոհան Իմաստասէր (յղ. Մարդեղութեան.) "Պահչիս
՝ի բնութեանդ անուանել, ընդ նմին և յերկուցդ առե-
լոյ. և ոչ գիտես՝ Թէ մարմին ասելով, յերկուսին՝ ի
ներքս ըմբռնիս՝ յորոց փախչիսդ ,,:

Օ՛աքարիա կաթողիկոս. "Ա՛ն Հանին գնա՝ ի խաչ
յայն տեղին, յոր ետես Աբրահամ զիսոյն կախեալ
զծառոյն սաբեկայ զեղջերացին. քանզի նշանակեաց զեր-
կուս բնութիւնս, զծայրագոյնս և՝ զՀրաշափառս, զե-
րազանց միաւորեալս՝ ի վեր քան զմիտս և զբանս ,,:

Ա՛եծն Իսոյոլ (ՌԷՆ. պապաբ.) "Ա՛իացաւ առ՝ ի մար-
մին անշփոթաբար. զի ոչ փոխարկումն կամ՝ ի բաց
բարձումն արար աստուածայինն կամ մարդկայինն բնու-
թեանցն, այլ միացոյց զբնութիւնսն, զնոյն գոլ Աս-
տուած և զնոյն մարդ ,,:

"Աստուածային բնութիւնն՝ ի միաւորելն ընդ մար-
մնոյն՝ զերկոցունց յատկութիւնն անշփոթ պահեաց.
որպէս հոգի մարդոյ՝ ի մարմնի, Թէպէտ և տիրապէս
ոչ է ապացոյց ,,:

Գրիգոր Նարեկացի (ՌԷՆ. ԵՐՓոյ.) "Ինձ Հաճար, և
նմա երկերիւք, որ զերկու բնութիւնս ունիմ միաւո-
րեալ՝ ի մի Հոգի և մարմին. և կատարեալքն ինձ, որ կա-
տարեալս եմ աստուածութեամբս և մարդկութեամբ ,,:

Գարձեալ (՝ի ՆԵՐՔ. Կո-ԱՒՆ.) "Երկուց միութեան
անայլայլականի՝ կապ պատկանակիր ,,:

Նա գարձեալ (՝ի ԲԱՆՆ ԼՂ.) "Ա՛տեալ՝ ի սենեակ
Կուսին արգանդի պարզաբար, և ելեալ անտի յօդա-
ւորաբար մարմին էապէս անորոշելի, անթերի մարդ-
կութեամբն, և անպակաս աստուածութեամբն: Ա՛ի

որպէս Հօրն միայնոյ ... արարիչն յերկականութեան մարդ եղեալ Քրիստոս ... անապականի խառնուածեամբ ըստ օրինի հոգւոյ ընդ մարմնոյ, և ոսկւոյ ընդ հրոյ, և կամ յայտնապէս իսկ ասել՝ լուսոյ ընդ օդոյ, ոչ փոխոխեալ և ոչ անջատեալ,,:

Կիւրիղոս սկսեալ. "Եւ ըստ հրեշտակապետին բնակէ յարփանդի Հոգւով մաքրելով ամենաերջանիկ և փառաւորեալ կուսին Մարիամու, և ի նորին բնութեենէն զգենու մարմին հոգւով և մտօք, մարդ կատարեալ և Որդւոյ Քրիստոս, անշփոթ միութեամբ խառնեալ զանխառնելիսն նորա և աքանչելի խառնմամբ: Կանգի ոչ պարզութիւն անյօդ և անմարմին էութեանն փոխեցաւ ի նիւթական և յօդաւոր թանձրութիւն մարմնոյ, և ոչ հիւթաւոր թանձր բնութիւն մարմնոյն՝ յերազաւ յանօսր և աննիւթ աստուածութեանն պարզութիւն. այլ երկաքանչիւրոցն յատկութիւն բնութեանց պահեալ անշփոթ, և միացեալ անձառապէս ի վեր քան զամենայն խառնուածն և միութիւն. մի որդի, մի տէր Յիսուս Քրիստոս յերկուց կատարելոց,,:

Մովսէս քերթող (ի ծին. ԽԷ.) "Յաստուածային գոյութենէն անհատաբար Հայր, և Որդի յերկուց բնութեանց միացեալ Քրիստոս,,:

Մարկիս վարդապետ (ծին. ա. Յհ. Ճառ ը.) "Այս անուանք զերկոսեան մեզ նկարագրեն զբնութիւնս, զաստուածային և զմարդկային, ընդ միմեանս միանալով անշփոթելի և անանջատելի,,:

Ներսէս Շնորհալի. (ի խոսք. Հանդ.)

"Յերկուս ասել զարձեալ բնութիւն
Ա ան ի յերկուց գոլ միութիւն,
Ընդ այս օտար Քրիստոսութիւն,
Մեռ ջաւժանեն յերկուս ըզմին,,:

Ներսէս Լամբրոնացի (յաղեղած.) "Այն է Աստուած և մարդ ասել զՔրիստոս, և երկու բնութիւն,,: Նա դարձեալ (յիշէ ընդ եղբ.) "Ել յերկուցեան բնութիւնքն, զի միացան՝ որպէս և զայլ միաւորեալս է տեսանել, և ոչ միութիւնն անշփոթի՝ յատկայութիւն եղև, որպէս զանյեղ Հպատութիւնս երից առ մեզ զտանեմք. այլ ի միութեանն տեսանելն յատկութիւնքն, և ի յատկութիւնան միութիւնն,,:

Առաքեալ վարդապետ. “Ճշիտ է և միութիւն եղև բնութեանցն Աշմարտապէս, այլ շփոթուածն և խառնակութիւն ոչ. այլ մնացին բնութիւնքն՝ շփոթուածն ոչ կրեալ,,:

Աւետես երիցկայն (՚ի Ռէդ. Քամաք.) “Արիստոն ոչ սոսկ մարդկութեան է անուն, և ոչ լոկ աստուածութեան. այլ Յիսուս և մարդ ասի, այսինքն յերկուց միացեալ անշփոթաբար և անձաւսապէս. ոչ որպէս ջուր ընդ գինի խառնեալ և շփոթեալ, և յերկոցունցն շփոթեալ բնութեանցն. զի ոչ ջուր է և ոչ գինի՚ի խառնեն՚ի միասին. այլ աստուածայինն բնութիւնն՚ի միաւորելն ընդ մարմնոյն՝ զերկոցունց յատկութիւնն անշփոթ պահեաց,,:

Յովհաննէս վարդապետ արձիշեցի. “Նշիւթ էր միութիւն Յիսուծոյն և մարդոյն, քանզի երկու բնութիւնք թէպէտ և միացան՝ սակայն ոչ ինչ շփոթեցան, այլ կատարեալ մնացին. զի Արիստոս Յիսուս և մարդ է կատարեալ,,:

Յուդանի Աշմարտութիւնս այս և աստուածաբանութեն: Յատ անժխտելի բանի մեծին Կիւրղի. “Ուր միաւորութիւն անուանի, անդ ոչ միայ իրիք, այլ երկուց կամ յոլովից է կցորդութիւն զանազանելոց յիրերաց իսկապէս,,: Նդր ըստ հաւատոց եղև Աշմարիտ միաւորութիւն՚ի Արիստոս, որպէս դարձեալ նոյն ինքն Կիւրեղ ասէ՝ “Նրկուց բնութեանց եղև միաւորութիւն,. ապա է միշտ՚ի Արիստոս զանազանութիւն երկուց բնութեանց միաւորելոց: Նյս զայս յայտ առնէ նորին Կիւրղի ասելն. “Ո՞ւ է տէր Յիսուս Արիստոս, թէ և բնութեանցն զանազանութիւն ոչ լինի անպիտացեալ յոլոյ զանձառելի միաւորութիւնն առեալ,,:

Նթէ հոգի բանական միանայ ընդ մարմնոյ՝ պահէ լով անշփոթ զաննիւթական բնութիւն իւր և զնիւթեղէնն բնութիւն մարմնոյ, քանի առաւել աստուածութիւն ընդ մարդկութեանն Արիստոսի կարէ միաւորել անշփոթելի. վասն որոյ և Նարք օրինակաւս այսուիկ ստէպ վարին առ՚ի բացատրել զանձառ միաւորութիւն բնութեանցն՚ի Արիստոս:

Նթէ շփոթմանք կամ խառնակութեամբ երկոցունց այլ և այլ բնութեանցն, այսինքն աստուածայնոյն և

մարդկայնոց, փոխարկութիւն լինչ հանդիպեր՝ որպէս բարբանջէ Նեստիքէս, այլայլութեամբ երկաքանչիւրոյն բնութեանց՝ նոր ինն ելանէր խառնակութիւն բնութեան։ Նանցի խառնակեաւն ոչ է նոյն տեսակաւ, և ոչ ընդ միում՝ ի խառնակելոյն. վասն որոյ և Կրիստոս ոչ Նստուած լինէր և ոչ մարդ, որ հակառակ է ոչ միայն հաւատոց, այլ և բանի։ Ո՛չ ի անեղ աստուածութիւն՝ անեղլի պարզ անայլայլելի և անսահման բնութիւն է, և չկարէ ընդ յեղական և սահմանաւոր բնութեան գալ՝ ի նոյնութիւն։ Նմանապէս և ոչ մարդկայնոյ եղական բնութեան մարթ է շրջել յաստուածութիւն։ Նայր աղագաւ Նարք, ընդ որս և մերքս, նզովիւք չափ պատապարտեն զխառնուրդն զայս՝ անշփոթ դաւանելով զերկուց բնութեանցն միաւորութիւն՝ ի Կրիստոս։

ԱՌԱՔՈԽԹԻՆՔ

Նտրկ. ա. Ո՛չ խորհուրդն մարդեղութեան միով բանիւ յայտ առնէ աւետարանիչն յասելն. «Նանն մարմին եղև», որպես՝ ի յաջորդ գլխի ասէ «զջուրն գինի եղեալ», որ առանց յեղափոխութեան չմարթէր։ Նս նոյն իսկ ասել առաքելոյն՝ թէ «Ո՛չ անձն ունայնացոյց զկերպարանս ծառայի առեալ», ցուցանէ զյեղափոխութիւն։

պե. Նհնարին է յեղափոխիլ Նստուծոյ, զի անփոփոխելի բնութիւն է. վասն որոյ ոչ է այլազգ խմանալ զնանն մարմին եղեալ, բայց առմամբ մարմնոյ՝ զոր Նանն Նստուած միաւորեաց ընդ իւր, որպէս խմանան Նարք առհասարակ. որպէս և Նսկեբերան՝ ի մեկնութեան նորին բանի աւետարանչին ասէ. «Որժամ լսեցես՝ թէ Նանն մարմին եղև, մի զանգիտեցես... զի ոչ եթէ խակութիւն մշանջենաւորութեանն՝ ի մարմնի անդ բնակել՝ փոփոխեցաւ, զի այս հայհոյութիւն յետին ամպարշտութեան և անօրէնութեան հերետիկոսային է. այլ Նանն՝ որպէս էրն ի սկզբանէ՝ մշանջենաւոր խակութեամբն եկն և զգեցաւ զծառայի կերպարանս։... Նս զերևելն դնէ իբր ոչ եթէ եղծումն

ինչ կամ փոխոխումն մխտնջենաւորութեանն, քաւ լիցի. այլ Աչմարտիւ զմարմին զգենլոյ հաստատել կամի,, (Ճառ Ժ):

Վասն որոյ ոչ այլ ինչ նմանութիւն է մարդեղութեան ընդ Ջրոյն գինի եղելոյ, քայց ի նմանութենէ էական քայլին եղեալ. որ եթէ ամենայն ուրեք նշանակէր յեղափոխութիւն, հարկ էր նոյնպէս իմանալ և զասել առաքելոյն զ Քրիստոսէ եղեալ վասն մեր անէծս, որպէս սուրբ Հայրք ընդդէմ ապուխինարեանց ածեն:

Իսկ զունայնացուցանել Բանին Աստուծոյ զանձն՝ ըստ խոնարհութեանն իմանալի է, որով զծառայական բնութիւն մեր էառ՝ առ ի հնազանդել նովաւ Հօր, որպէս յաւելու անդ նոյն առաքեալ:

Աստէ. Բ. — ը. Հայրք առ ի բացատրել զմարդեղութիւն Բանին՝ մերթ ածեն ի նմանութիւն հոգւոյ և զմարմնոյ մերոյ, յորոց բաղկանայ մի բնութիւն. որպէս Կիւրեղ, Աթանաս, Լևոն, և այլք: Մերթ ըստ սուրբ հաղորդութեանն, յորում հացն փոխի ի մարմին Քրիստոսի. որպէս սուրբն Յուստինոս: — թ. Մերթ ասեն՝ թէ "մի է բնութիւն Բանին մարմնացելոյ, որպէս Կիւրեղ: — գ. Մերթ խառնուածն զմիաւորութիւնն զայն կոչեն, որպէս Աստուածաբանն և այլք: Այսպա չէ պարտ երկուս ասել բնութիւնս ի Քրիստոս:

Պէս. — ը. Հանգիստութիւն հոգւոյ և մարմնոյ ընդ մարդեղութեան՝ ոչ ըստ միութեան բնութեանն է, այլ ըստ միութեան անձին ի Քրիստոս. վասն որոյ չասեն՝ թէ Աստուած և մարդ է ըստ բնութիւն, այլ ըստ Քրիստոս՝ որ անձին է յայտարար. որպէս սուրբն Աթանաս ասէ. "Որպէս հոգին և մարմին է ըստ տարբ, այսպէս և Աստուած և մարդ է ըստ Քրիստոս: Այսպէս և զհամեմատութիւն սրբոյ հաղորդութեան ըստ իրապէսնեըկայութեանն Քրիստոսի ի նմա է իմանալ, և ոչ ըստ փոխարկութեան հացին. որպէս յայտ է ի բանից անտի սրբոյն Յուստինոսի, զի ասէ. "Որպէս Բանիւն Աստուծոյ մարմին եղեալ Յիսուս Քրիստոս, վասն փրկութեան մերոյ էառ զմարմին և զարիւն, նոյնպէս զինքն մարմնացելոյ զմարմինն և զարիւն ուսաք գոլ (ի սուրբ հաղորդութեան):

— բ. Սուրբ Հայրք առ ի ցուցանել զմիութիւն ան-

ձին՝ ի Քրիստոս ընդդէմ Աեստորի վարեն զայդ ձև բացատրութեան, յորում դարձեալ յայտ առնեն ընդ միութեան անձին և ջնութեանցն զանազանութիւն յասելն՝ "Ա՛ի է բնութիւն Բանին մարմնացելոյ ,, : Այսպէս նոյն ինքն Կիւրեղ բացայայտէ զայս յերկրորդում Թղթին առ Աեստոր՝ Թէ յիրաւի ստգտանելի լինէաք , "Եթէ ոչ ասելով զնջութիւն Բանին՝ լռէաք առանց յասելոյ զմարմնացեալն . այլ զի մարմնացեալ ինա ասելով ցուցաք զկնի նորա մարդ հաղորդ բնութեանս մերոյ ի նմա, ոչ ի կենսուցան՝ ի ցուպ եղեգնեայ ,, :

Օ՛ նոյն է իմանալ և զայլոց Հարց , որք ընդդէմ նեստորական մտաց ոչ բնութիւն ասեն՝ ի Քրիստոս . այլ ինքն նշանակութեամբ անձին կամ ենթակայութեան , որպէս առաջագոյն ի Հանն Աղրոզիոս ի սահմանել զնշանակութիւնս աստուածաբանական բառից ենթակայութիւն , և այլն : Աև այս մանաւանդ յառաջ քան զերևել մոլորութեանն Աեստորի . զի առաքելական յայնժամ լռեն Հարք՝ ըստ ասելոյ սրբոյն Պօղոսի գոսա-նեալ : Այլ՝ ի յառնել ներհական մոլորութեանն , և՝ ի ձշգրտել աստուածաբանական բառից և բացատրութեանց , և յետ յայտնապէս սահմանելոյ և վճռելոյ սրբոց եկեղեցւոյ , ոչ ևս մարթ է նոքին հաստատակութեամբ և ձևով բանից վարել : Օ՛ ի նոքին իսկ Հարք՝ որք այնպէսն լռեն յայնժամ՝ եթէ յետ Աեստորի մոլորութեն կացեալ էին , ոչ արդեօք նոյնպէս լռեն : Աանաւանդ զի Աե՛ բնութիւն Բանին մարմնացելոյ ասել Կիւրղի՝ ոչ է հաւասար ասելոյ զի բնութիւն՝ ի Աե՛ւ կամ բաղադրեալ բնութիւն . զի տակաւ վարեին միաբնակք առ հասարակ , վասն որոյ չէ օրէն այժմ՝ ի կիր առնուլ զայս :

— Գ . Օ՛ նոքին Հարք , որք առ՝ ի ցուցանել զաբանելի-լահրաշ միաւորութիւն բնութեանցն՝ ի Քրիստոս խոստովանին կոչեն զայն , առ՝ ի բաց տանելոյ զամենայն ձախտակի կարծիս , յասելոյն զրեթէ միշտ զառաքս անշփոն , անխառն , աճանչելի , և այլն : Բանզի Աեստոր բարոյական ինչ կցորդութիւն դնէր ընդ մարդկութիւնն Քրիստոսի և ընդ աստուածութիւնն , յերկուս անձինս բաժանել զնա , վասն որոյ և Հարք բառիս խոստովան՝ զանբաժանելի միաւորութիւն երկոցունց բնութեանցն՝ ի մի անձն Քրիստոսի ընդդէմ մոլորութենորա հաստատեն

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Աղեօք տուրքն կիւրեղ և տուրքն Լևոն իցեն միաբան՝ ի վարդապետական, կա՞ տուրք ժողովն Քաղկեդոնի ընդ տուրք ժողովոյն Եփեսոսի։

Որպէս և այլոյր զառածն օգոստինեան յիշատակեցաք, ապաճովացոյս խօսէին տուրքն միաբան ընդ մեզ եւ ընդ հետեւողսն Կիւրեղի, և երկոցունց՝ ի վեր երևեալ։ Տուրքն Կիւրեղի, և երկոցունք ամենք ժամանակաւ քան զնա միաբան, մինչ էր Նեստորէայ չիտեալ զերկուս բնութիւնս՝ ի Քրիստոս, մի բնութիւն ասացին Բանին մարմնացելոյ, նամանալով մի անձն, մի էնեթակայութիւն, մի էութիւն քաղդեալ, և մի Քրիստոս։ Ընդ հետեւողքն սրբոյն Կիւրեղի ըստ այսմ ուղղափառապէս զբան նորին իմանալով, ընդ լսելն՝ զի Լևոն և ժողովն Քաղկեդոնի երկուս ասացեալ էր բնութիւնս՝ ի Քրիստոս, համարեցան հակառակ Կիւրեղի, և համձայն մոլորութեանն Նեստորի՝ որ երկուս բնութիւնս ասաց, երկուս իմանալով անձինս՝ ի Քրիստոս։ վասն որոյ և պայթակղեալ խորշեցան՝ ի տումարէն Լևոնի և՝ ի ժողովոյն Քաղկեդոնի։

Իսկ հետեւողքն Լևոնի՝ որք ողջմտութեամբ իմանային զբանս տումարի նորին և զսահմանադրութեան ժողովոյն, թէպէտ և ոչ մերժեցին զձայն Կիւրեղի, այլ քանզի Նեստորէայ չարաչար վարեալ էր նոքա, եւտիքեայ չիտեալ զերկուս բնութիւնս համարեցան. և այսպէս տարաձայնութիւն եւ երկպառակութիւն՝ ի միջ երկաքանչիւր կողմանցն անկաւ։

Վասն որոյ՝ ի դէպ է մեզ ասել ցուցանել, զի ոչ Կիւրեղ՝ նմանէաց՝ յասելն մի բնութիւն, և ոչ Լևոն յասելն երկուս. այլ երկոքին և միով ձշմարտութեան ելեն քարոզք։ Նա յայտ է այս նախ՝ ի պատմութենէ ժողովոյն Քաղկեդոնի, ուր երկոցունցն և՝ Կիւրեղի և՝ Լևոնի ուղղափառութիւն հաչակեալ, և այս բարբառեր ժողովոյն. "Հետեւ Կիւրեղի, նոյնպէս և մեք դաւանեմք. Լևոն քահանայապետ այսպէս իմանայ, այսպէս հաւատայ, և այսպէս ուսուցանէ. Կիւրեղ այս-

պէս ուսոյց, յաւիտենական յիշատակ կիւրմէն. | Եւ
և Կիւրեղ միօրինակ ուսուցին »։ Նա վկայ անխաբ
այսմ միաբանութեան ժողովոյն և | Եանի ընդ Կիւրմէն
այն է՝ պն և սոքա յառաջ քան զամենայն՝ զ|եստոր
նզովեցին միաւանգամ Նմանձայն ժողովոյն Նփեսոսի։
Ո՛ւ այս չկարէ ասել, ոչ՝ ի կիւրեղեանց ոք և ոչ՝ ի
լեւոնեանց, թէ ժողովն զայլոց բանից Կիւրմէն և | Եանի
ասիցէ՝ յորս միաբանին, և ոչ զձայնիցս մի և երկու
քնութիւն. քանզի առ այն իսկ գումարեալ էր ժողովն,
առ՝ի միաբանել զկարծեցեալ տարաձայնութիւնն քա-
ռիցն։ Ո՛չ էր ընդդէմ դիոսկորեանց, որք աստի
զրպարտէին զԿիւրեղ՝ թէ մի քնութիւն ասելով Քա-
նին մարմնացելոյ չընդունին երկուս քնութիւնս ՛ի
Նփեսոս, և անտի զրպարտէին զ| Եան և զՆլաթիա-
նոս՝ թէ երկուս ասելով քնութիւնս՝ դատապարտեցեն
զԿիւրեղ։ Նպա ՛ի վկայել ժողովոյն՝ զի Կիւրեղ և
| Եան միօրինակ ուսուցանեն, յայտ առնէ՝ զի քառից
ևեթ տարաձայնութիւն է ՛ի նոսա։

Յուցանի երկրորդ ՛ի յաջորդ ժողովոյ. զի յորժամ
ջատագովք մոպսուեստացւոյն կամէին վերստին զաղան-
դն նեստորական արծարծանել՝ կամակորելով զքան
| Եանի և զժողովոյն Նքաղկեդոնի, և միակամեայք նո-
ւոքեին զաղանդն եւտիքեան՝ կամակորելով զքան Կիւր-
ղի, առաջինք ՛ի հինգերորդ ժողովն տիեզերական, և
յետինք ՛ի վեցերորդ ժողովն դատապարտեցան. և
յերկաքանչիւր ժողովս անդ ընդունելի եղեն Կիւրեղ
ընդ ժողովոյն Նփեսոսի, և | Եան ընդ ժողովոյն Նքաղ-
կեդոնի. և նզովեցան հաւասարապէս որք չարաչար ա-
սեն մի քնութիւն, և որք մերժենն զողջամիտ խոնաստ
զԿիւրղի բանին՝ թէ մի է քնութիւն Նանէն մարմնա-
ցելոյ։

Յուցանի երրորդ ՛ի սրբոյ Նարոյ և իմաստուն վար-
դապետէ՝ որ կացին յերկաքանչիւր կողմանս, ջատա-
գովելով երկուասեռք զողջմտութիւն Կիւրղի և զ| Եա-
նի. և այս և որք ՛ի կողմն Կիւրղի կամ | Եանի հակեալք։
Ընդդէմ իմն յորժամ Նմտորիանէ և Ը նորհալին վի-
ճէին ընդ միմեանս անաչառապէս, Նմտորիանէ ՛ի ջա-
տագովել զաղղափարութիւն | Եանի և զժողովոյն
Նքաղկեդոնի՝ յուցանէր միանգամայն համաձայն նոցին

զԱխերեն. նոյնպէս և Շ նորհալին՝ի ջատագովել զԱխերեն՝ի նոյն միտս ցուցանէր զԱ ևան և զժողովն քաղկեդոնեան, ասելով. "Երկաքանչիւրք՝ի սահմանի են ուղղափառութեան":

Յուցանի ջորրորդ՝ի վարդապետութենէ երկաքանչիւրոցն յայլ գիրս իւրեանց, զի երկոքին ևս հերքեն զԱեստոր և զՆատիքէս, և երկոքին ևս միաբանին ընդունել՝ի Կրիստոս մի անձն և բնութիւնս երկուս: Կանգղի Ակերեն ասէ (՝ի կոչ. ընծ. ՟ը.) "Ակիւն էր Կրիստոսն. մարդ՝ որ երևէրն, և Աստուած՝ որ ոչն երևէր": Իսկ Ա ևան՝ի ձեռն Վլաբիանոսի. (պատմագր. հտ. ՟ը. էջ 542.) "Յերկուց բնութեանց խոստովանեալ զԿրիստոս.. մի Կրիստոս մի որդի մի տէր խոստովանիմք, և մի իսկ զԱստուծոյ Կանին բնութիւն":

Եւ ոչ ինչ են զարմանք ընդ այս տարաձայնութիւն բառից՝ի հաւանձայնութեան մտաց. զի ահա և զԱրծրդութենէ ոմանք՝ի Հայոց մի առացին ենթակայութիւն՝ մերժելով զերիս, իսկ այլք երիս առացին ենթակայութիւնս՝ մերժելով զմին. քայց երկաքանչիւր միախոհք էին: Կանգղի նոքա ընդդէմ Աբրոսի զինեին, որ զհամագոյ Արծրդութիւնն չարաչար բաժանէր. իսկ սոքա ընդդէմ Աաբելի, որ զերիս դէմն խառնակէր: Ասպէս իմա և զԱխերէնն և զ ևանի մի և երկու ասել բնութիւնս. զի նա ընդդէմ Նեստորի առն, իսկ սա ընդդէմ Նատիքեայ, երկոքին ևս վերամարտիկք Ճշմարտութեան:

ԳՕԴՈՒԱԾ Բ

Այսիօք օրէ՛ն իցէ առնել զԿրիստոս յերից գոյացութեանց:

Կանգղի գոյացութիւնք երեք՝ի մի անձն Կրիստոսի ժողովին, այսինքն գոյացութիւն աստուածայինն, հոգի բանական և մարմին մարդկայինն, Թէպէտ և անհամեմատ իրեարց գոյացութիւնք, զի միոյն աստուածայինն է կատարեալ և բոլորական, իսկ երկուքն հոգին և մարմին անկատար և մասնականք, սակայն Հարք առ՝ի ցուցանել զՃշմարիտ մարդկութիւնն Կրիստոսի

ընդդէմ ապօրինարեւանց և արիանոսաց՝ ի կիր արկին և զայս ձև բանի։

Յուստինոս (ի պապաղանապ. ա.) "Հոլորովին բա-նական՝ երևեալն վասն մեր Քրիստոս, և մարմնով և Հանիւ և հոգւով,,։

Լևոն պապ. (ընդ. ժա.)"Հանն և մարմին և հոգի՝ ի Յիսուս Քրիստոս, և ի՝ Աստուծոյ և մարդոյ որդի,,։

Գրոստինոս (յղ. երդոդ. ժգ. 17.) "Այնպէս մար-թացաւ միանալ ընդ Աստուծոյ մարդկային բնութիւն, մինչև յերկուց գոյացութեանց մի անձն լինել, և սո-վին իսկ ապաքէն յերից, այսինքն յԱստուծոյ, ի հո-գւոյ և ի մարմնոյ,,։

Խիզոր խաբալացի (յաղագս պանապանութեանց ա. 6.) "Ա՛ե՛ք յերկուց ենթակայականէ, ի մարմնոյ և ի հո-գւոյ. Քրիստոս յերից, ի Հանէն՝ ի մարմնոյ և ի հոգւոյ։

Ժողովն Տոլետոյ ժԱ. (ի պատանութեան Քրիստոսի հատ. ժա.) "Նոյն Քրիստոս յերկուս բնութիւնս՝ երիւք կայ գոյացութեամբ. Հանին՝ որ առ էութիւն Աստուծոյ միայն պատկանի, մարմնոյն և հոգւոյ՝ որ առ ձշմարիտ մարդ պատկանի,,։

Սուրբն Լեռնարդոս (յղ. խոհ. Ե. 9.) "Ի Քրիս-տոս՝ Հան հոգի և մարմին, առանց շփոթութեան էու-թեանց, մի անձն է. և նոյնպէս առանց միասու անձնա-ւորական միաւորութեան՝ կայ միայ ի թուաւորու-թեան իւրում... վայելչական իսկ եղև, և ընդ ծայ-րագունին՝ որ յԱստուած է և է Աստուած՝ միութեան միաբանիլ. զի զոր օրինակ անդ երեք անձինք՝ մի էու-թիւն, սոյնպէս աստանօր կարի վայելուչ հակադրու-թեամբ՝ երեք էութիւնք և մի անձն,,։

Նա այլուր (ի ձրագալոյ ձառ ե.) "Հանն և հոգի և մարմին ի մի զօդեցան, և երեքին այսոքիկ մի, և միևնա այս երեք. ոչ շփոթութեամբ գոյացութեան, այլ միու-թեամբ անձին,,։

Սուրբ Աւգուստինոս (ընդդէմ հերձ. գ. 34.) "Այրե-ցուն այսոցիկ գոյացութեանց միանալով ի Քրիստոս, աստուածութեան, մարդկային հոգւոյ, և ձշմարիտ մարդկային մարմնոյ,,։

Սուրբ Գրիգոր նարեկացի (ի ծնեալ. կոստին) "Այս-

մանն խառնեալ էութեամբք միաւորեցաւ անշփոթելի ... Աստուծոյ, հոգւոյ, և մարմնոյ խառնմամբ՝ ի միէութիւն (այսինքն էակ) երիցն հիւսմամբ ,,։

Ապա որոյ ասէ Պետրոս. "Անպէտ և չիցէ յաւտուկ այս ձև բանի՝ յերից գոյացութեանց ասել բաղկացեալ զԱրիստոս, համեմատելով զկատարեալն և զբոլորական ընդ երկուս անկատարս և մասնականս, սակայն չէ ստգտանելի և դատապարտելի ,,։

ԳՕԴՈՒԱԾ Գ

Զի բնութիւնի և պարտաւորիւն կամ միաւանակաւորիւն ՚ի Քրիստոս։

Պարտաւութեամբ խնամոյ զիսոխադարձ բովանդակել միաւորելոց զերեսաս, սակաւնեալքին և ծայրագոյն միաւորութեանն. որպէսզի որ ինչ ասի զմիոջէն, մարթ իցէ ասել և զմիւսմէն և զբոլորէն իսկ։ Որինակ լիցի. յայն սակս գոյ ՚ի խորհուրդ Աստուածութեան պարտաւորեալ անձանց, կամ ըստ մեզ դէմս անձնաւորութեան, վասն զի և ինչ ՚ի նմա հասարակ երից անձանց՝ այսինքն բնութիւն աստուածային, և առինչք՝ այսինքն անձնաւորութիւնք զանազանեալք յերեցաց։ Նոյնպէս և ՚ի Քրիստոս կայ ինչ հասարակաց երկոցունց բնութեանցն, այսինքն անձն բանին, և այլ ինչ՝ այսինքն բնութիւնք երկու զանազանեալք ՚ի միմեանց անբաժանելիս, և միացեալք ՚ի նոյն անձն։ Ապա որպէս Աստուածութեան, նոյնպէս և ՚ի մարդեղութեան, թէպէտ այլ և այլ օրինակաւ՝ բայց ճշմարտութեամբ մարթ է ասել զնոյն պարտաւորեալ։ Այլ ՚ի այլ օրինակս, զի Աստուածութեան՝ երեք անձինք և մի բնութիւն, իսկ ՚ի Քրիստոս՝ մի անձն և բնութիւնք կրկին. բայց ճշմարտութեամբ, զի որպէս Աստուածութեան անձինք հակադրեալք պարունակին ըստ հաղորդութեան ՚ի միմեանս, նոյնպէս և ՚ի մարդեղութեան՝ բնութիւնք այլ և այլք բովանդակին ըստ միութեան անձին ՚ի միմեանս։ Հասատատի վարդապետութիւնս վկայութեամբք Նորոյ։

Կիրիգոր աստուածաբան (ար. Ալեքսանդր.) "Ստանել ցեղից քնութեանցն և կոչմանց՝ ի միմեանս պարառելոց":

Աթանաս (վճ. ընդ Պետ.) զմիաւորութիւն երկուց քնութեանց և նեղոցծութեանց՝ ի Քրիստոս կոչէ "Համորակին՝ ի միմեանս պարառութիւն":

Յովհան դամասկացի (յղ. ուղ. հաւատոյ) "Ուրացուցանէ Հանն զմարդկայինս, զի նորա են՝ որ ինչ սուրբ մարմնոյ նորա էին. և անդրէն տայ մարմնոյ յիւրոց անտի... վասն՝ ի միմեանս մասանցն պարառութեան":

"Ի՞նչ՝ ի սրբոյ Կոյսէրդութենէ, Հանին Աստուծոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, երկու քնութիւնս խոստովանիմք՝ աստուածայինն և մարդկայինն, եւ կատարեալս առ միմեանս և լման էնթակայութեան միաւորեալս... և քնութիւնքն Քրիստոսի Թէպէտև... ՝ի միմեանս պարառեալ, այլ յեղումն՝ ի միմեանս ոչ ընդունին":

Հնար այսմ պարառութեան է իմանալ զայն առնային բանս՝ որով զմարդկութենէն Քրիստոսի, զոր աստուածացեալ ասեն, և զաստուածայինս առհասարակ ընծայեն նմա:

Վիրեղ աղեքսանդրացի (յղ. Նատեղոնեան) "Հանզի առեալ Հանին քնութիւն զմարդկայինն, ոչ մարդկութիւն է սոսկ, այլ մինաւանդ յաղթեալ իւրական փառաւք՝ առեցելոյն, յանխախտելին պահի յաւերժութեան աստուածավայելուչ բարեփառութեան":

Կիրիգոր աստուածաբան (Նազ. Ճա. լե. գլ. ե.) "Ստանեցաւ ընդ աստուածութիւնն և եղև մի՝ վեհագունին յաղթելով, զի եղէց այնքան Աստուած՝ որքան նա մարդ":

Նոյ այլուր (՝ի պասեքն. Ճառ խբ.) "Կատարեալ՝ ոչ վասն աստուածութեանն միայն, քան զոր ոչ ինչ է կատարելագոյն. այլ և յաղագս առելոյն և օծելոյ աստուածութեամբն, և եղելոյ որպէս որ էօծն, և համարձակիմ ասել՝ զուգաստուած":

Եբեդիանոս (Ճառ ՟ը.) "Մնպիտև ծածկեցաւ մարմինն աստուածութեամբն, և ներկաւ անմահ արմատովն, և է ամենևիմբ անմահութիւն, չկորոյս զնկարագիրն, այլ կայ միայ նկարագիր մարմնոյն ներկեալ և ընկղմեալ՝ ի կենացն":

Ըստ այսմ և սրբոյ Ոսկեբերանն ասէ. (Յհ. գլ. ՃԾ.) "Ով ան մեր էջ՝ ի չափաւորութիւն, և ամիսս փեցաւ՝ ի մարմին, բովանդակեցաւ Աչմանուհեամբ՝ ի մարմնին, և Աչմարիտ իսկ մարդ եղև... զի Թէպէտ զկերպարանս էառ և զմարմին մարդկան, այլ խառնեաց միացոյց ընկղմեաց զմարմինն յաստուածութեան իւրում,,:

Այս ամենայն բանից Նարց զՀետ բերէ Պետրոս (Հտ. Ե. էջ 205.) "Ով ան այսպիսի իսկ զմարմինն, այսինքն զմարդկային գոյացութիւնն աստուածացեալ ասեն նախնիք, զի զայն բոլորովին յինքն փոխակերպեաց յեզանակաւ նմին աստուածութիւնն. և յինքն յարեալ և ամենայնիւ միացուցեալ, որչափ մարթէրն՝ ամենևին նմանեցոյց: Այսմ և՝ ի մեզ իրաւամբք նմին ազգակցութեան՝ յորդեալ զերաս Հաղորդակցութիւն աստուածութեան և սրբութիւն, ըստ վկայելոց առաքելոյն՝ լեալ մեր աստուածեղէն բնութեան Հաղորդակիցք: Այս զայսպիսի փառս և զմեծ վայելչութիւն՝ի մարդկութիւնն Քրիստոսի յաստուածութեան պարտաւորեն յառաջագոյեալ վարդապետէ Յոհան դամասկացի՝ յասելն. "Յորմէ Հետէ աստուածն Բան մարմին եղև՝ նմանեալ մեզ ըստ ամենայնի առանց մեղաց, և անխառնակաբար խառնեցաւ ընդ մերում, և անփոխարկաբար զմարմինն աստուածացոյց՝ անշփոթ՝ի միմեանս պարտաւորեամբ աստուածութեան նորա և մարմնոյ, ստուգապէս սրբեցաք,,:

ԳՕԴՈՒԱԾ Դ

Այդիօք օրէ՞ն իցէ, որպէս առնէքդ Աստուած մարդացեալ, առնել նոյնպէս և մարդ աստուածացեալ:

Թողեալ աստանօր՝ի բաց զԹիւր իմացուած նեստորականացն և եւտիքեանոյ, որք զերկոսին և՛ բացատրութիւնքս կամակորեն, գիտելի է նախ՝ զի չէք տարաձայնութիւն առ ոչՀամիտս զառաջին մասնէ վարդապետութեանս. զի ասեմք զԱստուած մարդացեալ ըստ

այնմ Թէ Յանձն մարմին եղև, և իմանամք զի Յանձն Յաստուած էառ զմարդկութիւն՝ եղեալ որ ինչ ոչն էր, և ոչ կորուսեալ որ ինչ էրն։ Այլ պոյ իսկ տարաձայնութիւն զերկրորդ մանէն, այսինքն զասելոյ զմարդ աստուածացեալ, քանզի ոմանք յաստուածաբանից հաւանին անձն մարդկային սուրբ ի ներքս ածել։ Այս ևս դժուարութիւն յաւելեալ ի յայտութենէ լատին բարբառոյ, առ ի չգոյէ ի նմա բառիցս մարդանալ և աստուածանալ. վասն որոյ Յատինք փոխանակ ասելոյ մարդ աստուածացեալ՝ ստիպին ասել Յաստուած եղեալ կամ աստուածապէրճեալ։ Ամին իրի Պետաւիոս ասէ, զի "պակասութիւն լատին լեզուի յաւելու դժուարութիւն ի խնդիրս յայս, ուր ըստ յունականին, (զնոյն ինքն ասէ Տայոհաննա), ոչ ինչ կամ կարի Թեթև է դըժուարութիւն։"

Այլ քանզի Այեստոր անօրինէր զրպարտել զուղղափառքս՝ իբր Թէ ըստ օրինակի հեթանոսաց զմարդն Քրիստոս աստուածացուցանիցեմք, ընդդէմ այսր ամպարշտութեան նորա ասէ Պրոկլ (յղ. Տարդեղ. Ճառ ա.) "Ոչ զմարդն աստուածացեալ քարոզեմք, այլ զՅաստուած մարմնացեալ խոստովանիմք։" Այլ Յիլարիոս ասէ (ի Ճառն Տարդեղոնէական.) "Ոչ յետոյ աստուածացեալ, որպէս այժմու հայհոյութիւնն բռնազբօսէ։" Այրիոս և Ակուեդ և Աեբերիանոս և Պատմակացին և այլք ի Քրց. զոր և ժողովն Շ իրակատանու ասէ. "Ըստ էութեանն Յաստուած մարդացաւ, և ոչ մարդ աստուածացաւ։"

Քանզերձ այսու ամենայնիւ ուր ուրեք չիցէ վտանգ կամակորելոյ զիմաստս բանին, երկոքումբքն ևս բացատրութեամբ վարին անխտիր Քրք։ Քանզի մարդն անուն՝ յայնժամ ի միջ բերէ զանձն մարդկային, ուր բանն իցէ զլոկոյ մարդոյ. իսկ ի Պրիստոս քանզի չիք անձն մարդկային՝ այլ աստուածայինն միայն, նմին իրի բառս մարդ՝ նշանակէ ի նմա զբնութիւն մարդկային, որպէս ասէ Պատմակացին. "Ըստ զՊրիստոսէ Թէ մարդն եղև Յաստուած, նոյն է ընդ ասելոյ՝ Թէ բնութիւն մարդկային, որ է ի Պրիստոս, միացաւ ընդ Յաստուծոյ և աստուածացաւ։" Ի սոյն միտս ասէ ի Քրց և առնուլ Յաստուծոյ զմարդ, որ վտանգաւորա-

պոյն ևս պարտ էր Թուել։ Ուրանդի ասէ Յուստինոս վկայ (տէտր ա՛ — Հելլէնս) "Որ Աստուծոյ գոլով Հան անմեկնելի զօրութեամբ, զըստ պատկերի և ըստ նմանութեան Աստուծոյ զստեղծեալն առեալ մարդ ,,։

Կլիմպոր աքանչելագործ (՚ի Նեբբ. կոսպէն, ՚ի Ճաբբնո.) "Ա՛ան այսորիկ Աստուած Հանդն մարմին առ, և կատարեալ մարդ ՚ի կնոջէ առնուլ Հաճեցաւ, և ծնաւ որպէս զմարդ՝ զի զմեր պարտն տուժեսցի ,,։

Աթանաս (յղ. Արտոդ.) "Ի վախճան յաւիտենից ինքեալ ՚ի ծոցոյ Հօր, յանապատ ՚ի կուսէն Մարիամայ զմեզն ընկալաւ մարդ Յիսուս Քրիստոս, որ ետ զանձն վասն մեր ՚ի չարչարանս... որով մարդով խաչեալ և մեռեալ յաղագս մեր, յարեաւ ՚ի մեռելոց ,,։

Կլիմպոր աստուածաբան (աս. Ալեքսնիս) "Յառաջագոյն ոչ մարդ, այլ Աստուած և որդի միայն, և նախ քան զյաւիտեանս անխառն մարմնոյ և ոգւոյն ինչ մարմնոյ է. իսկ ՚ի վախճանի և զմարդն էառ յաղագս մերոյ փրկութեան ,,։

Պրուդենտիոս (յղ. ասպուածանալոյ) "Օ գոլոր մարդն էառ Աստուած, զի գոլոր ՚ի նմանէ է, և զգոլորն փրկեաց զոր էառ ,,։

Կիւրեղ (՚ե գէրս գանչոց) "Ի Մարիամայ զմարդն կամ զտառձարն առնուլ ,,։

Այս գան Կիւրղի է ՚ի ժողովական Թղթին Յունաց առ Նայս, յաւուրս ժողովոյն Նոսմկլայու գրեալ. "Ի վերջին աւուրս ՚ի սրբուհւոյ և յամենասիրառատութեալ կուսէն մարմնացեալ՝ առ յինքն կատարեալ զմարդն, ՚ի հոգւոյ բանականէ և ՚ի մարմնոյ... և արժանի արար անձառապէս իւր ՚ի սրբուհի Կուսէն լինել տաճար. զոր միաւորեալ ընդ ինքն Աշմարտութեամբ՝ եղև մի Քրիստոս ։

Ա՛ե Կլիմպոր տղայ (՚ե ժողովական ընդ. ա՛. աս. Յոյնս) "Յանապատ կուսէն Մարիամայ զմեզս ընկալաւ մարդ... որով մարդով մեռեալ և խաչեալ յաղագս մեր, յարեաւ ՚ի մեռելոց և վերացաւ յերկինս ,,։

Ընդ որով մտաք ասի ուղղափառապէս մարդն առեալ ՚ի Հանէն Աստուծոյ, փոխանակ ասելոյ զմարդկութիւն, նոյնին մտաք ևս առաւել մարթ է ասել զմարդ աստուածացեալ, որպէս և յառաջիկայ վկայութեանցս է յայտ ։

Գրիգոր աստուածաբան (յՀյոյս. ճա.) "Ոչ այլ ոք և այլ, մի՛ լցի. վասն զի երկոքեան մի՝ խառնելովին, Աստուծոյ մարդանալովին, և մարդոյ աստուածանալովին ,,:

"Յառաջ եկեալ Աստուած հանդերձ առեցեալովին... յորոց մին աստուածացոյց, և մին աստուածացաւ ,,:

Ոսկեբերան (՚ի հոմբատչ. Ձառ ը.) "Գորին իսկ առ մեզ գալով, և զմեր բնութիւն առնլով և աստուածացուցանելով ,,:

Կիւրեղ (գանձ. ե.) ՚ի բանն՝ վասն որոյ և Աստուած զնա առաւել բարձրացոյց. "Զի՞ զամենայն ՚ի ձեռն Որդւոյ գործէ Հայր, և առանց նորա եղև և ոչ ինչ, հարկաւոր է ասել՝ Թէ ինքն էր իւրովի և զբարձրանալն տուեալ և զառ՚ի Հօրէ զընծորէն սպասաւորեալ. քանզի ընդունէր՝ աստուածացեալ գոլով առեցեալ տաճարին ,,:

Աթանաս (՚ի Ճառն ՚ի.) խօսելով զյարութենէն մարմնոյն՝ Արիոսոյ՝ ասէ. "Ի բաց եդեալ զմեռելութիւնն և աստուածացեալ ,,:

Աթանաս վկայ. (Ճէսէ ա. գլ. կը.) "Զինչափ աստուած արար զմարդն, որչափ ինքն եղև մարդ. վասն զի առանց մեզաց եղեալ մարդ՝ յայտ է Թէ առանց յաստուածութիւն փոխարկութեան զբնութիւնն աստուածացուցանէ ,,:

Աթբոսիոս (յղ. Կոս. գիրք ա.) "Ուանն մարմին եղև, զի մարմինն աստուածացի ,,:

Գրոտինոս (յղ. Աէրդդոլեան գլ. ժՁ.) "Զինպիսի էր առումն այն, որ զԱստուած մարդացուցանէր, և զմարդն աստուածացուցանէր ,,:

Ալ այլոր (յղ. ծն. ժԵ.) "Ուայց սակայն Աստուած մարդացաւ, և այնպէս մարդն աստուածացաւ ,,:

Վիքիլիոս (ընդդէմ Աբոլէեայ. գիրք բ.) "Զինպէս Աստուած մարդացաւ, և մարդն աստուածացաւ, զի և ոչ մին ծախեցաւ ,,:

Ուակ՚ի մերոց Վիկերիոսն (՚ի հին դէր.) "Ստանամք հակառակացն՝ աստուածութեան և մարդկութեան. յորոց մին աստուածացոյց և միւսն աստուածացաւ ,,:

Ամբրոսիոս (՚ի հոմբատչ.) "Աստուած մարդացաւ, և մարդն աստուածացաւ ,,:

Ալ գարձեալ (յաբէնաբ.) "Ո՞ զանազան տնօրինու-

Թիւնս աստուածայեաւն Յիսուսի գծագրութեամբ կերպարանեն ,,։

Ե՛ս արեան. "Ո՛վ անապական զաստուածացեալ մարմինն պատեալ սուրբ կտաւովք, և եդ ի գերեզմանի ,,։ Եւ գարձեալ. "Աւարիչն երկնի և երկրի...՝ի հոսանս Յորդանանու աստուածախառն մարմնով լուաց զխիեզերս ի մեզաց ,,։

Իակ ոմանք ի Նմոյ անդր ևս յառաջ խաղացեալ մինչև ասացին ևս փոխարկեալ զմարդն յաստուածութիւն։ Ասպիսի է և քան Աիւսապոյն. (ընդդէմ Նեստ. գ.) "Զանգի գիտէ անշուշտ՝ եթէ Զանն նոյն է ընդ Զանին, այն՝ որ ի մարմնի երևեալ, ընդ այնմ՝ որ առ Աստուած է. իակ մարմինն ոչնոյն ընդ աստուածութեան, մինչև էր փոխարկեալ և այն յաստուածութիւն ,,։ Ո՛րոյ ողջամիտ խնացուած ի յետագայ քանիցն է ի միտ առնուլ, զի ասէ. "Վ՛երանորոգի մարդկայինն, վերախառնութեամբ ընդ աստուածայնոյն աստուածային եղեալ ,,։

ԳԼՈՒԽ Ը

ՅԱՂԱԳՍ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԿԱՄԱՑ ԵՒ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԵԱՆՑ ՔՐԻՍՏՈՍԻ

Որպէս ի նեստորեան աղանդոյ՝ որդեգրականացն մոլորութիւն, այսպէս և յեւտիքականէն՝ միակամեայք։ Սոքա մի և եթ կամն Հաստարէին ունել Զրիստոսի, այլ ինքն զաստուածայինն. զոր մերթ ևս կոչէին աստուածութիւն, իբր խառն ինն յաստուածայինն և ի մարդկայինն կամաց, այլ այնպէս՝ զի մարդկայինն որպէս զոր ծի աստուածայնոյն գոլով, որպէս մարմինս մեր Հոգւոյ։ Ընդդէմ սոցա ուսուցանեն ուղղափառ Հաւատք խոստովանել ի Զրիստոս երկուս բնական ներգործութիւնս և կամս անբաժանելի և անշփոթ միաւորեալ։

Ո՛վ այս այսպէս Նարք տիեզերական ժողովոյն Կոստանդնուպօլսի սահմանեցին. "Երկուս կամս բնականս ի Զրիստոս, և երկուս բնական ներգործութիւնս անմեկնիս, անբաղդատելի, անբաժանելի, և անշփոթի, ըստ սրբոյ Նարցն վարդապետութեան քարոզելոք ,,։

Սուրբ գիրք ամենայն ուրեք, ուր զաստուածայինս կամ զմարդկայինն ներգործութիւնս Քրիստոսի պատմեն, յայտ առնեն զայս Չմարտութիւն. որպէս կանխասացութիւնք և հրաշք՝ զաստուածութիւնն նորա յայտ առնեն. և գնալ, խօսել, քաղցնուլ, ծարաւել, վաստակել, տրտմել, լալ, չարչարիլ, վիրաւորիլ, մեռանել՝ մարդկութեանն հետ են յայտարար. և քանզի անտեղի է զաստուածականս մարդկային զօրութեան ընծայել, և զմարդկայինս աստուածութեան, ապա հարկ է խոստովանել՝ ի Քրիստոս երկուս ներգործութիւնս բնականս:

Օգնոյն և զկամսն է ասել. զի սուրբ գիրք որով ըստ բնական ներգործութիւնս Քրիստոսի զաստուածայինսն և զմարդկայինս պատմեն, նովին և զերկոսին բնական կամս ի նմա յայտ առնեն: Եւ քանզի հակառակորդք ընդունին ի Քրիստոս զաստուածային կամս, մնայ մեզ ցուցանել ի գրոց զմարդկայինն: Ասէ Քրիստոս յաղօթելն ի պարտիզին ասէ. (Մատ. ԻԶ. 39: Մարկ. ԺԴ. 36.) "Հայր իմ, եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս ինձնէն. բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու: Այլ ոչ իմ կամք, այլ քոյդ լիցին". (Ղուկ. ԻԲ. 42): Եւ չէ մարթ աստուածայինն ասել աստանօր կամն՝ որ նոյն է Հօր և Որդւոյ. ապա զմարդկայինն կամսն ասէր Քրիստոս: Գոչեաւ ասէ. (Յհ. 38.) "Ելի ես յերկնից, ոչ զի զկամս իմ արարից, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս": Ո՛ն որոյ և առաքեալն ասէ. (Փիլ. Բ. 3.) "Խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու չափ... վասն որոյ և Աստուած զնա առաւել բարձրացոյց": Ասէ Քրիստոս հնազանդի Աստուծոյ և Հօր, որով և արժանաւորի առաւել բարձրանալոյ. և չէ մարթ ասել թէ աստուածայինս կամօքն հնազանդէր և արժանաւորէր, ապա հարկ է և մարդկայինն կամ ի նմա խոստովանել: Ո՛ն ոմն ակնարկեն և որ ինչ ստէպ զնմանէ բանք՝ թէ "Կամէր զանց առնել առ նոքօք". (Ա՛ղ. Չ. 49). "Ես ունիմ կամէր յայտնել, և ոչ կարաց ծածկել". (Ա՛ղ. Է. 24). "Եւ երբեմն Ջաշակեաց, ոչ կամէր ըմպել". (Ա՛ղ. ԻԷ. 34.) և այլ ևս ոմանք սակի բազում ուրեք բանք. որ յայտնապէս ցուցանեն ի Քրիստոս զմարդկայինն կամս:

Իսկ Հարք յայտնագոյն եւս վարդապետեն զայս, մինչ
չև Ադուրիէլ զմարդկայինն առհասարակ առ ի զանազա-
նել յաստուածայնոյն՝ կոչել կիրս, և ներգործութիւնս
զաստուածայինն. որպէս և Ղուսացին զնոյն յայտ առ-
նէ յասելն՝ "Արմինն կրաւոր քնութեամբ է, իսկ
Նանն ներգործական,,. և դարձեալ "Որպէս զի լի-
նել մարմնոյ կիրքն, և Աստուծոյ ներգործութիւնն,,:

Եւ Ղեթանաս ի վերայ բանից տեառն ի պարսխ-
ղին ասէ. "Երկուս կամս աստանօր ցուցանէ, զմարդ-
կայինն՝ որ է մարմնոյն, և զաստուածայինն. քանզի
մարդկայինն վասն տկարութեան մարմնոյն խորշի ի չար-
չարանաց, իսկ աստուածայինն նորա յօժար,,:

Դարձեալ և Ղուսացին ի վերայ նոյնին բանի. "Նա-
զի այլ է մարդկային կամք, և աստուածայինն այլ. բար-
բառի որպէս ի մարդոյ զտկարութեան քնութեան յան-
կաւորն՝ այն որ իւրացոյց զմեր կիրս... Ու ասէն՝ ոչ
էմ, զմարդկայինն բանիւս նշանակեաց. և զի յաւել
ցոյց, եցոյց զմիութիւն իւրութին ընդ յօր աստուածու-
թեան,,:

Օգաբարիա կաթողիկոս (ճառ Նաղման.) "Նա զի մեք
ոչ արարաք զկամս յօր, տէրն իմով կամօքս կատարեաց
զկամս յօրն. ինչ ես, ասէ, յերկինից՝ ոչ զի զկամս իմ ա-
րարից, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս,,:

Ամբրէ. "Ուր եդիք ասէ զնա... Ոչ ինչ հար-
ցանես, տէր. աստուածային գործք գործելոյ էին ի տե-
ղւոջ անդր, գուցէ զբկիցին ինչ ի մարդկային քնութե-
նէն. քանզի բազում անգամ եղեն առ նոսա յայտ-
նութիւնք երկնաւորք, անմարմին զօրութիւնք մարմնա-
ձեւ երեւեին, այլ ոչ մարմնացան. սա միայն կրէ զերկու
ներգործութիւնս,,:

Անանիա վարդապետ. "Որպէս լոյս արեգական
ընդ իւր միաւորէ զամենայն լոյս անշփոթ և անծախ,
այսպէս քնութիւնք և կամք և կիրք և ներգործու-
թիւնք, մարդկայինն և աստուածայինն, միաւորեալ ի
նոսին Աստ Ոմանուէլ Հշմարտութեամբ,,:

Ե Նորհալին (Ընդ. առ Հայոց) "Այս կամացս օրի-
նակի՝ զոր առաջս ի միոյ անձնիշխան կամաց աս-
տուածութեանն երկուց լինել անհակառակաբար աս-
տուածայինն և մարդկայինն, հաւատամք և ներգործու-

թեանցն նոյնպէս լինել՝ աստուածայնոյն և մարդկայնոյն ,, :

Եւ ՚ի Յիսուսոդին .

“Դաժակ մահուս լինէն անցեկ .
Ոչ իմ կաւնաւ , այլ քոյդ լոյս :
Դայս ՚ի օր կամաց չէ ծակառակ ,
Որպէս կարծեն ոմք են նեղհակ .
Դայլ հաւատար և յոյժ միակ
Ցուցեկ զերկուան անընդդիմակ ,, :

Վրիպոր անաւարզացն (ար — ՚ի ԵՒՈՒՄ ՆաԳ .) “Դաստիմք ՚ի ժողովոյն բանագրանաց , և ընդունիմք յեկեղեցին Դատուծոյ . . . երբ զեօթն ժողովքն ընդունիմք , և զերկու բնութիւնն և զնեերգործութիւնն և զկամքն ,, :

Ցուցանի Ճշմարտութիւնս այս և աստուածաբանութիւն : Դատ սրբոց ծարոց և ժողովոց՝ Դանն աստուածանկորուստ պահելով զաստուածայինն , էառ զմարդկային բնութիւն ամբողջ և կատարեալ . իսկ արդ յաստուածային բնութեան դոյ կամք , և առ ամբողջութիւն մարդկայինն բնութեան պահանջի և կամք՝ որ է բնական կարողութիւննորա , ապա երկու կամք են ՚ի Վրիստոս : Որում զհետ գոյ՝ զի երկու են և ներգործութիւնք համեմատեալք երկուց կամացն . վասն զի ըստ առածին՝ վայրապար է կարողութիւնն , որ ոչ գոյ ՚ի ներգործութիւն : Եւ հաստատի այս այնու , զի Վրիստոս Ճշմարտապէս հնազանդ եղև ծօր և արժանաւորեցաւ վասն մեր . իսկ արդ չկարէր առնել զայդոսիկ աստուածայինն կամօք և ներգործութեամբ , զի հնազանդութիւն գտանէ տեղի ՚ի մէջ կամաց իրապէս զհնազանելոյ , և արժանաւորել՝ պատշաճի ստորնագոնի . ապա արար զայնոսիկ մարդկայինն կամօք և ներգործութեամբ :

Վարձեալ՝ եթէ միակ էր ՚ի Վրիստոս կամք և ներգործութիւն , կամ պարզ էր այն և կամ բաղադրեալ . եթէ պարզ , կամ աստուածայինն էր և կամ մարդկայինն . եթէ աստուածայինն , ոչ ևս էր մարդ Վրիստոս . եթէ մարդկայինն , ոչ ևս էր Դաստուած Վրիստոս : Դակ եթէ բաղադրեալ էր յերկուց , հարկ էր աստուածայինն և մարդկայինն միանգամայն ասել զայն , անեղ և եղական , սահմանեալ և անսահման , ոչ աստուածայինն և ոչ մարդկայինն , որ է անտեղի :

Այս գարձեալ՝ քնութիւն բանաւոր և իմացական՝ թէ՛ րի է և անկատար առանց կամաց ազատութեան ։ Այս քանզի քնութիւն մարդկային կատարեալ էր՝ի Վրիստոս, ոչ էր մարթ այնմ լինել առանց կամաց և ազատութեան. ապա թէ ոչ, էր մարթ նմա, ոչ ալժանալ ուել և ոչ փոխարինել մեզաց մերոց։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆ Ք

Ղուկ. ա. — ս. Յղնդունել կրկին կամ՝ի Վրիստոս, զհետ գայ գնել մարտ՝ի մէջ երկոցունցն. որպէս յայտ է՝ի բանէն Վրիստոսի. "Եթէ հնար իցէ անցանել լինէն բաժակիս ,,, և այլն. ապա ուրեմն այլ բանօրէն պարտ է իմանալ զբանս գրոց, ուր երկուս այլ և այլ կամս թուին ցուցանել՝ի Վրիստոս։ — ր. Ա ան որոյ հաւք ազատ առեն զՎրիստոս՝ի խորհրդոց մարմնոյ, և աստուածարեալ զմարդկային կամս նորա։ — գ. Ա ան որոյ և զկիրս՝ մարմնոյ ընծայեն, իսկ զներգործութիւնս՝ Ղստուծոյ. և երկոցունց բնութեանցն մի ներգործութիւն ասպառաժշտական ուսուցանեն։

Պե. — ս. Ղանն Վրիստոսի էրէ հնար էր, և այլն, ցուցանէ եթէ զբնական խորշումն՝ի մահուանէ մարդկային բնութեանն. այլ այնմ նոյն ինքն մարդկային կամքն յաղթէր ասելով. "Ա՛ր որպէս ես կամիմ, այլ որպէս դու ... Ա՛ր իմ կամք, այլ քոյդ լիցին ,,։ Ղմանակս յասելն՝ "Ա՛յժ ես յերկնից, ոչ զի զկամս իմ արարից, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս ,,. ոչ մարտ էրէ՝ի ներքս մուծանել, զի մարդկայինն կամք ոչ երբէք յաստուածայնոյն տարաձայն գտանէր՝ի Վրիստոս. այլ զուղղափառ վարդապետութիւնն հաստատէ զկրկին կամաց՝ի Վրիստոս։

— ր. Սուրբ Հայրք ազատ ասելով զՎրիստոս՝ի խորհրդոց մարմնոյ, իմանան յապականութենէն՝ որ՝ի մեզայ Ղդամայ. և աստուածարեալ զմարդկային կամս նորա, որպէս մեկնէ իսկ սուրբն Ղաղեթոն, զի Վրիստոսի կամքն՝ այնպէս միաւորեալ էր ընդ կամս Ղստուծոյ՝ որպէս մարդկային քնութիւն իւր ընդ աստուածայնութեան։

— ԳԼ. Ա՞ր դիակային կամք՝ ի Քրիստոս շարժէր՝ ի կամս Հանին. զայս շարժուն ոմանք՝ ի Հարց՝ ի ներգործական և՝ ի կրաւորական միտս առեալ, զներգործուԹիւն՝ ետուն աստուածային կամաց, և զկիրս՝ մարդկայնութիւն: Եւ քանզի երկոքին ևս հաւասարապէս էին Քրիստոսի ըստ անճնաւորապէս միաւորուԹեան երկուցունց քնուԹեանցն, առ՝ ի ցուցանել զկատարեալ միաքանուԹիւն ներգործուԹեանց երկաքանչիւրոցն՝ իբրև զմիօջէ խօսին ոմանք՝ ի Հարց. և ըստ այսմ է լմանալ զբառդ աստուածային:

ՀԱՐՑ. ԲԼ. — Ա. Ա՞ի անձն է՝ ի Քրիստոս, ապա և մի ներգործուԹիւն. զի ներգործուԹիւնք են անձանց. — Բ. Ա՞րդ՝ ի Քրիստոս մի է՝ որ կամին և ներգործէ, ապա և մի կամք և ներգործուԹիւն: Ոչ ետուԹենէ իսկ մարդեղուԹեան զհետ գայ այս. քանզի նախ՝ մարդկային քնուԹիւն՝ ի Քրիստոս չկարէ ներգործել իւրովի, այլ շարժեալ յանձնէ Հանին. որով կրկին են ներգործեալք, այլ ոչ կրկին ներգործուԹիւնք: — Գ. Կրկորդ՝ զի անձին ենԹակայելոյ է գոլ, ապա և ներգործել: — Դ. Կրկորդ՝ զի եԹէ քնուԹեան տացի ներգործուԹիւն, զհետ գայ զաստուածային ներգործուԹիւնս Քրիստոսի ընծայել երեցունց ևս անձանց ամենասուրբ ԿրկորդուԹեան, քանզի մի քնուԹիւն է՝ի նոսա: — Ե. Ո՞րկորդ՝ զի անձին Հանին որպէս գործի է մարդկային քնուԹիւն, որպէս ասեն Հարք. արդ մի և նոյն է ներգործուԹիւն գործոյ և ձեռագիտի: — Զ. Ի՞նգերորդ՝ ապա իրաւամբք Սնորհս Հայրապետն Յուլիոս մի կամ՝ի Քրիստոս ասաց յերկոսին ԹուղԹս իւր առ Սերգիոս:

ՊԽ. — Ա. ՆերգործուԹիւնք ըստ այնմ ևԹԷ են անձին, զի քնուԹիւն ենԹակայանայ յանձին, և Հարկ է՝ զի իցէ անձն, յորում քնուԹիւն ենԹակայեալ ներգործիցէ: Եւ քանզի քնուԹիւն՝ անձին է, ըստ այնմ և ներգործուԹիւնք քնուԹեան՝ ընծային անձին: Ա ան որոյ զանազանելի է ըստ ձևոյ քանից գաւսականաց. ներգործուԹիւնք են անձին՝ իբր ոչ պատճառի, և ոչ իբր որով պատճառի:

— Բ. Ա՞ի է՝ի Քրիստոս՝ որ կամին, այլ կրկին են ներգործուԹիւնք ըստ քնուԹեանց. վասն որոյ նախ՝

այլ ինչ է մարդկային բնութեան շարժիլ և վարիլ ՚ի կամաց Նանին, և այլ զրկիլ ՚ի ներգործութենէ իւրմէ. որպէս զի թէ ոք չանթացեալ երկաթով խարէ և հատանէ, թէպէտ և ինքն է՝ որ վարէ զերկաթն, այլ ոչ բառնայ ՚ի նմանէ զներգործութիւն այրելոյ և կըտրելոյ: Նանն շարժէ զբնութիւն իւր մարդկային, այլ ըստ ազատութեան նորա:

— Գ. Արկրորդ՝ գոլ՝ է անձին ենթակայի իւր վերբերողի զբնութիւն. վասն որոյ ներգործութիւն ըստ այնմ ևեթ է անձին, իւր զի բնութիւն առանց այնորիկ չկարէ գոլ և ներգործել. այլ ՚ի գնել միանգամ անձին ենթակայի, կատարէ բնութիւն զներգործութիւնս իւր՝ ենթակայեալ ՚ի նմա:

— Դ. Արրորդ՝ զհետ գայր զաստուածային ներգործութիւնս Նանին՝ ընծայել երեցուն և աստուածային անձանց, եթէ զայնս ընծայէաք անանձն բնութեան, այլ մեք ընծայեմք զայնոսիկ բնութեան ենթակայեալ յանձն Նանին: Յառնուլ Նանին Աստուծոյ զմարդկային բնութիւն, որպէս անձն իրապէս զանազանեալ ՚ի Յօրէ և ՚ի Յոգւոյ, նովին իրական զանազանութեամբն ևս կամի և ներգործէ իւրք անձն այլ:

— Ե. Ցորրորդ՝ մարդկային բնութիւն որպէս գործի է Նանին, այլ գործի կենդանի և ներգործական. զի անձն Նանին ոչ այլ ինչ տայ նմա, բայց զենթակայութիւն. և բնութիւն մարդկային կատարեալ, կենդանի և ներգործական է, թէպէտ և յանձն Նանին ենթակայեալ. վասն որոյ և իւրովի կամէր Քրիստոս և կրեր:

— Զ. Հինգերորդ՝ Նորիս մի կամ ասաց ՚ի Քրիստոս մարդկային առ ՚ի բաց մերժել զմարմնոյ և զհոգւոյ ներհակ կամս, և ոչ ՚ի բաց տանելով զաստուածայինն: Ա կայեն զայս ոչ միայն յաջորդ նորա Յոհաննէս Դ. և տուրբն Աթաքսիմոս վկայ, և Յոհաննէս աբբայ քարտուղար Նորիսոյ, այլ և նորին իսկ Նորիսոյ յերկրորդումն Թղթի առ Աերգիոս գրեալ գանք, զի ասէ. "Ա ան որոյ և զմի կամն խոստովանիմք Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ. զի աստուածութիւնն էառ ոչ զըմեր մեղս, այլ զբնութիւն՝ որպիսի ստեղծաւն նախքան զանկումն, և ոչ որպիսի յետ անկմանն: . . . Ո՛չ

*օրէնք այլ յանդամս, կամ կամք այլ հակառակ չեղիւ ի նմա, զի ի վեր քան զօրէնս պայմանի մարդկային բնութեան ծնաւ»։ Այսպէս և յայլսում թղթի առ նոյն ինքն Սերգիոս զկրկին կամ ի Վրիստոս դաւանէ. «Նա վարդապետութեան եկեղեցւոյ պարտ է մեզ խոստովանել, զի բնութիւնք երկու՝ իսկապէս միաւորութեամբ կցորդեալք ի մի Վրիստոս՝ հաղորդք էին և գործակիցք իրերաց ի ներգործել, աստուածայնոյն զաստուածայինս, և մարդկայնոյն զմարդկայինս ներգործել. ոչ բաժանաբար, և ոչ շփոթութեամբ կամ խեղմամբ... այլ զբնութեանցն զանազանութիւն ամբողջ խոստովանել»։

Իսկ զի Սոփիոս հաւանեցաւ ընդ խորհուրդ Սերգեայ՝ լռել վասն խոհեմութեան, խաբեալ ի նենգաւոր խորհրդոյ առնն՝ արար զայն, կարծելով օգնել այնուհիկ խաղաղութեան եկեղեցւոյ յետ այնչափ տարաձայնութեանց յուզելոյ յարևելս։ Այլ զայսմանէ ասացաք ի Հառն անախտութեան յաջորդաց առաքելապետին։

ԳԼՈՒԽ Թ

ՅԱՂԱԳՍ ԱԶԱՏՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԸՍՏ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ

Կրկին կամք են ի Վրիստոս, որպէս ասացաք, աստուածային և մարդկային, այլ և այլք և կատարեալք, վասն որոյ և ազատք։ Ազատ էր Վրիստոս որպէս Աստուած, ազատ և որպէս մարդ։ Ազատութիւն ազատութեան է կարել կամել ինչ և չկամել, կարել առնել ինչ և չառնել. և քանզի այս կատարելութիւն իմն է, հարկ է՝ զի նոցա Աստուած։ Եւ եթէ է Աստուած, է և ի Նմանն մարմին եղեալ. զի ոչ եթէ մարդեղութեամբն զատարեաց ի գոլոյ՝ որ ինչ էրն յառաջ։ Եւ եթէ է ազատութիւն ի Նմանն մարմին եղեալ, է և ի մարդն Յիսուս Վրիստոս. զի Նաննն Աստուած յառնել զմարդկային բնութիւն՝ կատարելագործեաց զայն, և ի կատարելագործելն՝ ոչ եբարձ ի նմանէ զազատութիւն, որ մի ի մեծագոյն կատարելութեանց նորա է։

Պաւղոս որոյ ինքն իսկ Պրիսկոս ասէ (Եգ. Ժ. 17.) “Օ՛ի ես գնեմ զանձն իմ, զի միւսանգամ առից զնա. ոչ ոք հանէ զնա յինէն, այլ ես գնեմ զնա անձամբ իմով. իշխանութիւն ունիմ գնել զնա, և իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա,,: Եւ զարձեալ (Պօղ. ին. 53.) “Համարիցիս թէ ոչ կարիցեմ աղաչել զՀայր իմ, և հասուցանիցէ ինձ այժմ այսր աւելի քան զերկոտասան գունդս հրեշտակաց,,: Ետ այսմ ազատ անձնիշխանութեան, ասէ առաքեալն, “Կոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու խաչի և մահու խաչին,. (Փիլ. Բ. 8): Եւ ի ձեռն այսր ազատութեան, չարչարանք նորա և մահ. զի հատուցումն ի հարկէ լեալ, ոչ է ձգմարիտ հատուցումն: Պաւղոս որոյ պարտ է խոստովանել ի Պրիստոս կատարեալ ազատութիւն յամենայնի՝ որ ինչ ի փրկութիւն մեր հայի, որ էր գլխաւոր վախճան մարդեղութեան Բանին Աստուծոյ:

Պարտէն Հարք ոչ միօրինակ խօսին ի միաբանել զազատութիւնն Պրիստոսի ընդ պատուիրանի Հօրն երկնաւորի տալոյ զանձն ի փրկութիւն մեր, որպէս այլոյ առաջոյ. այլ ամենեքեան միաբանին ասել՝ զի կամաւորութեամբ եւ զանձն վասն մեր, և զի կարող իսկ էր չմեռանել. և տուրբն ( )գոստինոս ասէ (յղ. Լուսուտ. գիրք ՟ե. գլ. ԺՁ.) “Որ կարողն էր չմեռանել եթէ չկամէր, չիք երկբայել՝ զի մեռաւ, վասն զի կամեցաւ,,: Օ՛ի թէպէտ և պատուէր ընկալեալ էր ի Հօրէ մեռանել վասն մերոյ փրկութեան, այլ պայմանաւ էր պատուէրն այն, և ի կամ իւր ազատատան. և ոչ եղանակ մահուն պատուիրեալ էր նմա ի Հօրէ, կարող իսկ էր՝ առանց առնելոյ ընդդէմ կամաց Հօր իւրոյ՝ ընտրել այլ ինչ ազգ մահու, կամ քնաւ իսկ հրաժարել ի մահուանէ: Այս է իշխանութիւն նորա անյօժէ պնելոյ զանձն. վասն որոյ եկեղեցական գրեանք գրեթէ ամենայն ուրեք ընդ մահուն Պրիստոսի յաւելուն զկամաւորապէսն. որպէս և Հայաստանեայց եկեղեցի երգէ ի շարականին “Առանեալ կամաւ ի ձեռս մեղաւո-

բաց ... Ակին կամաւ ի խաչ ... Կամաւորութեամբ եկին ի չարչարանս ... Ոլ Հնխաբար յօժարութեամբ եկեալ ի նոտագուծն եղծեալ մարդոյն ... Ա՛ս ինքն իշխանութեամբ բազմեցաւ ի վերայ խաչին ,, : Եւ սովին կամաւոր մահուամբ "Կապեաց զնշխանն մեզսասէրը , զմահու գերեալքս՝որ Ա՛զատոյ՝կենագործեաց ի կեանս անմահ ,, :

Ընտեղի և յայտառութենէ աստի գնետ բերել զմեղանչականութիւն : Ոանզի կարեն մեղանչել՝ չէ ազատութիւն և ոչ մասն ազատութեան , այլ թերութիւն նորին : Ա՛զատութիւնն Ոչխատուի էր անընդունակ չարի , ամենակատար ազատութիւն առ ի գործել զնր և է բարի , առնել ընտրութիւն ընդ այս ինչ կամ ընդ այն բարի . և այս միայն շատ է առ ի կացուցանել զՃշմարիտ ազատութիւն :

ԳԼՈՒԽ Ժ

ՅԱՂԱԳՍ ՄԱՐԴԿԱՑՒՆ ՄՏԱՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Քրիստոս ոչ միայն մարմին իբրև զմեզս էառ , այլ և զհոգի մարդկային բանական : Ընդհանուր յառեստաբանի (Ա՛ռն . կղ . 38 .) զնի ի սնարտիղին տրամեալ՝ առակը ցառաքեալն : "Տրտում է հոգի իմ մինչև ցմահ ,, : Ա՛պա բաց ի մարդկային կամաց և ազատութենէ , էնին նորա և միտք մարդկային ի հոգւոջ անդ . որպէս գաւանեմք ի հանգանակին . "Ելաւ էառ մարմին , հոգի , միտք ,, :

Ոայց մարդկային միտք ի Քրիստոս այնպէս էր կատարեալ , որչափ մարնի միտք ստեղծական ամենակատար : Ա՛ան որոյ անդատին յառաջնամէ վայրկենէ յղութեան իւրոյ գիտեր նա զամենայն , զանցեալն՝ զնեղկայ և զապառնի . և այս գիտութիւն Տաղորդեր նմա յանձնաւորական միաւորութենէ Ոանին Ա՛ստուծոյ ընդ մարդկային բնութեան : Ո՛չ ասէ աւետարանիչն . "Ոանն մարմին եղև , և բնակեաց ի մեզ . և տեսաք զփառս նորա , զփառս իբրև զմիածնի առ ի Հօրէ , լի շնորհօք և ճշմարտութեամբ : .. Ո՛չ ի լրութենէ անտի նորա մեք

ամենեքին առաք։ . . . Օ՛ի զոր ոճն առաքեաց, զբանս Աստուծոյ խօսի. զի ոչ եթէ չափով տայ Աստուած ըզՀոգին։ . . . Հանզի ինքն գիտէր զամենայն. և զի ոչ էր պիտոյ՝ եթէ ոք վկայեսցէ վասն մարդոյ, զի ինքն իսկ գիտէր՝ զինչ կրէր ի մարդն ,,։ (Յհ. ա. 14. 16։ բ. 24։ գ. 34)։ Նա առաքելապետն դաւանեաց (անդ ին. 17.) “Տէր դու զամենայն գիտես, և դու իսկ զամենայն Հանապէս ,,։ Նա առաքեալն ասէ. (Կող. բ. 3.) “Յորիստոս Յիսուս, յորում ամենայն գանձք իմաստութեան ծածկեալ կան ,,։

Ի բանից ասաի սուրբ գրոց գՀետ թերեն Հայրք առՀասարակ զամենագիտութիւնն Քրիստոսի և ըստ մարդկութեան։

Այսքին և զդէմ յանդիման աստուածտեսութիւն եբանական դաւանեն՝ի Քրիստոս յառաջնմէ վայրկենէ անտի յղութեան, ՚ի նոյն անձնաւորական միաւորութենէ Հանին ընդ մարդկութեան յառաջ բերեալ։ Քանզի անձնաւորական միաւորութիւն անսահմանաբար ՚ի վեր է քան զերանական աստուածտեսութիւն մարդոյ, և զի գերագոյնն բովանդակէ զստորինն, ապա մարդկութիւնն Քրիստոսի վայելէր յաստուածտեսութիւն. և քանզի անձնաւորականն միաւորութիւն եղև անդստին յառաջնմէ վայրկենէ յղութեան, ապա և աստուածտեսութիւն ընդ նմին։

Այլ այս ամենայն ոչ խափանէր զփորձառնուլ Քրիստոսի մարդկօրէն ըստ ածել Հասակին վերայ՝ զոր գիտէրն կատարեալապէս, և զոր տակաւ յայտնէրն աշխարհի ըստ բնականապէս զարգացման։ Օ՛ի որպէս անդստին՝ի յղացմանէն լի էր շնորհօք, սակայն ասի զարգանալ շնորհօք ըստ Հասակին, զնոյն ասել է և զփառաւորեցնէն. որպէս ասէ իսկ աւետարանիչն (Ա Կ. բ. 51.) “Եւ Յիսուս զարգանայր իմաստութեամբ և Հասակաւ, և շնորհօք Աստուծոյ և՛ի մարդկանէ ,,։ Քանզի Աստուծոյ մարմին եղեալ, լի էր շնորհօք և ճշմարտութեամբ. այլ զկերպարանս ծառայի առեալ, ըստ նմին և որպէս մարդ “Հանապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս՝ առանց մեղաց ,,, ըստ ժամանակին ևեթ յայտնեալ զանձնայն փառնէս էմաստութեան՝ որ՛ի նմա ծածկեալ կայր։

Իսկ զոր ասէն վասն աւուրն դատաստանի (Ա՛բ. ԺԴ. 32.) "Ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք յերկինս, և ոչ Որդի, բայց միայն Հայր ... Իսա զի ոչ՝ ի մարդկութենէն էր նորա այն գիտութիւն, այլ յանձնաւորական միաւորութենէն հաղորդեալ մարդկութեան։ Որ ի որ զաւետեան հանգամանս աւուրն այնորիկ մանրապատում առնէր, գիտէր ապաքէն և զժամն և զժամանակ՝ զոր եգեալ էր Հօր յիւրում իշխանութեան, և որպէս միածին Որդի՝ որ էրն՝ ի ծոց Հօր՝ կարող էր պատմել։ Այլ խրատել կամեցաւ զժտութիւն աշակերտացն, ասելով, զի Թէպէտ և մարդկօրէն իսկ գիտէր զայն, այլ ոչ՝ ի մարդկային բնութենէն, բայց միայն յաստուածութենէն՝ որով էակից է Հօր։ Որ որպէս մեծն Կիւրիղոս ասէ. "Մարդկային ևս բնութեամբն գիտէր զօր դատաստանին, այլ ոչ՝ ի բնութենէ մարդկութեանն գիտէր զայն,,։

ԳԼՈՒԽ ԺԱ

ՅԱՂԱԳՍ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՅԱՏԿՈՒԹԵԱՆՑ Ի ՔՐԻՍՏՈՍ

Հաղորդութեամբ յատկութեանց իմանամք, զի որ ինչ աստուածային բնութեանն է՝ օրէն է ասել զՔրիստոսէ, և որ ինչ մարդկութեանն է՝ օրէն է ասել զՆանէն Յաստուծոյ։ Նշմարտութեանս այսորիկ հնին է, երկուց բնութեանցն անձնաւորապէս միաւորութենի՝ ի Քրիստոս։ Յաստուածաբանք այլ և այլ կանոնս աւանդեն վասն ուղիղ վարելոյ զհաղորդութիւն յատկութեանց, զի մի գուցէ՝ ի նեստորեան մոլորութիւն ոք անկցի կամ յեւտիքեան. այլ գլխաւոր կանոն, յոր այլքն յանկին, այս է՝ ի Թանձրացեալն վարել և մի՝ ի վերացեալն՝ այնպէս զի զՔրիստոսէ կոչէ իմանալ և զմարդկայինն և զաստուածայինս, և մի զաստուածութենէ զմարդկայինս, կամ զմարդկութենէ զաստուածայինս։ Նեստոր զառաջինն մերժեաց, Եւտիքէս զերկրորդն։

Որդ զի ընդունելի է՝ ի Քրիստոս հաղորդութիւն յատկութեանց՝ ի Թանձրացեալն, սուրբ գիրք վկայեն՝

զնոյն ինքն Աբրահամ մերձ Աստուած և որդի Աստուծոյ կոչեալով, և մերձ մարդ և որդի մարդոյ, մերձ անժամանակ և մերձ ի լման ժամանակի ծնեալ, և այլ այսպիսի ներհականս զնամանէ ասեն. որպէս և ի հանդանակս անդ մերձ զնա Աստուած յԱստուծոյ գաւանեմք, և մերձ ծնեալ ի Կուսէն խաչեալ և թաղեալ:

Իսկ Նարք ոչ միայն հաստատեն զայսպիսի հաղորդութիւն յատկութեանց, այլ և անտի ձեռնարկեն ընդդէմ Նեստորի ցուցանել զաստուածամայրութիւն Կուսին՝ որ յայն հաստատի: Ա՛ան որոյ Նիւսացին յառաջ իսկ քան զՆեստոր, այսպէս ընդդէմ Ապողինարի ասէ. "Ա՛ան մարմնոյն առեալ և աստուածութեան առողին իսկապէս միաւորութեանն, փոխոխ զմիմեանց ասին՝ մարդկայինն զաստուածայնոյն, և աստուածայինն զմարդկայնոյ ,,: Ա՛անդր ոմն է անձն յերկուսին բնութիւնս. վասն որոյ որպէս զմարդոյ՝ որ ի հոգւոյ և ի մարմնոյ բաղկացեալ է՝ ասեմք էմպատիան, անմահ և այլն, և տպականացս, Նէլոսական և այլն, անձին ընծայելով և ոչ հոգւոյն զապականութիւն, կամ մարմնոյ զմահացականութիւն, սոյնպէս և զԱբրահամէ ըստ այլ և այլ բնութեանցն ասեմք Աստուած և մարդ, չարչարեալ և անչարչար, և զսոցին սակի յատկութիւնս:

Իսկ ընդհակառակն չէ ընդունելի հաղորդութիւն յատկութեանց ի վերացեալն, և ոչ է մարթ ասել ամենակալ, ամենուրեք, և այլն՝ զմարդկութիւնն Աբրահամայ: Ա՛ութեր խորոց ի խորս դահավիժեալ, առ ի պաշտպանել զնամափոյպական մոլորութիւն իւր ի տուրք խոհուրդն հաղորդութեան՝ հնարեցաւ ասել զաստուածային յատկութիւնս հաղորդեալ մարդկութեանն Աբրահամայ ի ձեռն մարդեղութեան, որով և զանապականութիւն ամենուրեք. և անկաւ ի մոլորութիւն եւտիքեան:

Ոյս մոլորական վարդապետութիւն եղծանեն տուրք դիրք, ուր ասեն կալ Աբրահամի ուրեք՝ առանց գոլոյ այլուր, կամ տեղւոջէ ի տեղի գնալ: Ոլինակ իմն Աբրահամ ասէ (Յհ. ԺԸ. 15.) "Ա՛ ազարօս մեռաւ, և ես ուրախ եմ վասն ձեր, զի ես չէի անդ. բայց արդ եկայք երթիցուք առ նա ,,: Ա՛ւր հարկ էր ասել՝ թէ խաբէր Աբրահամ զառաքեալն, եթէ արդարև մար-

ինոքին և ա՛ս էր՝ ի Նեթանիա։ Դարձեալ և հրեշտակին ասէր ցկանայս իւղաբերս. (Մրկ. ԺԶ. 6.) «Յարեաւ, չէ աստ. ահաւադիկ տեղին, ուր եդին զնա»։ Դարձեալ և առաքեալսդ ասացՙ զՊրիստոսէ (գործ. Գ. 21.) «Օ՛ր պարտ է երկնից ընդունել մինչև՛ ի ժամանակս ամենեցուն հաստատելոյ»։ Ա՛րդ այս և այսպիսի անհամար բանք ստուտ լինէին, եթէ Պրիստոսի մարդկութիւնն ամենայն ուրեք էր. և ոչ մարթէր մեզ դաւանել զիւրածին որդին Աստուծոյ յղացեալ յարգանդի կուսին, ՚ի լոյս ելեալ, եղեալ ՚ի գերեզմանի, կենդեալ ՚ի ստորինս, ելեալ յերկինս, և զի նովին մարմնովն գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս, եթէ Պրիստոս ըստ մարդկութեան ոչ պարագրէր ՚ի տեղւոջ։

Ընդ անեն զայս մեծութիւն և ժողովք տիեզերականք, քաղկեդոնեանն, և երկրորդն և երրորդ ժողովք Կոստանդնուպօլսի, որք զերկուս բնութիւնս ՚ի Պրիստոս զանազանեալս ՚ի միմեանց սահմանեցին ըստ երկաքանչիւր յատկութեանցն։ Եւ նիկիականն երկրորդ դատապարտեաց զմեծութիւն պատկերամարտիցն՝ որք ասէին զմարդկութիւնն Պրիստոսի անպարագրելի։ Ասացա միաձայնին և ա՛րք, ցուցանելով ընդդէմ ապստ՚ինարեանց և եւտիքականաց զերկաքանչիւրսն բնութեանցն զանազանեալ զյատկութիւնս յետ մարդեղութեան։

Աստուածաբանօրէնն և այսպէս է ձեռնարկել ընդդէմ լութերականաց։ Աստուածային յատկութիւնք կամ ատրիպետիքն՝ նոյն են տեսականապէս ընդ իրեարս, և չէ մարթ միւսն կալ առանց միւսոյ. ապա չէր և չէ մարթ մարդկութեանն Պրիստոսի գոլ ամենուրեք՝ առանց գոլոյ և անժամանակ և հոգեղէն և անմահ և անմարմին, որ է անտեղի։ Պանզի հակասական է նմին մարդկութեան գոլ պարագրեալ և անպարագրելի, անժամանակ և ժամանակաւ ծնեալ, մարմնաւոր և անմարմին. այլ չէ հակասական՝ միոյ անձին Պրիստոսի գոլ ըստ աստուածութեան անժամանակ, անպարագիր և անմարմին, իսկ ըստ մարդկութեան պարագրեալ, ծնեալ ՚ի ժամանակի և մարմնաւոր։

Պայն այսր ամենայնի ոչ աստուածաբանօրէնն խոր-

հին՝ ոչք խոշտեն ասել. "Ա՛ռեալ զՀայն՝ի տուրբ յաստուածային յանմահ յանապատ և յարբշխոցք ձեռս իւր ,, : Հայտ է թէ պրօշ նորին աստուածաբան էր, և գաւանէր զՀաղորդութիւն յատկութեանց՝ի Վրիստոս. և զի օրպէս ծնեաւն՝ի Կուսէն Աստուած էր, նոյնպէս և ձեռք նորա էին անմահք, արբշխոցք, զի էին ձեռք Բանին Աստուծոյ:

ԱՒԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ա՛րտ. Ա. — Ա. Մահկէտ և ամենեցուն նոյն բնութիւն է մարդկային, սակայն ոչ ոք զմիոյ ուրուք յատկութիւնս այլուստ ումեք համարի. ապա և առաւել չէ մարթ զմիոյ բնութեանն Վրիստոսի յատկութիւնս միւսում բնութեանն ընծայել: — Բ. Հոյժ առաւել համեմատք իրերայ են աստուածային անձինք, քան երկու բնութիւնք՝ի Վրիստոս. սակայն անտեղի է ասել Որդի զՀայր, ապա և ոչ զյատկութիւն միոյ՝ի բնութեանցն Վրիստոսի ասել զմիւսումն: — Գ. Արդէն և ոչ զմարդոյ օրէն է ասել՝ թէ հոգին իւրէ մարմին նորա, և մարմինն հոգի. Թէպէտ և միոյ անձին են երկոքին: — Դ. Եւ զարձեալ որ ինչ ասի զԱստուծոյ անպայմանաբար, գնայ՝ի տուրբ Արտարութիւնն բովանդակ. ապա և որ ինչ ասի զԱստուծոյ և՝ի մարդեղութեան, առ տուրբ Արտարութիւնն՝ի վեր ընթանայ. վասն որոյ ասել՝ թէ Աստուած է մարդ, հաւաստի է ասելն՝ թէ մարդն է Աստուած. այլ Աստուած է Հայր և Որդի և Հոգի տուրբ, ապա մարդն է Հայր և Որդի և Հոգի տուրբ:

Պե. — Ա. Մահկէտ և ամենեցուն նոյն բնութիւն է մարդկային, բայց անձն այլ և այլ. իսկ՝ի Վրիստոս բնութիւնք երկու՝ի միում անձին ենթակայանան:

— Բ. Կրնաւեղի է ասել Որդի զՀայր, զի այլ և այլ անձինք են. այլ՝ի Վրիստոս մի անձն, որ զերկաքանչիւր բնութեանն յինքն թերէ:

— Գ. Եւ ոչ զՎրիստոսէ ասեմք՝ թէ մարդկութիւն նորա էին աստուածութիւն. նոյնպէս և զմարդոյ թէպէտ և չէին օրէն ասել՝ թէ հոգին էին մարմին նորա,

այլ օրէն իակ է ասել՝ Թէ մարդն անմահ է և մահկանացու։

— Դ. Իակ յետին ձեռնարկութիւնդ չիոթէ զաստուածային անձինս ընդ աստուածային բնութեան։

Ա՛ոել. Բ. Սուրբ գիրք ուղղակի և անուղղակի ցուցանեն զոլ Քրիստոսի ամենուրեք։ Ա՛նուղղակի՝ ուր ուրեք ասեն զամենայն ինչ տուեալ Հօրէ՝ ի Քրիստոս որպէս ուր ասէ Քրիստոս (Ղ Է. Ժ. 22.) "Ա՛մենայն ինչ տուաւ ինձ՝ ի Հօրէ իմմէ,,։ Եւ գարձեալ յայտնապէս (Յհ. ԺԳ. 15.) "Ո՛ ամենայն ինչ, զոր ունի Հայր, իմ է,,։ Ո՛ր նշանակեն զաստուածային յատկութիւնս հաղորդեալ մարդկային բնութեան, որպէս և առաքեալն ասէ. (Կող. Բ. 9.) "Ո՛ի՝ ի նմա բնակէ ամենայն լրումն աստուածութեանն մարմնապէս,,։ Յայտ է այս գարձեալ յամենայն բանից, յորս վկայեն սուրբ գիրք զամենագիտութիւն և զամենակարողութիւնն Քրիստոսի, որպէս ուր ասէ առաքեալն (Կող. Բ. 7.) "Յորում ամենայն գանձք իմաստութեան և գիտութեան ծածկեալ կան,,։ Եւ ուր աւետարանիչն ասէ (Յհ. Բ. 25.) "Ո՛չ էր պիտոյ՝ եթէ ոք վկայեսցէ վասն մարդոյ. զի ինքն իսկ գիտէր զինչ կրէր՝ ի մարդն,,։

Ա՛յլ ուղղակի ևս վկայէ ինքն Քրիստոս զամենութիւնն ներկայութիւն իւր, ուր ասէ. (Ա՛որ. ԺԸ. 20.) "Ո՛ւր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես՝ ի մէջ նոցա,,։ Եւ գարձեալ (իբ. 29.) "Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև՝ ի կատարած աշխարհի,,։ Եւ առաքեալն ասէ. (Եփես. Գ. 10։) "Ո՛ւր կո՛ն՝ նայն է և ուր եկն՝ ի վերոյ քան զամենայն երկինս, զի լցցէ զամենայն,,։ Ա՛նդր Քրիստոս նատի ընդ աջմէ Հօր, արդ ամենայն ուրեք է աջ Աստուծոյ, ապա ամենայն ուրեք է Քրիստոս։

Պէ. Ո՛յդ ամենայն բանս սուրբ գրոց իմանան Հայրք ըստ աստուածութեանն Քրիստոսի և ըստ խնամոց. վասն որոյ և յետին ձեռնարկութեանդ անտեղութիւն յայտ անտի է, զի ըստ այդմ հարկ էր և հոգւոյ ամենայն արդարոց գոլ ամենուրեք. քանզի սուրբ գիրք ասեն՝ Թէ "Հոգիք արդարոց՝ ի ձեռին Աստուծոյ են,,. և Աստուած ամենայն ուրեք է։

Ա՛ոել. Գ. Ա՛արդութիւնն Քրիստոսի անձնաւոր

բանիւս միաւորեալ է ընդ աստուածային բնութեանն, ապա ուր և իւրն աստուածային բնութիւնն, անդ պարտ է գոլ և մարդկայնոյն. ապա թէ ոչ, չէր մարթ ասել զայն միաւորեալ ընդ բոլոր աստուածութեանն, այլ ընդ մասին ինչ նորա. կամ գտանէր ուրեք աստուածութիւն նորա բաժանեալ ի մարդկութենէն, զոր չէ մարթ ասել։

Պե. Ընձնաւորական միաւորութեամբ մարդկութիւնն Քրիստոսի ենթակայի յանձն Բանին և ի նմանե նէ վարի, այլ ոչ փոխի ի բնութենէն ստանալ զաստուածային յատկութիւնս՝ որոց չէ ընդունակ։ Ընդ այն գՀետ գայ, զի ուր ուրեք մարդկութիւնն Քրիստոսի է՝ է անդ և աստուածութիւնն, այլ ոչ ընդ հակառակն ամենայն ուրեք ուր աստուածութիւնն նորա է՝ է և մարդկին։ Ոչ մոլորական ձեռնարկութիւն յառաջ գայ ի շփոթելոյ զանձնաւորական միաւորութիւն ընդ ամենօրինակ գոյակցութեան և հաւասարութեան։ Ոչ ի եթէ այդպէս էր, ապա որպէս յատկութիւնք աստուածութեան հաղորդէին մարդկութեան՝ պարտ էր և մարդկայնոյն հաղորդել աստուածութեան. և որպէս մարդկութիւնն հաղորդութեամբն այնուիկ լինէր անստեղծ, անչափ, և այլն, նոյնպէս և աստուածութիւնն գտանէր ստեղծական, չափաւոր, և այլն, որ հակասական է և անտեղի։

Պետ. Դ. Մարդկութիւնն Քրիստոսի ամենայն ուրեք է, ոչ երևմամբ՝ այլ անտեսաբար. երևի ի տեղջ ևեթ ուրեք, և անտի շարժի և գնայ ուր չերևէրն։ Որպէս և Պաւաւած, որ թէպէտ և ամենայն ուրեք է, բայց իջեալ ասեմք զնա յերկինից՝ ուր երևի մարդկան։

Պե. Եթէ Քրիստոս յետ յարութեանն անտեսաբար իսկ կայր ի գերեզմանի, ոչ ևս Աշմարտէր բան հրեշտակին՝ որ ասաց ցկանայսն իւղաբերս, Պէ ասե. որպէս և սուտ լինէր ասել զՊաւաժոյ՝ թէ չկայ յերկրի, ուր չերևի։ Եւ դարձեալ Քրիստոս տէրն մեր ի մահուն Ղազարու ասէր առ աշակերտսն. "Եւ ես ուրախ եմ վասն ձեր, զի դուք հաւատասջիք ինձ,,. այսինքն առաւել հաստատեացին հաւատք ձեր յիս։ Եւ

Թէ ոչպէս, յաւելու զպատճառն. "Օ՛ւ ես չէի անդ", և ոչ գոլով իմ անդ՝ պատմեմ ձեզ զմահ նորա, որով՛ւ միտ առնուցուք՝ զի ոչ ինչ ծածկի լինիցի։ Այդ՛ւ դնել միանգամ զաներևոյթ ներկայութիւն մարգուԹեանն Այրիատոսի ամենայն ուրեք և՛ւ Նեթանիա առընթեր՝ ի ազարու, ոչ ևս զօրէ ձեռնարկութիւնն Այրիատոսի, և ոչ իսկ Աչխարհի բան նորա. զի չասէ՝ Թէ չերևէի, այլ Թէ չէր անդ։

Նոյն. ե. Նթէ արարած էր մարմինն Այրիատոսի և ոչ Աստուած, ապա՛ւ ի համար արարածոյ սարտ էր դնել զայն, և ոչ ևս պաշտել զայն, և երկիր պագանել այնմ իբրև Աստուծոյ։

Պե. Նա կարի իսկ քաջ այդպէս էր, Եթէ մարմինն Այրիատոսի չէր մարմին Նանկին Աստուծոյ. ընդ որում անձնաւորապէս միաւորեալ, ընդ նմա և երկրպագի իբրև Աստուած։ Օ՛ւ Թէպէտ և մարմնոյն երկիր պագանեմք, այլ պատճառ երկրպագուԹեանս մերոյ աստուածուԹիւնն է, համ անձն Նանկին անբաժանելի ընդ նմա միաւորեալ։

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Զի վարք է ուղղախառապես առնել զմի յերրորդութենեն խաչեալ մարմնով։

Ի հաղորդուԹենէ յաւուրԹեանց զՀետ գայ այս վարդապետուԹիւն ընդդէմ՝ Նեստորի. զի ԵԹէ անտարակուսելի է ասել ըստ Հաւատոյ՝ զԱստուած ծնեալ՝ի կուսէ, զԱստուած խաչեալ, և այլն, և իմանալ ըստ մարմնոյ, ապա մարԹ է և ասել զմին ԵրրորդուԹենէ ծնեալ՝ի կուսէն և խաչեալ՝ նմա մարմնով։ Օ՛ւ ԵԹէ Աստուածդ անուն Հասարակ է երից և անձանց, ապա տայ իմանալ զԱրդի՝ որ միայն մարմնացաւ և խաչեցաւ։ Օ՛ւ ԵԹէ խաչեալն ոչ մի էր ԵրրորդուԹենէ, ապա ոչ ևս էր Աստուած, այլ Երրորդ ումն՝ որ է ազանդ՝ Նեստորի։ Նա որպէս քաջ ձեռնարկէ Ամաքսենտիոս (՛ի յառաջաբանէն պրամխոսուԹեան) "Նթէ Այրիատոս է Աչխարհիս Աստուած, որպէս և է, համ

Աղօթողութիւն է և կամ մի Աղօթողութենէ. այլ քանզի ամպարշտութիւն է ասել բովանդակ Աղօթողութիւն զԱրիստոս, ապա ինայ ասել՝ թէ Արիստոս Աստուած է մի Աղօթողութենէ, եթէ ոչ այլ ոմն Աստուած ինա ասիցեն արտաքոյ Աղօթողութեան։

Օ այլ և սա ապացոյցս ողջմտութեան այսր վարդապետութեան է տեսանել առ Պետրէոսի (Հատ. Ե. կղ 221)։ Ա՛յլ մեք վկայութենս ինչ յաւելումք՝ի Նարեկ։ Պետրոս արհսպագոյն (յղ. առաքեալն անուանդ. գլ. ա.) ասէ զսրբոյ Աղօթողութենէ "Հոգւովքն մեզ՝ի միում յենթակայութեանց իւրոց հաղորդեալ,, ։ ուր յաւելու մեկնիչն Աստիճանս. "Օ տնտեսութիւն աստանօր յայտնաբանէ գեղեցիկ, եթէ մին՝ի սրբոյ Աղօթողութենէն էր՝ի խաչին. և այս ընդդէմ նեստորականաց և անգլխոց,,։

Ոստինոս (յղ. պարգեւէ յարտեւորէեան. գլ. իզ.) "Որ էառն և զոր էառ, մի անձն է Աղօթողութենէ,,։

Թուլգենտիոս (յղ. դքս. ելովզ. գլ. ջ.) "Յաւիտենական աստուածութիւն Որդւոյն, հանդերձ բովանդակ մարդկութեամբ իւրով, և նոյն մարդկութիւն բովանդակ, հանդերձ յաւիտենական աստուածութեամբ իւրով, մի է Աղօթողութենէ,,։

Հինգերորդ և վեցերորդ տիեզերական ժողովք, և Լատերանեանն առ Մարտինոսիւ, և այլ ևս ժողովք ատեպ յեղյեղեն՝ի վձիռս իւրեանց "Մին՝ի սրբոյ Աղօթողութենէն մարմնացեալ,,. իսկ Յոհաննէս Բ. սահմանեալ ժողովոյ զրեաց առ Յուստինիանոս կայսր, զի ուղիղ է ասել զմին Աղօթողութենէ չարչարեալ կամ խաչեալ։

Ել և՝ի մերոց Հայց ածեմք վկայութիւնս. շատ լիցի որ՝ի ժամամուտն. "Միածին որդի և Բանդ Աստուած և անմահ էութիւն, որ յանձն առեր մարմնանալ՝ի սրբուհւոյ աստուածածնէն և՝ի միշտ կուսէն, անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Արիստոս Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր միով՝ի սրբոյ Աղօթողութենէն փառաւորակից Հօր և ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ,,։

ՅՕԳՈՒԱԾ Բ

Յաղագս երկպառքեան սրբասացութեանն:

Երգս այս, որպէս յայտ է, առեալ է 'ի փառաբանութենէ անտի սերովբէից՝ զոր պատմէ մարգարէն (Ես. ՋԻ.) "Սուրբ սուրբ սուրբ տէր զօրութեանց,, : Իսկ թէ ընդ կամ ոմն յարմարեալ իցէ զայն 'ի մաղթանս՝ կցորդելով ընդ բան սաղմոսին "Ելարուք է անձն իմ առ քեզ Աստուած, հզօր և կենդանի,, , որով լինի "Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ,, , ոչ է յայտ: Այս ևեթ հաւաստի է՝ զի 'ի վաղուց յանյիշատակ ժամանակաց երգէին զայն Յոյնք 'ի պաշտամունս իւրեանց. յորոց ընկալաւ զայն և ազգ մեր:

Սուրբ Հայրք ձերիքսրբեան փառաբանութիւն մեկնեն սովորաբար 'ի վերայ երեքանձնեայ աստուածութեան, ըստ որում և կոչեմքն զնա երեքսրբեան մի տէրութիւն: Այսպա ուղղափառապէս մարթ է ասել առ Հայր՝ սուրբ Աստուած, և առ Որդի՝ սուրբ և հզօր, և առ Հոգին՝ սուրբ և անմահ. և առ երեսին իւրև առ մի տէր՝ ողորմեա մեզ:

Իսկ զի զնոյն երգ և 'ի դէմս միոյ միոյ յերից անձանց մարթ իցէ երգել, յայտ է 'ի սուրբ գրոց: Զանազի առեռարանիչն Յովհաննէս (ԺԲ. 41.) 'ի յիշատակել զտեսիլն զայն Եսայեայ՝ (գլ. Ձ.) յորում է սրովբէական սրբաբանութիւնն, և պատգամ տեառն առ Եսայի՝ թէ "Երթ առ ժողովուրդն,, և այլն, յաւետ՝ թէ Որդին էր երևեալն 'ի տեսլեան անդ. "Ո այս ասաց Եսայի, զի ետես զփառս նորա և խօսեցաւ վասն նորա,, : Այսպա ուրեմն առ Որդին երգէին հրեշտակք զերգն զայն երեքսրբեան, վասն որոյ և մարթ է երգել զայն առ Որդին: Դարձեալ և առաքեալն 'ի դէմս Հոգւոյն սրբոյ առնու զտեսիլն զայն յասելն. (Գործ. ԻԸ. 25.) "Հարուք խօսեցաւ Հոգին սուրբ 'ի ձեռն Եսայեայ մարգարէի առ հարսն մեր,, : Այսպա ուրեմն սրովբէական երգն այն 'ի դէպ գայ երեցունցն և անձանց ամենասուրբ Երրորդութեան ըստ գրոց:

Ա.յլ և սուրբ Հարք, որք ի դէմս սրբոյ Աղբատութեան զերկն զայն մեկնեն, զնոյն և ի դէմս Աղտոյ առնուն առանձին։ Այանզի ասէ Ա.թանաս (յղ. Մարդեղ.) "Ա.տուած ծնեաւն և եղեալ մարդ. և մեք ասեմք՝ եթէ Ա.տուած է, և թէ ըստ մեզ եղև մարդ... և ոչ երբեք միայն սուրբ, այլ անսահմանաբար ,,։ Նոյնպէս. "Տեսաք զնա, և ոչ գոյր նորա տեսիլ և ոչ գեղեցկութիւն, (ասէ Նսայի.) քանզի էր զնա յառաջագոյն տեսեալ յաստուածայնում և ի փառաւոր կերպի, նըստեալ ի վերայ աթոռոյ բարձրացելոյ և վերացելոյ, յորժամ և քրովբէքն փառաւորէին զնա ասելով. սուրբ սուրբ սուրբ տէր սաբաւովթ. և յետ այսորիկ տեսանէ զնա՝ կերպարան ծառայի առեալ, և ի նմանութիւն մարդկան եղեալ ,,։

Նպիփան (ի թղթոյն.) "Աղաղակեմք ի կանայս, որ զԱ.նձն մարմնացեալ ի քէն ծնաւր,... Ման՝ զոր ըստ բնքկերպեան կենդանիքն աղաղակեն ասելով՝ սուրբ սուրբ սուրբ տէր սաբաւովթ, լի են երկինք և երկիր փառաք նորա ,,։

Ասկեբերան (առ Նամապետոն.) "Ա.յսօր Թագաւորն փառաց յերկրի մարգարէաբար (այսինքն մարգարեական բարբառովն) փառաւորի,... վերինքն գի ի յերկրի փրկութիւնն հռչակելով սաղմոսէին. սուրբ սուրբ սուրբ տէր զօրութեանց ,,։

Կիւրեղ աղէքսանդրացի (Պարտ. ԺՂ.) "Ա.յսպէս տեսեալ մարգարէին Նսայեայ զորդի ի վերայ աթոռոյ վերացելոյ և բարձրացելոյ՝ ասէ. շուրջ կային զնա քերովբէք ,,։

Նս այնուր (ի Ղեւի. Գ է.) "Յորժամ տեսցես ասպա մանուկ պատեալ ի խանձարուրս... և ի վեր խակ երկինան, և այսպէս տեսցես զնա... նստեալ ի վերայ աթոռոյ վերացելոյ և բարձրացելոյ. լուիցես և զփառաբանութիւն սերովբէից առ նա՝ ասելով զի զերկինս և զերկիր փառաք նորա ,,։

Պետրոս (յղ. Մարդեղ.) "Ա.յս օրպէս մելոբեցուցիչ զրպարտեալ լինէր, և անդ սուրբ սուրբ սուրբ փառաբանիւր ,,։

Օ.յն է տեսանել և առ այլս բազումս ի Հարց, որպէս զի ասել կարելի թէ ամենք զՀայր հաստատին երևեալ յայնմ տեսլեան, "Ա.յլ ես համարիմ թէ ոչ

երևեցաւն 'ի վերոյ ամէոռոյ՝ էր որդին Աստուծոյ, զոր քաջայայտ ուսուցանէ աւետարանիչն յասելն՝ Թէ Այսպէս կանխաւ ասաց զաստանօր գրեալսն, յորժամ ե՛տես զփառս նորա, (իմա զորդւոյ միայնոյ), և խօսեցաւ վասն նորա ,,: Այլ զայս կարծիս գրեմք ամենայն ՝ալք և մեկնիչք ընդունին :

Այլ Լուկէոն յաւելու. "Բանքս այս սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, կարեն աներկբայապէս և առ Քրիստոս պատկանել. որ քանզի Աստուած է, ապաքէն և սուրբ և հզօր և անմահ: Այսպիսի է և ա և որպէս մարդ աստուածացեալ, որ յաղթանակեաց 'ի վերոյ մահու, և ոչ ևս մեռանի, որ էառ զամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի, և որ ընդ աջմէ Հօր նստի: Ետ այսմ հաւատացեալք Քրիստոսի յամենայն գաւս երգեցին միշտ առ Քրիստոս, զոր և մեքս երգեմք 'ի փառք 'ի բարձունսն. Դու միայն սուրբ, դու միայն տէր, դու միայն բարձրեալ Յիսուս Քրիստոս. առ իմէ ապա ոչ վերառաքել առ նա և զերբեքարեանն ,,:

Այլ 'ի բանից Ը նորհալւոյ հայրապետին որ առ Մաշտուէլ Կոմնենոս, և յայտնագոյն ևս՝ 'ի պատասխանւոյ անտի մեծի ժողովոյն Տարսոնի առ խնդիրս Հռոմոց զոր յառաջ բերէ Կլեմէս Դաւղանոս ('ի Տառն պապ. Թիւ էջ. 136.) է իմանալ զի յառաջ ժամանակաւ և առ Յոյնս 'ի դէմ Արդւոյ ևս երգէր երեքսրբեան սրբասացութիւնն. քանզի ասէ ժողովն. "Ի վերոյ այսորիկ գտանեմք՝ և առ 'ի մէնջ սրբաբանութեանս Քրիստոսի՝ զձեզ վկայս. զի կայ արդ ևս փոքրագրեալ գրովձեր 'ի Դաւղանիոս և 'ի Մամուեստիա. Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր՝ ողորմեա մեզ: Արդ ուսանիմք Թէ և 'ի ձէնջ ուսաք զայս սրբերգութիւնս այսպէս երգել և ոչ անձամբ անձին է գտեալ ,,:

Այս և Հռոմէական եկեղեցի յաւուր աւագ սրբաթու, առաջի սրբոյ խաչին, նուագէ զերեքսրբեան երգն: Ի միջոցի քահանայն ցուցանէ ժողովրդեան զսուրբ խաչն, և սարկաւագն հրաւիրէ զնոսա յերկրպագութիւն, երգիչքն յիշատակաւ սրբոյ խաչին և չարչարանացն փոխ առ փոխ յարեն զսուրբ Աստուածն:

Եւ խաչք եւս պղնձիք վաղնջականք գտանին գրոշմեալք ՚ի Հռոմէ, բերեալ յետոյս զերեքսրբեան երգն։

Իսկ ՚ի մաշտոցի լատինացւոց և կանոն երգմնեցուցանելոյ զմրրիկս, ուր ասեն։ "Երգմնեցուցանեմ զքեզ... ՚ի սուրբ մահն Յրիստոսի և ՚ի խաչն՝ յորոյ վերայ կախեցաւ վասն մեր մեզաւորացս սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ,,։

Ի հաստատութիւն ասացելոցս յաւելումք և զմաղթանս զայս Հռոմէական եկեղեցւոյ։

Մաղթանք հանապազօրեայ վասն փրկչոյ յաստուածածնայնոյ պատուհասից։

"Տէր Յիսուս Քրիստոս, առ քեզ դիմեմք. սուրբ Աստուած, Աստուած հզօր, Աստուած անմահ, ողորմեաց մեզ և ամենեցուն. քաւեա զմեզս մեր և սրբեա զմեզ յամենայն ախտից՝ աստուածայնոյն արեամբդ քով այժմ և միշտ և յաւիտեանս ամէն։

ԻԳ

Այլ յաւիտենական, մատուցանեմ քեզ ՚ի նուէր զպատուական արիւն Յիսուսի Քրիստոսի ՚ի քաւութիւն մեղաց իմոց, ՚ի լցումն պիտոյից սուրբ եկեղեցւոյ, և առ ՚ի դարձ տառապեալ մեղաւորաց,,։

Ընդ աղօթիս այս յետ քննութեան աստուածաբանից ծխական ժողովոյն՝ տպագրեալ է ՚ի Հռոմ յայտարարութեամբս այսուիկ. "Քանիցս ոք զըղձական աղօթս զայս մատուցանիցէ, հնարհի նմա ներողութիւն հարիւրօրեայ միանգամեայ, հրամանագրաւ Պիոսի Ը. ՚ի 29 մարտի 1817,,։

Ո՛նոյն հաստատէ և խաչակնքել հաւատացելոց զեբեսս իւրեանց՝ անուանելով իսկ զերեսեան անձինս սրբոյ Երրորդութեան։ Ո՛ի խաչակնքելով յասելն՝ Յաւնուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, պատանեմք զի միւն Երրորդութենէ Բանն Աստուած մարդացաւ և խաչեցաւ վասն մեր. կամ զի Քրիստոս, որ չարչարե-

ցաւն և խաչեցաւ վասն մեր, և նոյն ինքն Յաւն Յ֊ստուած՝ որպէս ՚ի օր՝ մին՚ի սրբոց Յերկրպագութենէն։ Յորժ եթէ յանուանեն իսկ զերեսին անձինս օրէնն է դաւանել զանօրէնութիւն Աղուոյ, ապա ևս առաւել յերկրային սրբասացութեան։

Յայսմ ամենայնի քաջայայտ է, զի Պետրոսի Կնախիտի գայթակղութիւնն եւեթ՝ կամակորելով զիմաստս երգոյս, յորոյ այնքան զայսմանէ վէճ, և արգել իսկ չերգելոյ զայն ՚ի դէմս Աղուոյ, մանաւանդ յաւելուածոյն՝ իբր ՚ի Կնախիտ առեալ։ Այլ և զայն պարտ է ասել՝ զի յազգի մերում՝ յառաջագոյն քան զԿնախիտ՝ երգն այն Հանդերձ յաւելուածովն ՚ի դէմս Կրիստոսի երգեր։ զոր ապացուցանեն շարականք ՚ի սրբոց Կերեթաղահօրէն յօրինեալք յաւուրս կաթողիկոսութեան սրբոյն Ահակայ՝ իբրև քառասուն ամօք յառաջ քան զԿնախիտ։

“Օ՜ որ օրհնեն սերովբէք, և գովեն քերովբէք...։ Ընդ՚առեալ և մեր զօրհնութիւնս հրեշտակային՝ երգեմք և ասեմք, փառք յարութեան քոյ տէր, որ խաչեցար վասն մեր, թաղեցար և յարեար, ազատեցեր ՚ի մեզաց, սուրբ Ընդ՚ստուած սուրբ և հզօր, սուրբ անմահ Թագաւոր։”

“Որ ծնանելոյն է ՚ի քէն Խորայելի առաջնորդ, և ընդհանուր քարոզի Ընդ՚ստուած հզօր անմահ Կոչեն։”

“Որ ՚ի քառակերպին երեքտերեան ձայնիւ անդադար օրհնաբանիս, ՚ի մոգուց պատարագօք պատուեցար յայրին։”

“Սուրբ Ընդ՚ստուած՝ որ վասն մեր զմահ Ճաշակեցեր և յերրորդ աւուր յարեար, ողորմեա։ Սուրբ Ընդ՚ստուած՝ որ զչժոխս աւերեցեր,.. ողորմեա։ Սուրբ Ընդ՚ստուած՝ որ ՚ի յերկինս համբարձար,.. ողորմեա։”

Երեցպոյն է ժամանակաւ քան զվնախիտս և Դաւելիճ անյաղթ, որ ասէ ՚ի ներբոդ խաչին. “Խաչ՝ Ընդ՚ստուածոյ խաչ, և նոյն ինքն խաչեաւն՝ Ընդ՚ստուած անմահ. և ոչ ինչ երկբայեսցի, տինաս և բազմակամբք քերովբէիւք և վեցթևեամբք շրջապատեալ սերովբէիւք՝ զեռահիւսեալ սրբասացութիւնս խմանալն ձայնիւ ՚ի սմա վերելելոյն Ընդ՚ստուծոյ յարտաքելով։”

Նոյն Ներսէս աստուածաբան լատինացի յառաջ և անցեալ, յաւելու. “Խաչն յաւելեալ ՚ի Կնախ-

չէն, եթէ վերաբերյի առ մի և եթէ անձն սրբոյ Հրոմ-
պուեան, ժխտեմք թէ չիցէ ընդունելի. մանաւանդ
զի Աղեսիոս՝ ի ծանօթութիւնս Հատորի էջ 99, գրէ
՝ի կնիր առեալ զայն միջտ յարևելեան եկեղեցիս, յա-
ռաջ քերելով զանս Հռոմի անտիոքացւոց՝ ի մատե-
նադարանէն Վոտոպ.,,

ԳՕԴՈՒԱԾ Գ

Մաքրք իցեն արդիօք ողջմտութեամբ ասել զաստուածութիւն
կամ զբնութիւն Քանին մարմնացեալ:

Ա.րդարև գայթակղելի թուի քանս՝ որոց ծանծաղ
իցէ գիտութիւն աստուածաբանական, որք Հազիւ Հան-
դուրժեն լսել զԱստուած մարմնացեալ և խաչեալ: Ա.յլ
որպէս ցուցաք զայն ընդդէմ Նեստորի վկայութեամբք
սրբոց Հարց, ժամ է ցուցանել և զայս:

Ո՛չ անձն Բանին կամ որդին Աստուծոյ է նոյն իսկ
բնութիւն աստուածային կամ աստուածութիւն. իսկ
արդ եթէ անձն Բանին կամ որդին Աստուծոյ Հնար-
տապէս մարմնացաւ և խաչեցաւ, ապա Հնարիտ է ա-
սել՝ թէ բնութիւնն աստուածային կամ աստուածու-
թիւնն մարմնացաւ և խաչեցաւ՝ յայտ է թէ մարմնովին
առեցեալ: Ու քանզի թէ՛ առաջին և թէ երկրորդ
մասն վարդապետութեանս ցուցաք յիւրում տեղւոջ
ընդդէմ Նեստորի և այլոց աղանդաւորաց, ապա ան-
երկբայելի են Հետևանքն, որպէս և վկայութիւնք Հարց
Հաւաստի առնեն:

Θեոդիտոս (Եպիս. Ծէ.) "Աստուածութիւն միած-
նին Հաղորդ եղև մահկանացուութեան մերում, զի և մեք
նորա անմահութեանն Հաղորդ լիցուք,,:

Աեծն Լևոն (յղ. ծն. Հատ ք.) "Այս պարանչելի ծնունդ
միով որդւով՝ ի լոյս ընծայեաց իսկապէս զմարդկայինն
և իսկապէս զաստուածայինն բնութիւնն,,:

Աեծն Խարսեդ (տա Աքիլա.) "Ցուրն ինձ ընդել
ձայն է տեառն՝ ի ընուլ զմարմնաւոր պէտս. զի և որ
խնդրէրն՝ ոչ մարմին էր անՀոգի, այլ աստուածութիւն
*ունակ Հոգիաւոր մարմնոյ,,:

Ակրեի (Պապող. ք.) "Օ՛ն անմահութին աստուածութիւնն մահուին եղև, Հոգի ունելով բանական ,,:

Նպիփան ('է յարուն-ի՛ն էրկէն) "Յ՛աստուածութիւնն ոչ չարչարեր, այլ չարչարականքն մարդկութեանս... ոչ աստուածութեանն սրինչ գոլով, և ոչ մարդկութեանն մեկնելով. այլ 'ի միասին և 'ի նոյն աստուածութիւնն և մարդկութիւնն մի տէր, մի Քրիստոս ,,:

Փուլգենտիոս (նախ. ք. էջ 217.) "Մ՛եք քարոզեցուք զխաչելեացն Քրիստոս, Հրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն. բայց նոցին իսկ կոչեցեալսն Հրէից և հեթանոսաց զՔրիստոս Յ՛աստուծոյ զօրութիւն, և Յ՛աստուծոյ իմաստութիւն: Յ՛հաւասիկ զՔրիստոս զՅ՛աստուծոյ զօրութիւնն և զՅ՛աստուծոյ իմաստութիւնն խաչեալ ասէ առաքեալն: Օ՛ր օրինակ վատահութեամբ Հանապէ և հաւատոյ հաւատքն Հրէից մարիտ ըստ մարմնոյ խաչեալ զզօրութիւնն (Յ՛աստուծոյ), նոյնպէս ըստ մարմնոյ խաչեալ գաւանի զաստուածութիւնն. վասն զի Քրիստոս Յ՛աստուած Հզօր՝ այնպէս է Յ՛աստուած, մինչ զի ինքն իսկ է աստուածութիւն իւր. զօր օրինակ և այնպէս է Հզօր, զի ինքն իսկ է զօրութիւն իւր ,,:

Վերրանդոս սարկաւագ (Ընդ. աս Նեապոլիս) "Տի՛ր բոպէս ծնաւ աստուածային գոյացութիւնն ընդ մարդկային գոյացութեան... տիրապէս ծնաւ 'ի Հօրէ աստուածութիւն սոսկ, տիրապէս ծնաւ 'ի մօրէ նոյն աստուածութիւն մարմնացեալ ,,: Եւ դարձեալ. "Յ՛ոյժ բնութիւն է՝ ըստ որոյ չարչարեցաւ Քրիստոս. բայց քանզի մի անձն էր աստուածութեան իւրոյ և մարմնոյն՝ յաղագս միութեան անձին, աստուածութիւնն ասի կրեալ զօր ինչ միանգամ ժուժկալեաց մարմինն ,,:

Վիկթորինոս (ընդդէմ Արիոսեայ) "Քևեռեցաւ աստուածութիւնն բևեռօք, այլ ինքն էր թափանցելի որպէս մարմին նորա. վասն զի մարմինն Հեղքեալ է, բայց զտեղի վէրացաւ, իսկ աստուածութիւնն անբաժանելի և անթափանցելի մնաց ,,:

Ըստ այսոցիկ և Քերթողահայրն մեր Հմուտ և նեղուկուճ բանից Հարցն Յունաց՝ երգէ (՛է Ջ. կան. ծննդ.) "Ընեզանելի բնութիւն, որ յիւութեանդ ես ընդ Հօր, ծնաւ՛ի սրբոյ կուսէն ,,: Եւ Օ՛ձաքարիա կաթուղիկոս

մեկն բանիւք բացայայտելով զիմաստս այսօրինակ ա-
ռացուածոյ՝ ասէ (՚ի Ճառ Ընդմ. պեսոն.) “Ոչ մարդ
սոսկ հաւատիմք զՔրիստոս, զի մեռանէն վասն մեր, և
ոչ զաստուածային անսահման և անմահ բնութիւնն ա-
սեմք մեռեալ և անշնչացեալ՚ի գերեզմանին, այլ մե-
րով բնութեամբ Ճաշակեաց զմահ, և անմահ աստուա-
ծութիւն նորա անորիշ և անքակ էր՚ի մարմնոյն, և
պարգևէր իւրոյ մարմնոյն զկենդանութիւն (չարո-ԼԷան)
և անապականել (այսինքն անմահ) պահէր՚ի գերեզմա-
նի: Զի անդր ոչ եմք մարդապաւանք հաւանանան պղծոյն
Նեստորի, և ոչ աստուածաչարչարք՝ որպէս ամբարիշտն
Նեստիքէս, այլ ընդ միջինն և ընդ ուղիղն Ճանապարհ
հոլովեմք ընդ աստուածականս և ընդ ուղիղ պողոտայն,,:
Ո՞չ այսոսիկ յառաջ բերաք աստ՚ի գիտութիւն համ-
բաւից աստուածաբանութեան, առ ուղիղ իմանալ ըզ-
բանս Յարոյն առաքելոց ըստ մտացն ըստ որոց գրեցան,
և մի ըստ այժմու Ճշդեալ և Ճշգրտեալ բացատրու-
թեանց յախուռն գառեալ գնասա:

ԳԼՈՒԽ ԺԲ

ՋԻ ՊԱՐՏ Է ԱՍՏՈՒԱԾԱՑԻՆ ԸՆԴԱՑԵԼ, ՊԱՇՏՕՆ ՄԱՐԴՈՒԹԵԱՆ
ՔՐԻՍՏՈՍԻ

Խնդիրս այս Հարկաւ զՀետ գայ առացելոցս ցայս-
վայր. զի եթէ երկրպագութիւն և պաշտօն աստուա-
ծային ընծայի անձին Քրիստոսի, չինայ տեղի տարա-
կուսելոյ՝ թէ արդեօք ընծայելի էր երկրպագութիւն
մարդկութեանն Քրիստոսի: Այլ որք միանգամ այ-
ցելեցինն զողջամիտ վարդապետութիւն զերկուց բնու-
թեանցն ենթակայապէս միաւորութեան յանձին Բա-
նին, և զհաղորդութեան յատկութեանց երկաքանչիւ-
րոցն, Հարկեցան անկանել և՚ի մերձութիւն զընծայե-
լոյ մարդկութեանն Քրիստոսի պաշտօն աստուածա-
կան: Արդէս ապուշնարիտք, եւտիքականք, նեստորա-
կանք, արդեպրականք, և՚ի նորայանդիոյ՝ վիկլեֆեանք
և սոկինեանք: Ընդդէմ ամենեցուն սոցա ուղղափառ

հաւատք ուսուցանեն՝ զի պարտ է նովին աստուածային պաշտամամբ երկրպագել մարդկային քնութեանն Քրիստոսի ընդ Հանին Աստուծոյ, ընդ որում միաւորեալն է անձնաւորապէս։

Այս վարդապետութիւն սահմանեցաւ ի հինգերորդ տիեզերական ժողովի, դատապարտութեամբ հակառակ վարդապետութեանն։ Նա սուրբ գիրք զնոյն ուսուցանեն, զի սակ առաքեալն. (Եբր. ա. 6.) "Այլ յորժամ միւսանգամ մուծցէ զանդրանիկն յաշխարհ, ասէ. "Երկիր պագցեն նմա ամենայն հրեշտակք Աստուծոյ,, ։ Նա ի հարցանել Քրիստոսի ցկոյրն՝ "Դու հաւատաս յորդին Աստուծոյ,,. Պատասխանեաց՝ "Տա՛ր տեր, և երկիր եպագ նմա,,. (Յհ. թ. 35)։ Նա աշակերտքն իբրև տեսին զնա յետ յարութեան նորա, "Երկիր պագին նմա,,. (Մտթ. իը. 18)։ Այլ զայս երկրպագութիւն չարք առհասարակ լմանան պաշտօն աստուածային, և ի դէմ ածեն ապուխնարէանց, և հաստատեն միաբան զայս վարդապետութիւն։

Պետրոս ասէ. "Անդէպ է և մարմինն այն ըստ ինքեան մահ է արարածոց, այլ Աստուծոյ եղև մարմին. և ոչ զայդպիսի մարմին ըստ ինքեան քաժանելով՝ ի ձեռն Հանին երկիր պագանեմք, և ոչ՝ Հանին երկիր պագանել կամելով՝ հեռացուցանեմք զնա ի մարմնոյն, այլ գիտելով զՀանն մարմին եղև՝ զսա և ի մարմնի եղեալ Հանաչեմք Աստուած. արդ ո այնպէս լիմար էր, որպէս զի ասել տեառն. ի քաց կաց ի մարմնոյդ, զի քեզ երկիր պագից,,։

Աստուածաբանն. "Որ որ ոչ երկիր պագանիցէ խաչելոյն, նզովեալ լիցի և ընդ աստուածասպանս կարգեսցի,,։

Կիւրեղ. "Երկիր պագ Աստուծոյ միոյ, ոչ քաժանելով յերկուս յետ միաւորութեանն,,։

Քրոսիոս. "Ոչ քաժանեալ, այլ մի. և ոչ յորժամ երկրպագէրն իբրև որդի Աստուծոյ, չՀանաչէր ծնեալ ի կուսէն,,։

Գռոսիոս. "Ոչ որ զմարմինն զոյն Հաշակէ, առանց նախ երկրպագելոյ... ոչ միայն չմեղանչեմք երկրպագելով, այլ չերկրպագելով մեղանչեմք,,։

Յոհան պատմակոյն. "Երկաքանչիւրոց քնութեանցն

Քրիստոսի, վասն միաւորելոյ մարմնոյն ընդ աստուածութեան, երկիր պագանեմ։

Եւ Հայաստանեայց եկեղեցի երգէ. "Քանզի մարմինն, որ ի մէնջ էառ, ի հրեշտակաց երկրպագութիւն առնու ի սրովբէից և ի քրովբէից"։

Ապա խնդիրք են մնոտիք ոմանց աստուածաբանից զանազանել մտօք զմարդկութիւնն Քրիստոսի յաստուածութենէ, և վիճել թէ արդեօք օրէն էին ըստ այսմ՝ գերյարգութիւն ևեթ ընծայել նմա մտաւոր. զի ոչ մարմին և ոչ մարդկութիւնն Քրիստոսի կարեն կալ առանց աստուածայնոյ անձինն, ընդ որում միաւորեալ են անձնաւորաբար։ Եւ սուին մտօք ուղղափառապէս ասի մարմինն Քրիստոսի և մարդկութիւնն աստուածացեալ. ըստ որում ասէ Աթանաս (ի ճառն ծն.) "Անկեալ Աստուած հանդերձ առեցելովն. յորոց միոն աստուածացոյց, և միան աստուածացաւ"։ Եւ ի շարականի. "Օ անեղական զաստուածացեալ մարմինն պատեալ սուրբ կտաւօք, և եղ ի գերեզմանի". այսինքն զմարմինն Աստուած միաւորեալ, յաստուածայնութիւն վերառեալ, աստուածային եղեալ։

Վարձեալ գիտելի է, զի Թէպէտ և ասեմք ևս ըստ մարմինն Քրիստոսի բնաւարան աստուածութեան իւրոյ և Տէրն աստուածէր, այլ ոչ և Տէրք աստուածէին. քանզի Հայր, մանաւանդ մերքս, զանազանեն ընդ մարմին և ընդ մարդ, և զգուշանան յասելոյ Տէրք աստուածէին, զի դիւրաւ է աստի նեստորական խմաստից ի վեր երևել։ Այս զանազանութիւն անցեաւ և զքաջին Պետրոսի ներշնչեաւն գիտողութիւն, Թերևս ի յաստուածութենէ լսեալն բարբառոյ՝ յորում սովորութիւն ևս է ասել Հոգին աստուածային, մանուկ աստուածային և այլն, որ առ մեզ ասի Հոգին Աստուած, մանկացեալն Աստուած և այլն. և մանաւանդ ասել Հաւատոյ Divinus homo այսինքն աստուածային Տէրք, զոր անմարթ է մեզ ասել, այլ ըստ մեզ և ըստ Հաւատոյ ասի աստուածամարդ, Աստուած Տէրդացեալ, ևս և Տէրդ աստուածացեալ, որպէս ի վեր անդր ցուցաք. (գլ. Է. յօդ. Ը)։

ԳԼՈՒԽ ԺԳ

ՅԱՂԱԳՍ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Իշխանութիւնք կամ փառաց անուանք ընծայեալք Քրիստոսի՝ ի տուրբ գրոց, և ոչք յանձնաւորական միաւորութենէ երկուց բնութեանցն զան յառաջ, են գլխաւորապէս այսոքիկ. Գլուխ մարդկան և հրեշտակաց, Փառաւոր և Տէրտէրութ, Բահանայ և Արքայութ։ Զորեքեան առաջինք ընդունելի են ամենեցուն. երկուցունց յետնոցն զգեմ ունին սակինեանք։

Քրիստոս գլուխ կոչի մարդկան և հրեշտակաց. մարդկան՝ զի՝ ի հոգիս նոցա ազդէ ներգործական և արքայական շնորհօք, զի զմարմինս նոցա կենդանի առնելոց է, և զի հոգւոց և մարմնոց նոցա յաւիտենական երանութիւն իւրեւ շնորհելոց։ Նոկ հրեշտակաց՝ զի ասէ առաքեալն (Կող. ա. 16.) "Ո՛ի նովաւ հաստատեցաւ ամենայն, եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք, եթէ իշխանութիւնք,,։ Եւ դարձեալ (Եփես. ա. 20.) "Ո՛ի յարոյց զնա՝ ի մեռելոց, և նստոյց ընդ աջմէ իւրմէ յերկնաւորս՝ ի վերոյ ամենայն իշխանութեան և պետութեան... և զնա եդ գլուխ՝ ի վերայ ամենայն իրինք եկեղեցւոյ,,։ Եւ դարձեալ (Եբր. ա. 14.) զի նոքա "Հոգիքն՝ ի սպասաւորութիւն վասն այնոցիկ, որ ժառանգելոցն են զփրկութիւն,,։

Աղբիւր և Թագաւոր, որպէս հրեշտակին ասաց գՅովհան տուրբ. (Ա Յ. ա. 33.) "Ածից՝ ի վերոյ տանն Յակովբայ՝ ի յաւիտեան, և Թագաւորութեան նորա վախճան մի լինի,,։ Եւ ամենայն ժողովուրդն վկայեաց աղաղակաւ. "( )րհնեալ որ գայդ յանուն տեառն Թագաւորութիւնդ եկեալ հօր մերոյ Դաւթի,,. (Մտկ. ժա. 10)։ Եւ դարձեալ՝ ի հարցանելն Պիղատոսի թէ դո՞ւ ես Թագաւորն Հրէից, հաստատական ետ պատասխանի Քրիստոս՝ թէ "Դու ասես թէ Թագաւոր իմեմ,,։ Ի սմանէ որոյ և նոյն ինքն Պիղատոս հանդիսիւ և հրապարակաւ ածեալ զնա՝ ի բեմ յուրգասեան զատկին, յայտ ասաւ զնա յանդիման ամենայն ժողովրդ-

պետն Թագաւոր նոցա. և տախտակ ևս գրեալ եդ՝ի վերայ խաչին՝ "Յիսուս նազովրեցի Թագաւոր Հրէից,, (Յհ. ԺԹ. 19):

Իշխանութիւն դատաւորութեան իրաւունք են Թագաւորի, վասն որոյ ինքնին իսկ ասէ. (Յհ. Ե. 22.) "Ո՛ ամենայն դատաստան ետ (Հայր) Որդւոյ իւրոյ... և՛ իշխանութիւն ետ նմա դատաստան առնել,: Նա առաքեալսն ասէ. (գործ. Ժ. 42.) "Նա է սահմանեալն Յ՛աստուծոյ դատաւոր կենդանեաց և մեռելոց,:

Վասն քահանայութեանն Քրիստոսի ասեն սակնեանք յետ համբարձմանն սկսեալ զայն յերկինս. վասն որոյ զնաց նորա՛ի խաչին ոչ համարին պատարագ, այլ պատրաստութիւն պատարագին՝ զոր յերկինս մատոյց և մատուցանէ միշտ վասն մարդկան: Նա զայս այսպէս ասեն՝ առ՛ի հոլովել Հանապարհ մելքուսեթեանն իբրեանց, թէ Քրիստոս ոչ արար հատուցումն մեղաց մերոց, այլ որպէս հրեշտակ պատգամաւոր և իրաւարար եկաց հաշտութեանն Յ՛աստուծոյ ընդ մարդիկ:

Ընդդէմ չարաչար մելքուսեթեանս ուղղափառ հաւատք ուսուցանեն զՔրիստոսի Հշմարիտ քահանայութիւնն, և ա՛ռ՛ի կեանս յայս. զոր և ժողովն տրիպեան հաստատեաց ըստ բանից սուրբ գրոց: Զ՛ի Գաւիթ ասէ զինամանէ (սղմ. ՃԺ. 4.) "Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի,: Նա առաքեալն ոչ միայն զայս պատգամ մարգարէին յարէ՛ի Քրիստոս, այլ և բացատրէ՝ ըստ որմէ իրաց էր Մելքիսեդեկի կալն օրինակ Քրիստոսի. այսինքն ըստ անժամանակ ծննդեանն, ըստ միանձնաւոր տեառութեանն, և ըստ լինելոյ պատճառ օրհնութեան համօրէն աբրահամեան ազին, և թէ քանի գեր՛ի վերոյ քան զահարոնեանն է Քրիստոսի քահանայութիւնն. (Եբր. Ե և է):

Նա յետ յուցանելոյ զերկուսին զլխաւոր մասունս քահանայութեան զպատարագ և զմիջնորդութիւն, յաւելոյ՝ "Զ՛ի ամենայն քահանայապետ՛ի մարդկանէ առեալ, վասն մարդկան կայ յաստուածական կողմն անդր, զի մատուցանէ պատարագս և զոհս վասն մեղաց,,, ցուցանէ և ևս՝ զի Քրիստոս զերկուսին ևս զայսոսիկ պաշտամունս քահանայութեան՝ աստուածն սկսաւ՛ի կեանս իւր կատարել:

Եւ նախ վասն մատուցման պատարագին ասէ. (ԺԲ. 11.) "Զի Վրիատոս եկեալ քահանայապետ հանդերձելոցն բարեաց մեծաւն և կատարելոյնն և անձեռագործ խորանաւ, այսինքն ի ոչ յայսց ստեղծոց, և ոչ արեամբ նոխազաց և զուարակաց, այլ իւրով սեռեամբն եմուտ միանգամ 'ի սրբութիւնն յաւիտենական գտեալ վիրկութիւն, Օ՛ի եթէ արիւն ցլուցն և նոխազաց և մնիկը երինջոյն ցանեալ՝ զպղծեալսն սրբեաւ 'ի մարմնոյ սրբութենէ, ո՛րչափ ևս առաւել արիւնն Վրիատոսի՝ որ 'ի ձեռն Հոգւոյն յաւիտենականի մատոյց զանձն անարատ պատարագ Աստուծոյ՝ սրբեսցէ զխիղճ մատց ձերոց 'ի մեռելոտի գործոց անտի, պաշտաել զԱստուած կենդանի ,,:

Ասովք առաքեալն համեմատէ զհին օրինաց քահանայապետն ընդ Վրիատոսի՝ նորոց օրինացս քահանայապետի: Օ՛ի որպէս նա ամի ամի օրինական զենմամբքն մտանէր 'ի սրբութիւն սրբութեանցն, մատուցանել պատարագ արեամբ զոհիցն՝ զոր զենոյր, այսպէս և Վրիատոս զենեալ 'ի վերայ խաչին՝ եմուտ յերկինս, մատուցանել զարիւն իւր 'ի նուէր: Եւ որպէս անդ 'ի հնին օրէնս քահանայապետն իսկապէս մատուցանէր պատարագ՝ զգլխաւոր պաշտօն քահանայութեանն կատարելով, այսպէս և Վրիատոս ըստ առաքելոյն՝ արեամբն իւրով 'ի խաչին մատոյց Աչմարիտ պատարագ, զգլխաւոր պաշտօն քահանայութեան իւրոյ 'ի կեանս յայս կատարելով, այսինքն չէ մտեալ յերկինս՝ մատուցանել զարիւն իւր 'ի նուէր:

Եւ յառաջ ածեալ առաքելոյն զբան իւր, ասէ. "Օ՛ի ոչ եթէ 'ի ձեռագործ սրբութեան եմուտ Վրիատոս յօրինակս Աչմարտութեանն, այլ 'ի բուն իսկ յերկինս ... ոչ զի բազում անգամ մատուցանիցէ զանձն պատարագ, որպէս քահանայապետն՝ որ մտանէր 'ի սրբութիւն սրբութեանցն ամի ամի արեամբ օտարութ. ապա թէ ոչ, պարտ էր նմա բազում անգամ չարչարել 'ի սկզբանէ աշխարհի: Այլ արդ առաքիկ մի անգամ 'ի կատարած յաւիտեանց յանարգութիւն մեղաց իւրով պատարագաւն յայտնեալ է. և զոր օրինակ կայ մեզ մարդկան մի անգամ մեռանել, և յետ այնորիկ դատաստան, նոյնպէս և Վրիատոս մի անգամ մատուցեալ պատարագ առ 'ի բառնալոյ զմեղս բազմաց ,,:

Պատուիրեսցես Հրէից զի բերցեն առ քեզ իւղ ձիթենի սուրբ, անմեղ, զատեալ ի մեղաւորաց, և բարձրացեալ քան զերկինս ,, . (ԵՓՐ . Է . 27 .) որ անձամբ զանձն մատոյց պատարագ քաւութեան վասն մեղաց ժողովրդոց : Եւ պատարագին նորա պինդ անբաւ ըստ մատուցելոյն և ըստ մատուցողին . վասն զի ինքն է որ մատուցանէ , և ինքն որ մատչի՝ զենեալ ի սէր մեր , որպէս առաքեալն ասէ . “ Սիրեաց զմեզ , և մատնեաց զանձն իւր վասն մեր պատարագ և զենումն Աստուծոյ ի հոտ անուշից ,, . (ԵՓԵՈ . Ե . 2) : Ամենագամ և եւթ մատոյց զանձն պատարագ . այլ քանզի յաւիտեան կեաց , յաւիտենական է և քահանայութիւն իւր , որպէս ասէ գարձեալ նոյն առաքեալ . “ Վասն յաւիտեան կենդալոյ , առանց անցանելոյ ունի զքահանայութիւնն ,, . (ԵՓՐ . Է . 24) :

Այնպա և Հնձարիտ միջնորդ : Մինչեամիք էաք մեք Աստուծոյ , զատեալք յԱստուծոյ մեղօք . Հրիստոս մերձեցոյց զմեզ առ Աստուած , հաշտեցոյց զերկինս ընդ երկիր , զարարիչն ընդ արարածին : “ Ով ի մի է Աստուած , ասէ առաքեալն (ա . Տիմ . բ . 5 .) և մի միջնորդ Աստուծոյ և մարդկան՝ մարդն Յիսուս Հրիստոս , որ եւ զանձն փրկանս ընդ ամենեցուն ,, : Եւ գարձեալ “ Ով ի մինչ Թշնամիքն էաք , հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ որդւոյ նորա ,, . (Հռ . Ե . 10) : “ Ով ի՝ ինձանէ հաձեցաւ ամենայն լրումն աստուածութեանն բնակել , և նովաւ հաշտեցուցանել զամենայն ի նմին . արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ , որ ինչ յերկրի և որ ինչ յերկինս : Եւ զձեզ , որ երբեմն օտարացեալն էիք և Թշնամիք խորհրդով ի գործս չարութեան , այժմ աւաղիկ հաշտեցոյց անդամոք մարմնոյ իւրոյ ի ձեռն մահուան իւրոյ՝ յանդիման կացուցանել զձեզ սուրբս և ամբիծս և անարատս առաջի նորա ,, . (Կող . ա . 19) : “ Ով ի նովաւ ունիմք զնուաձութիւն երկոքին միով Հոգւով առ Հայր ,, . (ԵՓԵՈ . բ . 19) : “ Աստի և կենդանի առնել համօրէն կարօղ է զմատուցեալսն նովաւ առ Աստուած . քանզի միշտ կենդանի է՝ լինել բարեխոս վասն նոցա ,, . (ԵՓՐ . Է . 24) : “ Ատիոք այսուհետև հաստատակութեամբ առաջի անտուոյ շնորհաց նորա , զի ընկալցուք զողորմութիւն , և գտցուք շնորհս ի դէպ ժամանակի օգնականութեան ,, . (ԱՒԳ . Ղ . 16) :

Նայց ՚ի միջնորդութեան յայսմիկ պարտ է զանազանել զանձն միջնորդին և զգործ միջնորդութեանն։ Արդ զվաստակս միջնորդութեանն եդ՝ մարդկային բնութիւն Նանկին՝ որում միայնոյ մարթէրն չարչարիլ և մեռանել և առնել հատուցումն. իսկ բնութիւնն կամ անձն աստուածային զվաստակս միջնորդութեանն քաւականացոյց ՚ի հատուցումն՝ անհուն և անբաւ զգինս նոցա կացուցանելով և զարժանիս։ Յորմէ յայտ է զի ոչ որպէս Արիանոսք ասեին, Քրիստոս իբրև Աստուածն եւեթ եկաց միջնորդ հաշտութեան, և ոչ որպէս սոկինեանք ասեն՝ իբրև մարդ եւեթ բաւական լեալ, զի ոչ ընդունէին զաստուածութիւն նորա, այլ որպէս ուղղափառ հաւատք ուսուցանեն՝ իբրև Աստուած և մարդ։

ԳԼՈՒԽ ԺԴ

ՑԱՂԱԳՍ ՎԱՍՏԱԿՈՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ Ի ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՄԵՂԱՑ ՄԱՐԴԿԱՆ

Հատուցմամբ իմանալիք զիմոխարէնս, զոր պարտ էր հատուցանել արդարութեանն Աստուծոյ ընդ թշնամանացն՝ զոր մեղք մեր արարին նմա, առ ՚ի գտանել մեզ դարձեալ շնորհս ՚ի նմանէ։ Արդ սուրբ հաւատք ուսուցանեն մեզ, զի Քրիստոս փրկիչն մեր արար լուծ զհատուցումն մեզաց մերոց, զանձն իւր տուեալ ՚ի փրկանս։ Ոմն ըստ Նասայեայ (ծՂ. 3.) “Նա զմեզս մեր բարձեալ ըստ անձին, և վասն մեր չարչարեցաւ. վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց, և պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց, և նորա վէրօքն բժշկեցաք. և առն մանանեաց զնա առ մեզս մեր ,,։ Նա ինքն փրկիչն մեր ասէ. “Ոչ մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց ,,. (Մտթ. ի. 28)։ Նա առաքեալն ասէ. (հռ. Ե. 8.) “Յայտնեաց Աստուած զսէրն իւր ՚ի մեզ. զի մինչդեռ մեղաւորքն էաք, Քրիստոս վասն մեր մեռաւ. որչափ ևս առաւել յարդարանալս մերում այժմիկ ապրեսցուք նորա, ապրեսցուք նովաւ ՚ի բարկութենէ անտի։ Որ եթէ մինչ թշնամիքն էաք, հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ որդւոյ նորա, որչափ ևս առաւել

'ի հաշտելս մերում ասլրեսցուք կենօքն նորա։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և պարծիմք ևս Յ'ստուած 'ի ձեռն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով և զհաշտութիւնն ընկալաք ,,։ Եւ դարձեալ՝ (Բ. Կոր. Ե. 14.) "Եթէ մին փոխանակ ամենեցուն մեռաւ, ապա ուրեմն ամենեքեան մեռեալ էին, և 'ի վերայ ամենեցուն մեռաւ. զի որ կենդանիքն իցեն, մի անձանց իցեն կենդանիք, այլ այնմ՝ որ 'ի վերայ նոցայն մեռաւ և յարեաւ։... Եւ ամենայն ինչ Յ'ստուծոյ, որ հաշտեցոյցն զմեզ ընդ իւր 'ի ձեռն Քրիստոսի։... Ո՛վ 'ի զայն՝ որ ոչն գիտէր զմեզս, վասն մեր մեղս արար, զի մեք եղիցուք նմաւք արդարութիւն Յ'ստուծոյ ,,։ Եւ դարձեալ (Եփես. Ե. 2.) "Քրիստոս սիրեաց զմեզ, և մատնեաց զանձն իւր վասն մեր պատարագ և զենուումն Յ'ստուծոյ 'ի հոտ անուշից ,,։

Եւ առաքեալսն ասէ. (Ա. Կոր. Ա. 18.) "Եղէ ապականացու արծաթեղինօք և ոսկեղինօք փրկեցաք 'ի ձերոց ունայնութեան հայրենատուր գնացիցն, այլ պատուական արեամբն Քրիստոսի... Եղ զմեր մեղսն իւրով մարմնովն վերացոյց 'ի խաչափայտն, զի լիցուք զերծեալք 'ի մեղաց անտի, և իցեմք արդարութեան կենակիցք, որոյ վիրօքն բժշկեցաք ,,։

Այս ամենայն, և որ սոցին սակի բանք առաքեալ գրոց, քաջայայտ առնեն՝ զի ոչ որպէս սովինեանքն բաջալեն՝ վարդապետութեամբն Եւեթ և օրինակաւ եղև Քրիստոս՝ փրկիչ մեր, այլ զի որպէս գաւանեմքն 'ի հանգամանակին, և որպէս Հայք առհասարակ վարդապետեն, արար նա իսկապէս հատուցումն վասն մեղաց մերոց՝ մատուցանելով Հօր Յ'ստուծոյ զանձն 'ի վերայ խաչին 'ի փրկանս աշխարհի։ Եւ որպէսզի Հայք և ժողովեն արիոգենտեան ուսուցանեն, այս Հշմարիտ հատուցումն առաւելումն իսկ փոխարինեաց արդարութեանն Յ'ստուծոյ զիշնամանս մեղաց մերոց. որպէս զի "Որ առաւել եղեն մեղքն, առաւել ևս յաւելան շնորհքն ,, ըստ առաքելոյն. (Հռ. Ե. 20)։ Ո՛չ 'ի եթէ առաւելութիւն հատուցման յարժանաւորութենէ հատուցողին է, ասա Քրիստոս է հատուցողն, ոչ իբրև մարդ միայն՝ այլ և իբրև Յ'ստուած և որպէս Յ'ստուծոյ, որոյ անհուն են արժանիք։

Իսկ որ ինչ վաստակոցն Քրիստոսի են արդասիք վասն մեր, զայնցանէ՝ ի ստոլև ասասցուք՝ ի Հառս ընծայ: Օ՛ի յետ անկման մարդկութեանս՝ ամենայն ընծայք՝ ի ձեռն Քրիստոսի վաստակոցն և արժանեաց պարգևին մեզ, որպէս աւետարանիչն ասէ. (Յհ. ա. 16.) "Օ՛ի՝ ի լրութենէ անտի նորա մեք ամենեքին առաք ընծայս փոխանակ ընծայից": Եւ որպէս առաքեալն ասէ (Հռ. ը. 24.) "Ամենեքեան մեղան, և նուազեալ են՝ ի փառաց անտի Աստուծոյ, և արդարացեալ ձրի նորին ընծայօք":

Ա Ո Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Ընդ ա. — ա. Ի փրկելոյ զմեզ Քրիստոսի ոչ ըզհետ պայ, զի իսկապէս Հաստուցումն արարեալ էցէ նորա վասն մեզաց մերոց. քանզի ոչ է պարտ Աչդիւ իմանալ զէրխոնէն, որպէս և օրինակ փրկութեանս մերոյ՝ ազատութիւն յեգիպտական և՝ ի բաբելոնական գերութենէն՝ էրխոնէն կոչի. — բ. Օ՛ի որպէս ձրի վաճառեալ էր մարդկութիւնս սատանայի, նոյնպէս և ձրի փրկեցաւ. քանզի դին և վաճառ համեմատ պարտին դալ իրերաց: Ընդ որ թէ ոչ, պարտ էր Քրիստոսի զգինս փրկութեան մերոյ հատուցանել սատանայի՝ որ գերի ունէր զմեզ, ըստ բանից առաքելոյն. (Ը. Տիմ. ը. 26):

գԽ. — ա. Ի փրկութեանն, զոր արար Քրիստոս, են ամենայն պայմանք Աչմարիտ փրկանաց. վասն որոյ ամենայն Աչդիւ պարտ է իմանալ զբառդ էրխոնէն: Քանզի առ Աչմարիտ փրկանս պահանջի գերի և գերեվար, փրկութիւն և փրկանք: Ընդ ըստ հաւատոց՝ ազգ մարդկան մատնեալ էր՝ ի գերութիւն յաւիտենական. և ունէին զնա՝ ի գերութեան՝ Աստուած իբրև գերապետն գաւառի, և սատանայ իբրև գահիճ նորին, մեղքն որպէս կապանք, և դժոխք որպէս բանտ. և փրկիչ եղև Քրիստոս, փրկանս զարհուն իւր տուեալ՝ որպէս վկայէ առաքեալսն. (Ա. Կոր. Ա. 19): Եւ քանզի այս ամենայն չէք՝ ի փրկութենէն սատանայական խարեբայութեան ազգին, ապա չէք և հանգիստութիւն ընդ նոսա և ընդ Աչմարտութիւն:

— ԲԴ. Պարտ էիցէ ոք անձամբ զանձն ի խորհուրդս արկանել, այլ ի վեր եկանել անտի ոչ ևս. այսպէս և առգ մարդկան ձրի ի ձեռս քահանայութիւն մատնեցաւ, այլ ազատութիւն նորա ոչ ևս մարթէր առանց փրկչի և փրկանաց։ Եւ փրկանք նման են անկ՝ որ ունի իրաւունս ի վերայ գերւոյն, և ոչ պաշտօնէից և կալանաւորաց՝ որ ի հրամանէ տեառն գերւոյն ունին զնա ի կապանս, որպիսի է դևն զհիճ Սատանայ և պահակ դժոխոց։

Ա՛ՒԱՐԿ. ԲԴ—ԻԱ. Անմարիտ հատուցումն անհնարին է ի կողմանէ Սատանայ, ի կողմանէ Քրիստոսի, և ի կողմանէ մարդոյ։ Նախ ի կողմանէ Սատանայ. զի սուրբ գիրք ձրի ասեն արարեալ Սատանայ զթողութիւն մեզ, ըստ առաքելոյն (Հռ. Գ. 24.) "Արդարանան ձրի նորին շնորհօք,,։ Արդ ձրի թողութիւն և ձրիտ հատուցումն չիարեն կալ ի միասին. զի պահանջել հատուցումն ի պարտապանէն այսինքն ի մարդոյ, և յերաշխաւորէն այսինքն ի Քրիստոսէ, հաւասար է. զի միշտ պահանջումն և հատուցումն կայ ի միջի, վասն որոյ և չէ շնորհ։ — ԲԹ. Անհաւանդ զի և ինքն Քրիստոս ի Հօրէ, այսինքն ի պարտատեառնէն, շնորհեցաւ մեզ. զի յորժամ պարտատէրն ինքն տայ պարտապանին զրաման առ ի հատուցանել նմանաւ զպարտս իւր, հաճելի թողուլ զպարտսն քան պահանջել հատուցումն։ — ԻԲ. Նա չէ մարթ ասել՝ թէ Սատանայ չիցէ կամեցեալ և կամ չիցէ կարացեալ ձրի թողուլ զմեզ. զի առաջինն հակառակ է ողորմութեանն Սատանայ, երկրորդն ամենակարողութեան նորա։

ՊԵ. — ՃԱ. Սուրբ գիրք ձրի ասեն արարեալ Սատանայ զթողութիւն մեզ ոչ ի մարդիկ, այլ ոչ ի Քրիստոս՝ որ երաշխաւոր եկաց նոցա, յանձն առեալ հատուցանել վասն մեզ նոցա. և զայս բացայայտէ անդ առաքեալն ասելով. "Արդարանան ձրի նորին շնորհօք ի ձեռն փրկութեան՝ որ ի Քրիստոս Յիսուս, զոր յառաջն եդ Սատանայ ի քաւութիւն ի ձեռն հաւատոյ արեանն նորա, ի հանդէս արդարութեան նորա,,։ Այլ ձրի է թողութիւն մեզ, այլ ի ձեռն փրկութեան և արեանն Քրիստոսի։ Ոչ ի ձրի թողութիւն և չիմարիտ հատուցումն չիարեն կալ ի միասին

՝ի նմին անձին. այլ աստանօր այլ է անձն՝ որ հատուցանէ, այսինքն է Քրիստոս, և այլ՝ որում ձրի թողանին մեղքն, այսինքն մարդ։

— ե. Հաւասար է պահանջել զհատուցումն՝ ի պարտապանէն կամ յերաշխաւորէ՝ ի նիւթական պարտս, այլ ոչ և յանձնականս. զի՝ ի սմա թէ հնաւանեաւն կարէ՝ ի բաց մերժել զամենայն հատուցումն որ չկայ՝ ի թղթատումանողէն հատուցեալ։ Այլ զի մեք անբաւականք ամենևին էաք հատուցանել Աստուծոյ. պարտիմք գոհանալ զնմանէ՝ զի ընդ պարտեաց մերոց ընկալաւ զերաշխաւորութիւն Քրիստոսի, և վասն արժանեաց վաստակոյ նորա զերծոյց զմեզ՝ ի հատուցմանէ, չնորհեալ մեզ ձրի զպարտս մեր։

Պարտատէր՝ որ տայ դրամս պարտապանին առ՝ ի հատուցանել զնիւթական պարտս իւր, համարի ընդհէլ նմա թողութիւն, այլ ոչ և հատուցողին զիմոխարէնն անարգանացն՝ որպէս յայտ է յառակելոյս զանձնական պարտուց։

— զ. Կամէր և կարէր իսկ Աստուած ձրի թողութիւն առնել մեզաց, այլ կամք եղեն նմա ընդ ողորմութեան և ընդ ամենակարողութեան իւրում՝ հանդէս առնել և արդարութեան իւրոյ։ Կարէր ձրի ամենևին թողուլ զմեզս, կարէր և հատուցումն՝ ի թշնամանողէն պահանջել. այլ արար ողորմութիւն ընդ արդարութեան. վասն մեր ողորմութիւն, վասն Քրիստոսի արդարութիւն. որպէս զի երկոքին և աստուածային ստորոգելիք՝ ի փրկագործութեան անդ յաղթականակեսցեն։

Առակ. գ. — ա. Ձշմարիտ հատուցումն անհնարին է դարձեալ և՝ ի կողմանէ Քրիստոսի։ Քանզի անհրաւէր է զանմեղն փոխանակ մեղուցելոյն պատուհասել. զի ընդդէմ է ոչ միայն բանի և մարդկային օրինաց, այլ և աստուածայնոց, զի ասէ Աստուած. (Ել. օր. իզ. 16)։ Ամի մեռցին հարք ընդ որդւոց, և ամի որդիք մեռանիցին ընդ հարց. իւրաքանչիւր զի՝ ի մեղս իւր մեռանիցի,,։ Եւ՝ ի ձեռն Եզեկիէլի ասէ. (ԺԸ. 20.) "Ընձն որ մեղիցէ, նոյն և մեռցի, և ամի հայր առցէ զանիրաւութիւնս որդւոյ իւրոյ,,։ — բ. Եւ դարձեալ պարտ է ասել՝ զի Քրիստոս անձամբ անձին հա-

տուցանէր, որ է անտեղի, իբրև զայրացեալ ընդ մէկ և հաշտ. զայրացեալ՝ վասն մեղաց, հաշտ՝ հատուցումն առնելով վասն մեր. և ըստ այսմ առաւել պարտապան գտանիցաք Աղուժ՝ որ չհատուցումն զայն առնէր, քան Նօր՝ որ պահանջէրն զայն: — ԳԼ. Եւ զարձեալ Վրիհատոս ոչ փոխանակ մեր մեռաւ, այլ վասն տալոյ մեզ օրինակ, որպէս առաքելապետն ասէ. (ա. կոր. ը. 21.) "Օ՛ր Վրիհատոս վասն ձեր մեռաւ, և ձեզ եթող օրինակ, զի զհետ երթայցէք հետոց նորա,,:

Պէ. — ա. Ընդէրաւ է զանմեղն փոխանակ մեղուցեալն պատուհասել, եթէ չէիցէ լեալ երաշխաւոր մեղուցելոյն. քայց Վրիհատոս կամակալ և ազատօրէն էառ զմեղուցեալքս յերաշխի:

— բ. Վրիհատոս մարդկային բնութեամբն իւրով առաքեալ զհատուցումն, այնու՝ որով և հնազանդեցաւն և ջարչարեցաւ և արժանաւորեցաւ. և հատոյց իւր՝ որպէս միւսմ յանձանց սրբոց Աստուածութեան՝ որ թէնամանեալն էր, և նոյն անձն առեալ բնութեամբն առաքեալ հատուցումն սրբոց Աստուածութեան. յորում չէր ինչ անտեղութիւն: Զատ այսմ է իմանալ և զքայրացումն և զհաշտութիւն, այսինքն զատ այլ և այլ տեսութեան. և ոչ զհետ գոյ մեզ աստի առաւել պարտականութիւն առ Աղուժ քան առ Նայր. զի երբեմն իսկ անձինք սրբոց Աստուածութեան հատասարապէս կամեցան զփրկութիւն մեր, բայանգակ Աստուածութեանն կամելով զմարդեղութիւն Բանին: Բանն Աստուած իբրև մի յանձանց Աստուածութեան, իբր Աստուած որպէս զայլն, ոչ ինչ կրեաց. այլ մարդկութիւնն Վրիհատոսի ենթակայեալ՝ ի Բանն՝ կրեաց զամենայն մարդասիրապէս, որում և պարտապանքս եմք վասն փրկութեան մերոյ:

— գ. Իսկ առաքելապետին բան՝ ոչ՝ ի բաց տանի զբուն պատճառս մահուն Վրիհատոսի, որ է փրկութիւն մեր. զոր և՝ ի նմին Թղթի (ա. 18.) բացատրէ, "Եւ ապականացու արծաթիւ եղինաք,, և այլն. որպէս և բազում ուրեք յեղյեղեն սուրբ գիրք: Այլ բազում այլ ևս պատճառք էին մահուանն Վրիհատոսի, յորոց մի և այն էր՝ զոր առաքելապետն պատշաճէ կարգի բանիցն իւրոց:

Ա. Ա. Ե. Ի. Դ. — Ե. Ձշմարիտ հատուցումն անհնարին է, զեթ ի կոշմանէ մարդոյ. քանզի պարտ էր Քրիստոսի այնչափ մահուընս կրել, որչափ են մարդիկ. և զարձեալ՝ ոչ ժամանակաւորս եւեթ տանջանս կրել այլ և յաւիտենականս. զի երկաքանչիւրոյն ևս պարտաւոր էին մարդիկ։ — Բ. Պարտ էր զարձեալ հատուցմանն այնուիկ՝ազատ յամենայն պատժոց գոլ մարդկան, զոր գործ ոչ ընդունիք։ — Գ. Ազատ և յազեցից կենցաղոյս պարտ էր նոցա գոլ՝ և ի մահուանէ խակ։ Պարտ էր և հատանել ամենեցուն վրկութեան, զոր ոչ ոք ընդունի։

Պէտ. — Ե. Պարտ էր Քրիստոսի քաղցր մահուընս ճառանել, եթէ միանգամ ճառանելոյ նորա չէին անհուն արժանիք։ Նայց քանզի փրկանք մատուցեալք վասն մեր ի Քրիստոսէ էին անպինք, նովին խակ ամենայն պարտեաց ազգի մարդկան առ Աստուած եղև հատանգամայն հատուցումն, ժամանակաւորացն և յաւիտենականաց։ Այս է՝ զոր առաքեալն ասէպ յերկեղել, զի «Քրիստոս միանգամ եւեթ մատոյց զանձն վասն քաւելոյ զմեղս բազմաց, զի միով մշտնջենաւոր պատարագաւ կատարեաց զսրբութիւնն ամենեցուն, և զի ի վերայ ամենեցուն ճառաւ միանգամ՝ այլ ըստ գօրութեան կենացն յաւիտենից, ուստի և կենդանի առնել համօրէն կարող է զմատուցեալսնոսա առ Աստուած»։

— Բ. Այլ է հատուցումն, և այլ՝ հատուցումն զայն ի կիր առնուլ։ Ո՞ առաջինն ոչ ոք բաց ի Քրիստոսէ բաւական էր մատուցանել, և ինքն միայն մատոյց. խակ զերկրորդն իւրաքանչիւր ումեք պարտ է առնել։ Վասն զի Քրիստոս զդեղն հատարակաց ազգի մարդկան պատրաստեաց, խակ առնուլ զայն՝ իւրաքանչիւր ումեք է անկ։ Ո՞ի Թէպէտ լուալի է հատուցումն արարեալ ի նմանէ, այլ ոչ լինէ օգնէ մեզ՝ եթէ ոչ յօգուտ ի կիր առնուցումն զնուրհս նորա ի ձեռն սուրբ խորհրդոց, պահպանութեամբ պատուիրանացն Աստուծոյ, և գործովք բարեաց։ Ո՞ այսոսիկ լինքն խակ Քրիստոս պայմանեաց, այն՝ որ եկայն մեզ երաշխաւոր. և այսոքիկ են՝ որ պատակաբար հատուցմանքն կոչին։

— Գ. Պարտ էր հատուցմանքն Քրիստոսի ազատել ազգի մարդկան ի Թշուառութենէ, ոչ սասի կենացս՝

այլ հանդերձելոցն։ Ո՛չ այսպէս կամք եղեն Քրիստոսի՝ կրել մեզ, ցորչափ յաշխարհի աստ կեամք, զաղէտս կենցաղոյս. որպէս զի չարչարանացն իւրոց հաղորդս լեալ, և փառացդ նորա յանխափան արժանաւորք եղիցուք։ Եւ այս իսկ է ըստ Պաւղեղոյ պայմանն, որով իւրաքանչիւր ումեք մարթ է հասանել փրկութեան. "Եթէ չարչարանացն կցորդ լինիմք, և փառացն հաղորդ լինելոց եմք,,. (հռ. ը. 17)։ Քանզի Քրիստոս զկրճինն ևեթ փրկութեան մերոյ եբարձ, որպէս զի ոք կամիցին՝ կարասցեն ՚ի ձեռն ընդհայ իւրոյ հասանել փրկութեան։

ԳԼՈՒԽ ԺԵ

ՑԱՂԱԴՍ ՊԷՍՊԷՍ ՊԱՇՏԱՄԱՆՑ

Պաշտօն է պատիւ ընծայեալ Աստուծոյ, կամ արարածոյ վասն նորա. որ կոչի և երկրպագութիւն, սպաս, կամ յարգութիւն։ Այլ անուանքս այսոքիկ զինչանայկութիւն իւրեանց ՚ի պատուելոյ լրացն առնուն աւելի կամ նուազ. վասն որոյ և անխտիր երբեմն վարին։ Ո՛չ որովհետև պատիւ է նշանակ վերագանցութեան պատուելոյն, ըստ առաւել վերագանցութեան նորա՝ առաւել նշանակէ և պատիւն կամ պաշտօն։ Վասն որոյ պատիւ՝ որ վերագունի Աւին ընծայի՝ է ծայրագոյն, զի է նա առանց համեմատութեան գեր ՚ի վերոյ քան զամենայն արարածս. իսկ արարածոյ վասն նորա, ըստ առաւել կամ նուազ համեմատութեան ընդ նմա, աստիճանաւ ընծայի պատիւ։

Աստաքին նշանք պատուելոյ են խոնարհել զգլուխ, ծունր դնել, երկիր պագանել՝ այսինքն համբուրել ըզգեստին։ Եւդ նոյն իսկ երկրպագութիւն, քան զոր չիք ինչ առ մարդիկ յայտարար առաւելագունի պատուոյ, երկրպագելոյ անտի և ՚ի դիտաւորութենէ երկրպագութեան առնու զչափ։ Որպէս Աբրահամ երկիր եպագ Աստուծոյ և հրեշտակաց և մարդկան, քայց այլ և այլ աստիճանաւ մեծարանաց. և գլխաւորապէս յերիս աստիճանս զանազանի պաշտօն կամ երկրպա-

գութիւն։ Ա՛ռաջինն՝ որ յոնարէն ասի պռա՛քա, և ըստ մեզ յարգութիւն, այն է՝ զոր ընծայեմք սրբոց և հրեշտակաց։ Եւրկրորդն՝ եէէրպռա՛քա, և ըստ մեզ գերյարգութիւն, զոր ընծայեմք Տէրամբն. զի կարգ աստուածամայրութեան անցանէ գեր՝ի վերոյ քան զկարգ առաքելոց։ Իսկ երրորդն՝ լաթրէ՛ա, այսինքն պաշտօն կամ պաշտելութիւն, որ Ա՛ստուծոյ սեփականեալ երկրպագութիւնն է, և յինքն բուսանդակէ գերազանցապէս զյարգութիւն և զգերյարգութիւն։

Գարձեալ և երեքին այսոքիկ աստիճանք պատուոյ կրկնակի զանազանին, անընդմէջ և միջնորդաւ. օրինակ իմն՝ անձն Թագաւորի մեծարի անընդմէջ, իսկ զեսպան նորա կամ պատկեր՝ միջնորդաւ։ Ա՛րդ վասն Ա՛բրահամայ՝ի վեր անդր ցուցաք, զի վայել է նմա պաշտօն աստուածային և երկրպագութիւն անընդմէջ։ Մնայ արդ ասել զսրբոց խաչէն, և ապա զսրբոց պաշտամանէ, զոր ոչ ընդունին նորաղանդք։

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Յաղագս պաշտաման սրբոյ խաչին։

Ա՛րդ խաչն Ա՛բրահամայ, կամ նոյն ինքն խաչափայտն է՝ յոր վրկիչն մեր քաւեաւեցաւ, և կամ պատկեր նորին։ Ա՛մենայն Հաւատացեալք երկրպագութիւն մատուցանէին սրբոյ խաչափայտին՝ զոր եգիտ դշխոյն Հելենէ, որպէս ժամանակակից վկայք մեծարոյք ասացեալ են. զի և զնշխարս նորա՝ի պատիւ ինքնակալին ետ դշխոյն զետեղել, որպէս զի Ա՛բրահամ՝ի Թագաւորս երկրպագութիւն առնուցու, որպէս սուրբն Ա՛մբրոսիոս՝ի Հաւուն յաղագս մահուանն Թէոդոսի ասէ, և որպէս Կիւրեղ Ա՛լեքսանդրեցի՝ի Կոչումն ընծայութեան (Հատ Ժ.) և Ա՛սկեբերան՝ի գիրսն յաղագս աստուածընթեացն Ա՛բրահամայ, և սուրբն Պաւլինոս՝ի Թղթին առ Սուլպիկիոս, և Թէոդորետոս յեկեղեցական պատմութեան իւրում ասացեալն։ Ա՛յնչափ Հռետորիկեայ սարկաւագի ասել (՝ի Տաբենապարանի Նոյ և պիենեայ. էջ 1154.) “Ա՛նեռացան՝ որպէս Ա՛բրահամ հեղուսեալ, և

պատուական խաչափայտին, ընդհանուր ամենայն եկե-
ղեցի՝ առանց ընդ բանս ինչ ածելոյ՝ երկրպագութիւն
մատուցանէ ,,։ Եւ ընդ այս չէն ինչ զարմանք, ուր պատ-
կերայ իսկ նորին, այսինքն նշանայ սրբոյ խաչին, ան-
պղտին յառաջնոյ դարուց երկրպագէին հաւատա-
ցեալք. վասն որոյ և անպանծկինն իսկ զնոսա հե՛թա-
նոսք որպէս երկրպագուս խաչի և խաչապաշտս։ Ա-
կայն եթէ յօձն պղնձի, զոր ուրուատիպ իմն օրինակ
բարձրացոյց Մովսէս յանապատին, հաւատով ակնար-
կէին հարուածեալքն՝ ապրել՛ի խածանող սողնոց թու-
նից. քանիօն առաւել օրէն իցէ հաւատացելոյս երկըր-
պագել մեծապանօք բուն իսկ փրկական խաչին, որոյ
աքանչելագործ զօրութեանն անպատին՛ի սկզբանէ վը-
կայէ եկեղեցի, և պատմիչք ոչ սակաւ նշանս հրաշա-
գործեալ Աստուծոյ աւանդեն՛ի հաստատութիւն այսր
պաշտաման. որպէս և այն՝ զոր Նւսեբի՛ի վարս Կոս-
տանդիանոսի պատմէ, երևեալ նմա զնշան խաչին ընդ
երկինս հանդերձ լուսեղէն տառիւք՝ Ա՛յս-ս յաղթեա։ Եւ
որպէս այն՝ զոր Սոկրատ, Սոզոմենոս, Թէոդորէտոս և
Յուտինոս պատմեն, նշանս խաչի լուսեղէնս՛ի ձորձս
Յրէից երևեալ, ոյք ուրացողին Յուլիանոսի հրամա-
նաւ վերստին զկործանեալ տաճարն Երուսաղէմի կանգ-
նել ձեռնարկէին։

Եւ զանգի ինքն իսկ Վրիստոս նշան իւր կոչէ զայն,
“Եւ երևեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս,,. և զի
նոքաւ փրկեաց զմեզ, և զպատուական արիւն իւր ե-
հե՛ղ՛ի նմա, եկեղեցի սուրբ նկատէ բևեռեալ միշտ՛ի
նմա զՎրիստոս, որպէս երդեմքն իսկ՛ի շարականի.
“Ա՛ինչ բազկատարած առ քեզ Էհն,,։ Եւ յոյս և ա-
պաւէն իւր կոչէ զայն. “Վայտ կենաց կանգնեալ՛ի
մէջ տիեզերաց, յոյս և ապաւէն ազգի մարդկան,,։ Եւ
բանեխոս իսկ ունի զնա առ Ա՛ստուած. “Ի յերկինս
մեզ անբասիրեա բանեխոս, ով սուրբ քառաթև,,։ Ա՛ստ
որոյ և երկրպագութիւն նմա ընծայէ, իբր ոչ ևթէ ն՛ին-
չոյ խաչափայտին՝ այլ որ՛ի նմա բևեռեալոյն Վրիստո-
սի, և կենարար արեանն՝ որ՛ի նմա հե՛ղեալ. ուստի և
առ նոյն ինքն իբրև առ Վրիստոս զմաղթանս իւր ու-
ղղէ. “Վեզ երկրպագեմք, յօդնութիւն մեզ ժա-
մանեա յերկս և՛ի մուտս ... յորժամ յարևելից փայ-

լես անձառ լուսով, ... և զիս լուսաւորեա զիաւուրբեալս մեղօք, և դասակարգեա ՚ի դաս մատենագրի յանձառ երկնից արքայութեանդ ,, : Եւ այլ սոցին սակի մաղթանք եկեղեցականք ամենայն ազգաց ուղղափառաց, որ առ նոյն ինքն Քրիստոս իմանալին ասացեալ :

Ա.յոր աղագաւ և խաչանիշ պատկերաց ընծայեմք յարգութիւն, որպէս ընդ այլ պատկերս լեցին մեզ ՚ի ստուեր զայնմանէ քանք : Ա.յլ աստ յաւելցուք ասել և զխաչակնքութենէ գիմաց, և որ յօրհնութիւնս առեալ առնին առաւնագրութիւնք :

Ա աղեմի յոյժ է սովորութիւնս այս, և Տերտուձիանոս (՚է գէրս պսակին, գլ. ՟Գ.) յիշատակէ՝ թէ ոչպէս նախնի հաւատացեալք սովոր էին յամենայնի խաչակնքել զինքեանս, ՚ի ձեռն ՚ի գոտ առնել, ՚ի ձաշել, ՚ի զբօսանուլ, ՚ի ննջել և ՚ի յառնել, ՚ի յելս և ՚ի մուտս : Յոր ակնարկէ և բան շարականին ասելոյ . ,, Քրիստ զգայութեան ՚ի դէմս ամենից ... և պահապան ՚ի յելս և ՚ի մուտս ,, : Սովին խաչակնքութեամբ և բազմոց ՚ի սրբոց զդէս հալածեալ և հրաշս ներգործեալ՝ վկայեն Գրիգոր, Քրիստոր նազիանզացի, Քրիստոր Նիւսացի, Ա.թանաս, Ասկեբերան և այլք . և ըստ այսմ կոչեմք դարձեալ սուրբ զնաչն ,, Քրիստ ՚ի յայտոց և առհարկութիւն ապստամբացն դիւաց ,, :

Ա.յլ առաւել քան այլ ամենայն ուրեք ՚ի սուրբ խորհուրդս և յեկեղեցական օրհնութիւնս անդամին ՚ի սկզբանէ սովորութիւն կալաւ յեկեղեցւոջ՝ յաձախապոյնս խաչակնքել : Զոր ՚ի մաշտոցս ամենայն ազգաց հաւատացելոց կանոն օրհնութեան առանց խաչակնքութեանց . չիք կատարումն խորհրդոց, յորում չիցեն սեռառնագրութիւնք յաձախաւորք . և մանաւանդ ՚ի խորհուրդ սուրբ պատարագին ամենայն ինչ խաչիւ կընքեալ, և ս և յետ նուիրագործութեան՝ ՚ի վերայ մարմնոյ իսկ և արեան տեառն կատարին խաչակնքութիւնք, որպէս երգեմք դարձեալ ՚ի նմին շարականի . ,, Քրիստ և յաստուածայինան կատարիս խորհուրդ, յորմէ արեգականին փայլեն Հառագայթք ,, :

Ա.յլ նորադանդք զայս ամենայն բարեպաշտ կրօնից մատուցս արհամարհեն, Թէպէտ և ստիպեալք գնոսա Թիւն նոյին խոստովանել :

ԱՌԱՔՈՒԹԻՒՆՔ

Ղուկ. — ԺԸ. Լինել պարտ իցէ երկրպագել խաչափային վայտին վասն Քրիստոսի՝ինձմա բևեռելոյ, ապա պարտ է և ջոյն Յորդանանու երկիր պագանել, և յաւանականին՝ յորոյ վերայ փրկիչն մեր նստաւ, և շրջեցաւ Յորդայի՝ որովք համբուրեցաւ, և ձեռինն որով ապտակեցաւ, և ամենայնի՝ յոր հպեցաւ։ — Ր. Լաւ առաւել էէ օրէն երկրպագել նշանի խաչին. ապա թէ ոչ, պարտ էր և ամենայն մարդոց և սեանց և փշոց երկիր պագանել։ — Ռ. Կնտեղի է դարձեալ խաչանիշ պատկերաց և ձևոց ընծայել զօրութիւն աստուածային՝ զձևս հաստատելոյ և զախտս փարատելոյ, որպէս զոսքդ ընծայէք։

Պե. — Ա. Մեք ոչ վասն հպելոյ եւեթ Քրիստոսի՝ի խաչափայտն՝ ընծայեմք այնմ երկրպագութիւն, այլ հաւատովք բևեռեալ՝ի նմա նկատելով զՔրիստոս։ Քանզի խաչափայտն եղև գործի փրկութեան մերոյ, և նովաւ Քրիստոս զատապարտեաց զթշնամին կենաց և փրկութեան մերոյ, "Յայտ յանդիման նշաւակեալ զնա յանձին իւրում", որպէս առաքեալն ասէ (Կողոս. Բ. 14.) "Ջնջեալ զձեռագիր մերոյ հակառակութեանն... եթալ զայն՝ի միջոյ, և բևեռեաց ընդ խաչափայտին"։

Յայտնեալ քաջայայտ է անհանդիստութիւն առարկելոյ օրինակացդ, մանաւանդ շրջանց մատնչին և ձեռինն ապտակողի, որք և բարոյական անտեղութիւն կինքեանս բերեն։

— Ր. Եթէ մտուրն և սիեն և փուշք նկարակերտ կամ քանդակեալ՝ յանդիման առնիցեն զՔրիստոսի խորհուրդ ծննդեանն և զարշարանաց, օրէն իսկ է յարգել զայնս. և ըստ այսմ յարգեմք մեք զինչան խաչին, այսինքն յիշատակաւ բուն իսկ խաչափայտին, և որ՝ի վերայ նորա հեղեալ անապական արեանն՝ որ զմեզս մեր ջնջեաց։

— Ռ. Ամանապէս անտեղի յայնժամ օրէն էր առնել, եթէ խաչանիշ փոյթին կամ նիւթոյ ընծայեաք զօրութիւն աստուածային. այլ մեք Քրիստոսի ընծայեմք՝ որ՝ի նմանէն բևեռեցաւ, և զոր կարդամքն՝ի խաչակնքել անդ յօգնութիւն։

ԳՕԴՈՒԱԾ Բ

Յաղագս յարգութեան արբոց :

Որպէս ըստ քաղաքական օրինաց պատուեմք զԹագաւոր, և վասն Թագաւորին զպաշտօնեայս նորա ըստ իւրաքանչիւր աստիճանի, այսպէս և ըստ կրօնից պաշտեել զՎստուած, և սրբոց նորա իբրև նորին պաշտօնէից ընծայել զանկաւորն պաշտօն՝ ոչ միայն ի օրինաւոր, այլ և գործ աստուածահաճոյ, և ցնորք ևեթ նորաշանդից Համարին զայն կռապաշտութիւն: Վստուած ինքնին 'ի բազում դէպս բազմօրինակ պատուեալ և փառաւորեալ զսուրբս իւր և յերկրի աստ առ մարդիկ՝ ընդէմ ուսոյց և նոցա: Վնդամին 'ի սկզբանէ մարդկութեանս զՎնովք վասն արդարութեանն կենդանւոյն փոխատրեաց յերկինս. զՎով՝ վասն անարատ վարուցն ապրեցոյց ծննդովքն Հանդերձ 'ի համաշխարհական ջրոյն հեղեղէ. 'ի ընտրս տասանց ևեթ արդարոց՝ Թէ գտանէին՝ խոստացաւ ապրեցուցանել զբնակաւորս ամբարշտեալցն Հնգից քաղաքաց. վասն արդարոցն Վբրահամու, Վսահակայ և Յակովբայ առաց երկայնամտել ապաշնորհ ժողովրդեանն. 'ի բորբոքել ցասման սրտմտութեան իւրոյ առ կռապաշտեացն Վսրայէլ յաճապատին՝ ողոքաւոր առաջի իւր տեսեալ զՎովսէս, զկնճռաւ 'ի Հանդիպակինջ բարկութենէն. և 'ի լնուլ նոցա զչափ անօրէնութեան իւրեանց, վկայեաց՝ զի Թէպէտ և Վովսէս և Վամուէլ սիրելիքն իւր կացցեն առաջի, ոչ լինի անձն իւր ընդ նոսա. (Երեմ. ԺԵ. 1.) և վասն Հաւատարմին իւրոյ Վաւելի խոստացաւ չմեռուլ զողորմութիւն իւր 'ի զաւակէ նորա:

ՅԱստուծոյ ապա ուսեալ եկեղեցի պատուէ զսուրբս, այլ ոչ պաշտէ զնոսա. և պատիւ՝ զոր նոցին ընծայէ, յարտաքին նոցին 'ի վեր ընթանայ: Յեղանակէ իսկ եկեղեցական աղօթից և պաշտամանց քաջայայտ է, զի ամենայն ինչ 'ի պատիւ և 'ի յիշատակ նոցին լեալ Վստուծոյ ընծայի. վասն որոյ ստէպ յաստուածային պաշտամունս և 'ի պատարագի յեղյեղեմք՝ յիշատակս և

աղօթէ սրբոյ։ Եւ անդատին ՚ի սկզբանէ եկեղեցւոյ և այսր՝ առ ամենայն քրիստոնեայս ընդունելի լեալ սովորութիւն եւս այս, եհաս աւանդութեամբ առ մեզ, և ժողովին տրիդենտեան ընդդէմ նորաղանդից վճռեաց զայն՝ օրինաւոր և սուրբ ըստ աստուածային գրոց և ըստ աւանդութեան։

Յաստուածային գրոց ունիմք օրինակս առ այս. զի Ա.բրահամ ՚ի տեսանելն զերեսին Հրեշտակն Աստուծոյ, երկիր եպագ նոցա. (Ծն. ԺԸ. 2)։ Կոյին և Ի ոմն ՚ի վերայ երեսաց իւրոց Երկիր ,,. (Ծն. ԺԹ. 1)։ Նոյնպէս և ՚ի Յեսու անկեալ ՚ի վերայ երեսաց իւրոց երկիր եպագ ,, Հրեշտակին, որ ասացն՝ ,,Ես զօրավար եմ զօրու տեառն ,,. (Յես. Ե. 14)։

Եւ յաւանդութենէ իսկ յայտ է. քանզի ժօնախումբ թուի իւնք սրբոց Հաստատեալ յառաքելական սահմանադրութեանց (գիրք Ը. գլ. ԼԴ.) յարևելս և յարևմուտս պահին. և յիշատակեն զայնս Նեսեբի (պապ. եկեղ. գիրք Գ. գլ. ԺԶ), Տերտուլիանոս (յղ. պաղէ. գլ. Գ.) և սուրբն Կիպրիանոս (ընդ. լՂ)։

Օնոյն հաստատէ և սովորութիւն կարդալոյ զբաւրեխօսութիւն նոցա, զոր և սուրբ գիրք ցուցանեն ընդ հրեշտակաց և զսրբոց բարեխօսել վասն կենդանեաց։ Օ ի ահա հրեշտակն՝ զոր ետես մարգարէն Օ աքարիա՝ բարեխօսէր առ Աստուած վասն Երեից, և ասէր. ,,Տէր ամենակալ, մինչև ցե՞րբ ոչ ողորմեացիս ՚ի վերայ Երուսաղէմի և քաղաքացն Յուդայ ,,. (Օ ՚ա. ի. 12)։ Եւ ՚ի գիրս Մ՚ակաբայեցւոց. (գիրք Բ. գլ. ԺԵ. 14). Ահա քահանայապետ ասէ ցՅուդա Մ՚ակաբէ ՚ի տեսլեան, ցուցանելով նմա զԵրեմիա. ,,Աղաչեսցէ սա այս սա է, որ բազում աղօթս անդադար յաձախ մատուցանէ Աստուծոյ՝ Երեմիա մարգարէ ,,։ Եւ ՚ի գիրս Յայտնութեան (Է. 8.) քան և զորք երիցանքն ՚ի բուրուառ ոսկի մատուցանեն Աստուծոյ զաղօթս սրբոց. զոր Հարք իմանան զբարեխօսութենէ սրբոց։ Ահա եթէ սուրբք բարեխօսեն վասն մարդկան, ապա օրէն է և մեզ կարդալ զնոսա ՚ի բարեխօսութիւն։

Ելին իրի անդատին յառաջնոյ դարուց հետէ եկեղեցւոյ գոյանելք յեկեղեցական պաշտամունս ամենայն աղգաց Հաւատացելոց սահմանեալ աղօթս կարդալոյ

զբարեխօսութիւն սրբոց, և՝ ի ձեռն նոցա խնդրել զնարհս՝ ի տեառնէ։ Պրպէս է տեսանել և՝ ի ժամակարգութիւնս մեր և՝ ի շարականս, յորոց աւելորդ համարիմք ածել կուտել այսր վկայութիւնս. զի կանոնք ունի ձայնից մարտիրոսաց և այլոց սրբոց ծայր՝ ի ծայր վկայեն սասպելոցս։

Պ կայեն և ոլ՝ ի տօրեկրեայ դամբարանս գտեալ արձանագիրք գրոշմեալք՝ ի կափարիչս տապանաց վկայեցոց ոմանց յառաջին դարս, որպէս Յովհաննեայ ուրումն թէ «Յովհաննէ, ՚ի տէր կեցցես, և վասն մեր զՎ՚յտուած աղաչեա», և այլոյ՝ «Վ՚տեփկէ, դու ՚ի տուրքս հանպուսեալ ես, մայթեա զտէր վասն ծնողացդ». և դարձեալ՝ «Վնենիանէ, յիշեալիր զմեզ յաղօթս քո. քանզի գիտեմք եթէ Վ՚րհատաւոր ես դու»։

Վ՚տարձեալ և ծննդեանքն իսկ սրբոց առ այս տեղիս տեսանել են. վասն որոյ ասէ տուրք Ղուսաւորչին մեր. «Յուսալ և հաւատալ ծննդեացդ զսրբոց ժողովն, բարեխօս առ տէր ունելով զնոսա որպէս քահանայս՝ որ կան առաջի այնորիկ՝ որնատի ընդ աջմէ Նօր, և զիւրաքանչիւր պատարագս ընծայեն նմա աղօթիւք առ՝ ի հաշտութիւն ակամայ և կամաւոր մեղանացդ հաւատացելոց ժողովրդեան՝ վախճանելոց և կենդանեաց... և նշխարքն ոսկերացնոցա փրկութեան ընծայեն՝ ի ժողովս հաւատացելոց, որպէս ամենեցուն է քաջայայտ, զի երեւեալն սերն Վ՚յտուծոյ՝ ի նոցա նշխարսն բնակեալ։... Եւ մեք զփառաւորեալսն Վ՚յտուծոյ երանելութեամբ, որք վասն սիրոյն Վ՚յտուծոյ զանձինս իւրեանց մատնեցին չարչարանաց և մահու, և առին զպարգեւս յանմահ թագաւորէն. այլ զփառաբանութիւնն և ըզպաշտօն երկրպագութեամբ ամենասուրբ Երրորդութեանն մատուսցուք՝ ի յիշատակս կատարման սրբոցն Վ՚յտուծոյ»։ (Յաճախապատ. ԺՀ.)։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆ

Վ՚ոալմ. Ա.—Ա. Պաշտօն սրբոց հակառակ է աստուածային պատուիրանին (Ք օր. Ձ. 13.) զոր և Վրիստոս Տեառն Վ՚յտուծոյ հաստատակ (Մատ. Դ. 10.)

քուամ երկիր պագցես, և զնա միայն պաշտեացես ,,։ Ա-
ստ այսմ պատուիրանի զամենայն պատիւ և յարգու-
Թիւն Աստուծոյ ևեթ պարտ է ընծայել, որպէս առա-
քեալն ասէ (ա. Տիմ. ա. 17.) “Ա՛ինոյն Աստուծոյ փառք
և պատիւ ,,։ Եւ Աստուած ինքնին՝ ի ձեռն Մովսէսի
ասէ (խբ. 8.) “Ո՛չ փառս իմ այլումի ոչ տացի ,,։ —
ե. Ամին լուի և գարձեալ նոյն առաքեալ ասէ (հռչ.
ը. 18.) “Ա՛ի ոք զձեզ խաբեսցէ, որ կամիցի խոնար-
հութեամբ և կրօնութիւք հրեշտակաց՝ զոր չիցէ տեսեալ՝
զըսահետ վարել ,,։ — գ. Եւ գործով իսկ արգել զայն
հրեշտակին երևեալ Յովհաննու՝ի կամել նորա երկրը-
պագել. զի ասացի (յայտ. ԺԹ. 10.) “Ընտա, մի ան-
կանիր առաջի իմ, զի և ես ծառայակից քո եմ...
տեառն Աստուծոյ միայն երկրպագեա ,,։ Ո՛նոյն և Պետ-
րոս արար ընդ Կարնելիոսին. (գործ. Ժ. 25)։

պե. — ե. Պատուիրանն աստուածային հաստատեալ
ի Քրիստոս՝ վասն գերագոյն պաշտամանն է, որ Աս-
տուծոյ միայնոյ է անկ. վասն որոյ և յաւելու. “Ա՛ի
երթայցէք զհետ աստուածոց օտարաց ,,։ Իսկ պաշ-
տօնն ընծայեալ սրբոց այլ ինչ է ամենևին, և վասն
Աստուծոյ ընծայն նոցա. և ո՛ համարեսցի, ի պահան-
ջել Թագաւորի զպատիւ իւր, արգելուլ զպատիւ աւա-
գանուոյ իւրոյ։ Աստ այսմ է իմանալ և զբան առաքե-
լոյն. զի եթէ զամենայն պատիւ կամէր այնուհետև ար-
գելուլ, չասէր նա այլուր (ա. Տիմ. Ե. 17.) “Արիցունք
կրկին պատուոյ արժանի եղիցին ,,։ Եւ տեսանեմք զի
նահապետք երկիր պագանէին հրեշտակաց և սրբոյից
և սրբակրօն արանց։ Ո՛յնպէս և պատգամն աստուա-
ծային հայի ի պաշտօն գերագոյն, և զհիցապաշտու-
Թիւն արգելու. զի յայտ է ի յաջորդ բանէն.
“Ո՛չ փառս իմ այլումի ոչ տացի, և ոչ զքանջուԹիւնս իմ
պղծելոց ,,։

— բ. Իսկ միւսումն բանիս առաքեալն ոչ զի՛ր և է պա-
տիւ արգելու ընծայել հրեշտակաց. զի և ինքն փրկիչն
մեր առ ի խափանել զարհամարհանս ընկերաց՝ պատ-
Ճառս ածէ զակնածութիւն հրեշտակաց. (Մա՛տ. Ժը.
10.) “Ո՛ի հրեշտակք նոցա յերկինս հանապազ տես-
սանեն զերեսս Հօր իմոյ՝ որ յերկինս է ,,։ Եւ նոցին
մատակարարութեամբ ասեն զինքն՝ մատչել աղօթից

հաւատացելոցս առ Ն. Պօղոսէ. (Տես. գ. 24. ժբ. 12. 15: յայտ. ը. 3): Պատ զայն պաշտօն հրեշտակաց դասուսպարտէ առաքեալ, որ արտաքոյ գրոց հնարեցաւ՝ ի հրէական թանձրամտութենէ, և կամ՝ ի հեթանոսականաւատալեացս, յորոց և սուտ քարոզիչքն ընկալեալ էին զայն, և՝ ի յատակութիւն աւետարանին կամէին խառնել զհրապոյրս հրեշտակամարտն քարեպաշտութեան: Պանդխտի Սիմոն և Կերինթոս համարելով զՔրիստոս մարդ սոսկ, նախասահծաւ դնէին զբարեխոսութիւն հրեշտակաց քան զնորայն միջնորդութիւն, որպէս վկայէ Տերտուղիանոս. (յղ. Նախաձգ. գլ. խե.) և Ոսոսաինոս. (գիրք Ժ. խոսպով. գլ. խբ.): Ընդդէմ այսպիսեաց գրէ առաքեալս ոչ միայն աստ, այլ և՝ ի Թղթին առ Եբրայեցիս (ա. 4.) զգերակայութիւն Քրիստոսի քան զհրեշտակս հաստատելով: Ո՞ յայսմհետ պաշտամունս, եթէ առ հրեշտակս և եթէ առ այլ սուրբս, հերքեաց և հերքէ ընդհանրական եկեղեցի: Իսկ եթէ՝ ի բարեպաշտ և յօրինաւոր մեծարանս սրբոցն Ն. Աստուծոյ անպատշաճս ինչ խառնիցէ տգիտութիւն ժողովրդեան, ոչ վասն այնր արժան է անգոսնել զօրինաւորսն, այլ զօտարոտին մաքրել՝ ի բաց:

— գ. Հրեշտակին և Վերտոսի հրաժեշտ, նախ զի ոչ յաստուածային պաշտամանէ էր հրաժարել, զի և ոչ երկրպագութ նոցա՝ իբրև Ն. Աստուծոյ երկիր պատանէին նոցա. և երկրորդ՝ զի առ խոնարհութեան էր հրաժարելնոցա, որպէս խոստութեամբ ասէ Վերտոս զայսմանէ. "Ես ասաց հրեշտակն՝ թէ Ն. Աստուծոյ միայնոյ օրէն է երկիր պագանել, քանզի հակառակ է այս բանվանդակ հին կտակարանաց... այլ զխոնարհութիւն՝ ի կիր արկանէ, որպէս զի ասիցէ ցընկերս իւր. արքայի զպատուդ զայդ պահեսջիր":

Ա-ոմկ. բ. — ա. Ա-ռաքեալն ասէ. (ա. Տես. ը. 5.) "Ամի (է) միջնորդ Ն. Աստուծոյ և մարդկան՝ մարդ Յիսուս Վերտոս": Պատ՝ ի բաց մերժէ զբարեխոսութիւն սրբոց: — բ. Ոչ դարձեալ ասէ. (հե. Ժ. 14.) "Իսկ զինուղ կարդասցեն, յոր ոչն հաւատային": Պատ ոչ է օրէն կարդալ զայլոց անուն բաց՝ ի Վերտոսէ, յոր հաւատամք:

պե. — ա. Ամի է առաջին և գլխաւոր միջնորդ ընդ

Ա՛ստուած և ընդ մարդիկ, Յիսուս Քրիստոս. այլ և ինքն Քրիստոս ազօթիւք սրբոց, ևս և կենդանեաց, կարգամբ յօդնականութիւն։ Այս ինքն առաքեալն, որ մի միջնորդ մարդկան ասէ զՔրիստոս, սակայն խնդրէ սակս զաղօթս հաւատացելոց. (Եբր. ժգ. 18։ ա՛. Ընթ. Ե. 25։ Եփես. գ. 19)։

— ե. Կրկնակի է կարդալ զոք. մի՝ որպէս տուիչ առնային բարեաց, և ըստ այսմ զԱ՛ստուած ևեթ օրէն է կարդալ. միւս ևս՝ որպէս բարեխօս, առ՛ի գտանել զընծորհս՝ զոր խնդրեմքն՝ ի նմանէ. և ըստ այսմ օրէն է կարդալ զսուրբս։ Քանզի և՛ ի խնդրել ինչ՝ ի Թագաւորէ, բարեխօս ունիմք առ նա զոք յատագոյ կամ՝ ի սիրելեաց նորա։

Ա՛տրէ. գ. — ե. Աւրբ զիրք պատուիրեն՝ զամենայն յոյս մեր դնել յԱ՛ստուած և՛ ի Քրիստոս, և առ Ա՛ստուած ապաւինել՝ ի կարիս մեր. և զնոյն ուսուցանէ մեզ Քրիստոս՝ ի տէրունական աղօթսն, և յասէն (Յհ. ժզ. 25.) "Օր ինչ խնդրիցէք յանուն իմ՝ ի Հօրէ իմմէ, տացէ ձեզ"։ Ա՝ան որոյ և առաքեալն ասէ (Եբր. դ. 16.) "Ա՝ատիցուք այսուհետև համարձակութեամբ առաջի աթոռոյ ընծորհայ նորա, զի ընկալցուք զողորմութիւն"։ — ե. Ո՛չ ոչ զօրէ ինչ ընդդէմ՝ յանձն լինել յաղօթս սրբոց կենդանեաց, զի սոքա պիտեն զպէտս մեր, այլ վախճանեալքն չիարեն զի տեղ։ — է. Ասաի և ոչ հրամայեն զիրք զայսպիսի աղօթս, այլ ընդ հակառակն արգելուն՝ յասէն. (Ո՛ընծ. ժէ. 5.) "Ընտիծեալ լիցի մարդ, որ արասցէ ըզյոյս իւր՝ ի մարդ"։

Պե. — ե. Ո՛չ զի ժխտէ, զի պարտ է մեզ զամենայն յոյս մեր դնել յԱ՛ստուած, ՝ի տուիչն ամենայն բարեաց. այլ յոյս մեր յԱ՛ստուած ոչ նուազէ խնդրելով մեր՝ ի սրբոց՝ զի օգնեացեն մեզ աղօթիւք, զի մի անարժան գտցուք պարգևացն Ա՛ստուծոյ։ Ա՛ւ այս և՛ ի սուրբ գրոց ունիմք օրինակս. զի աղօթիւք Յոբայ եթող Ա՛ստուած զմեզս բարեկամաց նորա. (խէ. 7)։ Ա՛ղօթիւք Ա՛բրահամու թժշկեաց զԱ՛բիմելէք և զկին նորա և զաղախնայս (ԾՆ. Ի. 17)։ Ա՛ղօթիւք Մովսեսի էառ խրատելացւոց յաղթութիւն ընդդէմ Ա՛մաղեկայ. (ԵՀ. ԺԷ. 11)։

Ա՛ստ ոմն այդ ամենայն բանք գրոց ոչ ինչ զօրեն ընդդէմ վարդապետութեանս. քանզի խնդիր մեր այն է, թէ արդեօք օրէն էր կին յաղերս առնել զառաքեալս Յ՛ստուած՝ յոր ձամենայն յոյս մեր եդեալ է, և՛ ինձանէ խոստովանիմք ձամենայն ընդարձակութիւն մեր։ Այլ՝ ի բանս յայդոսիկ առաքեալ գրոց չկայ ինչ հաստատակ այսորիկ. իսկ տէրունական աղօթք՝ զերկնական աղօթից ուսուցանեն, որպէս և՛ ի հայցելոյ զայն առաքեալն յայտ է, զի ասացին. "Տէր, ուսո մեզ կաղօթս ,,. (Ղ Ի. ԺԱ. 1)։

— Բ. Ա՛խձանեալքն առ գրոք, որպէս և հրեշտակք, ոչ կարեն կիսել իւրովի զպէտս մեր, այլ կարեն կիսել զայն Յ՛ստուած կամ՛ ի յայտնութենէն Յ՛ստուծոյ։ Ապաքէն և առ գրոքն ( )զոստինոս ասէ. (յղ. ֆղ. Յ՛ստ-ծոյ. գիրք Թ. գլ. իբ.) "Ո՛ժամանակեայք զայսոսիկ և զիսոխոսելիքս հաւաստի ևս գիտենուք, վասն զի նկատեն զակզբնական պատճառս իրաց անդէն՛ ի Բանն Յ՛ստուծոյ՝ որով եղև աշխարհ ,,։ Ա՛յլայայտ է այս և յուրախանալոյ հրեշտակաց՛ ի վերայ դարձի մեղաւորաց, զի եթէ ուրախանան, ապա գիտեն զայն։ Յայտ է և՛ ի հրեշտակին ասելոյ ցՅոբիմ. "Յորժամ կացեր դու յաղօթս և նուն քո Սառա, ես մատուցի ընդ յիշատակս աղօթից ձերոց առաջի սրբոյն ,,. (ԺԲ. 12)։ Ա՛յս հրեշտակն՛ ի Յայտնութեան մատուցանէր առաջի Յ՛ստուծոյ զաղօթս ամենայն սրբոց (Ը. 3)։

— Գ. Ա՛յ հրամայեն սուրբ գիրք յաղերս առնել ընդ սուրբս, զի ազատ լինչ է և ոչ բոռ պարտուց. այլ օրինակս առ այն ընծայեն մեզ, որպէս ցուցաք՛ ի վեր այսր։ Նոյն անէծք մարգարէին՛ ի վերայ Երեմիայն է, որոց Թողեալ զՅ՛ստուած՝ յեզիպտացիս յուսացեալ էին։

Յ՛ասէ. Դ. — Բ. Ա կայութիւնք Երից վասն բարեխոսութեան սրբոց՝ ոչհանգին՛ ի հոլովոյթ դալ և այսր։ — Բ. Ա՛ն դարձեալ Երիք ևս սխալականք էին։ — Գ. Նոյց Թէպէտ և մարթ իցէ սրբոց բարեխոսել վասն մարդկան, սակայն չէ օրէն մարդկան՝ կարդալ զնոսա. քանզի կարդալ զնոսա՝ հաւասար է պաշտօն մատուցանելոյ, որ Յ՛ստուծոյ ևեթ է անկ։ — Դ. Ա՛յ զի սուրբք վախճանեալք ոչ գիտեն զկարիս մեր՝ ասէ և Սողոմոն (Թ. 6.) "Ա՛ռեալքն ոչ են գիտակ և ոչ իմիք ,,։

Ա՛որ և Այսպէս ասէ (կիզ. 16.) “Ա՛ր Աբրահամ ոչ գիտաց զմեզ, և Իսրայէլ ոչ ծանեաւ զմեզ,,։

Պե. — ա. Ա կայուԹիւնք Նարց՝ ի ջորտոզ գարէ սկսանին, այլ վկայեն՝ ի սկզբանէ հետէ ընկալեալ՝ ի կաԹողիկէ եկեղեցւոջ զաւրեխօսուԹիւն սրբոց, և ոչ պակս նոր ինչ՝ ի ներքս մուծանեն զայն։ Եւ գարձեալ անժխտելի յիշատակարանք առաջնոց և գարուց ընդ նոյն վարդապետուԹիւն հաստատեն։ Ա՛ր պակս ասացաք, ՝ի վերոյ գերեզմանաց իսկ նախնի մարտիրոսաց գտանին՝ ի ստորերկրեայ գամբարանս արձանագրեալ՝ բարեխօսել վասն մեր։ Եւ՝ ի պատարագամատոյցս գոն մաղԹանք նոյնպիսիք յանյիշատակ ժամանակաց, պակս այն. “Ընկալ տեր զաղաչանս մեր բարեխօսուԹեամբ սուրբ աստուածածնին և ամենայն սրբոց քոց,,։ Եւ գարձեալ վկայուԹիւնն, զոր՝ ի սրբոյ Ղուսաւորչէն մերմէ՝ ի վեր անդր ածաք, երևցագոյն է քան զջորտոզ գար։

— բ. Ախալականք են Նարք յառանձին վարդապետուԹեան իւրեանց, այլ ոչ պակս վկայք վարդապետուԹեան կաԹողիկէ եկեղեցւոյ, և՝ ի միասին ընդ նմանմանաւանդ՝ ի հաստատել եկեղեցւոյ զվկայուԹիւն նոցա։ Ընդդէմ զայնոցիկ Նարց, որք առանձին զիւրս ժամանակին՝ յորում կային, հաւատար է մերժելոյ զամենայն ստուգուԹիւն պատմական։

— գ. Ընդ բարեխօսել սրբոց վասն մեր, և մեզ չկարել զբարեխօսուԹիւն նոցա հայցել, անտեղի է. վասն եԹէ հայցուածս այս հաւատար էր աստուածային պաշտօն մատուցանելոյ նոցա, զնոյն պարտ էր ասել և զհայցելոյ զաղօԹս կենդանեաց, զոր ոչ ոք ասել յանձն առնու։

— դ. Սուրբք որ՝ ի յերկինս, Թէպէտ և իւրեալի չգիտեցեն զկարիս մեր, այլ պակս՝ ի վեր անդր աստիճաք՝ իմանան զայս Ա՛ստուած և՝ ի յայտնուԹենէն Ա՛ստուծոյ։ Ընդ որ զանգիտելին այն է, զի ոչ է մարԹուամբ յետ մահու զգաստանալ. վասն որոյ ոչ ինչ զօրէ ընդդէմ մեր։ Իսկ Այսպէս ցուցանել զԱ՛ստուած առանց հաւատամատուԹեան առաւել քան զԱ՛ստուած և քան զՅակոբ՝ հայր լեալ խոտորելեան ազին։

Ա՛ռ. ե. — ա. ԲարեխօսուԹիւն սրբոց ընդունայն

է յաստուածակոյս կողմանէ. զի ինքն Աստուած առաքեալ յոյժ քան զամենայն սուրբս սիրէ զմեզ, և խնամէ զկարիս մեր։ — ՚Ե. Ասէ ՚ի կողմանէ սրբոց՝ զի վաղ իսկ ընկալեալ է նոցա զվարձս վաստակոցն առաւտապէս, և չկարեն այլոց ընդդէմ արժանաւորել։ — Գ. Աստ առաքեալ չկարեն ընդդէմ լինչ մեզ իւրովին, կամ լինել յոյսն ՚ի ապառէն, որպէս աղօթէքդ դուք առ տիրամայրն։

Պէ. — Ա. Աստուած առաքեալ քան զամենայն սուրբս սիրէ զմեզ և խնամէ, եթէ մեք արժանի իցեմք սիրոյ և խնամոց նորա, և կամ՝ եթէ ոչ կամիցի փառաւորել զսուրբս իւր։ Այս մարթի իսկ է, զի կամ վասն փառաւորելոյ զսուրբս իւր, և կամ վասն աղաչանաց նոցա՝ անտես արարեալ զանարժանութիւնս մեր, ընդդէմ զոր խնդրեմք։ Այս թէ ոչ, և ոչ վասն աղօթից կենդանեաց ընդդէմ լինչ մեզ։

— Բ. Սուրբք ոչ ըստ իրաւանց խնդրեն լինչ Աստուծոյ վասն մեր, այլ ըստ ընդդէմ. վասն որոյ քանզի պատճառք ընդունելոյ նոցա ընդդէմ վասն մեր, ոչ վաստակք նոցա են, այլ զի սիրելիք են Աստուծոյ, և Աստուած վասն սիրոյ նոցա և վասն արժանեացն Քրիստոսի լսէ աղաչանաց նոցա։

— Գ. Այր ուրեք խնդրեմք լինչ ՚ի սրբոց յաղօթս, իմանամք ըստ ուղղափառ հաւատոց խնդրել զայն Աստուծոյ բարեխօսութեամբ նոցա. քանզի դաւանեմք զի "Աստուած տուրք բարիք և ամենայն պարգեւք կատարեալք ՚ի վերուստ իջանեն առ ՚ի Հօրէն լուսոյ"։ Վասն որոյ և ՚ի կարդալ զՔրիստոսայն յոյս մեր և ապառէն, խոստովանիմք Աստուծոյ զնա ընդդէմ մեզ ՚ի յոյս և յապաւէն փրկութեան։ Ընդդէմ իմս և զայլ ամենայն ձևոց աղօթից, որովք ուղղակի առ սուրբս թուիմք կարդալ։

ԳՕԴՈՒԱԾ Գ

Քաղագս յարգութեան եկեղեցւոյ սրբոց :

Յարգութիւն, զոր ընծայեմք ոսկերաց սրբոց և կամ որ ինչ նոցա են, առ նոսին իսկ սուրբս ՚ի վեր ելանէ : Վասն որոյ սուրբ Հաւատք ուսուցանեն մեզ զայս յարգութիւն ընծայել նոցա, և ժողովն տրիդենտեան սահմանեաց զայն ընդդէմ նորաղանդից՝ ըստ սուրբ գրոց, և ըստ աւանդութեան կաթոլիկէ եկեղեցւոյ :

Զանգի Մովսէս զոսկերս նահապետին Յովսեփայ քարձեալ տարաւ ընդ իւր յարգութեամբ Աղեքսանդրիայ յերկիրն աւետեաց : Մարմին Ենոքայ մերձեալ ՚ի մեռեալն՝ կենդանացոյց զնա : Ի քրտանէ Թաշկինակին Պօղոսի, և առուերն Պետրոսի բժշկութիւնս գործեցին : Վասն որոյ Հաւատացեալք անդստին յառաջնմէ դարէ զմարմինս վկայից ժողովեալ պատուով ամփոփէին, որպէս և զմարմնոց գլխաւոր առաքելոցն պատմէ Եւսեբի : Վկայէ և Թուղթ Օ՛միւռնայ եկեղեցւոյն՝ Թէ որպէս Հաւատացեալք փութացան ամփոփել զնըշխարս սրբոյն Պօղիկարպոսի ՚ի մեծագին արկեղ : Նոյնպէս և զոսկերս Ինդնատիոսի աստուածազգեաց Հայրապետին Հաւատացեալք ժամանակին փութով մեծաւ ամփոփեցին էբէև գանձ անգին սեանդեալ եկեղեցւոյ. որպէս յայտ է ՚ի վկայաբանութենէ նորա :

Վկայեն այսմ և հեթանոսք, որք առ ՚ի խափանել զյարգութիւն՝ զոր Հաւատացեալք ընծայէին նոցա, զգիակունս սպանելոց ՚ի սուսերամարտի խառնէին ընդ մարմինս վկայից, կամ զնոցին իսկ վկայից զմարմինս այրէին և կամ ՚ի ծով ընկենուին կերակուր ձկանց :

Վարձեալ վկայեն և շնորհք մարտիրոսաց վաղեմիք, յորոց վերայ սեղանք կանգնեալ ՚ի մատուցումն սուրբ և աստուածային պատարագին, կան և պահին ցարդ ՚ի ստորերկրեայ դամբարանս Հռոմայ. և փոխ և ջան Հաւատացելոց որոշելոց զոսկերս մարտիրոսաց յայլոց Հաւատացելոց՝ արձանագրութեամբք, կամ դրուագօք արմատենոյ և տանջանարանաց ՚ի վերայ տապանի նո-

ցա, կամ ՚ի շէշ փոքրիկ ամիսոփեաւ յարեանէ նոցա անդ ՚ի տապանի, որովք մինչև ցայսօր ընտրին նշխարք վըկայից ՚ի դամբարանս անդ գտեալք։

Ա՚յս ամենայն ապացոյցք ընդդէմ նորագանդից. զի առ մեզ չէք գայցանէ երկբայութիւն. զի և տուրք Աստուածային մեր ամիսոփեաց պատուով զնշխարս սրբոց հռիփսիմեանց, և գայլոց և սրբոց զնշխարս՝ որպէս ըզ Յովհաննու և զ՚Աթանագինեայ՝ աւանդեաց յեկեղեցիս ՚ի պաշտօն հաւատացելոց,՚՚ և ՚ի գիրս իւր և ետ Թոզ գայս վարդապետութիւն, որպէս է տեսանել ՚ի վկայութեանն՝ զոր ՚ի վեր անդր ածաք վասն բարեխոսութեան սրբոց։

Ա՚յժմ և շարականք մեր վկայեն.

՚՚Ա՚ջ տեառն ՚ի վերայ սրբոց իւրոց, և փառք իւր հանդուցեալ է յոսկերս սոցա՚՚։

՚՚Յաձախ են տուրք Ա՚ստուծոյ, կենդանի ոսկերք սոցա հիւանդաց բժիշկք՚՚։

՚՚Ա՚յսօր յիշատակ սրբոցն, և փայլեն ոսկերք սոցա ՚ի մէջ եկեղեցւոյ, աղաչեսցուք զտէր սոքօք՚՚։

՚՚Ա՚րկրպագեմք առաջի տէրունական նշխարաց Ձգնաւորին Ա՚ղիստոսի և պատուական վկային, որ է պարծանք աշխարհի և բարեխօս վասն մեր։ Ի տաճարի քում սրբութեան երկրպագեմք քոց նշխարաց, փառաւորեմք զօր յիշատակի կատարման քո հանդստեան. առ Ա՚ղիստոս բարեխօսեա վասն մեր քո տօնողացս՚՚։

՚՚Ա՚յսօր ընտրեցար մեզ դեղ կենաց նշխարք սորին ոսկերաց ՚ի ձեռն տուրք Ա՚ստուածային՚՚։

՚՚Օ՜ որ ամիսոփեցին զմարմինն մաքուր մերձ ՚ի յայրն Ա՚նեայ, մեզ դեղ ախտից մաքրութեան՝ որով սրբեմք հոգւով ՚ի Թունից վիշապին՚՚։

՚՚Ը՜ նորհեցեր մեզ դեղ կենաց զանմարմնական վարսք մաքրեալ զհոգանիւթ նշխար սրբոյն Ա՚ներխի՚՚։

Եւ ՚ի կանոնիկս մեր գտանեմք. ՚՚Ոսկ եթէ որ յաղագս վկայից Ա՚ստուծոյ տարակուսեսցի, լուիցէ հաւատնաբար՝ զի ՚ի բազում և ՚ի հեռաւոր տեղիս նշխարք միով վկայի բաշխեցան, որպէս և Պետրոսի առաքելոյն ՚ի Յոռվմ ՚ի Յայս և ՚ի Ա՚զոտանս՚՚։

Եւ ՚ի հնագիրս մաշտոցս կամ եկեղեցական կարգաւորութիւնս ազգիս՝ գտանի և կանոն զնշխարս սրբոց

’ի հանգիստ փոխելոյ՝ հանդերձ մաղթանօքս. “Ցեր Աստուած մեր, որ փառաւորեցեր զսուրբ վկայն քո, ոյք վան անուան քո Ձկնեցան, և պարգեւեցեր սերմանել ընդ ամենայն երկիր զնշխարս սոցա ’ի սրբարանս քո, և զպտուղ բժշկութեան ծաղկեցո վան սոցա, ամենայն բարեաց վաստակակից գոլով աղօթիւք սոցա. որոց խոստացար հանգիստ նշխարաց ’ի սուրբ տանս յայսմ լինել, ... սքանչելագործեա ’ի ձեռն սոցա առ մեզ զբժշկութիւն և զփրկութիւն հոգւոց։”

ԱՌԱՔՈՒԹԻՒՆ Ը

Աստ. ա. — ե. Աստուած զմարմին Ադամայ անյայտ արար, զի մի պաշտօն մատուսցեն այնմ իբրեւ յայտ իմն այսպէս արարեալ, զի ոչ է նման ընդունելի պաշտօն նշխարաց սրբոց։ — բ. Ոյք լինէ ’ի հին կտակարանս յիշատակ այսպիսի լինէ պաշտամանն։ — գ. Նա զշնորհս իսկ կանգնեալս մարգարէից՝ պարսաւեաց Աքիաս. (Ադր. լիգ. 39.) “Ա՛յ ձեզ գպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց, զի շինէք զշնորհս մարգարէից և զարդարէք զգերեզմանս արդարոց։”

պԽ. — ե. Ոչ իսկ է հաւասար վան էր իրիք պատճառի անտես ’ի իբրէից առնել Աստուծոյ զգերեզման Ադամայ, քանզի ոչ յայտնեն մեզ զայն սուրբ գիրք։ Այլ իսկ զի վան խափանելոյ էր այն զպաշտօն՝ զոր մարթ էր իբրէից մատուցանել նմա, ասեմք զի վան գիւրագոյն յօժարութեան նոցա ’ի կատարելութիւն արկել, զի մի գուցէ աստուածական պաշտօն մատուցեն մարմնոյ նորա, և ոչ թէ այնուհետեւ զյարգութիւն նշխարաց խափանել կամեցաւ։

— բ. Ոյք արդարեւ ’ի հին կտակարանս այսպիսի լինէ պաշտօն նշխարաց ըստ արարողութեան, այլ ոչ թէ ըստ մասին յարգութեան։ Ո՛ւ եթէ իբրեւ ոչ պատուէին զնշխարս սրբոց, Յովսիա ’ի հանել զոսկերս ’ի գերեզմանաց և այրել՝ ոչ խնայէր յոսկերս մարգարէին, որոյ մարգարէացեալն էր զկործանումն բագնին Աեթէլայ. (գ. Եդ. լիգ. 18)։ Այլ զպատճառս չմատուցանելոյ նոցա հանդիսիւ պատիւ նշխարաց՝ ասացաք ’ի վեր անդր։

— ԺԴ. Յանդիմանէ Քրիստոս զկեղծաւորութիւնն գպրաց և փարիսեցւոց, և ոչ զկանգնել նոցա շնորհս. որպէս քաջայայտ ՚ի յաջորդ բանիսն է. "Ձեւ ասէք՝ եթէ էաք յաւուրս հարցն մերոց, ոչ հաղորդէաք արեան մարգարէիցն... և դուք լցէք զչափ հարցն ձերոց":
Ապա ուրուք առնէ Սիկեբեերան ասէ. "Ով վասն շինեցին, և ոչ վասն զհարս իւրեանց ամբաստանելոյն վայ ասէ նոցա, այլ զի զնոյնս գործելով և զնոյնս ուսուցանելով՝ զհարս իւրեանց նշխէին դատապարտել, ուր ինքեանք չար ևս քան զնոսա գործէին":

Ի՟ոան. Բ. — ա. Հռութիւն է յաւուրսն երիս գարս զպաշտաւանեն նշխարաց, թէպէտ և Ի՟արք պատերազմէին ընդ գնոսաւիկեանս Թշնամիս սրբոց վկայից. անաւգան առաք սովորութիւն եղև ընդ սեղանովք զետեղել զմարմինս սրբոց վկայից և կամ յանօթս՝ ՚ի տեսիլ հաւատացելոց, զորս յաւուրսն սովորութիւն էր Թաղել:
— բ. Ասաի յայտ է զի՝ ի հեթանոսաց էանց առ քրիստոնեայս պաշտօնդ այդ կանգնելոյ սեղանս և տաճարս ՚ի վերայ գերեզմանաց մեռելոց, վասն որոյ եպերեն ըզհեթանոսս Ա՟ղեմէս աղեքսանդրացի, Տերտուղիանոս, և Մինուկիոս Փեղիքս:
Պա. — ա. Ոչ նշխարաց սրբոց եթէ նոյն իսկ լուսԹիւն յաւուրսն գարս, այլ արդիւնք նոցին շատ իսկ բարբառին՝ որպէս ցուցաք: Ի՟արք, որք յաւուրսն երիս գարս քրիստոնէուԹեան կացին, զկարևորագունից և մասանց հաւատոյս մերոյ պարապեցին ՚ի գրել. ՚ի հիմունս նորա էր յայնժամ վաստակն, և ոչ ՚ի զարդս շինուածոյն: Եւ ոչ իսկ մարԹ էր նոցա ընդդէմ այնոցիկ, որք ուրանային զյարուԹիւն մեռելոց և Թշնամիք էին մարտիրոսաց, ածել զպաշտօն նշխարաց՝ զորս նոքա էին ապերկին: Եւ ցորչափ ՚ի հալածանս էր քրիստոնէուԹիւն, ոչ իսկ էր մարԹ երևելի արարողուԹեամբք զնշխարս սրբոց պատուել. Հանդերձ այսու ամենայնիւ պատկին սեղանք և տաճարք ստորերկրեայք կանգնեալք յաւուրսն գարս ՚ի վերայ նշխարաց սրբոց վկայից, որպէս և այն՝ որ յաւուրս մեր գտաւ ՚ի Հռոմ ընդ երկրաւ սեղան և տաճար Ա՟ղեքսանդրի առաջնոյ Հռոմայ Հայրապետին, որ ՚ի սկիզբն երկրորդի գարուն վկայեաց:

— ր. Եթե անօսաց կանգնել բագին և մեհեան՝ ի վերայ մեռելոց՝ անօսի էր պաշտօն, զի համարէին ուրուած նոցա յածել զպերճանօք։ Իսկ պատճառք պաշտամանն, զոր մեքս ընծայեմք նշխարաց սրբոց, քանզի՝ ի քաց հեռի են՝ ի նանրահաւատ նոցին մոլորութենէ. և ուր այլ են պատճառք, նմանութիւն արարողութեան լինէ ոչ ստնանէ։ Ո՛չ որպէս հեթանոսք զիցն իւրեանց երկիր պագանէին և բագինս և մեհեանս կանգնէին, զնոյն և քրիստոնեայք Աչմարտին Աստուծոյ առնեն. և ոչ այսչափ միայն, այլ և զմեհեանս կանգնեալս՝ ի նոցանէ զից՝ սրբեն՝ ի տաճարս Աստուծոյ։ Ո՛չ այս պատասխանի առնէ Երոնիմոս առ Վատատոս և Ալխզանտիոս, որք զնոյն առաւրկէին. (գիրք ա. գլ. ը.) «Ալ՝ թէ չիցէ մեզ պարտ պաշտել արդ զԱստուած, վասն զի երբեմն զդիս պաշտէաք, զի մի թուլցիմք զնոյն պաշտօն դիցն՝ մատուցանել Աստուծոյ։ Ան դիցն էր, վասն որոյ և գարշելի. այս վկայից, վասն որոյ և ընդունելի»։

Աստ. գ. Անապաշտութիւն է պաշտել զաձիւն մեռելոց. զի և յոլովք յայնցանէ չեն՝ որոյ կարծիցն. և զեզծումն ոչ սակաւ է՝ ի պաշտամունս նշխարաց։

Պե. Ո՛չ նշխարս սրբոց ոչ իբրև աձիւն պատուեմք, այլ զի տաճարք երբեմն եղեն Աստուծոյ կենդանւոյ՝ որպէս առաքեալն ասէ, և զի հոգիք նոցա կան արդ յերկինս յանապատ երանութեան, որում մարմինքն ևս՝ ի յարութեան հաճանելոց են։ Այլ դարձեալ՝ զի եթէ չէր ընդունելի Աստուծոյ պաշտօնն ընծայեալ նշխարաց սրբոց, ոչ գործէր այնչափ սքանչելիս՝ ի նոսա։ Ապա Թէպէտ և աձիւնք ոսկերաց չիցեն լինչ յինքեանս արժանաւորք յարութեան, այլ ըստ պատճառացս այսոցիկ ընծայի նոցա պատիւ վերբերական, այսինքն զի ոչ յաձիւնս անդ մնայ պատիւն՝ այլ՝ ի սուրբս անդր և Աստուած՝ ի վեր բերի։

Վասն որոյ և շփոթութենն ոսկերաց, որ եթէ երբեք վերնպատաւ պատուհասին, ոչ լինչ ստնանէ բարեպաշտութեան. զի պաշտօնն այն վերբերական, ըստ Հաւատոց մատուցողացն, վերաբերի առ այնոսիկ՝ որոց աձիւնքն այնոքիկ կարծին, որպէս խոստովանի զայս և Եփիփանիոս (Ադուերսուս հաեր. 198)։ Վասկայն և ոչ այնչափ լինչ նշխարք երկրայելիք գտանին, որչափ

ինչ կուտակութեամբ համարին հակառակորդք. մանաւանդ յետ տրիդենտեան ժողովոյն սահմանելոյ զամենայն զգուշութիւնս, և անվաւեր համարելոյ զնըշխարս սրբոց առանց վկայութեան եպիսկոպոսի։

Խոկ զեղծմունք ոամկին ոչ ինչ զօրեն ՚ի խնդիրս յայսպիսիս. պարտ է զանազանել զվարդապետութիւն եկեղեցւոյ ՚ի սովորութենէ ոմանց կամ ոամկին. առաջինն սուրբ է և անփոփոխ, յերկրորդն կարէ սպրդել զեղծումն ընդդէմ կամաց եկեղեցւոյ։

ԳՕԴՈՒԱԾ Դ

Գաղագս յարգութեան պատկերաց։

Յարգել զպատկերս Քրիստոսի, զսրբոյ խաչին, զԱստուածածնի և զսրբոց, ուսուցանեն ուղղափառ հաւատք. և սահմանեալ է այս վարդապետութիւն յերկրորդ ժողովն Նիկիոյ, զոր և վերստին ընդդէմ նորաղանդից հաստատեաց ժողովն տրիդենտեան այսպէս. "Պատուիրն ընծայեալ պատկերաց՝ ՚ի նախատիպս նոցին վերբերի. որպէս զի ՚ի ձեռն պատկերաց՝ զոր համբուրեմք, որոց առաջի բացաւ գլխով կամք և ծունր կրկնեմք, զՔրիստոս պաշտեմք, և զսուրբս՝ զորոց բերեն նոքա զդէմս՝ մեծարեմք։" Ո՛չ ՚ի որպէս յանարգել ուրուք զպատկեր Թագաւորի՝ զնոյն ինքն զԹագաւորն համարի անարգեալ և կրէ ըստ այնմ պատուհաս, և որ պատուէն զայն և մեծարէ՝ համարի զԹագաւորն պատուել, զնոյն է ասել և զպատկերաց սրբոց զերկնաւոր Թագաւորին։

Պատուիրեաց Աստուած Մովսեսի (Ամ. իե. 19.) առնել երկուս քերովբէս ոսկիս Ձախարակեայս, և դնել զնոսա ՚ի վերայ երկոցունց կողմանց տապանակին։ Եւ դարձեալ Հրամայեաց (Ել. իա. 9.) առնել օձ պղնձի, և դնել զայն ՚ի վերայ նշանակի, զի ամենայն օձահար՝ որ հայեցի ՚ի նա՝ կեցցէ. և զի օձն այն օրինակ էր խաչելոյն՝ ինքնին իսկ զայն յայտ առնէ Քրիստոս. "Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատին, նոյնպէս բարձրանալ պարտ է որդւոյ մարդոյ,." (Յհ. Գ. 14)։ Եւ պատիւ պատկերին այնորիկ այնքան էր

առաւելեալ, մինչև լծանձրանիցի երեից իբրև զկուռս պաշտել զայն, և հարկ լինել Աղեկսիայ ալքայլ խորտակել զայն։

Այսպէս և տապանակն ուխտին յարգեր առ իսրայէլացիս. և Յեսու առ՝ի հաշտ առնել զտեր (է. 6.) "Սկսաւ՝ի վերայ երեսաց իւրոց յերկիր առաջի տապանակին տեառն մինչև ցերեկոյ, և ինքն և ծերքն Իսրայէլի,, և Դաւիթ՝ի նոյն ակնարկէ յասելն. (սղմ. ղէ. 5.) "Արկիր պարիսպ պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է,, և զի պատուանդանաւ ոտից տեառն զտապանակն իմանայր, զայն ինքն իսկ յայտ առնէ այլուր (ա. Ճռաց. իէ. 2.) յասելն՝ "Ուրտի խմբեմ եղև շինել տուն Հանգստեան տապանակի ուխտին տեառն, և կայան ոտից տեառն մերոց,,։

Ընդ եւթն նոքա հրամանաւն Աստուծոյ պատուէրն զպատկերս զայսոսիկ՝ի ժամանակի՝ յորում վտանգ իսկ էր կռապաշտութեան, մինչև հարկ լինել Երեմիայի յետոյ ապա անհետ առնել զայն յաչաց ժողովրդեան, ապա առաւել և օրէն է քրիստոնէից յարգել զպատկերս սուրբս։ Զմին իրի յառաջնմէ դարէ անտի քրիստոնէութեան տեսանի յայտնապէս յաւանդութենէ և՛ի յիշատակարանաց յարգութիւն պատկերաց։ Վասն կայեն դաստառակն Քրիստոսի պահեալ ցարդ յեկեղեցւոջ սրբոյ առաքելապետին՝ի Հռոմ. և միւս պատկեր դիմացն Քրիստոսի յղեալ առ Աբգար, որ վաւերական պատմութեամբն կայ մինչև ցայսօր՝ի Վենուա եկեղեցւոջ սրբոյն Նարթուղիմէ. պատկեր Տիրամօրն բերեալ՝ի Նարթուղիմեայ՝ի Հայս, և՛ի Հռոմ յետ վանա պատուեալ. և դարձեալ այլ պատկերք Տիրամօրն՝ առաւածոյզումն՝ի գիրկս իւր նկարեալք՝ի սրբոյն Ղուկայ, յորոց մին՝ի Հռոմ յաւագ եկեղեցւոջ Տիրամօրն, և միւսն՝ի Նամուխա պահին. և այլ բազում պատկերք Քրիստոսի և առաքելոց և աշակերտաց Նորա յիշատակեալք՝ի հին պատմագիրս։ Վասն կայեն դարձեալ և որ յառաջնոց դարուց հետէ մնացեալ պատկերք նկարիչք յորմն ստորերկրեայ դամբարանաց՝ի Հռոմ, մինչև ստիպել Նորադանդից կեղծեալս կարծել զայնոսիկ յարդեաց։

Արկածք ժողովն Նիկիական, ՚ի սահմանելն զայն

վարդապետութիւն, յաւելու ածել վկայութիւնս ի հնոց Հարց։ Եւ Տերտուղիանոս, սուղ ինչ կրտսեր ժամանակաւ քան զառաքելոց, աւանդէ՝ տեսեալ ի սկիզբ և ի սպասս եկեղեցականս այնը ժամանակի զպատկերս փրկչին քանդակակերտ ի կերպարանս քաջի հովուի ոչխար ըստ անձին, որպէս և ցարդ իսկ յորմս ստորերկրեայ դամբարանաց այնց ժամանակաց տեսանի նկարեալ։ Եւ ի հին յիշատակարանաց քաջայայտ է, զի և նախնի հաւատացեալք զպատկերս սրբոց խաչին կանգնէին ի վերայ սրբոց սեղանոց պատարագին։

Ի հաստատութիւն յարգութեան պատկերաց ուրնիմք և զկանոն օրհնութեան նոցա ի մաշտոցս, ուր յետ օրհնելոց զպատկերս՝ ազդ առնէ կարմրագիր վարդապետութիւնն խնկել զայն և համբուրել։ Եւ ի շարականս խաչի երգեմք. "Ո՛ կենդանագիր անարատ ծնողդ քոյ արկանեմք առաջի անոխակալ տէրութեանդ քո. յօրժամ գաս փառօք՝ օր դատել զքեզնամին խաչի քո, ներեա յանցանաց մերոց բարեխօսութեամբ մօր քո և կուսի ,,։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆՔ

Գործ. ա. — ա. Երգելու Գաւուած ի սուրբ գիրս (եբ. ը. 4.) "Մի առնել պատկերս ըստ ամենայն նմանութեան . . . մի երկիր պագանել նոցա, և մի պաշտել զնոսա ,,։ Եւ ի հին օրէնս չիք ուրեք յիշատակ նկարեալ պատկերաց և քանդակագործ պատկերաց յարգութեան։ — բ. Ել այլազգ իմացան զայս և չարք նախնի գաղտուկ քրիստոնէութեան, կիլեմէս այէքսանդրացի, (յաճախ. ա. 5.) Տերտուղիանոս, (յղ. փեսար. գլ. ժգ. և յղ. կասպ. գլ. ը.) Յուստինոս (Տրաֆ. Տրէֆ.) և Աղոգինէս (ընդդէմ Աեր. գիրք ը։) — գ. Ա՛նասւանդ զի մարգարէիցն քանք առհասարակ յարմարին և ի վերայ անպրեաց և պատկերաց քրիստոնէից, զի ի նմին նուիրոյ և անօթք պիղծք կապին, զի անբանք և անզգայք են, զի մկունք ի նոսա և ծիծառունք և սարդք կարեն խաղալ և բոյնս դնել։

պէս. — ա. Պատուիրանն աստուածային արգելու ոչ միայն զպաշտօն անդրեադ և պատկերաց, այլ և զանդրիադարձութիւն և զպատկերհանութիւն, որ և պատկերամարտից հնոց և նորադանդից՝ ըստ իմացուածոյ նոցա՝ հակառակ ելանէ։

Այլ ըստ հարազատ իմացուածոյ՝ զկռապաշտութիւն եւեթ արգելու նովաւ Աստուած, որպէս յայտ է՝ ի բովանդակ բանէն, զի ասէ. "Ես եմ տէր Աստուած քո... մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն. մի արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս՝ ի վեր և որ ինչ՝ ի ջուրս՝ ի ներքոյ երկրի. և մի երկիր պագանիցես նոցա, և մի պաշտեսցես զնոսա,,։ Այս թէ ոչ, էր օրէն հրէից և զքեզ տալէս՝ ի վերայ տապանակի ուխտին քանդակել, և ոչ զօձն պղնձի յանապատին։ Այնպէս և Սողոմոն՝ ի տաճարին՝ ուր փառքն Աստուծոյ հանդեան՝ արարեալ էր քերովբէս, առիւծունս, եզինս և արմաւենիս։ Ուր թէ քանի պատուով Յեսու և երիցունք Իսրայէլի և Դաւիթ ալքայ հանդերձ ամենայն ժողովրդեամբն զտապանակ ուխտին մեծարէին, յայտ է՝ ի տուրբ գրոց։ Իսկ եթէ զգուշանային երիցունք երբայեցւոց՝ ի յաճախութենէ անդրեադ և նկարուց, վասն վտանգին էր ժողովրդեան՝ ի կռապաշտութիւն զառաջանալոյ։

— բ. Այնպէս և հնոյ Հարց ընդդէմ կռապաշտութեան են բանք, որպէս յայտ է՝ զի ընդդէմ հեթանոսաց և զինն նոցա Հառեն։ Իսկ եթէ ուրեք Տերտուղիանոս և Կղեմէս աղեքսանդրացի Թուին զպատկերաց առհասարակ խօսել, այլուր զմիտս իւրեանց յայտ առնեն՝ զդիցապաշտութիւն եւեթ հերքել։

— գ. Ասորւոցն պատգամք ընդդէմ դիցապաշտին է, որք աստուածային զօրութիւն՝ ի պատկերս անդ գնէին, և իբրև աստուածս պաշտէին զայնս, որ պիտի ինչ քաւ լինի հաւատացելոցս ածել զմտաւ։ Դայց բռնել Թոչնոյ, սարդից ոստայն անկանել, և խաղալ մկանց, զտապանակաւն և այ, և զքրովբէսիք որ՝ ի վերայ նորա՝ մարթէր տեղի գտանել. ապա բանք մարգարէից՝ ի կռուս և՝ ի պատկերս դից ակնարկեն։

Ելից. բ. — ա. Արիստոնեայք յԱկիտաւիոն Ասիանոս ուխտի խոստովան լինին չպաշտել զկաչ և զպատկերս։

— Բ. և ՚ի հին ցուցակս ուրեք կահուց եկեղեցեաց՝ չիք յիշատակ խաչից և պատկերաց։

Պե. — Ա. Արիստոնեայք խոստովան լինին ոչ որ- պէս զկռապաշտս պաշտել զխաչս և զպատկերս, այսինքն ոչ փայտին և նիւթոյ երկիր պագանել։

— Բ. Նոկ ՚ի ցուցակս կահուց եկեղեցեաց ոմանց չգտանել խաչից և պատկերաց ոչ ինչ զօրէ ընդդէմ արդեանց իրացն, զորս ցուցաք վերագոյն։ Այլ մարթ նոկ է զի յեկեղեցիս անդ յորմն նկարեալ կայցին խաչք և պատկերք, որպիսիս է տեսանել ՚ի ստորերկրեայ գամբարանս ՚ի Հռոմ։

Պե. Ա. Սուրբքն Աթանաս Աղեքսիան և Ա- տիոս եպերեն զքնոստիկեանս և զկարպոկրատեանս վասն պաշտելոյ նոցա զպատկերս. և սուրբն Աթանաս եհերձ զվարագոյր եկեղեցւոյն Ալեքսանդրացւոց ՚ի Պաղեստին, վասն նկարակերտ պատկերին որ ՚ի նմա. և մեծն Արիոզ Թէպէտ և յանդիմանէ զԱերենոս վասն խորտակելոյ նորա զպատկերն, այլ գովէ զնախանձ նորա՝ "զի մի ձեռագործին երկրպագութիւն մատուսցի,,։

Պե. Արդարև ինչ առ սուրբ Հարս այսպիսի բանք զպատկերաց գտանին, պարտ է ըստ այնմ մեկնել զայնոսիկ՝ ըստ որում ինքեանք այլուր ըստ վարդապետութեան եկեղեցւոյ զմիտս իւրեանց բացայայտեն։ Աև նախ զքնոստիկեանց և զկարպոկրատեանց զբարբարոս պաշտօն եպերեն, որք պատարագօք զպատկերս պաշտեին, և ընդ Հոմերն և ընդ Պիւթագորայ պատկերս խառն զԱրիստոսին և զառաքելոցն նկարէին։ Ա- յլն- չափ այլ ևս ՚ի Պաղեստին պատկերք էին, և ընդ- որ Աթանաս վարագոյրն ևեթ զայն նկարակերտ պատառեաց։ Յայտ է՝ զի կամ հակառակ պատմութեան սուրբ գրոց էր ինչ ՚ի նմա, որպէս թուի յայտ առնել յաւելն "ընդդէմ վկայութեան սուրբ գրոց նկարեալ,,· և կամ զի բնակիչք քաղաքին ՚ի անպատշաճութենէ պատկերացն այնուհետև զառածանէին։

Նոկ մեծն Արիոզ զմիտս իւր յայտ առնէ, ոչ միայն անդ յասելն "զի մի ձեռագործին մատուսցի երկրպագութիւն,,, այլ և ՚ի թղթին առ Աեկունդինոս՝ ուր ասէ. "Աէ որպէս առաջի Աստուծոյ երկրպագեմք առաջի պատկերին Արիստոսի, այլ այնմ՝ զորոյ պատ-

կերաւն այնուիկ զծնանդ կամ զբարբարանս՝ միանգամայն և զաւազմեըն ընդ աջմէ ՚օր յիշատակեմք ,,։

Ա՛տրկ. Դ. Ա երբեւրական պաշտօն ասէք մատուցանել պատկերաց , սակայն գնէք ՚ի նոսա զօրութիւն լինչ և գերազանցութիւն . քանզի զամանս յայնցանէ աքանչելագործս համարիք և ՚ի տար աշխարհայ խուռն ընթանան առ այնս ուխտաւորք , և արգադիր նուէրս ածեն ։

Պ՚ե . ՚Հաւատացելոց զամանս ՚ի պատկերաց քան զայլս գերազասելոյ պատճառք արտաքինք են , և ոչ ներքինք ։ Ա՚յսինքն զի Ա՚ստուածծ աքանչելիս անդ առաւել քան յայլ տեղիս գործէ , կամ զի ՚ի սուրբ նկարչէն են նկարեալ , և կամ զի առաւել շարժեն զուխտաւորս ՚ի հաւատ՝ առ որ սահմանեալ իսկ են պատկերք որպէս մատեանք հոգևորք ։

Ա՚ստ այամ է իմանալ և զայցելութիւն տարաշխարհիկ ուխտաւորաց ՚ի սրբարանս անդր , որպէս ՚ի նախնի ժամանակաց հետէ կալաւ սովորութիւն , և արք երևելիք սրբութեամբ և գիտութեամբ հաստատեցին գործ՝ զի զիք անդ անապաշտութիւն ։

ԳՕԴՈՒԱԾ Ե

Քաղագս գերյարգութեան Տիրամօր ։

Պաշտօն գերյարգութեան , զոր կաթոլիկէ եկեղեցի ընծայէ Տիրամօրն , զնոյն ունի հաստատութիւն՝ որպէս այլոց սրբոց յարգութիւն ։ Պաշտօն կոչին Թէպէտ և էականապէս և առանց համեմատութեան ՚ի վայր քան զաստուածայինն , այլ գեր ՚ի վերոյ է քան զամենայն սրբոց ։ Նմէ այլք ՚ի սրբոց կարեն բարեխօսել վասն մեր , ապաքէն առաւել և Տիրամայրն՝ որ աստուածամայրութեամբն եղև պատճառ փրկութեան ազգի մարդկան ։ Ա՚ստ որոյ եկեղեցի առանձին պաշտամամբ մեծարէ զնա . և հաւատացեալք յամենայն ժամանակի կալան զնա բարեխօս առ տէր , երանելով միշտ զնա ըստ իւրում կանխատեսութեանն՝ վասն առնելոյ մեծամեծս ընդ նմա Հզօրին . „Ո՚վ ահա այսուհետև

երանեսցեն ինձ ամենայն ազգք, զի արար ինձ մեծա-
մեծս Տէրն ,, :

Զ ատ է ակնարկել յեկեղեցական գիտս ազգաց հա-
ւատացելոց, ի տօնացոյցս, և ի պաշտամունս կրօնա-
կանս, առ ի զանազանելոց զնա յայլոց սրբոց: Տօնա-
խմբութիւնք նորա անպատճն յանարատ յղութենէն
սկսեալ, ծնունդ նորա, ընծայումն, աւետումն, և վե-
րափոխումն, յանյիշատակ ժամանակէ և այսր կատա-
րին ուրոյն յամենայն ազգաց քրիստոնէից: Եւ եղա-
նակ աղօթից մատուցելոց նովաւ և առնա՝ այլազգ է
ամենևին յայլոց սրբոցն: Եւ թէպէտ այլ և այլ ոճով
յօրինեալ Ա ատենայն և Տունաց և մերս, այլ ամենե-
ցուն իմաստք ի նոյն յանկին, և նոյն ապաւինութիւն
է ամենեցուն ի մայրն հասարակաց՝ որում փրկիչն մեր
ի խաչին յանձնեաց զմեզ յանձն սիրելոյ աշակերտին: Ա ան որոյ ասեմք. “Ո՛ք զեզ ապաւինիմք ամե-
նասրբուհի, գերագոյն և հրաշալի և բաշխող բարու-
թեանց. աղերս եմ ծարաւեաց և հանգիստ աշխատե-
լոց. և եղեր վերընկալ աստուածային Ա անին ,, :

“Ո՛ստուածածին դու ես յոյս և ապաւէն խոստովա-
նողացս զքեզ ,, :

“Յոյս մեր և ապաւէն, մայր տեառն և կոյս սուրբ ,, :
“Ո՛րախութիւն տրտմեցելոց քնութեանս. գրաւական
կենաց մարդկան. խարխափ յուսոյ հաստատութեան.
օգնական և ընդոծ աշխարհի. հոտ անմահութեան
ծննդոցս Ա ւային. յոյս հաստատութեան մարդկան, միջ-
նորդ օրհնաց և ընդոհաց ,, : Ա՛ւ այլ ևս սոցին նման գո-
վաբանութիւնք, զորս ոչ ումեք ի սրբոց ընծայեմք:
Ո՛ստուածամայրութիւն նորա գեր ի վերոյ կացուցանէ
զնա ամենայն սրբոց և հրեշտակաց, վասն որոյ ասեմք.
“Ո՛վերնագունեալ և քան զերկինս բարձրագոյն, որ զան-
հասանելի զտերն յորովայնի քում կրեցեր ,, :

“Ա եհատոյն սերովբէից և բազմաչեայ քերովբէից
Տիրամայր աստուածածնին ,, :

Ա՛ւ քանզի ի լինելն մայր Ո՛ստուծոյ՝ ոչ դադարեաց
ի գոլոյ միշտ կոյս, որպէս ի վեր անդր ցուցաք ի սուրբ
գրոց և ի Ե արոց, վասն որոյ կոչեմք զնա Հոսո-ՈՒեանց
պարծանս, և ասեմք. “Ա՛րիս խորհուրդս սոսկալիս ի
քեզ տեսանի աստուածածնին. յղութիւն անսերմնա-

կան, ծնուեղ անարատ, կուսութիւն յետ ծննդեան մնալով անապական։ Ի լեռնէ վէմին առանց ձեռին հատեալ Դանիէլ գուշակեաց զանսերմին ծնուեղ քո, Տարան երկնաւոր. մայր, և յետ ծննդեան մնալով կոյս։

Ընդհանուր հաւատացեալք դաւանեն զնա զերծ ի նեղ գործական մեղաց, և ա՛ի նեղութենէ։ և ոչ երբէք եղև զայսմանէ խնդիր յեկեղեցւոջ։ Ասան որոյ ժողովն տրիդենտեան սահմանեաց, զի "Ոչ ոք ասիցէ՝ թէ կարօղ է մարդ յամենայն կեանս իւր մնալ անարատ յամենայն մեղաց, և ա՛ի նեղութենէ՝ առանց առանձինն շնորհացն Ընտրոյ, որպէս յաղագս երանուհի Կուսին ուղղի եկեղեցի, նզովեալ լիցի։" Ասան որոյ կոչեմք զնա ի շարականի "Ընդատան մաքուր ի փշոց մեղաց. ամպ թեթև յերկրային ցանկութեանց. սրբուհի անարատ. քաղաքավարեալ ի մարմնի անարատ վարուք։"

Եւ ոչ ի նեղգործական եւեթ մեղաց դաւանեմք զնա անարատ, այլ և ի սկզբնականէն, որպէս վկայութեամբք արեւելեան և արեւմտեան Հարց, և միաբանութեամբ աւելի քան զհինգ հարիւր եպիսկոպոսաց սահմանեաց Պիոս Թ. Յռոմայ հայրապետն։ Կաթոլիկէ եկեղեցի ոչ ընդունի ինչ արտաքոյ սուրբ գրոց և աստուածային աւանդութեան, այլ բացայայտէ զբովանդակեալս ի նոսին։ Այս բացայայտութիւն յաւելաւ և քան զևս միշտ յեկեղեցւոջ. որպէս զի բազում ինչ, որ աղօտ էին առ նախնեօք, լուսաւորեցան տակաւ և յայտնի եղեն։ Ո՛չ ի նախնի Հարք և վարդապետք եկեղեցւոյ գլխաւոր մասանց Հաւատոյ կացին ախոյեան ընդդէմ հինն աղանդաւորաց. իսկ յաջորդք նոցա տակաւ զմասնաւոր ընդդէմ նորանոր աղանդոց վիճաբանեցին։ Ասան որոյ են արդ ինչ ինչ յատուկ ճարտասանութեան, զորոց ոչ ինչ առ նախնեօք խնդիրք լինէին։

Յայտնի մի և անարատ յղութիւն Կուսին է։ Ո՛չ մինչև ցհինգերորդ դար աստուածաբանք եկեղեցւոյ զամենայն միտ կալան ի հաստատել ընդդէմ հինից աղանդաւորաց զաստուածամայրութիւն նորա և զմիշտ կուսութիւն և զանարատութիւն ի մեղաց։ Ի միջին դարս գոն գործեցին ցուցանել զանարատութիւն նորա և ի թեթև թերութենէ, և հաստատեցին լեալ զնա անընդունակ որպիսի և իցէ մեղաց։ Յետ այնո-

ընկ նրբամիտն Ալկոլտ ձեռն էարկ փաստիւք բանա-
կանօք հաստատել զանարատութիւն նորա ՚ի սկզբնա-
կան մեղաց։ Ի սկզբան անդ հակառակութիւն մեծ յա-
րեաւ ընդդէմ նորա. և թէպէտ համալսարանք Պա՛-
ղիոյ և Պերմանիոյ և Ապանիոյ ընկալան զայն, և սահ-
մանեցին՝ մի ուսեալ զաստիճան վարդապետութեան
առանց ուխտելոյ նորա պաշտպան կալ այսմ վարդապե-
տութեան, սակայն ոչ զգաստեաց վէճն. մինչև Պօ-
ղոսի Ե. Հռոմայ Հայրապետի յամին 1616 արգելուլ՝
մի ուսեալ հրատարակել գիրս կամ քարոզել կամ ըն-
թեռնուլ ինչ հրատարակաւ ընդդէմ անարատ յղու-
թեան Կուսին։ Եւ յամին 1622, ՚ի գրգռել անդրէն
տարաձայնութեան զայնմանէ, Պրիգոր ԺԵ. վերստին
հաստատեալ զվճիռ նախորդին իւրոյ, յաւել ևս ար-
գելուլ՝ զի մի ոք և առանձինն գրով կամ վիճաբանու-
թեամբ իշխեսցէ հակառակել այնմ։ Ընդդէմ և Պէլ-
ատանդր Ե. հաստատեաց։

Եւ յա ամենայն զգուշութիւնք հայրապետացն Հռով-
մայ եղեն, զի յաւանդութենէ եկեղեցւոյ բառականապէս
յայտնեալ տեսանէին զայս վարդապետութիւն։ Բայց
զի ոչ ուրուք ՚ի սրբոց, եւս և սրբեցելոցն յարգանդէ,
կատարի տօն յղութեան յեկեղեցւոջ որպէս զՏիրա-
մօրն։ Եւ յիրաւի. զի Թէպէտ և սրբեալք յարգան-
դէ, այլ ՚ի յղանալ անդ չէին սուրբք։

Պարձեալ զի որ ինչ ասեն Հարք ՚ի վերայ բանին
Ծննդոց (Գ. 15.) "Ադից Թշնամութիւն ՚ի մէջ քո, և
՚ի մէջ կնոջդ. և ՚ի մէջ զաւակի քո, և ՚ի մէջ զաւա-
կի դորա,,. շատ իսկ յայտ առնեն զմիտս նոցա զայսմ
խնդրոյ։ Աստուածաբանք ոմանք զայսոսիկ վկայութիւնս
Հարցն Յունաց և Լատինաց և զմերոցս իսկ ժողովեալ
հրատարակեցին. այլ մեք զմերոց Հարցն ևեթ՝ որք
Ջերմագոյնք յոյժ էին ՚ի պաշտօն Անարատ Կուսին, աս-
տանօր յաւելուածք։

Սուրբն Պրիգոր նարեկացի զսուրբ Կոյսն կոչէ, ոչ
միայն "Հրեշտակ ՚ի մարդկանէ, մարմնաւորեալ քե-
րովբէ... անխառն իբրև զօդ, մաքուր որպէս զլոյս, ան-
շաղախ ըստ նմանութեան պատկերի արուսեակին քարձ-
րութեան,,, այլ և յաւելու ասել յայտնագոյնս. "Ար
՚ի գրութենէ խառնութեան քառից տեղանակեալ տա-

բերաց անկցուդ միսացեր ՚ի մանկ հողաճնելոցս հասա-
րակաց, ոչ բերող ծանրութեան բնականկիր համաս-
տեղծս կարեաց ,,: Եւ այսու բանիւ ՚ի սկզբնական մեղս
ակնարկել նորա, յայտ ՚ի հետեւանացն է՝ որով ազատ
զինս առնէ ՚ի պարտեաց մահու, ասելով. “Ալացեալ
հասեր ՚ի բարձունս երկնից իբր անընդունակ ապակա-
նութեան և մահու լուծման. մարմին՝ յորմէ պատկա-
ռեաց ամօթով պարտիքն մահու ,,: Եւ առ ինչ պատ-
կառել մահուն, բայց զի չէգիտ ՚ի նմա զայն ինչ՝ որոց
դատակնիք էր պարտիքն մահու:

Եւ դարձեալ ասէ. “Ո՞եղուցելոյ կինոջն առաջնոյ
առանց յանցանաց զաւակ գովեցար ,,: Ո՞ր եթէ ոք
զներգործական մեղաց իմանալ կամիցի, զհամեմատու-
թիւն ՚ի բաց բառնայ ՚ի բանէս:

Իսկ բան շարականին “Յղացար անարատաբար, և
զո՞ստուած վայելչապէս ծնար ,,. Թէպէտ և երկդիմի՝
վասն ներգործական և կրաւորական նշանակութեան
յղանալ բային, այլ եթէ պարտ իցէ համարել՝ զի եր-
գիչն տրամաբանութեամբ կարգէ զբառս, մակբայն վայ-
ելչապէս ոչ այլազգ հիւրում տեղւոջն գտանի յեռեալ
տրամաբանօրէն և քերականօրէն, բայց տալով բանին
զհամաստս զայս. Յղացար անարատաբար, այսինքն զերծ
՚ի սկզբնական մեղաց, և վասն այսորիկ զո՞ստուած վայ-
ելչապէս ծնար: Կամ եթէ այլազգ ոչ հետեւութիւն
միացեալ ՚ի բանին, և ոչ պատճառ, թէ ընդէր կոյս վայ-
ելչապէս ծնեալ միայն իցէ զո՞ստուած, և ոչ նոյնպէս
վայելչաբար յղացեալ:

Ոչ աննշանակ ինչ է և եկեղեցական մաղթանաց մե-
րոց կոչել զնա սուրբ ամբիծ և անարատ. անբիծից լու-
ծիչ և քաւիչ մեղաց. ծաղիկ անթառամ տոհմի սե-
ռիս մարդկութեան. շառաւիղ օրհնութեան նախնոյ
ծնողին. գերահրաշ ծաղիկ՝ բուրեալ Աստուծոյ հոտ
անմահութեան ծննդոց Ադամայ. անթառամ ծաղիկ,
անդատապարտ շառաւիղ. զորմէ Ալ արդեն վարդապետ
ասէ. “Անդատապարտ շառաւիղն՝ ասել՝ թերևս զԱ-
ւայ ածել զմտաս, որ Յ՞ադամայ հատաւ կող՝ որպէս
շառաւիղ յորթոյ, և մեղայ պտուղ ցուցեալ՝ դատա-
պարտեցաւ ՚ի մահ, և մայր եղև մահկանացուաց: Ո՞Յ
անարատն իսկուհի, յամուլ ծնողաց արդարոց շառա-

ւիղ ընորհայ ընձիւղեալ, կենաց և փրկութեան ցուցեալ պտուղ՝ արտաքոյ եղև Նւայի պարտուցն, պատճառ և մայր կենաց եղև և ասացաւ ,, : Նւ ինչ մարթէր արտաքոյ լինել պարտուցն Նւայի, եթէ ընդ նորա մեղօքն էր պրաւեալ: Ոչխաելն է և զայն, զի անընատոհ ծաղէկ կոչի ի շարականս մեր և Ոչխատոս, զոր չէ և չէ մարթ իմանալ վասն անարատութեան իւրոյ ի ներքոյ ծոցական եւեթ մեղանչականութենէ: ,,Ոչ այսօր զանթառամն ծաղկեցար զծաղիկ ,,:

Յայսմ ամենայնէ ի միտ առնուլ է, զի անարատ յղութիւնն Կուսին վասն ընկալեալ էր առ Հաւատացելոյ, և առաւել յաղթի մերում:

Ապա այլ գերազանցութիւնն Կուսին՝ վերափոխումն մարմնոյ նորա իսկ և իսկ յետ մահուն յերկինս. որ եթէ պէտ չէք ի տուրբ գիրս, այլ այնպիսի հաստատուն և ընդհանուր աւանդութիւն է ի կաթուղիկէ եկեղեցւոջ, զի չէ մարթ մերժել զայն առանց ծայրագոյն յանդգնութեան: Զոր զՆհանիսեայ արիսպագոյ գրեալն առ երանելի աշակերտն Տիտոս, և զՆիկոդեմոսի՝ որք մանրապատում՝ աւանդեն զհանգամանս փոխման Կուսին, Յովհաննայնն մեր քերթողաբար զամենայն հանգամանս վերափոխման նորա յեղյեղէ ի պատիւս տնօրէն. զժողովել սրբոց առաքելոցն հրաշափառ կոչմամբ ի միասին. զխոնարհել յերկինս որդւոյն միածնի զաստուք հրեղինաց յաւանդաւմն Հոգւոյ Ծնողին իւրոյ. զսպասաւորել քերովբէից ի վերափոխումն մարմնոյ նորա, և հրաշակերպ կառօք վերայուցանել զնա ի ստորայնոյ աստի ի գերագոյնսն կայանս. զերկնաշնոյն ղուարձանալ ընդունելով յերկրէ զմայր Նանին Նստուծոյ յիմանալի խառնակ անմահից, և բազմեցուցանել նորա յաթոռ փառաց զհոգեղէն քրովբէն գչխոյ երկնի և երկրի ի ձախակողման աջոյն Որդւոյ, զոր պատրաստեալ էր նմա ոտիպ տիեզերաց հրեշտակաց և նահապետաց, մարգարէից և առաքելոց, խոստովանողաց և մարտիրոսաց, կուսանաց և ամենայն սրբոց:

Նյս ամենայն գերազանցութիւնք Կուսին քաջայայտ առնեն՝ թէ ընդէր եկեղեցի առանձին մեծարանօք գերպատուէ զնա, և յորդորէ զհաւատացեալսն ընդդէմ մոլորութեան նորագանդից՝ ի նա յետ Նչխատո-

սի դնել զայս փրկութեան մերոյ, և ողջունելով զնա ատեպ գաբրիէլեան ողջունին, ասել. Ուրախ Ա՛ա-ըիամ, մայր Ա՛ստուծոյ, բարեխօսեա վասն մեր մեղա-ւորացս այժմ և՛ ի ժամու մահուան մերոյ։

ԳԼՈՒԽ ԺԶ

ՑԱՂԱԳՍ ՊԱՏՃԱՌԻ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ

Դարձ արարեալ ուստի սկսաքն, կրկին նպատակք են մարգեղութեան ըստ Ա՛արց. փրկութիւն մարդկան և փառք Ա՛ստուծոյ։ Ի բեշտակք յաւետարանել զծնունդ փրկչին առ հովիւս՝ ի Բեթղեհէմ, երգեցին. "Փառք՝ ի բարձունս Ա՛ստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ՝ի մարդիկ հաճութիւն,,։ Ա՛յլ մերձաւոր և գլխաւոր նը-պատակ մարդեղութեան է փրկութիւն մարդկան, և վասն այսորիկ Բրիստոս Անանն մարմին եղեալ՝ կոչի փրկիչ աշխարհի. և ինքն իսկ ասէ. "Ա՛յնպէս սիրեաց Ա՛ստուած զաշխարհ, մինչև զորդին իւր միածին ետու, զի ամենայն որ հաւատայ՝ ի նա՝ մի կորիցէ, այլ ընկալ-ցի զկեանսն յաւիտենականս. զի ոչ առաքեաց Ա՛ստուած զորդի իւր յաշխարհ՝ թէ դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ,,. (Յհ. Գ. 16)։ Նա այլուր ասէ. "Ո՛չ ի եկն որդի մարդոյ լինդրել և կեցուցանել զկորուսեալն,,. (Ղ Է. ԺԹ. 10)։ Նա առաքեալն ասէ. "Հաւատարիմ է բանս և ամենայն ընդունելութեան արժանի է, զի Քրիստոս Յիսուս եկն յաշխարհ փըր-կել զմեզաւորս,,. (Ա. Տիմ. Ա. 15)։ Ա՛ման որով խոս-տովանիմք ընդ Ա՛ստս Նիկիոյ սուրբ ժողովոյն և Կոս-տանդնուպոլսի և ընդ Համօրէն եկեղեցւոյ զի Բրիս-տոս միածին որդին Ա՛ստուծոյ իջեալ՝ ի յերկինից՝ մարմնացաւ մարդացաւ "Ա՛ման մեր մարդկան և վասն մե-րոյ փրկութեան,,։

Ա՛ման որոյ հաւատի Թուի, զի միակ պատճառ մարդեղութեան էր փրկութիւն մարդոյ, և ոչ մարդանայր որդին Ա՛ստուծոյ, եթէ մարդոյ չէր մեղսացեալ. Թէպէտ և Ադամ և Եւա և աշակերտք նորա, և այլք ևս ոմանք յաստուածաբանից այլազգ կարծիցեն, Ո՛չ Թէպէտ

և խնդիրս այս ոչ է՝ ի հաւատոյ, այլ սուրբ գիրք ա-
մենայն ուրեք զայն պատձառս տան գալստեանն Քրիս-
տոսի, որպէս և՝ ի վկայութիւնս՝ ի վեր անդր է տեսա-
նել. և սուրբ հայրք զնոյն ուսուցանեն։

Սուրբն Հրանաս (գիրք Ե. գլ. ԺԸ.) "Ոմն ոչ ունէր մարմինն փրկել, և ոչ Հանն Աստուծոյ եղանէր մար-
մին. Թէ չունէր խնդրել զվրէժ արեան արդարոյ, և ոչ տէրն արիւն առնոյր ,,։

Սուրբն Աթանաս. "Յառաջէ քան զմարդն եղա-
նիլ Հանին՝ կարիք մարդկան, առանց որոյ ոչ արդեօք զգենոյր մարմին... իսկ մարդն եղանիլ նորա ոչ ար-
դեօք տեղի գտանէր, եթէ ոչ մարդկան կարիքն լինէր պատձառ ,,. (Ձառ Ե. ընդդէմ արեան)։

Աստուածաբան. "Ո՛րինչ մարդկութեանն, զոր վան մեր յանձն էառ Աստուած, պատձառ։ Փրկեցին զամենեսին զմեզ. զի զրինչ այլ ,,. (յաւարտ. գլ. լԸ)։

Կիւրեղ աղեքս. (՝ի Ջերաց. խաչ. Ձառ ա.) "Եթէ ոչ մեզք էին, և ոչնամանակից մեզ լինէր որդին Աստու-
ծոյ ,,։

Ասկեբեան (յԵբր. Ձառ Ե.) "Որին վան էառ ըզ-
մեզ մարմին, վան ողորմութեան միայն, զի ողորմե-
ցի մեզ. քանզի չէիք և ոչ մի պատձառ անտեառութեան, բայց միայն այս ,,։

Որոգինես (՝ի գԵր. Նաւայ. Ձառ խՋ.) "Եթէ չէին մեզք, ոչ Տարկ լինէր որդւոյն Աստուծոյ գառն լինել, և ոչ պէտք էին զենուլ նմա՝ ի մարմնի. այլ կայր միայն որ էին՝ ի սկզբանէն էր Աստուած Հանն ,,։

Աթբոսիոս (յՂ. Մատթեղ. գլ. Ճ.) "Ո՛րինչ այլ պատ-
ձառք էին մարդեղութեան, բայց զի մարմինն մեղու-
ցեալ փրկանաւորեսցի ,,։

Գրիգորիոս (յԵփեսոսեան. Ձառ Ը. գլ. Ը.) "Եթէ չէր մարդն կորուսեալ, որդին մարդոյ ոչ էր եկեալ. ա-
պա կորուսեալ էր մարդն, եկն Աստուածն մարդ, և գտաւ մարդն ,,։

Սուրբ Ղուսաւորիչն (յԱֆոմ.) "Որդին եկեալ կա-
տարեաց զկամն Հօր. և զրինչ իցէն կամք Հօր, եթէ ոչ զի զմարդիս մարդկան զմերժեալսն ընկալցի միւսան-
գամ յաւերքացութիւնն ,,։

ԳԼՈՒԽ ԺԷ

ՅԱՂԱԳՍ ՀԱՐԿԻ ՄԱՐԴԿՈՂՈՒԹԵԱՆ

Աչառ է Աստուած՝ ի գործս իւր, զամենայն որ ինչ կամեցաւ և արար, երբ և որպէս կամեցաւ, առանց՝ ի հարկէ իմեք բռնադատելոյ կամել զոր կամեցաւն։ Կա՛ր չէր ստեղծանել զաշխարհ, և չառաքել զորդին իւր յաշխարհ. մարդեղութիւն և ոչ յետ լինելութեան մարդոյ էր հարկաւոր. զի մարթէր մարդոյ լինել ընդ Աստուածոյ՝ որպէս և էրն միւնչև մեղուցեալ, առանց միջնորդութեան Աստուծոյ մարմնացելոյ. զի և յառաջ քան զմարդեղութիւն «Տես Աստուած զամենայն զոր առար, և ահա բարի էին յոյժ»։ (Ծն. ա. 31)։ Իբր ոչ եթէ ամենևին բարի և ամենակատար, որպիսի Աստուած միայն է. այլ որպէս համեմատ վախճանին՝ յոր սահմանեաւն էր, և նպաստին՝ որովք կարէր հասանել վախճանին։ Ասուրբ գիրք, Հայրք և եկեղեցի, ընդդէմ զմարդեղութիւն հեաւանս իմն արատչութեան, այլ բարերարութիւն գերբնական՝ արդասիս եթէ բարութեան, ողորմութեան և մարդասիրութեանն Աստուծոյ։ «Յայսմ երևեցաւ սէրն Աստուծոյ՝ ի մեզ, առ սէ առաքեաւն (ա. Յհ. դ. 9.) զի զորդին իւր միածին առաքեաց Աստուած յաշխարհ, զի եղիցուք նովաւ կեցդանիք. յայսմ է սէրն, ոչ զի մեք սիրեցաք զԱստուած, այլ զի նա սիրեաց զմեզ, և առաքեաց զորդին իւր՝ ի քաւութիւն մեղաց մերոց»։

Եւ ոչ յետ անկման նախահաստեղծին հարկաւոր էր մարդեղութիւն յաստուածականէս կողմանէ. ապա թէ ոչ, ոչ ևս տիրապէս ընդհք ողորմութեան և մարդասիրութեան լինէր աստ։ Եւ զինչ իրաւունք էին մարդոյ յապստամբել իւրում յարարչէն պահանջել զընդհս նորա. փրկութիւն մեր չէ և չէ ըստ արդարութեան, այլ ձրի ընդհք ողորմութեանն Աստուծոյ. «Ասա իւրում ողորմութեանն ապրեցոյց զմեզ»։ (Տիտ. գ. 5)։ «Եւ արդարացաք ձրի նորին ընդհօք»։ (հռ. գ. 24)։ Այլ բարութեանն Աստուծոյ կարի վայելուչ էր, և

յոյժ պատշաճ այնմ՝ որ սիրէ ողորմել՝ չլքանել զմեզ-պարտքս, այլ տալ մեզ հնարս մերձենալոյ առ ինքն՝ մատչելով ինքնին առ մեզ մարդեղութեամբ որդւոյ իւրոյ։ Ալ ասն այսոսիկ ասէ. (Հհ. ՟ը. 16.) "Լինիցի սիրեցեալ Լուսաւածդ զաշխարհ, մինչև զորդին իւր մատծին ետ. զի ամենայն որ հաւատայ՝ի նա, մի կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս,,։

Ա՝ինա ևս խնդիր առնեն աստուածաբանք. զի և յետ անկման մարդոյ՝ կամելով Լուսածոյ ըստ իւրում ողորմութեանն փրկել զմարդ, գոյր արդեօք հարկ մարդեղութեան՝ թէ կարէր Լուսած առանց այնր առնել զփրկութիւն։ Լուաբելագոյնք յաստուածաբանից ասեն՝ թէ կարէր. Նարք ևս զնոյն ուսուցանեն։

Լթանաս (ընդդէմ արիանոսաց. Ճառ ը.) "Կարող էր և առանց գալստեան ինչ իւր՝ ասել միայն, և լուծանել զանէծս,,։

Լստուածաբան (Ճառ Թ.) "Ո՝յսոսիկ Քրիստոս, այն որ և կամօք միայն՝ որպէս Լստուած՝ կարող՝ի փըրկել, որպէս և զամենայն ինչ ակնարկութեամբ հրամանի հաստատեաց,,։

Կիւրեղ աղէքսանդրացի (առ Նեստ.) "Նա ոչ իսկ մարմնոյ պէտս ունէր Լստուածն Նան, քանզի ապեհնիազ է, և կարող էր հրամանաւ լոկով զմեզս իրաւ գործել փրկութիւն,,։

Սուրբ Լ ուսաւորիչն (յԼֆես.) "Լէ եթէ առանց ինչ իւրոյ մնհուանն՝ կենդանութիւն տալ մեզ ոչ կարէր, այլ զի մեծացուսցէ զարարածս իւր՝ իւրով յանարգութիւն իջանելով,,։

Ժողովն Է իրակուանի. "Կարէր և այլազգ ապրեցուցանել զմեզ փրկիչն. այլ քանզի կամեցաւ զմեզ որդիս Լստուծոյ լինել, զգեցաւ զծառայի կերպարանս,,։

Իսկ յաղագս եղանակի այլազգ փրկութիւն մեր տնօրինելոյ, կէսք ասեն՝ թէ կարէր Լստուած հրաժարել յիրաւանց արդարութեան իւրոյ, և ձրի առնել թողութիւն պարտեաց մարդոյ՝ առանց պահանջելոյ հատուցումն։ Իսկ այլք՝ թէ չնորհելով Լստուծոյ նպաստս կամ հնարս ինչ մեզ անպիտելիս ըստ ամենայն հնար իմաստութեան իւրոյ, կարէր մարդ մատուցանել աստուածային արդարութեան հատուցումն ինչ, թէ-

պէտ և ոչ լիուլի կամ հաւասար պարտեացն՝ այլ բաւական առ՝ի գտանել զնորս՝ի նմանէ։ Կայր հասարակաց վարդապետութիւն աստուածաբանից այն է, զի չէր հնար մարդոյ առնել կատարեալ հատուցումն հաւասար Թշնամանացն առանց Քրիստոսի, և ըստ այսմ կարևոր համարին զմարդեղութիւն։ Քանզի չէք համեմատութիւն արժանեաց պարզ արարածոյ ընդ ծանրութեան Թշնամանաց մեծվայելչութեան արարչին, որպէս չէք համեմատութիւն ընդ սահմանեալ և ընդ անսահման։ Կ՚ասն որոյ առաքեալն ասէ (Եբր. Ժ. 4.) "Քանզի ոչ կարէր արիւն նոխազացն և ցլուց բառնալ զմեզս. վասն որոյ՝ի մտանել նորա յաշխարհ՝ ասէ. Զոհս և զպատարագս ոչ կամեցար, բայց մարմին հատուցեր ինձ"։ Կ՚ասէ այլուր (հռ. Ը. 25.) "Զոր յառաջ եդ Աստուած՝ի քաւութիւն՝ի ձեռն հաւատոյ արեամբ նորա, ի հանդէս արդարութեան նորա, վասն թողութեան յառաջագոյն մեղացն դարձեցելոց"։

Այսպա յայտ անձառելի խորհրդեան յաղթանակին միանգամայն ողորմութիւնն Աստուծոյ և արդարութիւն։ Ողորմութիւն, զի վասն մարդասիրութեան իւրոյ առաքեաց զորդին իւր միածին. "Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զորդին իւր միածին ետ"։ (Յհ. Ը. 16)։ Կ՚ս արդարութիւն, զի ոչ խնայեաց՝ի նա վասն քաւութեան մեղաց մերոց. "Առաքեաց զորդին իւր՝ի քաւութիւն մեղաց մերոց"։ (ա. Յհ. Ը. 10)։ Կ՚ս աստ՝ի դէպ ելանէ բան սաղմոսերգուին. "Ողորմութիւն և Ճշմարտութիւն պատահեացին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեացին"։ (ոչՀ. ՃՁ. 11)։

ԳԼՈՒԽ ԺԸ

ՅԱՂԱԳՍ ՊԱՏՇԱՃՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ

Բազում յոյժ են և բազմազան զայսմանէ բանք և տեսութիւնք Հարց, այլ զվերաւորապէս ըստ փառացն Աստուծոյ և ըստ բարւոյ մարդկութեանս պատշաճ համարին նոքա զմարդեղութիւն, Կ՚ս զի առաւելապէս

յաղթանակէին սուրբ փառքն Աստուծոյ, այն և՝ ի բանից առաքելոյն է յայտ. "Որ յայտնեացի արդ իշխանութեանց և պետութեանց, որ յերկինս են, ի ձեռն եկեղեցւոյ՝ բազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ, ըստ յառաջադրութեան յաւիտեանցն՝ զոր արար ի ձեռն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ,,. (Եփես. գ. 8)։ Եւ այլուր. "Որ ի միխիթարեացին սիրտք նոցա՝ տեղեկացեալք սիրով, և յամենայն մեծութիւն լրութեան իմաստութեան, ի գիտութիւն խորհրդոյն Աստուծոյ ի Քրիստոս Յիսուս, յորում ամենայն գանձք իմաստութեան և գիտութեան ծածկեալ կան ,,. (Կող. բ. 2)։ Եւ տէրն ինքնին ասէ. "Ես զքեզ փառաւորեցի յերկրի. զգործն կատարեցի, զորետուր ցիս զի արասցես ,,. (Յհ. ժէ. 4)։

Եւ որ ինչ զայսմանէ չարք առհասարակ չհաւատան՝ այսպէս համառօտ սուրբն Յոհան դամասկացի. (յղ. ուղղ. կա.) "Եւ զի աստուածանալոյ յուսով որսաց թշնամին զմարդ, կարի մարմնոյ ինքն խաբեալ որսացի. և յայտնի լինի միանգամայն բարերարութիւն և իմաստութիւն և արդարութիւն և զօրութիւն Աստուծոյ։ Բարերարութիւն այսպէս, զի ոչ անտես արար զտկարութիւն առեղծուածոյ իւրոյ. այլ գթացեալ՝ ի վերայ անկեալն՝ ձեռն ետ յարուցանել։ Իսկ արդարութիւն՝ որովհետև մարդ յաղթեալ գոլով, ոչ զայլ ոք արար յաղթել յաղթողին. և ոչ բռնութեամբ յափշտակէ՝ ի մահուանէ զմարդ, այլ զոր նախ՝ ի ձեռն մեղաց ծառայեցուցանէրն մահ, զսա բարերարն և արդարն գարձեալ յաղթող եղեալ նմա, և նմանեաւն զնըմանն վերակոչեաց։ Եւ իմաստութիւն՝ հնարք. վասն զի եգիտ կապելոյն հնարս լուծման ամենավայելուչ. վասն զի հաճութեամբ Որդի Աստուծոյ՝ միածինն որդին և Բանն Աստուծոյ և Աստուած, որ էր՝ ի ծոց Հօր՝ համագոյ Հօր և Հոգւոյն, .. խոնարհեալ՝ ի վայր ի՞նչ ընդ ծառայս ... և որ կատարեալ Աստուած էր, կատարեալ մարդ լինի։ .. Եւ այնչափ զօրութիւն Աստուծոյ երևեալ լինի. զի զինչ այլ մեծ քան զայն, զի մարդանայ Աստուած, և Բանն անխոտորելի՝ մարմին լինի ... և հնազանդի Հօր որով՝ ի մէնջ ... զի զմեզն ժառանգեսցէ զանհնազանդութիւն ,,։

Իսկ ըստ երկրորդ մասին՝ Թէ քանի օգտակարագոյն էր ազգի մարդկան ըստ այսմ օրինակի վրկագործու-Թիւնն, քազմօրինակ բացատրեն Իւրք՝ գերագոյն քան զարարչագործուԹիւն յուցանելով զայն։ Ասուրբ Ագուստինոսին այսպէս ըստ այլ և այլ գլխոց բացատրէ զայս վարդապետուԹիւն քանիւք Իւրոց. "Կարևոր եղև մարմնանալ Աստուծոյ՝ ինորոգուին մարդկային բնուԹեանս, վասն որոյ ասէ ()գոստինոս. Այն և յուցցուք՝ Թէ ոչ այլ եղանակ հնարաւոր պակասէր Աստուծոյ, որոյ կարողուԹեան ամենայն ինչ միօրինակ ներքոյ անկեալ կայ. այլ զի՝ ի պէտս բժշկելոյ զմեզս ԹշուառուԹիւն, էգոյր այլ դիպողագոյն եղանակ։ Եւ զայս մարԹ է մտաՅել ըստ յառաջադիմուԹեան մարդոյ առ բարին՝ նախ ըստ հաւատոյ, որ առաւելապէս յաջողէ այնու՝ զի հաւատայ նմին իսկ Աստուծոյ, որ խօսի։ Ապա որոյ ասէ ()գոստինոս. Ամ անխոտոր գնալոյ մարդոյն ընդ այդ առ ՃշմարտուԹիւնն, նա ինքն ՃշմարտուԹիւնն Աստուած որպէս Աստուծոյ լինքն ընկալեալ զմարդն՝ անկորուստ աստուածուԹեամբ, սահմանեաց և հիմնեցոյց զնոյն հաւատս։ Երկրորդ ըստ յուսոյ, որ և քան զևս հաստատի սովաւ. քանզի ասէ դարձեալ ()գոստինոս. Ոչ գոյր ինչ կարևորագոյն առ՝ի զօրացուցանել զյոյսս մեր, որպէս գիտել հաւաստեաւ՝ Թէ ՚ի՛չափ սիրէ ըզմեզ Աստուած. և ո՞ր այսմ առհաւատչեայ յայտնագոյն քան զայն, զի որդին Աստուծոյ արժանի համարեցաւ հաղորդ լինել բնուԹեան մերոյ։ Երրորդ ըստ սիրոյ, որ և քան զևս արծարծանի սովաւ. վասն որոյ ասէ ()գոստինոս. Ոչ այլ մեծագոյն պատճառ գալստեան տեառն քան զցոյց մարդասիրուԹեան նորա։ Եւ՝ի վերայ ասէ. Եթէ դանդաղեմք՝ի սիրել, գէթ մի դանդաղեսցուք սիրոյ սեր փոխադարձել։ Ըստ առաքինուԹեան, յորում զանձն օրինակ մեզ ընծայեցոյց. զի ասէ ()գոստինոս. Ըէր պարտ զՀետ երԹալ մարդոյ տեսանելոյ, այլ զՀետ երԹալ Աստուծոյ՝ զոր չէր Հնար տեսանել. ապա առ՝ի տեսանելի առնել մարդոյ՝ որում զՀետն երԹիցէ, Աստուած մարդացաւ։ ԻնքնագործուԹեան՝ որ Ճշմարիտ երանուԹիւնն է և վախՃան կենաց մարդկան. և այս ընտրհեցաւ մեզ մարդկա-

Թեսաղն Վրիստոսի, քանզի ասէ ()զոստինոս. Ա՛ստուած մարդացաւ, զի մարդն աստուածասցի ,,:

Այսպէս և զպատշաճողութիւնս զվերոյ հանգամանաց մարդեղութեան ցուցանեն Հարքն. և նախ՝ թէ ընդէր Որդի, և ոչ Հայր կամ Հոգի մարդացեալ:

Աւրբն Յոհան դամասկացի. "Որդին Ա՛ստուծոյ որդի մարդոյ լինի, որպէս զի անշարժ կացցէ Հնասցէ ինքնութիւն. քանզի որդի Ա՛ստուծոյ էր, որդի մարդոյ եղև. մարմնացեալ՝ի սրբուհւոյ Ա՛ստուածածնէն, և ոչ փոփոխեցաւ յորդիական ինքնութենէն ,,:

Գրեննադիոս. "Ոչ Հայր մարմին եառ, և ոչ Հոգին, այլ միայն Որդին. զի որ էրն յաստուածութեան՝ Ա՛ստուծոյ Հօր որդի, նա ինքն լինելով և՛ մարդուն՝ մարդոյ մօր որդի. զի մի որդիութեանն անուն յայլ դէմս անցանիցէ, որ չիցէ միջանձնաւոր ծննդեամբ որդի ,,:

Փուլգենտիոս. "Ոչ ևս յատուկ լինէր Որդւոյ առանձին այն՝ զի չէ ծնօղ, այլ միայն ծնեալ յէութենէ Հօր, . . . եթէ Հայր՝ որ ըստ աստուածայինն բնութեան չէ ծնեալ Ա՛ստուծոյ, ըստ մարմնոյ ծնանէր՝ի կուսէ ,,:

Ա՛թանաս. "Ոչ այլոյ էր յերկեղ ապականութենէ զմարդիկ վերածել, բայց Բանին Ա՛ստուծոյ՝ որ և՛ի սկզբան անդ արարչագործեաց զնոսին ,,:

Աւրբ Ասաւորիչն. (Ա՛ֆտ.) "Ա՛յլ Հօր և բազուկ միածինն Վրիստոս, և նովաւ լուսաւորեցան եղեալքն. որ՝ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Ա՛ստուած, և Ա՛ստուած էր Բանն, որ ամենայն ինչ նովաւ եղև, և նովաւ հաստատեցան ամենայն ինչ՝ որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, հարկ էր զի նովաւ սրբեսցին, որպէս եղէնն և հաստատեցան, և նովաւ լուսաւորեսցին ,,:

Ներկրօրդ՝ զի Բանն Ա՛ստուած ոչ վայրապար զմեղուցեալ մարդոյն էառ զբնութիւն:

Ա՛թանաս. "Ա՛յնու բնութեամբ պարտ էր գալ, որ խաբանօք բանսարկուին մեղաւ. զի մեղուցեալ բնութիւնն անմեղ հանդիսացի ,,:

Վրիգոր նիւսացի. "Ո՛վ ոչ է բժշկել խօթացեալն, եթէ ոչ ցաւագնեալ մասին զինքեան սեպհական

ընդունելով զպարման թժշկութեան ։ ։ ։ Այլ ինչ իրի է՝ թէ զերկրաւոր քնութիւն անարժան համարին ընդ Աստուած միաւորութեան, ոչ արդեօք և այլ ինչ քնութիւն գոյի արժանաւոր. ապա եթէ ամենայնն զուարճահաւատար լեռանեալ գոյանի յարժանեաց, քաջալվայելուչ է Աստուծոյ բարերարել կարօտելոյն ,, ։

Տերտուղիանոս ։ “Այլ մեծ է՝ եթէ Հոգին Աստուծոյ զմարմին ապաքինէ, այլ այն՝ եթէ մարմին համանըման մեզանչականին, յորչափ մարմին է՝ այլ ոչ մեզաց ։

“Օ՛ն ոչ առաջարկութեանն Կրիստոսի, որում առաջի կայր ունայնացուցանել զմեզս մարմնոյ, զիարդ ինչ էր՝ ոչ ՚ի նոյն մարմնի ունայնացուցանել զայն, յորում էր քնութիւն մեզաց, և ոչ փառաց նորա. զի զինչ մեծ է՝ եթէ ՚ի լաւագոյն մարմնի և յօտարին, այս է յանմեզ քնութեան, լուծցէ զկրճինն մեզաց ,, ։

Արդարև՝ զի ոչ էր վայրապար Յովհաննէս Աստուծոյ մտանել ընդ օրինօք, և յանձն առնուլ զամենայն կիրս մարդկային կենցաղոյս բաց ՚ի մեզաց ։

Լակտանտիոս (ընդդէմ հեղնասոյ.) “Այլ մարդոյ է գոլ կատարեալ հրահանգիչ՝ եթէ չիցէ նոյն ինքն Աստուած, որպէս զի երկնաւոր իշխանութեամբն հարկեցուսցէ զմարդիկ ՚ի հնազանդութիւն. և ոչ Աստուծոյ՝ եթէ ոչ մարմին զգեցցի մահկանացու, որպէս զի գործովք զպատուէրս իւր լցեալ՝ ձգեսցէ զայլս ընդ հարկաւ հնազանդութեան ։ Այն որոյ պարտ էր նմա յանձին բերել զմարմնոյ տկարութիւնս և զառաքինութիւն՝ որոյ է ուսուցիչ, որպէս զի բանիւք և արդեամբք ուսուսցէ զայն. մանաւանդ և մահու և չարչարանաց ներքոյ անկանել. Այն զի և ՚ի տանել տանջանաց և ՚ի ձաշակել զմահ՝ հանդիսաք առաքինութեան ՚ի վեր երևին. և ահա այսմ ամենայնի պարտի համբերել կատարեալ վարդապետն, որպէս զի ցուցցէ թէ հնար է համբերել ,, ։

Նոյնժամայն՝ զի էր վայրապար յամեցուցանել մարդկութեան մինչև ցվախճան ժամանակաց, այսինքն կետ այնչափ հազարաւոր ամաց անցանելոյ յանկմանէ մարդոյն ։

Արնոբիոս նիւասացի. “Նակ եթէ ասիցէ ոք, զի է՝ զի ոչ ՚ի վաղ ժամանակաց զայդ գործեաց բոլորեցունց ա-

բարիչն, մեղադիր ասպա լիցի և բժշկաց, զի 'ի վերջոյ պահեն զզօրագոյնս 'ի դեղոց ,, :

Տերտուղիանոս . "Տերն մեր տեղի տուեալ եռանդեան յանցանաց՝ մինչև ըստ ժամանակին դեղն կազմեցի, առ սակաւ սակաւ հանդերձեաց զդարմանս . զամենայն վարդապետութիւնս հաւատոյ ախտահալածս, բանին մահու բանիւ կենաց վարատիչս, և ունկնդրութեան ստունգանութեան՝ ունկնդրութեամբ բարեպաշտութեան ազարտիչս ,, :

Նզնիկ . "Ընդն Աղուանից՝ 'ի տղայութեան աշխատի, զի տղայքն կամին պիտոյ եր և ոչ հաստատուն կեցուածք : Նա ոչ յեռանդան երիտասարդութեանն՝ յորժամ զեղջր մոլորութիւն դիւապաշտութեան . այլ նախ կրթեաց քարոզովքն և մարգարէիւք իբրև կամաւք, և ապա եկն տալ զկատարեալ վարդապետութիւնն իբրև հաստատուն կերպակուր : . . . Ո՞չ գալոստ որդւոյն իւրոյ յայնմ ժամանակի պատշաճեաց, յորում գիտէր Թէ օգուտ լինելոց է : Նա եթէ բժիշկք՝ ըստ պէսպէս հիւանդութեանց ազգի ազգի դեղս ախտացելոյն մատուցանեն . զի որ 'ի սկզբան ցաւոյն դէպ լոյծ՝ զայն 'ի սկզբանն մատուցանեն, և որ յընդմիջելն՝ զայն 'ի միջոցի, և որ 'ի պառաւել ցաւոյն՝ զայն հուսկ յետոյ, ծրչափ և ամենահնարն, յորմէ ամենայն հանդամանք հնարոցութեան բաշխեալ են, 'ի դէպ ժամանակի առնէ զոր առնէ ,, . (գիրք ՟Բ . գլ . ԺՂ) :

Սուրբ Աստուածընկալն . "Նակ արդ ընդէր արդեօք յերկարել միաճինն՝ այնչափ ներգութիւնս արարածոյն հասուցանէր . եթէ ոչ՝ զի նախ ազգ արարեալ, յառաջագոյն ընդելականս առնիցէ . զի մի յանկարծ երևեալ անծանօթն՝ անընկալ լինիցի, այլ իբրև հայցողաց և սպասողաց եկեալ՝ ծանօթս տացէ : Ո՞ր եթէ յայնչափ ժամանակաց առ ազգարարեալն եկեալ՝ անընկալ եղև, ծրչափ և ոչ ազգեցելոյն ,, (Ո՟գաւ .) :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Թ

ՋԻ ՋԻՈՐՀՈՒՐԴ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ ՈՉ Է ՄԱՐԹ ՑՈՒՑԱՆԵԼ ԼՈՒՍՈՎ ԲԱՆԻ, ԱՑԼ ԵԻ ՈՉ ԸՆԴԴԷՄ Է ԱՑՆ ԼՈՒՍՈՑ ԲԱՆԻՆ

Խորհուրդս այս ոչ ինչ նուազ քան զսրբոյ Երրորդութեանն անհասանելի է մտաց։ Ո՛չ ոսկիս կոյր՝ ի ծնէ չկարէ ըմբռնել զլոյս, և ոչ խուլ զձայն, նովին իսկ զի՝ ի վեր են քան զզգայութիւնս նորա, նոյնպէս և ոչ միտք կարեն ըմբռնել զբեր՝ ի վերոյս քան զինքեանս։ Յարդեանց եւեթ կարեմք ցուցանել զհնարաւորութիւն իրին, այսինքն զի ցուցանեմք լեալ զայն. այլ էն և էն հնար ցուցանել իմաստասիրաբար ոչ զորպէսն, և ոչ զհնարաւորութիւն նորին։

Քանզ ոսկիս չկարեն միտք զհնարաւորութիւն իրին ցուցանել, նոյնպէս չկարեն և ոչ անհնարին ցուցանել զայն, նովին իսկ՝ զի է խորհուրդ անհասանելի, և միտք զգեր՝ ի վերոյս քան զինքեանս չկարեն դատել։ Ո՛չ ազնազանութիւն աստուածային և մարդկային քննութեանց՝ ի միում անձին, և նոյն մի անձն Քրիստոսի Աստուած և մարդ, յաստուածային յայտնութենէ եւեթ է մեզ գիտելի. և է խորհուրդ այնպիսի, որում սարտ է մեզ երկրպագել՝ գերելով եւեթ զմիտս՝ ի հնազանդութիւն Աստուծոյ, որ ոչ խաբել և ոչ խաբեել կարէ։ Քանզ ուսեալ միանգամ զայն՝ ի հաւատոց, կարեմք այնուհետև զնմանութիւն ինչ նորին նշմարել՝ ի միութեան հոգւոյս մերոյ ընդ մարմնոյ, ոսկիս գեղեցիկ իմաստասէրն Պաւղոս. «Ոսկիս շունչս մեր՝ էակ հոգեղէն և անեղծ՝ միացեալ է ընդ մարմին եղծանելի, և յերկոցունց սոցա միաւորութենէ յառաջ գայ բոլոր մարդ՝ հոգի և մարմին, անապական և ապականացու, իմացական նոյն և նիւթական, և բոլոր մարդոյն ըստ կրկնակի մասանցն պատշաճին այս ամենայն ստորոգելիք, ըստ սմին օրինակի Քանն՝ որ կամենայն էրէ ազգատեամբ՝ միացեալ աբանելապէս, մանաւանդ թէ եղեալ կատարեալ միութեամբ Յիսուս Քրիստոս որդի Աստուծոյ, Աստուած է նոյն և մարդ. անժամանակ, և ծնեալ՝ ի ժամա-

նակի. որ էն միշտ ի ծոց Հօր, և վասն փրկութեան մերոյ մեռեալ ի խաչափայտի: Ա՛յլ ուր Աստուած ի նեղքս մտանէ, քանի Թեղի գտանին ամենայն որ ի մարդկայնոց աստի առեալ նմանութիւնք,,. (Յօտ է Վէպս ապփաց. մասն ը. գլ. ժԹ):

Այնպէս դարձեալ առաջնորդութեամբ Հաւատոյ կարեմք ցուցանել, զի չկք ինչ Հակասութիւն ի խորհուրդ մարդեղութեան, որպէս ի վեր անդր ի պատասխանիս առարկութեանց աստուածային բնութեանն Քրիստոսի բացատրեցաք (մասն ը. գլ. ա):

ՃՍՈՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՑԱՂԱԳՍ ՇՆՈՐՀԱՑ

Ադրպասէք մարդեղութեան Յանին են ընտրեք, որով հաշտիմք ընդ Աստուծոյ, որով աստուածային բնութեան լինիմք հաղորդակիցք և ժառանգք յաւիտենական կենաց երանութեան։ Ահ զինչ է ընտրեք՝ որ սկիզբն արդարանալոյ մերոյ է, թէ ոչ պատճառ ներգործէ այն ի կամ մեր, և իբր ընդ ազատութեանս մերում միաբանի, անհասանելի իրք են մտաց մերոց։ Ահա ժուռ լինն է, ասէ սուրբն Գրիգորիոս, ընտրել զատոյգն ի խնդիր ազատութեան մարդոյ և ընտրհացն Աստուծոյ. որպէս զի ի պինդ ունել զազատութիւն՝ Թուի թէ զընտրհս ոչ ուրանայցէ, և ի պինդ ունել զընտրհս՝ Թուի թէ զազատ կամս ուրանայցէ։։ (յղ. ընդդ. գիրք ա. գլ. խէ)։ Աւ ի չգոյէ զգուշութեան ի միջամտմանի երկոցունց ծայրից կալոյ, յաւաջ եկին ծանր ծանր մոլորութիւնք։

Աւ ի կալ ջատագով ազատութեան մարդոյ, նախ՝ պէտ էգեանք, զիր զամբարձումն նախատեղծից ի ձեռն սկզբնական արդարութեան ի կարգ գերբնական՝ ոչ ընդունէին, վասն որոյ և ոչ զսկզբնական մեզաց արատ՝ որով ապականեալ տկարացաւ մարդկայինս բնութիւն, համարեցան մարդոյ՝ զօրութեամբ անձնիշխանութեան իւրոյ առանց նպաստից աստուածային ընտրհաց գոլ ինքնաբաւ հասանելոյ ի կատարելութիւն յաւիտենական, և և յանկրակատութիւն։ Արդարոյդ՝ սակայնեանք և քանականք, զիր յերկոսին և մասնաւնս միաբանեալ ընդ պէտէգեանս, համարին զնախատեղծն ի դրախտին օրհնակ ևեթ լեալ իմանալին կատարելութեան՝ յոր որդիք

նորա կոչին, և միւս այլ յոյժ առաւել կատարելագոյն օրինակ յաւելեալ ՚ի նոյն Յիսուս Քրիստոս, զոր կարեն յանձինս իւրեանց ստանալ, մանաւանդ թէ և զեռ բազանցել զնուաճս այնոքիկ՝ որոց առեալ է բաւականութիւն լինելոց կատարեալ։ Արդարդ՝ կիսասպեղաքեանք, որոց նոյն համարեալ ՚ի նախաստեղծն զամբողջութիւն բնութեան ընդ պարզև ամբարձմանն ՚ի կարգ գերբնական, թէպէտ և զսկզբնական մեղաց ընկալան զսերունդն, սակայն զսկիզբն փրկութեան և ըզյարատևութիւն՝ անձնիշխանութեան մարդոյ ետուն՝ առանց նպաստից շնորհաց. որով բարձին և զկարևորութիւն և զձիրն տուչութիւն շնորհաց։

Այլք ՚ի հակառակն ծայրայեղ զառածեալ, բարձին զազատութիւն մարդոյ։ Վասնզի նորաղանդք վեշտասաներորդի դարուն զնախաստեղծին ամբողջութիւն բնութեան, և զպայման գերբնական՝ յետութենէ մարդկային բնութեան վարկուցեալ, համարեցան նախ՝ սկզբնական մեղօք այնպէս ապականեալ զբնութիւն մարդկային, մինչև ոչ իսկ ՚ի նմա մնալ անեղծ և ամբողջ։ Արկրորդ՝ այնպէս շինջեալ ՚ի նմա զազատութիւն կամաց և զոյս քանին, մինչև ոչ մի ինչ բարի գործ և ոչ ՚ի բնական կարգի կարել գործել։ Արբորդ՝ զամենայն ինչ առանց շնորհաց արարեալ՝ համարեցան յոռութիւնս և մեղս։ Չորրորդ՝ առ բարին ՚ի շնորհաց, և առ չարն՝ ՚ի ցանկութենէ համարեցան բռնադատեալ զմարդ, կրաւորաբար առ երկսեին իսկ թերելով։ Պայ, և ՚ի նըմանէ Յանսենիոս և Պաւէանել, զնորաղանդիցն մոլութիւն ընկալեալ՝ զսկզբնական արդարութիւն անկ համարեցան մարդոյ յանմեղութեան, և ամբողջական մանն նորին։ Եւ անդստին ՚ի նոյն մոլար սկզբնէ, զնոյն մոլար հետևանս յառաջ ածին, զկորուստ ազատութեան, զյոռութիւն բնական գործոց յանհաւատս և ՚ի մեղաւորս, զբռնութիւն շնորհաց և ցանկութեան, այլովքն հանդերձ։

Նակ կաթոլիկէ եկեղեցի ուսուցանէ նախ՝ զի սկզբնական արդարութիւն պարգև Աստուծոյ էր շնորհեալ մարդոյ յանմեղութեան՝ ձրի ամենևին և յաւելուած շնորհի։ Արկրորդ՝ զի մարդն յանկանել իւրում կորոյս զսկզբնական արդարութիւն իւր, հանդերձ յարակից

պարգեւօք։ Աղրոդ՝ զի նովին իսկ զրկեցաւ ՚ի գերբնական պայմանէն և ՚ի սրբարար շնորհաց, և ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ անկաւ յամբողջութենէ բնութեանն ՚ի յոռեգոյն պայման։ Ողրոդ՝ զի ըստ այսմ կորուսեալ զյաւերժուած շնորհին, անկաւ ՚ի պայման այնպիսի՝ յորում պարտ էր նմա էանալ, ՚ի բաց առեալ զմեզս, եթէ Աստուծոյ չէր կամեցեալ ամբառնալ զնա ՚ի գերբնական պայման և Քրիստոսաւանել այլովք ևս ձրիւք. այսինքն զի պարտ էր նմա ներքոյ կալ տկարութեան, զոր պահանջէ բնութիւն մարդկային։ Հինգերորդ՝ զի բնութեանս անկելոյ ոչ է մարթ առանց նպաստից շնորհաց՝ ոչ բաղձալ ինչ, ոչ կամել, և ոչ կատարել, ըստ գերբնականս կարգի։ Վեցերորդ՝ զի շնորհս այս ձրի ամենևին, այսինքն յառաջ պարգեւացն Աստուծոյ վասն վաստակոցն Քրիստոսի և արժանեաց՝ շնորհի մարդոյ։ Յօթներորդ՝ զի կարէ մարդ ազատօրէն գործակից լինել այսմ շնորհի, այսինքն զի ազատ է հաւանել ազդեցութեանն Աստուծոյ և կամ մերժել զայն։ Ութերորդ՝ զի և անկելոյ բնութեանս մարթ է զօրութեամբ ինքնիշխանութեանն, թէպէտ և տկարացեալ, կամել ինչ և գործել բարոյապէս բարի, վասն որոյ ոչ ամենայն ինչ՝ որ առանց շնորհաց գործին՝ մեղք են։ Իններորդ՝ զի ՚ի գժուարին դէպս պատուիրանապահութեան և ՚ի փորձութիւնս ծանուցանել պէտք են նմա զօրացուցիչ շնորհաց՝ որպէս կարօտ գտանել մարդ օժանդակութեան ՚ի հանգոյն դէպս բարոյապէս։ Տասներորդ՝ զի այս շնորհք ոչ պակասէ ումեք, մանաւանդ արդարոյ. քանզի Քրիստոս մահուամբն իւրով վասն ամենեցուն պատրաստեաց զայն։

Յերկուս մասունս զՀաւս զայս բաժանեմք. յառաջնումն ասել զներգործական շնորհաց, յերկրորդումն զսրբարար շնորհաց, և զվաստակոյ՝ որովք այնոցիկ լինիմք արժանաւորք։

ՄԱՍՆ Ա.

ՅԱՂԱԳՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՇՆՈՐՀԱՑ, ԵՒ ԲԱԺԱՆՈՒՄՆ ՆՈՐԻՆ

Շնորհս ընդհանրապէս իմանամք զամենայն ներքին և արտաքին պարգեւս Ա֊ստուծոյ, որպէս զստեղծուածն, զպահպանութիւնն, զօրէնս, և զամենայն իսկ բարերարութիւնս Ա֊ստուծոյ. ևս և զձիրս սքանչելագործութեան և մարգարէութեան, այլովքն հանդերձ: Այլ ձշդիւ առեալ՝ իմանամք զներքին նպաստս, զորս Ա֊ստուած վանն վաստակոյն Քրիստոսի շնորհէ անկեալ բնութեանս՝ օժանդակելով տկարութեան նորա առ՝ի գործել զբարի և խոստովել՝ի չարէ, կամ յարուցանելով զնա՝ի գերբնական պայման՝ առ՝ի կարելոյ կատարել ներգործութիւնս գերբնականս և արդարանալ նոքօք, և յարդարութեանն յարատևել, մինչև հասցէ կենացն յաւիտենից:

Ա֊ստուած ուրեմն շնորհք նշանակեն աստանօր ոչ միայն զձիրն պարգևեն զայն ներքին յաւելեալ՝ի բնութիւն մարդկայինն՝ որոյ արարչական պատճառ Ա֊ստուած է, արժանաւորական՝ Քրիստոս, և վախճանական՝ կեանքն յաւիտենից, այլ զայն ևս՝ որոյ կրկին են գործք, օժանդակել տկարացելոյ մեզօք բնութեանս մերոյ, և զանկեալ բնութիւնս զարձուցանել յառաջին պայման անդր գերբնական՝ ուստի անկաւն, առ՝ի կարօղ լինելոյ արդարանալ, թէպէտ և ոչ արժանի լինելով այնմ արդարութեան, որպէս յետ արդարանալոյ կարօղն է արժանի լինել կենացն յաւիտենից: Շնորհք, որ՝ի նոքոցումն տկարացելոյ բնութեանս պարգևեալ, կոչի էութիւն. իսկ որ՝ի ստացուածն կորուսեալոյ գերբնական պայմանին պարգևեալ, կոչի վերբերուն: Ա֊նգլի մարթ իսկ է, զի տացէ Ա֊ստուած շնորհս գործելոյ գերբնապէս՝ առանց յաւելլոյ զօրութիւն, որպէս՝ի դիւրին գործս և՝ի լեզուս փորձութիւնս: Ա֊յլ՝ի զուգընթանալ երկաքանչիւրոցն՝ի գործել ինչ՝ կատարի յատկապէս շնորհքն, որ ըստ ինքեան և ըստ եղանակին է շնորհք.

ըստ ինքեան՝ զի ներգործէ հզօրեղապէս՝ի կամս. և ըստ եղանակին, որով գերբնական գործքն եղանին, ներգործէ առաւելապէս՝ի միտս։

Ընդ ըստ այսմ իմացուածոյ՝ներգործական շնորհքն սահմանի. Պարգև, որով Ոգուստաճ լուսաւորէ զմիտս մարդոյ և զօրացուցանէ զկամս առ՝ի գործել զփրկու- Թիւն իւր, և արժանի իակ լինել կենացն յաւիտենից։ Եւ բաժանի նախ՝՝ի հանդաճամառ և՝՝ի պատճառ։ Ոստ նախնեաց, և մանաւանդ ըստ սրբոյն Օգոստինոսի, հանդաճամառն է՝ որ հանդէպ քան զամենայն վաստակս և արժանիս. իակ ըստ արդեաց է շարժումն ներգործեալ՝՝ի մեզ առանց մեր, որ ածէ՝՝ի բարին։ Ընդ կըրկին եղանակ տեսութեան կարևոր է առ՝՝ի քաջ իմացուած նախնեացն բանից։ Իակ շնորհք զուգընթաց՝ է գործակցութեան՝ որ գերբնական, որով գործակից լինիմք՝՝ի կատարումն գործոյն՝ յոր կանխաժամանն շնորհօքն շարժիմք։ Կանխաժամանն շնորհք անմիջաբար՝՝ի միտս ներգործէ, և միջնորդաբար՝՝ի կամս. իակ զուգընթացն անմիջաբար՝՝ի կամս։ Հետևաբանչիւրոց շնորհացս միանգամայն՝՝ի դէպ գայ սահմանն, զոր տայ սուրբն Օգոստինոս. (յղ. շնորհագին Վերեսոսէ. գիրք ա. գլ. ժբ.) այս ինքն՝ "Որով ոչ միայն Հանապազեմք որ ինչ պարտն է գործել, այլ և կատարեմք որ ինչ Հանապազեքն. ոչ միայն հաւատամք որ ինչ պարտիմքն սիրել, այլ և սիրեմք որ ինչ հաւատամքն։"

Ներգործականն շնորհք բաժանի դարձեալ՝՝ի բաւական և՝՝ի գործառնեայ։ Հաւական ասի այն՝ որ տայ զօրութիւն իսկապէս բաւական առ՝՝ի գործել զբարին, այլ պակասէ՝՝ի գործոյն՝ առ որ պարգևեալն է։ Իակ գործառնեայ, որով ոք կատարէ զգործն՝ վասն որոյ պարգևէ նմա զայն Ոգուստաճ։ Ուստի խոհր երկոցունց շնորհացս այսոցիկ յարդեանցն է. առաջնումն հակառակ կալով ուրուք և ոչ լինելով գործակից շնորհացն, երկրորդումն ոչ կալով հակառակ՝ թէպէտ և կարիցէ հակառակել։

Հաւականն շնորհք ստորաբաժանի՝՝ի ներչաւոր և՝՝ի հեռաւոր։ Ներձաւոր կոչի, որ զզօրութիւն կարևոր տայ անմիջապէս առ՝՝ի գործել զբարին. իակ հեռաւոր, որ՝՝ի ձեռն աղօթից տայ զնոյն։

Ա.յսոքիկ են ներգործական շնորհաց գլխաւոր բա֊ժանմունք. իսկ զունական և զարբարար շնորհաց, ո֊րովք արդարանայ մարդ, յերկրորդում մասին Ճառիս ինայ մեզ ասել։

ԳԼՈՒԽ Ա.

ՅԱՂԱԳՍ ԿԱՐԵԻՈՐՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀԱՑ

Պէղագեանք և Սոկինեանք, որպէս յառաջագոյն ա֊սացաք, ուրանան՝ի սպառ զկարեւորութիւն շնորհաց. իսկ կիսապէղագեանք ոչ ինչ կարեւոր համարին զայն առ՝ի գալ և յարատեւել՝ի հաւատս։ Արդարանդք ընդ հակառակն, ընդ որս միաբանին և յանսեենեանք, կա֊մակար ընդդունին զկարեւորութիւն շնորհաց. զի առանց այնորիկ և ոչ բարոյական ինչ բարի գործել մարդոյ, թող թէ առանց հաւատոյ և արդարանալոյ, այսինքն առանց սրբարար շնորհաց։ Ընդդէմ ամենայն մոլորութեանց սոցա զուղղափառ վարդապետութիւն՝ի յաջորդ յօդուածոդ բացատրեսցուք։

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Զի առ ամենայն և իւրաքանչիւր գործս փրկութեան կարևոր են շնորհք ներքին լուսոյ և ազդեցութեան Հոգւոյն սրբոյ։

Վարդապետութիւնս այս մանն է հաւատոյ սահմա֊նեալ՝ի ժողովն տրիդենտեան. “Որ ոք ասիցէ առ՝ի դիւրաւ եւթէ կեալ յարդարութեան և կենացն յաւի֊տենից արժանաւորել՝ պարգևին մարդոյ շնորհք, որպէս թէ ինքնիշխանութեան կամաց մարթ իցէ երկաքան֊չիւրոյն և բաւել առանց շնորհաց՝ այլ հազիւ և ըզ֊ժուարաւ, նզովեալ լիցի”. Եւ դարձեալ. “Որ ոք ա֊սիցէ՝ թէ առանց կանխաժամանի Հոգւոյն սրբոյ ազդե֊ցութեան և օգնականութեան կարող է մարդ հաւա֊տալ յուսալ և սիրել, և կամ որպէս արժանն է զըղ֊ջալ, նզովեալ լիցի”։ Ո՞յ այս ուղղափառ հաւատս վաղ

*իսկ և այլք ՚ի ժողովոց ուսուցին, մանաւանդ դիոսու-
պօլսեանն յամին 415, և Ք.րաւսեանն յամին 515։ Իսկ
տիեզերական ժողովն Եփեսոսի յամին 431, յետ քան-
ևերից մանական գումարմանց, ՚ի համագումար ատե-
նի դատապարտեաց զՊե՛ղագիոս վասն ժխտելոյ նորա
զսկզբնական մեղս և զկարևորութիւն և զձրի տուրս
շնորհաց առ ՚ի փրկութիւն։*

*Եւ զի այս վարդապետութիւն ՚ի սուրբ գիրս է հաս-
տատեալ՝ յայտ անտի է, զի առանց շնորհաց ոչ գոր-
ծել, ոչ կամել, և ոչ խորհել ինչ կարեմք առ ՚ի փըր-
կութիւն ըստ գրոց. ապա առ ամենայն ինչ գործ փըր-
կաւէտ՝ կարևոր են շնորհք։ Վասնզի ասէ առաքեալն.
(Ք. Կոր. Գ. 5.) "Ոչ եթէ անձամբ բաւական եմք խոր-
հել ինչ իբրև ՚ի մէնջ, այլ բաւականութիւն մեր Ա-
ստուծոյ է"։ Այս զխորհելոյ. իսկ զկամելոյ ասէ. (Փիլ.
Ք. 13.) "Ո՛վ ի Ա.ստուած է, որ յաջողէ ՚ի մեզ զկա-
մելն և զառնելն վասն հաճութեան"։ Եւ այլուր (Ե-
փես. Ք. 10.) զբոլորիցն իսկ զգործոց բարեաց ասէ. "Ո՛վ ի
նորա արարածք եմք, Յիսուսիս Քրիստոսիս ՚ի
ստուսիս ՚ի գործս բարութեան, յորս յառաջագոյն պատ-
րաստեաց Ա.ստուած զի ՚ի նոյն գնասցուք"։*

*Եւ զայս ամենայն հաստատուն պատգամբ տերունա-
կանք. "Ոչ ոք գայ առ իս, եթէ ոչ Հայրն՝ որ զիս ա-
ռաքեաց՝ ձգեսցէ զնա". (Յհ. Զ. 44)։ Եւ դարձեալ.
"Որպէս ուռն ոչ կարէ պտուղ բերել յանձնէ իւրմէ՝
եթէ չիցէ հաստատեալ յորթն, նոյնպէս և դուք՝ ե-
թէ ոչ իմ հաստատեալ իցէք... զի առանց իմ ոչ
ինչ կարէք առնել"։ (ԺԵ. 4)։*

*Վասն այսոցիկ յայտնի վկայութեանց սուրբ գրոց,
և վասն վարդապետութեան՝ զոր աւանդութեամբ ու-
նի կաթոլիկէ եկեղեցի, ընդ յայտնել մոլորութեանն
Պե՛ղագեայ՝ սոսկացան յայնմանէ Հայրք ժողովք առհասարակ.
և ինքեանք իսկ պե՛ղագեանք ջանացան ծածկել զվար-
դապետութիւն իւրեանց երկդիմի բացատրութեամբք,
քանզ գիտելով զի խորշելին յայնմանէ հաւատացեալք։*

*Եւ աստուածաբանօրէն իսկ յայտ է պե՛ղագեան
վարդապետութեանն մոլորութիւն։ Վասնզի նախաս-
տեղծին, որպէս յիւրում տեղւոջն ցուցաք, (յղ. Լինե-
լոնեն Տոլդոյ.) ոչ էր մարթ ՚ի բնական պայմանի, ե-*

Թէ ոչ ընտրէք Յաստուծոյ ամբառնային զնոսա ՚ի գերբնական կարգ, ունել իրաւունս առ այն, և ոչ բնականապէս գործել ինչ արժանի առ գերբնականն ամբառնալոյ. զի ըստ առաածին՝ եղանակ գործելոյ զհետ երթայ եղանակի գոլոց: Ա՝ան որոյ և ՚ի կորուսանելն զայն մեղաւք, զհետ գայր անհրաժեշտ հարկաւորութիւն ընտրհայ:

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Յաստ. Ա. — ա. Յաջմինք ՚ի գործս փրկութեան հաւատաք, յոյս, սէր, գառնալ առ Յաստուած, և այլ այսպիսի ներգործութիւնք ՚ի կամ մարդոյ են, և առնէ զայնս եթէ կամի: Ապանդի երք հաւատոյ ծանօթք են՝ յայտնեալք Յաստուծոյ, և ցուցակութիւնք նոցին քաջածանօթք. և զերք ինչ խափան առ ՚ի չկարելոյ տալ մարդոյ զհաւանութիւն իւր: Ընդ նոյն է ասել և ըզյուսոյ, զոր մարթ է ամենայն ումեք ունել անխափան ՚ի խոստմունս Յաստուծոյ. նոյնպէս և սիրել զՅաստուած ևան ծայրագոյն բարութեան նորա: Յպա կարող է մարդ զօրութեամբ իւրով հաւատալ յուսալ սիրել և գառնալ առ Յաստուած: — բ. Սուրբ գիրք ևս զնոյն ուսուցանեն, քանզի ասէ Քրիստոս. "Յրթայք յաշխարհ ամենայն, և քարոզեցէք զաւետարանն ամենայն արարածոց. որ հաւատայ և մկրտեսցի, կեցցէ,,. և ոչ ինչ յաւելու զընտրհայ, զոր պարտ իսկ էր յաւելուլ եթէ արդարև կարևոր էին ընտրհք: Նմանապէս յորդորեն սուրբ գիրք անխափ զմարդիկ ՚ի յոյս՝ ՚ի սէր՝ ՚ի գարձ՝ յողորմածութիւն և յայլ բարեգործութիւնս, առանց յիշատակելոյ ինչ զընտրհաց. և ընդունայն էր յորդորել զմարդիկ, եթէ չէին կարող առանց ընտրհաց առնել ինչ յայնպիսեաց: — գ. Ա՝ան որոյ ասէ առաքեալն (հռ. Ը. 18.) "Համքն առաջի կան ինձ,,: — դ. Նա առ ինչ էր Յաստուծոյ ազատ և ինքնիշխան հաստել զմարդ, եթէ չիցէ նա բաւական ՚ի կարևորս հասանելոյ ՚ի վախճան անդր՝ յոր սահմանեալն է, և կարօտի ընտրհաց յամենայն գործս փրկութեան իւրոյ:

Պե. — ա. Նրկու ինչ ՚ի գործս յայդոսիկ պարտ է

զանազանել. իր և եղանակ։ Ըստ իրին կարող է մարդ զօրութեամբ իւրով առնել զայդոսիկ. այլ զեղանակէ առնելոյն է աստ խնդիրն, և ըստ այսմ չկարէ մարդ և ոչ մի ինչ առնել զօրութեամբ իւրով, այսինքն զի ոչ բաւէ մարդ առնել ինչ գերբնական՝ ի փրկութիւն իւր առանց օգնականութեան շնորհաց։ Այլ զի է գործ գերբնական, ի վեր է քան զբնութիւն մարդկային բնութեան, և կարօտի նախաժամանի և գործակից շնորհաց։

— Բ. Մարդ գիրք թէպէտ և ոչ ամենայն ուրեք յաւելուն յայտնապէս յիշատակել զկարևորութիւն շնորհաց, այլ՝ ի պարզևացն Աստուծոյ համարելով ընդհանրապէս զամենայն զնորհուրդս՝ զկան և զգործս բարեաց՝ ի փրկութիւն, ցուցանեն կարևոր զօրնականութիւն նորա առ այնս։ Այլ՝ ի կամ մարդոյ հաւանիլն զայնս այնու, զի՝ ի կամել մարդոյ՝ պատրաստ կան շնորհք Աստուծոյ՝ ի կատարումն այնոցիկ կարևորիք։

— Գ. Աքաղելականն բան կամքն առաջի կան ինչ ցուցանէ զպատերազմ մարմնոյ ընդ հոգւոյ, և ոչ թէ ըզբաւականութիւն մարդոյ՝ ի կամել զբարին առանց օգնականութեան շնորհաց. քանզի նոյն առաքեալ ասէ (Հռ. Է. 13.) “Աստուած է որ յաջողէ՝ ի մեզ զկամելն և զառնել,,։ Այլ՝ ան որոյ իսկաստ առաքելական բանին է, զի մարդ ըստ բանական մասին նորոգեալ շնորհօք՝ կամի զբարին ընտրութեամբ կամաց, բայց ըստ մարմնական մասին կրէ դիմադարձութիւն՝ ի ցանկութենէ առ չարն. որում ընդդիմանայ արդարն, և չհաւանի շնորհօքն Աստուծոյ, բայց և վշտանայ ընդ ակամայ զգայուքնն և հաւաչէ ընդ առաքելոյն. կամիմ ըզբարին, բայց կատարել զայն դժուարանամ։

— Դ. Ազատ և անձնիշխան ստեղծ Աստուած զմարդ, զի կարասցէ հաւանել նախաժամանի շնորհաց, գործակից լինել զուգընթաց շնորհաց, պատրաստել զանձն յարդարութիւն վրկաւէտ գործովք՝ յորս յորդորեն զնա սուրբ գիրք, և արդարութեամբն կատարեսցէ գործս արժանաւորս յաւիտենից կենաց։ Այլ ան որոյ հարկ է զի գործքս այսոքիկ լցեն զաշատք. և ենէ չէր մարդոյ ազատութիւն կամաց, չկարէր առնել զայս ամենայն, և ոչ արժանի վարձուց գտանել։ Այսպէս այսմ

քաջիկ ընդ միմեանս միաբանին ազատութիւն կամաց և կարևորութիւն հնորհաց առ՝ի կատարել զամենայն և զիւրաքանչիւր գործս փրկութեան արժանաւորս վարձուց։

Ա՛ռակ. Բ. — ա. Ոչ ուրեք՝ ի տուրբ գիրս է գտանել յիշատակ անմիջական և գերբնական ներգործութեան հնորհաց, և մանաւանդ կարևորութեան նորա։ — բ. Այդ վարդապետութիւն խափանէ զջանս առաքինութեան, և պատճառ մեղաց կացուցանէ զՍտուածն։

պխ. — ա. Տուրբ գիրք յայտնապէս ուսուցանեն՝ զի Աստուծոյ կոչն մարդ՝ ի հաւատս, նուաճ յարատևէ՝ ի նմա և գործէ զառաքինութիւն. և զամենայն իսկ զգործս բարեաց և զյօժարութիւն՝ ի բարին՝ Աստուծով և՝ ի ձեռն Հոգւոյն հնորհաց Հոգւոյն սրբոյ ուսուցանեն յաջողել՝ ի մեզ։ Ետ այսր ամենայնի խնդրել՝ ի տուրբ գիրս անմիջաբար և գերբնական ներգործութիւնս հնորհաց՝ զձայնից է վիճել։

— բ. Ուղղափառ վարդապետութիւն հնորհաց ոչ միայն չխափանէ զջանս առաքինութեան, այլ և քաջալերէ զայն սքանչելապէս. քանզի գիտեմք զի Աստուած է՝ որ շարժէ զմեզ՝ ի ջանս առաքինութեան, և նոյն ինքն օգնէ մեզ՝ ի կատարել զառաքինութիւն՝ յաղթելով ամենայն դժուարութեանց, եթէ միայն գործակից հնորհաց նորա լինիցիմք։ Իսկ պատճառ մեղաց բնաւ նորաշանդիցն մերոյ վարդապետութեան եթէ գըտանի Աստուած. զի նոքա յընտրեալս եթէ ամփոփեն զհնորհս Աստուծոյ, և համարին ժխտել զայն Աստուծոյ առ այլս, մանաւանդ թէ և մերել զնոսա՝ ի մեզս։

ԳՕԴՈՒԱԾ Բ

Զի՝ ի պայմանի անկնալ բնութեանս չկարէ վարդ առանց շնորհացն Աստուծոյ օգնականութեան ձանաչել բազում ինչ՝ ի բնական ձշմարտութենէ բարոյականացդ, և ոչ զաստիճան պատուիրանացն Աստուծոյ կատարել, և ոչ փորձոցն ժանուռից յաղթել:

Զայս ամենայն ցուցանէ սուրբն (՝)գոստինոս ընդդէմ պելագեանց, զի ինքնաբաւ հաստարէին զբնութիւն մարդկային՝ իբր ոչ ինչ՝ ի սկզբնական մեղաց վնասեալ: Նակ ուղղափառ վարդապետութիւն, քանզի ըստ սահմանի տրիդենտեան ժողովոյն խոստովանի "պատուիրանազանցութեամբ նախաստեղծին զբոլոր մարդկայինս բնութիւն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ փոխեալ՝ ի յոռեգոյն պայման,,, Քրիստոսի բուժիչ շնորհայն կարօտ համարի զմարդ՝ յաղաքինութիւն մտաց նորա ըստ տգիտութեան, կամաց նորա՝ ըստ առ՝ ի չարն յօժարութեան, և մարմնոյ նորա՝ ըստ ցանկութեան՝ վանն կցորդութեանն ընդ հոգւոյն:

Նայց առ՝ ի բառնալ զամենայն էրկդիմութիւն, զի տեսի ես նախ՝ զի խնդիրս ես զգործոց պարզասիս բարոյականաց, և ոչ զեղանակէ գործելոյ զայնս, այսինքն ոչ զգեղբենական գործոց փրկութեան: Նրկրորդ՝ զի խնդիրս ես զձշմարտութենէ բնականաց, որ պատկանին՝ ի բարոյական կեանս: Նրրորդ՝ զի անկարողութիւնն, զորմէ խօսիմք, ոչ ե բնական՝ այլ բարոյական. այսինքն որ ցուցանէ զդժուարութիւն և եթ բայարձակ և առընչական, վանն որոյ և առաւել կամ նուազ առիձանք են նորա ըստ ժամանակին, ըստ տեղւոյ, և ըստ հանգամանաց անձին:

Ո այսոսիկ քաջ զանազանեալ, ցուցանեմք նախ զառաջինն մասն, այսինքն զի չկարէ մարդ յանկեալ բնութեան՝ առանց շնորհացն Աստուծոյ օգնականութեան ձանաչել բազում ինչ՝ ի բնական ձշմարտութենէ բարոյականաց: Ոտրձ ամենայն գարուց և ժամանակաց ցուցանէ անհնարին լեալ մարդկան բարոյապէս՝ ձա-

նաչել բազում ինչ ՚ի Հիմարտութեանց կարևորս ՚ի գիտութիւն։ Օ անհաւատից աւելորդ է ասել վերըստին, զի շատ իսկ զնոցանէ ՚ի Հառս Հիմարիտ կրօնից ասացաք, առ ՚ի ցուցանել զկարևորութիւն աստուածայնի յայտնութեան։ Իսկ յաղագս հաւատացելոց՝ յայտնի է, զի են անթիւք ՚ի նոսա՝ ոչ միայն առ կարճմտութեան, կամ առ զբաղանաց, և կամ վասն այլոց ժր և է պատճառաց ՚ի նմին տգիտութեան կալ, եթէ ոչ լուսաւորէին ՚ի հաւատոց։

Վարձեալ և զամենայն պատուիրանս Աստուծոյ էկալ ըել մարդոյ առանց շնորհայն Աստուծոյ յանկեալ թնութեանս կատարել, յայտ է ՚ի դժուարութենէ ոչ սակաւուց ՚ի պատուիրանաց անտի, և ՚ի մարդկայինն տկարութենէ՝ երել անիրաւութեանց, սիրել զՀնամիս, ժուժկալութիւն և այլ այսպիսի օրէնք այնպէս ծանուցք են տկարութեան մարդոյ, զի առանց շնորհացն Աստուծոյ զժուարաւ կարէ ընուլ զայնս։ վասն որոյ ասէ առաքեալն։ (հռ. է. 18.) “Կամքն առաջի կան ինձ, և առնել զբարին ոչ,,։ Յաւելեալ ՚ի դժուարութիւնս յայս և զփորձութիւնս ծանուցն՝ որ յաձախ մղեն ՚ի մեղս զմարդ, ոչ ևս միայ երկբայել ընդ կարևորութիւն շնորհաց։ Կանգի կէաք յայնցանէ ՚ի ներքս ՚ի մէզ ՚ի ցանկութենէ ծնանին, և կէաք արտաքոյ ՚ի փորձութեանց դիւաց և ՚ի հրապուրանաց աշխարհի։ Վասն որոյ դարձեալ նոյն առաքեալ ՚ի դիմաց մարդոյ՝ իբր ընդ օրինաք կացեալ, ասէ. “Տեսանեմ այլ օրէնս յանդամս իմ զինեալ հակառակ օրինաց մտաց իմոց, և գերեալ զիս օրինաքն մեղաց՝ որ են յանդամս իմ,,։ Այս ապա ՚ի վերայ ածէ. “Այր ի տառապեալ եմ ես, ո՞վ ապրեցուսցէ զիս ՚ի մարմնոյ աստի մահու. այլ շնորհքն Աստուծոյ ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ,,։

Այսպա շնորհայ ևեթ փրկչին է բժշկել զտգիտութիւնս մեր, և տալ մեզ զօրութիւն կատարելոյ զօրէնս և ըզդէմ առնելոյ փորձութեանց ծանուցն։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆ Ք

Ա՛տ. ա. Ա՛ինք մարդոյ, եթէ միայն կրթեսցի, բաւական է Ճանաչելոյ զամենայն Ճշմարտութիւնս բնականս. քանզի ոչ է պարտ՝ ի վայր քան զանբանս հաստատել զմարդ, որոց տուեալ է Աստուած զամենայն կարողս հասանելոյ՝ ի վախճան իւրեանց. ապա շատ է զի պարզեսցին միտք նորա կրթութեամբ և փորձով առ՝ ի դիմել միշտ յառաջադոյն կատարելութիւն:

Պե. Ընդունիմք զի տուեալ է մարդոյ որ ինչ կարողն է՝ առ՝ ի յաղթել ամենայն դժուարութեանց բնականապէս ևս և՝ ի պայմանի անկեալ բնութեանս. այլ զի յաղթել չկարէ բարոյապէս՝ և՝ ի հանապազորդ փորձոյ է յայտ. զի ոչ է մեզ աստ խնդիր զկարողութենէ մարդոյ ըստ ինքեան, այլ զարդեանց իրացն:

Ընդանք՝ ի բնութենէ և հարկաւ գործեն. իսկ մարդ ազատութեամբ Ճոխացեալ՝ կարէ զեղծանել նովաւ, որպէս և զեղծանի իսկ յաճախ: Եւ քանզի յոռութիւն կամաց ոչ սակաւ ազդէ՝ ի միտս, ապա ոչ ինչ են զարմանք զի մարդ բանաւոր յոռեգոյն քան զանբանս անձամբ զանձն կացուսցէ, առանց ընդհացն Աստուծոյ օգնականութեան:

Ընդունիմք զարձեալ զի կրթութիւն և փորձ օգնեն՝ ի զարգացումն մտաց մարդոյ. բայց հայեցեալ՝ ի տկարութիւն նորա, յոր սկզբնական մեղաւքն գտանի անկեալ, հաւաստի է՝ զի առանց նպաստից ընդհացն Աստուծոյ չկարէ հասանել՝ ի կարծեցեալ կատարելութիւն անդր անթերի:

Ա՛տ. բ. — ա. Սուրբ գիրք վկայեն՝ զի կարող է մարդ զօրութեամբ իւրով պահել զամենայն օրէնս, զի սակ Մովսէս (Բ. օր. Ը. 11.) "Պատուիրանքս այս, զոր ես պատուիրեմ քեզ այսօր, ոչ ծանրաբեռն ինչ է և ոչ հեռի՝ ի քէն,,: Եւ զարձեալ (Մտթ. ԺԱ. 16.) "Եթէ կամիս, պահեացես զպատուիրանս... եղ առաջի քո հուր և ջուր, ուր և կամիս՝ ձգես զձեռն քո,,: — բ. Եւ առաքեալն ասէ. (Հռ. Ը. 14.) "Հեթանոսք, որ զօրէնս ոչ ունին, բնութեամբ զօրինացն գոր-

ծիկեն ,, : Այլ եթէ քնութեամբ , ապա զօրութեամբ քնութեան կարօղ են զօրինս պահել : Այսան ոյժ և զանձնէ իւրմէ ասէ (Ելս. ձ. 6.) “ Այս՝ արդարութեան օրինացն լեալ անարատ ,, : — Ա. Այսան ոյժ և այլուր յաւելու (Կոր. Ժ. 5.) “ Ածելիս զերկ զարդարութիւնն՝ որ յօրինաց անտի է , թէ արասցէ զայն մարդ՝ կեցցէ նովին ,, : Նա վասն այսորիկ իսկ քնական կոչի օրինք , զի ՚ի սահմանի քնութեան կայ . և զգուշալի է , զի մի յամփոփել այնքան զկար քնութեան՝ լիցին անմեղադրելի ոք յախտաւորութենէ շարժեալ գործեն ընդդէմ օրինաց :

Պե. — Ա. Ասէր գիրք ուր ուրեք և չհիշատակեն զնպաստս ընդհաց , իմանալի է զայն զօրութեամբ՝ որպէս յայտնի ուսուցանեն այլուր . և անդ իսկ Ածելիս ՚ի նմին քանի յաւելու (Է. 6.) “ Նա պարտութեցէ տէր զսիրտ քո և զսիրտ զաւակի քո , սիրել զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ քումմէ ,, : Այսան այսորիկ Դաւիթ և ամենայն մարգարէք ստէպ աղօթեն առ Աստուած , տալ ինքեանց և ժողովրդեան սիրտ հնազանդ ՚ի պահպանութիւն պատուիրանաց :

— Բ. Դաւթեան ցուցանէ զի և հեթանոսք չէին առանց յօրինաց , տպաւորեալ ՚ի սիրտս իւրեանց բերելով զայնս՝ թէպէտ և չէր նոցա ընկալեալ օրէնս գրաւորս հանդերձ ՚ի բէից , Նա ոչ ուրեք երբէք ուսուցանէ՝ ոչ ՚ի բէից և ոչ հեթանոսաց զօրութեամբ քնութեան եւեթ կարել կատարել զօրէնս : Նոյն զոր ասէն “ ըստ արդարութեան օրինացն լեալ անարատ ,, , իմանայ առ մարդիկ և ոչ առ Աստուած . զի և կարդ բանին այսպէս պահանջէ , և զառ Աստուած արդարութենէն զհակառակն ասէ այլուր (Տես. ձ. 3.) “ Ոչ ՚ի գործոց արդարութեան՝ զոր արարաք մեք , այլ ըստ իւրում ողորմութեանն ապրեցոյց զմեզ ,, :

— Գ. Նոյն զբանն Պօղոսի այսպէս իմանան Ասկեբերան և այլք : Պօղոս եցոյց օրինական արդարութեանն այնու կատարել , եթէ կատարէր մարդ զհրամանն . այսինքն յայնժամ արդարանայր մարդ յօրէնսն , յորժամ զամենայն հրամանս կատարէր : Այլ զայս ոչ ոք կարաց , ասէ Ասկեբերան , վասն որոյ և անկաւ արդարութիւնն այն : Ո՛չ այլ և կարէին կատարել , և այլ

արդեամբք կատարել. կարէր մարդ բնականապէս կատարել զօրէնս, այլ ոչ ոք կատարեաց. ուստի զՀետ գայ՝ զի բարոյապէս անհնար էր կատարումն նոցին։ Նա չէք ինչ աստ վտանգ ըստ ուղղափառ վարդապետութեան, որ ուսուցանէ՝ զի ընդհք Աստուծոյ ոչ երբէք պակասեն առ չկամեցօղս մեղանչել։

Աստ. գ. Արկիւղ մահու համարի և է փորձութիւն ծանր. արդ սմա յաղթեցին բազումք բնականացօրութեամբ, որպէս յայտ է՝ ի հեռվմայեցւոց բազմայ՝ որք՝ ի վերայ հայրենեաց զմահ յանձն առին, և՝ ի հեթեսիոսէ՝ որք՝ ի վերայ մոլորութեան իւրեանց ըզկեանս փոխանակեցին. և է մարթ համարել զնոսա՝ ի ընդհացն Աստուծոյ օգնեալ։

Պե. Ասանիմք՝ ի փորձոյ զի երբեմն բռնագոյն ինչ կիրք յաղթեն սիրոյ պահպանութեան կենաց, առանց ինչ առաքինութեան և արիութեան։ Նա յայժ իսկ դիւրին է՝ ի հանգամանաց անտի իրացն ընտրել որ ինչ՝ ի սիրոյն Աստուծոյ և որ՝ ի մարդկայնոց կրից յառաջ գան գործք։ Այլ տուրբն ( ) գոստինոս յաւելու, զի եթէ երբէք՝ ի հեթանոսաց ոք առ սէր Հմայութեան ետ զկեանս իւր, ոչ առանց նպաստից ընդհացն Աստուծոյ առաքինացաւ՝ այլ յաջողելով ողորմութեանն Աստուծոյ. իբր ոչ եթէ զի արքայութեանն երկնից այնուիկ ընդ ոտիւս և ընդ ձառանգս լիցի արժանի, այլ զի թեթեւացին պատիժք մեղացն՝ որոց պարտաւոր ընդ անձառանգելս գտանի։

ԳՈՂՈՒԱԾ Գ

Զի առանց յուսոյ և ապիցուրեան և նպաստից Հոգւոյն սրբոյ չկարէ մարդ ոչ հաւատալ և ոչ յարատևել՝ ի հաւատս։

Զայս այսպէս ուսուցանեն ուղղափառ հաւատք ընդդէմ կիսապելագեանց։ Կանգն ըստ սահմանելոյ տրիդենտեան ժողովոյն. "Որ ոք ասիցէ՝ եթէ առանց նախաժամման ապրելութեան և օգնականութեան Հոգւոյն սրբոյ կարէ մարդ հաւատալ որպէս պարտն է՝ և

արժանի լինելոյ ընդ հոգւոյ արդարութեան, նմանել լինի ,, :

Այլ իսկ քան զայս սահմանեալ էր և ժողովն ասացեան . ,, Այր ոք որպէս զաձուէն՝ նոյնպէս և զսկիզբն, և զվերջս իսկ՝ ի հաւատս, ոչ պարզև հնոլհաց՝ այսինքն ոչ յատկութենէ Հոգւոյն սրբոյ, այլ բնականապէս ասիցէ էանալ՝ ի մեզ, ընդ հակառակորդս առաքելական վարդապետութեանց համարեսցի ,, : Այլ դարձեալ . ,, Այր ոք ասիցէ՝ զի զօրութեամբ բնութեան կարէ մարդ լսել քարոզութեան աւետարանին, առանց լուսոյ և ազդեցութեան Հոգւոյն սրբոյ, ՚ի հոգւոյ մոլորութեան պատրեալ է այնպիսին ,, : Այդ ՚ի բանից աստի գտանեմք բնաւ-ընեան յանգիմանի պատճառ մոլորութեանն՝ յոր անկան կիսապելագեանք . այսինքն զի զպարզև աստ բողջութեան բնութեանս՝ զոր յաւել Հոգւոյն սուրբ տալ նախաստեղծին, նոյն ընդ ամբարձման նորա համարէին ՚ի գերբնական պայման, նմին իրի և առաւել իմն հնոլհէին բնութեանս :

Եւ յուցանի վարդապետութիւնս այս ՚ի սուրբ գրոց. զի ոչ զսկիզբն ևեթ հաւատոյ, այլ և զյարատևելն ՚ի նմա պարտ է ընծայել հնոլհաց Հոգւոյն սրբոյ, եթէ սուրբ գիրք ուսուցանեն՝ զի ոչ ոք կարէ գալ առ Քրիստոս առանց ձգելոյ առ նա ՚ի Հօրէ, և զի պարզև ողորմութեան և հնոլհացն Հոգւոյ է հաւատք, և ոչ ոք կարէ պարծել յայն : Այլ սուրբ գիրք զայս այսպէս ուսուցանեն, քանզի տիրակիչն մեր ասէ . (Յհ. ՟ը. 44.) ,, Ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ Հայրն՝ որ զիս առաքեաց ձգեսցէ զնա ,, : Եւ առաքեալն ասէ (Էփես. ՟ա. 29.) ,, Եւ այդ յԱստուծոյ է՝ որ ձեզ շնորհեցաւ վասն Քրիստոսի, ոչ միայն ՚ի նա հաւատալ, այլ և վասն նորա չարչարիլ ,, : Եւ դարձեալ (Եփես. ՟ը. 8.) ,, Ո՛ի շնորհօք նորա էք փրկեալք ՚ի ձեռն հաւատոյն . . և այս ոչ ՚ի ձէնջ, այլ Աստուծոյ պարգև է . ոչ ՚ի գործոց, զի մի ոք պարծեսցի ,, : Եւ դարձեալ (Ա. Կոր. ՟ը. 7.) ,, Ո՞վ քինչ ունիս, զոր ոչ իցէ առեալ . և եթէ առեր, զի՞ պարծիս իբրև զչառեալ ,, :

Եւ յարդեանց իրացն իսկ յայտ է, որ ՚ի գործս առաքելոց պատմի զի Ղուկիայ ծիրանավաճառէ . ,, Ո՛ոյ տէր իսկ եբաց զսիրտն՝ անսալ խօսիցն Պօղոսի ,, . և

դարձեալ թէ "Հաւատացին որք էին կարգեալ՝ի կեանսն յաւիտենական„. (գործ. ԺԳ. 14։ ԺԳ. 48)։

Ալ ան որոյ կամ ոչինչ եկեղեցի աղօթէ առ Աստուած վասն դարձի և յարատեւութեան անհաւատից. և տուրքն Պետրոս (Ա-ղն Ճ'կէ. 4.) ասէ. "Աղօթք բացատայեալ վկայութիւն է ընդ հաց„։ Այս տուրքն Պրիսկոր նազիանզացին ասէ (՚ի ճառ պենտ. լին. 11.) "Որ զաւրացեալն է, տացէ և զերկրորդն„, այսինքն զլի և զկատարեալ հաւատս։

Որ եթէ չէր այսպէս, և ըստ կիսապէղագեանցն վարդապետութեան՝ եթէ կարէր մարդ զօրութեամբ քնութեան հաւատալ և յարատեւել՚ի հաւատս, ոչ էս ձրի լինէին շնորհք, և կարէին մարդիկ իւրովի հասանել փրկութեան, և զօրութեամբ քնութեան գործել գերքնապէս, որ օտար են ամենևին յուղղափառ վարդապետութենէ։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ա-ոել. Ա. Այսրբ գիրք զսկիզբն փրկութեան և հաւատոյ՚ի կամ մարդոյ ապաստան առնեն, զի ասեն. (Ովս. Ա. 3.) "Դարձարուք առ իս, և դարձայց առ ձեզ„։ Այս դարձեալ (Զաք. իե. 15)։ Դաշխէ Աստուած զքանքարս "իւրաքանչիւր ըստ իւրում կարի„։ Այս դարձեալ փրկիչն մեր ասէ. (Ա Կ. ԺԱ. 9.) "Խնդրեցէք, և տացի ձեզ, Հայցեցէք և գտջիք, բախեցէք և բացցի ձեզ„։ Այս դարձեալ խրատէ զառաքեալս (Ա-ղ. Ժ. 11.) "Յոր քաղաք մտանիցէք կամ՚ի գիւղ, Հարցանիցէք՝ թէ ո՞ է՚ի նմա արժանի, և անդ լինիջիք„։

Պէ. Այդ ամենայն և զայդպիսի բանս տուրբ գրոց պարտ է իմանալ ըստ վարդապետութեան՝ զոր ամենայն ուրեք ուսուցանեն, զի ամենայն իրաւք և յօժարութիւնք և դարձ առ Աստուած՝ օգնականութեամբ շնորհաց նորա յաջողեն. զի Աստուած է՝ որ գործէ՚ի մեզ զկամելն և զառնել. զի ոչ եթէ անձամբ բաւական եմք խորհել ինչ իբրև՚ի մէնջ, այլ բաւականութիւն մեր Աստուծոյ է։ Այն որոյ ասէ Ժողովն տրիդենտեան. "Յասելն՝ Դարձարուք առ իս, և դարձայց առ ձեզ,

զազատուԹիւն մեր ուսանիմք. իսկ ՚ի պատասխանելն՝ Վասրձո զմեզ տէր, և զարձցուք, զնախաժաման ընուրհան Աստուծոյ խոստովանիմք ,, :

Ընդ այսու ընդհանուր կանոնիւ պատասխանեմք առաքելոյն, և նախ՝ զի զքանքարսն բաշխեալ իւրաքանչիւր ըստ ե-ր-ո-մ կոչէ, պարտ է իմանալ զձրի ընուրհայ տուելոյ իւրաքանչիւր, որպէս առաքեալն ասէ (ե֊ե֊ա. գ. 7.) “ Իւրաքանչիւր ումեք ՚ի մէնջ տրուեալ են ընուրհք ըստ չափոյ պարգեւացն Քրիստոսի ,, . այսինքն ոչ յարժանեաց կամ ՚ի վաստակոց առողացն տուեալ, ապա Թէ ոչ՝ ոչ ոք առնոյր, ասէ Սահակեբերան, զի չիք ինչ ՚ի մեզ արժանաւորուԹիւն :

Ընդ այժմ և աղօԹել մեր և խնդրել՝ օգնականուԹեամբ Հոգւոյն սրբոյ է, որպէս դարձեալ ասէ առաքեալն. (հռ. ը. 26.) “ Զի զոր կամքն չաղօԹա՝ որպէս արժան իցէ ոչ գիտեմք, այլ ինքնին Հոգին բարեխօս լինի ՚ի հեծուԹիւնս անմռունչս ,, : Վասնզի և արժանաւորքն, առ որս խրատեր Քրիստոս իջևանել առաքելոյն, օգնականուԹեամբ ընուրհայն Աստուծոյ էին արժանաւորք :

Ասաք. բ. — ա. Սուրբ գիրք վկայեն զամանց վասն բարեաց գործոց իւրեանց արժանի լեալ հաւատոց. որպէս Հակէոս, բարի աւազակն և Կուռնելիոս հարիւրապետ, որք աղօԹիւք և ողորմուԹեամբք և ընձիւք պատրաստեցին զանձինս ՚ի հաւատս : Իսկպէս և միւս հարիւրապետն, զորմէ վկայեաց Քրիստոս. “ Զայդ ոչ յԻսրայէլի այսպիսի հաւատս գտի երբեք ,, . (Ղուկ. ը. 10) : Ընդ որ և զարմացաւ իսկ. ուր ոչ գոյր զարմանացս տեղի, եԹէ հաւատք ՚ի ընուրհայ էին : — բ. Զայդ դարձեալ, կամէր ՊաւիԹ կանգնել տաճար Աստուծոյ. իսկ Աստուած՝ Թէպէտ և հաճեցաւ ընդ կամն նորա, այլ ասաց (գ. Թագ. ը. 17.) “ Քայց դու ոչ շինեսցես զտունն ,, : Ընդ եԹէ ինքն Աստուած տուեալ էր նմա զայն կամ, ոչ ապա արգելոյր զայն :

Պե. — ա. Ստուածն ժողովէ ինքնին պատասխանէ առ այս. “ Պարտ է քաջայայտապէս հաւատալ, զի և աւազակին՝ զոր տէր յաջքայուԹիւն հոգւոյ կոչեաց, և Կուռնելիոսի հարիւրապետին՝ առ որ հրեշտակ Աստուծոյ առաքեցաւ, և Հակէի՝ որ զինքն իսկ զտէրն

ընդունելոյ ՚ի տուն իւր արժանի եղև։ Հաւատքն այնչափ զարմանալի՝ ոչ ՚ի բնութենէ՝ այլ յատուկ շնորհացն Աստուծոյ տուաւ նոցա։ Իսկ զարմանքն Աբրահամայ ըստ այնմ էր, որպէս և զարդանալն նորա իմաստութեամբ. զի վասն յայտ առնելոյ էր զկրկին զարմանաւորութիւնն։

— ԺԸ. Ըստ այսմ և պատուի զկամելն ևեթ շնորհեաց չինուածոյ տաձարին, այլ ոչ զչինելն. որպէս Աբրահամու զկամելն ևեթ շնորհեաց պատարագելոյ զորդին իւր զԻսահակ, այլ ոչ և զպատարագելն։

Աւետ. գ. Նայր Յունաց և Լատինաց, որք կային յաուաջ քան զԼուտհերոս, ըստ վարդապետութեան կիսապելագեանց Թուին խօսել. որպէս Յուստինոս, Կլեմէս աղեքսանդրացի, Աբրոսիոս, Պատատոս և Նեսանինոս։

Պե. Նայրդ այդոքիկ երիցագոյնք քան զԼուտհերոս՝ եթէ ընդարձակագոյնս ինչ ուրեք ասացին, ինքն իսկ տայ զպատճառն (յղ. Նախաստհմ. գլ. ԺԳ. 27.) "Եւ զինչ պէտք էցեն զնոցա մատեանսն հետազօտելոյ, որոց նախ քան զերևեալ մոլորութեանս չէղև հարկ ՚ի գժուարալոյծ խնդիրս յայս պարապել. զի զնոսին և նոքա առնէին աներկբայապէս, եթէ ստիպէին պատասխանել այսպիսեաց։"

Եւ յաւելումք, զի Նայրդ այդոքիկ նոքին իսկ՝ զի աղօթէին ընդ կանոնիկէ եկեղեցւոյ վասն դարձի հաւատացելոց՝ յայտ առնէին զՀաւատս իւրեանց, զի և Հաւատք և սկիզբն Հաւատոց պարգևք շնորհացն Աստուծոյ են։

Աւետ. դ. — ա. Աստուածն կամաց մարդոյ թէպէտ և նուաստեալ ՚ի սկզբնական մեղաց, այլ ոչ է չիջեալ. ապա կարէ դէմ ցանկալ, կամել և խնդրել բզդեղ և զբժիշկ։ — բ. Օ՛ի թէպէտ և բժշկին է առաջնացուցանել, այլ հիւանդին է խնդրել զառաջնութիւն. և ըստ սուրբ գրոց իսկ՝ խնդրէ ինչ Աստուած ՚ի մէնջ, զի տացէ զիւրն. "Եթէ հաւատաս, կեցցես։" Օ՛ի եթէ ՚ի խնդրելոյ մերմէ ուզիղ զհետ բերեմք՝ զի չէ ՚ի կարի մերում որ ինչ խնդրեմքն, ապա և ՚ի կոչմանէն Աստուծոյ և ՚ի յորդորանաց խնդրելոյ՝ զհետ գայ՝ զի ՚ի կարի մերում էցէ խնդրել, կամել և սկսա-

նել զդարձ մեր։ — գ. Այսպա թէ ոչ, հարկ լինի ասել զի Աստուած ոչ զամենեցուն կամի փրկութիւն. զի ե՞թէ կամէր, ամենեցուն իսկ տայր զհնորհս հաւատոց. և ըստ այսմ ոչ առանց պատասխանի տալոց գտանին անհաւատք վասն կալոց ինքեանց յանհաւատութեան. և դարձեալ աչառութիւն ըստ այդմ տեղի գըտանէր Աստուած, ումեմն հնորհելով զհաւատս և ումեմն ոչ։

պե. — ա. Զատութիւն կամաց, թէ և կատարեալ, չկարէ՝ ի վեր քան զպայման բնութեան իւրոյ բերել՝ ի գերբնականն. մանաւանդ յետ տկարանալոյն և՝ ի չարն յօժարութեան։ Ոչ ասի որով կարէ հաւանել կանխաժամանն հնորհացն Աստուծոյ, այլ ոչ կանխել քան զայն. ուստի զհետ գայ զի և ոչ զդեղ և զբժլկի կարէ խըմպել հոգևոր հիւանդութեանն առանց աստուածայինն հնորհաց։

— բ. Ընդարև ցուցանեն սուրբ գիրք՝ զի խնդրէ ինչ Աստուած նախ՝ ի մէնջ, այլ կանխելով միշտ հնորհաց նորա՝ ի մեզ. ապա ոչ այլ ինչ է՝ զոր խնդրէն՝ ի մէնջ, բայց գործակցութիւն հնորհաց իւրոց՝ որով նախապատրաստէ զմեզ։ Ոչ ասի որով ասէին՝ եղէ հա՛ պատասխանի, հաւասար է ասելոյ՝ եթէ հնազանդեսցիս հնորհաց իմոց և արասցես որ ինչ պահանջի առ հաւատս, կեցցես։

Այնպես և քան զյորդորանս աղօթելոյ և խընդրելոյ կանխեն հնորհք, զի և ոչ ցանկալ և կամել և խնդրել առանց հնորհացն Աստուծոյ կարեմք ըստ սուրբ գրոց։ Ոչ ասի որով առաջին հնորհք ձրի են ամենևին, այլքն կախեալ կան զգործակցութենէ, այսինքն զհաւատարմութենէ մերմէ առ հնորհս ընկալեալս։

— գ. Կամի Աստուած զփրկութիւն ամենեցուն իսկապէս. և վասն այսորիկ, որպէս յիւրում տեղւոջն ցուցցուք՝ ի ստորև, ամենեցուն բաշխէ բաւական հնորհս. որում եթէ լսցին գործակից, զառաւելն ևս ընկալեալ՝ հասցեն փրկութեան։ Այսու զհետ գայ, զի և անհաւատք առանց պատասխանի տալոց են առաջի Աստուծոյ. զդրական անհաւատից, այսինքն որք ձանաչելով զաստուածայինն յայտնութիւնն մերժեն, չիք ինչ տեղի երկբայութեան. իսկ բացասականք, ՝ի բաց առեալ եթէ որ՝ ի նոցանէ անյաղթելի տգիտութեամբ կայցէ յան-

հաւատոլթեան, պարտաւոր գտանին այնու՝ զի առաջին ընտրհայց դիմագարձ լինին. որում եթէ գործակից լինէին, զառաւել ևս ընդունէին, որպէս բացայայտեացուք ի տողս։ Այլ ուրեմն անաչառ է Աստուած ի տալ զբաւական ընտրհս, որում որք ոչն կնաձանդին՝ անձանց պարտին մեղադրել. իսկ եթէ այլոց ոմանց առաւելագոյն տայ Աստուած ընտրհս, ոչ ինքեանք ունին իրաւունս ինչ պահանջելոյ զայն, և ոչ Աստուծոյ պարտք ինչ են տալոյ և նոցա զայն։

ՅՕԴՈՒԱԾ Դ

Չի կարօղ է մարդ ի պայմանի անկեալ բնութեանս Հանդուրժել Աշմարտութիւնս ինչ բնականս, ուսանիմք ի տուրբ գրոց ուր ասեն. (Խոսոփ. ԺԳ. 5.) "Օ՛ի ի մեծութենէ և ի գեղեցկութենէ արարածոյն ըստ նմին հասեմատութեան և արարչագործն նոցա երևի"։ Եւ առաքեալն ասէ. (Հռ. ա. 20.) "Օ՛ի աներևոյթք նորա ի սկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ տեսանին, այսինքն է միանձնաւորութիւն և զօրութիւն և աստուածութիւն նորա, զի ոչ գտանիցեն ամենևին տալ պատասխանի"։ Այս գիտութենէն Աստուծոյ. իսկ գիտութենէ օրինացն նորա դարձեալ ասէ նոյն առաքեալ. (անդ ը. 14.) "Այնքա որ զօրէնսն ոչ ունին, անձանց իւրեանց իսկ են օրէնք՝ որք ցուցանեն գործս օրինացն գրեալ ի սիրտս իւրեանց"։

Երկրորդ՝ զի կարօղ է մարդ բնական զօրութեամբ կատարել զօրէնս դիւրինս, յայտ առնէ դարձեալ նոյն առաքեալ՝ կշտամբելով անդ զնմաստասէրս, որք ծանեան զԱստուած բնականապէս, և “ոչ իբրև զԱստուած փառաւորեցին կամ գոհացան,,. ուրեմն մարթէր նոցա առանց խակ շնորհաց բարոյապէս փառաւորել զնա, կամ անկատար սիրով սիրել: Այսուհետև էր մարթ նոցա հասանել գերբնական երանութեան և յաւիտենական կենաց, զի բնական ինչ էր աստուածպիտութիւնն այն նոցա, և բնականաւն առ գերբնականն հասանել ոչ է կարելի:

Դարձեալ նոյն ինքն խօսելով զբնական օրինաց՝ որ ի սիրտս մեր տպաւորեալ են, ասէ. “Հեթանոսք, որ (զմովսէսական) օրէնս ոչ ունին, բնութեամբ զօրինացն գործիցեն,,. այսինքն բարոյապէս և եթէ բնական զօրութեամբ գործեն ըստ օրինաց, որպէս իմանան Սակեբեան, (Գոստինոս և Հերոնիմոս, և որպէս Ռոսաւորիչն մեր ասէ (յաճախ. գլ. ը. 87.) թէ “Պարսիկք, Հոյնք, և ամենայն ազգք հեթանոսաց առանց այլ օրինաց՝ իրաւունս գատաստանի կատարեն ի պատուել զբարեգործս և ի պատժել զչարագործս,,:

Եւդ եթէ կարէ մարդ ի պայմանի անկեալ բնութեանս Հանապէտ Հնմարտութիւնս լինչ բնականապէս, և կատարել գործս լինչ բարիս բարոյապէս, նովքին խակ կարէ յաղթել և թեթև լինչ փորձութեանց՝ որ այնոցիկ խափան արկանեն:

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ

Ա. Տուկ. Ա. Գաբրիէլն ասէ, զի զգործ բարոյապէս բարի ոչ է մարթ կատարել օրինօք. “Այանզի օրէնք զբարկութիւն գործեն,,. (Կոռ. Ջ. 15): Այս դարձեալ (Է. 20.) յաւելու. “Օրէնք ի ներքս անկան, զի յանցանքն բազմասցին,,: Այսպա ի ձեռն շնորհաց եւեթ մարթ է բարեգործել:

Պէտ. Ոմանք առաքելական բանիցն է, զի օրէնք տուան Հնգտուածոց առ ի խափանել զմեզս. այլ անտի մարդիկ պատճառս առին առաւել ևս մեղանչելոյ, տկարու-

թեամբ կամ չարութեամբ անցեալ գնոքօք։ Այսու ո֊
րոյ Հայրն բազում ուրեք զբարեգործութիւնս՝ մարդ֊
կան անխտիր ընծայեն Հնարհացն Աստուծոյ. իբր ոչ ե֊
թէ չկարիցէ մարդ գործել ինչ բարի բարոյապէս, այլ
զի չկարէ՝ ոչ զօրէնս դժուարինս կատարել՝ մանաւանդ
՚ի սահիլ ծանր փորձութեան, և ոչ զամենայն օրէնսն
կատարել։

Աւրկ. Բ. Պատուիրանազանցութեամբ նախաս֊
տեղծին յայն սակս ասեմք տկարացեալ զաղատութիւն
մարդոյ, զի չկարէ զդէմ ունել փորձութեան և խոյս
տալ ՚ի մէջաց։ Աւանց օգնականութեան Հնարհայ՝ ա֊
հիւ ևեթ պատժոյ գործէ մարդ, և ոչ առ սէր արդա֊
րութեան. ՚ի ցանկութենէ և ոչ ՚ի սիրոյ. և որ այս֊
պէսն գործէ, մեղանչէ ըստ վարդապետութեան սրբոյն
Գրիգորիոսի՝ որ ասէ (յառաջն. գլ. ձժէ.) “Ցկրկ
ցանկութիւն մարմնոյ, ուր չկայ աստուածսիրութիւն,,։

Պե. Աթէ ազատութիւն մարդոյ չկարէր և ոչ ՚ի միջ֊
ջէ իմեքէ խոյս տալ ՚ի մէջաց, և ոչ զմիոյ իրիք զդէմ
ունել փորձութեան, ոչ ևս տկարացեալ պարտ էր ա֊
սել զայն կամ նուազեալ՝ այլ չկրճեալ բոլորովին. և ոչ
աղօտացեալ ՚ի նմա զպատկեր արարչին՝ այլ ՚ի սպառնա֊
պուռ եղծեալ։ Այսու որոյ ոչ յայնէ ևեթ պատուհա֊
սի, այլ յաձախ ևս ՚ի սիրոյ բարւոյն և ՚ի կարեկցու֊
թենէ բերի մարդ ՚ի գործել, որպէս ՚ի պատուել զծը֊
նօղս, յողորմել աղքատաց, ՚ի զգեցուցանել զմերկս,
և յայլ այսպիսիս, յորս չիք տեղի երկիւղի և ցանկու֊
թեան։

Այսպէս զբան Աստուածոսի պարտ է զանազանել. զի
ոմն չիք սէր ունակական, միրէ անդ ցանկութիւն, այլ
ոչ եթէ յամենայնի ներգործելով. քանզի մարդ թէ֊
պէտ և զուրկ յունական Հնարհէ, այլ ոչ միշտ՚ի ցան֊
կութենէ բերի ՚ի գործ՝ որպէս Պայի և Վրդանէսի
էր վարդապետութիւն, որ դատապարտեցաւ։

Աւրկ. Գ. Պէհատուր ՚ի բարոյական բարիս է աս֊
տուածսիրութիւն. արդ սա առանց Հնարհայն Աստու֊
ծոյ անՀնարին է ըստ գրոց. քանզի ասեն (ա. Յհ. ջ.
7.) “Ով ի սէր յԱստուծոյ է,,։ Եւ դարձեալ (կա. Է.
5.) “Ով ի սէրն Աստուծոյ սիրեալ է ՚ի սիրտս մեր ՚ի
ձեռն Հոգւոյն,,. և դարձեալ (գաղ. Է. 22.) “Արդ

պտուղ Հոգւոյն այս է, սէր ,,, և այլն: Այլեւ գոյր քնական աստուածախրատութիւն, Հարկ էր գնել զայն և յանհաւատս և՛ի մեղաւորս, որ է անտեղի, զի չէ մարթ նոցա լինել բարեկամս Աստուծոյ:

Պե. Սուրբ գիրք զգեղբնական աստուածախրատութենէ ասեն զայդ ամենայն, իսկ զբնականէն ինքն իսկ առաքեալն ասէ. "Ոչ ի ծանեան զԱստուած, և ոչ իբրև զԱստուած փառաւորեցին ,,: Ասա այսմ յայտ է և անտեղութիւն հետևանացդ, զի ոչ ոք քնական աստուածախրատութեամբ կարէ աստուածահաճոյ գոլ:

Աթ. Դ. Ոչ ամենայն յաղթութիւնս փորձութեանց սուրբ գիրք, Հալք, և ժողովք ընծայեն շնորհացն Աստուծոյ. և փրկիչն մեր ուսուցանէ մեզ խընդրել զայն յԱստուծոյ, "Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն ,,, և ոչ խտիր ինչ առնէ ընդ ծանր և ընդ թեթև. ապա թէ ոչ, մարթ էր մեզ ընծայել ինչ անձին:

Պե. Սուրբ գիրք, Հալք, և ժողովք ընծայեն շնորհացն Աստուծոյ զամենայն յաղթութիւնս, որ են՛ի փրկութիւն, այլ ոչ զբնականս: Ոչ այն յաղթութիւն ուսուցանէ մեզ փրկիչն մեր խնդրել, և ոչ զանօգուտս զայս առ՛ի կեանն յաւիտենից: Այլ և բնականս այս յաղթութիւն պարգև Աստուծոյ է միշտ յարաբերէն բնութեան, և ոչ ոք անձին զայն կարէ ընծայել այնու՝ զի բնական զօրութեամբ յաղթէ:

ԳՕԴՈՒԱԾ Ե

Զի կարէ այր անհաւատ առնել ինչ բարոյապես բարի, վասն որոյ ոչ ամենայն գործք անհաւատից չարք են և կամ մեղք:

Ուղղափառ վարդապետութիւնս այս ընդդէմ է լութերականաց և յանաբեպտեանց, և հակառակ վարդապետութեանն Պայլի՝ որ ասէր. "Ամենայն գործք անհաւատից մեղք են, և առաքինութիւնք իմաստասիրացն՝ յոռութիւնք ,,:

Ընդ դիտելի է նախ՝ զի խնդիրս այս է զգործոց, որ ինչ յառաջ քան զընտրեալս Հաւատոց կարեն գործել անհաւատք, եթէ օգնականութեամբ և թէ առանց օգ-

նականութեան ընդհաց, և որք բարոյապէս ևեթ են բարի, զի յառաջ քան զնահատս չէք ինչ գործ գեր-քնական, վասն որոյ և ոչ գործքն այնոքիկ ունին ինչ առ յաւիտենական կեանս։ Արկրորդ՝ զի մեղք և յո-ռութիւն իմանամք ըստ բուն նշանակութեանն ըստ ի-մայուածոյ հակառակորդաց, որք համարին չկարել ինչ գործել անհատատից՝ որ էիցէ մեղք, և որով չգտանի-ցին պարտաւոր յաւիտենական դատապարտութեան։

Օ՜այս անողորմ վարդապետութիւն դատապարտե՛ն սուրբ գիրք, գովելով յաճախ ուրեք զգործս ինչ ան-հատից, և վարձուց արժանաւորս ցուցանելով զայնս։ Որպէս զմանկաբարձիցն եգիպտացւոց՝ որք ապրեցու-ցանէին զմանկունս եբրայեցւոց՝ ոչ միայն գովեն գիրք զգործս, այլ և յաւելուն ասել։ (Ելից. ա. 20.) “Եւ բարի առնէր Աստուած մանկաբարձացն... յորմէհե-տէ երկեան մանկաբարձքն Աստուծոյ, արարին ի-բեանց տուն„։ Նոյնպէս և վասն Նաբուզոդոնոսորի ասէ տէր ի ձեռն մարգարէին (Երեմ. իե. 20.) “Զոհ-խանակ հարկին, յորում ծառայեաց ինձ ի Տիւրոս, ետու նմա զերկիրն եգիպտացւոց„։ Եւ Դանիէլ խրատ տայր նմա (դ. 24.) “Օ՜ մեղս քո ողորմութեամբ քա-ւեսջիր, և զանօրէնութիւնս քո գթութիւք տնանկաց„։ Եւ այլուր գարձեալ (ա. Տակոբ. ը.) գովին հռովմայեցիքն վասն մարդկօրէն լաւութեանցն։ Այս ուրեմն են և անհատատից գործք բարիք բարոյապէս, և ոչ ամենայն գործք նոցա՛ի մեղս համարին նոցա. ապա թէ ոչ, հարկ էր ասել՝ թէ զիրք սուրբք գովեն զմեղս։

Եւ հասարակաց իսկ միտք հերքեն զվարդապետու-թիւնդ զայդ. զի եթէ անհատաք մեղս գործէին՛ի պատուէն ջննօղս, յոլորմել աղբատաց, ՛ի փրկել զոք ՛ի մահուանէ, և յառնել զիրաւունս, պարտ էր զգու-շացուցանել զնոսա ՛ի գործոց անտի բարեաց՝ որպէս զի մի յաւելուին մեղս ՛ի վերայ մեղաց։ Այլ յայտնեալ զարհուրին միտք։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆՔ

Ա՛ստղ. ա. — ա. Ա՛ռաքեալն ասէ (հռ. ժդ. 23.) "Ա՛մենայն ինչ, որ ոչ՝ ի հաւատոց է, մեղք են,,: — բ. Նա զարձեալ (եբր. ժա. 6.) "Ա՛ռանց հաւատոց անհնար է հաճոյ լինել Ա՛ստուծոյ,,: — գ. Նա զարձեալ. (Տիտ. ա. 15.) "Պղծոյն և անհաւատից ոչ ինչ է սուրբ, այլ պղծեալ են միտք և խորհուրդք նոցա,,: — դ. Օնոյն և միւս առաքեալն հաստատէ (ա. Յհ. բ. 16.) "Ա՛մենայն որ ինչ յաշխարհի է՝ ցանկութիւն է մարմնոյ, և ցանկութիւն է աչաց, և ամբարտաւանութիւն աստի կենացս,,: Ալ ան որոյ և Վ՛րիտոս ասէ. (Ա՛ղ. ը. 23.) "Ա՛պա թէ ակն քո չար է, ամենայն մարմինդ խաւարին եղիցի,,: Յայտնի և յայլոց այսպիսեաց բանից սուրբ գրոց յայտ է, զի առանց հաւատոց չիք ինչ՝ որ չիցէ չար և պիղծ, թէ ըստ պատճառին և թէ ըստ վախճանին:

զ. — ե. Յառաջնումն բանի առաքեալն խօսի ըզխղճէ մտաց, և խնդատ բանին է՝ զի ամենայն գործ մարդկային՝ որ ոչ՝ ի հաւանութենէ մտաց իւրոց օրինաւոր ծանուցեալ գործի, այլ կամ յայտնապէս անարժան հանդիսի և կամ երկբայանօք, մեղք են՝ ոչ միայն ընդդէմ լուսոյ բանին, այլ և ընդդէմ Ա՛ստուծոյ՝ յորմէ և լոյս բանին. այսինքն զի ամենայն գործ արարեալ ընդդէմ բոլորոց խղճի մտաց՝ մեղանչական է. վասն զի թէպէտ և անմեղ իցէ գործն ըստ ինքեան կամ բարի իսկ, սակայն հակառակ մոլար կամ երկբայ խղճի գործելով ուրուք, ցուցանէ կամն մեղանչելոյ. իսկ որ մեղանչելն կամի, նովին իսկ մեղանչէ:

— է. Յերկրորդումն բանի խօսի առաքեալն զգետնական հաւատոց, զի արդարև առանց այնորիկ՝ քնական և եթէ հաւատովք՝ անհնար է հաճոյ լինել Ա՛ստուծոյ: Իսկ ըստ քնական և սա հաւատոց թէպէտ և չիցէ մարթ գործողին հաճոյ լինել Ա՛ստուծոյ, այլ գործ նոցա բարի և դիտաւորութեամբ բարւոյ գործեալ՝ հաճոյ է Ա՛ստուծոյ:

— ը. Յերրորդումն բանի ոչ զգործոյ մարդոյ խօսի

առաքեալն, այլ վերայ՝ որ խոտել են կամ անխոտել. յայնպիսին ասէ ոչ մի ինչ սուրբ գոլ նոցա, և ոչ թէ առհասարակ յամենայն գործս իւրեանց։ Արդէս և յառաջ յասելն՝ ամենայն ինչ սուրբ է սրբոց, ոչ նշանակէ թէ ամենայն գործ՝ զոր առնեն հաւատացեալքն և արդարքն՝ իցէ աստուածահաճոյ և սրբարար, այլ թէ ամենայն՝ որ ՚ի պէտս մարդկան իցէ յարարածոյ՝ չէ նոցա անսուրբ կամ արգելեալ։

— Դ. Առաքեալն Յովաննէս խօսի զայնցանէ՝ որք ախտաւորաբար վարին արարածովքս, և վեղծանէին նոքօք. նոյն և տերունական բանին է իմաստ, և ոչ ըզհետ գայ ասողի՝ թէ չիցէ ումեք մարթ բարւոք զայնս ՚ի կիր առնուլ ևս և բարոյապէս։

Առակ. Բ. — ե. Գործք անհաւատից մեղանչականք են առհասարակ, զի հակառակ են պատուիրանին զամենայն ինչ վասն Աստուծոյ գործելոյ. քանզի բնական իսկ է պատուիրանն՝ «Արեսցես զԱստուած քո յամենայն սրտէ քումմէ». զոր առաքեալն բացատրէ յասելն (ա. կոր. Ժ. 31.) «Ո՛ամենայն ինչ ՚ի փառս Աստուծոյ արասջիք»։ Եւ դարձեալ. (կողոս. Գ. 17.) «Ո՛ամենայն, զոր և առնիցէք բանիւք և արդեամբք, զամենայն յանուն տեառն Յիսուսի արասջիք»։ — Բ. Իսկ անհաւատք, թէպէտ յայտնի և թէ լուելեայն, զամենայն ինչ ՚ի պաշտօն դիցն գործեն. և են ծառք չարք ըստ տերունական պատգամին, որ պտուղ բարի առնել ոչ կարեն. և չէ մարթ զի ըստ Աստուծոյ գործիցի ինչ ՚ի նոցանէ, ապա թէ ոչ՝ չլինէր նոցա անօգուտ. ուրեմն ամենայն գործք նոցա են մեղանչականք։

Պե. — Ե. Պատուիրան սիրելոյ զԱստուած քնական է ըստ այնմ ևս թէ, զի մի ինչ ոք ընդդէմ նորին գործեսցէ. վասն որոյ մեկնութիւն առաքելոյն ՚ի քրիստոնէական և ՚ի գերբնական կատարելութիւն զայն ՚ի վեր ածէ, որ առ հաւատացեալս ևս թէ է պատուիրան. քանզի նոքա տեղեակ գոլով գերբնական վախճանին՝ կարօղ են յայն ուղերձել զամենայն գործս իւրեանց, խնդրելով յամենայնի զփառս Աստուծոյ։

— Ը. Ո՛չ իսկ է ընդունելի զի անհաւատք զամենայն ինչ ՚ի պաշտօն դիցն իւրեանց գործիցեն. զի յոլովք ՚ի գործոց ինքնին ՚ի բնութենէ շարժեալ դիմեն ՚ի մեր-

ձաւոր վախճան իւրեանց բարւոյ, որպէս սիրել և պատուել զՆոյա, զգեցուցանել զմերկն, օգնել կարօտեալոյ և այլն, առանց խորհելոյ ՚ի դիս։

Իսկ գործք անհաւատից չկարեն բարւոյ և ըստ Աստուծոյ գոլ՝ ըստ գերբնական վախճանին. այլ ըստ բնականին չկարեն եւեթ գոլ՝ յորժամ յանհաւատութենէ շարժեալ գործիցեն. զի ծառ չար՝ անհաւատութիւն նոցա է, և ոչ բնութիւնն աստուածածաստեղծ. և պատուել զՆոյա և բարեգործել՝ ոչ յանհաւատութենէ գայ յառաջ, այլ ՚ի բնութենէ։

ԳՕԴՈՒԱԾ Զ

Զի կարէ մարդ ներգործական շնորհօք՝ միանչ լև իսկ արդարացեալ՝ առնել գործս բարիս գերբնապէս, վասն որոյ ոչ առնեցեալ գործք վերաւորաց են վերանչակութիւնք։

Վարդապետութիւնս այս մասն է հաւատոց, ոչ միայն ՚ի կոստանդեան ժողովի վճռեալ դատապարտութեամբ մոլորութեանցն Պելեփեանց և Նուսեանց, այլ և ՚ի տրիդենտեանն՝ ընդդէմ նորագանդից առհասարակ լութերականաց և կալուինականաց։ Եւ օրինակ վճռոյն է այս. "Որ ոք ասիցէ՝ թէ ամենայն գործք յառաջ քան զարդարութիւն գործեցեալք, որով և իցէ պատճառաւ, իցեն իսկապէս մեղք կամ արժանիք առելութեան Աստուծոյ, նզովեալ լիցի։" Զոյն մոլորութիւն հետզհետէ նորոգեցին և Պայ և այլք ՚ի նորագանդից, և պնատուեանն իսկ ժողովակ. վասն որոյ և քահանայապետքն Պիոս Ե, Գրիգոր ԺԳ, Ուրբանոս Ը, Կլեմէս ԺԱ, և Պիոս Զ, վճիռս ընդդէմ մոլորութեան նոցա տուեալ՝ յաւելին հաստատել զուղղափառ վարդապետութիւն վկայութեամբք սուրբ գրոց։

Գանգի ասէ Աստուած ՚ի ձեռն Եզեկիէլի (ԺԸ. 30.) "Դարձարուք յամենայն անպարշտութենէ ձերոյ," արդ ըստ նորագանդից վարդապետութեան ՚ի մեզս յորդորէ Աստուած զմեզաւորս ՚ի յորդորելն զնոսա ՚ի դարձ։ Եւ մաքսաւորն արդարացաւ ՚ի խոնարհել իւրում և յասել՝ "Աստուած, քաւեա զիս զմեզաւորս,"

ապա ուրեմն խոնարհել մեղաւորին և զղջալ՝ ոչ միայն ոչ է գործ մեղանչական, այլ և աստուածահաճոյ է։ Իբր գարձեալ Կուռնելիոս հարիւրապետ (գործ. Ժ. 2.) “Եւ այր բարեպաշտօն և երկիւղած Աստուծոյ, ամենայն տամբ իւրով, առնէր ողորմութիւնս բազումս ի ժողովրդեանն, և յաղօթս կայր առ Աստուած յամենայն ժամ„. ապա գովէն զնա սուրբ գիրք վասն յաւելուց նորա մեղս ի վերայ մեղաց, քանզի հակառակ կորզէ և զաղօթս իսկ մեղաւորաց և անհաւատից և զողորմութիւնս համարին նոցա ի մեղս։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆ Ը

Ա՛տրկ. ա. — ւ. Պարշելի են Աստուծոյ ամենայն գործք մեղաւորաց ըստ վկայելոյ սուրբ գրոց. զի ասէն (առակ. ԺԵ. 8.) “Պատարագք ամպարշտաց պիղծ են առաջի Աստուծոյ„։ Իբր գարձեալ (Եսայ. ա. 13.) “Խունկք ձեր պիղծ են ինձ„։ — բ. Իբր գարձեալ (Մտթ. Է. 18.) “Ոչ կարէ ծառ չար՝ պտուղ բարի առնել„։ — գ. Իբր գարձեալ (Յհ. Թ. 31.) “Աստուած մեղաւորաց ոչ լսէ„։ — դ. Պանգլի մեղաւորն ի ցանկութենէ գործէ միշտ. զի որ ոչն գործէ ի սիրոյ, հարկ է թէ ի ցանկութենէ գործիցէ. և քանզի մեղաւորն ոչ գործէ ի սիրոյ, ապա գործէ ի ցանկութենէ։ Վասն որոյ ասէ սուրբն ( )գոսաւինոս. “Ուր չիք սէր, ոչ ինչ ի գործոց համարի բարի, և ոչ ձշմարիտ կոչի բարի„։

պխ. — ւ. Պատարագք և խունկք ամպարշտաց պիղծ են առաջի Աստուծոյ, ոչ ըստ գործոյն՝ այլ ըստ վախճանին. զի եթէ ըստ օրինի ի քաւութիւն մեղաց իւրեանց մատուցանիցեն, ընդունելի լինին Աստուծոյ. այլ նոքա զորոց խօսի մարգարէն՝ ի մեղս և ի ցանկութիւնս իւրեանց հանապազորդեալ, կարծելին նոքօք ընդունելի լինել առնել Աստուծոյ։

— բ. Ծառ չար ի կամաց իւրոց եղանի մարդ, և ըստ այնմ կամաց՝ չկարէ պտուղ բարի առնել. այլ մեղաւորն ոչ միշտ ի չարութենէ կամաց գործէ։

— գ. Աստուած մեղաւորաց ոչ լսէ առ ի խաբելոյ

զմարդիկ հրաշագործութեամբ, որպէս՝ ի կարգէ բանից աւետարանին քաջայայտ է. այլ ըստ իակ քաջ, եթէ ըստ օրինի ազօթեացեն առ՝ ի զգաստանալ:

Ակնպէտ և ընդ սէր ուսնականն և ընդ ցանկութիւն չէք միջին ինչ, այսինքն ընդ արդարութիւն և ընդ մեղաւորութիւն, այլ ընդ ցանկութիւն և ընդ սէր նեղգործական է իակ՝ ի միջև բարեսիրութիւն կամ սէր Թարմատար՝ որով մեղաւորն երբեմն՝ և ստէպ իակ բարեգործէ: Ընդ սուրբն ( )գոստինոս զայսմ բարեսիրութենէ խօսի, և ոչ զաստուածսիրութենէ:

ՅՕԳՈՒԱԾ Լ

Զի չկարէ արդարն առանց առանձինն շնորհացն Աստուծոյ զգուշանալ յամենայն կեանս իւր յամենայն մեղաց, ևս և՝ ի ևս թնչևաց:

Պէղագեանք, որք զզօրութիւն ազատութեան կամացն կարի ինն վերամբառնային, առաւել ևս յետ արդարութեան զօրացուցեալ զայն՝ բաւական այնուիկ համարէին զմարդ արդարացեալ՝ կալ յարդարութեան և հասանել՝ ի ծայր կատարելութեան, և մինչև յանկրկանութիւն իակ:

Պարձեալ և կիսապէղագեանք, որպէս զսկիզբն հաւատոյ և զփրկութեան, այսպէս և զյարատևութիւն՝ զօրութեան մարդոյ ընծայէին:

Այնպէս և բանականք մարդկային զօրութեան ընծայեն դիմել՝ ի կատարելութիւն. մինչև ոչ միայն հասանել՝ ի մտացածինն յայն զրախտայնոյն՝ ի նոցանէ կոչեցեալ մարդոյն, այլ և՝ ի նորին իակ իսկականի նախատին՝ երևեցելոյն՝ ի Քրիստոս՝ կատարելութիւն ժամանել և գերազանցել իակ զնոսաւս:

Իակ Լութեր և Կալուին, որք զազատութիւն կամացս մարդոյ բառնան՝ ի բաց, համարին և մարդոյ արդարացեալ մեղանչել յամենայն գործս իւր, այլ ըստ վարդապետութեան նոցա՝ մեղքն այն չհամարին նմա՝ ի պատուհաս վանն արդարութեանն Քրիստոսի, ուրեմն հաղորդ գտանին:

Ընդդէմ ամենեցուն սոցա ուղղափառ վարդապետութիւն ուսուցանէ, զի արդարք՝ առանց նպաստից ա-ռանձինն իմն ընդհաց՝ չկարեն ՚ի բաց կալ ՚ի մեղաց յամենայն կեանս իւրեանց, և զի յարատեւութիւն՝ պարգև Աստուծոյ է։ Այն որոյ ժողովն տրիդենտեան վճռեաց, զի "Որ ոք ասիցէ՝ թէ մարդ գամ մի արդարացեալ՝ կարէ ՚ի բոլոր կեանս իւր ՚ի բաց կալ յամենայն մեղաց, և ս և ՚ի ներելեաց, առանց առանձինն իմն ընդհացն Աստուծոյ, որպէս վասն կուսին Մարիամու հաստատեալ եկեղեցի, նզովեալ լիցի,,։

Աստ գիտելի է նախ՝ զի խնդիրս է զամենայն ներելի մեղաց, և ս և զայնցանէ՝ որ առանց մահաժութեան գործին. երկրորդ՝ զի ոչ զսուտ կամ զերկար ժամանակէ է բանս, այլ զբոլոր կենաց. երրորդ՝ զարդարոյ, որ ՚ի սուրբ գրոց անուամբ կոչի։ Եւ նախ զառաջինն ասեմ, զի ոչ ոք կարէ ՚ի բաց կալ ՚ի մեղաց յամենայն կեանս իւրեանց, և զի յարատեւութիւն՝ պարգև Աստուծոյ է։ Այն որոյ ժողովն տրիդենտեան վճռեաց, զի "Որ ոք ասիցէ՝ թէ մարդ գամ մի արդարացեալ՝ կարէ ՚ի բոլոր կեանս իւր ՚ի բաց կալ յամենայն մեղաց, և ս և ՚ի ներելեաց, առանց առանձինն իմն ընդհացն Աստուծոյ, որպէս վասն կուսին Մարիամու հաստատեալ եկեղեցի, նզովեալ լիցի,,։

Աստ գիտելի է նախ՝ զի խնդիրս է զամենայն ներելի մեղաց, և ս և զայնցանէ՝ որ առանց մահաժութեան գործին. երկրորդ՝ զի ոչ զսուտ կամ զերկար ժամանակէ է բանս, այլ զբոլոր կենաց. երրորդ՝ զարդարոյ, որ ՚ի սուրբ գրոց անուամբ կոչի։ Եւ նախ զառաջինն ասեմ, զի ոչ ոք կարէ ՚ի բաց կալ ՚ի մեղաց յամենայն կեանս իւրեանց, և զի յարատեւութիւն՝ պարգև Աստուծոյ է։ Այն որոյ ժողովն տրիդենտեան վճռեաց, զի "Որ ոք ասիցէ՝ թէ մարդ գամ մի արդարացեալ՝ կարէ ՚ի բոլոր կեանս իւր ՚ի բաց կալ յամենայն մեղաց, և ս և ՚ի ներելեաց, առանց առանձինն իմն ընդհացն Աստուծոյ, որպէս վասն կուսին Մարիամու հաստատեալ եկեղեցի, նզովեալ լիցի,,։

Աստ գիտելի է նախ՝ զի խնդիրս է զամենայն ներելի մեղաց, և ս և զայնցանէ՝ որ առանց մահաժութեան գործին. երկրորդ՝ զի ոչ զսուտ կամ զերկար ժամանակէ է բանս, այլ զբոլոր կենաց. երրորդ՝ զարդարոյ, որ ՚ի սուրբ գրոց անուամբ կոչի։ Եւ նախ զառաջինն ասեմ, զի ոչ ոք կարէ ՚ի բաց կալ ՚ի մեղաց յամենայն կեանս իւրեանց, և զի յարատեւութիւն՝ պարգև Աստուծոյ է։ Այն որոյ ժողովն տրիդենտեան վճռեաց, զի "Որ ոք ասիցէ՝ թէ մարդ գամ մի արդարացեալ՝ կարէ ՚ի բոլոր կեանս իւր ՚ի բաց կալ յամենայն մեղաց, և ս և ՚ի ներելեաց, առանց առանձինն իմն ընդհացն Աստուծոյ, որպէս վասն կուսին Մարիամու հաստատեալ եկեղեցի, նզովեալ լիցի,,։

Ապա ըստ այսմ ցուցանի վարդապետութիւնս ՚ի գրոց, զի սակ Յոբ (ԺԴ. 4.) "Ո՞վ հոգէ սուրբ յաղտոյ, այլ և ոչ ոք, թէպէտ և միոյ աւուր իցեն կեանք նորա ՚ի վերայ երկրի։ Եւ Ամաստուն (առակ. իդ. 16. ե. 9.) "Որ համարձակիցի եթէ սուրբ իցէ ՚ի սրտի։ ... Յօթն անգամ անկցի արդարն,,։ Եւ դարձեալ (Սողոմ. է. 21.) "Ո՞չ ի մարդ ոչ գոյ ՚ի վերայ երկրի, որ գործէ զբարիս և ոչ մեղանչիցէ,,։ Եւ դարձեալ (Ը. Գաւդ. Ա. 36.) "Ոչ գոյ մարդ՝ որ ոչ մեղանչէ,,։ Եւ դարձեալ (Յհ. ա. 2.) "Ո՞ի բազում ինչ յանցանեմք ամենեքեան,,։ Եւ դարձեալ. (Յհ. ա. 8.) "Եթէ ասիցեմք՝ եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք, և ճշմարտութիւն ՚ի մեզ ոչ գոյ,,։ Այն որոյ վրկիչն

մեր անխտիր ամենեցուն հրամայէ ասել. “Ողջ մեզ զպարտիս մեր,,: Այսպա և արդարը, թէպէտ և օգնեալք ի սովորական ընորհացն Աստուծոյ, անկանին յաձախ:

Սուրբն (Յոստինոս առանձին ձառիւ զձշմարտու-թիւնս զայս պարզաբանէ. և պեղպագեանցն մոլորու-թիւն այն ինչ ի վեր երևեալ, դատապարտեաց զայն եկեղեցի ի ժողովն Կարթագինեայ. և սահման ժողո-վոյն է այս. “Օր առաքեալն Յովհաննէս ասէ. Եթէ ասիցեմ՝ եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք, և ճշմարտութիւնն ի մեզ ոչ գոյ. որ ոք այնպէս պարտ համա-րիցի իմանալ՝ իբր թէ առ խոնարհութեան պարտ իցէ մեզ ասել թէ մեզս ունիմք, և ոչ թէ արդարև ունի-ցիմք, նզովեալ լիցի: Զանազի առաքեալն զինուիմք ա-ծեալ՝ յաւելու. Այսպա եթէ խոստովանիցեմք զմեղս մեր, հաւատարիմ է նա և արդար առ ի լուծանել զմեղս մեր, և սրբել զմեզ յամենայն անիրաւութենէ: Իրով քաջայայտ առ-նէ՝ զի ոչ առ խոնարհութեան ևս թ, այլ ճշմարտու-թեամբ ասէ. քանզի մարթէր նմա ասել. Եթէ ասիցեմ եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, իաւչքամոլեմք, և խոնար-հութիւն ոչ գոյ ի մեզ: Այլ յաւելցն՝ Օ՜ անձինս խաբեմք, և ճշմարտութիւնն ոչ գոյ ի մեզ, քաջայայտ առնէ՝ զի որ ասիցէ մեզս ինչ ոչ ունել, ոչ ասէ զճշմարտութիւնն, այլ ստէ,,: Այս ապա ի տերունական աղօթիցն ևս ըզ-նոյն ցուցեալ, արդարոց ևս պարտ համարի ասել Ողջ մեզ զպարտիս մեր. ոչ առ խոնարհութեան ևս թ, այլ ճշմարտապէս:

Այլ ի վերոյ աստի պարտ է ի քաց առնուլ զմանր-կունսն՝ որ չեն ի ջուր հասեալ մեռանելոյն, և զպակաս-միտս՝ որ չեն ընդունակ մեղաց:

ԱՌԱՔՈՒԹԻՒՆՔ

Գործ. Ա. — Ա. Քրիստոս ի կատարելութիւն անց-պայման զմեզ յորդորէ ասելով (Մատ. Է. 48.) “Այ-զերծք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է,,: — Ր. Այս առաքեալն Յովհաննէս ասէ (ա. Կոր. Է. 18.) “Որ ծնեալ է Աստուծոյ, ոչ մեղանչէ,,: — Գ. Այս սաղմոսերգուն ասէ (Ճաշ. 1.)

"Արանեալ էն ամբիծք ի Հանապարհի ,, : Եւրդ որք յանցանէնն ներելի և ա մեղօք , չէն այսպիսիք : Եւ վասն Օ աքարիայի և Հղնասբեթի ասէ աւետարանչն (Ա Կ. ա. 6.) զի "Վնասին յամենայն պատուիրանս և յիրաւունս տեառն անարատք ,, : — Դ. Ա ան որոյ սուրբն ( )գոստինոս ասէ (յղ. Ռեղայ և արքանեաց և Ռողոնեան. գիրք ը. գլ. չ.) "Արի որ հաւատայիցէ ինձ՝ թէ արդեօք կարիցէ մարդ առանց մեղաց գոլ ի կենցաղումս , խոստովանիմ թէ կարէ շնորհօքն Աստուծոյ և ազատութեամբ կամաց ,, :

Պե. — ւ. Սրատն տէրունական դիմելոյ ի կատարելութիւն՝ իմանալի է ըստ պայմանի մարդկային տկարութեան : Եւ դարձեալ խօսի անդ վրկիչն մեր զնելոյ անիրաւութեանց և բարւոյ առնելոյ Հշնամեաց. վասն որոյ ըստ այնմ մասին պարտ է իմանալ զնմանութիւնն, որպէս և Մակեբերան իմանայ :

— Բ. Ամենայն որ Աստուծոյ է ծնեալ, ցորչափ ըստ օրինաց այնր ծննդեան գործէ՝ ոչ մեղանչէ, և է այս ընդունելի. այլ որ Հոգեալ զաստուածախրութիւն և ըստ ցանկութեան գործէ, մեղանչել մեղանչէ :

— Գ. Նան սաղմոսերգուն և աւետարանչին, և այլ ամենայն այսպիսի բանք սուրբ գրոց, ցուցանեն զամբծութիւն ի ծանուցց մեղաց, և ոչ ի ներելեաց առհասարակ՝ յորոց և արդարք ոչ են զերծ ըստ գրոց. "Ոչ գոյ մարդ, որ ոչ մեղանչէ ,, :

— Դ. Սակ սուրբն ( )գոստինոս բանիւդ այդուիկ կարելի համարի զանմեղութիւն կամ ի ծանուցց մեղաց, և կամ բնականապէս և ոչ բարոյապէս. ապա թէ ոչ, հարկ էր ասել՝ թէ ինքն զՀետ բանից իւրոց ոչ գնայ : Վանալի ասէ ընդդէմ պելագեանց (յղ. յարտհոռոմեան. գլ. ը. 4.) "Արեք ինչ կամիցիկ եկեղեցի հակառակ նոցին ուսուցանել : Նախ՝ զի ընդունք Աստուծոյ ոչ ըստ արժանեաց մերոց պարգևին ... երկրորդ՝ զի ոչ ոք, որչափ և արդար իցէ, յապականացու մարմնի աստ ոչ է զերծ ի բնաւից որպիսի և իցէ մեղաց. և երրորդ՝ զի պարտաւոր ծնանի մարդ նախաստեղծին յանցանաց ,, : Եւ եթէ ոչ այս էր սրբոյ վարդապետին խոստովանութիւն, ոչ ամենայն ուրեք յեղյեղէր ոչ զոք ազատ յամենայն մեղաց լեալ բաց ի Քրիստոսէ և յամենասուրբ մօրէ նորա :

Ա՛ստ. Բ. — ա. Ա՛րդարն եթէ կարէ առ ժամանակ մի՛ ի բաց կալ յամենայն նեբելի մեղաց, ապա կատարեցէ և յամենայն կեանս իւր. եթէ վասն ունակութեանն՝ որով դիւրանայ նմա պատուիրանապահութիւն, և եթէ վասն առատագոյն շնորհացն Ա՛ստուծոյ՝ զորս ընդունի։ — բ. Ո՛ւ եթէ՛ ի մէն միոյ՛ ի մեղաց կարէ կալ՛ ի բաց, ընդ՛ը և՛ ի բնաւից չէ կարօղ։ Ա՛պա թէ ոչ, հարկ անհրաժեշտ է նմա մեղանչելոյ, և հարկն այն չհամարիւի նմա՛ ի մեղս։ — գ. Ն՛թէ չէր մարթ արդարոյ՛ ի բաց կալ յամենայն մեղաց, ապա և ոչ օրէն էր նմա առաջադրել՛ ի բաց կալոյ, և ոչ վասն այնր աղօթել, և մանաւանդ ուխտել։ Ա՛յլ այս ամենայն հակառակ է սուրբ գրոց, և սրբոց եկեղեցւոյ խոկ՝ որ աղօթէ առ Ա՛ստուած փրկել զմեզ յամենայն մեղաց, և մի թողուլ անկանել մեզ՛ ի մեղս։

Պե. — ա. Կարէ խոկ մարդ, ասէ սուրբն Ի՛երոնիմոս (ընդդէմ Պելագ. գիրք Գ. 12.) առ սուղ ինչ ժամանակ ծոմապահել, հսկել, շրջել, ընթեռնուլ, սաղմոսել, ննջել, այլ մի՛ թէ կարէ՞ վասն այսորիկ և միշտ։ Ունակութեան մարթ էր օգնել, եթէ զմիջէ ևեթ աղգե մեղաց էին բանք. և առատագոյն շնորհք կախեալ կան ՚ի հաւատարմութենէ մարդոյ առ ամենայն իսկ նախընկալեալ շնորհս՝ զորմէ խնդիրս մեր է։

— բ. Ա՛նքան է զանազանութիւն զգուշանալոյ՛ ի մէն մի մեղաց և՛ ի պարտաւորութենէ նոցա համօրէն, որչափ խոչեալ զառաւօտն պարզ և զբազմակղի։ Ա՛յս հարկն այն ոչ է հարկ բնական անկանելոյ՛ ի մէն մի՛ ի մեղաց, այլ հարկ բարոյական՝ որ հայի՛ ի պարտաւորութիւն ամենայն մեղաց։

— գ. Ա՛ղօթք և ուխտք զգուշանալոյ՛ ի մեղաց հայիմն՛ ի մեղս՝ որ գիտութեամբ և մտածութեամբ գործին, և յորոց մարթ է ընդհակառակ. ըստ այսմ աղօթէին սուրբք, ըստ այսմ աղօթէ և եկեղեցի հանապազօր։

ԳՕԴՈՒԱԾ Ը

Զի չկարէ արդարն առանց առանձինն շնորհացն Աստուծոյ յընկալեալ արդարութեանն յարատևել :

Ասէ ի հաւատոյ վարդապետութենս այս սահմանեալ ՚ի ժողովն տրիդենտեան . “Որ ոք ասիցէ թէ արդարն առանց առանձինն օգնականութեանն Աստուծոյ կարէ յարատևել յընկալեալ արդարութեանն , կամ չկարէ օգնականութեամբն իսկ Աստուծոյ , նզովեալ լիցի ,,:

Արժանաւէն զանազանի յարատևութիւն , ներգործական և կրաւորական : Ներգործական է , եթէ ոք յետ արդարանալոյ հաւատարիմ առ շնորհն Աստուծոյ գործեալ կայ և ճշոյ յարդարութեան անդ մինչև ցմահ . իսկ կրաւորական , որոց միանգամ ՚ի շնորհս անդ արդարութեան հասանէ մահ :

Աղդ մեծս այս պարգև յարատևութեան , որպէս կոչէ զայն նոյն սուրբ ժողովն բանիւ ( )գոատինոսի , բովանդակէ երկուս շնորհս , ներքին և արտաքին : Ներքին է ներգործականն այն շնորհ լուսոյ և ազդեցութեան , որով ոք զարթնու և պատրաստանայ կալ ճնալ յընկալեալ արդարութեանն մինչև ցմահ . իսկ արտաքին , որով խնամէ Աստուած զընտրեալս իւր՝ մերժելով ՚ի նոցանէ գխորճութիւնս և գվտանգս , որպէս զի յաղթող եղեալ ամենայնի՝ արդարութեամբ գրաւեցին ՚ի կենաց : Ա. ցուցանի վարդապետութիւնս այս ՚ի սուրբ գրոց :

Ասացի ասէ առաքեալն (Փիլ . ա . 6 . 29 .) “Վստահ եմ յայդ , թէ որ սկսաւն ՚ի ձեզ գգործս բարեաց՝ կատարեցէ մինչև յօրն Յիսուսի Քրիստոսի . . . Ա. այդ Աստուծոյ է՝ որ ձեզ շնորհեցաւ վասն Քրիստոսի , ոչ միայն ՚ի նա հաւատալ , այլ և վասն նորա չարչարել ,,: Ա. առաքելապետն ասէ (ա . Կո . ա . 8 .) “Որ զօրութեամբն Աստուծոյ պահեալ եղիք հաւատովք ՚ի պատրաստեալ փրկութիւնն ,,: Օրմէ ասէ սուրբն ( )գոատինոս , թէ “Հաւատալն ՚ի նա՝ հայի ՚ի սկիզբն ,

իսկ չարչարիլ՝ ի վախճանն։ Ո՞նոյն և ի տեւտնական աղօթիցն ցուցանէ. Այո՛ մի պահէը պիղծ ի ճոչյու-ընէ՛ն, այլ ճրկէա՛ ի լաբե. քանզի ասէ.“ Ո՞ւրն էայլ մաղթեն սուրբք, բայց կալ և ճնալ ի սրբութեան,,։ Ցուցանէ դարձեալ ի հատուածոց աղօթից, զի ասէ. “Աղօթէ եկեղեցի յաթաւել հաւատացելոց, ապա Աստուծոյ է ընծրհել զյաղթութիւն մինչև ի սպառ,,։

Ալ ասն որոյ և արաւեան ժողովն սահմանէ՝ զի “Պարտէ մաղթել հանապազ վասն վերածնելոց և սրբոյ՝ զԱստուծոյ օգնականութիւնն, զի կարող լինին ժամանել ի վախճան բարւոյ, կամ յաթաւել ի գործս բարիս,,։ Ո՞ւ թէպէտ և ընդհանուր այս յաթաւութեան ձրի է ամենեւին և ողորմութեանն Աստուծոյ պարգև, և չէ մարթ ումեք արժանաւորել զինքն ըստ արդարութեան, այլ մարթ իսկ է արժանի լինել ըստ պատշաճի, որպէս դարձեալ սուրբն Գրիգորիոս ասէ. “Աւյսմ ընդհանուր յաթաւութեան մարթ է արժանի լինել խնդարհ պաշտանօք,,։ Ւ՞ր քանզի պարգևս այս հաստատեալ է ի յարակցութեան ընդհանուր ընդ վախճանի կենաց, ոչ միօրինակ պարգևի ամենեցուն՝ այլ տպեպէս ըստ աստուածախնամ տեսչութեան. որ զոմանց արագ զվախճան, զի մի անկցին. զայլոց յերկարէ զկեանս, զի ընդհաստացին. կիսոց ոչ թողու անկանել ի փորձութիւն. զայլս զօրացուցանէ ի փորձութեան, որպէս զի կայցեն հնազանդեն ի բարւոջ մինչև ի վախճան։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆ Փ

Աստ։ — ա. Աղէկ ոչ ի ձեռս մարդոյ էր յարատեւել, ընդունայն լինէին ջանք նորա ի բարին. զի զինչ օգուտ էր, եթէ ոչ պարգևէր նմա Աստուած զպարգև յաթաւութեան. յորդորանք իսկ և կշտամբանք առն այն անօգուտ լինէին։ — ա. Անտաւանդ զի և ոչ մարթ է արդարոյ արժանի լինել այնմ պարգևի։ — ա. Աղէկ արդարոյ իցէն իրաւունք յաւիտենական կենաց հասանելոյ, հարկ է զի իցէն և ընդունելոյ զպարգև յարատեւութեան։ — ա. Ւ՞ր դարձեալ՝ յոյժ առաւել եղեն օգուտքն՝ զոր ընդհեաց մեզ Վիրիատոս, որպէս առա-

քեալն ասէ (կո. Է.) քան զվնասն՝ զոր ընկալաք յԱ-
դամայ. արդ Ադամ, ըստ վարդապետութեան սրբոյն
Գրիգորիսի, կարէր առանց ինչ առանձինն ընտրհայն
Աստուծոյ յարատեւել ի բարին, ապա և այլն։ — ս. Այս
դարձեալ՝ այդ վարդապետութիւն հակառակ է քրիս-
տոնէական յուսոյ, և վնեաս գայ այդմ անհրաժեշտ
հարկ դատապարտութեան։

պխ. — ս. Ընդունայն լինէին ջանք մարդոյ ի յարա-
տեւել, եթէ ոչ պատրաստ էր Աստուած տալ ամենե-
ցուն զընտրհս յարատեւելոյ. այլ Աստուած ոչ ումեք
խնայէ զընտրհս կարևորս ի յարատեւութիւն, որպէս
ցուցցուք ի տեղւոջ։ Վասն որոյ շատ է արդարոյ հաւա-
տարիմ առ ընտրհսն Աստուծոյ գտանել գործակցու-
թեամբ, և կարօղ լինի յարատեւել. քանզի ներգոր-
ծական յարատեւութիւն ի ձեռս մարդոյ է, և եթէ
կորուսանիցէ զայն՝ իւր իսկ է մեղ. զի ի ձեռս իւր է
հնազանդել կամ զդէմ ունել ընտրհացն Աստուծոյ,
վասն որոյ առաքեալն ասէ. (ք. կոր. Ճ. 1.) "Աղա-
չեմք, մի ընդունայն զընտրհսն Աստուծոյ ընդունել ձեզ,"
Ասա այսմ և ոչ յորդորանքն անօգուտք են ի յարա-
տեւութիւն։

— բ. Վէ է մարթ արժանի լինել ընտրհի յարատեւու-
թեան, այլ մարթ իսկ է աղօթիւք և գործակցութեամբ
նախընկալեալ ընտրհայ՝ ընդունել զայն անվրէպ, և այս
շատ է։

— գ. Իրաւունք արդարոյ յաւիտենական կենաց հա-
տանելոյ՝ պայմանաւ է, այսինքն եթէ յարատեւեցէն
մինչ ի սպառ. "Ով որ համբերեսցէ ի սպառ, նա
կեցցէ,,. (Մտթ. ժ. 22)։ Վասն որոյ և չեն ինչ նոյա
իրաւունք ընտրհի յարատեւութեան այնու, զի առ ժամն
յարդարութեան են։

— դ. Գոհան ընտրհեալ մեզ ի Քրիստոսէ այնու
պտանի առաւելեալ ըստ սրբոյն Գրիգորիսի, զի Ա-
դամայ տուաւ կորնչել յարատեւել, իսկ ընտրհքն Քրիս-
տոսի տան մեզ յարտախել. նման լուսաւորութեան եթէ
տուան ընտրհք, քանզի պարգևով ամբողջութեան էր
Ձոխացեալ, իսկ մեզ պարգևին հանդերձ այնուիկ և
ընտրհք ազգեցութեան՝ որով տկարութիւն կամացդ կազ-
դուրի։

— ե. Խակ յուսահատութեան չմնայ տեղի ամենևին, զի ներգործական յարատեւութիւն՝ զորմէ խըն-դիրս է՝ ոչ իւիք զանազանի՛ ի ներգործական ընորհայ, որով և ոչ քրիստոնէական յուսոյ հակառակի. և չիք ինչ ամենևին ուղղափառ վարդապետութեան ընդ անհրաժեշտ հարկի դատապարտութեան, զի Աստուած ոչ զոք լքանէ՝ եթէ ոչ լքեալ նախ՛ ի նմանէ. և ոչ ուժեք զանայ զընորհս բարեպաշտութեամբ և արդարութեամբ վարելոյ զկեանս իւր, որպէս սահմանեաց Ժողովն տրիդենտեան (Նիստ. Ճ. գլ. ժա.) ըստ վարդապետութեան սրբոյն ( )գոստինոսի:

ԳՕԴՈՒԱԾ Թ

Զի ձրի ևս ամենևին շնորհք, և ոչ իւիք բնական գործով վարձ է արժանաւորել այնմ, ոչ ըստ վաստակոց և ոչ ըստ պարտաձի:

Այս վարդապետութիւն մատն է հաւատոյ, սահմանեալ ընդդէմ պելագեանց և կիսապելագեանց՛ ի ժողովն Կոստաւպօլսի, և յերկրորդ ժողովն արաւսեան, զի "Ոչ ոք ասիցէ՝ թէ՛ ի հաւատալ մերում, ՛ի կամել, ՛ի բաղձալ, ՛ի ջանալ, ՛ի վաստակել, ՛ի հայցել և ՛ի խնդրել՝ պարգևի մեզ առանց շնորհացն Աստուծոյ ողորմութիւնն աստուածայինն, և կամ յարակից խոնարհութեան և հնազանդութեան մարդոյ համարի զօգնականութիւն շնորհաց, հակառակ կայ առաքելական բանին "Ո՞ւնչ ունիս, զոր ոչ էիր առեալ. և Շնորհօքն Աստուծոյ եմ՝ զինչ ևս եղեմ,,: Այս դարձեալ՛ ի նմին ժողովն սահմանեալ, զի "Ոչ արժանեաց ինչ կանխելոյ քան զշնորհս զՀետ գան ըստ պարտեաց վարձք բարեգործութեանց՝ եթէ գուցեն, այլ շնորհք անպարտականք կանխեն զի գուցեն,,:

Ասացի՛ ի մերմէ՛ ի բաց զայր և ես արժանիս բնական գործոց, ոչ մերմէ զըստ պատշաճի արժանիս գերբնական գործոց՝ որ գործիցին յարդարոց, կամ՛ ի մեղաւորաց՝ առ՛ ի խնդիր դարձի առ Աստուած:

Ասացեալ գիրք ամենայն ուրեք վկայեն, զի ձրի են շնորհք Աստուծոյ և ողորմութիւն. զի առաքեալն ասէ

(հմ. ԺՅ. 35.) "Ի՛վ եւ նմա փոխ, եւ առնուցու փոխարէն ՚ի նմանէ,,: Եւ դարձեալ բանիւն Յակոբայ (անդ Ճ. 20.) "Վասն այնոցիկ՝ որ զիս ոչ խնդրէին, յայտնի եղէ այնոցիկ՝ որ զինէն ոչ հարցանէին,,: Եւ դարձեալ (ես. կոր. Ղ. 7.) "Ո՛չինչ ունիս, զոր ոչ իցէ առեալ, և եթէ առեր, զին պարծիս իբրև զչառեալ,,: Եւ դարձեալ (հմ. Ը. 17.) "Ո՛պա ոչ ըստ այնմ՝ ինչ է՝ որ կամիցին, և ոչ ըստ այնմ՝ որ ընթանայցէ, այլ ըստ Ո՛ստուծոյ՝ որ ողորմի,,: Եւ դարձեալ (ՀԱԼ. Բ. 13.) "Ո՛վ ի Ո՛ստուած է՝ որ յաջողէ՛ ի մեզ զկամելն և զառնելն վասն հաճութեան,,: Եւ ՚ի բազմաթիւ այլ տեղիս զայսպիսի ինչ ասէ սուրբն ( )գոստինոս:

Ա՛րդապետութիւն պէ՛տք եանց յայտնապէս հակառակ է այս ամենայն բանից սուրբ գրոց, և եղծանէ զէութիւն շնորհաց: Ո՛չ ի եթէ ըստ վաստակոց և ըստ արժանեաց պարգևէին շնորհք, ոչ ևս շնորհք լինէին ըստ առաքելոյն (հմ. գլ. Ը):

Եւ աստուածաբանօրէն իսկ յայտ է, զի որոց և իցէ արժանեաց և վաստակոց հարկ է ՚ի շնորհաց առնուլ սկիզբն, որովհետև ոչ ինչ ՚ի բնական գործոց կարէ գոլ արժանի գերբնական շնորհաց: Եւ զի գարձեալ եթէ ոչ ձրի էին շնորհք, ոչ ևս Ո՛ստուած ազատ ՚ի պարգևս իւր գտանէր: Ո՛ւ ան որոց ասէ սուրբն ( )գոստինոս. "Ի՛ր վասն շնորհք, քանզի ձրի պարգևին. և ի՛ր ազատաբար ձրի պարգևին, զի ոչ կանխեն վաստակք քո. ապա ուրեմն շնորհք այնմիկ՝ որ փրկեացն զմեզ: Եթէ վասն այն են շնորհք՝ զի ձրի են, ոչ ինչ ապա ՚ի քոյոցդ կանխեաց զի ընկալցիս,,:

Ա Ռ Ա Ր Կ Ո Ի Թ Ի Ի Ն Ք

Ո՛ստի. — ա. Ո՛ր ինչ ստանանեն վաստակք և արժանիք՝ էութեան շնորհաց, քանզի և այնոքիկ ՚ի ձրի պարգև արարչագործութեան են. զի ահա ոչ եղծանի էութիւն շնորհաց ՚ի պարգևել զայն Ո՛ստուծոյ ըստ կանխիկ վաստակոց արդարոյ և մեղաւորի, որպէս վկայէ սուրբն ( )գոստինոս (Ընդ. Ճիգ. 9.) "Եւ թո-

ղութիւն իսկ մեղաց ոչ առանց ինչ վաստակոց է, ըստ հաւատոց ընկալեալ. քանզի են իսկ և հաւատոց՝ արժանիք ,,։ Այս ընդդէմ վաստակք աստանօր ոչ եղծանեն զէութիւն ընտրհաց. քանզի հաւատք՝ որ կանխեն՝ ձրի են։ — ր. Այս ոչ է մարթ ասել՝ թէ սկիզբն արժանեաց չանկանիցի ընդ արժանեօք. քանզի Աստուած կանխագիտութեամբն զի հաւատարիմ առ ընտրս իւր ոք լինելոց է, կարէ օրպէս վարձ արժանեաց նորա նախատեսելոց պարգևել զայն։

պի. — ա. Արարչագործութիւն և կամ բնութիւն չկարէ երբեք բերել արժանաւորութիւն գերբնականին։ Վանզի բնութիւն և ընտրհք, բնական և գերբնական, տարաստեաք ի միմեանց են ամենևին, և չիք ի միջի նոցա համեմատութիւն։ Արարչագործութեան են գործք բնականք, որք ոչ երբեք կարեն ամբառնալ զմարդ ի վեր քան զպայման իւր՝ ոչ ի կեանս յայս և ոչ ի հանդերձեալսն։ Ընտրհաց է ամբառնալ զնա յերկաքանչիւր իսկ ի կեանս։ Ոչ ի ներ բնութեան մարթէր ներգործել որ ինչ գերբնականն ընծայէ, ասելով գտանէր սա ամենևին. վասն որոյ և ընտրութիւն և կոչումն և ամբարձումն իսկ ի կարգ գերբնականաւ եղելոց լինելին, որպէս համարինն իսկ պետք։ Վասն որոյ և համեմատութիւնդ այդ հաւատոց ընդ արարչագործութեան՝ չէ ընդունելի. քանզի հաւատք գերբնական են, և ընտրհք՝ որոց նուաւ գնի ըստ պատշաճի ոք արժանաւորի՝ կարեն սկիզբն առնուլ ի հաւատոց անտի, և ըստ այնմ գոլ ձրի։ Այլ ոչ այսպէս և յարարչագործութենէ, որ բնական ինչ է ամենևին։

— ր. Կարէր իսկ Աստուած ըստ կանխատեսութեան իւրոյ զկարգս իրաց տնօրինել, այլ զի ոչ այդպէս տնօրինեաց՝ յայտ ի սուրբ գրոց է, զի առաքեալն ասէ՝ թէ յառաջագոյն ընտրեաց զմեզ Աստուած լինել մեզ սուրբս և անարատս, և ոչ թէ յառաջագոյն ետես զմեզ հանդերձեալս լինել այնպիսիս։

Առակ. ր. — ա. Ըստ այդմ վարդապետութեան առաքինասէրքն հաւատարքն ընդ յոռի մարդկան գտանելն ի միասս մեծ բարոյականին, ուր ընդդէմ հակառակն տեսանեմք ի փորձոյ՝ զի յոռի մարդիկ դժուարաւ յոյժ

քան զառաքինիս գան ՚ի հաւատս : — ՚Ի. Դարձեալ և ոմք անգիտութեամբն կամ տկարութեամբ յանցանեն՝ հաւատալ գտանելոյն յանցուցելոյն չարութեամբ, ուր առաքեալն ասէ. "Դայց գտի ողորմութիւն, զի զայն յանգիտութեան և յանհաւանութեան գործէի ,, : Այլք Դաւլոսացին (յղ. ՃՀմարտ. խնդ. ԺՊ. յօդ. ԺԱ.) ասէ՝ զի եթէ վայրագասուն ոք զբնական օրէնս յամենայնի պահէցէ, ոչ անտես առնէ զնա Դստուած, այլ կամ ՚ի ձեռն մարդոյ և կամ ուրուք ՚ի հրեշտակաց ցուցանէ նմա զձանապարհ փրկութեան : — Գ. Այսմ է և առածն այն ընկալեալ, զի ոչ զլանայ Դստուած զընտրհս իւր այնմ՝ որ առնէ որ ինչ ՚ի կարի իւրում է :

ՊԽ. — Ա. Այսպէտ և առաքինեաց իսկ չէք ինչ արժանաւորութիւն վասն բնականապէս առաքինութեանն՝ առ բերբնական ընտրհս, սակայն յոմն մարդիկ յաւելուն և զանարժանութիւն առ այն, և խափան արկանեն ողորմութեանն Դստուծոյ : Այլ եթէ պէտ և ազատ է Դստուած երկաքանչիւրոցն իսկ տալ կամ զլանալ զընտրհս իւր, որպէս տայ իսկ և չարաց և յեղափոխէ զնոսա ՚ի բարիս, այլ ըստ սովորական կարգի աստուածախնամ տեսչութեան՝ յաձախագոյնս տեսանեմք եկեալ ՚ի հաւատս զլաւորեալն՝ որ նուազ արկանեն խափան ընդդէմ ընտրհացն Դստուծոյ՝ քան զամպարիշտս :

— Բ. Վասն որոյ և ոչ հաւատալ գտանելն անգիտութեամբ յանցուցեալքն ընդ յանցուցեալսն չարութեամբ, զի սոքա առաւելագոյն արկանեն խափան առ ընտրհսն Դստուծոյ. և ըստ այսմ է իմանալ զբան առաքելոյն : Դստ այսմ և զբան սրբոյ Դգուստինոսի. քանզի մարդասէրն Դստուած, որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն, ինքնին ՚ի բարութենէ իւրմէ բերի օգնել նոցա. և ուր ոչն գտանէ արգել և խափան, պարգեւէ զընտրհս իւր :

— Գ. Վ զլանայ Դստուած զընտրհս իւր այնմ՝ որ առնէ որ ինչ ՚ի կարի իւրում է, ոչ զի պարտական է նմա ըստ վաստակոց ինչ նորա կամ ըստ արժանեաց, այլ ըստ բարութեան ևեթ իւրում : Ո՞չ այլ ինչ է ոչ զլանալ նորա ումեք զընտրհս իւր՝ ոչպէս և յիրաւի հաճոյ լինէ իւր, և այլ՝ տալ ումեք զայն ըստ արժանեաց և ըստ վաստակոց ինչ նորա : Դստ այսմ է իմանալ զա-

ռածն զայն, այսինքն որ ոչն խափան ինչ արկանէ հնորհացն Աստուծոյ՝ ողորմի նմա Աստուած, և տայ զհնորհս իւր։ Այլ կարող է առանց անհրաժեշտ չետալ հնորհս և նման, որ առնէ ըստ բնութեան որ ինչ ’ի կարի իւրում է, զի վասն բնական լաւութեան ոչ ուժեք պարտական է Աստուած տալ զգերբնական հնորհս իւր։ Այլ են և այս, որք զառածն զայն իմանան ըստ ներգործական ձրի հնորհացդ, որով արմատաքի առաքութիւնդ այդ խլէ։

ԳԼՈՒԽ Բ

ՅԱՂԱԳՍ ԷՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱԺԱՆՄԱՆ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՇՆՈՐՀԱՑ ԸՍՏ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՋԱՑ ԿԱՄԱՑ

Մատչեմք ’ի խնդիր դժուարին, յորում ոչ միայն մելոտեացն բազումք, այլ և աստուածաբանք իսկ ուղղափառք յայլ և յայլ կարծիս բաժանեցան։ Վասնզի խնդիրս է զանվրիպելի ելից հնորհացն Աստուծոյ հանդերձ ազատութեամբ կամաց մարդոյ։ Երեսիսաբար առ’ի լուծանել զկնճիռն, հատանեն զայն՝ զգօրութիւն հնորհացդ, կամ զազատութիւն կամաց ’ի բաց բարձեալ։ սակայն ’ի հաւատոց են և անվրիպելի արդասիք հնորհացդ, և ազատ գործակցութիւն մարդոյ ընդ հնորհս։

Այդ գիտելի է նախ՝ զի զկանխաժաման ներգործական հնորհացդ են մեզ աստ բանք։ Ա երկրորդ՝ զի զհնորհս զայս կրկնակի մարթ է նկատել. մի՝ յինքեան, և միւս ևս՝ յարգասիս իւր։ Յինքեան նկատեալ՝ զանդադար զլուսաւորութիւն մտաց, զազդեցութիւն ’ի կամս, և զգօրութիւն՝ զոր հաղորդէ կամացդ. վասն որոյ ներգործական կանխաժաման հնորհք լուսաւորէ՝ շարժէ և օժանդակէ, և ըստ այսմ՝ կրաւորական է ընկալուչ հնորհին։ Հ հնորհք որ յէութենէ իւրմէ յառաջ ածէ զայսպիսի արդասիս, նկատեալ առանց հաւանութեան կամացդ՝ որ ’ի վերայ հասանէ, կոչի գործունեայ ըստ ներքին զօրութեան. ուր որում կցորդն է հաւանութիւն կամացդ, կոչի գործունեայ զօրութեամբ կցորդութեան։ Այլ և պարզապէս իսկ կոչի գործունեայ, առ ’ի քաջ զանազանել ’ի միւսմէն՝ որում չէ

կցորդ հաւանութիւն կամաց, և որ սովորաբար կոչի բաւական ընծայք: Այստի և մեծն այն զանազանութիւն գործուեալ և բաւական ընծայից:

Նաց՝ի պէղպատեանց և՝ի սակինեանց և՝ի բանական աղանդաւորաց՝ ընդունին ամենեքեան զգործուեալ ընծայս, որոյ ապացոյցք են բարի և գերբնական գործք. բայց խնդիր մեծ է՝ի սահմանել զորպէսն կցորդութեան ազատ կամաց ընդ անվրիպելի զօրութեան ընծայից:

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Քաղագո գոյութեան գործուեալ շնորհաց:

Զի գոն գործուեալ ընծայք անվրիպելիք՝ի ներգործելոյ՝ի կամս մարդոյ զբարին՝ հաւաստի է՝ի գրոց, քանզի ասէ Այսուամբ Նպեկիեղիս (ՂԳ. 26.) "Նա տայ ձեզ սիրտ նոր, և ոգի նոր ներսոգեցից՝ի ձեզ. և հանից զսիրտն քարեղէն՝ի մարմնոց ձերոց, և տայց ձեզ սիրտ մարմնեղէն, և զոգի իմ տայց՝ի ձեզ,,: Նա փրկիչն մեր ասէ (ՅԿ. Ղ. 37.) "Օ՜ ամենայն, զոր տայ ինձ Հայր, առ իս եկեսցէ. և որ գայ առ իս, ոչ հանից արտաքս:.. Այո՛, ամենայն, որ լսէ՝ի Հօրէ և ուսանի, գայ առ իս,,: Նա առաքեալն ասէ (ԳԷԼ. Բ. 13.) "Օ՜ի Այսուամբ է, որ յաջողէ՝ի մեզ զկամելն և զառնելն վասն հաճութեան,,: Օ՜այս է իմանալ և՝ի բանից գրոցն ուր ասէ. "Այսուհետև Այսուամբ զսիրտն փարաւոնի,,. զի Այսուամբ ոչ երբեք խստացուցանէ ներգործութեամբ զսիրտ ուրուք, այլ զի ազատ է՝ի շնորհս իւր, և վասն անարժանութեան փարաւոնի չետ նմա զգործուեալ շնորհս առ՝ի կակղել զսիրտ նորա, ասի խստացուցանել զսիրտ նորա, այսինքն թողեալ զնա՝ի խստութեան իւրում:

Օ՜այն հաստատեն և Հարք. յորոց Ցերտուղիանոս ասէ (յղ. հոփ-ոյ. գլ. իա.) "Օ՜րութիւն աստուածայինն շնորհաց՝ հզօրագոյն է քան զբնութիւն, և զազատ կամացս մերոց գերազանդէ զօրութիւն,,: Նա սուրբն ( ) գոատինոս ասէ (յղ. շնորհաց. գլ. ԺՂ.) "Օ՜այսմ ուսանեղոյ ասէ տէրն մեր, Այնոցա ոչ լսէ՝ի Հօրէ և ոչ եկեսցէ առ իս, զի այսպէս հաճոյ եղև առաջի քո: Այսպէս ոչ ոք կարէ գալ, ոչ է ուղիղ ասել զինքն

մանկ՝ թէ լուեալ և ուսեալ իցէ գալ, այլ չկամիցի առնել զուսեանն ,, : Եւ այլուր ասէ (յղ. Նախաասող. գլ. Ը.) “Լուր զայս ընդոհ, որ աներևոյթ ի սիրտս մարդկան յառաջութենէն Աստուծոյ պարգևի, ոչ որ ի խստասրտութենէ մերժէ ի բաց. զի առ ի բառնալ զխստութիւն պարգևի ,, :

Այս և յերեւելեացն գործունեայ ընդոհացն է յայտ. զի որպէս առաջոյսք, ներգործականն ընդոհ յերկուս զանազանի, ի բաւական և ի գործունեայ : Լուր քանզի բաւական այն է՝ առանց որոյ չկարէ ոք առնել զբարին, և որով կարէ, ապա գործունեայ այն է՝ որով առնէ, վասն որոյ և կարէ առնել :

Նման այսմ՝ զբաւական ընդոհս կոչեն աստուածբանքն առանց որոյ ոչ, իսկ զգործունեայն՝ որով : Արբոյն ( )գոյ տինսոսի է զանազանութիւնս. որ և յաւելու՝ զի վերջինս այս ոչ հրեշտակաց ուղևորաց, և ոչ նախաստեղծից յանմեղութեան անդ տուաւ, այլ մարդումն ևեթ անկելոյ՝ ի ձեռն վաստակոյ և արժանեաց Քրիստոսի : Ո՞չ ի նոքա առողջք էին, և յամենայն ախտաւոր կրից զերծք. իսկ սա տկար և ներքոյ անկեալ կրից, վասն որոյ և առաւելագունի օգնականութեան կարօտ : Վասն որոյ ասէ նոյն ինքն տուրբ վարդապետն. “Նախաստեղծին՝ որ ի բարւոջն հաստեալ ուղիղ՝ և ընկալեալ էր զկարողութիւն չմեղանչելոյ, տուաւ նպաստ յարատևութեան. ոչ որով յարատևէր, այլ առանց որոյ չկարէր ազատ կամօքն յարատևել : Նմանիւ զօրութիւն էր կամաց նորա՝ որ հաստեալ յանմեղութեան և էր ինչ ի նմա ցանկութիւն ներհակակիր, զի ընդ այնպիսւոյմ բարութեան և դիւրութեան բարւոք կեալոյ՝ արժանապէս զուգընթանային կամք յարատևութեան : Այլ յետ կորուսանելոյ մեղօք զմեծն զայն ազատութիւն, մեծագոյն պարգևաց օժանդակութեան գտաւ կարօտ տկարութիւն : . . . Ո՞ի եթէ յայնքան տկարութեան կամաց՝ թողուին կամք մարդկան յինքեան, կալ ըստ հաձոյս՝ յաստուածային օգնականութեան, առանց որոյ չկարէին յարատևել, և ոչ ներգործէր ի նոսա Աստուած զկամելն, յայնչափ և յայնպիսի փորձութիւնս կամքն թողեալ յինքեան՝ նուաճէր տկարութեամբ նրոյ, և չկարէին մարդիկ յարատևել. զի վերջացեալ

տկարութեամբ՝ ոչ կամէին, կամ տկարութեամբ կամացն ոչ այնպէս կամէին՝ զի կարասցեն։ Այլ տուաւ օգնականութիւն տկարութեան մարդկային կամաց, զի ՚ի ընդհացն Աստուծոյ վարեսցի աննահանջելի և անխափան. և հանդերձ տկարութեամբն իւրով՝ ոչ պակասեսցի, և ոչ յիմեքէ ՚ի ներհակաց յաղթեալ»։

Այս այժմ ապա գործունեայ ընդհ սահմանին. «Ներգործական օգնականութիւն Աստուծոյ, որով կամք մարդկային կամին ներգործաբար և գործէ անվրէպ և անխափան զբարին, հանդերձ ազատութեամբ և ոչ ՚ի հարկէ»։

Իսկ բաւականն սահմանի. «Ներգործական օգնականութիւն Աստուծոյ, որով կամք մարդկային կարէ գործել զբարին, թէպէտ և կարօղ է զդէմ ունել այնմ և առանց որոյ չկարէ գործել»։

ԳՕԴՈՒԱԾ Բ

Թէ յորում իմիք գործունեայ շնորհացն իցէ զօրութիւն։

Զայսմանէ, որպէս ասացաք, այլ և այլ մելոյութիւնք են հերեսիոլտաց, և այլ և այլ կարծիք աստուածաբանից։

Պուլեւրականք կեղծիս ինն և եղջերուաքաղ զանձնիշխանութիւն մարդոյ և զազատ կամն հաստարին, իբր այն թէ չկարիցէ մարդ ոչ բարի ինչ և ոչ չար ազատօրէն խորհել, այլ զամենայն ՚ի հարկէ, որպէս ուսուցանէ Վիքլեֆ։ Այս թէպէտ Պուլեր զայս մելար կարծիս մեղմեաց ասպա՝ ամփոփելով զվարդապետութիւն իւր, սակայն ոչ ինչ ընդհատ ամպարշտութեամբ յայն գերութիւն զազատ կամն մարդոյ ածեալ՝ մինչև ասել թէ չէր ՚ի ձեռս Յուդայի գործել այլազգի և կամ շընջել ՚ի կամացն, թէպէտ և կամելով մատնեալ զՔրիստոս և ոչ ՚ի հարկէ։ Այսոյ ուսոյց և Կալուին. ՚ի սոյն մելոյութիւն մերձ մատեաւ և Յանսենիոս. և ամենեքեան պատապարտեցան ՚ի ժողովն տրիդենտեան, թէպէտ և Պուլերի մելոյութիւն յառաջագոյն իսկ ՚ի ժողովն կոստանդեան պատապարտեալ էր։

Իսկ ՚ի կարծեաց աստուածաբանից մի մելինեան է վարդապետութիւն, որ զգործունէութիւն այսր ընդ հայց հաստատէ ՚ի հաւանութեան կամաց. իբր այն թէ ոչ ընդհք զկամն, այլ կամք զընդհս սահմանիցեն, և հաւանութեամբ կամաց ընդհքն եղիցին գործունեայ, և չհաւանելովին՝ բաւական։ Ի՝ստ այսմ կարծեաց՝ ընդհքն ՚Ի՛րիստոսի ոչ իւիք զանազանի յայնմանէ՝ որ տուաւն հրեշտակաց և նախամարդոյն յառաջ քան զանկումն իւր։ Ի՝ասն որոյ ըստ Ո՝ղինայ՝ եղև այն գործունեայ ՚ի հրեշտակս ոչ յանցուցեալս, և բաւական ՚ի յանցուցեալսն և ՚ի նախամարդն մեղուցեալ. որ ուղղակի հակառակ է վարդապետութեան սրբոյն ( )գոսաւինոսի։ Ա՛յս խոստովանի իսկ Ո՝ղինա զի նոր է վարդապետութիւն իւր, և անծանօթ առ Ի՝արս. և յաւելու՝ զի թէ էր ծանօթ, ընդունելի լինէր առ նոսա։ Ա՝ակայն ծանօթ իսկ էր այն սրբոյն ( )գոսաւինոսի, որպէս յայտ է ՚ի գիրսն յաղագս ընդհացն. (գլ. խէ.) ուր ՚ի քննել որ ինչ ասէրն Պե՛ղագիոս՝ թէ կարելն կամել, և կարելն առնել՝ Ի՝ստուծոյ է յարարչէն բնութեան, այլ կամելն և առնել ՚ի մէնջ և յազատ կամացդ, այսպէս զայն բացատրէ սուրբ վարդապետն. "Զթէ համաձայնէր մեզ Պե՛ղագիոս, զնոյն ինքն զկամելն և զառնել յօգնականութենէն Ի՝ստուծոյ ասէր, և յայնպիսի օգնականութենէ՝ զի առանց այնր ոչ կարեմք կամել և ոչ առնել ինչ բարի,,։ Ո՝ր բանից աստի յայտ է, զի սուրբ վարդապետն ոչ շատ համարի ասել՝ թէ մեք կամիմք ինչ բարի և չառնեմք առանց օգնականութեան Ի՝ստուծոյ առանց որոյ ոչ, այսինքն առանց բաւական ընդհացդ, և չհաւանի ընդ այդպիսի միաբանութիւն ընդհացդ ընդ ազատութեան, ոչ ըստ գրոց հաւատալ զայն. այլ պահանջէ և զգործունեայ ընդհս, այսինքն զօգնականութիւնն Ի՝ստուծոյ՝ որով կարեմքն կամել և առնել։

Ի՝սկ մելինեան վարդապետութիւն սարտոյց իսկ և իսկ զմիտս աստուածաբանից, և ՚ի ժողովոյ ուսանեք նոցին տարագրեալ՝ եհաս յաւետեան Ի՝ռովմայ. այլ մինչև ցարդ յայտնի ինչ վճիռ գատապարտութեան չիք հրատարակեալ զայսմանէ։

Ո՝այց սակայն Ա՝ուարէզ ՚ի Հիսուսեանց, այր երևե-

լի, համարեցաւ ուղղել զկարծիս Պողինայի՝ ասելով, զի Թէպէտ և ոչ միշտ զանազանի էապէս գործունեայ ընարհք՝ ի բաւականէն, այլ զգործունէութիւն իւր ոչ յեղյոյ իրացն կամ՝ ի հաւանութենէ կամաց առնու, այլ՝ի յարակից բարեպատեհ հանգամանաց՝ յորս ընարհի

Պատի երկրորդն այն կարծիք՝ որ զգործունեայ ընարհս կացուցանէ՝ ի պատեհութիւնս, որոց կանխատեսութեամբ ողորմութիւնն Պատուծոյ պատրաստէ զընարհս՝ գիտելով զանվրէպ յաջողութիւն նոցա. որպէս զտիւրացւոցն է ասացեալ, զի եթէ առ նոսա լեալ էին զօրութիւնքն՝ որ եղեն՝ ի Նենեթսայիտա, ապաշխարեալ արդեօք էր նոցա: Պան որոյ այսպէս զմիտս իւրեանց պաշտպանք այսր կարծեաց բայցատրեն: Պատուած զոմանս աւելի քան զայլս կամի կոչել և արդարացուցանել, առանց բառնալոյ զազատութիւն կամաց նոցա. վասն որոյ միջական գիտութեամբ նախատեսանելով՝ զի կամք նոցա յայս կամ յայն պատեհութիւնս հաւանեցին ընարհացն իւրոց, սահմանէ տալ զայն նոցա: Ուստի և պարբերական անուանեցան հետևողք կարծեացս, զի համարին յայնպիսուս պատեհ ժամանակի տալ Պատուծոյ զընարհսն՝ կանխելով քան զկամս, զի Թէպէտ և ընարհքն այն ըստ ինքեան ոչ կոչ զանազանեալ՝ ի բաւականէն՝ այլ միջական գիտութեամբն Պատուծոյ անվրէպ՝ ի յաջողութենէ ելից՝ լինին գործունեայ: Ոչայս կարծիս կալան ոչ Հիսուսեանք միայն, այլ և ոչ սակաւք՝ ի քաջաց աստուածաբանից:

Երրորդ կարծիք Թոմայականացն է, որք որպէս յիմաստասիրութեան ուսուցանեն՝ զի առ բնական ներգործութիւնս ոչ է բաւական հանրականն այն շարժուն, որով շարժէ Պատուած զհանուրս որպէս առաջին շարժող համագոյից, այլ խնդրի և նախաշարժուն բնական, այսպէս և յաստուածաբանութեան կարևոր գնոյն համարին առ գերբնական գործս. և՝ ի սմին յայսմիկ կացուցանեն զգործունէութիւն ընարհից:

Իսկ երրորդ կարծիք օգոստինեանցն է, որ զգործունէութիւն ընարհս կացուցանէ՝ ի համազոր իմն քաղցրութեան. ոչ որպէս մուրոյն քաղցր է ողորմութիւն, զի անդ ողորմութիւն բարոյապէս ևեթ ազդէ՝ ի մուրոյն. այլ Պատուած գերբնականաւ իմն քաղցրութեամբ

քնակականապէս ապրէ և ներգործէ, պրեթէ նոյնին օրինակաւ՝ որպէս ՚ի սիրտ իւրաքանչիւր ուրուք տնկեալ է ապրումն պահպանութեան կենաց իւրոց։

ՅՕԳՈՒԱԾ Գ

Չի գործառնեայ շնորհք ոչ հարկաւորեն զկամս։

Զօրեցունց և հետևօղք կարծեացս այսոցիկ հիմն հաստատուն վարդապետութեան իւրեանց՝ ընդ անվթիպելի զօրութեան հնորհացս գնեն զապաստութիւն մարդկային կամաց։ Այլ այս՝ մանն է հաւատոց սահմանեալ ՚ի ժողովն տրիդենտեան, զի ազատ են կամք ՚ի գործս փրկութեան, և ոչ հարկաւորեն զկամս շնորհք գործունեայ։

Այսմ յայտնապէս վկայեն սուրբ գիրք, ՚ի կամս մարդկան ապաստան առնելով զգարձ իւրեանց. "Դարձարուք առ իս, և գարձայց առ ձեզ,,. (Զաք. ա. 3)։

"Հին և զողութեամբ զանձանց փրկութիւն գործեցէք,,. (Փիլ. բ. 12)։

"Իւրաքանչիւր ոք զիւր վարձս առնուցու ըստ իւրում վաստակոց. զի Աստուծոյ գործակից եմք,,. (ա. Կոր. գ. 7)։

"Շնորհք նորա որ յիս՝ ընդունայն ինչ ոչ եղեն, այլ առաւել քան զնոսա ամենեսեան վաստակեցի. և ոչ ես՝ այլ շնորհքն Աստուծոյ՝ որ ընդ իս,,։ (ա. Կոր. ժե. 10)։

"Որ հաստատեալ է ՚ի սրտի իւրում, և վտանգ ինչ ոչ ունի նմա, իշխանութիւն ունի ՚ի վերայ կամաց իւրոց, և զայն ընտրեաց ՚ի սրտի իւրում՝ պահել զկոյսն իւր (այսինքն զկուսութիւն), բարւոք առնէ,,. (ա. Կոր. է. 37)։

"Ինքն ՚ի սկզբանէ արար զմարդ, և եթող զնա ՚ի ձեռս կամաց իւրոց. եթէ կամիս, պահեացես զպատուիրանս... եդի առաջի քո հուր և ջուր. ուր և կամիս, ձգեա զձեռն քո. առաջի մարդոյ կեանք և մահ. և զինչ հաճոյ թուեսցի իւր, տացի նմա,,. (Եկեղ. ժե. 14)։

Ասելք սուրբ գիրք յայտ առնեն՝ կանխաժամանն ընդ հաց ոչ լինչ բառնալ զաշխատութիւն մարդոյ, վասն որոյ և յորդորեն զնա յաստուածպաշտութիւն՝ ցուցանելով զի 'ի կամն նորա է առնել զբարին. "Արիւ եա զանձն քո յաստուածպաշտութիւն ,,. (ա. Տիմ. դ. 7.) "Ասնարհեցուցի զսիրտ իմ առնել զարդարութիւնս քո ,,. (սղմ. ՃԺԹ. 112): Ո՛նոյն և սուրբ Հարք առհասարակ հաստատեն. և սուրբն () գոստինոս, զորոյ ըզբանս լինչ 'ի նպաստ իւրեանց կամակորեն կալուինականք, ասէ (յղ. գրոյ ի հոգւոյ. լա. և լգ.) "Ի տալն կատարութիւն, ոչ հարկ 'ի վերայ գնէ. ապրէ Ա՛ստուածկամել և հաւատալ, այլ հաւանել կամ չհաւանել՝ կամաց է ,,:

Ա՛ւ գարձեալ (յղ. ֆաղ. Ա՛ստուածոյ. գիրք Ե. գլ. Ժ.) "Ա՛թէ հարկ զայն ասելի է՝ որ 'ի մերում իշխանութեան ոչ է, այլ թէ և չկամիցիմք՝ առնէ զոր կարէն, որպիսի է հարկ մահուն, յայտ է թէ այն կամք՝ որոյ լինի կեալ ուղիղ կամ թիւր, ոչ է ընդ այնպիսի հարկաւ. քանզի բազում լինչ առնեմք, զոր եթէ չկամիմք՝ առնէաք իսկ ոչ: Ա՛ւ յայսմ առաջին է նոյն ինքն կամելն. զի եթէ կամիմք, գոյ. եթէ չկամիմք, ոչ գոյ. քանզի ոչ իսկ կամէաք, եթէ չկամէաք: Ա՛կ եթէ հարկ զայն սահմանիցեմք, որով ասեմք՝ հարկ է զի այսպէս իցէ լինչ կամ այսպէս լինիցի, չգիտեմ ընդէր երկնչիցիմք յայնմանէ՝ իբր բարձող ազատութեան կամաց 'ի մէնջ: Ա՛նզի և ոչ զԱ՛ստուածոյ կեանս և զյաւտութիւն ընդ հարկաւ արկանեմք յասել մեր՝ թէ հարկ է Ա՛ստուծոյ կեալ միշտ, և զամենայն գիտել կանխաւ. որպէս և կարողութիւն նորա ոչ նուազի յասելն մեր՝ թէ չկարէ մեռանել և սխալել. զի այնպէս չկարէ զայդ, զի կարելն նուազումն էր կարողութեան նորա. և ՀՐՇմարտութեամբ ամենակարող ասի նա, որ չկարէ մեռանել և սխալել: Ո՛ւ ասի ամենակարող՝ առնելով զոր կամի, և չկրելով զոր ոչ կամի. որ եթէ լինելը նմա, ոչ էա ամենակարող էր. նմին իրի յայն սակս ասի՝ չկարէ լինչ լինչ, վասն զի ամենակարող է: Ա՛յս սմին օրինակի էա յորժամ ասեմք, հարկ է զի 'ի կամել մեր՝ անձնիշխանակամիցիմք, զՀՐՇմարտին ասեմք առանց յերկուանաց, և ոչ այնու զանձնիշխանութիւնն գնեմք ընդ

հարկաւ՝ որ զաշատուԹիւնն ՚ի քաց բառնայ։ Այսպա ուրեմն կամք մեր են, և նոքին առնեն՝ զոր ինչ կամելովն առնեմք, որ և չլինէր, եԹէ ոչ կամէաք ,,։

Է նորհացն Աստուծոյ ոչ հարկաւորել զկամս՝ ցուցանի և յաշատուԹենէ մարդոյ, զոր յիւրում տեղւոյն ցուցաք։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Աւուկ. Ա. Վկրիատոս ասէ (Յհ. Ճ. 44.) "Ոչ ոք կարէ գալ առ իս, եԹէ ոչ Հայրն՝ որ զիս առաքեաց՝ ձգեսցէ զնա ,,. Այս գարձեալ (առ 45.) "Ամենայն որ լսէ ՚ի Հօրէ և ուսանի, գայ առ իս ,,։ Այս առաքեալն ասէ (Փիլ. Ք. 13.) "Աստուած է, որ յաջողէ ՚ի մեզ զկամելն և զառնել վասն հաճուԹեան ,,։ Այսպա սուրբ գիրք զամենայն ինչ ընորհացն Աստուծոյ ընծայեն, առանց ինչ գործակցուԹեան մարդոյ։

Պե. Այդ ամենայն և այդպիսի բանք գրոց ցուցանեն և՛Թ զանվրիպելի եւս ներգործուԹեան ընորհաց, և ոչ հարկադրուԹիւն ինչ ՚ի կամս մարդոյ։ Ասէ ԹԷ ժրպէտ երկոքին այսոքիկ միաբանիցին՝ լուեն սուրբ գիրք զերկանակն, և անհասանելի է մարդկայինս մտաց՝ որպէս և սուրբն ( )գոատինոս խոստովանի, զի ասէ (յշ. ընորհաց Ա Աղեսպոսէ. գլ. խէ.) "Անպիտս այս զաշատուԹենէ կամաց և զընորհացն Աստուծոյ այնպէս գժուարին է յորոշումն, զի ՚ի պաշտպանել զաշատուԹիւն կամաց՝ Թուի ԹԷ զընորհս Աստուծոյ ուրանայցեմք, և ՚ի հաստատել զընորհսն Աստուծոյ՝ Թուիմք զաշատուԹիւն կամաց ՚ի քաց բառնալ ,,։ Ո կարծիս աստուածաբանից ՚ի լուծումն խնդրոյս տեսցուք ՚ի ստորև. աստ շատ է մեզ պինդ ունել զերկաքանչիւր ճշմարտուԹիւնս։

Այժմ այսմ զբանող զայդոսիկ սուրբ գրոց մեկնէ նոյն սուրբ վարդապետն (՚ի Յհ. Ճառ իգ. 3.) "Ցիս ուրպէս ձգէ Հայր. ուսուցանելով ողբէ, ոչ հարկ ՚ի վերայ գնէ ,,։ Այս գարձեալ (յշ. ընորհաց և ապաւինեան. գլ. Թ.) "Աստուած է, որ յաջողէ ՚ի մեզ զկամելն և զառնել վասն հաճուԹեան. զայս ասելով՝ ոչ եԹէ զաշատուԹիւն կամաց ՚ի քաց բառնայ առաքեալն. զի ե-

Թէ այսպէս էր, ոչ յառաջագոյն ասէր՝ ահիւ և դողութեամբ զանձանց փրկուԹիւն գործեցէք ,,։

Ա֊ոմկ. Բ. Աեղաւորք յաձախ ուրեք՝ ի գիրս մեռեալք կոչին, ապա չկարեն յառնել։

Պե. Կկարեն իսկ առանց սրբատրար ընորհացն Ա֊ստուծոյ յառնել. այլ կարեն կամել զայն, և գործակից ընորհացն Ա֊ստուծոյ լինել։ Ապա Թէ ոչ, ընդունայն լինէին ամենայն յորդորմունք սուրբ գրոց առ ի զգաստանալ ընորհօք։

Ա֊ոմկ. Գ. Աուրբն ( )գոատինոս ընդդէմ պելագեանց անյաղԹելի և անդիմամարտ ցուցանէ զզօրուԹիւն ընորհացն, զի ասէ (յղ. ընորհաց Ռէսպոոս. գլ. ԺՁ.) "Ա֊յնպէս ուսուցանէ Ա֊ստուած ընորհօք, զի որ ինչ ոք ուսանի՝ ոչ միայն Ձանաչելով տեսանէ, այլ և կամելով ախորժէ, և առնելով կատարէ ,,։ Եւ այլուր ասէ. "Տուաւ օժանդակուԹիւն ակարուԹեան կամացդ մարդոյ, որպէս զի ընորհք աստուածային աննահանջելի և անյաղԹելի ներգործիցեն ,,։ Եւ այլուր գարձեալ. "Ովք երկեայել, զի կամացն Ա֊ստուծոյ՝ մարդկայինք կամք չկարեն զդէմ ունել ,,։ Եւ գոգատՁառն ևս յաւելու "Օ՛ի է նորա աներկբայապէս ամենակարող զօրուԹիւն գարձուցանելոց զսիրտս մարդկան ուր և կամիցի ,,։

Պե. ԱԹէ այդ էին միտք բանից սրբոց վարդապետին, ոչ ամենայն ուրեք յամենակարողուԹիւն և յամենագիտուԹիւնն Ա֊ստուծոյ ապաստաներ առ ի միացեալ զազատուԹիւն կամացդ ընդ անվրիպելի արդահս ընորհացդ. զի ասէ (առ Աէմպլէկ. գլուք ա. խնդ. ժա. 13.) "Ալ ումեք ի զուր ողորմի ածէ. զի որում ողորմին, այնպէս կոչէ զնա՝ որպէս գիտէ նմա պատկանաւոր առ ի չգառնալոյ ընդդէմ կոչողին ,,։ Օ֊րոյն և ի յետին գիրս իւր անկատարս ընդդէմ Յուլիանոսի հատուատակ (գլուք ա. գլ. լԹ.) "Ա֊ւա լիցի՝ Թէ խոտորնեսցի ի մարդոյ ամենակարողին և ամենագիտին զիտաւորուԹիւն ,,։ Եւ այլուր (յղ. կոփաց և վերդ. գլ. Ը.) ասէ. "Ա֊զերխ ուրումն առնեմք ընորհօք զազատուԹիւն կամացդ. քաւ լիցի, այլ առաւել հաստատեմք զայն ,,։

*Վասն որոյ խնամատ առաջնոյ բանին է. "Ա֊յնպէս ուսուցանէ Ա֊ստուած, զի որ ինչ ոք ուսանի՝ ազատօրէն

տեսանէ, ախորժէ և կատարէ ,, : Նմաստ երկրորդին . "Ցուաւ օժանդակութիւն տկարութեան կամաց, զի հանդերձ ազատութեամբ նորա՝ ընտրէք Աստուծոյ անյաղթելի ներգործիցեն ,, :

Նմաստ երրորդին է զկամայն Աստուծոյ ընդհանրապես, և ոչ զընտրհաց. և ոչ է պարտ զերկոսին զսոսա շփոթել ընդ իրեարս : Ոչ յորժամ կամի ինչ Աստուած անպայմանաբար, ըստ այնմ և զընտրհան Հահաւորէն՝ զի ազատօրէն հաւանեացին նմա կամք մարդոյ :

Նակ նմաստ չորրորդին, զի ուր և կամի՝ շրջէ Աստուած զսիրտ մարդոյ հանզիմամբ, և ոչ հարկ՝ ի վերայ գնելով :

ԳՕԴՈՒԱԾ Դ

Զի գործունէութեան շնորհաց ոչ՝ ի հաւանութենէ կարաց է, ոչ՝ ի պատեհութենէ ուսուաք, և ոչ՝ ի բնական ինչ նախապատրաստութենէ :

Զգործունէութեան շնորհաց կացուցանել՝ ի հաւանութեան կամաց կամ՝ ի յաջող ելս նորին՝ հակառակ է բանից սուրբ գրոց, որք կանխապէս համարին զայն քան զՀաւանութիւն մեռաց : Ոյ առաքեալն ասէ (Փիլ. Բ. 13.) "Աստուած է, որ յաջողէ՝ ի մեզ կամելն և առնելն վասն հաճութեան ,, : Ել ասէ՝ թէ յաջողէ կամել՝ որ բառական շնորհացն է գործ, այլ ինքն իսկ կամելն ինքն ներգործէ՝ ի մեզ :

Նա այլուր ասէ (Հռ. Ը. 14.) "Որ Հոգւովն Աստուծոյ վարին, նոքա են որդիք Աստուծոյ ,, . զորմէ սուրբն Քրիսոստոմոս ասէ (Ընդդէմ պեղագ. գիրք Գ.) "Պարտէն առաւել ինձն է վարել քան ուղղել. զի որ ուղղին՝ առնել առնէ ինչ, բայց միայն ուղղի յԱստուծոյ՝ զի ուղիղ արասցէ. իսկ որ վարին, հարկս ինչ իմանի առնել : Ասկայն այնչափ գերազանցեն շնորհք փրկչին քան զկամս մեր, զի ոչ յերկուանայ առաքեալն ասել. Որ Հոգւովն Աստուծոյ վարին, նոքա են որդիք Աստուծոյ ,, :

Նա այլուր գարձեալ նոյն առաքեալ ասէ (Ա. Կոր. Է. 7.) "Ո՞վ է որ քննիցէ զքեզ. զինչ ունիս, զոր ոչ ևս առեալ. և եթէ առեր, զի պարծիս իբրև զչառեալ ,, :

Աստ եթէ ընդհակն Աստուծոյ զկարելն ևեթ տային, և՝ ի հաւանութենէ կամացդ էր գործունէութիւն նոցա, որ ոք հաւանէրն այնմ՝ առնէր ինչ աւելի քան զայն՝ որ չհաւանին նմին, և քննեալ որոշէր՝ ի նոցանէ։ Ապա որոյ զայս բան՝ ի քննութիւն առեալ սրբոյն (Գրգ. Նիսացւոյ, ասէ (առ Ստոլ. գլուխ ՃԸ.) "Եթէ յայն սակս միայն ասացաւ, Ոչ քոյ այնմ էնէ է՝ որ կամիցին, և ոչ քոյ այնմ՝ որ ընդանայցէ, այլ քոյ Աստուծոյ՝ որ ողորմի, վասն զի կամք ևեթ մարդոյ ոչ է բաւական առ՝ ի կատարել զպարտութեամբ և ուղղութեամբ՝ առանց նպաստից ողորմութեանն Աստուծոյ, մարթի ինչ ըստ այսմ և օրէնսդրին ասել. Ոչ քոյ Աստուծոյ՝ որ ողորմի, այլ քոյ այնմ՝ որ կամիցի. իբր զի ողորմութիւնն Աստուծոյ միայն՝ չինչ բաւական առանց կամացս մերոց հաւանութեան։" Եւ մերժեալ զայս վարդապետութիւն, կինքէ զբանն առել. "Ապա ոչ յայն սակս համարելի է զասացեալն՝ Ոչ քոյ այնմ ինչ է՝ որ կամիցին, և ոչ քոյ այնմ՝ որ ընդանայցէ, այլ քոյ Աստուծոյ՝ որ ողորմին, իբր զի առանց օգնականութեան նորա չկարեմք կամել, այլ վասն այն մանաւանդ՝ զի կոչելոյին ևեթ նորա կամիմք։"

Եւ համառօտ ասացեալ՝ ոչ է ընդունելի վարդապետութիւն, որ զբանս սուրբ գրոց շրջէ յիմաստս անծանօթս ի նոցանէ։ Զոր այսպիսի է վնասակարագոյն՝ որ զգործունէութիւն հնարէիցն կայուցանէ՝ ի հաւանութեան կամաց, ապա չէ ընդունելի։

Զգործունէութիւն հնարէից ոչ է մարթ և ոչ՝ ի պատեհութեան կայուցանել։ Զի քանզ սուրբ գրոց՝ զոր՝ ի վեր այսր ածաք՝ Աստուծոյ ընծայեն զայն յայտնապէս, և ուսուցանեն շրջել Աստուծոյ ըստ հաճոյս իւր զկամս մարդկան, ևս և՝ ի դէպս ոչ բարեպատեհս։ քանզի ասէ Աստուած Եզեկիելիւ (ԼԳ. 26.) "Եւ հանից զսիրտն քարեղէն՝ ի մարմնոց ձերոց, և տայց ձեզ սիրտ մարմնեղէն. և զոգի իմ տայց՝ ի ձեզ, և արարից՝ զի յարդարութիւնս իմ գնայցէք։" Զոր զինչ առաւել էարբապատեհ քան զսիրտ քարեղէն. այլ զայն Աստուած՝ ի վայրկեան ժամանակի ասէ փոխել՝ ի սիրտ մարմնեղէն՝ առանց մնալոյ պատեհութեան և սպասել պարապոյ։

Ո՞ զինչ դժպատեհ քան զգնալ Աոյնոսի՝ ի հալածել

և՝ ի սպանանել զհաւատացեալս, այլ հնարհք Յուդայ ծոց՝ ի նմին պահու յաղթանակեցին ի վերայ նորա։ Նմանապէս զաւազակն ի խաչին, զՅաւիթեոս ի մաքսաւորութենէ, և զկինն մեղաւոր յորժամ կամեցաւն կոչեաց։ Յուդ եթէ պարտ էր ասել՝ թէ սպասէ Յուդայ տուած պատեհ ժամանակի առ ի տալ զհնարհս իւր, զայս ամենայն չէր մարթ իմանալ ըստ գրոյն և ոչ ըստ իմաստից Քարոզ, ապա և ոչ վարդապետութենդ այդ է ընդունելի։

Վարձեալ զի և կարի անպատշաճ թուի աստուածային ամենակարող մեծվայելչութեան, ճնալ պարապ և պատեհութեան առ ի տալ զհնարհս իւր, զօրէն երկրաւոր իշխանաց՝ որք ոչն իշխեն սրտից, ուր Յուդայ ամենակալն նոյն է կամել և կարել, և "Ինչ թագաւորի ի ձեռս նորա է որպէս զսահանս ջուրց,,։ (ա-ՈՒԿ։ իա։ 1)։ Եւ դարձեալ՝ զի վարդապետութենդ այդ հաստատեալ է ի միջականն գիտութիւն, որ առաքելոցն ոչ է ընդունելի։ Եւ դարձեալ՝ զի ըստ այդմ վարդապետութեան և զնախատահմանութիւն ի հնարհս՝ հարկ է ըստ նախատեսութեան վաստակոց համ արժանեաց ընդունել, որ բազմաց չէ ընդունելի։

Իսկ Թոմայականացն կարծիք՝ որք զգործունէութիւն հնարհաց դնեն ի բնական նախաշարժութեան, Թուի բազմաց յաստուածաբանից քառնալ զազատութիւն կամաց։ Ո՞ի որչափ և զանազանութիւնս ի նեղքս մեծանիցեն առ ի մեկնել զվարդապետութիւն իւրեանց, սակայն իմաստ նորին այն է՝ զի ի գալ հնարհաց ոչ ևս ազատ են կամք մերժելոյ զայն։

Եւ դարձեալ՝ զի ոչ է ընդունելի հաստատել զգործունէութիւն հնարհաց յայն ինչ, որ հաստարակաց էր և հրեշտակաց և նախամարդոյն յանմեղութեան։ Իսկ արդ բնական նախաշարժութիւն հաստարակաց էր և նոցա, զի և նոքա բնական նախաշարժութեամբ վարէին ի բարին՝ որով և եթէ ըստ այդմ վարդապետութեան մարթ է վարել արտաքոց ի բարին, ապա ոչ ի բնական նախաշարժութեան է գործունէութիւն հնարհաց։ Ա՛ն որոյ ասէ սուրբն ( )գոստինոս. "Ա՛ն տուան նախաստարձոյն հնարհքն այն, որով ոչ երբեք լինէր նմա կամել չարանալ. այլ տուան նմա այնպիսի հնարհք, յորում

Թէ կամեցեալ էր մնալ՝ ոչ երբէք չարանայր. և դարձեալ՝ առանց այնր՝ ազատ կամօքն չկարէր կալ՝ ի բարւոջ, այլ կարէր ազատաբար մերժել զայն։ ... Ո՛չ ի այնպիսի իսկ էր օգնականութիւնն այն, զի՝ ի կամէն՝ մերժէր զայն, և մնայր՝ ի նմա՝ եթէ կամէր, այլ ոչ վարէր նուաճ՝ ի կամել։ Այս էր սկզբնական ընդդէմ տուեալ նախամարդոյն. այլ հզօրագոյն է այս յերկրորդն զամ։ Ո՛չ առաջնումն այնուիկ կայր մարդ յարդարութեան, եթէ կամէր. ապա երկրորդաւս առաւել ինչ կարէ, այսինքն զի կամի։ Եւ յետ սակաւ միոյ յաւելու զհրեշտակացն. "Յանկանել այլոյ ազատօրէն, նուիրն ազատ կամօք հաստատուն կացին ինքեանք։

ԳՕԴՈՒԱԾ Ե

Զի գործունէութիւն շնորհաց՝ ի հաւատոյ քաղցրութիւն է։

Կրկին մասունք են վարդապետութեանս. քաղցրութիւն ինն կանխաժամանն, և այն յաղթող և համոզող բարոյապէս։

Ա՛ռաջինն մասն յայտնի իսկ է. զի ըստ ասացելոցս՝ կանխաժամանն շնորհք՝ է գերբնական ինն շարժումն կամաւոր. իսկ շարժումն այն է քաղցրութիւն ինն, նախկին նեղգործութիւն վախճանին՝ յորմէ շարժեալ գործէ միշտ մարդ։

Սուրբ գիրք և եկեղեցի սուրբ զընորհս Աստուծոյ բացատրեն միշտ բանիւքս քաղցրութիւն և ուրախութիւն. "Հաստատեսցէ զամենայն քաղցրութեամբ ... և՝ ի շաւիղս երեւի նմա քաղցրութեամբ". (Եմասփ. ՃԵ. 1։ Ղ. 17.) "Ոտանն արարեր զնա յօրհնութիւն քաղցրութեան քո։ ... Ուրախ եղիցի սիրտ իմ երկնչել յանուանէ քումմէ". (ողմ. Ե. 4։ ՃԲ. 12)։

Եւ՝ ի վերայ բանից սաղմոսերգուին (ՃԺԵ.) "Քաղցրութեամբ քով ուսո ինձ զարդարութիւնս քո ... քաղցրութիւն արարեր ընդ ծառայի քում ... քաղցրութիւն զկրթութիւն ուսո ինձ", ասէ սուրբն Գրոտինոս. "Յառաջագոյն ասաց, քաղցրութիւն արարեր ընդ ծառայի քում. և վերջոյ ասէ, Ո՛ քաղցրու-

թիւն ուստ ինձ. բայց զի ընդհակն ևս քան զևս յայտնեսցին նմա քաղցրութեամբ մարդասիրութեանն ,,։

Ասէ որով և առաքեալն Յովհաննէս օծութիւն կոչէ զընդունման Հոգւոյ (ա. Կր. բ. 27.) “( )ծութիւնն, զոր ընկալարուք ի նմանէ, բնակեսցէ ի ձեզ ,,։

Եւ Հոգի հաւատացեալ հառաչանօք գոչէ. “Ո՛չ հետ քո ի հոտ իւղոյ քոյ ընթասցուք ,,. (Երգոց. ա. 3)։ Ո՛րպէս և մերս Կարեկացի ասէ. “Ո՛չ ի ոքք արժանի լինէին զբանին Հոգւոյ Հաշակս Հաշակել, և զնորա հոտն առնուլ, անյագաբար զհետ հոտոյ իւղոյն ընթանան, և ոչ երբեք դադարեն յընթացից. թէ և բանտ և կապանք հասանիցէ կրել՝ ոչ դառնան, և եթէ զոր ինչ պատ եցէ թողուլ. որպէս և առին իսկ յանձն առաջին սուրբքն, որք յայսմ հոտոյ եղեն հոտոտեալք ,,։

Եւ փրկիչն մեր զաշխատեալս և զծանրաբեռնեալս ի ցանկութեանց մեզաց հրաւիրէ ի քաղցրութիւն ընդ պատուիրանաց իւրոց, ասելով. “Ո՛ւլծ իմ քաղցր է ,,. (Մատ. ժա. 29)։

Եւ առաքեալն ասէ (Հռ. բ. 4.) “Ընդհատիցէ զի քաղցրութիւնն Հոգւոյ զքեզ յապաշխարութիւն ածէ ,,։ Եւ դարձեալ (Տիտ. գ. 4.) “Յորժամ քաղցրութիւն և մարդասիրութիւն փրկչին մերոյ Հոգւոյ յայտնեցաւ, ոչ ի գործոց արդարութեան՝ զոր արարաք մեք, այլ ըստ իւրում ողորմութեանն... նորոգութեամբ Հոգւոյն սրբոյ՝ զոր եհեղ ի մեզ առատութեամբ ,,։

Յատայսմ վարդապետութեան ընծայեն Հարք քաղցրութեան և մարդասիրութեանն Հոգւոյ զընդունա դարձի մեղաւորաց, որպէս և սուրբ Կարեկացին յաղօթս պատրաստութեան սուրբ պատարագին յօրինէ զբանն. “Ո՛վ յամենայնի քոյդ քարոզեացի գԹուԹիւն, որպէս Որդւովդ Հոգւոյ Հօր խաղցրութեան, որ զանառակ որդին մերձեցոյց ի հայրենի ժառանգութիւնն, և զպոռնիկն յառաջեցոյց յերկնային ալքատութիւնն արդարոցն երանութեան։ Այո այո, և ես ովի եմ՝ ի նոցանէ, և զիս ընկալ ընդ նոսին իբր մարդասիրութեան կարօտեալ մեծի, ընդհօտ քո ապրեալ, զաւրութեամբ Քրիստոսի ստացեալս ,,։

Ասէ որով և Հաւատարակաց աղօթք ամենայն եկեղե-

ցեաց Հաւատացելոց զսոյն քաղցրութիւն ընդհանուր Յաստուածոյ յեղյեղեն, որպէս և մեք՝ ի շարականս մեր երգեմք.“՝ վիմէն կենդանութեան Ճաշակեցաք, զի քաղցր է տէր. և յիւղ սրբութեան օծաք Հաւատով։ Որ Հայիս քաղցրութեամբ յարարածս քո։ Որ նստիս՝ ի քրովբէս, և Հայիս քաղցրութեամբ յարարածս քո։ Որնստիս՝ ի վերայ չորեքկերպեան կենդանեաց, և Հայիս քաղցրութեամբ յարարածս քո։ Անյաւէտ քաղցրութեամբ յարարածս քո,,։

Յորոց ամենայնէ յայտնի տեսանի, զի ընդհանուր Յաստուածոյ քաղցրութեամբ ձգեն զկամս մեր. վասն որոյ և տուբքն ( )գոստինոս՝ ի վերայ տէրունեան բանին (Յհ. ՃԼ. 44.) “Ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ Հայրն՝ որ զիս առաքեաց՝ ձգեսցէ զնա,,, ասէ. “Որ՝ի կարծիցես՝ թէ ակամայ ձգիցիս, ձգի Հոգին և սիրով։ Որ՝ի եթէ Հաճոյ թուեցաւ քերթողին (Որ էրգէնէսյ) ասել.

Ուրա՞ էրատանէէր ոչ ցանկութեան ձըգէ ըզհեա, ոչ թէ Հարկին՝ այլ ցանկութեան, ոչ թէ բռնադատութեան՝ այլ բերկրութեան զիւրաքանչիւր ոք ձգեալ, որչափ և առաւել պարտ է մեզ ասել՝ զի ձգի մարդ առ Քրիստոս բերկրեալ Ճշմարտութեամբ, բերկրեալ երանութեամբ, բերկրեալ արդարութեամբ, բերկրեալ յաւիտենական կենօք, որ բոլորովին Քրիստոսն է։։։ Յաստուծոյ ասի արդարութիւն՝ որ՝ի ձեռն ընդհայց պարգեւի, որպէս զի մի՛ իցէ երկիւղալի՝ այլ քաղցր հրամանն՝ որպէս սաղմոսերգուն աղօթէ. Քաղցր ես դու տէր, և քաղցրութեամբ քով ուստ ինձ զարդարութիւնս քո. այսինքն է՝ զի մի՛ երկիւղիւ պատժոյ ծառայաբար հարցեալ կալ ընդ լծով, այլ ազատական սիրով բերկրեցայց լինել ընդ օրինօք։։։ Որ ոք այսու օրինակաւ ուսանի, առնէ բովանդակ որ ինչ ուստեն առնել։։։ Ընթերցին ապա, ՚ի միտ առցեն, խելամուտ լիցին և խոստովանի, զի Յաստուած ոչ օրինօք և ՚ի բարբառ վարդապետութեան արտաքուստ՝ այլ ներքին և զանխոտել հրաշալի և անձառելի զօրութեամբ ներպտղծէ ՚ի սիրտս մարդկան, ոչ գյայտնութիւնս աւետ Ճշմարտութեան՝ այլ և զկամս բարիս։։։ Ամք ինքնին, եթէ չիցէ ինչ՝ որ զնա բերկրեցուսցէ, և զմիտս հրաւիրեսցէ, ոչ իւիք շարժել կարէ։։։ Որ՝ ՚ի բարւոք կեալ՝ հարկ է մարդ

պոյ ընդունել զ՝ոսկին սուրբ, որ ներգործէ ՚ի հոգւոջ զբերկրաւթիւն և զսէր գերագունին և անկշռելի բաւթիւն։ ... Յորժամ ձշմարտութիւն սկսանի յայտնիլ, եթէ ոչ և բերկրեցուսցէ, ոչ լինի ընդունելի ,,։

Ա՚րդ ՚ի բանից աստի սրբոյ վարդապետին, որոյ անձամբ իսկ զփորձ առեալ էր զգործունեայ հնորհիս, երբեք լինչ հաստատին՝ Ա՚խա՝ զի Ա՚ստուած ներգործէ ՚ի սիրտ մարդկան՝ ոչ յայտնութեամբ եւթ ձշմարտութեան, ոչ միջական գիտութեամբ ճնալով պատեհութեան, այլ նեղութեն և պանխոտ, հրաշալի և անճառելի ջրոնեամբ։ Ա՚րկրորդ՝ զի Ա՚ստուած ներգործելովն հրաւիրէ և ձգէ զկամս փաղդրոնեամբ և բերկրոնեամբ։ Ա՚ւ երրորդ՝ զի կամք չկարեն շարժիլ, եթէ չլոյէ՝ որ զայն բերկրեցուսցէ։

Ա՚յս վարդապետութիւն համեմատ է և մտաց հաստարակաց. զի գիտունք և տգէտք, իմաստունք և անիմաստք, զնորհս Ա՚ստուծոյ իմանան այնպիսի լինչ՝ որ յօժարեցուցանէ քաղցրութեամբ զսիրտս, և ձգէ ՚ի պահպանութիւն պատուիրանացն Ա՚ստուծոյ։ Ա՚ւ ՚ի քանէ իսկ այնպիսի է ստեղծուած մեր՝ զի ոչ կամել և ոչ սիրել կարեմք զբարին՝ եթէ չլոյէ մեզ հաձոյ. վասն որոյ ասէ սաղմոսերգուն. “Ա՚ուրեցի զպատուիրանս քո քան զամենայն ոսկի և զտպազիոն ,,։

Ա՚ստ այսմ և Ա՚ստուած ոչ ՚ի հոգւոյն ուժգին յայտնեցաւ Ա՚ձնայն, ոչ ՚ի սաստանութեան երկրի, և ոչ ՚ի քոց հրոց, այլ ՚ի ձայն մեղմոյ օդոյ՝ որ շնորհացն Ա՚վետաւոյն էր օրինակ։ Ո՚րպէս այսպէս սուրբ Ա՚սկեթերանն ասէ. “Ո՚չ յամրդ հնին օրէնքն տուան, կամ ո՚րպէս նոր կտակարանքս. ո՚րպէս արդեօք, կամ երբ, կամ ո՚ւր։ Ա՚յլ է եթէ յետ սաստկմանն եգիպտացւոց յանապատին և ՚ի լերինն Ա՚ինայի, յորժամ ծուխն ցոլանայր և հուրն տոչորէր և պատեր զբերամբն. ուր փողն հընչէր, և որոտումն և փայլատակունք. ուր Ա՚ովսէան ՚ի մէգն և ՚ի հուրն մտանէր։ Ա՚յլ նոր կտակարանքս ոչ լինչ այնպիսի. ոչ յանապատի, ոչ ՚ի լերինն, ոչ ՚ի ծուխ և ՚ի խաւարի, կամ ՚ի մէգ և ՚ի մառախուղ. այլ ՚ի սկսանել և յերևել տունջեան աւետեցուն՝ որ ՚ի ստուերս մահու նստէին, մեծաւ մեղմական զգօնութեամբ առնային լինչ լինէր։ ... Ա՚նդի ոչ եթէ ՚ի լեռնէ ի-

ջեալք՝ քարեղէն արձանս բերէին ՚ի ձեռս առաքեալքն ըստ օրինակի մովսիսեան տախտակացն, այլ ձեռագին սուրբ գրեալ ՚ի միտս և ՚ի սիրտս, և գանձս իմն մեծագուժիչս աղբիւր կրօնից և շնորհաց և ամենայն բարութեանց բղխեալ, ամենայն ուրեք գիրք և օրէնք ընչաւորք լեալ շնորհօք, այսպէս զժողովս երից հազարացն և զամենայն իսկ համօրէն տիեզերս հնազանդեալ, առնէին գունդս և ժողովուրդս Ա՛ստուծոյ ,, . (Ղեկ. Ա՛ոմ. Ձառ ա՛) :

Իսկ յաղագս երկրորդ մասին առաջարկութեանս, այսինքն յաղթող զօրութեան գործունեայ շնորհացս, ածաք ՚ի վեր անդր (յօդ. ա՛.) վկայութիւնս ՚ի սուրբ գրոց՝ ցուցանել անվրիպելի զներգործութիւն և զարտասխնորա :

Նա յաւելումք՝ զի հարկ է գոնեա այնչափ ինչ շնորհացն Ա՛ստուծոյ ընծայել աղդուութիւն ՚ի բարին, որչափ փորձութեանց ծանուցեալ ՚ի չարն. քանզի ոչ ոք ժըլտէ զներգործել Ա՛ստուծոյ շնորհօք իւրովք ՚ի սիրտս մարդկան առաւել քան սատանայի ցանկութեամբք : Իսկ արդ սատանայ ՚ի ձեռն ցանկութեանց ձգէ երբեմն զկամս բարոյապէս՝ առանց հարկաւորելոյ զայն, ապա և աստուած կարող է Ա՛ստուած ձգել քաղցրութեամբ զկամս ՚ի բարին :

Նա զարձեալ՝ կարող է Ա՛ստուած առնել ՚ի գերբնական կարգի, որ ինչ արարեալն է ՚ի բնական կարգի : Ա՛լդ ՚ի ձեռն սիրոյ մարմնաւոր կենաց, զոր տնկեալն է ՚ի բնութեան մերում, առանց բառնալոյ զազատութիւն մեր՝ առնէ մեզ բարոյապէս և անդիմադարձ ձգմամբ մերժել ՚ի քաց որ ինչ մահաւիժ է մեզ, և ՚ի կիր առնել որ ինչ առ ՚ի կեանս են կարևորք : Ա՛յնպէս զի ոչ ոք մտացի ընկենու զանձն ՚ի հնոց բորբոքեալ կամ գահավիժէ զանձն ՚ի վախից, թէպէտ և ազատ իցէ առնել զայն, ապա թէ ոչ՝ չմեղանչէին ուրացօղք յերկիւղէ մահու : Ա՛պա կարող է Ա՛ստուած հեղուլ ՚ի սիրտս մեր և զգործունեայ երկիւղ պեհենին, և զյաղթող սէր արքայութեան, առ ՚ի ձգել զմեզ ՚ի պահպանութիւն պատուիրանաց իւրոց՝ առանց հարկաւորելոյ զազատութիւն կամաց : Ո՛չ ո՛ իշխեացէ ասել՝ առաւել լինաւ կալեալ Ա՛ստուծոյ ժամանակաւոր կենաց մարդ-

կան քան Թէ յաւիտենականին, և առաւելագոյն հնարս տնօրինեալ՝ ի փրկութիւն մարմնաւոր կենաց քան հոգեկանին։

Ա. յամ վարդապետութեան գտան հեթանոքք և յայլ ամենայն դասուց աստուածաբանից արք երևելիք, զոր զվկայութիւնս աճէ՛ յաբերտ յաստուածաբանութեան իւրում։ Եւ նոքին իսկ արքն Ա. գումնացւոյն քան օժանդակէ այսմ, առ՝ ի միաբանել զներգործութիւն շնորհաց ընդ ազատութեան կամաց, զի ասէ. "Ա. տուածային կամք այնու օրինակաւ շարժէ զէակս ամենայն՝ ի գործել, որպէս անկ է բնութեան իւրաքանչիւրոյն. վասն որոյ առաւել հակառակէր շարժմանն Ա. տուծոյ, եթէ կամքն հարկաւ շարժէր՝ որ չէ անկ բնութեան իւրում, քան ազատօրէն շարժելովն՝ որ անկ է բնութեան իւրում"։

Ա. յսու ամենայնիւ ազատ է ամենայն ոք ընդունել զմի՝ ի չորեցունց աստի կարծեաց՝ զոր և ախորժէ. յաւելումք և խոստովանել, զի դիւրագոյն միաբանին շնորհք ընդ ազատութեան կամաց ըստ վարդապետութեան, որ զգործունէութիւն շնորհաց կացուցանէ՝ ի հաւանութեան կամաց։ Ա. յլ դիւրահասութիւն ոչ է կարևոր խնդրելի յաստուածայինս։

ԳԼՈՒԽ Գ

ՑԱՂԱԳՍ ԲԱՒԱԿԱՆ ՇՆՈՐՀԱՑ

Բաւական շնորհք ըստ հասարակաց վարդապետութեան այն է, որ տայ զօրութիւն լինելի առ՝ ի գործել զբարին, որպէս և յառաջագոյն ասացաք։ Եւ բաժանի՝ ի մերձաւորապէս և՝ ի հեռաւորապէս բաւական։ Մերձաւորապէս բաւական է այն, որ անմիջապէս տայ զկարևորն զօրութիւն. իսկ հեռաւորապէս, որ աղօթիւք և ողորմութեամբք շնորհէ զայն։ Ո՛ի այսպէս ժողովէ տիրեանաեան բանիւքսրբոյն ( )գոսաինոսի ասէ. "Ո՛ան հնարինս ոչ հրամայէ Ա. տուած, այլ՝ ի հրամայելն ազդէ առնել զոր կարես, և խնդրել զոր ոչ կարես"։ Եւ ասի բաւական, զի թէպէտ և՝ ի չարութենէ մարդկան

ոչ կարասցեն վախճանին՝ վասն որոյ շնորհի, այլ իսկապէս բաւական է հասանելոյ։ Պօրաղանդք ոչ ընդունին շնորհ այսպիսի։

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Զի գոն իսկապէս բաւական շնորհք։

Զայս վարդապետութիւն, սահմանեալ ՚ի ժողովին տրիդենտեան ընդդէմ Յանսենիոսի, ցուցանեն այն աւետեանն քանք սուրբ գրոց՝ յորս կշտամբէ Պօտուած զմեղաւորս զի կամաց և շնորհայ իւրոց հակառակ կան։ Որպէս ասէ Պսայեաւ (Ե. 3.) "Պատ արարէք ընդ իս և ընդ այգի իմ. զինչ ինչ առնել էր այգւոյ իմում, և ես ոչ արարի նմա. միացի զի բերցէ խաղող, և եբեր փուշ,,։ Եւ փրկիչն մեր այսպէս կշտամբէ զՊրուսաղէմ (Պտ. իգ. 37.) "Պանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո, զոր օրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թևովք, և ոչ կամեցարուք,,։ Եւ նախաւկայն առ Երեայս (գործ. Է. 51.) "Պուք հանապազ Հոգւոյն սրբոյ հակառակ կայք,,։ Ովոզեալ զայլ ամենայն անթիւ վկայութիւնս, շատ համարիմք ՚ի կնիք ձշմարտութեանս զտերունեանն պատգամ. "Պազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք,,։ Պրդ եթէ ըստ ազանդաւորաց՝ գործունեայ էին միշտ շնորհք, պարտ էր ամենեցուն իսկ կոչեցելոց փրկութեան հասանել։

Պաջայայտ է այս և աստուածաբանօրէն. զի որպէս ցուցաւ վերագոյն, կամի Պստուած զամենեցուն փրկութիւն, "կամի զամենայն մարդիկ զի կեցցեն,,. և Պրիստոս զամենեցուն մեռաւ, առ ՚ի պատրաստել նոցա զշնորհս կարևորս ՚ի փրկութիւն։ Պրդ այսու ամենայնիւ կոմնչին բազումք, ապա ուրեմն ոչ ամենայն շնորհք են գործունեայք, այլ են և շնորհք բաւականք՝ որ առ չարութեան մարդկան լինին անարգաւաւորք։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆՔ

Ղ֊ուկ. ա. — ա. Սուրբ գիրք ոչ ուրեք զբաւական ընծրհս յիշատակեն։ — բ. Յայլ մանաւանդ ընդհակառակն՝ զընծրհս Աստուծոյ ցուցանեն անվրիպելիս յարդասեաց. որպէս ասէ Աստուած Նոյեաւ (ծե. 11.) "Նանն իմ, որ եկանիցէ՛ ի բերանոյ իմմէ, մի զարձցի դատարկ՝ մինչև կատարեսցէ զոր ինչ կամիցիմ,,։ Նոյնաոգեշունչն ասէ. (ՀԺԳ. 3.) "Աստուած մեր յերկնից և յերկրի զամենայն զոր ինչ կամեցաւ, և արար,,։ Նոյնաոգեշունչն ասէ (հե. Թ. 19.) "Ո՛չ ի կամաց նորա ոչ ոք կայ հակառակ,,։ — գ. Նոյնի՛ն ասէ (Ա Կորնթ. ՃԺ. 13.) "Ո՛րինչ է՝ ամենայն որ լսէ՛ ի Քրիստոսէ և ուսանի՝ գայ առ իս, եթէ ոչ՝ զի ոչ ոք է որ լսէ՛ ի Քրիստոսէ և ուսանի, և ոչ գայ առ իս։ Ո՛ւ եթէ ամենայն որ լուաւ՛ ի Քրիստոսէ և ուսաւ՝ գայ, ապաքէն որ ոչն գայ՝ ոչ լուաւ՛ ի Քրիստոսէ և ոչ ուսաւ՝ զի եթէ լուեալ էր և ուսեալ, գայր արդեօք,,։ Այսպա բաց՛ ի գործունեայ ընծրհայ՝ չիք ընծրհք այլ։

Պե. — ա. Սուրբ գիրք չյիշատակեն ըստ բառին և ոչ գգործունեայ ընծրհս. այլ շատ է զի և զերկաքանչիւր ընծրհայ վկայեն ըստ իրին։

— բ. Ի՛ հայուածիւնքդ առաքեալք՛ ի սուրբ գրոց հային յանպայման կամ և յամենակարողութիւն Աստուծոյ՝ որում ոչ ոք կարէ կալ հակառակ, և ոչ հայինի՛ ընծրհս՝ որոց մարթ է գոլ գործունեայ կամ բաւական։ Եթէ անպայմանաբար կամի Աստուած զդարձուրդս, որպէս սուրբն Քրիսոստոմոս (յղ. Նախաաահմանութեան ածբեբոյ. գլ. Ը. 13.) "Ո՛րինչ է՝ ամենայն որ լսէ՛ ի Քրիստոսէ և ուսանի՝ գայ առ իս, եթէ ոչ՝ զի ոչ ոք է որ լսէ՛ ի Քրիստոսէ և ուսանի, և ոչ գայ առ իս։ Ո՛ւ եթէ ամենայն որ լուաւ՛ ի Քրիստոսէ և ուսաւ՝ գայ, ապաքէն որ ոչն գայ՝ ոչ լուաւ՛ ի Քրիստոսէ և ոչ ուսաւ՝ զի եթէ լուեալ էր և ուսեալ, գայր արդեօք,,։ Այսպա բաց՛ ի գործունեայ ընծրհայ՝ չիք ընծրհք այլ։

Պե. — ա. Սուրբ գիրք չյիշատակեն ըստ բառին և ոչ գգործունեայ ընծրհս. այլ շատ է զի և զերկաքանչիւր ընծրհայ վկայեն ըստ իրին։

— բ. Ի՛ հայուածիւնքդ առաքեալք՛ ի սուրբ գրոց հային յանպայման կամ և յամենակարողութիւն Աստուծոյ՝ որում ոչ ոք կարէ կալ հակառակ, և ոչ հայինի՛ ընծրհս՝ որոց մարթ է գոլ գործունեայ կամ բաւական։ Եթէ անպայմանաբար կամի Աստուած զդարձուրդս, որպէս սուրբն Քրիսոստոմոս բացատրէ, կոչէ զնա որպէս գիտէ նմա՛ ի գէպ՝ զի մի ընդդէմ դարձցի կոչողին։ Ա՛ւ՛ ի ցուցանել զի բաց՛ ի գործունեայ ընծրհայ չիք այլ ընծրհ, պարտ է ցուցանել՝ զի Աստուած անպայմանաբար կամիցի միշտ, զոր ոչ երբէք ցուցանել կարեն հակառակորդք. քանզի Աստուած ինքնին բողբէ բազում ուրեք, զի հեատեն մարդիկ կամաց նորա։

— գ. Նոյնի՛ն որ լսէ և ուսանի, այսինքն հաւանի,

գայ. ապա որ ոչն հաւանի, ոչ գայ։ Պանդխն բազումք լեին, այլ ոչ ուսանէին. ոչ առ ԹերուԹեան ինչ ուսուցողին, այլ՝ ի կամաց ուսուղացն՝ որ ոչ կամին իմանալ պէտ է, որպէս ասէ սաղմոսերգուն. (լԵ. 4.) վասն որոյ Փիլատոս զՅիսուսէն աստանօր մեկնել հաւատալ։

Նակ սուրբն Ոսկէբերան խօսի զայնցանէ՝ որք լսեն և հաւանին, վասն որոյ և գան։ Ո՛ի եԹէ ոչ որ Ճշմարիտ և նեղքին կոչման կայր հակառակ, էր մարԹ Պատուծոյ ասել (ասակ. ա. 24.) "Պոչէի, և ոչ լսէիք,,։ Նա գալ ձեալ. (Նասայ. կԵ. 12.) "Պոչեցի զձեզ, և ոչ լուաք. խօսեցայ և ստունգանեցէք... և զոր ոչ կամէի՝ ընտրեցէք,,։

Պատուէր. Ո. Սուրբն Ոսկէբերան խօսի զգործունեայ Ընորհաց իմանալ զբանս. "Ով որ կարէ գալ առ իս, եԹէ ոչ Հայրն ձգեսցէ զինա,,։ Պպա առանց գործունեայ Ընորհաց ոչ որ Ճշմարտապէս կարէ ունել զօրուԹիւն գալոյ առ Քրիստոս։ Նա նոյն ինքն ասէ այլուր (առ Ովմպ. գիրք ա. խնդ. Ե. 12.) "ՆԹէ Պատուաճ ողորմեսցի, կամեսցուք և,,։ Պրդ ողորմի Պատուաճ, տալով Ընորհս առ ի փրկուԹիւն. վասն որոյ և յաւելու այլուր (յղ. Հղպատ. ե ընդհ. գլ. ԺՀ. 43.) "Ի կամել նորա փրկել՝ ոչ ինչ ազատուԹիւն կամաց կարէ նմա զդէմ ունել,,։

Գի. Պայլ ե ասել՝ Ով որ կարէ գալ անվրէպ, եԹէ ոչ գործունեայ Ընորհօք ձգիցի, և այլ՝ ոչ որ կարէ գալ ամենևին։ Պայս են իմաստք բանից սրբոյն Ոսկէբերանայ. որպէս և յաւելն՝ եԹէ Պաստուաճ ողորմեսցի, իմանայ ողորմել այնպէս՝ որպէս գԻսահ ի դէպ, պէ՛ք ընդդէմ դատչդ կռլողին։ Նակ յետինն բան՝ զանպայման կամացն Պատուծոյ է, և ոչ զպայմանելոյն՝ զորմէ ասէ նոյն սուրբ վարդապետն. "Պմենողորմն Պատուաճ կամի փրկել զմարդիկ ի յաւիտենական կորստենէ, այսինքն ի միանձնաւոր պատժոց, եԹէ չիցեն նոքա Թշնամիք իւր, և ոչ զդէմ ունիցին ողորմուԹեան արարչին իւրեանց,,։

ՅՕԳՈՒԱԾ Բ

Իցէ՞ երբէք ի բառական շնորհք յիցիւն արգասաւոր :

Ի պայմանի անկեալ բնութեանս բառական շնորհք չլինելն երբէք արգասաւորք առանց գործունեայ շնորհաց ։ Ի վարդապետութենէ անտի, զոր ցուցաք վերագոյն՝ թէ գործունէութիւն շնորհաց ոչ ՚ի հաւանութենէ կամաց է, զհետ գայ և այս ճշմարտութիւն ։ Ո՛պա թէ ոչ, հարկ էր ասել՝ զի ՚ի ձեռն բառական շնորհաց տայ Աստուած զկարելն ևեթ, իսկ կամելն և առնել յաջողէն ՚ի կամաց մարդոյ, որ հակառակ է առաքելական բանին ։ Եւ դարձեալ հարկ էր յայնժամ ասել, զի ոչ ըստ Աստուծոյ միայնոյ է՝ որ ողորմին, այլ և ըստ այնմ՝ որ կամին և ընթանայ ։ Օ՛ի դիցուք թէ երկուց ոմանց տացին հաւասարապէս բառական շնորհք աղօթելոյ, մին աղօթիցէ և միւսն ոչ. որ աղօթեացն՝ կարիցէ ասել վասն այն զգործունեայ շնորհս և զպարգև յարատևութեան ընկալեալ, զի կամեցաւ և աղօթեաց. վասն որոյ ոչ ըստ Աստուծոյ միայնոյ լինէր՝ որ ողորմին, այլ և ըստ կամելոյ նորա, որ հակառակ է վարդապետութեան առաքելոյն ։ Օ՛ որմէ այսպէս վարդապետէ սուրբն Ոսկեբերան (տե՛ս Ոսկ. գիրք ՟ա)։

“Ո՛չ զկարելն ևեթ կամել և ընթանալ շնորհէ Աստուած, այլ և զկամելն և զընթանալ. սմին իրի ըստ Աստուծոյ միայնոյ է՝ որ ողորմին ։ Օ՛ի եթէ յայն սակս միայն ասացաւ, Ոչ ըստ այնմ ինչ է՝ որ կամիցին, և ոչ ըստ այնմ՝ որ ընթանայցէ, այլ ըստ Աստուծոյ՝ որ ողորմին, վասն զի կամք ևեթ չէն բառական առ աստուածպաշտութեամբ և ուղիղ վարելոյ զկեանս՝ եթէ ոչ ողորմութիւնն Աստուծոյ օգնեսցէ մեզ, մարթ իցէ ըստ այսմ և սա օրինակի ասել. Ո՛պա ոչ ըստ Աստուծոյ ինչ է՝ որ ողորմին, այլ ըստ մարդոյ՝ որ կան, զի ողորմութիւնն Աստուծոյ միայն՝ ոչ է բառական՝ եթէ ոչ յաւելցի հաւանութիւն կամաց մերոց ,,։

Իսկ թէ քանի անտեղի իցէ այս, յաւելու ասել. “Այս իսկ է՝ զի ընդունայն կամիցիմք, եթէ ոչ ողոր-

մեցի Աստուած. այլ չգիտեմ զինչ մարթ իցէ ասել՝ թէ ընդունայն ողորմեցի Աստուած, եթէ մեք ոչ կամիցիմք»: Որով ստուգ վարդապետն ուսուցանէ, զի կամեն ներգործաբար և աղօթել ոչ է գործ օգնականութեան՝ առանց որոյ չկարիցեմք կամել և աղօթել, այլ օգնականութեան՝ որով կամիմք և աղօթեմք:

ԱՌԱՔՈՒԹԻՒՆ

Աստ այգմ վարդապետութեան բաւական ընծրհք ոչ միայն ընդունայն է մարդոյ, այլ և վնասակար, և անարժան Աստուծոյ: Ընդունայն է, զի ոչ օգնէ առ ի գործել. քանզի վասն այն իսկ ասի բաւական, զի թափուր է յարգասեաց: Վնասակար ևս է, զի յանձխէ զմեզս. քանզի առանց այնորիկ չմեղանչէր մարդ առ ի չգոյէ ազատութեան, իսկ այնուհետև մեղանչէ: Արժան էր և անարժան Աստուծոյ. զի առ ինչ տայ զայն մարդոյ, գիտելով զի վնասակար լինելոց է նմա այն:

Պա. Լինի՞ ի թերութենէ ընծրհացն յառաջ գայր անարգասարութիւն նորին, յայնժամ լինէր ընդունայն. այլ ի չարութենէ մարդոյ լինի այն անարգասարութ: Վասն այսորիկ իսկ ասի Բաւական առ ի զանազանելոյ ի Փրկչէ ընծրհաց, զի վասն յանցանաց մարդոյ ոչ յառաջ ածէ զարգասիսն՝ առ որ սահմանեալն է և վասն որոյ տուեալ:

Աստ այսմ լինի և վնասակար, ոչ ի ընծրհելոյն Աստուծոյ, այլ ի դիմադարձութենէ մարդոյ. զի ամենայն պարգեւք Աստուծոյ բարի են և օգտակար: Ընտրելի է ապա զընծրհս Աստուծոյ համարել պատճառս մեղաց, քան զի նա է պատճառ մեղաց: Վասն զի միշտ իսկ ազատ է մարդ, գոնեա բնական ազատութեամբ՝ որ շատ է առ ի մեղանչել:

Անարժան լինէր Աստուծոյ, եթէ ոչ առ ի յօդուտ ընծրհէր զայն. այլ նախատեսութեան նորա ոչ է պատճառ չարութեան մարդոյ: Պա թէ ոչ, պարտ էր Աստուծոյ զրկել զմարդիկ և յայլ ամենայն պարգեւաց՝ որպէս զեղծանելն նորա, և չտալ նոցա ոչ առողջութիւն, ոչ մեծութիւն, ոչ գեղեցկութիւն, և ոչ իսկ ազատու-

Թէ ինչ բնաւ, զոր ոչ ոք մտացի ասէ։ Այսու յայտ է զի լուծումն խնդրոյս ոչ ընդհատ է յայնմանէ, զոր ասացաք վասն Թողացուցանելոյ Աստուծոյ զչարիս։

ԳԼՈՒԽ Դ

ՅԱՂԱԳՍ ՏՈՒԶՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀԱՑ

Խնդիրք զտուչութեանէ շնորհաց սերտիւ կցորդին ընդ այնս, զոր յաղագս կամացն Աստուծոյ ասացաք վերկեալ զմարդիկ, և Քրիստոսի վասն ամենեցուն մեռանելոյ։ Այս զի ցուցաք անդ՝ զի իսկապէս կամի Աստուած զփրկութիւն ամենեցուն, և զի Քրիստոս վասն ամենեցուն մեռաւ, զհետ գայ՝ զի և ամենեցուն տայ Աստուած զշնորհս կարևորս առ՝ի փրկութիւն. ապա թէ ոչ, թարմատար լինէին կամքն Աստուծոյ և ոչ ձշմարիտ, որով և մահն Քրիստոսի անօգուտ վասն բազմաց։ Արդարեւնդք և յանսեթեւանք, քանզի զկամելն Աստուծոյ և զմեռանել Քրիստոսի ոչ վասն ամենեցուն խոստովանին, նմին իրի ուրանան և զտուրս շնորհացն Աստուծոյ առ ամենեսին՝ առ՝ի կալ ընդ ամենեցուն հասանել փրկութեան։ Այս նոցա մերժութեանն, ոչ միայն մեղաւորաց և անհաւատից ոչ ամենեցուն տայ Աստուած զշնորհս կարևորս առ՝ի փրկութիւն, այլ և արդարոց իսկ։ Ընդդէմ սոցա զուղղափառս վարդապետութիւն՝ի յաջորդ յօդուածսդ բացատրեսցուք։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Զի արդարոց ամենեցուն պարգևին շնորհք կարևորք՝ի պահպանութիւն պատուիրանացն Աստուծոյ։

Ոչ ևս աստանօր խնդիրք են զգործեալ շնորհաց, որ յայտ իսկ է՝ զի ոչ ամենայն արդարոց պարգևին. զի եթէ ամենեցուն պարգևէր, ամենեքեան յարատևէին։ Այլ խնդիրս է աստանօր զբաւականէն, որ արդարոց

ամենեցուն պարգևի ՚ի պահպանութիւն պատուիրա-
նաց և վասն յաղթելոյ փորձութեանց։ Ա՝ արդարե-
տութիւնս այս մասն է հաւատոյ սահմանեալ յարու-
սեան և ՚ի տրիդենտեան ժողովս։

Սահման արուսեան ժողովոյն է. “Հաւատամք ըստ
ուղղափառ վարդապետութեան, զի ընդհանուր՝ զոր ըն-
դունին ՚ի միրտութեան հաւատացեալք ամենայն, օգ-
նականութեամբն և գործակցութեամբն Քրիստոսի կարեն և
պարտին կատարել որ ինչ ՚ի փրկութիւն հոգւոց նոցա
է, եթէ կամիցին հաւատարմութեամբ զսն գործել”։

Իսկ տրիդենտեան ժողովոյն սահման. “Որ ոք ասի-
ցէ՝ թէ պատուիրանք Աստուծոյ անկնարինք են ՚ի պահ-
պանութիւն, և ա՛ր արդարոյ և ՚ի ընդհս Աստուծոյ
հաստատելոյ, նզովեալ լիցի”։

Յուցանի վարդապետութիւնս այս ՚ի տուրբ գրոց,
զի առաքեալն ասէ (ա. կոր. Ժ. 13.) “Հաւատարիմ
է Աստուած, որ ոչ արկցէ զձեզ ՚ի փորձութիւն առա-
ւել քան զկար ձեր. այլ արասցէ ընդ փորձութեան և
զելս, զի համբերել կարասջիք”։ Եւ փրկիչն մեր ասէ
(Ովր. ԺԱ. 30.) “Ո՛ւ լուծ իմ քաղցր է, և բեռն իմ
փոքրոգի”։ Եւ առաքեալն Յովաննէս ասէ (ա. Կր.
Ե. 3.) “Եւ պատուիրանք նորա չեն ինչ ծանուն”։

Ա՛րդ եթէ ըստ Յանսենիոսի պակասէին ընդհք Աս-
տուծոյ ՚ի պահպանութիւն պատուիրանաց, ոչ ևս թե-
թև լինէին պատուիրանքն, և լուծն Քրիստոսի ոչ միայն
չլինէր քաղցր, այլ և ծանր և անտանելի։

Ո՛չ սոյն և տուրբն ( )գոստինոս հաստատէ. (յղ. ԷՆ.
և ընդդ. գլ. ԺՂ.) “Յորժամ ՚ի կատարեալ կեանս և
յարդարութիւն ածէ Աստուած զմարդ, ոչ թողու զնա՝
եթէ ոչ թողեալ ՚ի նմանէ, որպէս զի բարեպաշտու-
թեամբ և արդարութեամբ կեցցէ”։ Եւ այլուր (Ռէն.
պղմ. ԼԹ. 27.) “Եթէ դու արդարութեամբ կեաս, և
՚ի հաւատս, արասցէ զքեզ անտես, թողցէ, լքցէ զք-
քեզ. նա աւանիկ յայնժամ խնամեսցէ, յայնժամ օգ-
նեսցէ, յայնժամ զկարևոս տացէ, և զչքնաստակաս ՚ի
բաց պարսաւեսցէ։... Աստուած է որ հոգայ զքեզ, մի
երկմտիր... ոչ երբէք թողու նա զքեզ, դու զնա մի
թողուր, դու զքեզ մի լքաներ”։ Եւ ամենայն ուրեք
՚ի գիրս իւր, զայս յեղյեղէ տուրբ վարդապետան։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆՔ

Յաւել. ա. Լուգար էր Պետրոս, այլ պակասեցին նմա հնարհք առ՝ի խոստովանել զՔրիստոս. վասն որոյ սուրբն Ոգոստինոս ընդ այլս՝ի նմանէ ասէ (յղ. Ճառ. ՃԽԴ. գան ՃԻԴ.) "Ո՞վ գինչ է մարդ առանց հնարհացն Աստուծոյ, եթէ ոչ որ ինչ եղևն Պետրոս յուրանալն զՔրիստոս".

Պե. Պետրոս թէպէտ և խրատեալ՝ի Քրիստոսէ վասն մօտալուտ վտանգին, փոխանակ առ Աստուած ապաւինելոյ՝ յանձնապաստան գտաւ, վասն որոյ և՝ի հնարհացն Աստուծոյ զրկեցաւ. որպէս և նոքին իսկ Հրէայքն յայտ առնեն, և սուրբն Ոգոստինոս ասէ (յղ. Դոկեան եկեղ. գլ. Թ.) "Ո՞ երկեայեսցի՝ զի Պետրոս ոչ ուրանայր երկնից զՔրիստոս, եթէ կամէր". Նա այլուր (՝ի Յոհ. Ճառ ԼՃ.) այսպէս՝ի դիմաց Քրիստոսի ասէ ցՊետրոս. "Ընդէր այդքան վստահիս յանձն, ընդէր մեծամտես, զինչ զքեզ կարծես, լուր որ ինչ եաղ. Ասէն ամէն ասեմ քեզ", և այլն: Որով սուրբ վարդապետն յայտ առնէ զի վասն մեծամտութեանն Թողաւ Պետրոս, այլ ոչ՝ի հնարհէ աղօթից զրկեալ: Նոյն և սուրբ Ասկեբերան ասէ:

Յաւել. բ. Աստուած ոչ ուժեք պարտական է տալ հնարհս. ապա ոչ ինչ են զարմանք, եթէ և արդարոց ժխտեացէ զայն:

Պե. Աստուած ոչ ուժեք պարտի զհնարհս ըստ արդարութեան. այլ քանզի խոստանայ զայն, և զի կամի և զամենայն մարդիկ զի կեցցեն, նմին իրի և հաւատարիմ է՝ի բանս իւր տալոյ զհնարհս:

ՅՕԴՈՒԱԾ Բ

Զի հաւատացելոց ամենևին վնասուցանէ, եւ եւ յաւետելոց՝ի վնաս և կոչտացելոց, տայ Աստուած բաւական շնորհս՝ ոչ միայն առ՝ի զգուշանալ յառաւելագոյնս վնասանչելոյ, այլ և առ՝ի զղջալ՝ի գործեցելոցն վնաց:

Ա յս եւս խնդիր կցորդ է ընդ կամելոյն Աստուծոյ՝ զի ամենեքեան կեցցեն, և ընդ Քրիստոսի վասն ամենեցուն փրկութեան զմահ ճաշակելոյ: Օ՞ի եթէ կամի Աստուած զամենեցուն փրկութիւն, զհետ գայ զի և ամենեցուն շնորհէ զկարևորս փրկութեան. ապա թէ ոչ, կամքն այն ոչ եւս կամք լինէին:

Ընդ զմեղաւորաց առհասարակ երդնու Աստուած նզովելիս, և ասէ. (Էզ. 11). "Կենդանի եմ ես... ոչ կամիմ զմահ ամպարշտին, որպէս զդառնալ... և կեալ,,: Եւ Քրիստոս զամենեսեան առ ինքն հրաւիրել ասելով. (Մատ. ԺԱ. 28.) "Նկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ,,: Եւ որպէս ամպարիշտք դառնալ՝ի ձանապարհայ իւրեանց, և որպէս մեղաւորք գալ առ Քրիստոս կարիցեն առանց շնորհայ:

Նոկ զի և խոստովանքն և յաւաւելք ոչ երբէք բոլորովին լքեալ Թողուն՝ի շնորհայն Աստուծոյ, յայտ է՝ի սուրբ գրոց: Յաւաւելալ և կատարեալ էին Հրեայք՝ որք քարկոծէին զնախաւկայն, սակայն շնորհքն Աստուծոյ կոչէին միշտ զնոսա՝ի դարձ, քանզի ասէ. "Նուք հանապազ Հոգւոյն սրբոյ հակառակ կայք,,. (Գործ. Է. 51): Եւ առաքեալն առ նոյնպիսիսն ասէ. (Հռ. Ը. 4.) "Նթէ զվեծութեամբ քաղցրութեան նորա և զնեղելովն և զերկայնմտութեամբն արհամարհեցես, չգիտեցե՞ս զի քաղցրութիւնն Աստուծոյ զքեզ յապաշխարութիւն ածէ. այլ ըստ խստութեան քում և ըստ անզիջող սրտի գանձես անձին քում բարկութիւն,,: Ի զուր էին և տարապարտ այս ամենայն կընշանակութիւնք, եթէ շնորհացն Աստուծոյ լքեալ էր զնոսա՝ի սպառ. վասն որոյ ասէ խնամատուն. "Ողորմեցի

միս ամենեցուն, զի յամենայնի կարօղ ես ,,։ Եւ զքահանայապետացն ապիրատից և խստասրտաց ասէ. "Օ՛ի եթէ զիշնամիս ծառայից քոց և զմահապարտս այնչափ նեղեցեալ պատժեցեր և փրկեցեր, տուեալ ժամանակս և տեղիս՝ որովք զերծանիցին՝ ի չարեաց, ամենայն Հնազանդութիւն պատեցար զորդիս քո ,,. (Եմաստ. ԺԵ. 24։ ԺԲ. 20)։ Եւ առաքեալսն ասէ (Բ. Կ. Գ. 9.) "Երկայնամիտ լինի առ ձեզ. քանզի ոչ կամի եթէ ոք կորիցէ, այլ զամենեցուն հասանել յապաշխարութիւն ,,։

Օ՛ստն հաստատեն և Հաւատք, և ժողովք ջուրեքինն, արաւսեանն, վանքենտեան գ, լատերանեան դ, և տրիդենտեան։ Եւ եկեղեցի սուրբ զամենայն հոգ և խնամ՝ ի կիր արկանէ՝ ի գարձ յուսահատելոց իսկ մեղաւորաց, որպէս խոստովանի՝ զի պատրաստ է Հաստատ զնորին իւր ամենեցուն մինչև ցվախճան կենաց։ Վասն որոյ սուրբ Հոգւնացին յայս կնքէ զբանն. "Հաւատել՝ թէ կայ ինչ՝ ի մեզաց՝ յորմէ չկարիցէ ոք զղջալ՝ ի կեանս, մոլորութիւն է. նախ՝ զի բառնայ այդ զաշխատութիւն կամաց, և երկրորդ՝ զի տկարութիւն ածէ զջութեամբ ընդոհաց, որ կարէ շարժել զսիրտ այր և է մեղաւորի յապաշխարութիւն ,,։

ԱՌԱՔԿՈՒԹԻՒՆՔ

Գործ. ա. — ե. Սուրբ գիրք խոստացուցանել աւետեն զսիրտ և կուրացուցանել. արդ Հաստատ ոչ զոք խոստացուցանէ և կուրացուցանէ տալով նմա չարութիւն, այլ փակելով նմա զնորհս իւր։ — ե. Օ՛յսպիսի կուրութիւն Հրէից ուսանիմք՝ ի սուրբ աւետարանէն, ուր ասէ (Յհ. ԺԲ. 39.) "Վասն այնորիկ ոչ կարէին հաւատալ, զի միւսանգամ՝ ասէ Տեսայ՝ թէ կուրացոյց զաչս նոցա և ապշեցոյց զսիրտս նոցա ,,։ — գ. Եւ օրինակաւ այգւոյ ասէ զԺողովրդենէ իւրմէ (Տեաց. Ե. 5.) "Եւ արդ ես ինձէն պատմեցից զինչ արարից ընդ այգի իմ. քակեցից զցանկ նորա, և եղիցի յափշտակութիւն. կործանեցից զպարիսպս նորա, և եղիցի՝ ի կոխումն. և Թողից զայգի իմ, և մի յատցի, և մի բրեցի. և բուսցի՝ ի նմա փուշ խոզք՝ ի խոպանի, և պա-

տուէր տաց ամպոց իմոց՝ զի մի տեղասցեն յայգի իմ ,,։ Ա՛րդ այս ամենայն բանիւ զՀոգևորական լքուածն ՚ի խնամս տեառն իմանան տուրքն Երեմիայ , տուրքն Կիւրեղ աղեքսանդրացի , և տուրքն Յովսիմա ։ — դ. Եւ զՆաւոքոսէ ասեն գիրք (Ը. Մակ. Ը. 13.) “Ա՛զաչէր , ուխտս դնէր առ այն՝ որ չէր նման ողորմելոց ,,։

պԽ. — ա. Ա՛պաքէն Ա՛ստուած ՚ի պատուհաս մեղաց փակէ զառաւելապոյն ընտրեալ իւր յումեքէ , այլ ոչ բոլորովին լքանէ զոք՝ որպէս տուրքն ( )գոստինոս ՚ի բանառաքելոյն Պաւղեայ պնուաս Ա՛ստուած ՚ի կարին անապչփոխնէան , ասէ . “Ա՛յս ինքն է կուրութիւն մտաց . և որ ոք մատնի յայն , ՚ի նեղբին լուսաւորութենէ աստուածային լոյսն զրկի , այլ ոչ բոլորովին՝ ցորչափ ՚ի կեանս է ,,։ Ա՛պա թէ ոչ , ոչ ևս լինէր ուղևոր՝ այլ հասեալ , և բոլորովին մերժեալ Ա՛ստուծոյ , որ դատապարտելոց ևեթ է ։

— բ. Ո՛կարէին Երեայք հաւատալ , ոչ ՚ի հարկէ՝ այլ կամաւոր անհաւատութեամբ , որպէս տուրքն ( )գոստինոս ասէ (Հատ. ժԷ. ՚ի Յով.) “Ոչ կարէին հաւատալ , զի Հայրն ասաց զոմն յառաջագոյն . և ասաց զոմն , վասն զի գիտէր Ա՛ստուած յառաջագոյն զի չէին հաւատալոց ։ Ասէ ևթէ հարցանիցես՝ թէ ընդէր չկարէին հաւատալ , ածեմ թաւիեմ զի չիամէին . այսինքն զի զբար կամն նոցա ետես Ա՛ստուած յառաջագոյն , և ՚ի ձեռն մարգարէին նախատեսութեաց ,,։

— գ. Ո՛րպէս այգեցոյն ՚ի մարմնաւոր պատուհաս Երէից ակնարկէ ։ Ասէ ևթէ ոմանք ՚ի Հարց և զՀոգևոր լքուածն նոցա ՚ի խնամոյն Ա՛ստուծոյ խնամեան , ոչ սպառասպուռ զլքուածն զոյն համարին . այլ իմանան զլքեալ նոցա ՚ի գործունէայ շնորհացն Ա՛ստուծոյ , կամ ՚ի մերձաւոր բաւականէն , որ ոչ միշտ պարգևի ամենեցուն . այլ ոչ ՚ի շնորհէ աղօթից՝ որով մարթ է մերաւորաց ընդունել զայլ շնորհս ։

— դ. Ասէ Ա՛ստուածոյ աղօթիցն անընդունելի գոլ՝ զի ոչ ըստ օրինի աղօթէր . զի ամենայն ուխտք նորա վասն մարմնաւոր կենացն էին , ոչ ինչ զՀոգեկանէն հոգայեալ ։

Ա՛տ. ե. — ա. Սուրբն ( )գոստինոս հաւատոյ հաստատութիւն՝ ոչ ամենեցուն ընդունել շնորհս Ա՛ստուծոյ , զի

ասէ (՚ի ընդ. մեծ. — ովք. գլ. Ե.) "Որհնեմք՝ զի ոչ ամենեցուն պարգևին ընծայք. գիտեմք՝ զի որոց պարգևին, ողորմութեանն Աստուծոյ ձրի պարգեւք են. գիտեմք՝ զի որոց ոչն պարգևին, արդար դատաստանաւն Աստուծոյ ոչ պարգևին ,, : Եւ զի զբաւական ընծայից ասէ զայս, յայտ առնէ այլուր (յղ. կղեմէ. ի ընծայ. գլ. ժե. 30.) ուր զընծայացն Աստուածայ չառելով՝ որ բաւականն էր, ասէ. "Այժմ որոց միանգամ պակասէ այսպիսի օգնականութիւն՝ պատուհաս մեզաց է ,, , այսինքն սկզբնականին կամ ներգործականին : — Բ. Այսպէս՝ զոր այլուր դարձեալ ասէ (յղ. կորնթ. արտաքս. գլ. Ը. 15.) "Որեղք են՝ ուրանօր կամ չկան սերը որ պարտի գոլ, կամ նուազ քան զոր պարտն է գոյ, եթէ մարթ իցէ կամաց զգուշանալ անտի և եթէ ոչ. զի եթէ մարթ իցէ, այժմու կամք առնեն զայն. իսկ եթէ ոչ, անցեալ կամք արարին զայն ,, :

Պե. — Ե. Ոչ ամենեցուն միշտ պարգևին ընծայք գործանեալ և մերձաւորապէս բաւական, այլ ոչ ումեք զլանալ Աստուած գոնեա զհեռաւորն բաւական : Այս ցուցանէ սուրբն Գրիգոր Նիւսացի ընդդէմ պեղագեանց, որք զառաջութիւն ընծայից ըստ վաստակոց և ըստ արժանեաց համարէին : Զայն որոց զգործանեալ և զմերձաւոր բաւական ընծայից ասէ սուրբ վարդապետն զի՛ ի պատուհաս՝ եթէ սկզբնական և թէ ներգործական մեզաց՝ ոչ պարգևին անհաւատից. իսկ վերածնելոց, որոց ամենայն մեղք և պատիժք ջնջին միաբանութեամբ, ներգործական մեզաց եւ եթէ կարէ գոլ պատուհաս զըրկումն՝ ի ընծայից անտի :

— Բ. Այր ոչ գոյ սէր, կամ նուազ քան զոր պարտն է գոյ, տիրելոյ կամաւոր ցանկութեան՝ ի տեղի նորա, են իսկ անդամոյ մեղք. քանզի դէպ աղօթիւք մարթ է յաղթել այնմ, և ընդ զնուազութեան սիրոյ :

Աստ. Գ. Ապաշխարութեանց յամառելոց՝ ի մեղս և խրատատարութեանց ոչ ևս պարգևին ընծայք ըստ վարդապետութեան սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ, զի ասէ (՚ի պաղ. Հինգ.) "Զքանզ Աստուած զմեղաւորն, ոչ ևս կոչէ զնա, ոչ ևս բանայ զմիտս նորա, ոչ ևս հնազու՝ ի նա ընծայս ,, : Եւ այլուր (՚ի գէդ յղ. կոր. արտաքս. գլ. ժԹ. 42.) առեալ ասէ զմեղաւորն, զի "Զքեաւ յամենայն լուսոյ Աչմարտութեան՝ ոչ ևս կարէ կամել ,, :

պէս. Մարքն ( )գոստինոս առ՝ի յուցանել ընդդէմ Յուլիանոսի զկարևորութիւն ընծրհաց, նկարագրէ զայր առանց լուսոյ և օգնականութեան ընծրհացն Ա֊ստուծոյ, և ոչ թէ այնպիսի ոք համարի՝ թէ գտանիցի. վասն զոյ և հարցանէ՝ թէ "Ո՞վ ոք փրկեսցէ զանձն, թողլեալ՝ի նմանէ. և ո՞ է որ փրկէ, բայց ընծրհք Ա֊ստուծոյ՝ի ձեռն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,,: Այս ապա յայտ արարեալ զգօրութիւն ընծրհաց և առ՝ի խոստացեալ մեղաւորս, յաւելու. "Եթէ սառնացեալ և ապ և վիմատաւեալ լցեն, առաջի ողորմութեանն Ա֊ստուծոյ չլցեն խիստ. առաքեսցէ զբան իւր և հալեսցէ զնոսա,,: Ա՝ան որոյ զայլ ամենայն բանս սրբոյ վարդապետին պարտ է լմնանալ զայնցանէ, որ հակառակ կան ընծրհացն Ա֊ստուծոյ, և խափանեն զայն. զի ընծրհքն Ա֊ստուծոյ են որպէս զլոյս արեգական, զոր չտեսանեն այնոքիկ և՛ եթէ՝ ոչք խնուն զաչս իւրեանց առ՝ի չտեսանելոյ զայն:

ԳՕԴՈՒԱԾ Գ

Զի անհաւատից իսկ առհասարակ պարգևին բաւական շնորհք առ՝ի փրկութիւն:

Հակառակ այսորիկ վարդապետութիւնք յանսենեանց և նորաղանդից դատապարտեալ են յեկեղեցւոյ: Ա֊նզի Ա֊ղեքսանդր Ը. դատապարտեաց զյանսենեանցն՝ որք ասէին. "Ա֊ստուածային ընծրհք, Հաւատք, Յերեսիովտայք, և սոցին նմանք ոչ ընդունին զՏոսուէն ընծրհացն Քրիստոսի,,: Եւ Ալեքսէս ԺԱ. դատապարտեաց զմնալոյթիւնս Ա֊ենանելն՝ որ ասէր. "Ամէն ընծրհք առանց հաւատոց...: Հաւատք են առաջին ընծրհք, և այլոց ընծրհաց աղբիւր...: Ա֊րտաքոյ եկեղեցւոյ չկայ ընծրհք,,:

Ա֊ն բարւոք իմացուածք բանիցս գիտելի է, զի որպէս և այլուր ասացաք՝ յերկուս զանազանին անհաւատք. բացասականք և դրականք: Ա֊ացասականք են, որոց չկայ ընկալեալ ծանօթութիւն ինչ ճշմարտոյ, և ոչ լուեալ զլուր բանին. իսկ դրականք, որոց լուեալ զայն՝ և մերժեն՝ի բաց: Ո՞ դրական անհաւատից կայ երկ-

թայութիւն, զի նոյն իսկ ծանօթութիւն հաւատոյ և լուր բանին Քրիստոսի բաւական ընդհք են Աստուածոյ, թէպէտ և մերժեալ ի նոցանէ։ Իսկ թացատականք, որոց չև ընկալեալ հոգի զընորհս հաւատոյ, ընդունին յարժանեացն Քրիստոսի զբուժիչ ևեթ ընորհս՝ որ զբնական տկարութիւն նոցա կազդուրէ, և տայ նոցա զզօրութիւնս կարևորս առ ի պահել զօրէնս քնականս։ Իսկ պատրաստեն նոքա զանձինս յընդունելութիւն առաքելոցն ընորհաց՝ թառնալով զարգելս նոցին, և մանաւանդ զկռմանն ի հաւատս՝ զոր Աստուած ի ձեռն մարդկան կամ հրեշտակաց, կամ նեըքին լուսաւորութեամբ, և կամ այլով իւիք օրինակաւ՝ որպէս և ինքն գիտէ՝ կոչէ զնոսա ի հաւատս։

Աստ այսմ մտաց ցուցանի վարդապետութիւնս ի սուրբ գրոց, զի առաքեալն ասէ (ա. Տիմ. ը. 3.) "Օ՛ն այն է բարի և ընդունելի առաջի փրկչին մերոյ Աստուծոյ, որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն, և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն. զի մի է Աստուած, և մի միջնորդ Աստուծոյ և մարդկան մարդն Յիսուս Քրիստոս, որ եւտ զանձն փրկանս ընդ ամենեցուն,,։ Որպ եթէ կամի Աստուած կեցուցանել զամենայն մարդիկ, և Քրիստոս վասն փրկութեան ամենեցուն մեռաւ, ապաքէն և զընորհս կարելոց հասանել փրկութեան ոչ ումեք զլանայ։

Եւ աւետարանիչն ասէ (Յհ. ա. 9.) "Էր լոյս ճշմարիտ, որ լուսաւորէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ,,։ Օրմէ ասէ սուրբն Աքրոսիոս. "Ոչ մանաւանդ այն արեգական արդարութեան ամենեցուն իսկ ծագեաց, ամենեցուն վասն եկն, վասն ամենեցուն չարչարեցաւ և յարեաւ։։։ Իսկ որ ոչն հաւատայ ի Քրիստոս, զանձն յամենայն բարեաց նորա զլանայ,,։

Եւ սուրբն Ոսկեբերան ի սաղմոսն (ԺԲ. 7.) Ոչ ոչ ոք էջէ, որ ներփէջէ ի պապոյ նորա, ասէ. "Եւ քանզի Աստուած մարմին եղև և բնակեաց ի մեզ, չեմք ունել ումեք ի մահկանացուաց տեղի պատճառանաց կալոյ ի ստուերս մահու, անդր ևս ընդմտեալ Հառապայթից բանին Աստուծոյ,,։

Եւ Յաղթ առհասարակ, ուր ուրեք դէպ լինի նոցա խօսել զանհաւատից, հաստատեն միշտ՝ զի ոչ ժխտե

նոցա Աստուած զընորհս կարևորս առ ի փրկութիւն. մինչև սրբոյ Աւգուստինոսն ասել. "Եթէ վայրագասուն ոք ընդ գաղանս կենակից ի բնական օրէնս կայցէ՝ խնդրել զբարին և խոշշել ի չարէ, աներկբայապէս պարտ է հաւատալ՝ զի Աստուած կամ ի ձեռն ներքին ազդեցութեան յայտնէ նմա զկարևորս ի հաւատալ, և կամ յղէ զոք առ նա քարոզել զհաւատս, որպէս առ Կուռնեղիոս յղեաց զՊետրոս: Իսկ ոչ եթէ առնելով այնպիսւոյն զբարին ըստ բնական գիտութեան՝ արժանաւորի երջէք նախկին ընորհաց փրկութեան, այլ ի ձեռն կանխաժամանման ընորհայ ցանկալով գիտել զկամս Աստուծոյ՝ պատրաստէ զանձն յընդունելութիւն առաքելական ընորհաց, որ պատրաստէ զնա ի մօտոյ և ի հաւատս. որ թէպէտ և անկատար, այլ բաւական է յարդարութիւն: Ահա մարդոյ ի ձեռին Աստուծոյ. ինքն լուսաւորէ, որք ի տուեալս կան. ինքն առաջնորդէ, որոց չև և ևս ձանաչեն զնա":

ԱՌԱՔՈՒԹԻՒՆՔ

Գործ. ա. — ւ. Զաքեսէն ասէ (գործ. ժզ. 15.) "Ով յանցեալ ազգն Թոյլ ետ ամենայն հեթանոսաց գնալ ի ձանապարհս իւրեանց": — բ. Նմա առ եփեսացիսն ասէ (բ. 12.) "Ո՛չ ի էիք ի ժամանակին յայնմիկ առանց Քրիստոսի... և յոյս ինչ ոչ ունէիք, և անաստուածք էիք յաշխարհի": — գ. Նմա ի կամել Պօղոսի և Տառնաբայ քարոզել ասիացւոց, (գործ. ժզ. 6.) "Անցեան ի Փռուգիայն սրբոյ խօսել զբանն Աստուծոյ":

պէ. — ե. Ով կամեցաւ Աստուած տալ յայնժամ հեթանոսաց զմերձաւոր ընորհս հաւատոց որպէս Իւրկից, այլ առանց զրկելոյ զնոսա ի հեռաւոր բաւականէն՝ որով մարթ էր նոցա գալ ի հաւատս, որպէս յաւետանդ առաքեալն. "Ոչ սակայն ոչ եթէ առանց վկայութեան զինքն եթող", որով եթէ կամեցեալ էր նոցա, մարթէր հասանել փրկութեան:

— ե. Սակ զեփեսացիս համեմատութեամբ Իւրկից կոչէ անյոյս. զի Իւրեարք յաւուցն ակն ունէին, այսինքն

Քրիստոսի, որ անճանօթին էր հեթանոսաց, որք անտուաճք իսկ էին՝ զդիսեն պաշտելով։

— գ. Պօղոս և Բառնաբաս արգելան ի Հոգւոյն սրբոյ առաքանն, և ոչ եթէ միանգամ ի սպառ. որպէս և յարութեանց իսկ իրացն յայտ է։

Բառ. բ. Հաւատք, ըստ տրիդենտեան ժողովոյն, սկիզբն և արմատ է ամենայն արդարութեան, վասն որոյ և առաջին ընտրեալ (Հմմտ. Յհ. 8.) «Որ ի ընտրեցաց նախ ընդունելիմք. — զՀաւատս»։

Պե. Հաւատք առաջին ընտրեալ են այնու՝ զի մերձաւորապէս պատրաստեն յարդարութիւն, և ոչ առաջին ի ընտրեալս առհասարակ. զի բազում այլ ընտրեալ կանխեն քան զՀաւատս ըստ նորին իսկ ժողովոյ վարդապետութեան, որք ի հեռուստ պատրաստեն զանհաւատս ի ընտրեալս հաւատոց։ Նստ այսմ պարտ է խոնարհել և զբան սրբոյն (Հռոմ.) զի առ ի գործս արժանաւորս փրկութեան խնդրին հաւատք գերբնական։

Բառ. գ. — ե. Ի վարդապետութենէ այսի զՀետ գայ ասել նախ՝ զի գործք բնականապէս բարիք պատրաստեն զմարդ ի հաւատս. — բ. Արկրօրդ՝ զի կոչումն ի հաւատս ոչ ևս է ձրի, այլ ըստ բնական վաստակոց։ — գ. Արրորդ՝ զի ընտրեալ՝ իսկեն հաստարակաց ամենեցուն, ուր սուրբն (Հռոմ.) ասէ. «Պնութիւնք, զի ոչ ամենեցուն պարգևին ընտրեալ»։

Պե. — ե. Գործք բնականապէս բարիք պատրաստեն զմարդ ի հաւատս ըստ այնմ, զի բառնան զարգելս ընտրեալց ի բաց, որպէս ասացաք։ Նսկ եթէ բնականապէս իսկ ոք հաւատայցէ Աստուած նեղքին կամ արտաքին ազգեցութեամբ շարժման ի հաւատս»։

— ը. Կոչումն ի հաւատս ոչ ևս լինի ձրի ըստ առա-

յեղոյս լեալ, և ոչ ըստ վաստակոց և ըստ արժանեաց։ — Դ. Ընդ այսմ իմա և զհատարակաց տուչութենէ ընդհանուր, և ոչ զգերբնական և զյատուկ ընդհանուր՝ զորմէ լեալ տուրք վարդապետն ասէ ոչ ամենեցուն պարգեւել. նա աւանիկ և առաքեալն ասէ (Ա. Ընթ. Ը. 2.) "Օ՛ի ոչ ամենեցուն են հաւատք,,։

Ա՛ռակ. Դ. — Ա. Լինել բաւական ընդհանուր պարգեւէին անհատից, մարթէր նոցա զամենայն բնական օրէնս պահել, որով և սիրել զՅաուսաճ՛ի վեր քան զամենայն, և առանց հատուցող հասանել փրկութեան։ — Բ. Վարձեալ և չմարթէր գոլ՛ի նոսա անյաղթելի տկարութիւն հատուցող, վասն զի կամաւոր՛ի պատճառն գտանէր տկարութիւնն այն. սակայն զի զոյ՝ յայտ անտի է՝ քանզի անհնար զանյաղթելի տկարութիւն համարել՝ դատապարտեալ է ընդ մեղսութիւնս Պօղի։ — Գ. Եւ զարձեալ պարտ էր Յաուսաճոյ ըստ այդմ տալ տիւրացւոց և սիդոնացւոց զընդհանս հատուցող։

Պե. — Ա. Պահպանութիւն օրինաց բնութեան, և աստուածախրութիւնն այն բնական, առանց գերբնական հատուցող, չկարէ ածել զոք՛ի փրկութիւն։

— Բ. Հրկու ինչ պահանջին, զի իցէ ինչ կամաւոր՛ի պատճառն. նախ՝ զի գործն հարկաւ յառաջ գայցէ՛ի պատճառէն, և երկրորդ՝ զի գէթ ընդ աղօտ ինչ տեսցին հետեւանքն յառաջագոյն։ Ընդ երկաբանչիւրոցն իսկ չիք տեղի յանհատաց, որոց անծանօթ իցեն հատուցք։

— Գ. Տիւրացիք և սիդոնացիք արժանի գտանէին ընդհանուց, եթէ ընդհանք ըստ բնական վաստակոց պարգեւէին, կամ ըստ նախատեսութեան՝ զի հատանելոց էին ընդհանուն։

ԳՕԴՈՒԱԾ Դ

Բովանդակութիւն առաջելոցս գրառական և գործոնեայ շնորհաց։

Բաւական ընդհանք, որով կարէ մարդ հասանել փրկութեան, պարգեւի Յաուսաճոյ ամենեցուն. այլ ոչ ոք հասանէ նովաւ փրկութեան, կամակար ապախտ ա-

բարեալ զայն։ Իսկ գործունեայ հնորհք պարգևի որոց սահմանեալն է, և առանց բառնալոյ զպատուհասն նո֊ցա՝ տայ անվրէպ գործել նոցա զբարին. և եթէ լցեէ մեծն այն պարգև յարատևութեան, հասուցանէ և զնոսա ՚ի փրկութիւն։ Այս է ձրի ամենևին, զի ոչ ոք կարէ արժանաւորել այնմ ըստ արդարութեան, այլ ըստ պատշաճի եւեթ՝ աղօթիւք և ողորմութեամբք և բարի գործովք։ Այս է առաքելոյ ասելն. “Հնհու և դո֊ղութեամբ զանձանց փրկութիւն գործեցէք,,։ Այս մարգարէին ասելն. “Ո՛ մեղս քո ողորմութեամբ քաւեսջիր, և զանօրէնութիւնս քո գիմովք տնանկաց,,։ Ա՛ն ասելն որոյ առաքեալն ( )գոատինոս ասէ. “Այս ոչ որ առայն՝ Քրիստոս էիս պղեղաւոս, եղև առանց հինչ արժանեաց,,, իսկ արժանեաց ըստ պատշաճի։

ԳՕԴՈՒԱԾ Ե

Զի յաստուածակոյս կողմանէ պատրաստեալ է և. վանկանց անկեալ վախճանելոց նպատաւ բառակաև առ ՚ի փրկութիւն։

Ցերկուց պատճառաց պատահէ տղայոց անկնիլք մեռանել, ՚ի բնական կամ ՚ի բարեպատեհ պատճառէ. առաջինն յընթացից բնութեան, երկրորդն ՚ի կամաց ծնողացն։ Այլ ՚ի ծնողացն չարութենէ կամ յանհոգութենէ, յայտ է՝ թէ այս ոչ է Աստուծոյ. այլ Աստուած, որ անզեղջն է ՚ի հնորհս իւր, չպարտի բառնալ զպատուհասն կամաց մարդոյ առ ՚ի խափանել զմեղս։ Իսկ եթէ ՚ի պակասութենէ բնութեան՝ որ պատիժ է մեղաց նախաստեղծին, և ոչ ըստ այսմ պարտի Աստուած յեղաշրջել զկարգ բնութեան առ ՚ի տալոյ մանկտւոյն զգերբնական երանութիւն՝ զոր ոչն պարտի ուսմբ, որպէս յիւրում տեղւոջն ցուցաք ՚ի Հատս Հանդերձեալ կենաց։ Ա՛ն որոյ թէպէտ և զնոցին և ա֊մի Աստուած զփրկութիւն, թէպէտ և վասն նոցին իսկ մեռաւ Քրիստոս, որպէս առաքեալն ասէ (Ը. Կոր. Ջ. 14.) “Ա՛ինն փոխանակ ամենեցուն մեռաւ,,, սակայն Թողացուցանէ մեղաց ծնողացն կամ ընթացից բնութեան զրկել զնոսա ՚ի միրտութենէ։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆՔ

Ա՛ստ. Ա. — ա. Այրքն ( )գոատինոս ասէ յաղագս մանկանց (յղ. պարգեւէ յարտոն. գլ. ժբ. և՝ է ընդ. Ձղէ.) զի՛ ի կամացն Ա՛ստուծոյ պատահէ զգիել նոցա՛ ի մկըրտուԹենէ։ Ա՛ան որոյ յանքննելի դատաստանս Ա՛ստուծոյ ապաւինի, չկարացեալ հասու լինել՝ Թէ ընդէր յերկուց տղայոց մին մկրտեալ և միւսն զգիի՛ ի մկրտուԹենէ։ — ե. Ո՛անզի՛ ի կամացն Ա՛ստուծոյ հաստատեալ է կարգ բնուԹեան, և նախատեսեալ՝ ի նմանէ արգելք մկրտուԹեան տղայոյ անկնուք վախճանելեաց. և նախախնամուԹեան է զառաջս առնուլ չարեաց։

Պե. — ա. Այրքն ( )գոատինոս իմանայ ասասնօր զԹողացուցիչ կամ Ա՛ստուծոյ. քանզի՛ ի Թողացուցանելոյ և՝ Թէ նորա պատահէ մեռեալ մանկանց անկնուք, ոչ բոյչ պարտական տալ զգերբնական երանուԹիւն, և ոչ՝ ի ընորհս նոցա՝ յեղաշրջել զասհմանեալ կարգ բնուԹեան։ Ա՛յս են միայն որոց վարդապետին, որ ընդդէմ Յուլիանոսի ցուցանէ զմահն Ա՛զիտասի և զ և վասն մանկտուց լեալ։ Ա՛յլ այսու ամենայնիւ անքննելի են դատաստանքն Ա՛ստուծոյ՝ Թէ ընդէր միուսն՝ ի մանկանց պարգևէ զընորհն ըայն, և միւսումն ոչ, Թէպէտ և երկոցունցն և՛ս չիցէ պարտական։

— բ. Ո՛կարգ համագոյից հաստատեաց Ա՛ստուած առ մեծն և ընդհանուր բարի, վասն որոյ և ետես զամենայն զոր արար և ահա բարի են յոյժ. և ոչ է հակառակ նախախնամուԹեան Թողացուցանել մանն ինչ չարեաց առ՝ ի տնօրինել զմեծն և զընդհանուր բարի։ Ո՛րինակ իմն. եթ Ա՛ստուած մարդոյ անձնիշխանուԹիւն վասն մեծի և ընդհանուր բարւոյ, և ոչ է պարտ նմա խափանել զչարիս՝ որ յառաջ գան՝ ի զեղծանելոյ բազմաց անձնիշխանուԹեամբն։

ՄԱՍՆ Բ

ՅԱՂԱԳՍ ՍՐԲԱՐԱՐ ՇՆՈՐՀԱՑ

Սրբարար շնորհք են գերբնական պարգև Աստուծոյ տալրացեալ ի հոգւոջ, որով մարդ սրբի, արդարանայ և լինի աստուածահաճոյ, կարող ի գործել գործս արժանաւորս վարձուց յաւիտենից կենաց, որդեգիր Աստուծոյ և ժառանգ նորին։

Այս սահման բովանդակէ զամենայն ուղղափառ վարդապետութիւն սրբարար շնորհաց. նախ՝ զի շնորհս այս է ունակական ինչ յարեցեալ ի հոգւոջ. երկրորդ՝ զի տայ մարդոյ արդարութիւն և սրբութիւն. երրորդ՝ զի անբաժանելի է յարդարացուցմանէ. չորրորդ՝ զի կարէ մարդ ի ձեռն ներգործական շնորհաց պատրաստել զանձն առ այն, այլ ոչ երբէք արժանաւորել այնմ ըստ արդարութեան, զի ձրի պարգև Աստուծոյ է. հինգերորդ՝ զի մարթ է կորուսանել զայն. վեցերորդ՝ զի ոչ երբէք կարէ մարդ գիտել հաւաստեաւ թէ ժառանգիցէ զայն, եւս առաւել պարտի հաւատալ՝ զի չէ այն յատուկ ինչ և սեփական բնութեան մարդոյ և այնուիկ ստեղծեալ. եօթներորդ՝ զի յարդարանալ մարդոյ՝ ընկլին ի հոգւոյ նորա մեղք, և ոչ եւս միասէ նմա ցանկութիւնն մնացեալ առ ի ստանալ վարձս՝ եթէ ըստ օրինի ընդդէմ նորա մարտիցէ. և ութերորդ՝ զի վարձքն այնոքիկ արդասիք են սրբարար շնորհաց, որ աճեն և ի ձեռն գործոց արժանեաց վարձատրութեան. և զի ի յարատևելն ի նոսին՝ լինի ժառանգ յաւիտենից կենաց, որոյ փառք ըստ վաստակոյ իւրաքանչիւր աւելի կամ նուազ կշռին։ Այս ամենայն վարդապետութիւնք, սահմանեալք ի ժողովն տրիդենտեան, մասունք են ուղղափառ հաւատոյ։

Յակառակ այսոցիկ և զնորաղանդիցն խոհերս մոլորութեանց համառօտեմք աստ, առ ի յայտնագոյն իմացուած ուղղափառ վարդապետութեան՝ զոր առաջի կայ մեզ ի յաջորդ յօդուածսդ բացատրել։

Արդ կամակորելով նոցա նախ զառաքելականն բան (ա. Կոր. ա. 30.) "Ի Քրիստոս Յիսուս, որ եղև մեզ

իմաստութիւն արդարութիւն և փրկութիւն և սրբութիւն ,,, ասեն՝ թէ սրբարար չնորհք է նոյն ինքն արդարութիւնն Քրիստոսի, որ նախասահմանելոց հաւատոյ լարդարութիւն ի ձեռն հաւատոյ ևեթ նոցին. վասն որոյ ըստ նորաղանդից՝ ոչ այլ ինչ են հաւատք, քայցաներկմիտ վստահութիւն յարդարութիւնն Քրիստոսի : Արկղորդ՝ զի չէ մարթ ումեք արդարանալ, եթէ ոչ ունիցի զայս վստահութիւն յարդարութիւնն Քրիստոսի և ի նախասահմանութիւն իւր : Արդորդ՝ զի արդարութիւնն Քրիստոսի համարեալ նոցա յարդարութիւն ի ձեռն միրտութեան կամ հաւատոյ, ոչ թէ սրբէ զմեղս նոցա՝ այլ ծածկէ ևեթ և անտես առնէ, որպէս ձորձ զվէրս մարմնոյ. յոր չարաչար յարեն զբան առաքելոյն (Հռ. ԺԴ. 14.) “Ո՛չ գեցարուք զտեր Յիսուս ,,: Ոորդորդ՝ զի ծանրագոյն իսկ մեղք, շնութիւն, գողութիւն, մարդասպանութիւն, սեղանակապտութիւն և հայհոյութիւն, ծածկին ի հաւատացեալն և անտես լինին ի ձեռն արդարութեանն Քրիստոսի. իսկ յանհաւատն՝ թեթև և իսկ մեղք եղանին ծանուռնք և մահուչափք : Ինգերորդ՝ զի բարեգործութիւնք իսկ մարդոյ ցանկութեամբ և կրնաք են զգածեալ, և են մեղք ծանուռնք. բայց հաւատացելոյ չհամարին ի մեղս : Վեցերորդ՝ զի հաւատք ևեթ և վստահութիւն ի խոստումն աստուածային՝ է պատրաստութիւն առ արդարութիւն. յոր խեղաթիւրեն զմիւս բան առաքելոյն (Հռ. Գ. 28.) “Արանզի համարիմք հաւատովք արդարանալ մարդոյ, առանց գործոց օրինաց ,,: Եօթներորդ՝ զի խորհուրդք եկեղեցւոյ ոչ այլ ինչ են, բայց զարթուցիչք հաւատոց և վստահութեան ի խոստումն Աստուծոյ : Ութերորդ՝ զի թերահաւատել ևեթ զանմանէ մահուչափ մեղք են, և մարթ է այնուիկ կորուսանել արդարոյ զսրբարար չնորհս և զարդարութիւն : Իններորդ՝ զի արդարք առհասարակ հաւասար են առաջի Աստուծոյ, զի արդարութիւնն Քրիստոսի՝ որով միայն հաճոյ են Աստուծոյ՝ նոյն է յամենեսեան : Այսոքիկ են հիմունք կրօնից նոցա. իսկ խորհուրդք եկեղեցւոյ և կրօնական պաշտամունք թեթև ինչ համարին առ նոսա, և պահպանութիւն նոցին ոչ բաւական առ ի տանել միութեան եկեղեցւոյ :

ԳԼՈՒԽ Ա.

ՅԱՂԱԳՍ ԷՈՒԹԵԱՆ ՍՐԲԱՐԱՐ ՇՆՈՐՀԱՑ, ԿԱՄ ԱՐԴԱՐԱՆԱԼՈՑ ՄԵՂԱՒՈՐԻ

Արդարութիւն՝ ի սուրբ գիրս նշանակէ նախ՝ զօրէնս Աստուծոյ, որպէս ասէ (սղմ. ՃԺԹ. 5. 12. 27.) "Արանի՛ր թէ յաջողեալ եղեն ճանապարհք իմ, պահել զիս զարդարութիւնս քո։ ... Որհնեալ ես դու տէր, ուսո՛ զիս զարդարութիւնս քո։ ... Ի ճանապարհս արդարութեանց քոց իմաստուն արա զիս,,։ Երկրորդ՝ նշանակէ ստանալ զարդարութիւն, որպէս ասէն (ա. կոր. Ը. 11.) "Այլ դուք այնպիսիք ումանք եղէք. այլ լուացարուք, այլ սրբեցարուք, այլ արդարացարուք,,։ Այս դարձեալ (հռոմ. Ը. 30.) "Զորս կոչեացն, զնոսայն և արդարացոյց,,։ Երրորդ՝ նշանակէ արդար համարել, որպէս ասէն (Ա Յովհ. Ե. 29.) "Զմեզնայն ժողովուրդն և մաքսաւորք արդարացուցին զԱստուած,,։ Այս դարձեալ՝ "Արդարացուցանեն զամպարիշտն վասն կաշառոյ։ Ձուք եք, որ արդարացուցանէք զանձինս առաջի մարդկան,,։

Արդ նորաշանդք ըստ յետին երրորդ նշանակութեանս առնուն զբանս գրոց վասն արդարացուցանելոյ Աստուծոյ զմեղաւորն. իբր թէ ոչ քաւին մեղք նոցա, այլ ծածկին և եթէ արդարութեամբն Աստուծոյ կամ Քրիստոսի՝ որ նոցա համարի։ Ա՛ան որոյ և ոչ ընդունին՝ թէ՝ ի ձեռն սրբարար շնորհաց ներգործելի լինէ՝ ի մեզ նորոգութիւն, և մեղաւորն՝ ի ներքուստ փոխակերպելի յարդար։

Նակ ուղղափառ վարդապետութիւն ըստ սահմանի տիեզերատեաց ժողովոյն ուսուցանէ, զի ըստ երկրորդ նշանակութեան յարդարացուցանել Աստուծոյ զմեղաւորն՝ փոխակերպել նա՝ ի շնորհս և յորդեգրութիւն որդւոյն Աստուծոյ, և նորոգել՝ ի ներքուստ հոգի նորա՝ ի ձեռն շնորհաց՝ վասն վաստակոց և արժանեացն Քրիստոսի։ Ա՛ան որոյ յաւելու նոյն սուրբ ժողովն զԷութիւնն արդարացուցման մարդոյ յայտնագոյնս բացատրել այս-

պէս. "Միակ տեսակն պատճառ է արդարութիւնն Աստուծոյ, ոչ որով ինքն է արդար, այլ որով զմեզ առնէ արդարս. այսինքն զի արդարութեամբն, զոր ընդունի, նորոգիմք հոգւով մտաց մերոց. և ոչ միայն համարիմք, այլ իսկապէս կոչիմք և լինիմք արդարք։... Եւ նեղ գործ է այս յարդարանալ մեզաւորին, յորժամ չարչարանացն Քրիստոսի արժանեօք՝ ի ձեռն Հոգւոյն սրբոյ սէրն Աստուծոյ սիրի՝ ի սիրտս արդարացելոյն և ուռնականայ՝ ի նա. որով յարդարանալ անդ՝ այս ամենայն ընդ թողութեան մեղաց հեղեալ՝ ի մարդն, ՝ի ձեռն Յիսուսի Քրիստոսի՝ յոր պատուաստի՝ ընդունի զհաւատս, զյոյս և զսէր"։

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Զի յարդարանալ մեղաւորին մեղք նորա իսկապէս թողանալ, և ջնջիլ՝ ի տպառ։

Սուրբ գիրք այնպէս յայտնի բացատրեն զքաւութիւն մեզաց, թէ՛ ըստ յանցանացն և թէ ըստ պատժոյ, զի յայտնագոյն քան զայն չէ մարթ ասել։ Եւ նախ յաւետարանի անդ (Յհ. ա. 29.) "Ահաւասիկ գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի"։ Եւ գարձեալ (գործ. ե. 19.) "Ապ ապաշաւեցէ՛ք և դարձարուք՝ ի ջնջել զմեղս ձեր"։ Եւ գարձեալ (ե. Թագ. ԺԲ. 13.) "Եւ տէր անցոյց զքեւ զմեղս քո"։ Եւ գարձեալ (Ածայ. խղ. 22.) "Ահաւասիկ ջնջեցից իբրեւ զամպ զանօրէնութիւնս քո, և իբրեւ զմէգ զմեղս քո"։ Եւ գարձեալ (սղմ. ճ. 9.) "Լուա, և քան զձիւն սպիտակ եղէց"։ Եւ գարձեալ (Ես. կոթ. Ը. 11.) "Եւ գուք այնպիսիք ոմանք էիք, այլ լուացարուք, այլ սրբեցարուք, այլ արդարացարուք"։ Եւ գարձեալ (Եբր. է. 22.) "Ո՞վ ի գնա սրբեսցէ սրբութեամբ աւազանին բանիւ, զի կացուսցէ իւր յանդիման փառաւոր ձեռնեղեցի, զի մի ունիցի ինչ արատ կամ աղտեղութիւն կամ այլ ինչ յայսպիսեաց, այլ զի իցէ սուրբ և անարատ"։

Ասի՝ ի Հայոց ջինք ոք որ զայս ճշմարտութիւն յերկ-

բայց արկանիցէ. մինչև սրբոյ Յակոբեբերանին՝ ի գիրս քահանայութեան ասել՝ քահանայից նորոյ օրինաց պահել "Օ՛աղաս հոգւոց ոչ սրպէս սրբեալս յայտ առնել, այլ սրբել զայնս՝ ի սպառ ,,:

Օ՛ի եթէ յայտդարանալ մեզաւորին ոչ ջնջէին մեղք նորա, ոչ Հշմարտեր քան առաքելոյն Յոհաննու (ա. կը. ջ. 14.) "Ա՛եք գիտեմք, զի փոխեցաք՝ ի մահուանէ՝ ի կեանս ,,: Այս ոչ առաքելոյ ասէն զմեզ՝ "Կենդանիս Ա՛ստուծոյ՝ ի Քրիստոս Յիսուս՝ ի տէր մեր ,,: (հռ. ջ. 11):

ԳՕԴՈՒԱԾ Բ

Զի մեղաւորք ոչ թողութեամբ ևեթ մեղաց արդարանան, այլ և շնորհօք և սիրով որ՝ ի սիրտս նոցա՝ ի ձեռն Հոգւոյն սրբոյ հեղանիւն և ոչնականան:

Սահման է տրիդենտեան ժողովոյն. "Որ ոք ասիցէ արդարանալ մարդկան՝ համարելով եթէ նոցա արդարութեանն Քրիստոսի, կամ թողութեամբ եթէ մեղաց, և ոչ շնորհօք և սիրով որ՝ ի ձեռն Հոգւոյն սրբոյ հեղուն՝ ի նոսա և ունականան, նզովեալ լիցի ,,: Ա՛յս վարդապետութիւն հաստատեալ է՝ ի տուրբ գիրս, զի առաքեալն ասէ. (հռ. Ե. 5.) "Սէրն Ա՛ստուծոյ սփռեալ է՝ ի սիրտս մեր՝ ի ձեռն Հոգւոյն՝ որ տուաւ մեզ ,,: Եւ գործեալ (անդ. 17.) "Օ՛ի եթէ՝ ի միոյն յանցանաց մահ թագաւորեաց միովն, որչափ և առաւել ևս զառատութիւն շնորհաց և պարգևաց արդարութեանն առնուցուն՝ կենօք թագաւորեսցեն՝ ի ձեռն միոյն Յիսուսի Քրիստոսի ,,: Եւ յայտնագոյն և այլուր (Տիտ. գ. 5.) "Ա՛պրեցոյց զմեզ՝ ի ձեռն ածաղանին վիսանգամ ծննդեանն, և նորոգութեամբ Հոգւոյն սրբոյ, զոր եհեղ՝ ի մեզ առատութեամբ՝ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ, զի արդարացեալք շնորհօքն՝ եղիցուք ժառանգաւորք յուսով կենացն յաւիտենականաց ,,:

Ա՛պա ուրեմն ոչ արդարութեանն Քրիստոսի համարելով մեզ արտաքուստ, և մեզաց ևեթ թողութեամբ

կատարի արդարանալ մարդոյ ըստ գրոց, այլ վերածննու-
թեամբ և ներքին նորոգութեամբ՝ որ ներգործի ի մեզ
հեղմամբ Հոգւոյն սրբոյ կամ սիրոյ, և մնայ ի մեզ
բնակաւոր, ըստ տէրունեան բանին (Յհ. ԺԴ. 24.)
“Ի՛ւր նա եկեսցուք, և օթևանս առ նմա արասցուք,,:
Օնոյն և սուրբ Հայրք հաստատեն. և սուրբն Ա-
գոստինոս, մինչ չև մեղսութեանց նորաշանդիցն ի վեր
երևել, ասէ. (յղ. գրոյ ի հոգևոյ. գլ. Ը.) “Արդէս հա-
ւատքս այս՝ Քրիստոսի ասի՝ ոչ զի Քրիստոս հաւա-
տայ, նոյնպէս և արդարութիւնս այս՝ Աստուծոյ՝ ոչ զի
արդար է Աստուած. քանզի երկաքանչիւր մեր են. և
յայն սակս Աստուծոյ և Քրիստոսի ասին՝ զի յաս-
տուածային առատութենէ պարգևին մեզ,,:

Ընդ յայսցանէ յայտ է, զի ընդհքս այս սրբարար
ներքին ինն գերբնական պարգև է, որ փոխարկէ զմեզ
ի նոր մարդ, հանէ ի մէնջ զսիրտ քարեղէն, և տայ
մեզ սիրտ մարմնեղէն, և հոգի ուղիղ նորոգէ ի մեզ.
“Արամ աստուածեղէն բնութեանն լինիմք հաղորդա-
կիցք,,, ըստ առաքելապետին բանի (Բ. ԿՂ. Ա. 4.) և
ըստ առաքելոյն (Հռ. Ը. 14.) “Որ ևս տիրեն մեզ
մեղք,,: Եւ լինիմք նոսիա որդիք Աստուծոյ և ժառանգք
յաւիտենական կենաց. (Հռ. Ը. 16.) “Նոքա որդիք,
ապա և ժառանգք. ժառանգք Աստուծոյ, և ժառան-
գակիցք Քրիստոսի,,:

Ընդ այսքան և այսպիսի զօրութիւնք են ընդհիս, զոր
տգիտութիւն ապախտ առնէ: Քանզի ընդհքս այս
բազմապատիկ բարեաց է պարտաւութիւն. զի որպէս
Հարք տրիդենտեան ժողովոյն սահմանեցին, “Հար-
դարանալ մեզաւորին՝ ընդ թողութեան մեղաց հեզա-
նին ի նա հաւատք, յոյս և սէր, ի ձեռն Քրիստոսի՝
յոր պատուաստի,,: Ընդ յերեսին յայսոսիկ առաքի-
նութիւնս այլքն առհասարակ բովանդակին, հանդերձ
եօթնարփիեան պարգևօք Հոգւոյն՝ որ պատրաստեն զնա
և յօժարեցուցանեն յառաքինութիւնս: Քանզի գեր-
բնական զօրութիւն ընդհիս դիմէ ի գործս համաբնա-
կանս իւր, ըստ առածին՝ զի եզանակի գոլոյ զՀետ եր-
թայ եզանակ գործելոյ: Այս որպէս զգալի բնութեան՝
զգայականք են և զօրութիւնք, այսինքն տեսանելիք Ա-
շակելիք և այլն, և բանաւոր բնութեան զօրութիւնք՝

բանականք, այսինքն՝ միտք կամք և այլն, նոյնպէս և սրբարար ընդհաց՝ որ գերբնականն է և աստուածային բնութեանն հաղորդութիւն՝ պարտ է համեմատ իւր ունել զօրութիւնս առ՝ի գործել նոքօք գերբնապէս։ Ընդ այս զօրութիւնք են հեղական առաքինութիւնք, որովք ոչ ևս ըստ զգայութեան գործէ արդապատճառն կամ ըստ բանականին ևեթ բնութեան, այլ Հոգւովն Քրիստոսի՝ որոյ է անդամ։ "Ո՛վ որ զՀոգին Քրիստոսի ոչ ունի, սա չէ նորա,,։ ըստ առաքեալն (Հռ։ Ը։ 9)։

Իսկ պարտք Հոգւոյն, զոր սրբարար ընդհաց այս հեղեալ յարդարացեալն, են եօթն։ ա։ Իմաստութիւն՝ որով մտադիւր խորհիմք զերկնայնոց, զերկրաւորքս արհամարհեալ։ "Եւ համարիմ իսկ զամենայն՝ կղկղանս, զի զՔրիստոս շահեցայց,,։ (Փիլ։ Գ։ 8)։

բ։ Հանճար՝ որով լուսաւորին միտք մեր՝ի Հշմարտութիւնս Հաւատոյ, և՝ի հրամանս և՝ի խրատս առաքինականս։ "Ո՛վ ծածկեցեր զայս յիմաստնոց և՝ի գիտնոց, և յայտնեցեր տղայոց,,։ (Մատթ։ ԺԱ։ 25)։

գ։ Խորհուրդ՝ որով յամենայնի, և մանաւանդ՝ի փորձութիւնս, ընտրեմք զօգուտ Հոգւոց մերոց քան ըզմարմնոյ։ "Ո՛վ ինչ օգտիցի մարդ, թէ զաշխարհս ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցի,,։ (Մատթ։ ԺԶ։ 26)։

դ։ Գիտութիւն՝ որով կենցաղականացս ամենայնի գեր՝ի վերոյ կայեալ,՝ի Հշմարիտ գիտութիւնն Քրիստոսի կոխեմք ըստ առաքելոյն։ "Ո՛վ ոչ եթէ՝ի մտի եդի գիտել ինչ՝ի ձեզ, բայց միայն զՅիսուս Քրիստոս, և զնոյն՝ի խաչ ելեալ,,։ (Ա։ Կոր։ Բ։ 2)։

ե։ Օրհնութիւն՝ որով արհանաձք՝ի վտանգս, առնան կոխել զխոչ և զխուճ խաւիանարար փրկութեանմերոյ։ "Ո՛վ գերարժանք զօրացուսջիննութիւնն Աստուծոյ, զի կարող լինիջիք կալ ընդդէմ Հնարից սատանայի,,։ (Եփես։ Զ։ 11)։

զ։ Աստուածպաշտութիւն՝ որով վառիմք՝ի սէր կրօնիս, և դիւրանայ մեզ Հանապարհ արքայութեան։ "Պիտեալ և պատրաստեալ են Հանապարհքդ աստուածպաշտից,,։ (Ղուկ։ Իզ։ 7)։

է։ Երկիւղ՝ որով զգուշանամք՝ի վտանգաց կորու-

սանելոյ զընորհս Աստուծոյ, երկիւղ՝ որ սկիզբն է իմաստութեան, և որով ողորմութեանն Աստուծոյ հանդիպիմք. "Ողորմութիւն տեառն յաւիտեանս յաւիտենից 'ի վերայ երկիւղածաց իւրոց,,. (աղ. ճԳ. 17):

Ա՛ման որոյ զայսքան կարևոր ընորհ՝ նախ քան զնուիրապործութիւն սրբոյ պատարագին մաղթէ ամենեցուն քահանայն. "Շնորհք սէր և աստուածային սրբարար զօրութիւնն եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան,,:

ԳԼՈՒԽ Բ

ՑԱՂԱԳՍ ՈՐ ԻՆՉ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՔ ԱՌ ՍՐԲԱՐԱՐ ՇՆՈՐՀՍ ԵՒ ԿԱՐԵԻՈՐՔ

Ա՛ման մանկտուց, զորս չև 'ի չափ հասեալ՝ անդէն 'ի ծնանելն սովորութիւն է մկրտել, ոչ իմանալով ինչ պատրաստութիւն: Ա՛ման որոյ ժողովին տրիդենտեան նզովէ որք ասեն՝ թէ պարտ է վերատին զնոսա մկրտել յորժամ 'ի չափ հասանիցեն: Ո՛չ ի նմին անհնազանդութիւն նախաստեղծին Ադամայ կարաց առանց ինչ նոցա յանցանացն մեղաւորս զնոսա կացուցանել, և առնել հնազանդութիւն երկրորդին Ադամայ կարէ առանց ինչ պատրաստութեան նոցա արդարացուցանել զնոսա:

Իսկ վասն 'ի չափ հասելոց գիտելի է, զի որովհետև նորաստանդք հասարին կորուսեալ մարդոյ 'ի ձեռն սկզբնական մեղացս սպառնացեալ զամենայն զօրութիւն, ըստ այնմ և զհետ բերեն՝ զի և ոչ մի ինչ պատրաստութիւն խնդրիցի 'ի մեղաւորն առ 'ի ստանալ զարդարութիւն: Իսկ ուղղափառ վարդապետութիւն, քանզի ոչ հասարի սկզբնական մեղօք բարձեալ զազատութիւն մարդոյ, պարտ հասարի մեղաւորին նպաստիւք ներգործական շնորհացն Աստուծոյ պատրաստել զանձն առ 'ի ստանալ զարդարութիւն:

Վարձեալ ըստ նորաստանդից՝ հաւատովք և ե՛թ արդարանայ մարդ, յանձն ձգեալ այնուիկ զվաստակս կամ զարդարութիւնն Քրիստոսի: Իսկ ըստ ուղղափառ վարդապետութեան՝ բայ 'ի հաւատոյ խնդրին և այլ պատ-

թաստուԹիւնք, այսինքն յոյս, զղջումն և ապաշխարուԹիւն այլովքն հանդերձ:

Եւ դարձեալ հաւատքն լինդրեալ 'ի նորաղանդից ոչ այլ ինչ է, բայց վստահուԹիւն աներկմիտ՝ ղի արդարուԹիւնն Ա՛ստուծոյ հաճարեսցի նոցա յարդարուԹիւն. որպէս ԹԷ անմեղք երևին Ա՛ստուծոյ 'ի Ա՛րիստոս, ԹԷպէտ և անեղծ և կենդանի մնայցեն 'ի նոսա մեղք: Նոք ըստ ուղղափառ վարդապետուԹեան՝ հաւատք, սկիզբն հիմն և արմատ արդարուԹեան, հաստատեալ կայ 'ի հաւանուԹեան՝ զոր մատուցանեմք ասմենայն ՀնմարտուԹեանց յայտնելոյ Ա՛ստուծոյ:

Ո՛յսոսիկ 'ի յաջորդ յօդուածսդ մնայ մեզ ցուցանել:

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Զի առ 'ի առաձնալ զարդարուրիւն բաց 'ի հաւատոց խնդրին և այլ պատրաստուրիւնք. զի հաւատք ևնք չեն բաւական յարդարուրիւն:

ՎարդապետուԹիւնս այս սահմանեալ է 'ի տրիդեան տեսն Ժողովոյ. "Որ ոք ասիցէ՝ զի հաւատք ևԷԹ արդարացուցանեն զամենարնչեան, հաճարեալով զի ոչ այլ ինչ խնդրիցի գործակցուԹիւն առ 'ի ստանալ զնորհս արդարուԹեան, և չիցէ նմա կարևոր ոչ իսիք շարժմանէ կամաց պատրաստել զանձն առ այն, նզովեալ լիցի ,,:

Իբր ոչ ևԹէ պատրաստուԹիւնքս այսոքիկ վաստակ ինչ յատկապէս արժանաւորս ընծրհին յաւելուն 'ի մեղաւորն, զի ձրի են սրբարար ընծրհք և ըստ վաստակոց ևԷԹ Ա՛րիստոսի պարգևին, այլ բաւական զարթնել հեղմանն ընծրհաց որպէս պայման՝ առանց որոյ ոչ, կամ ԹԷ շատ՝ իբր վաստակք ըստ պաշտաձն: Եւ պատրաստուԹիւնքս այսոքիկ՝ կարևորք 'ի միասին ընդ հաւատս՝ են երկիւղ տեառն, յոյս, սէր գոնէ սկսեալ, ղղջումն և առաջադրուԹիւն պահելոյ այնուհետև զպատուիրանս Ա՛ստուծոյ:

Ա՛ռաջին մասն վարդապետուԹեանս յայտ իսկ է 'ի

սուրբ գրոց, որ պահանջեն ամենայն ուրեք զգարձ և զապաշխարութիւն ի մեղաւորաց, որպէս ուր ասեն. (Օ՛ազ. ա. 3.) "Դարձարուք առ իս, և դարձայց առ ձեզ,,: Եւ փրկիչն մեր ասէ (Ղ՛ուկ. ԺԳ. 3.) "Եթէ ոչ ապաշխարիցէք, ամենեքին նոյնպէս կորնչիջիք,,: Եւ առաքեալսն ասաց ցՀրեայս (Գործ. Բ. 38.) "Ապաշխարեցէք, և մկրտեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ յանուն տեառն Յիսուսի Քրիստոսի ի թողութիւն մեղաց,,:

Օնոյն և Հայրք առհասարակ հաստատեն. շատ լինի Հռչակաւորն քան սրբոյն Գրիգորի Դաստիարակի (յղ. քան. ա. ազ. քան ԺԵ. գլ. ԺԱ. 13.) "Որ արարն զքեզ առանց քո, ոչ արդարացուցանէ զքեզ առանց քո... արար զքեզ յանզիտս քո, արդարացուցանէ կամելով քո,,: Որովք յայտ առնէ սուրբ վարդապետն, զի մեղաւորն՝ որ կամաւ Հեռանայ Աստուծոյ՝ պարտի կամաւորապէս դառնալ առ Աստուած ի Հաշտութիւն:

Նոք երկրորդ մասն վարդապետութեանս, զի Հաւատք չեն բաւական յարդարութիւն, ցուցանի նոյնպէս ի սուրբ գրոց՝ որ վկայեն յայտնապէս զի ընդ Հաւատս խնդրին և բարեգործութիւնք: Դանդի ասէ առաքեալն Յակոբոս (Բ. 24.) "Ի գործոց արդարանայ մարդ, և ոչ ի Հաւատոց միայն,,: Եւ զպատճառն ի վերայ ածէ. "Հաւատք առանց գործոց մեռեալ են,,: Եւ առաքեալն ասէ (Հռ. Ը. 14.) "Իչ եթէ որ լսելիք օրինացն են՝ արդարացեալ են առաջի Աստուծոյ, այլ առնելիք օրինացն արդարասցին,,: Եւ գարձեալ (ա. Կոր. ԺԳ. 2.) "Եթէ ունիցիմ զամենայն Հաւատս... և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ օգտիմ,,: Եւ այլուր բազմաւորակ նոյն առաքեալ՝ եթէ որպիսի ինչ Հաւատք խնդրին առ ի առանձնակ զարդարութիւն, զի ասէ. (Գաղ. Ե. 6.) "Ի Քրիստոս Յիսուս ոչ թլփատութիւն ինչ կարող է և ոչ անթլփատութիւն, այլ Հաւատք սիրով յաղթելեալք,,: Ապա ոչ Հաւատք եթէ անարգաստաւորք արդարացուցանեն զմարդ, այլ Հանդերձ գործովք՝ որ ցուցընեն զանան ընդ Հաւատս, մանաւանդ եթէ յառաջ գան ի Հաւատոց:

Ոմիք ինչ զոր Հարք եկեղեցւոյ յաձախագոյն քան զկարեւորութիւն գործոց բարեաց յերկրեղեացեն, Աուրբ

Աակեբեբան ասէ (Ռէդ. Աա՛ռ. կք.) "Եթէ ոչ ար ժանի հաւատոյս կենցաղավարիցեմք, վրէժս անհնարինս տալոյ եմք,,: Եւ սուրբն Ոսկոյնոս մատեան մեծ գոյանալէ պրեայ, առ՛ի հերքել զմոլորութիւն հերետիկոսացս իւրոյ ժամանակին՝ որոց հետևողք են նորաղանդքն: Եւ այլուր (՛է Բանն ժէ. յղ. Բան. ա–աժ. գլ. ջ.) ասէ. "Հաւատովք սկսանի մարդ, այլ և գործք հաւատան և սարսեն:... Յաւել ապա գոյս՛ի հաւատս... և՛ի յոյս անդր գսէր,,: Եւ այլուր (՛է Բանն լե. գլ. ա.) "Յառաջ Աստուծոյ հաւատովք հիմնի, յուսով կանգնի, սիրով կատարի,,:

Եւ աստուածաբանօրէն իսկ յայտ է անտեղութիւն նորաղանդից վարդապետութեան. զի ոչ երբէք կարեն ցուցանել՝ ի սուրբ գրոց, նախ՝ թէ հաւատք զվստահութիւնդ և եթ զայդ նշանակից է, երկրորդ՝ զի պարտ էցէ նմա անգործ և անարգասաւոր կալ, և ոչ պտղաբերել առաքինութիւնս, մանաւանդ զսէր՝ որ՛ի նմանէն ծնանի. երրորդ՝ զի պարտ էցէ մարդոյ յառաջ քան զարդարութիւն՝ կալ որպէս կոձղ անպիտան գերի ցանկութեան: Եւ չէք քան զայդ վարդապետութիւն ընդդէմ սակարգացն ինչ բարւոց և ձեռնտու ախտից:

ԳՕԴՈՒԱԾ Բ

Զի հաւատք՝ որ խնդրին առ՛ի առանալ զարդարութիւն ոչ է վստահութիւն ևնք՛ի բողոքիւն մեղաց, այլ ձշմարիտ խոստովանութիւն ամենայնի՝ որ ինչ Աստուծոյ յայտնեալ:

Ամէնն է տիեզերաբեր ժողովոյ. "Որ զք ասէիցէ՝ թէ հաւատք արդարացուցիչ ոչ այլ ինչ է, բայց վստահութիւն յոյսոմանէ Աստուծոյ առ՛ի թողուլ զմեզս վասն Քրիստոսի, կամ զի վստահութեամբն ևեթ այնուիկ արդարանամք, նզովեալ լիցի,,:

Սուրբ գիրք յայտնապէս քարոզեն, զի հաւատք՝ որ խնդրին առ՛ի ստանալ զարդարութիւն՝ ոչ վստահութիւնն այն է, այլ ընդունելութիւն ձշմարտութեանց յայտնելոց Աստուծոյ: Վանդի փրկիչն մեր հրամայեաց առաքելոցն (Մատ. ԻԸ. 19.) "Երթայք յաշխարհ

ամենայն, և քարոզեցէք զաւետարանն ամենայն արա-
րածոց. որ հաւատայ և մկրտիւի, կեցցէ. և որ ոչն
հաւատայ, դատապարտեսցի ,, : Այսպա յայտ է թէ պարտ
էր քարոզելոցն՝ի նոցանէ հաւատալ առ՝ի փրկութիւն:
Եւ գարձեալ (Յհ. Ի. 31.) "Այլ այս այնչափ լինէր
գրեցաւ, զի հաւատայցէք՝ եթէ Յիսուս Քրիստոս է
որդի Աստուծոյ, և զի հաւատալովք և զկեանն յաւի-
տենական ընդունիցիք յանուն նորա ,, :

Եւ գարձեալ (հմ. Ճ. 9.) "Օ՛ի եթէ խոստովա-
նեսցիս բերանով քով տէր զՅիսուս, և հաւատայցես
՝ի սրտի քումմ՝ եթէ Աստուած յարոյց զնա՝ի մեռելոց,
կեցցես ,, :

Եւ գարձեալ (Եբր. ժա. 1.) "Օ՛ինչ են հաւատք՝
եթէ ոչ յուսացելոյ իրաց հաստատութիւն, և յան-
դիմանութիւն որոց ոչն երևին ,, :

Եւ Փիլիպպոս առ՝ի սկզբան զներքինն՝ խնդրեաց
՝ի նմանէ հաւատալ՝ի Յիսուս Քրիստոս, զոր աւետա-
րանէրն. և նա ետ զդաւանութիւնն՝ ասելով "Հաւա-
տամ եթէ Յիսուս Քրիստոս է որդի Աստուծոյ ,,.
(գործ. Ը. 37) : Եւ ասր՝ի քանս յայտնսիկ վստահու-
թիւնն պահանջեալ՝ի նորադանդից :

Այսան որոյ և առաքելական աւանդութեամբ խնդրի
միշտ յերախայէն դաւանութիւն հաւատոյ :

Յետ այսր ամենայնի ընդունայն է ածել վկայու-
թիւնս՝ի Գրոց, զոր միաբան հաստատեն զկարևորու-
թիւն այսր հաւատոյ առ՝ի ստանալ զարդարութիւն :
Օ՛վկայութիւնս նոցա ըստ կարգի ժամանակագրու-
թեան՝ի մի վայր ժողովել Քեղարմինոս՝ի գիրսն յա-
ղագս արդարանալոյ մեզաւորի : Եւ ոչ հետք նորադան-
դից վարդապետութեան նշմարին՝ի նոսա, այնպէս կա-
լեալ ամենեցուն զառաքելականն սահման հաւատոյ՝
զոր՝ի վեր այսր ածաք :

Եւ գարձեալ՝ ըստ նորադանդից վարդապետութեան
ընդունայն էր այնուհետև մեզաւորի խնդրել՝ի տեառ-
նէ զթողութիւն մեզաց, զի շատ իսկ էր վստահու-
թիւն՝ եթէ թողեալ էին մեզք նմա :

ԳԼՈՒԽ Գ

ՅԱՂԱԳՍ ՅԱՏԿՈՒԹԵԱՆՑ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

Ի մէջ սկզբնէ իւրեանց յառաջ ածեն նորաղանդք զայսոսիկ մէջ հետևանս՝ Նախ՝ Թէ պարտ էին մարդոյ ստուգութեամբ հաւատոյ գնել ՚ի մէն ի զի արդարացեալ էին և աստուածահաճոյ, վասն արդարութեանն Քրիստոսի համարելոյ նմա յարդարութիւն՝ զի արդարութիւնն այն հաւասար էին յամենեսեան այնու՝ զի է արդարութիւնն Քրիստոսի։ Եւ երկրորդ՝ զի չէ մարթ կորուսանել զայն ամենևին ըստ կալուխնակացն, իսկ ըստ լութերականաց՝ յորչափ չէին ուրուք կորուսեալ զհաւատս։

Ընդդէմ երեցունց այսոցիկ մեղրոյ մեղրութեանց միայ մեզ ցուցանել զուղղափառ վարդապետութիւն ՚ի յաջորդ յօդուածոյ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Զի ոչ ոք առանց յայտնութեանն Աստուծոյ կարէ վստահ լինել աստուգութեամբ հաւատոյ ընդ արդարութիւն իւր, վասն որոյ և. ոչ պարտ է նմա հաւատալ իրրև ՚ի հաւատոց զի իցէ արդարացեալ։

Թէպէտ և մարթ էին արդարոյ վստահել բարոյական ստուգութեամբ ընդ ընտրութիւն Աստուծոյ, ուստի յառաջ գայ խաղաղութիւն խղճի մտաց՝ յոր վայելեն արդարք, այլ ոչ ումեք՝ առանց աստուածայնի յայտնութեան՝ մարթ է գիտել հաւաստեաւ որպէս ՚ի հաւատոց զարդարութիւն իւր ըստ վարդապետութեան նորաղանդից, զոր դատապարտեաց ժողովն տրիդենտեան. "Որպէս ոչ ումեք յերկիւղածաց պարտ է երկմտել ընդ ողորմութիւնն Աստուծոյ, ընդ վաստակս Քրիստոսի, և ընդ զօրութիւն և ազդուութիւն խորհրդոց, նոյնպէս օրէն է ամենայն ումեք՝ հայեցուլ յինքն և ՚ի

տկարութիւն իւր և յանբաւականութիւնն՝ խոհել և երկնչել ընդ ընտրհս իւր. զի ոչ ոք կարէ պիտել անսխալ ստուգութեամբ հաւատոյ, թէ ելէ՛ւ ընտրհս Աստուծոյ ։

Եւ դարձեալ՝ “Ոչ ոք ասիցէ թէ առ՛ի ստանալ զարդարութիւն հարկ է մեզ աւուրս հաւատալ ստուգիւ զի թողեալ իցեն մեզ իւր՝ առանց երկմտելոյ վասն տկարութեան և անբաւականութեան անձին, նկուածեալ լինի ։

Եւ դարձեալ. “Ոչ ոք ասիցէ՝ այնու մեզաւորին արձակիլ՛ի մեղաց և արդարանալ՝ զի հաւատայ թէ արձակեալ և արդարացեալ է, կամ ոչ ումեք արդարացնալ առանց հաւատալոյ զանձն արդարացեալ, և՛ի հաւատոյ եւեթ աստի ընդունել զարձակումն և զարդարութիւն, նկուածեալ լինի ։

Յուդանի վարդապետութիւնս այս՛ի գրոց. “Ո՞վ համարձակիցի՝ եթէ սուրբ իցէ՛ի մեղաց.. (առաք. ա. 9)։

“Ես ինչ գիտեմ զանձին իմոյ, այլ ոչ եթէ այսու արդարանամ. զի որ քննէն զիս տէր է .. (ա. կոր. դ. 4)։

“Օ՜ չանցուածս իւր ո՞վ կարէ առնուլ՛ի միտ. ՛ի գաղտնեաց իմոց սուրբ արա զիս .. (պաղ. ժը. 13)։

Եւ սուրբք առհասարակ սովկայնի՛ի գատաստանացն Աստուծոյ, ոչ շատ համարեալ զարդարութիւն խղճի մտաց իւրեանց. զի թէպէտ և հաւատան են ընտրհք Աստուծոյ առ՛ի տալ մեզ թողութիւն մեղաց և արդարութիւն, այլ ոչ նոյն հաւատովք են մեզ զպատրաստութեանց մերոց առ ընտրհսն Աստուծոյ։ Վասն որոյ սուրբն ( )գոսաինոս՛ի բան սաղմոսերգուին՝ Աշխ էմոյծ խոստեցա, ասէ. “Գիտեմ զի արդարութիւնն Աստուծոյ միայ ինձ, այլ ոչ գիտեմ թէ միայցէ իմ ։ Եւ այլուր դարձեալ (յղ. կար. արդար. գլ. ԺԳ. 33.) “Ուշափ և արդար իցէ ոք, պարտ է նմա կասկածել՝ թէ գուցէ իցէ ինչ սպիտակ յանձին զոր անգիտանայ ։

Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Ա՛ռաք. Ա. — Ա. Առաքեալն բոլորովին վատահու-
թեամբ խօսի զարդարութենէ իւրմէ, զի ասէ (հռ. Ը.
38.) "Վասնզի հաստատեալ եմ եթէ ոչ մահ, և ոչ
կեանք... և ոչ այլ ինչ արարած կարէ մեզինել զմեզ
՚ի սիրոյ անտի Աստուծոյ՝ որ ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի
տէր մեր,,: — Բ. Նա զգաստանալն ևս յառելով (անդ.
16.) "Այն ինքն Հոգին վկայէ հոգւոյս մերում, եթէ
եմք որդիք Աստուծոյ,,. և վկայութիւն Հոգւոյն սրբոյ
անսխալ է: — Գ. Ամն որոյ և առ կորնթացիսն ասէ
(Բ. Կոր. ԺԳ. 5.) "Փորձեցէ՛ք զանձինս ձեր եթէ կայք
՚ի նոյն հաւատս, քննեցէ՛ք զանձինս. եթէ ոչ գիտէք
զի Քրիստոս Յիսուս ՚ի ձեզ է. բայց եթէ անպիտան
լինիք իցէք,,: Նա այլուր գարձեալ ասէ (Ա. Կոր. Բ. 12.)
"Այլ մեք ոչ եթէ զՀոգի աշխարհիս առաք, այլ զՀո-
գին՝ որ յԱստուծոյ, զի ծանիցուք զայն՝ որ յԱս-
տուծոյն շնորհեցաւ մեզ,,: — Դ. Ոչ լինչ ընդհատ և
առաքեալն Յովհաննէս ասէ (Ա. Ի. Ե. 13.) "Ո՛չ այս
գրեցի ձեզ, զի գիտասջիք՝ եթէ կեանս յաւիտենական
ունիք:... Գիտեմք եթէ յԱստուծոյ եմք,,: Նա գար-
ձեալ (գլ. Դ. 14.) "Ասէք գիտեմք՝ զի փոխեցաք ՚ի
մահուանէ ՚ի կեանս, քանզի սիրեմք զեղբարս,,: —
Ե. Նա այլուր գարձեալ (յայտ. Բ. 17.) "Ով յաղթէ,
տաց նմա ուտել ՚ի մանանայէն թաղուցելոյ... զոր ոչ
ոք գիտէ, բայց միայն որ առնու,,:

Պե. — Ա. Առաքեալն աստուածայինն սիրով վառեալ՝
յայտ առնէ զհաստատութիւն իւր ոչ ևս մեկնել կա-
մելոյ ՚ի սիրոյն Քրիստոսի, և ոչ զվստահութիւն իւր
զընկալեալ արդարութենէն՝ զորմէ ասէ իսկ. "Ոչ լինչ
գիտեմ զանձին իմոյ, այլ ոչ եթէ այսու արդարանամ,,:
Նաև սաղմոսերգուն նովին վստահութեամբ ասէ (լՁ.
7.) "Նա ասացի ՚ի բարեկենդանութեան իմում թէ
ոչ սասանեցայց յաւիտեան,,:

— Բ. Ի կայութիւն Հոգւոյն սրբոյ անսխալ է յին-
քեան. շատ է զի ունիցիմք մեք հաւաստեաւ ՚ի հաւա-
տոց զվկայութիւն նորա. քանզի ինչ միշտ մեզ տեղի

կասկածելոյ Թէ սատանայ՝ ի հրեշտակ լուսոյ կերպանեալ՝ արկցէ զմեզ՝ ի պատրանս։

— Դ. Պաւղեաքն առ՝ ի ցուցանել կորնթացւոց, զի հաւատքն՝ զոր քարոզեաց նոցա՝ ճշմարտութիւն է, քննել ասէ և փորձել զանձինս ըստ զօրութեան նշանացն՝ որովք յայտ առնէր Աստուած զճշմարտութիւն հաւատոց նոցա, և զայն զԺողովոյ հաւատացելոց, և ոչ զմիոյ միոյ. իսկ զիւրաքանչիւր ուրուք հաւատոց, և մանաւանդ զարդարութենէ, չէն ինչ բանք անպանօր։ Աստ այսմ իմա և զասելն "զի ճանիցուք զայն՝ որ Աստուծոյն ընտրեցեալ մեզ,,. զի ոչ զիւրաքանչիւր ումեքէն են բանքն, այլ զեկեղեցւոյն։

— Դ. Պաւղեաքն և միւս առաքելոյ բանք զհաստատակաց հաւատոց են, և զոր ասէն՝ այս է. Աը՝ ի ճշմարիտ հաւատան կայ, սկսեալ են՝ ի նմա կեանք յաւիտենականք՝ որոց յուսացն, և որք կատարեացին՝ ի ժառանգեն զայնս արդեամբք. ուր չէն ինչ նշմարանք նորազանդիցն մտացածին վստահութեան։

— Ե. Իսկ բան Հայտնութեանն ակնարկէ՝ ի քաղցրութիւնն, զոր ընդունի Աստուած սրբոց իւրոց, և ոչ՝ ի նորազանդիցն կարծեցեալ վստահութիւն աներկիւղութեան։

Ա՛ռաւ. Բ. — Ե. Սուրբ Հայրք բազում ուրեք ապահովեն զփրկութիւն հաւատացելոց, և յորդորեն զնոսա գոհանալ զԱստուծոյ վասն այսորիկ. — Բ. Որպէս և տուրբն Ղեոնտիոս (՝ի սաղմոսն ճԲ. և այլուր) ասէ. "Ով ասեմք՝ Թէպէտ մեզ զմեզս մեր, զի զայնսոսիկ հաւատամք Թողեալ՝ ի մկրտութեան, եթէ չԹերահաւատեմք,,։ — Գ. Եթէ ոչ այսպէս էր, ի ծուխս կասկածանաց պարտ էր մեզ կալ միշտ. ուր ընդհակառակն ասէ առաքեալն (Հռ. Ը. 1.) "Ապահեաւ արդարացեալք՝ ի հաւատոց անտի, խաղաղութիւն կալցուք առ Աստուած,,։

ԳԼ. — Ե. Սուրբ Հայրք ապահովեն զփրկութիւն հաւատացելոց բարոյական ստուգութեամբ, որ՝ ի վերկայութենէ բարւոյն խղճի մտաց յառաջ գայ. որպէս և եկեղեցի սուրբ ուսուցանէ՝ առ՝ ի բառնալ զվարանս հաւատացելոց, շատ համարել զխաղաղութիւնն զայն՝ յոր վայելեն ըստ ուղիղ քաղաքավարութեանն, որպէս և առաքեալն Յովաննէս ասէ (Ա. Ի. Ջ. 21.) "Եթէ

սիրտք մեր զմեզ ոչ ստգտանիցեն, համարձակութիւն ունիմք առ Աստուած,,։

— ՚Ի. Պաւլոսն (Գործ. ԻԹ. 21) գոստնեաց խօսի առ նորահաւատս՝ զորս իւր իսկ կրթեալ էր և ընծայեցուցեալ ՚ի միրտութիւն։ Պատճառ ոմոյ այնպէս համարեալ՝ զի ամենայն կարևոր պատրաստութեամբ ընկալեալ իցեն զմիրտութիւն, ապահովել նոցա զթողութիւն մեղաց։ Պատճառ հաւատոյ զպատրաստութիւնն համարեալ, զհետ գայ ստուգութիւն արդարութեան. այլ հաւատովք պատրաստութեանցն ոչ առաւել ինչ ունին քան զբարոյական ստուգութիւն։

— Գ. Ընդ վարանաց տեղւոյ ըստ ուղղափառ վարդապետութեան. քանզի ընդ ստուգութիւն հաւատոյ և ընդ վարանս երկիւղն է ինչ միջամտման, այսինքն խաղաղութիւն՝ որ ՚ի բարւոք խղճէ մտաց յառաջ եկեալ. այլ ամենայն ապահովութիւն պատրանք են և յանդգնութիւն։

ԳՕԴՈՒԱԾ Բ

Զի գրեկալեալն արդարութիւն մարթ է պահել և գործովք բարեաց աճեցուցանել, վասն որոյ և ոչ յաւիտենից հատուցար է այն։

Ասհման է տրիդենտեան ժողովոյն,, . "Որ ոք ասիցէ թէ զարդարութիւնն ընկալեալ ոչ է մարթ պահել, և ոչ յաւելուլ առաջի Աստուծոյ բարի գործովք, այլ թէ բարեգործութիւնք նշանք ևեթ իցեն և արգասիք արդարութեան, և ոչ պատճառք աճման նորա, նզովեալ լիցի,,։

Աղօթութիւն նորադանդից զհատուցարութենէ արդարութեան յաւիտենից՝ յառաջ գայ անտի, որպէս առայաք, զի զարդարութիւնն ևեթ Քրիստոսի շատ համարին յարդարութիւն մարդոյ, և քայ ՚ի հաւատոյ չհամարին այլ ինչ կարևոր առ ՚ի ստանալ զարդարութիւն։ Եւ քանզի բարեգործութիւնք արգասիք ևեթ են և նշանք արդարութեան, ոչ ինչ օգնեն առ ՚ի փրկութիւն, որպէս և ոչ մեզք վնասեն ինչ այնմ, զի վասն հաւատոյն չհամարին մարդոյ ՚ի պատիժ։

Ա.յլ սուրբ գիրք յայտ առնեն նախ՝ զի արդարք կա-
րեն յառաջադիմել ՚ի սրբութեան, քանզի ասէ առա-
քեալն (Բ. Կոր. Թ. 10.) “Ա.յլ այն որ պարգևէ սերմն
սերմանահանաց . . . ամենայնիւ զարդիւնս արդարու-
թեան ձերոյ ,,: Ա.պա մարթ է սրբութեան արդարոյ
առնել և այս քան գիւս, և ընկալեալ արդարութեան յա-
ւելուլ ՚ի կատարումն:

Երկրորդ՝ յայտ առնեն աստիճանս սիրոյ, որ նոյն է
ընդ արդարութեան, և կամ գէթ անբաժանելի ՚ի նմա-
նէ: Ա.սա այսմ եհարց փրկիչն մեր զՊիտեր (Յհ. ԻԱ.
15.) “Պիտեր Յովհաննու, սիրէս զիս առաւել քան զդո-
սա ,,: Եւ դարձեալ առաց (ԺԵ. 13.) “Ա.ոյն գիս քան
զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ՚ի վերայ
բարեկամաց իւրոց ,,: Եւ դարձեալ առ (Ա Ի. Ե. 48.)
“Ցոտնել լեցին սմա մեղք իւր, զի յոյժ սիրեաց. զի
որում շատ թողութիւ, շատ սիրէ. և որում սակաւ,
սակաւ ,,: Եւ առաքեալն Յոհաննէս առ (Ա. ԿՂ. Ի.
18.) “Պերն կատարեալ ՚ի քաց մերմէ զերկիւղ ,,:
Ա.յս և ՚ի զանազան վարձուց արդարոցն յայտ է, զոր
փրկիչն առ. “Ի տան Հօր իմոյ օթևանք բազումք
էն ,,. (Յհ. ԺԴ. 2):

Օ.ննոյն վարդապետութիւն և սուրբ Հարք հաստա-
տեն. յորոց սուրբն ( )գոստինոս ասէ (Ճառ Ձ. ՚ի Յոհ.
8.) “Ա.ոքին իսկ սուրբք յերկեղեցւոջ այլք քան զայլս
էն սրբագոյնք, այլք քան զայլս կատարեալագոյնք ,,: Եւ
սուրբ Ա.գուստինոսին յաւելու զայս պատճառ աստուա-
ծաբանական. “Ա.ռաջին պատճառ զանազանութեանս
այսմիկ յաստուածակոյս կողմանէ անտի խնդրելի է, որ
զբաղմազան շնորհաց իւրոց բաշխէ զպարգևս, որպէս
զի ըստ այլ և այլ աստիճանաց գեղ և կատարելութիւն
եկեղեցւոյ յօրինեսցի, որպէս և համագոյից էիցս այլ
և այլ աստիճանս կարգեաց առ ՚ի կատարելութիւն
տիեզերաց ,,:

ԳՕԴՈՒԱԾ Գ

Չի վարք է կորուսանել զարդարութիւն, և կորնչի այն վահուչտի վնասօք:

Սահման է և այս տրիդենտեան ժողովոյն. "Ով որ ասիցէ, զի յետ միանգամ արդարանալոյ չկարէ մարդ մեղանչել այնուհետեւ, և ոչ կորուսանել զշնորհս, և զի վասն այսորիկ որ անկանի՝ի մեղս՝ ոչ երբեք իսկապէս է արդարացեալ, նզովեալ լիցի,,:

Այս սահման դատապարտէ զկիսելունեականս, որք ուսուցանեն՝ Թէ հաւատք, որով և արդարութիւն՝ որ ծնանի՝ի հաւատոյ, անկորուստ է. վասն որոյ որ միանգամ արդարանայն՝ ոչ ևս կարէ մեղանչել, և ոչ՝ի մեղանչելն համարին նմա մեղքն՝ի պատուհաս: Այս շնորհս այս ըստ նոցա վարդապետութեանն, ընտրելոց ևեթ պահի. իսկ անարգեալք ոչ հաւատս և ոչ զարդարութիւն ստանալ կարեն:

Ո՞յ այս ամպարիշտ վարդապետութիւն հերքեն սուրբ գիրք նախ՝՝ի խրատել զարդարն՝՝ի զգուշութիւն, զի մի՛ անկանիցի. երկրորդ՝ ուր յայտ առնեն զնա յանցաւոր՝՝ի մեղանչելն. երրորդ՝ ուր ուրեք ցուցանեն և զանարգեալս և զընտրեալս՝՝ի մեղս ծանուանս անկեալ և Թշնամիս լեալ Աստուծոյ:

Առաջինն յայտ է՝՝ի տէրունական քանէն (Ա՛Պ. ԼՒՀ. 41.) "Աղօթեն կացէք և աղօթս արարէք, զի մի՛ անկանիցիք՝՝ի փորձութիւն,,: Եւ առաքեալն ասէ (Ա՛Ե. ԷՐ. Ժ. 12.) "Ով համարիցի հաստատուն կալ, զգոյշ լիցի՝ գուցէ անկանիցի,,: Եւ գարձեալ (ԿՈ. ԺԱ. 21.) "Երկիւղ, զի եթէ Աստուած՝՝ի բաւն ոտան ոչ խնայեաց, գուցէ երբեք և՝՝ի քեզ ոչ խնայեսցէ,,:

Երկրորդն ցուցանի՝՝ի բանիցն Եզեկիէլի (ԼԵ. 12.) "Արդարութիւն արդարոյն ոչ փրկեսցէ զնա յաւուր յորում մեղանչեսցի... Եթէ ասել ինձ ցարդարն Թէ կեցցէ կեցցես, և նա յուսացեալ յարդարութիւն իւր՝ առնիցէ անօրէնութիւն, ամենայն արդարութիւնք նո-

բա մի յիշեսցին, այլ անօրէնութեամբն իւրով՝ զոր ա-
րար՝ նովին մեռցի ,, :

Նոյն երկրորդն յայտ է յօրինակէ հրեշտակացն ան-
կելոց և նախամարդոյն, Ադամայ, Դաւթի, Սոդոմա-
նի, Պետրոսի և այլոց բազմաց, որ արդարք գոլով՝ կո-
րուսին մեղօք զընծորս, և կէսք՝ ի մեղս անդ իւրեանց
կորեան :

Ընդունայն է և առ այս ածել վկայութիւնս ի Հարց,
որոց վարդապետութիւն դէմ ընդդէմ հակառակ է մե-
ղադրութեանս այսմիկ : Այլ և՝ ի հետևանացն յայտ է
անտեղութիւն վարդապետութեանս : Օ՛ի եթէ ան-
մահ էր արդարոյ կորուսանել ծր և՝ մեղօք զարդա-
րութիւն իւր, պարտ էր նմա մաքառել ընդդէմ երկիւ-
ղին Աստուծոյ՝ զոր ազդեն ընծորք՝ ի սիրտ նորա խոտո-
րել՝ ի չարէ և առնել զբարի, և ընդդէմ տերունա-
կան բանին (Ա Կ. ԺԲ. Ե.) “ Երկնչիլջիք յայնմանէ՝ որ
չէտ սպանանելոյ ունի իշխանութիւն արկանել՝ ի գե-
հեան ,, :

ԳԼՈՒԽ Դ

ՑԱՂԱԳՍ ՎԱՍՏԱԿՈՑ

Վաստակովք իմանամք զգործս արժանիս վարձուց,
այսինքն զգործս բարիս՝ որ՝ ի ընծորհաց, և՝ ի ընծորհս գոր-
ծին, որովք արդարն պպղաբերէ Աստուծոյ ըստ առաքե-
լոյն, և ստանայ իրաւունս՝ ի չաւելուած սրբարար ընծո-
հայ և փառաց, զորոյ ստոյգ առհաւատչեայ բերէ յան-
ձին :

Արդարանգք մերժեն զայսպիսի վաստակս, և չա-
նուանէ իսկ նոցա զարհուրին, համարելով զայնս հպար-
տութիւն անտանելի. զի ըստ նոցա մոլորութեանն՝ ա-
մենայն ընծորհք և արդարութիւն մարդոյ արտաքին ինչ
է, արդարութեանն ևեթ Քրիստոսի համարելով նմա
չարդարութիւն, և կալով ճնալով՝ ի նմա սկզբնական
մեղայ հանդերձ ամենայն ներգործութեամբք իւրով :

Ըստ այսմ՝ ամենայն որ և իցէ վաստակք մարդոյ անօ-
գուտք գտանին և թշնամանագիրք Քրիստոսի. քարե-

գործուԹիւնք նորա կամ ոչ ինչ հաճարին որպէս ապականեալք ցանկուԹեամբ, և կամ նշանք ևԹ արդարուԹեանն՝ ըստ հաւատովք ստանայ. յամենայնի մեղանչէ նա, և չկարէ զպատուիրանս Աստուծոյ պահել, բայց պատուիրանազանցուԹիւնք նորա ոչ համարին նմա ի մեղս վասն հաւատոյն որ ի Քրիստոս։

Սակ ուղղափառ վարդապետուԹիւն ուսուցանէ ըստ սահմանի տրիդենտեան ժողովոյն, զի "Որոց գործեն զբարիս մինչև ի վախճան, և յուսան յԱստուած՝ կեանք յաւիտենականք միանգ նոցա որպէս ընդոհք խոստացեալ որդւոց Աստուծոյ ըստ ողորմուԹեան՝ վասն Քրիստոսի, և որպէս վարձք՝ որ ըստ հաւատարիմ խոստմանն Աստուծոյ պատրաստեալ կան բարեաց գործոց և վաստակոց։ ... Եւ քանզի ինքն իսկ Քրիստոս որպէս գլուխ յանդամս իւր և որպէս որմ յուսս իւր ազդէ հանապազ յարդարս զօրուԹիւն, որ կարապետէ, զուգընԹացնայ և հետևի բարեգործուԹեանց նոցա, զի առանց այնր չմարԹին աստուածահաճոյ գոլ և վարձուց արժանի, պարտ է հաւատալ զի նովին իսկ գործովք՝ զորս գործեն տերամբ՝ ընուն զօրէնս Աստուծոյ ի կեանս յայսոսիկ, և յաւիտենական կենաց յիւրաւմ ժամանակի արժանի լինին ի շնորհս Աստուծոյ վախճանեալք։ ... Այս այսմ՝ ոչ իբրև մեր ինչ և ի մէնջ սահմանի արդարուԹիւն, և ոչ անգիտացեալ և ի բաց մերժի արդարուԹիւնն Աստուծոյ. որ և արդարուԹիւն մեր կոչի՝ զի նովաւ արդարանամք, և Աստուծոյ է՝ զի ի նմանէ վասն վաստակոյն Քրիստոսի հեղու ի մեզ։ Եւ ոչ զայն արժան է լսել, զի Թէպէտ և սուրբ գիրք այնչափ ինչ ընծայեն բարեաց գործոց՝ մինչև բաժակի միոյ ջրոյ յրտոյ մատուցելոյ ունել ի փոքրկանց ոչ Ճնալ անվարձ ըստ խոստմանն Քրիստոսի, և ըստ առաքելոյն՝ առժամայն ԹեԹև նեղուԹեանս մերոյ զառաւելուԹիւն յաւիտենական փառաց առանց համեմատուԹեան գործել ի մեզ, սակայն քաւ լիցի վստահել քրիստոնէի յանձն կամ պարծել յանձն և ոչ յԱստուած, որոյ այնչափ է մարդասիրուԹիւն՝ մինչև զպարգևս իւր համարել մարդկան ի վաստակս ,,։

Ի վարդապետուԹենէ աստի ի միտ առնուլ է նախ՝ զի արդարք իսկապէս արժանի լինին աՃման սրբարար

ընդհաց ՚ի նոսա, յաւիտենից կենաց և յաւելուածոյ փառաց։ Արկրորդ՝ զի արժանաւորութիւնս այս հաստատեալ է ՚ի ձրի ողորմութենն Աստուծոյ և ՚ի խոստումն, և ՚ի վաստակս Քրիստոսի՝ յորոց առնուն զամենայն զօրութիւն իւրեանց արդարոցն բարեգործութիւնք։ Այս երրորդ՝ զի վաստակք մեր պարգեւք են Աստուծոյ, որ տայ մեզ զներգործական և զկրեարար շընորհս, և որպէս տուրքն (Ընդ. Ճղճ. գլ. Ե. 19.) "Յորժամ Աստուած պսակէ զվաստակս մեր, ոչ այլ ինչ պսակէ՝ բայց զպարգեւս իւր,,։ Աստ ՚ի յայտ գայ թէ ուղղափառ վարդապետութիւն Հայոցս թեաւն արդեօք, որպէս նորատեղք զրպարտեն, թէ խոնարհութեան իցէ տածիչ։

Յառաւելագոյն բացայայտութիւն այսր վարդապետութեան՝ յերկուս զանազանեն աստուածաբանք զվաստակս, ըստ ածականէից և ըստ պատճէ։ Աստ առաջնոյն՝ որ ՚ի խոստումն Աստուծոյ է հաստատեալ՝ համարին վարձքն արդարութիւն, զի Աստուած իրովի պարտապան զինքն կացուցանէ հատուցանելոյ։ Ասկ ըստ երկրորդին, զի չիք ինչ արարեալ նորա խոստումն, համարին վարձքն ողորմութիւն. այլ երկաքանչիւր ձրի պարգեւք են Աստուծոյ։

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Զի արդարք գործովք բարւոց, զորս գործեն շնորհօք, արժանաւորին յաւիտենական փառաց և յաւելուածոյ նորին։

Սահման է տրիդենտեան ժողովոյ. "Որ ոք ասիցէ թէ ոչ է պարտ արդարոց վասն գործոցն բարեաց՝ զորս գործեալ իցեն ՚ի տէր՝ ակն ունել և յուսալ յաւիտենական վարձուց յողորմութենէն Աստուծոյ վասն վաստակոցն Քրիստոսի, թէպէտ և առնելով զբարիս և պահելով զպատուիրանս Աստուծոյ մինչև ՚ի սպառ յաւիտեանս, նզովեալ լիցի,,։ Եւ դարձեալ "Որ ոք ասիցէ զբարեգործութիւնս արդարոյ այնպիսի պարգեւս գոլ Աստուծոյ՝ զի ոչ ևս իցեն վաստակք բարեաց արդարոյն, կամ թէ արդարն գործովք բարեաց՝ զորս գոր-

ծէ հնորհօքն Աստուծոյ, և՛ ի ձեռն վաստակոյն Քրիստոսի՝ որով է անպատմ, ոչ արժանաւորի աշխատից հնորհաց, յաւիտենական կենաց, և հատանելոյ կենացն յաւիտենից՝ եթէ ՛ի հնորհս վախճանեսցի, և ս և յաւելուածոյ փառաց, նպաւեալ լինի ,, :

Ասյսմ ձշմարտութեան վկայեն յայտնապէս սուրբ գիրք ՛ի կոչելն պսակ արդարութեան, բրաբիոն, յաղթանակ, և վարձ՝ գկեանս յաւիտենից. քանզի ասէ առաքեալն (ք. Տիմ. գ. 7.) “Զքաջսն պատերազմին պատերազմեցայ, գընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի. այսուհետև կայ ինձ արդարութեան պսակն, զոր հատուսցէ ինձ տէր յաւուր յայնմիկ արդարն դատաւոր ,, :

Եւ դարձեալ (ա. կոր. թ. 24.) “Ոչ գիտէք եթէ որ յասպարիսին ընթանան՝ ընթանալ ամենեքին ընթանան. բայց մի ոք առնու գյաղթութեանն. այնպէս ընթացարուք, զի հասանիցէք ,, : Եւ դարձեալ (անդ գ. 8.) “Խրաքանչիւր ոք գիւր վարձս առնուցու ըստ իւրում վաստակոց ,, : Եւ դարձեալ (ժէ. 41.) առ՛ի ցուցանել զպանապանութիւն վարձուց արդարոցն ըստ չափոյ վաստակոց նոցա, ասէ. “Այլ փառք արեգականն, և այլ փառք լուսնի, և այլ փառք աստեղաց. և աստղ քան զաստղ առաւել է փառօք ,, :

Զնոյն ձշմարտութիւն և ՚ի բազում ամենայն ուրեք հաստատեն.

Պօղոս Երանելոյ (ընդդէմ հերձ. գիրք գ. գլ. լէ. 7.) “Պատուական համարեցայուք զպսակն, զոր պատերազմաւ է մեզ առնուլ ,, :

Տէրտուղիանոս (յղ. յարուցեան մարմնոյ. գլ. խը.) “Կարգ ոչ այլ ինչ է, բայց վաստակոց դատակարգութիւն. և քանզի վաստակք՝ մարմնոց և ս համարին, հարկ է զի և մարմնոց իցէ կարգ՝ որպէս զի լինի և վաստակոց ,, :

Զոլեալ՛ի բայց զայլ ամենայն անհամար բանս ՚ի բազց, զորոյն ( )գոստինեայ և եթէ յաւելումք, որ հինն ՛ի վեր տապալել զվարդապետութիւն հերեսիոլոգոց. (յղ. Քաոյ եկեղ. գիրք ա. գլ. իբ. 35.) “Յաւիտենական կեանք է մըցանակն բովանդակ, որոյ խոստմամբն բերկրիմք. և ոչ է մարթ մըցանակին կանխել քան զվաստակս, և ոչ յաւաջ քան զարժանաւորութիւն պար-

գևի մարդոյ ։ Վասնզի զինչ անիրաւ քան զայն կայցէ, և զինչ արդարագոյն քան զայն Աստուծոյ ։ Ապա ոչ է մեզ արժան խնդրել զվարձ, մինչ չև արժանի լեալ այնմ ,, ։

Նա ժողովին Ր. արաւսեան ասէ՝ի վերինս իւր. ,,Պարտին վարձք գործոց բարեաց, եթէ գուցեն. այլ ընծրհք, որ ոչն պարտին, կանխեն զի գուցեն ,, ։

Նա աստուածաբանօրէն իսկ յայտ է Ճշմարտութիւնս այս. զի եթէ ամենեցունն խոստովանութեամբ՝ գատելոց է Աստուած զամենեսին, զինչ է գատաստան՝ բայց քննել զվաստակս և զյանցանս առ՝ի հատուցումն. զի որպէս տուրքն ( )գոստինոս ասէ. (ընդ. մեծ. — վասն. 4.) ,, Իբր ոչ եթէ չիցեն վաստակք արդարոց կամ յանցանք մեղաւորաց. ապա թէ ոչ՝ զիա՞րդ գատեսցի Աստուած զաշխարհ ,,. քանզի ասէ առաքեալն (բ. կոր. Ե. 10.) ,, Ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի աթենին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով՝ զոր ինչ գործեաց յառաջ, եթէ բարի և եթէ չար ,, ։

ԱՌԱՔԻՆԹԻՆՔ

Հարկ. ա. — ա. Կեանք յաւիտենից ըստ գրոց՝ է ժառանգութիւն. իսկ ձառանգութիւն ըստ իրաւանց որդեգրութեան եւեթ կամ որդեգրութեան պարգեւ ։ Վարձեալ է և ողորմութիւն ըստ սաղմոսերգուին (ճծ.) ,,Պատկէ զքեզ ողորմութեամբ և գթութեամբ ,, ։ — բ. Վարձեալ՝ է և ընծրհք, որպէս առաքեալն ասէ. ,,Ո՛չ թոշակն մեզաց մահ է, այլ ընծրհքն Աստուծոյ կեանք յաւիտենից ,, . ապա ուրեմն ձրի պարգեւ, և ոչ ըստ վաստակոց ։ — գ. Անաւանդ զի Քրիստոս զամենայն վաստակս՝ի բայ տանի յասելն (Ա կ. ԺԷ. 10.) ,,Ցորժամ առնիցէք զամենայն հրամայեալսն ձեզ, ասասջիք թէ ծառայք անպիտանք եմք, զոր պարտէաքն առնել արարաք ,, ։ — դ. Եւ՝ի ձեռն մարգարէին ոչ միայն անպիտան զամենայն արդարութիւն մեր ասէ, այլ և պիղծ. ,,Իբրև զհանդերձս ապարահից ամենայն արդարութիւն մեր ,, . (Եսայ. կդ. 6) ։ Ապա ոչ վարձուց են արժանի գործք մեր, այլ պատժոյ պատուհասի ։

պխ. — ա. Կեանք յաւիտենից կոչին ոչ միայն ժառանգութիւն, ողորմութիւն և ընծրհք, այլ և պսակ և վարձ որպես ցուցաք ի վեր անդր. ապա ըստ երկուցն և ա նշանակութեան պարզևին, ըստ ժառանգութեան և ըստ վարձուց, և երկրորդն հաստատի յառաջինն: Ըստ այսմ լիա և զպատակելն ողորմութեամբ:

Վարձեալ որդիք և եթ ըստ իրաւանց ունին զժառանգութիւն, իսկ որդեգիրք պայմանաւ. և պայմանն որդեգրութեանս մերոյ է ըստ առաքելոյն, զի "եթէ չարչարանաց նորա կցորդ լինիցիմք, և փառաց նորա հաղորդ լինելոց եմք":

— բ. Ընդհանուր վաստակք մեր ընծրհօքն Աստուծոյ սկսանին և ի նա հաստատեալ կան, և ըստ այսմ կոչին ընծրհք, և ոչ առ ի բաց մերոյ ել զործակցութիւն մեր: Ապրոյն ( )զոստինեայ են բանքս (յղ. ընծրհայ և պղպոջ. ընդան. գլ. ը և թ.) որ և յաւելու զի մարթի իսկ եր առաքելոյն ասել ընդդէմ արդարունեան զկեանս յաւիտենից, որպես ասէ իսկ այլուր զնոյն ըստ իմաստից (կո. ը. 6.) "Որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց, որ համբերութեամբ են ի գործս բարութեան, զփառս և զպատիւ և զանեղծութիւն խնդրեն, զկեանն յաւիտենից":

— գ. Ոչ զվաստակս գործոց բարեաց ի բաց մերժէ Քրիստոս, այլ զպարծենողութիւն. ապա թէ ոչ, յաւէր այլուր (Ա՛ղ. իե. 23.) "Ընկնիւ՝ ծառայ բարի և հաւատարիմ, որովհետև ի սակաւուց հաւատարիմ եղեր՝ ի վերայ բազմաց կացուցից զքեզ": Նա ոչ առաքեալն ասէր զարդարոյ (ը. Տիմ. ը. 21.) "Ընկնիցի ա նօթ պատուական, սրբեալ և պիտանի տեառն իւրում":

— դ. Իսկ մարգարէն զկեղծաւորացն արդարութենէ ասէ զայդ. զի զարդարոցն ասէ յառաջագոյն. "Ընդ առաջ լեցի այնոցիկ, որք առնեն զկրաւունս":

Ընդդէմ. Բ. Քրիստոս վաստակեաց վասն մեր զկեանն յաւիտենից, ապա ընդունայն են վաստակք մեր, և նոյնպէսն Թէոդորոս՝ որպէս թէ չէին բաւական:

պխ. Քրիստոս ըստ այնմ վաստակեաց վասն մեր զկեանն յաւիտենից, զի ընկալաւ վասն մեր շնորհս՝ որոց գործակից լինելով կարեմք հաղորդս լինել վա-

տակոյ նորա, և հասանել կենացն յաւիտենից։ Այսու զՀետ գայ, զի ոչ ընդունայն և ոչ ի շնամանաւոր Հրեշտասի են վաստակք մեր, որ՝ի վաստակոց նորա ընդունին զարժանաւորութիւն իւրեանց։ Այնքա՜ն են ապա վաստակք Հրեշտասի և առաւելեալ յոյժ քան զբաւականն. այլ առ՝ի լինել օգտակար մեզ, Հարկ է զի՝ի ձեռն գործոց բարեաց Հաղորդս լինցուք վաստակոց նորա։

Յոարկ. Գ. Ձարք բազում ուրեք ուսուցանեն՝ զի յաւիտենական կեանք ձրի պարգեւք Աստուծոյ են. և յիրաւի, զի առ արժանաւորութիւն խնդրի Համեմատութիւն ընդ գործն և ընդ վարձ. իսկ ընդ գործս արդարոյ և ընդ կեանս յաւիտենից չիք Համեմատութիւն, որպէս և առաքեալն ասէ (Հռ. Ը. 18.) "Ոչ են արժանի չարչարանք ժամանակիս Հանդերձելոց փառացն, որ յայտնելոց են՝ի մեզ"։

Պհ. Ոչ ասի այսորիկ Ձարք ձրի պարգեւս Աստուծոյ կոչեն զյաւիտենական կեանս, զի առանց ինչ կանխիկ վաստակոց և արժանեաց ինչ մերոց ետ մեզ Աստուած ընարհս՝ որով կարեմք Հասանել այնմ։ Ընդ գործս արդարոյ և ընդ յաւիտենական կեանս չիք արդարև Համեմատութիւն, ոչ ըստ տեղութեան և ոչ ըստ Հաւասարութեան, որպէս խնդրի առ իրաւակիւռ արդարութիւն։ Այլ արդարութիւն, զորմէ մեր բանքս են, Հաստատեալ է յառաստապարգև խոստումն Աստուծոյ. վասն որոյ ասէ սուրբն Քրիսոստոմոս (բան ժէ. յղ. էաՆէց առաք. գլ. Ը. 2.) "Ետ այսմ մարթ է մեզ թանձել զտէր մեր և ասել. Հատո մեզ զոր խոստացար, զի արարաք զոր Հրամայեցեր. և զայս դու ինքն արարեր, զի օգնեցեր վաստակողացս"։

ԳՕԴՈՒԱԾ Բ

Որ ինչ առ վաստակս կարևոր պայմանք։

Որպէս առասպաքս՝ կրկին են վաստակք, ըստ արժանեաց և ըստ պատշաճի։ Այս վաստակս ըստ արժանեաց երկու ինչ խնդրին՝ի կողմանէ գործողին։ Այն՝ զի իցէ ուղղաւոր, այսինքն չև ևս գրաւեալ՝ի կենաց. քանզի ոչ

՝ի գժոխս, ոչ ՝ի քաւարանի, և ոչ յարքայութեան մարթ է ապաժանաւորել իմիք։ Եւ միւս ևս՝ զի կայ ՝ի հնոյհս, քանզի գրեալ է (Ծն. գ. 4.) "Ոչ մեռցաւ տեր յաւրէնէ, և՝ ի պատարագս նորա. և՝ ի կային և՝ ի զոհս նորա ոչ նայեցաւ ,,։

Պաւղինն յայտ է՝ ի բանից փրկչին (Յոհ. գ. 4.) "Պայ գիշեր, յորժամ ոչ ոք կարէ գործել ,,։ Եւ առաքեալն ասէ (գաղ. գ. 10.) "Որովհետև մինչդեռ ժամանակս՝ ի ձեռս է, գործեսցուք զբարիս ,,։

Նոյն երկրորդն յայտ է դարձեալ՝ ի տէրունեան բանէն (Յոհ. ԺԵ. 4.) "Որպէս ոտն ոչ կարէ պտուղ բերել յանձնէ իւրմէ՝ եթէ չիցէ հաստատեալ յորթն, նոյնպէս և դուք՝ եթէ ոչ յիս հաստատեալ լիցէք ,,։ Եւ առաքեալն ասէ (ա. Կոր. ԺԳ. 3.) "Եթէ ջամբից զեմ զամենայն ինչս իմ աղքատաց, և մատնիցեմ զմարմին իմ յայրուիլն, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ օգտիմ ,,։

Ի գործոյն ևս կոչմանէ խնդրին երկու ինչ. մի՝ զի լիցէ ազատ ՝ի հարկէ, և միւս ևս՝ զի լիցէ գերբնական։ Պաւղինն յայտ անտի է՝ զոր յաղագս արգասեաց սիրգբնական մեղաց ասացաք. վասն որոյ և դատապարտեալ է յեկեղեցւոյ հակառակ վարդապետութիւն Յանսենիոսի՝ որ ասէրն. "Ընդ արժանի կամ անարժան լինել լոյ՝ ի պայմանի անկեալ բնութեանս՝ ոչ է կարեւոր ազատութիւն ՝ի հարկէ, այլ շատ իսկ է ազատութիւն ՝ի բռնադատութենէ ,,։

Նոյն երկրորդն յայտ է յասացելոցս յաղագս լինելութեան մարդոյ, և յաղագս կարեւորութեան հնոյհացն՝ զի գործն գերբնական առնու զէութիւն իւր եթէ ՝ի պատճառէն՝ այսինքն ՝ի ներգործական հնոյհացն, և եթէ ՝ի վախճանէն՝ այսինքն ՝ի դիմելոյ առ Ստուած որպէս արարիչ գերբնական կարգի. քանզի աստի յառաջ գայ համեմատութիւն գործոյն ընդ յաւիտենական կեանս։

Ասեմք, ընդ որս և ասելք Պաւղինացին, և երրորդ ինն պահանջեն պայման. այսինքն զի յաստուածսիրութենէ յառաջ գայցէ գործն, ըստ բանին Յակոբայ առաքելոյ. (ա. 12.) "Երանեալ է այր՝ որ համբերիցէ փորձանաց. զի եթէ ընտիր ևս գտանիցի, առցէ զպսակն կենաց՝ զոր խոստացաւն տէրէն իւրոց ,,։

Դարձեալ և յաստուածակոյս կողմանէ խնդրի խոստումն. և այս յայտ անտի է՝ զի բազում ուրեք՝ ի սուրբ գիրս խոսպոհ և աւետիս կոչին յաւիտենից կեանք. որպէս այն՝ զոր ասէ առաքեալն (Եբր. ՟Ը. 12.) "Նմանօրինակ եղեւրուք այնոցիկ, որ հաւատովքն և երկայնմտութեամբ ժառանգեցին զաւետիսն ,,: Եւ դարձեալ. (Ժ. 36.) "Պիտոյ է ձեզ համբերութիւն, զի զկամս Աստուծոյ արարեալ՝ հասջիք աւետեացն ,,:

Ասյս և յԵութենէ իսկ վարձուցն յայտ է. զի Աստուած ըստ խոստման ևեթ իւրում պարտական է հատուցանել զայն: Եւ նորք ևս ամենայն ուրեք խոստումն կոչեն զայն, և յեկեղեցական գիրս ստէպ աղօթեմբ վասն արժանի լինելոյ անճառ խոսպանացն:

Նոյն պայմանք խնդրին և առ վաստակս ըսդ պարգեւճէ. բայց միայն զի զայսոսիկ մարթ է ունել և որոց ոչ՝ ի ընտրս Աստուծոյ կայցեն. և զի չիք ուրեք խոստացեալ նոցա վարձ առ՝ ի Աստուծոյ. վասն որոյ մաղթողականք ևեթ են յԵութենէ իւրեանց վաստակք այսպիսիք:

ԳՕԴՈՒԱԾ Գ

Գաղափ թէ որ ինչ իրաց կարէ որ արժանաւոր լինիլ վաստակովք:

Նրկուց իրաց կարէ մարդ՝ ի ձեռն վաստակոց լինել արժանի, ընտրհաց և փառաց:

Յուցաք՝ ի վեր անդր, զի մարթ է արդարոյ արժանաւորել երկնային փառաց և յաւերժուածոյ նորին:

Իսկ յաղագս ընտրհայ յայտ է նախ՝ զի չկարէ մարդ առանձնոյ ներգործական ընտրհի արժանաւորել, զի ձրի է սա ամենևին: Նրկրորդ՝ զի ոչ է մարթ ունել վաստակս ըստ արժանեաց առ սրբարար ընտրհս, որպէս առաքեալն ասէ (Հռ. ՟Ը. 24.) "Նրդարանան ձրի նորին շնորհօք ,,: Նրրորդ՝ զի մարթ է արդարոյ ունել վաստակս ըստ արժանեաց առ՝ ի յաւերժուած սրբարար ընտրհայ ըստ սահմանելոյ տրիդենտեան ժողովոյն: Եւ եթէ կարէ արդարն արժանի լինել անճման սրբարար ընտրհաց, նովին իսկ ստանայ իրաւունս առ ներգործական

ընորհս կարևորս ՚ի կատարումն գործոց քարեաց, որոց
ջնետ գայ և յաւելուած երկնային փառաց։ Որպէտ՝
զի չէ մարթ արդարոյ ունել վաստակս ըստ արժանեաց,
ոչ առ գործառնեայ ընորհս և ոչ առ պարգև յարատևու-
թեան. զի չիք խոստումն Աստուծոյ զայսցանէ. այլ ՚ի
յարգել մարդոյ զընորհս Աստուծոյ հաւատարմագար՝
արժանի լինի այնոցիկ ըստ պատշաճի անվրէպ։ Ընդ-
գերորդ՝ զի մեզաւորն Թէպէտ և չկարէ արժանաւոր
լինել սրբարար ընորհաց, այլ կարէ ընդունել զայն ըստ
պատշաճի յոլովմանէ Աստուծոյ՝ որ ոչն երբեք
կամի զմահ մեզաւորին, և ընորհէ զԹողութիւն մեզաց
որոց միանգամ ՚ի սրտէ դառնան առ նա, և գործեն
ընորհօք նորա զոր ինչ կարեն՝ առ ՚ի մտանել ՚ի ճանա-
պարհ փրկութեան. որպէս Ասացեալ խրատեր զՆա-
բուզոնոսոր՝ զմեզս իւր ողորմութեամբք քաւել։
Այսպէս ապա զարդարութիւն, որ ամենևին ձրի ընորհք
ողորմութեանն Աստուծոյ է, կարէ մեզաւորն ընդու-
նել անվրէպ ՚ի խնդրել իւրում զայն բոլորով սրտիւ
յԱստուծոյ։ Ասացոյց զայսմ սուրբն Ոգոստինոս. “Զի
ոչ Թողութիւն՝ մեզաց առանց ինչ վաստակոյ է, եթէ
հաւատով ոք զայն խնդրիցէ ,,։

Խնդիր է առ աստուածաբանս՝ Թէ արդեօք մարթ
իցէ արդարոյ ընդունել ըստ արժանեաց զառաջին ընորհս
վանն այլոյ։ Զիք երկբայել ընդ փրկիչն մեր, զի նա
միայն ընկալաւ ըստ արժանեաց և զառաջին ընորհս
վանն մեր։ Սակ յայտ գայ սրբոց արդարոց՝ հաստարակաց
կարծիք են, զի մարթ իցէ նոցա ՚ի ձեռն վաստակոց
իւրեանց ընդունել ըստ պատշաճի զընորհս գարձի վանն
այլոյ ուրուք, Թէպէտ և ոչ անվրէպ. որպէս սուրբն
Աստեփանոս ընկալաւ վանն Պօլոսի, և սրբուհին Մո-
նիկա վանն որդւոյ իւրոյ սրբոյն Ոգոստինոսի. վանն
որոյ սուրբն Յակոբոս յորդորէ զհաւատացեալս (Ե. 15.)
աղօթել վանն միմեանց. “Բանիւ յոյժ զօրաւոր են
աղօթք արդարոյ յօգնականութիւն ,,։ Նա սակրու-
թիւն կալաւ ՚ի սուրբ եկեղեցւոջ աղօթել վանն գար-
ձի մեզաւորաց։

ՑՕԴՈՒԱԾ Դ

Բաղագս պատճառաց սրբարար շնորհաց։

Վախճանական պատճառ արդարութեանս մերոյ են փառքն Աստուծոյ և Քրիստոսի, ի ժառանգել մեր նոր վաւ զկեանն յաւիտենից։ Ընդարձակ պատճառ է ողորմութիւնն Աստուծոյ, որ սիրէ զմեզ ձրի շնորհօք օծեալ և կնքեալ ի ձեռն Հոգւոյն սրբոյ՝ որ է առհաւատչեայ ժառանգութեանս մերոյ։ Ընդժանաւորական պատճառ է Քրիստոս փրկիչն մեր, որ մարդասիրութեամբն իւրով զընդարձակն և զմահ յանձն առեալ վասն մեր՝ հաշտեցոյց զմեզ վաստակօքն իւրովք ընդ Հօր։ Տեսական պատճառ է արդարութիւնն Աստուծոյ, ոչ այն՝ որով ինքն է արդար, այլ որով զմեզն արդարացուցանէ՝ հաստեալ ի մեզ սիրա սուրբ, և հոգի ուղիղ նորոգեալ ի մեզ. որով ոչ միայն հաւանարիմք արդար, այլ և լինիմք իսկապէս՝ ընկալեալ զարբարար շնորհս ըստ չափոյ պարգեւացն Աստուծոյ և ըստ իւրաքանչիւր ուրուք ի մէնջ գործակցութեան։ Ակն գործիական պատճառ՝ սուրբ մկրտութիւնն, և այլ խորհուրդք եկեղեցւոյ՝ զորս սահմանեաց Քրիստոս ի փրկութիւն մեր, և զորոց միայ մեզ ձառել։

Եւ արդ քանզի առանց շնորհացն ոչ փրկութեան հասանել կարեմք, և ոչ բարի ինչ առնել, Առանց իմ ոչ ինչ կարէք առնել. և զի գարձեալ ոչք խնդրեմն՝ առնուն զայն, Որ խնդրէ առնու. Որ ինչ խնդրէիցէք յանուն իմ՝ առնիցէ. ապա ուրեմն հայր երկնաւոր՝ յանուն միածնի որդւոյ քո տուր շնորհս ամենեցուն մեզ՝ զրոցիս և ընթեռնելոցդ՝ առնելոյ զկամս քո, զի երկնից արքայութեանդ ընդ կամարարս քո լիցուք արժանի։

ՃԱՌ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՑԱՂԱԳՍ ԽՈՐՀՐԴՈՑ ԱՌՀԱՍԱՐԱԿ

Խորհուրդ է զգալի ինչ սահմանեալ յԱստուծոյ առ՛ի նշանակել և ներգործել զսրբութիւն մեր։ Յատաւ՛ի է ըլլ և՛ի հին օրէնս գոյին ինչ խորհուրդք. զի ժողովոյ ամանց և սրբոց Իւրոց առհասարակ ասել՝ թէ խորհուրդք նորոյ ուխտիս գերազանցեն զօրութեամբ և սրբութեամբ քան զհինոյ ուխտին՝ քաջայայտ առնէ զայն։ Եւ սուրբն ( )գոստինոս ասէ. "Խորհուրդք հին օրինաց խափանեցան՝ լցեալ՛ի գալստեանն Քրիստոսի, և զառեղի նոցա կալան այլք նուագունք թուով՝ այլ առատ զօրաւորք, առաւել օգտակարք, և առաւել դիւրինք հաւատացելոց"։ Զի խորհուրդքն այնոքիկ փոքր փայտ և աղտոտ էին ըստ առաքելոյն. բերէին զօրինական սրբութիւն, նշանակելով և ոչ զսրբարար շնորհս և ոչ ներգործելով։ Քանզի և թլփատութիւն, որ յառաջ իսկ էր քան զօրէնս,՛ի հաւատս ծնողաց մանկտւոյն ունէր զիւրն զամենայն զօրութիւն. և հաւանելի իսկ է՝ զի ոչ առ՛ի ջնջել զսկզբնական մեղս էր սահմանեալ, վասն զի արուայ ևեթ էր, այլ յորոշումն աբրահամեան տոհմին յայլոց ազգաց. զի և յանապատին ոչ թլփատէր մանկտին։

Զօրազանդք, որք զարդարութիւն մարդոյ կացուցանեն՛ի չհամարել ևեթ Աստուծոյ զյանցուածս նորա՛ի մեզս, համարին թարմատար նշանակս զխորհուրդս՝ որ զարթուցանեն ևեթ զհաւատս, յայտ առնեն եկեղեցւոյ զհաւատս ընդունողաց զայնոսիկ, և հաւատարիմ առնեն արդարոց զհաւատս իւրեանց և զխոստմունս Աստուծոյ։ Նոքա սովինեանք և այլք ոմանք յաղանդաւո-

*րաց Հաւատոյն զայնոսիկ նշանակս լինել զանազանու-
Թեան Հաւատացելոց յանհաւատից։*

*Եւ քանզի ըստ այսոցիկ մելորութեանց սոքա ամե-
նեքին քառնան զընտրհս և զկարևորութիւն խորհրդոց,
վասն որոյ և՛ ի Թիւ նոցին և՛ ի պաշտօնեայս և՛ ի ձև
մատակարարութեան նոցա առաւել կամ նուազ գտա-
նին մելորեալ։ Ի ցուցանել մեր զուղղափառ վարդապե-
տութիւն, այս ամենայն մելորութիւնք ինքնին եղծանին։*

ԳԼՈՒԽ Ա.

ՅԱՂԱԳՍ ԹԷ ՔԱՆԻ՛ ԵՒ Ո՛ՐՔ ԻՑԵՆ ԽՈՐՀՈՒՐԴՔ Ի ՆՈՐ ՕՐԻՆՍ

*Եօթն են խորհուրդք յաւետարանական օրէնս, ոչ
աւելի և ոչ նուազ. այսինքն են՝ մկրտութիւն, դրոշմ,
հաղորդութիւն, ապաշխարութիւն, վերջին օծումն,
կարգ քահանայութեան, պսակ։ Ո՛չ այս այսպէս վըճ-
ռեաց ժողովն տրիդենտեան ընդդէմ նորաղանդից հան-
դերձ նզովիւք։ Ի ձառել անդ զնւրաքանչիւրոցն՝ տես-
ցուք, զի՛ ի սուրբ գիրս և՛ ի վարդապետութիւն Հարց
հաստատեալ է վճիռ ժողովոյն։*

*Ա՛ռաքելական հաստատուն աւանդութեամբ հասին
առ մեզ եօթանեքին խորհուրդքս այսոքիկ. և այս աւեթ
շատ է յապացոյց ուղղափառ վարդապետութեան՛ ի
հաստատութիւն նոցին։*

*Ա՛ման է դարձեալ հաւատոց, զի խորհուրդքս այսո-
քիկ՛ ի Ա՛րիստոսէ սահմանեալ են. զի ասէ առաքեալն
(ա. կոր. ՟ի. 1.) "Ա՛յսպէս համարեսցին զմեզ մարդիկ
իբրև զպաշտօնեայս Ա՛րիստոսի և հազարապետս խոր-
հրդոցն Ա՛ստուծոյ։" Ո՛չ թէ իշխանութիւն, զոր ետ Ա՛րիս-
տոս առաքելոց, էր՛ ի մատակարարել եւեթ և ոչ՛ ի սահ-
մանել խորհուրդս. զի Ա՛ստուծոյ միայնոյ էր տալ նիւ-
թական իրաց և արարողութեանց զօրութիւն բերելոյ
ընտրհս։*

*Ի հաւատոց է դարձեալ՝ զի և նիւթք ամենայն խոր-
հրդոց, և ձևք մկրտութեան և հաղորդութեան՝ ի
Ա՛րիստոսէ սահմանեալ են. թողեալ առաքելոց և է-
կեղեցւոյ սրբոյ սահմանել զաղօթս և զարարողութիւնս

նոցա, և զձեւս իսկ այլոց հնոցեցունց խորհրդոց։ Օ՜ա-
նազանութիւն արարողութեանց և աղօթից՝ որ յայլ
և այլ եկեղեցիս՝ ոչ միայն ոչ ինչ ստնանկ վաւերակա-
նութեան խորհրդոց, այլ և ապացոյց մեծ է նմին՝ միա-
բանելոյ ամենեցուն յէական մասունս նոցին։

Աւօթանեքդ մեք խորհրդովքս խնամ կալաք Աքրիս-
տոս ընդ զամենայն հոգեւոր պետս մեր։ Աանզի միաբա-
նութեամբ վերածնանիմք ի հնարհս. դրոշմն զօրացու-
ցանէ զմեզ ի հաւատս, և ընդդէմ փորձութեանց. հա-
զորդութիւն մնուցանէ զմեզ հոգեպէս, տալով աճե-
ցումն հոգւոց և զարգացումն յառաքինութեան. ապաշ-
խարութիւն սրբէ զմեզ ի նեղգործական մեղաց. վեր-
ջին օծումն սրբէ զմնացուածս մեղաց, և զօրացուցանէ
ի տառապանս և ի տագնապ մահու զհոգի և զմարմին.
կարգ քահանայութեան պատրաստէ պաշտօնեայս ե-
կեղեցւոյ. իսկ պսակն տայ ամուսնացս հնարհս սրբու-
թեամբ զպարտս իւրեանց առ իւրեարս և առ որդիս կա-
տարելոյ, և օգնելոյ ի միաբանութիւն եկեղեցւոյ։

Օ՜ զօրութիւնս զայսոսիկ եօթանեցունց խորհրդոց
այսպէս բացատրէ սուրբ Աղուանացին։ Աարդ ի հո-
գւոյ և ի մարմնոյ բաղկացեալ, որ ինչ պետս ունի ըստ
մարմնոյ, նոյն և ըստ հոգւոյ պէտք են նմա։ Աստ մար-
մնոյ հարկ է նախ՝ զի ծնանիցի, երկրորդ՝ զի զօրացի
աճմամբ, երրորդ՝ զի մնանիցի, չորրորդ՝ զի բժշկեսցի
ի հիւանդանալն, հինգերորդ՝ զի յետ բժշկութեանն
կազդուրեսցի ի տկարութենէ դեղովք, վեցերորդ՝ զի
յընկերական կեանս կարօտի հոգաբարձուաց, եօթնե-
րորդ՝ զի պահեսցի յաջորդութիւն ազգի մարդկան։ Աստ
այսմ օրինակի վերածնանի հոգին միաբանութեամբ՝ ի
հնարհս Աստուծոյ, աճէ և զօրանայ դրոշմաւ, մնանի
սուրբ հաղորդութեամբ, առողջանայ ապաշխարու-
թեամբ ի հիւանդութենէ մեղաց. ի մնացուածոյ հի-
ւանդութեան կազդուրի վերջին օծմամբ. կարգ քա-
հանայութեան տայ ազգի մարդկան յանձանձիչս հո-
գւոյ, և պսակ ի ձեռն բարեպաշտ և քրիստոնէական
դաստիարակութեան յաջորդութիւն եկեղեցւոյ։

Աայց Թէպէտ և եօթանեքին իսկ խորհուրդք առ
ի փրկութիւն մեր սահմանեալ են, սակայն ոչ ամենե-
քեան հաւասարք ըստ բարձրութեան և ըստ արժանեաց,

և ոչ ամենեքեան ամենեցուն կարեւոր, և հաւասարապէս պաշտելի։ Արդէն տուրբ հաղորդութիւնն, զի քերէ իսկապէս զմարմին և զարիւն Քրիստոսի՝ զինքն իսկ զտուիչ սրբութեան, ՚ի վեր է քան զամենայն խորհուրդս. նոյնպէս և կարգ քահանայութեան, զի պէր ՚ի վերոյ ամբառնայ զնուիրեալն։ Նոյնպէս և կարեւորութեան, նախ և առաջին անհրաժեշտ կարեւոր ամենեցուն ՚ի փրկութիւն՝ է մկրտութիւն. և յետ մկրտութեան ՚ի մահացու մեղս անկելոյ՝ ապաշխարութիւն. և կարգ քահանայութեան կարեւոր եկեղեցւոյ, զի նովաւ գրեթէ այլ ամենայն խորհուրդք կատարին։

Ա. ՈՒԱՐԿՈՒԹԻՒՆ

Ա՛տ. ա. Ել ուրեք ՚ի տուրբ գիրս եօթն խորհուրդք տահմանին. և Ջալք մերթ երկուս և մերթ երիս խորհուրդս աւանդեն. զի տուրբն Յուստինոս (՚ի Ջապաֆով. ա՛. 65.) զմկրտութիւն ևեթ և զհաղորդութիւն յիշատակէ. նոյնպէս և տուրբն Կիւրեղ Երուսաղեմի ՚ի կոչումն ընծայութեան, և այլք ՚ի Ջարց. վան որոյ և զկողաձոս արիւնն և զջուր իմանան ՚ի նշանակ երկոցունց խորհրդոցն։

Պե. Ել է հարկ՝ զի տուրբ գիրք և Ջալք զհամարողական թիւն եօթն ՚ի կիր առնուցուն ՚ի տահմանել զխորհուրդս, այլ շատ է՝ զի զմիոյ միոյ յեօթանեցունց խորհրդոց խօսին յայտնապէս. ոչ զբաւուց են մեզ խընդիրք, այլ զիրաց։ Վասն որոյ եկեղեցի տուրբ ըստ հինաւանդ իմացուածոյ տուրբ գրոց՝ եօթն խորհուրդս ընկալաւ և մատակարարեաց յամենայն ժամանակի։

Ել է Ջարց ոմանց զերկուս կամ զերիս ևեթ ՚ի խորհրդոց յիշատակել, և այլ ՚ի քաց մերժել զայլսն՝ զոր ոչ ուրուք ՚ի Ջարց գտանի արարեալ։ Յուստինոս և այլք զի զերկուց զայնցանէ Ջառէին ընդդէմ հեթանոսաց, զերկուս ևեթ զայնոսիկ յիշատակեն. և զմկրտութիւն և զհաղորդութիւն՝ որ գլխաւորք յեօթանեցունցն են՝ վայելչապէս ցուցանեն նշանակեալ ջրովն և արեամբ բղխեցեալ ՚ի կողէն Քրիստոսի. այլ տուրբն Ամբրոսիոս և այլք ՚ի Ջարց զամենայն իսկ ընդխորհուրդս ՚ի կողէն Քրիստոսի ասեն բղխեալ։

Ա՛տաբէն. Բ. — ա. Յոյնք և արևելեայք առհասարակ՝ ի ժԲ. դարու յաւուրս խաչակրաց՝ ի լատինացւոց անտի ընկալան զխորհուրդս, այլ ոչ զեօթանեսին իսկ։ — բ. Ո՞ի որպէս վկայեն Ա՝իսիոնարքն անուանեալք քահոլիկք, և Ա՝ոսիա և Պաուիդն և Լ՝ուդովիկոս Յոբ և Ա՝ի եխաերիոս Լ՝աքրոզ՝ Յոյնք և Հայք և Նեթուվեպացիք և խաւիշիկք ոչ զամենայն խորհուրդս ընկալան։ — գ. Եւ չեն ինչ զարմանք. զի չև ևս յայնժամ բացայայտակի սահմանեալ էր եօթն Թիւ խորհրդոց. և ոմանք յաստուածաբանից զդրոշմ և զվերջին օծումն ոչ ի Քրիստոսէ համարին սահմանեալ. իսկ զայսոսիկ՝ բոլորովին ի քաց թառնան Յակոբոս վիտրիակեան, Պաուանդա և այլք։ — դ. Ա՝ան որոյ Ա՝իբէլ Լ՝ուկար պատրիարքը Կոստանդնուպօլսի վկայէ (պատ. հատ. յօդ. ԺԶ.) զի "Յոյնք յամենայն ժամանակի հաստատուն վարդապետութեամբ երկուս և եթ խորհուրդս ընկալան, զմկրտութիւն և զՀաղորդութիւն, ի Քրիստոսէ սահմանեալ,,։

Պե. — ե. Յայտնի և անժխտելի ապացոյցք առ ձեռն կան, զի կարի իսկ յառաջ քան զԺԲ. դար՝ էին և յարևելս եօթանեքին խորհուրդք եկեղեցւոյ ընկալեալ՝ ի Յունաց, ի Հայոց և յայլոց ազգաց հաւատացելոց։ Պարձեալ զի և քան յայլ ամենայն ժամանակս՝ յաւուրս խաչակրաց տարաձայնութիւն էր Յունաց ընդ Հռոմայեցիս. վասն որոյ յունական եկեղեցւոյ, որ գԼատինն ե յարևելեայս, չէր մարթ ընդունել յայնժամ զխորհուրդս ի լատինացւոց։

— զ. Ա՝պաքէն Ա՝իսիոնարք և այլք ոմանք ամբաստանեցին զարևելեայս՝ իբր թէ ոչ ամենայն խորհուրդք էին առ նոսա ընդունելի։ Ա՝յլ քաջայայտ է գիտնոց, զի նոքա՝ ի զանազանութենէ արարողութեանց և ծիսից և՝ ի վարկպարապի համբաւոյ խաբեալ՝ ամբաստան եղեն. իսկ Լ՝ուդովիկոս և Լ՝աքրոզ աղանդաւորք խաբել զայլս կամեցան, որպէս քաջ նշաւակեն գնոսա Ա՝լատինս և Ֆռենաւդոտ։

— է. Ոմանք յաստուածաբանից եթէ ոչ՝ ի նմին իսկ՝ ի Քրիստոսէ համարին զոմանս՝ ի խորհրդոց սահմանեալ, այլ ընդունին ամենեքեան՝ զի և այնք՝ ի ձեռն առաքելոց դարձեալ՝ ի Քրիստոսէ են սահմանեալ, և

միաբանին՝ ի Թիւ եօթանց։ Եւ Յակոբոս իսկ վիտրիա-
կեան և Պորանդոս գնոյն Թիւ ընդունին, բայց միայն
զպատակ՝ ի դեղ ևեթ ցանկութեան համարին սահմա-
նեալ։

— Դ. Իսկ Լուկար կաշառակուբ՝ ի Հոլլանդացւոյ՝
զմելորական դաւանութիւնն զայն իբրև՝ ի վիմաց եկե-
ղեցւոյն Յունաց հրատարակեալ, գատապարտեցաւ՝ ի
ժողովն Երուսաղէմի յամին 1672, նախագահութեամբ
յաջորդի նորին Երեմիայի պատրիարքին Կոստանդնու-
պօլսի. ուր յամենի եղեն նորագանդք, չարաչնար նեն-
գութեան նոցա՝ ի յայտ եկեալ։

Կոչի. Գ. — Ս. Ձարք աւելի ևս քան զեօթն խորհուրդս ընդուն։ Զանգի ոմանք և զվիտակեցական ուխտս և զվան ննջեցելոց աղօթս և զապաշխարու-Թիւնս կոչեն խորհուրդս. այլք, որպէս Տերտուղիանոս և Երոնիմոս, զկուսակրօն կեանս և զմարտիրոսու-Թիւն։ — Բ. Եւ այլք գարձեալ զկանոն ոտնալուացին համարին սահմանեալ՝ ի Քրիստոսէ՝ յասելն (Յհ. ԺԳ. 15.) "Որպէս ես ձեզ արարի, և դուք առնիջիք,,. որ զի և ընդոհս բերէ՝ յայտ՝ ի միւսմէ բանէն է. "Զի Թէ ոչ լուացից զքեզ, ոչ ունիս ընդ իս մասն,,. — Գ. Գարձեալ՝ զի և երեք ազգ մկրտութեան են, այս-Ինքն սկզբոյ, ջրոյ և արեան. և սուրբ աստիճանք որպէս այլ և այլ խորհուրդք։

Պե. — Ս. Այլ է զգերազանց առաքինութիւնս ինչ՝ որ բերեն ընդոհս՝ կոչել նմանութեամբ խորհուրդս, և այլ անուանել զայնսակ յատկապէս խորհուրդս։ Զանգի խորհուրդք յէութենէ իւրեանց բերեն ընդոհս, իսկ առաքինութիւնքն այնոքիկ՝ ի սկզբոյ գործողին. որպէս որ վասն սկզբոյն Աստուծոյ նուիրէ զանձն՝ ի միաբեգա-կան կեանս, և կամ ապաշխարէ Հինողական կենօք։

— Բ. Իսկ որ ինչ սուրբ Հայրք յաղագս ոտնալուա-յին ասեն, և մաղթանքն իսկ՝ որք ընդ արարողութեանն այնմիկ կցորդին, ոչ այլ ինչ յայտ առնեն՝ բայց զի լուա-ցումն ոտից արարեալ՝ ի Քրիստոսէ՝ որպէս և ամենայն գործք նորա անօրինականք՝ ի փրկութիւն մեր և՝ ի Թո-ղութիւն մեղաց արարեալ էն, և զի գարձեալ նոյն և յեկեղեցւոյ ըստ օրինակին Քրիստոսի արարեալ՝ որ-պէս սրբազան արարողութիւն պաշտամանցն աղօթից

և ընթերցուածոյ՝ ընդհէն թողութիւն ներելի մեղաց, և զքաւութիւն պատժոյ ծանուցեալ յայնցանէ խոստովանեցելոց. զի յարարողութեան յայնմիկ կատարի խոնարհութիւն, աստուածախրութիւն և եղբայրսիրութիւն. և շարժէ զգթութիւն Աստուծոյ տալ ընդհս այնոցիկ՝ որք հաւատով և երկիւղածութեամբ մատիցեն յայն: Ա՛ան որոյ՝ի վաղ ժամանակս՝ որպէս՝ի պատրաստութիւն իմն առ սուրբ խորհուրդն միրտութեան՝ զոտս երախայից լուանային, այլ ոչ երբէք զընդհս և զգլուխ միրտութեան ընծայէին նմա: Սակ զսպառնալիսն Ա՛րիստոսի առ Պետրոս, "Եթէ ոչ լուացից զքեզ՝ ոչ ունիս ընդ իս մասն,,, սուրբն Ա՛ստուածն և այլք՝ի Հարց իմանան՝ի պատուհաս անլսողութեան նորա:

— գ. Ա՛կրտութիւնն սիրոյ և արեան խորհուրդք կոչին այնու՝ զի ընդն զտեղի միրտութեան, որով և ոչ զանազանին յայնմանէ, և ոչ յատկապէս այլ խորհուրդք են: Այնպէս և սուրբ աստիճանք մասունք են կարգի քահանայութեան, և մի ընդ նմա համարին:

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Ցաղագս ևիւթոյ և ձևոյ խորհրդոց:

ԵՒիւթ և ձև խորհրդոց են էական մասունք նոցին: ԵՒիւթ կոչի իրն կամ արարողութիւն արտաքին և զգալի, որ վարի՝ի խորհուրդս. և ձև՝ բանն, զոր պաշտօնեայ խորհրդոյն կցորդէ ընդ ևիւթն: Ասպէս՝ի միրտութեան ևիւթ է ջուրն, և ձև՝ Ա՛կրտի ծառայ Աստուծոյ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Ուրք՝ որ չկարեն գալ՝ի ժնին՝ ոչ կարեն լինել ևիւթ խորհրդոյ, բայց միայն արտաքին նշանօք ինչ՝ որ առնէ զնոսա զգալի. զոր օրինակ զղջումն է ևիւթ ապաշխարութեան՝ խոստովանութեամբ մեղաց, կամ այլ ինչ արտաքին և զգալի նշանօք:

Ասաքս այսոքիկ ևս՝ և յե, հնարեալ յաստուածբանից յերեքտասաներորդ դարու, առ՝ի ձշգրտագոյնս բացատրել զարարողութիւնն և զբան՝ յորս է էութիւն

խորհրդոց, ընդունելի եղեն եկեղեցւոյ. զի ոչ իւիք այլ այլեն զվարդապետութիւն Հնմարտութեան։

Ա՛հաւասիկ ի խորհրդոց է յաւուկ նիւթ և ձև և պաշտօնեայ. եթէ ի յերեցունց աստի պակասէ, ոչ ևս է խորհուրդ։

ԳՕԴՈՒԱԾ Բ

Գաղափար արդասանաց խորհրդոց։

Արդասիք խորհրդոց են Շնորհք և Կրէք։ Արհնակիր են հնարհքն, սրբարար և խորհրդապէտ։ Արբարար է՝ որ տայ Հոգութիւն մահուշեալ մեղաց, որպէս մկրտութիւն և ապաշխարութիւն, որք վասն այնորիկ կոչին և ս խորհուրդք մեռելոց. և կամ առաւելու զնոյն սրբարար հնարհս, որպէս այլ հնդեքին խորհուրդք, որք վասն այնորիկ կոչին և ս խորհուրդք կենդանեաց։

Իսկ խորհրդականն հնարհ՝ կցորդ է նմին սրբարար հնարհի, և յաւուկ իւրաքանչիւր խորհրդոց, օժանդակել՝ ի բարւոք կատարումն պարտուց՝ զորս մի մի՝ ի խորհրդոց ածեն ընդունելեացդ։ Որ օրինակ եթէ որ՝ ի հնարհս Հաստուծոյ ընկալցի զգրոշմն, ոչ միայն առնեն՝ ի նմա հնարհք սրբարար, այլ և հնարհի նմա զօրութիւն հաստատուն կալոյ՝ ի հաւատս՝ ի ժամանակի փորձութեան։

Կնիք է նշան ինչ իմանալի՝ կատարմամբ խորհրդոյն անջինջ տպաւորեալ՝ ի հոգւոջ, որ զընկալուչ խորհրդոյն առնէ ընդունակ պաշտամանց նորին, որոշեալ զնա յայլոց. և է անկրկնելի՝ ի խորհուրդ մկրտութեան և դրոշմի և կարգի քահանայութեան։ Ա՛նաւասանգ մկրտութեամբ այնպէս որոշի քրիստոնեայն՝ ի հեթանոսաց, զի նոյն իսկ մկրտութիւնն կոչի կնիք. զոր այսմ (ա՛. կոր. ա՛. 16.) "Դնալ եւոս կնիք և տանն Աստիանեայ,,։ Եւ գարձեալ (եփես. ա՛. 14.) "Որով հաւատացեալ կնքեցայք Հոգւովն սրբով աւետեաց, որ է առհաւատչեայ ժառանգութեան մերոյ՝ ի փրկութիւն նուաճութեան՝ ի գովեստ փառաց նորա,,։ Եւ վասն դրոշմի. (ՃՀ. կոր. ա՛. 22.) "Եւ օծ զմեզ Հաստուած է, որ և կընքեց

քեաց զմեզ, և ետ զառհաւատչեայ Հոգւոյն ի սիրտս մեր ,,։ Եւ այսոքիկ, ըստ հաստատակաց կարծեաց աստուածաբանից՝ յետ մահու իսկ մնան ի հոգւոջ ի յաւիտենական փառս ընտրելոց, և յամօթ դատապարտելոց։

Ա՝ասն է հաւատոց, զի խորհուրդք նոր օրինաց՝ նոցին իսկ կատարմամբ արարողութեանն, և կամ որպէս աստուածաբանք բացատրեն՝ է գործոյ գործեցելոյ, բերեն ընդ ինքս. ուր խորհուրդք հին օրինաց ընդհակառակն է գործոյ գործողին ևեթ ընդունէին զօրութիւն, այսինքն ի հաւատոց պաշտօնէին՝ որ կատարէրն զայնս։ Ո՞վ ի առաքեալն ասէ զսոցանէ. ,, Ամք ոչ կարէին ըստ միտս կատարել,,. (Եբր. Թ. 6.) այսինքն որ ինքնին իւրեանց զօրութենէ չկարէին ըստնելոքին խղճի մատց մաքրել և արդարացուցանել, ոչ զմատուցօղս, և ոչ զժողովուրդն՝ վասն որոց մատուցանէին. ոչ կայր ի նոսա զօրութիւն սրբարար՝ առ ի կարօղ լինելոյ սրբել զպաշտօնեայն և զպաշտօն նորա, որպէս զի առ Ա՝ստուած՝ որ զմիտան հայի՝ արդարացուսցեն. այլ առ մարմնովք միայն զսրբութիւն գործէին, որպէս և յարէ. ,, Այլ միայն կերակրովք և ըմպելեօք և պէսպէս մկրտութեամբք, մարմնոյ արդարութիւնքն՝ որ մինչև ի ժամանակս ուղղութեանն ի վերայ կային ,,. այսինքն առ չնմարիտ սրբարար խորհուրդս նորոց օրինացս զժողովուրդն և զքահանայս պատրաստէին։ Իսկ զսրբութիւն նէ խորհրդոց նորոց օրինացս ասէ նոյն առաքեալ. ,, Ո՞վ սրբեսցէ զնա սրբութեամբ աւազանին բանիւ ,,. (Եփես. Ե. 26)։ Եւ դարձեալ (Տիտ. Գ. 5.) ,, Ա՝պրեցոյց զմեզ ի ձեռն աւազանին միւսանգամ ծննդեանն ,,։ Ալ եր մարթ աւելի քան զայս բացատրել զզօրութիւն մկրտութեան՝ և որ ինչ զմկրտութենէն ասէ, զնոյն է իմանալ և զայլոց խորհրդոց. զի նոյն ինքն սահմանադիրն խորհրդոց՝ զաստուածային զօրութիւն իւր ետ նոցին՝ գհրաշալի արդասիսն ներգործելոյ։ Ո՞չ օրութիւն բարձրբելոյն, ասէ մեծն Լևոն, որ ետ Աւսային ծնանել ըզփրկիչն, նոյն և ջրոյն տայ վերածնանել գհաւատացեալն ,,։ Ա՝յսպէս վարքան Հարք առհասարակ վարդապետեն։

ԱՌԱՔՈՒԹԻՆՔ

Ա՛ռաւել ո. — ա. Ասուրբ գիրք չասեն ուրեք՝ թէ միլըտուԹեամբ կամ այլով իւիք խորհրդով արդարանայցէ ոք, բայց միայն հաւատովք։ Ուստի Պետրոս ասէ (գործ. ԺԵ. 9.) "Եւ ինչ ընտրուԹիւն արար Աստուած՝ի մէջ նոցա (այսինքն հեԹանոսաց) և մեր, հաւատովք սրբեալ զսիրտս նոցա"։ Եւ այլուր (ա. կոր. է. 21.) "Որ և զձեզ կեցուսցէ միլտուԹիւնն, ոչ զմարմնոյ աղտն՝ի բաց ընկենլով՝ այլ զբարուոք մտացն հանդէս առ Աստուած՝ի ձեռն յարուԹեանն Յիսուսի Քրիստոսի"։ Եւ առաքեալն Յակոբոս ասէ (ա. 18.) "Կամեցեալ ծնաւ զմեզ բանիւն ճշմարտուԹեան"։ Եւ առաքեալն ասէ. (եէր. Ժ. 38.) "Արդարն իմ՝ի հաւատոց կեցցէ"։ — բ. Եւ ոչ ապաքէն դուք իսկ ուսուցանէք զի Աստուած է տուիչ ընծոհաց, և զի ներգործուԹիւնք և արգասիք խորհրդոց՝ի պատրաստուԹիւն ընդունելեացն կախեալ կան։

Պէ. — ա. Հաւատք սկիզբն է և հիմն փրկուԹեան մարդոյ, արմատ ամենայն արդարուԹեան. և առանց հաւատոյ անհնար է հաճոյ լինել Աստուծոյ և՝ի վէճակ որդւոց նորա ժամանել, որպէս ուսուցանէ Ժողովն տրիդենտեան. վասն որոյ կարևոր պայման արդարուԹեան մարդոյ են հաւատք, այլ ոչ եԹէ հաւատովք ևեԹ մարԹ է նմա արդարանալ։ Այլ այսինքն արդարանալ, զի եԹէ ոչ հաւատայցէ՝ ոչ միլտուԹիւն և ոչ այլ ինչ խորհուրդ օգնեսցէն նմա. վասն որոյ և առաքեալք զներգործուԹիւնս խորհրդոց ընծայեն հաւատոյ։

— բ. Եւ իսկ Աստուած տուիչ ընծոհաց, այլ տայ զընծոհս՝ի ձեռն խորհրդոց. առանց այնոցիկ ոչ կամի տալ։ Կարևոր է և պատրաստուԹիւն ընդունելեաց շնորհուրդս, որպէս զի մարԹ լիցէ խորհրդոց ազդել՝ի նոսա զբնական զօրուԹիւն իւրեանց։ Որինակ լիցի հուր այրեցուլ է բնուԹեամբ, այլ՝ի նիւԹ պատկանաւոր ազդէ զզօրուԹիւն իւր. փայտ ջոր, զի նիւԹ է պատկանաւոր, այրի՝ի նմանէ. ոչ արգելու զզօրուԹիւն նորա այրեցական, այլ ոչ եԹէ լինքն ընծայէ նմա զայն։

Ի՞սկի. Բ. Որպէս ( )գոստինոս (Հատ Ճ. ի Յոհ. Թիւ Ջ.) ի մեկնութեան տէրունական բանին, "Որոյ արդէն իսկ սուրբ էք վասն բանին՝ զոր խօսեցայ ընդ ձեզ,, զամենայն զօրութիւն արդարութեան ընծայէ Հաւատոյ՝ զոր ներգործեն խորհուրդք ի մարդն, քանզի ասէ. "Ինդէր ոչ ասաց, Որոյ արդէն իսկ սուրբ էք վասն մկրտութեանն՝ որով մկրտեցայք, այլ ասաց, վասն բանին՝ զոր խօսեցայ ընդ ձեզ. բայց զի բանն ի Ջուր անդ սրբէ: Եւ ուստի իսկ այդքան զօրութիւն ի Ջուրն, զի հպեալ ի մարմին՝ լուանայ զհոգի, եթէ ոչ ներգործելով բանին. ոչ վասն ասելոյն, այլ վասն Հաւատալոյ,,: Ի՞պա ուրեմն ըստ սրբոյն ( )գոստինեայ՝ զօրութիւն խորհրդոց ի Հաւատս է, և ձևք նոցա յորդորիչք եւեթ են և յայտարարք Հաւատոց, և ոչ սրբարարք:

Պխ. Ա. Այլ ամենայն բանք սրբոյ վարդապետին ոչ այլ ինչ յայտ առնեն, բայց զկարևորութիւն Հաւատոյ յորս մատչինն ի մկրտութիւն. և ոչ երբէք ժխտէ այդուիկ սուրբ վարդապետն զգօրութիւն մկրտութեան, որ իբր գործիական պատճառ ներգործէ զարդարութիւն ի մարդն: Ի՞պաքէն մկրտութիւն առանց Հաւատոյ չէ բաւական յարդարութիւն և ի փրկութիւն. այլ անտեղի է ասել՝ թէ ձև խորհրդոյն յորդորիչ եւեթ և յայտարար էր Հաւատոց. զի ահա մանկունք՝ անընդունակք յորդորանաց և ներգործական Հաւատոյ՝ արդարանան մկրտութեամբ:

Ի՞սկի. Գ. — Ե. Այլ մանկունք, որպէս դարձեալ սուրբն ( )գոստինոս ուսուցանէ (ընդդէմ Յուլ. գիրք Ջ.) Հաւատան ի ձեռն Հաւատոց եկեղեցւոյ: — Բ. Ասէ որոյ առաքեալն (Ա. Կոր. Ժ. 1.) խօսելով ընդ Իսրայէլ՝ ոչ ոք ոչ ինչ օգնեաց Հոգևոր կերակուրն վասն յանցուածոց նոցա, Հաւատալ զնոսա ընդունողաց զխորհուրդս, զի և ոչ սոցա յանցուցելոց օգնեն խորհուրդք, զի ասէ. "Զամենեքին մեր ամենեքեան զնոյն Հոգևոր կերակուրն կերան,,. ապա նոյն զնոյն և զնոյն ուխտիս Համարի ընդ խորհուրդս:

Պխ. — Ե. Մանկունք Համարին Հաւատալ ի ձեռն Հաւատոց եկեղեցւոյ, եթէ մկրտեսցին. այլ ոչ եթէ Հաւատովն այնուիկ արդարանան երբէք առանց մկրտ-

տուեալ եան ։ Ա՝ ան որոյ տուրբ վարդապետան առէ զանձնականց (յղ. Ղեղ. գլուխ ա. գլ. իէ. 40.) զի "Հատատաւալ նոցա է մկրտուելն, և չմկրտիլ նոցա՝ ոչ հատատաւալ,, ։

— բ. Ազաքելական բանին իմաստ այլ է բոլորովին. զի ոչ ընդ քրիստոնէից Համեմատէ զնորայելացիս, այլ ընդ միմեանս՝ յասելն, ամենեքին նոքա ընդ ամպովն էին, և միօրինակ մկրտեցան յամպն և՛ ի ծով, և զնոյն կերակուր ամենեքեան կերան, սակայն ոչ ամենեքեան Հասին յերկինն աւետեաց, այլ բազումք՛ ի նոցանէ տապաստ անկան յանապատի անդ ։ Եւ՛ ի փոքուէ առմեծն ձեռնարկելով՝ յասելոյ. "Եւ այն՝ օրինակաւ լինէր վասն մեր,, . զի եթէ նոքա օրինակաւն ևեթ զերծեալ կորեան, սրչափ և առաւել լինի մեզ՛ ի կորուստ՝ եթէ ձչմարտութեամբն զերծանիցիմք ։

Ա՛տ. Դ. Կոռնեա ձևդ այդ բացատրութեան՛ է գործոյ գործելոյ, որով վարիքդ, անտեղի իմն է և՛ ի բաց տանի զամենայն պատրաստութիւն ընդունելեաց զխորհուրդս ։

պէ. Այլ իսկ անտեղի բացատրութիւնդ ըստ ձևոյն, այլ խափանէ զամենայն մուտս մոլորութեան. չէ ինչ փոյթ եթէ արծաթի կամ եթէ երկաթի նոյ բանալին, շատ է զի բանայ ։

Այսկ զի ձևդ այդ ոչ արտաքսէ զպատրաստութիւն ընդունելեաց զխորհուրդս, նոքին իսկ խոհականապոյնք՛ ի նորայանդից՝ Մաբրիկիոս, Կրոտիոս, Էրբնիտիոս և այլք յայտ առնեն. զի Էրբնիտիոս առէ (՛ ի գրոնէն ատտուածաբանական). "Ոպէս զի ընկալցի ոք զնշանն՝ չնորհս՛ ի ձեռն խորհրդոյ, հարկ է՝ զի հոգի ընդունողին լինի քաջ պատրաստեալ առ՛ ի չխափանելոյ զայն. և ըստ այսմ խնդրի լինէ գործ գործողէ՛ ևս՝ գործոյ գործելոյ ։

Ա՛տ. Ե. Ոչ տուրբ գիրք և ոչ Հարք ասեն լինէ զմկրտութենէ, զդրոշմէ և զկարգէ քահանայութեան՝ եթէ տպաւորիցեն կնիք. և՛ ի արիզենտեան իսկ ժողովի երկբայութիւն մեծ եղև զայսմանէ ։

պէ. Այեթէ տուրբ գիրք և Հարք յայտնապէս լինէ չասեն զայսմանէ, այլ և ոչ զհակառակն ասեն ։ Այայց տուրբն ( ) զտատինոս և այլք՛ ի Հարց զմկրտութիւն Հա-

կադրեն ԹլփատուԹեան, և զՀետ բերեն՝ ԹլփատուԹեան ՚ի մարմնի և վկրտուԹեան ՚ի հոգւոջ տպաւորել կինէք, և զկինէքն զայն կոչեն նշան հոգևոր և աներևոյԹ։

Նակ ՚ի տրիդենտեան ժողովն, որպէս և ՚ի բազում այլ Ժողովս՝ նոյնպէս և զայսմանէ՝ յառաջին գումարումն անդ եղեն վէճք, սակաւուց ՚ի Հայոց անտի յերկբայս լեալ. բայց Հետոյ սահմանեցաւ ՀշմարտուԹիւն։

Պաւղ. Զ. — ե. Ո՞երից խորհրդոց աստի եԹէ Հարցանիցես աստուածաբանից՝ Թէ ընդէր չեցէ մարԹ երկրորդել զայնս, պատասխանեն՝ զի խորհուրդքս այսոքիկ տպաւորեն կինէք. իսկ եԹէ Հարցանիցես՝ Թէ ընդէր տպաւորեն կինէք, պատասխանեն՝ զի չէ մարԹ երկրորդել զայնս. որ կատարեալ յոռի շրջանակ է։ — ր. Այս չէ իսկ մարԹ ՚ի միտ առնուլ Թէ օրպիսի ինչ նշան եցէ կինէքդ այդ Հոգևոր և աներևոյԹ՝ յաննիւԹ և յանեռանելի Հոգւոջ տպաւորեալ։

Պե. — ե. Պատուաբանին պատասխանի արդարև յոռի լինէր շրջանակ, եԹէ երկոքին ևս մասունք շրջանակին չէին յայտնեալք Պատուծոյ. այլ քանզի երկոքին ևս են ՀշմարտուԹիւնք Հաւատոյ, այսինքն զի ոչ մարԹ է երկրորդել զերեսին խորհուրդն զայնսոսիկ, և զի տպաւորեն կինէք, նոյն է ապա եԹէ ՚ի պատՀառէն ոք զպօծն, և եԹէ ՚ի պօծոյն զպատՀառն առնուցու ցուցանել.

— ր. Ո՞չ Հոգեղէն Հանդամանս ՚ի միտ առնուլ մարմնոյ նաւորացս դժուարին է. այլք այլապէս բացատրեն զկինէք խորհրդոցս, այլ և ոչ ՚ի բացատրուԹեանց անտի աւետ լի ինչ ՚ի միտ առնումք. և ոչ իսկ առ ՚ի Հաւատալ ինչ՝ Հարկ է ՚ի միտ առնուլ զայն։ Ո՞ արատ սկզբնական մեզաց, որ յետ ընկենլոյ իսկ մեզացն ՚ի ձեռն վկրտուԹեան՝ կայ ՚ի մեզ տակաւին ՚ի Հոգւոջ, չկարեմք ըմբռնել։ Ո՞ զի անմեղին, որոյ չեցէ երբեք յամենայն կեանս իւր մեղուցեալ, զանապականին արդեօք ՚ի մեղուցելոյն և յապականելոյ, այլ ԹէԹև և ՚ի պատիս, անՀասանելի է մտաց։ Ո՞յսուասպան ոք, ԹէպԹա և ղեջացեալ և զգաստացեալ, կրկ ինչ արատ Հոգեղէն և աներևոյԹ՝ որով և օրէնք իսկ մարդկային զրկեն զնա ՚ի բազում ինչ ի լաց. այլ և ոչ զայս մարԹ է մեզ ըմբռնել ըստ բաւականին։

ԳՕԴՈՒԱԾ Գ

Յաղագս որ ինչ պատրաստութիւնք առ ընդունելութիւնն խորհրդոյն կարևորք:

Ի մանկունս խնդրի և ոչ ինչ. զի որպէս ստուրքն ( )- գոստինոս ասէ. "Որ մեղաւն յայլում, հաւատայ և յայլում", այսինքն զի հաւատք եկեղեցւոյ ընտն՝ի նմա զտեղի ամենայն պատրաստութեան: Օնոյն իմա և զխեւլագարայ:

Իսկ վասն այլոց կրկնակի են պատրաստութիւնք. մի՝ առ ընդունելոյ զայնս արժանապէս և յօգուտ. և միւս և՝ առ ընդունելոյ վաւերաբար: Ոչ արժանապէս ընդունելոյ զխորհուրդս կենդանեաց՝ պարտ է զի ինչ ընդունօղն՝ի ընտրս Աստուծոյ: Այլոց հանրագոյն կարծիք են աստուածաբանից, զի եթէ ոք՝ի մահուլափ մեղս գոլով և կարծեցեալ զանձն՝ի ընտրս, և՝ի պատրաստել յընդունելութիւն միոյ՝ի խորհրդոյ անտի՝ զղջանայցէ և եթ այնու զղջմամբ, որ շատ իսկ է ընդունելոյ զարձակումն՝ի խոստովանութեան, ընկալցի՝ի խորհրդոյ անտի ընդ այլ ընտրս և զթողութիւն մեղացն:

Իսկ վասն ընդունելոյ վաւերաբար զխորհուրդս՝ բաւական են կամք, թէպէտ և չիցէ ոք՝ի ընտրս, թէպէտ և մեղիցէ յընդունելն զայնոսիկ անարժանապէս: Այլ միայն՝ի խորհուրդ ապաշխարութեան լինի արձակումն՝ի դերև առանց Հմարիտ զղջման, և կամք ընդունելոյ զայն ոչ է բաւական:

Կամք կամ դիտաւորութիւն առ վաւերականութիւն խորհրդոյ միայն՝ բաւական իսկ է ունակականն, այսինքն այն՝ որ ինչ երբեմն լեալ յուժէ, և թէպէտ ոչ ևս մտածեալ յընդունել անդ զխորհուրդն՝ այլ և ոչ նահանջեալ: Այն կամք խնդրին և՝ի խորհուրդ ապաշխարութեան և պահակի. զի նեղգործութիւն կամաց յերկոսին ևս խորհուրդս յայտնի է իբր նիւթ և էական մասն: Իսկ յայլ խորհուրդս բաւական է և մեկնողականն ևեթ կամք. մեկնողական ասեմք յորժամ ոք կամի ինչ առանց խորհելոյ՝ի յարակից նորին

լրա. զոր օրինակ եթէ ոք ընկալցի իշխանութիւն ինչ, համարի կամել և զարտօնութիւնս նորա՝ զորս անգիտանայ՝ Այնպէս և որ ընդունի զմկրտութիւն, այսինքն է դաւանի զքրիստոնէական կրօնս, համարի կամել և յամենայն ընօրհս նորա վայելել։ Ա՛ան ոյոյ և վտանգելոց՝ ի մահ յանկարծական անզգայութեամբ, ոչ ժըխտէ սուրբ եկեղեցի զգրոշմ և զվերջին օծումն, թէպէտ և չիցէ նոցա հայցեալ. շատ համարի՝ զի չիցէ նոցա զհակառակ կամն իւրեանց յայտնեալ։

ԳՕԴՈՒԱԾ Դ

Քաղագս պաշտօնեի խորհրդոց։

Պաշտօնեայ խորհրդոց է, որ ունի իշխանութիւն կատարելոյ զխորհուրդս։ Եւ թէպէտ Քրիստոս ինքն է կատարիչ այնոցիկ, այլ հաճեցաւ առնուլ իւր պաշտօնեայս՝ ի մարդկանէ։ "Ա՛ն հրեշտակաց ոմանց ասաց, ասէ սուրբ Ա՛սկեբերան, այլ մարդկան, թէ Օ՛ր միանգամ կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս"։ Եւ առաքեալն ասէ (Եբր. Ե. 1.) "Օ՛ր ամենայն քահանայապետ՝ ի մարդկանէ առեալ, վասն մարդկան կայ յաստուածականսն կողմն անդր, զի մատուսցէ պատարագս վասն մեղաց"։ Ա՛յլ այս իսկ յայտ առնէ զի ոչ ամենայն մարդիկ են պաշտօնեայք սրբութեանց, և ծանր մեղսութիւն է լուծեալականաց՝ օրէնն համարել ամենայն ումեք՝ ի քրիստոնէից մատակարարել զխորհուրդս. զոր և դատապարտեաց նզովիւք ժողովն տրիդենտեան։

Ա՛ն խորհուրդ՝ որ եպիսկոպոսաց ևեթ է անկ, որպիսի է՝ ձեռնադրութիւն. է որ քահանայից, որպիսիքն են առաւելագոյնք՝ ի խորհրդոց. և է՝ զոր՝ ի պահանջել հարկին ամենայն ոք այր և կին կարէ կատարել, որպիսի է մկրտութեանն խորհուրդ. և զպատակէն յիւրում տեղւոջն ասասցուք։ Ա՛յլ քան յերկոցունց աստի խորհրդոց, ոչ ոք զայլ խորհուրդս կարող է կատարել առանց ընդունելոյ իշխանութիւն. "Օ՛ր ոչ եթէ անձամբ ոք առնու պատիւ, ասէ առաքեալն, այլ կոչեցեալն

Ա՝ջատուծոյ՝ որպէս և Ա՝հարոն. նոյնպէս և Քրիստոս ոչ եթէ անձին ինչ շուք եղ լինել քահանայապետ, այլ որ խօսեցաւն առ նա թէ դու ես քահանայ յաւիտեան՝՝. (ԵԷՐ. Ե. 4):

ԳՕԴՈՒԱԾ Ե

Որ ինչ պատրաստութիւնք կարևորք՝ ի պաշտօնեայն:

Ա՛ռ վաւերականութիւն խորհրդոյ՝ գիտաւորութիւն եւեթ ընդդէմ՝ ի պաշտօնեային՝ և է գիտաւորութիւն կըրկին, մի՝ ներգործական, և միւս ևս՝ զօրութեամբ՝ Ներգործական ունի գիտաւորութիւն, որ՝ ի կատարել անդ զխորհուրդն՝ կամի առնել որ ինչ առնէ եկեղեցի. իսկ զօրութեամբ, որ յառաջագոյն կամեցեալ՝ և չիցէ նահանջեալ զնոյն կամս: Ընդունակ իմն՝ երեայ քահանայ առ՝ ի մկրտել զոք, և թէպէտ՝ ի մկրտելն չածիցէ զմըտաւ զի մկրտէ կամ կատարէ զխորհուրդ, զօրէ նախկին գիտաւորութիւն իւր: Ա՛յլ ոչ է պարտ այլ ընդ այլոց ընդ այսմ գիտաւորութեան առնուլ զանձնականն և զմեկնողականն, որ չեն բաւական՝ ի կատարումն խորհրդոյ. զի ունականն ոչ է մտադրութիւն՝ այլ նիւթական գործողութիւն, որ մարթի և՝ ի քուն և յարբեցութեան. և մեկնողականն՝ տկարագոյն ևս քան զայն, որպէս՝ ի վէր անդր բացատրեցաք. (յօդ. ՁԷ):

Ա՛րդ առ վաւերականութիւն խորհրդոյ՝ կարևոր է զի իցէ՝ ի պաշտօնեային, դէթ զօրութեամբ, գիտաւորութիւն կատարելոյ զխորհուրդն: Ո՞յց այսպէս ընդդէմ Լ ուԹերի սահմանեաց ժողովն տրիդենտեան. զի համարէր նա կատարել խորհրդոյն և առանց ինչ կամաց պաշտօնէին, և ընդ կատակս իսկ առնելով նորա զարտաքոյզութիւնն: Ա՛յլ ոչ է հարկ զի իցէ՝ ի պաշտօնեային գիտաւորութիւն առնելոյ՝ զոր կամի եկեղեցի, կամ որ ինչ վախճան է խորհրդոյն. զի այսպիսի գիտաւորութիւն՝ ի խորհուրդս ինչ բաւական է և յանհատ առ զոք՝ ի վաւերականութիւն խորհրդոյն: Ո՛անզի և Ո՞րեայ ոք և հերձանոս եթէ ապատցէ զմկրտութիւն գիտաւորութեամբ առնելոյ՝ որ ինչ քրիստոնեայք առ-

նեն, կամ որ ինչ եկեղեցին Քրիստոսի կամի, վաւերական է միրտուԹիւնն, Թէպէտև կատարիչ խորհըրդոյն համարիցի զայն սնապաշտուԹիւն։

Իսկ հաւատք և սրբուԹիւն Թէպէտ և կարևորք՝ ի պաշտօնեայն վասն արժանապէս և առ՝ ի յօգուտ անձին կատարելոյ զխորհուրդս, այլ չեն ինչ կարևորք՝ ի վաւերականուԹիւն նոցին։ Ոչ ի ոչ հաւատոյ և սրբուԹեան պաշտօնէին է սրբել զմեղս և թերել ընծայս, այլ զօրուԹեան վաստակոց և արժանեացն Քրիստոսի։ Պատուաճ է անդ կատարիչ, իսկ մարդ գործի նորին։ Պայպէս ուսուցանեն Հարք և ժողովք ընդդէմ մոլորուԹեան Պոնատեանց. և ժողովն Կիկիոյ սահմանեաց զեկեալս՝ ի նովատեանոց մի կրկին միրտել. և սուրբն Աթեփանոս Հռոմայ հայրապետ զայսմանէ ընդդէմ սրբոյն Կիպրիանոսի և սրբոյն Փիրմիլիանոսի և այլոց եպիսկոպոսաց վիՃեալ, յետոյ ապա նորին վարդապետուԹիւն՝ ի ժողովս հաստատեցաւ։

Իսկ եԹէ տարակոյս ինչ զվաւերականուԹենէ խորհրդոյն՝ ի ներքս անկանիցի առ ԹերուԹեան նիւԹոյն կամ ձևոյ և կամ դիտաւորուԹեան պաշտօնէին, ՚ի խորհուրդս՝ զորս չէ օրէն կրկնել, պարտ է պայմանաւ պաշտել զայն վերատին։ Որինակ լիմն երկբայելի է զմկրտուԹենէ նորաշանդիոյ. յորոց կէաք ոչ կարևոր ինչ մանն համարեալ խորհրդոյն զՋուր, այնպիսի սրսկմամբ առնեն զայն՝ զի չէ մարթ գիտել Թէ արդեօք անկեալ էին զգլխով երախայինն Ջուր քաւական առ լուացումն համարելոյ՝ ՚ի վաւերականուԹիւն խորհրդոյն։ Այս զնիւԹոյն տարակոյս. իսկ զձևոյն, զի կէաք ևս յանուն Քրիստոսի ևեԹ միրտեն, և ոչ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, որպէս ուսոյց և պատուիրեաց մեզ Ինքնին իսկ սահմանադիր խորհրդոյն. վասն որոյ և այս ընդ երկբայուԹեամբ զվաւերականուԹիւն խորհրդոյն կացուցանէ։ Պարձեալ և զդիտաւորուԹենէ պաշտօնէին վէՃ է առ աստուածաբանս, զի եԹէ ոք զամենայն արտաքին արարողուԹիւնս խորհրդոյն Ձշգիւ կատարեսցէ, և ՚ի ներքս ՚ի մաի իւրում չկամիցի կատարել առ որ ինչ արարողուԹիւնքն այնոքիկ են սահմանեալ, արդեօք վաւե՞ր իցէ և կատարիցի խորհուրդն։ Հայտնի է տարաձայնին աստուածաբանք. և

քանզի ՚ի կատարումն խորհրդոց զապահովագոյն կողմն պարտ է ունել, ապա և աստ կրկնելի է պայմանաւ ըզխորհուրդն, այսինքն յաւելեալ ՚ի ձև անդր, եթէ էիցէ դրպեալ կամ չեռնադրեալ և կամ՝ և այլն։

ԱՌ ԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ա՛պրկ. ա. — ւ. Պատմի ՚ի վկայաբանութեան Ա՛պոնի վենետացւոյ, և ա ՚ի վկայաբանութեան լատինաց։ Ա՛ռուփինոս, Մակրաս, Ոզոմենոս և այլք պատմեն՝ զի Ա՛թանաս մկրտեր զմանկտին ընդ խաղ. և Ա՛ղեքսանդրի հայրապետի լուեալ զայն, վաւերական զմկրտութիւնն զայն համարեցաւ։ — բ. Ա՛ստն ոյոյ և տուրքն Ոզոստինոս լաւագոյն համարի՝ թէ արբեալ ոք իցէ որ մկրտէն, քան չնացող ոք։ Եւ Ասկեբերան և Խիդորոս զպաշտօնեայն խորհրդոց նմանեցուցանեն իշոյն Բաղաամու։ Ա՛պա ուրեմն չէ ինչ կարևոր դիտաւորութիւն ՚ի պաշտօնեայն։

Պէ. — ւ. Ել Ա՛դոն և ոչ լատին վկայաբանութիւնն վաւերական զմկրտութիւնն Վենետեայ համարին, քանզի նա արեամբն իւրով մկրտեցաւ։ Եւ են իսկ ոչք ըզպատմութիւնն զայն համարին անստոյգ, զի ոչ ոք յաւաչ քան զՍ՛ադոն, այսինքն քան զիննեւորդ դար, պատմէ զկնի զայն։

Եւ նոյնպէս և զմկրտութենէն Ա՛թանասի, համարեալ իսկ ստոյգ զպատմութիւնն զայն, վկայէնոյն ինքն Ա՛ռուփինոս՝ զի Ա՛ղեքսանդր հայրապետ ոչ վայրապար և իսկ և իսկ վաւերական համարեցաւ զայն, այլ ստուգեալ յԱ՛թանասէ և յընկերացն նորա զհանգամանս երկին՝ զի ամենայնիւ ըստ մտաց եկեղեցւոյ կատարէին զխորհուրդն. քանզի ասէ. "Եւ երբեմն եռեւս զամենայն ինչ ըստ կարգի կրօնիս մերոյ ՚ի գլուխ ելեալ, խօսեցաւ ընդ ուխտի եկեղեցւոյն, և հաստատեաց՝ որպէս աւանդի, թէ որոց անձերի պահմամբ հարցուածոյ և պատասխանեաց մկրտեալ էր ՚ի Ջուր, չէ օրէն երկրորդել զմկրտութիւնն, այլ միայն ընծայել զոր ինչ օրէն է պաշտաման քահանայից։"

— Բ. Պաւլոսն (Գոստինոս ոչ զարթեցեալ ուրուք պաշտօնէի. զմկրտութիւն վաւերական համարի, այլ զարբշռի ըստ ստուգապէս գրչագրաց։ Իսկ Պակեբեռան և Խիդոր առ՝ի ցուցանել՝ զի անպարժանութիւն պաշտօնէի ոչ ինչ ստնանէ զօրութեան խորհրդոց, ըստ այնմ և՛ եթէ նմանեցուցանեն զնա քաղաամեան իշխան, որպէս ինքեանք իսկ բացատրեն։

Յաղ. Բ. Ինոսվկենտիոս Դ. Հայրապետն Հռոմայ վաւերական յայտ առնէ և զմկրտութիւն արարեալ՝ի սարակինոսէ։ Վասնզի պաշտօնեայն գործի և՛ եթէ՝ի գործին չէ կարևոր դիտաւորութիւն։ Նա վարանք ևս տագնապողականք երկիւղած մտաց զՀետ գան՝ի վարդապետութենէ այսի, թէ գուցէ՝ի պաշտօնեայն մկրըտութեան և կամ այլոց խորհրդոց՝ չիցէ լեալ կարևորն դիտաւորութիւն։

Պխ. Ինոսվկենտիոս՝ վաւերական համարի զմկրտութիւն ևս և յոժմեքէ անհաւատից արարեալ, բայց միայն զի կոդեցէ Նա դրոել, որպէս յաւելու՝ի յայտարարութեանն, այսինքն զի կամիցի առնել՝ զոր առնէ եկեղեցի՝ի մկրտելն, թէպէտ և չգիտիցէ իսկ՝ զինչ եկեղեցի նոցէ։ Ոչ պաքէն գործի է պաշտօնեայն խորհրդոց, այլ գործի կենդանի և աղատ, վասն որոյ պարտ է նմա գիտել զոր առնէ։ Ոչ չիք տեղի վարանաց՝ ուր է բարոյական ստուգութիւն. և է իսկ ստուգութիւնս այս՝ ուրանօր կատարին խորհուրդք իբր արարողութիւն եկեղեցւոյ։

ԳԼՈՒԽ Բ

ՑԱՂԱԳՍ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

Մկրտութիւն է խորհուրդ սահմանեալ՝ի Քրիստոսէ՝ի վերածնութիւն հոգևոր։ Ասէ և ինքն. ըստ այնմ (ա. Կոր. ա. 16.) "Ոչ եառ զինքն և տանն Ստեփանեայ"։ Ասէ և աւազան. ըստ այնմ (Եփես. Ե. 26։) "Ի զնա սրբեսցէ սրբութեամբ աւազանին"։ Ասէ և լուսաւորութիւն. ըստ այնմ (՚ի Տաղտոյն) "Ընդ նորհք սուրբ Հոգւոյն ինջանէ՝ի վերայ նորընծային

իբրև ՚ի լուսաւորութեան աւուրն ,, : Կոչի և ևս վե-
րածնութիւն, նորոգութիւն, և այլն :

Պատուածաբանք զանազանեն միւրոնութիւն ջրոյ, հրոյ, և արեան : Միւռոնութիւն ջրոյ՝ է խորհուրդն, զորմէ է բանս . միւռոնութիւն հրոյ՝ է իղձ ընդունելոյ զխորհուրդ միւռոնութեան հանդերձ կատարեալ սիրով. իսկ միւռոնութիւն արեան՝ է վկայութիւն հաւատոյ հեղմամբ արեան վասն Քրիստոսի : Նոյնքին սոքա չեն խորհուրդ, այլ զի սրբեն ՚ի մեղաց և ընծան զտեղի միւռոնութեան՝ յորժամ չիցէ հնար ընդունել զայն, վասն այսորիկ կոչին միւռոնութիւն :

Ի հաւատոյ է, զի միւռոնութիւն է խորհուրդ սահմանեալ ՚ի Քրիստոսէ . սուրբ գիրք, Հարք, սովորութիւն եկեղեցւոյ ընդհանուր և հաստատուն, և ժողովք ուսուցանեն զայն անեղծապէս : Այլ թէ ՚երբ սահմանեաց զայն Քրիստոս, տարաձայնին զայնմանէ աստուածաբանք : Սուրբ Պետրոս Դամասկի սահմանեալ զայն Քրիստոսի ՚ի միւռոնելն իւրում ՚ի Յորդանան, սրբելով զՅուդան հպմամբ ՚ի մարմին իւր . և՚ ի սոյն ակնարկեն բանք շարականին . “ Որ զՅուդան սրբեցեր ,, . և “ Աքրոզական պարգեւեցան ընծիք աղաւնակերպ ինքեան սուրբ Հոգւոյն Յուդան սրբութեան ,, :

Միւռոնութիւնն Յովաննու ոչ էր խորհուրդ, այլ նշանակ խորհրդոյն՝ յոր պատրաստեր զՔրեայս . վասն որոյ որ ընկալեալն էին զմիւռոնութիւն նորա, ընդունէին և զՔրիստոսին . (գործ . ԺԹ) : Աւետարանք և կանոնականք դատապարտեցան ՚ի ժողովն տրիդենտեան վասն հաւասար զերկոսին վարդապետելոյ :

ԱՌԱՔԱԿՈՒԹԻՒՆՔ

Մատթ . Ա . — ա . Յուր ՚ի սուրբ գիրս բազում ուրեք այլաբանաբար նշանակէ . (Յհ . ԺԳ . 13 : Ի . 37 . Ա պետ .) և Միւռոնն Յովաննէս յայտնապէս ասէ զմիւռոնութենէն Քրիստոսի՝ զի ոչ ջրով կատարելոց էր, քանզի ասէ (Մատ . Ի . 11 .) “Ես միւռոնեմ զձեզ ջրով ... նա միւռոնեցէ ՚ի Հոգւոն սուրբ և՚ ի հուր ,, : Եւ Քրիստոս ևս ինքնին հաստատէ զայն յասելն (գործ . ա . 5 .)

"Ո՛չ ի Յովհաննէս մկրտեաց՝ ի ջուր, այլ դուք մկրտիցիք՝ ի Հոգին սուրբ"։ Այսպա մկրտութիւնն Քրիստոսի հոգևոր է և ներքին։ — ՚Բ. Այս այս է՝ զոր առաքեալն ասէ (հմ. Ղ. 4.) "Մեռեալք ընդ նմին մկրտութեամբն՝ ի մահ. զի որպէս յարեաւ Քրիստոս՝ ի մեռելոց փառօք Հօր, նոյնպէս և մեք՝ ի նորոգութիւն կեցից շնորհօքն"։ Եւ որպէս մահս այս և յարութիւն այլաբանօրէն առացեալ է, նոյնպէս ապա և զմկրտութիւնն է իմանալ։ Այս այսմ յանդիմանեաց Քրիստոս Նիկոդեմոս, զի ոչ իմանայր այլաբանօրէն զմկրտութիւնն։

ՊԽ. — ՚Բ. Ո՞ ջուր և զմկրտութիւն վարեն իսկ սուրբ գիրք երբեք երբեք այլաբանօրէն, այլ ոչ երբեք՝ ի խորհուրդ մկրտութեան։ Պարծք առաքելոյ՝ ի պատմել զմկրտութիւնս կատարեալս յառաքելոյ անտի՝ զամենայն տարակոյս՝ ի բաց մերժեն։ Իսկ Մ՝կրտիչն Յովհաննէս զՔրիստոսի մկրտութիւնն հակադրէ իբրուն ըստ զօրութեանն, և ոչ եթէ ըստ նիւթոյն. և ամենայն՝ ձուլք յամենայն ժամանակի զայս այսպէս իմացան։

— ՚Բ. Աքաքելականն բան ակնարկէ յարարողութիւն ընկղմելոց զերախայն մկրտեալ՝ ի ջուր անդր՝ յօրինակ մեռելութեան նորա՝ ի մեզայ և յարութեան՝ ի նոր կեանս։ Այս այսմ յանդիմանէ փրկիչն մեր զՆիկոդեմոս, զի զմարմնոյ ծննդեանէ իմանայր զբանն, և ոչ զհոգեկանէն՝ որ՝ ի ձեռն մկրտութեան ներգործի. վասն որոյ և զՅովհն յաւել ընդ ջրոյ յասելն՝ "Եթէ ոչ ոք ծնեալ՝ ի ջրոյ և՝ ի Հոգւոյ..." յայտ արարեալ՝ զի ոչ՝ ի ջրոյ եթէ հոգևորն այն ծնունդ ներգործի, այլ զօրութեամբ սուրբ Հոգւոյն՝ որ սրբէ՝ ի ներքուստ զհոգի, ՚ի լուանալ ջրոյ զմարմինն արտաքուստ։

Ա՛ռակ. Բ. Այս քանզի լուացումն արտաքին՝ նշանակ եւեթ է ներքին սրբութեան, պարտ է հեղանիւթոց առհասարակ պատկանաւորս գոլ՝ ինքնիւթ մկրտութեան. և արդարև գոտանին՝ ի պատմութիւնս դեպք ինչ գիտնալ կամ այլով իւիք հեղանիւթով մկրտութեան։

ՊԽ. Լուացումն ջրոյ արտաքին նշանակ է, այլ՝ ի Քրիստոսէ սահմանեալ անխափոխելի՝ սահմանադրին այսպէս կամելով. իսկ պատմութեանցն այնոցիկ կեաք

սառայօդք, այլք տգիտութեան էն արդասիք, որ այնչափ զօրեն՝ որչափ չ՚ըամաոուցիցն կոչեցեալոց ջրով փոխանակ գինւոյ պատարագել։

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Յաղագս ևիբդոյ և ձևոյ մկրտութեան։

ԵՒիւթ կարևոր՝ի մկրտութիւն՝ է ջուր բնական. ՚ի հաւատոց է և այս սահմանեալ ՚ի նոյն ժողովն ընդդէմ լութերականաց և կալուինականաց, որք ոչ կարևոր համարին զայն ՚ի վաւերականութիւն խորհրդոյն։ Օ՚ի սուրբ գիրք յայտնապէս ասեն, (Յհ. գ. 5.) "ԵՒթէ ոչ ոք ծնցի՚ի ջրոյ և՚ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ,,։ Եւ ևերքինին աշակերտեալ Փիլիպպեայ, ասէր. "Ահաւասիկ ջուր, զինչ արգելու զիս՚ի մկրտելոյ,,. (գործ. ը. 36)։ Եւ առաքեալապետն ասաց. "Մի թէ զջուր ոք արգելուլ կարէ առ՚ի չմկրտելոյ զսոսա,,. (անդ. ժ. 47)։ Եւ սուրբ Հոքն առք առհասարակ, և ընդհանուր աւանդութիւն եկեղեցւոյ ընծայն հաստատեն։ Ա՛ր և իցէ ջուր բնական պատկանաւոր է՚ի խորհուրդս յայս, ծովու, գետոց, լճի, աղբեր, ջրհորոյ, և անձրևոյ. այլ ձէթ, գինի, հիւթ լիմանի, դարեջուր, վարդաջուր, և որ և իցէ հեղանիւթ՝ որ չէ ջուր բնական՝ ոչ է պատկանաւոր։

Կարևոր է դարձեալ լուացումն, որում մարթի լինել երկակի. մի՝ ընկղմամբ որպէս առնեն Հոյնք, ամբոխեանք և մեք՝ հանդերձ հեղմամբ, և որպէս առնէին և լատինք մինչև ցերեքտասաներորդ դար։ Երկրորդ՝ հեղմամբ, որպէս առնեն արդ լատինք, և զորմէ սուրբն Կիպրիանոս (՚ի ԸղբՔն առ Մ՚ափնոս) ասէ. "Ամէն եղկեալ վասն հեղմամբ կամ սրսկմամբ մկրտելոյ ըզհիւանդս,,։ Եւ երրորդ՝ սրսկմամբ. բայց պարտ է սրսկմանն գոլ այնպէս, զի անկցի զգլխով կամ զմիով՚ի գլխաւոր մասանց մարմնոյ մկրտելոյն՝ ջուր բաւական առ՚ի կարելոյ կոչել լուացումն կամ մկրտութիւն. զի եթէ ձեռք կամ ոտք և եթ երախային թացցին, երկբայելի է մկրտութիւնն։ Ա՚ան որոյ յաւելու մաշտոցն

մեր զկարևորս յէուԹիւն խորհրդոյն՝ի նօտրագիր վարդապետուԹիւնան. “Աչս անուն ծառայ Աստուծոյ ... մկրտի այժմ՝ի ձեռս իմ յանուն Հօր, և Որդւոյ հեղո՝ի վերայ գլխոյ մանկանն, և Որդւոյ, և ոգւոյն սրբոյ, և ոչ այլ հեղո. և այս է էուԹիւն ինչպուԹեան, յորում արասցէ հոգեբարձուԹեամբ,,:

Նոյնպէս և խորհրդոյն է որպէս և եղաքս, որպէս և Յովհաննայն է. իսկ Մատինացին՝ “Աս մկրտեմ զքեզ յանուն Հօր,,, և այլն: Աստանց այսր ձևոյ՝ մկրտուԹիւնն ոչ է մկրտուԹիւն, և մի իսկ՝ի կարևորաց բառից բարձեալ՝ բառնայ զվաւերականուԹիւն խորհրդոյն. և ծանր մեղանչէ պաշտօնեային, զանց զմիով իսկ յանկարևորացն արարեալ:

Ի բանից ինչ սուրբ գրոց, և մանաւանդ՝ի պատմուԹենէ Յովծոց (ԺԹ. 5.) ուր ասի. “Եւ մկրտեցան յանուն Տեառն Յիսուսի,,, ոմանք յաստուածաբանից հաստատեցան՝ Թէ առաքեալք յանուն Յիսուսի մկրտէին. այլ անդ վասն զանազանելոյ՝ի Յովհաննու մկրտուԹենէն՝ յոր մկրտեալն էին եփեսացիք, կոչի Յիսուսի մկրտուԹիւն. և այս յայտ անտի իսկ է, զի յասել եփեսացւոց՝ “Եւ ոչ Թէ Հոգի սուրբ գոյ՝ լուեալ է մեր,,, զարմացաւ առաքեալն Թէ որպիսի՞ մկրտուԹիւն էր նոցայն՝ յորում ոչ անուանէր Հոգին, և եհարց. “Ուսկ՝ի՞նչ մկրտեցարուք. նոքա ասեն՝ՙի Յովհաննու մկրտուԹիւնն,,: Օ՞ի կարի է բացայայտ տէրունականն պատուէր “Ա՛կրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ,,. (Ա՛ռ. լԹ. 19): Եւ Հարք առհասարակ, և ընդհանուր և հաստատուն աւանդուԹիւն ամենայն ազգաց քրիստոնէից զայս այսպէս ունի յանուն սրբոյ ԵրրորդուԹեան, նորաշանդից և ետ Թոտրեալ՝ի բաց:

ՑՕԴՈՒԱԾ Բ

Յաղագս արգասեաց մկրտութեան:

Երկու են արգասիք խորհրդոյս, ընդհանրական՝ որով վերածնանիմք ի Քրիստոս, և կենդանի՝ որ տպաւորի ի հոգիս մեր: Ընդհանրական՝ որ արժանապէս ընդունին զմկրտութիւն, տայ նոցա սրբարար շնորհս. որով սրբեալ բոլորովին՝ լինին աստուածահաճոյք: Ոչ միայն սրբէ զսկզբնական մեղս՝ որով ծնանին մանկունք, այլ և զներգործական մեղս ի չափ հասելոց, և պատժոց և մեղաց նոցա առնէ թողութիւն: "Ումեքն իրաքանչիւր ոք ի ձէնջ յանուն Յիսուսի Քրիստոսի ի թողութիւն մեղաց,,. (Գործ. բ. 38.) "Յղի մկրտեաց, և լուա զմեղս քո,,. (Անդ իբ. 16.) "Ոչ գիտեք՝ զի որ միանգամ մկրտեցաք ի Քրիստոս Յիսուս, ի մահ անդր նորա մկրտեցաք... զի որ մեռանիցէ՝ արդարացեալ է ի մեղաց անտի... նոյնպէս և դուք համարեսջիք զանձինս մեռեալս մեղացն, և կենդանիս Աստուծոյ,,. (Հռ. զ. 3.) "Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցայք, զՔրիստոս զգեցեալ էք,,. (Գաղ. գ. 27): Ասորք ևս առհասարակ զայս ամենայն ի նոյն միտս իմանան, որով ժողովն տրիդենտեան վճռեաց զայս վարդապետութիւն, և որպէս Աւգինէոս Դ. Հռոմայեցի Հայրապետն գրեաց առ ազգ մեր, զի մկրտութիւն ոչ միայն զսկզբնական և զներգործական մեղս քաւէ, այլ և պատժոց մեղաց առնէ թողութիւն. և վասն այսր՝ երկմկրտելոցն ի չափ հասելոց՝ ոչ սահմանին ապաշխարանք որպէս եկելոց՝ ի խոստովանութիւն. և եթէ ումեք ի նոցանէ հասցէ մեռանել առանց մեղաց յետ մկրտութեան, իսկ և իսկ զարքայութիւնն Աստուծոյ ժառանգէ:

Նաց ի սրբարար շնորհաց հեղու խորհուրդս այս ի մկրտեալն զպարգևս Հոգւոյն սրբոյ, որով առ ամենայն գործս առաքինութեան գտանի զօրացեալ. "Աստուած զմեզ ի ձեռն աւազանին միանգամ ծննդեանն, և նորոգութեամբ Հոգւոյն սրբոյ, զոր եհեղ ի մեզ ա-

ադատութեամբ ,,. (Տէտ. ՟Ե. 6)։ Ը նորհք աւազանին կոչորդեն զմեզ ՚ի գլուխն մեր Քրիստոս, առնեն զմեզ որդեգիրս Աստուծոյ և որդիս եկեղեցւոյ, տան մեզ իշխանութիւն ընդունելոյ և զայլ խորհուրդս՝ զորս անմարթ է ընդունել առանց միրտութեան, մուծանեն զմեզ ՚ի հաղորդութիւն սրբոց, և առնեն զմեզ ժառանգս արքայութեան երկնից։ “Այս զի եք դուք որդիք, առաքեաց Աստուած զՀոգի որդւոյ իւրոյ ՚ի սիրտս մեր ,,. (Գաղ. ՟Ե. 6.) “Որպէս ինքն Հոգին վկայէ Հոգւոյս մերում, եթէ եմք որդիք Աստուծոյ. և եթէ որդիք, ապա և ժառանգք. ժառանգք Աստուծոյ, և ժառանգակիցք Քրիստոսի ,,. (Հռ. Ը. 16)։

Միրտութիւն տալաւորէ ՚ի մեզ կնիք անջնջելի, որպէս ասացաք. կնիք սքանչելի՝ որով որոշիմք յայլոց, քեզըզվինչան որդւոյն Աստուծոյ. վասն որոյ և ոչ է մարթ կրկնել զխորհուրդս զայս. “Որով հաւատայեալ կընքեցայք Հոգւովն սրբով աւետեաց, որ է առհաւատչեաց ժառանգութեան մերոյ ՚ի փրկութիւն ,,. (Եփես. Ա. 14). “Եւ մի տրտմեցուցանէք զՀոգին սուրբ, որով կնքեցարուք յաւուրն փրկութեան ,,. (Անդ ՟Ե. 30)։ Եւ զոյն հաստատեն Հարք առհասարակ։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆ Ը

Աբէլ. — ա. Առաքեալն ասէ (Գաղ. ՟Ե. 27.) “Որք միանգամ ՚ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք ,,. արդ հերետիկոսացեալ չէ մարթ զգենուլ զՔրիստոս, ապա մկրտութիւնն նոցա ոչ է մկրտութիւն։ — ա. Եւ առաքեալսն համանեցուցանէ զեկեղեցի նոյեան տապանին (Ա. Կ. ՟Ճ. 20.) յորում ութունք ապրեցան ՚ի ջրոյ, և յաւելու. “Որ և զձեզ լսատ նմին օրինակի կեցուսցէ մկրտութիւնն ,,։ Ապա որ արտաքոյ ՚ի տապանէ աստի կան, կորնչին ՚ի ջուրցն հեղեղի, և մկրտութիւն նոցա ինչ ոչ օգնէ։

Պէտ. — ա. Այլ է խորհուրդ, և այլ արդասիք նորա. հերետիկոս ոք կամ անպէտք մեղաւոր՝ որ խնդրէ զմկրտութիւն, ընդունի զխորհուրդն՝ այլ ոչ զընծորհս նորա, որով է զգենուլ զՔրիստոս։

— Բ. Կ՚ակեղեցի տապան է այնոյիկ՝ որք զընծորս մկըրտութեան ընդունին, և ոչ զխորհուրդն ևս եթ՝ առանց պատրաստութեան։

Ա՚ստվ. Բ. Յառաքելական կանոնս (խղ֊ խդ.) և՚ի սահմանադրութենս առաքելոց (գիրք ը. գլ. ժե.) հրամայի զմկրտեալս՝ և հերետիկոսացեալ կրկին մկրտել. զնոյն և ոմանք՝ ի Նարց հաստատեն. զնոյն և մեծն Կիրիղոս ըստ արեւելատեաց ժողովոյ հաստատեաց (կան. ժէ)։

Պխ. Ա՚յդ ամենայն վկայութիւնք արտաքոյ են առաջարկեալ խնդրոյս, որ զվաւերական և զօրինաւոր մկրըտութիւն է՚նէ. զի կանանքդ այդոքիկ և սահմանադրութիւնք և վճիռք վասն այնոյիկ են, որոց այլայլեալ էր մկրտութիւն և անվաւեր կամ երկբայելի։

Ա՚ստվ. Դ. — Ե. Ա արդարեւ թէ հեղման ուղղակաւ ընծորհաց՝ և մանկունս մկրտեալս՝ որպէս հաւանական ևեթ ընդունելի եղև՝ և ժողովն վճռական. վասն որոյ յառաջ քան զկիլղեմատեան և զարիմենատեան ժողովս չև ևս սահմանեալ էր խնդիրն։ — Բ. Եւ զի սկզբնական ևեվ մեղք ջնջին՝ և ձեռն մկրտութեան՝ անտի իսկ յայտ է, զի մկրտութիւն կոչի խորհուրդ վերածնութեան. զի որպէս ջրով ասեն, նովաւ ջնջի որ ինչ՝ և մարմնաւոր ծննդենէ ընկալեալ արատ։ — Գ. Եւ էե ինչ ընդունել մկրտելոյն և կթողութիւն մեղաց, զի այս ընծորհք են ապաշխարութեանն՝ զոր երանայն առնէ նախ քան զմկրտութիւն ըստ խրատու առաքելապետին. (գործ. բ. 38.) "Ապաշաւեցէք և մկրտեսցի իւրաքանչիւր ոք՝ և՚ի ձէնջ,,։ — Դ. Ասկայն և ոչ սկզբնական մեղացն քծաւորութիւնք ջնջին՝ և քաց, զի ևեթ ջնջէին՝ էր պարտ յետ մկրտութեան կալ մնալ՝ և մեզ յօժարութեան՝ և չարն և գժուարութեան՝ և բարին, զի՝ և բառնալ պատճառին, պարտէր բառնալ և գործոյն։

Պխ. — Ե. Որպէս հաւանական ևեթ եղև ընդունելի՝ ոչ վարդապետութիւն հեղման ընծորհաց՝ և մկրտութեան, զորմէ էր երբեք լեալ երկբայութիւն, այլ հեղման ընծորհաց որպէս ունակութիւն ըստ մտաց Ձերմականաց։ Վասնզի առաջինն մանն էր հաւատոյ աներկբայելի. և զերկրորդէն էր խնդիրն, որ ոչ երբեք սահմանեցաւ։

— ՚Ա. Ի կրտուԹիւնն խորհուրդ վերածնուԹեան կոչի, զի ծնեալքս ըստ մարմնոյ՝՚ի ձեռն աւազանին վերածնանիմք ըստ հոգւոյ, ընկալեալ զքաւուԹիւն ամենայն մեղաց ըստ առաքելական բանին. (Կո. Ե. 15.) "Ալ օրպէս յանցանքն՝նոյնպէս և շնորհքն... զի դատաստանն՝ի միոջէ յանցուածոյ անտի՝ի դատապարտուԹիւն, այլ շնորհք՝ի բազմաց յանցուածոցն յարդարուԹիւն ,,:

— Գ. ՊաշխարուԹիւն յառաջ քան զմկրտուԹիւնն պատրաստուԹիւն լեալ է ԹողուԹեան մեղաց, և պայման կարևոր մկրտուԹեան չափահասակաց, և ոչ առարչական պատճառ ԹողուԹեան:

— Դ. ԸնծաւորուԹիւնք սկզբնական մեղաց ըստ աստուածախնամ տնտեսուԹեան Թողեալ են՝ի մեզ առ՝ի յօգուտ, որպէս զի չարչարակիցք լեալ Քրիստոսի, և փառաց նորա հաղորդս լինիցիմք: Ոչ այն որով բնուԹիւնս մեր Թէպէտ և բժշկեալ՝ի սկզբնական մեղաց, այլ յառաջին ամբծուԹիւն իւր ոչ դարձաւ: Նական ինչ ազդեցութիւն սկզբնական երանուԹեան՝էր կորուստ յաւիտենական երանուԹեան. դարձուցանէ մեզ զայն մկրտուԹիւն՝ի ձեռն վաստակոյն Քրիստոսի, և փառաւորապէս գործէ զայն՝ Թողլով՝ի մեզ զտկարուԹիւն բնուԹեանս ներգործեալ՝ի սկզբնական մեղաց անտի:

ԳՕԴՈՒԱԾ Գ

Քաղաքս պաշտօնեի մկրտուԹեան:

Ամենայն ոք եկեղեցական և աշխարհիկ, հաւատացեալ և անհաւատ, այր և կին, կարէ մկրտել վաւերաբար, և՝ի պահանջել հարկին՝ օրինաւորապէս իսկ: Այս է վարդապետուԹիւն Հարց և եկեղեցւոյ, և նոյն ինքն Աւգինէոս Ժ. գրէ՝ի կոնդակի իւրում առ Ֆլաւիանոս "Ի կարևոր դէպս ոչ միայն եպիսկոպոսն և քահանայ և սարկաւագ, այլ աշխարհիկ, կա և կին, և հեԹանոս և հերետիկոս կարեն մկրտել, պահելով զձևն սահմանեալ, և դիտաւորուԹեամբ կատարելոյ զոր առնէ եկե-

ղեցի ,, ։ Ա՛ստն անհրաժեշտ կարևորութեան խորհըրդոյս կամեցաւ փրկիչն մեր, զի որպէս ոմր և իցէ ջուր բնական պատկանաւոր է յայն, այսպէս և ամենայն ոք՝ ՚ի լինել հարկին՝ կարասցէ զոլ պաշտօնեայ ՚ի նոյն ։ Հարկ իսկանաք զվերանգ մօտալուտ մահուան, որ ոչ ներէ ժամանակ հասանելոյ պաշտօնէից խորհրդոյն ։

Վասանց այսր հարկի՝ կատարումն խորհրդոյս անկ է եպիսկոպոսաց և երիցանց. զի առաքելոց և նոքօք յաջորդաց նոցին ետ տէր զիշխանութիւն մկրտելոյ՝ յաւետեն. "Մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր ,, և այլն ։ Նայց սարկաւագունք ևս կարող են մկրտել, հրամանաւ եպիսկոպոսի, որպէս զվինպատեայ սարկաւագէ ասի ՚ի գործս առաքելոց (Ը. 12)։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Հարց. Ա. — Ա. Իշխանութիւն ուսուցանելոյ ըզհետ գայ իշխանութեան մկրտելոյ. "Մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ուսուցէ՛ք նոցա պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ ,, . և քանզի այս ոչ է աշխարհականաց, ապա և ոչ այն ։ — Բ. Ա՛ստն ոյոյ ոչ ուրեք ՚ի սուրբ գիրս գտանեմք աշխարհականաց մկրտեալ զոք ։ — Գ. Եւ սուրբն Կոռնիգոր նազիանզացի և սուրբն Աստիրոս ՚ի վտանգի ալեկոծութեան՝ ջառինն յանձն մկրտիլ յաշխարհականաց ։ — Դ. Ա՛պաքէն նոյն կարևորութիւն է արձակելոյ զոք ՚ի մեզաց և մկրտելոյ. արդ աշխարհականաց չիք իշխանութիւն արձակելոյ, ապա և ոչ մկրտելոյ ։

Պէ. — Ա. Ա՛յլ է ըստ պաշտաման վարել զիշխանութիւն, և այլ ըստ հարկի. արդ աշխարհականն որպէս կարող է առ հարկի մկրտել, նոյնպէս կարող է և ուսուցանել առ հարկի և կամ առանձինն ։ Ա՛յս և պարտք ևս դնին ինքահարց՝ ուսուցանել զանս իւրեանց մանուանդ զորբան ։

— Բ. Իշխանութիւն սուրբ գրոց ոչ այլ ինչ հարկ առնէ, քայց դիմել յաւանդութիւն ։ Ա՛յն իսկ որ ցուցանեն, զի Ա՛նանիա՝ յորմէ մկրտեցաւն Պօղոս, և եղբարք՝ յորոց կուռնելիոս հանդերձ տամբն իւրով ՚ի հրամանէ առաքելապետին մկրտեցաւ, աշխարհականք էին ։

— Դ. Կրիգոր և Աստիրոս ոչ այնպէս վտանգաւոր զմրրիկն համարեցան, և վասն այսորիկ չէր նոցա հարկ ընդունել յուժեքէ յաշխարհականաց զմկրտութիւն։

— Դ. Ա՛ն նոյն կարևորութիւն է մկրտելոյ և արձակելոյ զապաշխարողս. զի սոցա գոյ այլ հնար փրկութեան, իսկ մանկտւոյ չկայ բաց ՚ի մկրտութենէ։ Ա՛ւ դարձեալ զի սահմանադրին այսպէս եղեն կամք։

Ա՛ռակ. Բ. Պէտք կանանց չիցէ օրէնն մկրտել. զի Տերտուղիանոս և սուրբն Կիպրիան ասեն՝ թէ չէ նոցա իշխանութիւն ուսուցանելոյ և մկրտելոյ։ Ա՛ւ Դ. ժողովն Կարթագինեայ սահմանէ (կան. Ձ.) “Կին մարդ մի յանդգնեսցի մկրտել,,։

Պէ. Ո՛չ օրէնն տալ կանանց զպաշտօն մկրտելոյ, և ոչ օրէնն է նոցա մկրտել զոք և ըստ հարկի՝ ուր գուցեն արք. և այս է՝ զոր ասեն Տերտուղիանոս և սուրբն Կիպրիան։ Իսկ ժողովն Կարթագինեայ արգելու կանանց ջառնել մկրտութիւն ՚ի ձեռաց արանց, որպէս յայտ է ՚ի յաջորդ կանոնէն. վասն որոյ Կրատիանոս և վարդապետն վճռոց Պետրոս լոմբարտացի յաւելուն ՚ի վերձին ժողովոյն՝ բայց միայն ՚ի պահանջել հարկէն։

Ա՛ռակ. Գ. Ո՛ր ոչն ունի ոք, չկարէ տալ այլում. վասն որոյ սուրբն Ջերոնիմոս (՚ի թղթակցութենէն ընդդէմ Լուկիփերի. Թ.) ասէ. “Ա՛նլուր լրջի, ընդունել ըզքրիստոնէութիւն յայնմանէ՝ որ ոչն է քրիստոնեայ,,։ Ա՛ւ ՚ի կանոնիկոս ասէ. “Ա՛թէ երէց ոք գիտասցէ զի չէ մկրտեալ, մկրտեսցի և վերստին ձեռնադրեսցի. և մկրտեալքն եւս ՚ի նմանէ,,։

Պէ. Ո՛չ առաջի զայդ զնութեղէն իրաց է իմանալ. զի ահա բժիշկ, որոյ չկայ առողջութիւն, կարէ տալ զայն հիւանդի։ Իսկ զՋերոնիմեայ և զկանոնիկոյ զբանս՝ պարտ է իմանալ վասն վտանգի թերութեան խորհրդոյն՝ որ յայնպիսեաց պաշտօնէից պաշտեալ։ Ա՛պա թէ ոչ, չէ մարթ միաբանել զկանոնն զայն ընդ միւսումն՝ որ ՚ի նոյն գիրս ասէ. “Ա՛ր ոք մկրտեալ իցէ յանհնութ քահանայէ յանուն սրբոյ Երրորդութեան, վաւեր է մկրտութիւն նորա,,։ Ա՛ւ դարձեալ՝ չեն ինչ զարմանք՝ եթէ ոք ՚ի Հարց յաուաջ քան զսահմանել խնդրոյս այլազգ ինչ ՚ի չէնարտութենէ թուխկի խօսեալ։

ԳՕԴՈՒԱԾ Դ

Ցաղագս նրահասից :

Ամենայն ոք ընդունակ է մկրտութեան . զի "Նթէ ոչ ոք ծնցի 'ի ջրոյ և 'ի Հոգւոյ , ոչ կարէ մտանել յարքայութիւնն Ա՛ստուծոյ ,, : Նայց զորդիս անհաւատից , որ չև ևս 'ի չափ հասեալ էին , ոչ է օրէն առանց կամաց ծնողացն մկրտել . զի հասանէ վտանգ անտուրբ առնելոյ զխորհուրդն . քանզի զհետ աղանդոյ ծնողաց իւրեանց գնան որդիք յաձել հասակի : Ոչ է օրէն ատիպել և զոք 'ի մկրտութիւն , զի և ոչ ոք յայնչափ տուրբ և բարեպաշտ Թագաւորաց 'ի սկզբանէ և այսր յայսպիսի լինչ երբէք մտաբերեաց : Նսկ որ առ ահի ոք , առանց բռնադատութեան , ընկալցի զմկրտութիւն , վաւեր է խորհուրդն :

Նորաշանդք և զմկրտութենէ մանկտւոյ յարուցին վէճ , կէսք բոլորովին անվաւեր վարկուցեալ զայն , այլք կարևոր համարեալ 'ի զարգանալ նոցին առնուլ 'ի նոցանէ հաւանութիւն առ 'ի վաւերականութիւն ընկալեալ խորհրդոյն : Նայց եթէ այսպէս էր , ապա ըստ տէրունական բանին "Նթէ ոչ ոք ծնցի 'ի ջրոյ և 'ի Հոգւոյ , ոչ կարէ մտանել յարքայութիւնն Ա՛ստուծոյ ,, , էր մարթ վաղամեռիկ մանկտւոյ հասանել փրկութեան :

Ոչ 'ի տուրբ գրոց և ոչ յաւանդութենէ ունիմք օրէնս չմկրտելոյ զմանկտին . այլ մանաւանդ ուր ուրեք պատմին Հրեայք ամանք և հեթանոսք հանդերձ տամբն իւրեանց մկրտեալք , որպէս Լիդիա Ծիրանեվաճառ , տունն Ստեփանեայ և պահապան բանտին Փոլեայ , հարկ է իմանալ և մանկունս ընդ նոսա : Նյ Հարք ըզնոյն հաստատեն . զի Որոգինէս (գիրք ը . 'է հոմայեցն . գլ . չ .) ասէ . "Նկեղեցի յառաքելոց անտի ընկալաւ զաւանդութիւն մկրտելոյ զտղայս ,, : Նյ տուրբն Նրանոս աշակերտ սրբոյն Փոլիկարպոսի . (ընդդէմ հերձ . գիրք ը . գլ . խը . 4 .) "Նվրիատոս եկն առ 'ի փրկել զամենեսին զվերածնեալս Ա՛ստուած , զտղայս , զմանկունս , զպատանիս , և զծերս ,, : Նյ սան այնորիկ և ժո-

ղօշէ տրիպենտեան սահմանեաց զայս վարդապետու-
Թիւն ընդդէմ նորաղանդից։

Այլ Թէպէտ և կարևոր է խորհուրդս այս՝ ի փըր-
կուԹիւն, սակայն ոչք զմկրտուԹենէ Ձառեցին՝ այլք՝
ուսուցանեն զի սէր կատարեալ ընու զտեղի այնորիկ,
յորս միանգամ ցանկան և չկարէցեն մկրտիլ։ Այս ցան-
կուԹիւնս այս զօրուԹեամբ իսկ բաւական է յայնո-
սիկ, որոց չկոյ երբէք լուեալ զայնմանէ, և պատրաստք
իցեն առնելոյ զամենայն որ ինչ հրամայէ Աստուած։
Այս է զոր՝ ի սկզբանէ ասացաք մկրտուԹիւն հրոյ։
Եւ մկրտուԹիւն արեան՝ որ՝ ի նոյն սիրոյ յառաջ ե-
կեալ, այսինքն մարտիրոսուԹիւն՝ որով ոք տայ զանձն
իւր՝ ի մահ վասն Քրիստոսի, ըստ տէրունեան բանին.
“Որ կորոյս զանձն իւր վասն իմ, գտցէ զնա”։ (Ա՛ՊՂ.
Ժ. 39)։ Այս այս՝ ի մանկունս իսկ, չէ՛ ի տիս լեալ։
Ասան որոյ եկեղեցի տօնախմբէ անխտիր զտօնս վը-
կայից, և զանկնիք վկայելոցն։

Նրաիայից՝ ի չափ հասելոց կարևոր է՝ ի վաւերա-
կանուԹիւն խորհրդոյն նախ՝ կամք մկրտելոց. իսկ երկ-
րորդ՝ ոչ առ՝ ի վաւերականուԹիւն, այլ վասն ընդու-
նելոց զայն առ՝ ի յօգուտ, գիտել զկարևոր մասունս
հաւատոյ, և ունել հաւատս և յոյս և զղջումն՝ ի մե-
ղաց, հանդերձ սիրով՝ որ չէ հարկ զի նոցէ կատարեալ։
Այնաւք սուրբ եկեղեցւոյ՝ ի խորհուրդ մկրտուԹեան
և զրոշմի սահմանեցին մանկանն և կնքահայր կամ կըն-
քամայր, և սովորուԹիւն յաւել զերկոսին առ՝ ի միա-
սին, որպէս զի՝ ի մնալ նորա որք՝ ի ծնօղաց՝ նոքա լինին
նմա՝ ի տեղի հօր և մօր, խնամել զհոգևոր և զմարմնա-
ւոր պէտս նորա։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆՔ

Գործ. ա. — ա. Քրիստոս զհետ մկրտուԹեան
զուսուցանէր յարկ՝՝ ի պատուիրել առաքելոցն. “Ա՛կըր-
տեցէք զնոսա... ուսուցէք նոցա”։ Այս այլուր յարէ
զհաւատս յաստէն. “Որ հաւատայ և մկրտեսցի, կեց-
ցէ”։ Այս առաքեալն Պետրոս կցորդէ զայն ընդ ապա-
շաւանաց. (Գործ. Բ. 38.) “Ա՛պաշաւեցէք, և մկըր-
տեսցի իւրաքանչիւր ոք՝ ի ձէնջ”։ Ընդ տղայք ոչ ու-

սանել կարեն, ոչ հաւատալ, և ոչ ապաշաւել. ապա և ոչ իսկ մկրտել։ Այս ոչ ընդդէմ եւանէ բանն՝ "Եթէ ոչ ոք ծնցի՝ի ջրոյ և՝ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ ,,. (Յհ. գ. 5)։ Վասնզի և այլուր ասէ (գ. 54.) "Եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ, և արիւնքն զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս ,,։ Ո՛չ ի մանկունք անընդունակք են պատուիրանաց. և որպէս ոչ է նոցա կարևոր հաղորդել առ՝ի փրկութիւն, ապա և ոչ մկրտիլ։ — Բ. Այն որոյ և Վրիստոս օրինակաւն իւրով ուսոյց մեզ՝ յերեսներորդ ամի տիոց իւրոց ընկալեալ զմկրտութիւն։

Պե. — Ա. Ամենեցուն, որ Աստուծմէ մեղանս, պարտ է մկրտել. իսկ՝ի չափ հասելոյ՝ ընդ մկրտութեան ուսանել, հաւատալ և ապաշաւել. և զի տղայք ոչ կարեն ուսանել, հաւատալ և ապաշաւել, ոչ զկնի գոյ անտի զի ազատք լցեն և՝ի մկրտելոյ։ Այլ չիք հանդիպութիւն ընդ մկրտել և ընդ հաղորդել. զի զմկրտութիւն վասն ամենեցուն սահմանադրէ Վրիստոս՝ի հնարս փրկութեան, իսկ զհաղորդութիւն՝ի ձև պատուիրանի յերկրորդ դէմս աւանդէ որոց կարողն լցեն հաղորդել. առաջնումն յայտ առնէ զծնանել մարդոյ՝ի նոր կեանս՝ որ ամենեցուն է կարևոր. իսկ երկրորդումն զպահպանութիւն ընկալեալ կենացն՝ որ չէ կարևոր տղայոց։

— Բ. Վրիստոս ոչ էր կարօտ մկրտութեան, այլ կամաւորութեամբ և խոնարհութեան աղագաւ ընկալաւ զմկրտութիւն. այլ տղայք կարօտ են մկրտութեան, զի՝ի մեղս ծնանին։ Այս պատասխանի սրբոյն Վրիգորի Նազիանզացւոյ է։

Աստ. գ. — Ա. Ի յարմարդ և՝ի հինգերորդ դարս սովորութիւն կալաւ մկրտել՝ի չափ հասակի. և են իսկ՝ի նոցց՝ որք՝ի նպաստ սովորութեանն այնորիկ խօսին. և սուրբն Երոնիմոս (՝ի վերջին գլ. Ա՝ոն.) ասէ. "Ոչ է մարթ մարմնոյ ընդունել զխորհուրդ մկրտութեան, մինչ չև հոգւոյ ընկալեալ զձշմարտութիւնն հաւատոյ։ — Բ. Այլ չէ բաւական տղայոցն հաւատալ՝ի ձեռն հաւատոյ եկեղեցւոյ, և խոստանալ՝ի ձեռն կնքահօր. զի զինչ կարեն օգնել տղայոյ հաւատք եկեղեցւոյ. և զինչ խոստումն կնքահօրն՝ որ ոչն գիտէ զհանդերձեալ կամ երախային։

պխ. — ա. Սովորութիւնն այն յառաջելոյ զմկրտութիւն ոչ ըստ օրինի մուծաւ ի ջուրսդ և ի հինգերորդ դարու, դժկամակելով միշտ եկեղեցւոյ ընդ այն, և չարչ ընդդէմ այնորիկ բողոքելով։ Ու եթէ ոմանք ի նոցանէ այլազգ Թուին խօսել, սակայն և նոքա պարտ համարին ի պահանջել հարկին մկրտել զտղայս. և այս շատ է ի ցուցանել զվաւերականութիւն մկրտութեան նոցա։ Իսկ սրբոյն Ջերոնիմոսի զչափահասսակ երախայից են բանք, որպէս յայտ է ի կարգէ Ձառին։

— բ. Ջաւազք եկեղեցւոյ նոյն ինքն մկրտելն է ըզտղայս. և որպէս առանց ներգործական մեղաց նոցա՝ մեղքն Ադամայ համարին նոցա ի մեղս, նոյնպէս և առանց ներգործական հաւատոց նոցա՝ հաւատք եկեղեցւոյ համարին նոցա ի հաւատս։ Իսկ խոստումն և պատանութիւն կենաց յօրն կամ ծնողաց՝ արարողականք եւեթ են փոխանակ պատանութեանն՝ զոր չափահասակաց պարտ է առնել, և ոչ հայրն յէութիւն և ի վաւերականութիւն խորհրդոյն։ Ապա չէ ինչ փոյթ զի կնքահայրն զապագայ կամ տղայոցն անգիտանայցէ. հաւատք ունակական հեղանի ի ձեռն մկրտութեան ի հոգիս տղայոց, որոյ եղանին նոքա ունակաբար հաւատացեալք։

Ասէ. դ. Եթէ հաւատք եկեղեցւոյ ընուին զտեղի հաւատոց մանկան երախայի, չէր պարտ հերետիկոսացեալն տղայոց հաստանել փրկութեան, զի եկեղեցին՝ որ զնոսա մկրտէ՝ մոլորեալ է։

պխ. Ընդունակք են տղայք մտահաճութեանց, և անգէտք և անկարօղք խտրութեան այլ և այլ եկեղեցեաց՝ ի բարի հաւատս միամտութեամբ կան։ Ու ցրչափ տեւէ տգիտութիւն նոցա և անկարողութիւն, եկեղեցի սուրբ մնուցանէ զնոսա իբր աղախնորդիս. և թէպէտ արտաքոյ մարմնոյ եկեղեցւոյ կայցեն, այլ կից ցորդք են հոգւոյ նորա որպէս զայնոսիկ՝ որք յանյաղթելի տգիտութեան կան։

Ասէ. ե. — ա. Ի Քրիստոս յետ ասելոյ "Որ հաւատայ և մկրտեսցի՝ կեցցէ,, յաւելու. "Ջանք՝ այնոցիկ որ հաւատանն երթիցեն զհետ՝ այսոքիկ, յանուն իմ զևս հանցեն,, և այլն. արդ նշանքս այսոքիկ կցորդք մկրտութեան՝ ի սկզբան եւեթ եկեղեցւոյ կա-

բևռոլք էին, ապա և մկրտութիւնն։ — ր. Իսկ զբանն, "Եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ և ի Հոգւոյ,, պարտ է իմանալ զընծայհաց՝ որ ի ձեռն Հոգւոյն սրբոյ ներգործին ի Հոգի, որպէս յայտ է ի յաջորդ բանէն՝ "Զի ծնեալն ի Հոգւոյ՝ հոգի է,,։

պխ. — ա. Ել ասաց Վրիստոս "Եկայք՝ այնօրիկ որ ձկտին՝ երթ լցեն զՀետ,, այլ որ հաւատքն. ապա ըստ առարկութեանդ պարտ էր դադարել և հաւատոյ։ Այլ մկրտութիւն և հաւատք միշտ են կարևորք, վասն որոյ և եկեղեցի հաստատուն կալաւ զայնս յամենայն ժամանակի. իսկ նշանք, զի ի սկզբան եթէ եկեղեցւոյ կարևորք էին, դադարեցին։

— բ. Ը նորհք վերածնութեան ներգործին ի սուրբ Հոգւոյն, այլ ի ձեռն մկրտութեան ջրով. Հոգին սուրբ է պատճառ արարիչ, իսկ ջուրն պատճառ գործիական. վասն որոյ բանն տերունական "Ընծեալն ի Հոգւոյ հոգի է,,, հայի յարդիւնս վերածնութեանն՝ որ ի Հոգւոյն ներգործի։

Ա-ուկ. զ. — ե. Տղայոց ի հին օրէնս հաւատք եւեթ ծնողացն համարէր ի հաւատս. ընդէր և այժմ ոչ համարիցի քրիստոնեայ մանկտւոյ։ Առաքեալն մասին ուրեմն վիճակեալ էին նոքա քան զսոսա, և գալստեամբն Վրիստոսի անձկագոյն գտանի լեալ նոցա ձանապարհն փրկութեան։ — բ. Ամենաւանդ վասն այնօրիկ, որ յարգանդէ մերոյն վճարին, և չիք նոցա այլ ինչ հնար փրկութեան. և զիարդ մարթ իցէ համարել փրկչին և զնոսա ընդ նովին օրինօք գրաւեալ. այլ գէթ զնոսա ի հաստարակաց օրինաց անտի պարտ է ի բաց առնուլ։ — գ. Արդէս և տերունեանն պատգամ յայտ առնէ յասելն՝ "Եթէ ոչ ոք ծնցի վերուստին,. զի որ չև է ծնեալ՝ վերստին ծնանել ոչ կարէ։ — դ. Այս վարդապետութիւն առաջարկեալ ի Հայեստանեայսէ ի ժողովին տրիդենտեան, ոչ դատապարտեցաւ. և աստուածաբանք ոմանք ոչ անկշանք պաշտպանեն զայն։

պխ. — ե. Որ ինչ ի հին օրէնս սահմանեալ էին խնամք տղայոց վասն սկզբնական մեղաց՝ անգիտելի է մեզ առ ի չգոյէ աւանդից, և Հարց տարաձայն են զայսմանէ կարծիք, առաւելագունից ի նոցանէ համարելով սահմանեալ արարողութիւն ինչ առ այս։ Ասն որոյ

ոչ է մարթ առանց գիտուԹեան գուշակելով ևեԹ աստուածաբանել: Այլ բայէ ՚ի բաց մերժեմք զհանգիստուԹիւնդ. քանզի Արիստոսի, յոր լանգիրս այս հաստատեալ կայ, յայտնի են մեզ արդ կամք, և չիք այլ ևս երկբայել զկարևորուԹենէ դեղջս:

Նմին անգիտուԹեան գտանիմք վասն մանկտուց բաց ցասականացն կոչեցեալոց անհաւատից, այսինքն որոց չիցէ երբէք լսեալ զքարոզուԹիւն աւետարանին. զի սոքա ՚ի նոյն հանգամանս են, յորում էին մարդիկ ընդ բնական օրինօք: Այլ սակայն ոչ է մարթ աստի զհետ քեԹել Արիստոսի անձկագոյն զհանապարհն փրկուԹեան վասն մանկտուց հաւատացելոց գործեալ: Զանգի յառաջ քան զԱրիստոսի գալուստն առ նուազունս յոյժ պահէին Հրեայքն հաւատք, վասն որոյ և սակաւուց յոյժ օգնել կարէին ծնողացն հաւատք. իսկ գալստեամբն Արիստոսի, ՚ի տարածանել քրիստոնէուԹեան ընդ ամենայն, անհամար բազմուԹիւն մանկանց օգնուԹիւն գտանեն՝ որոց հասանէրն կորնչել:

— Բ. Այլ առարկուԹիւնդ ՚ի մեծ սկիզբն է հաստատեալ, որպէս ԹԷ Արիստոսի որպէս օրէնս էին սահմանեալ մանկտուց զկարևորուԹիւն մկրտուԹեան. ուր նա իբրև կարևոր պայման և հնարս սահմանեալ է զայն առ ՚ի հասանել յաւիտենական երանուԹեան՝ որ ձրի պարգևք նորա են, և զոր ոչն երբէք պարտեր ումեք տալ:

— Գ. Ամք յարգանդի մարցն կենդանասերին մանկունք՝ ծնեալք համարին, և ս և ըստ սուրբ գրոց. քանզի և ես Արիստոս ծնեալ, և հրեշտակն ասէր ցՅովսէփ. "Ամ ՚ի նմանէ ծնեալ է, ՚ի Հոգւոյն սրբոյ է,, (Մատ. ա. 20): Ապա որոյ ասել փրկչին "ԵԹէ ոչ ոք ծնցի վերուստին,,, ոչ ՚ի բաց տանի զչև ևս ՚ի լոյս ելեալ մանկունս:

— Դ. Ա՛րդապետուԹիւնդ այդ ոչ դատապարտեցաւ յայտնապէս ՚ի ժողովի անդ, այլ ՚ի բաց մերժեցաւ. և հերքեաց զայն Յոհաննես որպէս մոլորական: Եւ սուրբն Պիտոս Ե. Հայրապետն Հռոմայ ՚ի տպագրել վերստին մատենագրուԹեանցն Կլեմետանոսի՝ եԹ՚ ի բաց թառնալ զայդ վարդապետուԹիւն: Ապա որոյ կարծիք աստուածաբանիցն, որք պաշտպանեն զայն, ոչ է ընդու-

նելի. և եկեղեցի սուրբ ոչ երբեք յորդորէ զՆոսա օ-ժանդակել փրկութեան այսպիսւոյ մանկտւոյ հաւատովք իւրեանց և աղօթիւք. զոր առնէր արդեօք՝ եթէ նշոյլ ինչ Աչմարտութեան՝ի վարդապետութեանդ յայդմիկ նշմարէր։

Պաւղ. Ե. Ոչ ուրեք երբեք պատմի սրբոյ Կուսին և ոչ առաքելոց ընկալեալ զմկրտութիւն. ապա մարթ է առանց մկրտութեան հասանել փրկութեան։

Պե. Ի չպատմելոյ սուրբ գրոյ զմկրտութիւն սրբոյ Կուսին և առաքելոց՝ ոչ է օրէն համարել զնոսա չմկրտեալ։ Սուրբն ( )գոստինոս (՚ի Ընդդէմ աո- Վելէնտիանոս. մ՚կե.) մեղսութիւն համարի երկբայել զայսմանէ. զի առաքեալք, որք՚ի հրամանէն Քրիստոսի զայլս մկրտէին, ՚ի ր իսկ հնար զլանալ նոցա զանձինս՚ի մկրտութենէ։ Իսկ զսրբոյ Կուսէն երկբայելոյն ոմանք, վասն չկարօտելոյ նորա մկրտութեան՝ զի զերծ՚ի սկզբնական և՚ի ներգործական մեղացդ էր։ Այլք այլ առաւելագոյն յոյժ իրաւամբք համարին զնա մկրտեալ. քանզի մկրտութիւն ոչ միայն՚ի թողութիւն մեղաց է սահմանեալ, այլ և առ՚ի տալ շնորհս՝ որ ընդ անարատ սրբութեան Կուսին կարեն կալ՚ի միասին։

ԳԼՈՒԽ Գ

ՅԱՂԱԳՍ ԴՐՈՇՄԻ

Պրոշին է խորհուրդ սահմանեալ՚ի Քրիստոսէ, որ զպարգեւս Հոգւոյն սրբոյ յաւելու՚ի մկրտեալս, առ՚ի խոստովանել մահուամբ զՀաւատս։ Կոչի և ձեռնադրութիւն, զի յօծանել զՀաւատ նուիրելոյն մեռանաւ՝ դնէ զաջ իւր՚ի գլուխ նորին կատարիչ խորհրդոյն, և օծմամբ և ձեռնադրութեամբ կատարի խորհուրդն։

Կորաղանդք ուրացան և զայս խորհուրդ, համարեցուալ զայն իբր մաս ինչ արարողութեանց մկրտութեան, զոր թողին՚ի բաց. վասն որոյ նզովիւք դատապարտեցան՚ի տրիդենտեան ժողովոյ։ Ո՚ի սուրբ գիրք յայտնապէս ասացեալ զայն իբրև խորհուրդ։ "Իբրև լուան որ Հրեաստանեայք առաքեալքն էին՝ թէ և՚ի Սամարիա

ընկալան զբանն Աստուծոյ, առաքեցին առ նոսա զՊետրոս և զՅովաննէս. որք իջեալ կացին յաղօթս ի վերայ նոցա, որպէս զի առցեն զՍուրբ. զի ցայն ժամ չև ևս էր և ոչ ի վերայ միոյ նոցա հասեալ, բայց միայն մկրտեալք էին յանուն տեառն Յիսուսի,,. (գործ. ը. 14.) "Եւ իբրև լուան, մկրտեցան յանուն տեառն Յիսուսի՝ և ի դնել ի վերայ նոցա Պօղոսի զձեռն, եկն Սուրբ ի վերայ նոցա,,. (անդ ժթ. 5.) "Այլ որ հաստատեացն զմեզ ձեօք հանդերձ ի Քրիստոս, և օծ զմեզ, Աստուած է. որ կնքեաց զմեզ, և ետ զառհաւատչեայ Սուրբն ի սիրտս մեր,,. (բ. կոր. ա. 22)։ Արեքին այսոքիկ վկայութիւնք ընծայեն մեզ զամենայն որ ինչ կացուցանէ իսկապէս խորհուրդ, այսինքն նշան զգալի, արարողութիւն արտաքին, օծումն, ձեռնադրութիւն, և պարգև ընդհաց Սրբոյն. զի սոքօք կատարի խորհուրդ, և առանց աստուածային սահմանադրութեան չկարէ ինչ տալ զՍուրբ։ Վասն որոյ և ի սկզբանէ և այսր առ ամենայն հաւատացեալս պաշտեցաւ խորհուրդս այս իբր այլ ինչ ի մկրտութենէ. և հնագոյնք ևս ի Տեառնէ յաջորդք առաքելոց վկայեն զայս, սուրբն Թեոփիլոս եպիսկոպոս Անտիոքայ, սուրբն Կրանոս, Տերտուղիանոս, սուրբն Կիպրիանոս, սուրբն Իրենէ երուսաղէմացի, և այլք։

Եւ ժողովն Լաոդիկեայ (կան. խը.) ասէ. "Պարտ է այնոցիկ՝ որ մկրտին՝ զկնի լուացման աւազանին ընդունել զգերբերկնային օծումն եկեղեցւոյ, և արքայութեանն Քրիստոսի հաղորդս լինել,,։

ԱՌԱՔԿՈՒԹԻՒՆՔ

Գործ. ա. — ա. Այս կայութիւնք սուրբ գրոց ոչ ցուցանեն՝ զի դրոշմն իցէ խորհուրդ Հաստատութեան, քանզի զձրի պարգևաց խօսին, և ոչ զարբարար ընդհաց. և որպէս ի գործս առաքելոցն պատմի, (ժթ. 6.) յորոց վերայ առաքեալքն դնէին ձեռս՝ ի լեզուս խօսէին և մարգարէանային. վասն որոյ և Սիմոն մոգ արծաթոյ կամեցաւ գնել զպարգևան Աստուծոյ։ — բ. Պետր և Պաւղոս, Թէպէտ և չէր եպիսկոպոս, եդ ձեռս ի վերայ Սաւու-

ղէն՝ “Արդեօք զի տեսցէ և լցցի Հոգւով սրբով,,. (Թ. 17)։ — ԳՈ. Նա Պետրոսի տեսեալ, զի “Հանգեաւ Հոգին սուրբ ի վերայ ամենեցուն՝ որ լսէին զբանն,, (Ժ. 44.) Թէպէտ և չև ևս էին նոքա մկրտեալ, ոչ ևս եդ ի վերայ նոցա ձեռս յետ մկրտութեան։ — ԳՈ. Վասնզի Թերութիւն ածէ խորհուրդդ այդ զմկրտութեամբ, որպէս Թէ սա ոչ ամբողջ՝ այլ ըստ մասնեայ ածիցէ ընդհս։ — Ե. Ասէ առ ի հաստատութիւն հաւատոյ շատ է սուրբ հաղորդութիւնն, որպէս սուրբ Հարքն վարդապետեն։

ՊԿՈ. — Ա. Պարգևքն այնոքիկ՝ որ կցորդէին ձեռնադրութեան՝ այսինքն խորհրդոյ դրոշմին՝ ի սկզբան եկեղեցւոյ՝ ի հանդէս հաւատոյ, յաւելուածոյք իմն էին և առժամանակեայք. վասն որոյ և ոչ ամենեցուն նոյն պարգևք ընդհէին, այլ բաժնիւ ընդհոյ էին ըստ առաքելոյն՝ որ և զիւրաքանչիւրոց ընդհս ի Թիւ արկանէ. (ա. կոր. ժբ. 47)։ Ասէ սրբազարտ ընդհք էական մասն էր խորհրդոյն, որպէս ինքն իսկ Քրիստոս յայտ արար. (Ղ Ի. լիբ. 49.) “Աստարուք ի քաղաքիս Երուսաղէմ, մինչև զգենուցուք զօրութիւն ի բարձանց,,։ Եւ դարձեալ. (գործ. ա. 8.) “Առնուք զօրութիւն ի հասանել Հոգւոյն սրբոյ ի վերայ ձեր,,։ Եւ այս իսկ դնէին առաքեալք ձեռս ի վերայ ամենեցուն, վասն ոչ լինի հիմունս հաւատոյ ի համար արկանել զայն առաքեալն յասելն. (եբր. ձ. 1.) “Ելի միւսանգամ արկանել հիմն ապաշխարութեան ի մեռելոտի գործոց անտի, և հաւատոյն որ Քրիստոսէ, և մկրտութեանցն վարդապետութեան, և ձեռնադրութեան ձեռաց,,։

— Բ. Ընանիայի ձեռն դնելով ի վերայ Պաւղոսի՝ ընկալաւ նա զտեսութիւն, և ի ձեռն մկրտութեան զՀոգին սուրբ. եթէ զառաջինն ձեռնադրութիւնն հաստարիցիմք տուիչ Հոգւոյն, Հարկ լինի ասել՝ զի չև մկրտեալ՝ ընդունէր զՀոգին սուրբ։

— Գ. Սուրբ գիրք լուեն զձեռնադրութիւն Պետրոսի ի վերայ Կոռնելեայ և ընտանեաց նորա. և աստի չէ օրէն խնամատասխրել՝ Թէ չկոչէ նորա ձեռն եդեալ ի վերայ նոցա։ Պարթ է և ևս, զի տեսեալ Պետրոսի զնորօրինակ հանդիչել Հոգւոյն սրբոյ ի վերայ նոցա, որպէս ի վերայ նորին ի վերնատան, աւելորդ այնու-

հետև վանն նոցա զարարողութիւն խորհրդոյն համա-
րեալ էցէ։

— ԴՈ. Խորհուրդ դրոշմին ոչ ինչ ածէ թերութիւն
զմկրտութեամբ, զի բոլորովին այլ և այլ է երկաքան-
չիւրոցն գործ։ Վանդի մկրտութեամբ վերածնանիմք
ըստ Հոգւոյ, նորոգիմք և մտանեմք յեկեղեցի Քրիս-
տոսի. իսկ դրոշմաւ ընդունիմք զօրութիւն՝ի դաւանել
արիաբար զՀաւատս, զինուորեալք Քրիստոսի։ Ոչ
թէպէտ և զնոյն սրբազարար շնորհս երկոքեամբքն ևս խոր-
հրդովք ընդունիմք, սակայն առ այլ և այլ պէտս։

— Ս. Իսկ խորհուրդն Հաղորդութեան ըստ օրինակի
կերակրոյ մնուցանէ զմեզ Հոգեպէս, և պահէ զմեզ՝ի
Հոգևոր կենդանութեան։ Ո՞ օրաւոր ստեղծաւ Ք՛ զամ,
այլ ծառոյն կենաց կարօտեր՝ի պահպանութիւն զօրու-
թեան իւրոյ. զնոյն իմա և զկենարար մարմնոյն Քրիս-
տոսի. զոր վանն այսօրիկ իսկ փրկչէն մեր կոչէ Հաց կե-
նաց։

Ք՛ար. Բ. Ձարք զդրոշմն Համարին ամբողջական
մանն մկրտութեան, վանն որոյ և կոչեն զայն կատա-
րումն կամ լրումն մկրտութեան, և Կիպրիանոս յա-
ւելու (ընդ. հբ.) "Ձայնժամ լինոլ սրբի մարդ, և որ-
դի Ք՛ստուծոյ կարէ լինել, յորժամ երկաքանչիւրովքն
խորհրդովք ծնանի.,։

ՊԽ. Ձարք իբր մանն մկրտութեան Համարին ըզ-
դրոշմն, զի՝ի սկզբանէ երկաքանչիւր՝ի միասին պաշ-
տէին խորհուրդք, որպէս և ցարդ պաշտին յարևելս.
և դարձեալ զի դրոշմն կատարէ զքրիստոնեային, տալով
նմա հաստատութիւն՝ի Հաւատս Քրիստոսի, և զի-
նուոր Քրիստոսի զնա կացուցանելով։ Ըստ այսմ է ի-
մանալ զբան սրբոյն Կիպրիանոսի, որ՝ի նմին իսկ բանի
զանազանէ խորհուրդս երկոցունչ։

Ք՛ար. Դ. Ո՞ Իշխանութիւն դրոշմելոյ՝ քահանայից
Համարին Ձարք. վանն որոյ և սուրբ Ալեքսեան զիշ-
խանութիւն եպիսկոպոսաց այնու ևէթ Համարի գերա-
գոյն քան զքահանայութեան, զի նոքա ձեռնադրեն ըզ-
քահանայս։

ՊԽ. Ինդիրս այս ոչ է մանն Հաւատոյ. և արևմտեան
եկեղեցի իսկ՝ որ եպիսկոպոսաց պահէ զիշխանութիւն
դրոշմելոյ, օրինաւոր Համարի և քահանայից Հրաման-

նաև սրբազան Քահանայապետին դրոշմել Աստի յայտ է, զի բուն պաշտօնեայք խորհրդոյն եպիսկոպոսունք են. և առ՝ի չզրկելոց զմանկտին՝ի խորհրդոյն, ընդհեաւ է առ արևելեայս և քահանայից դրոշմել։ Ետ այսմ է լմանալ զբան սրբոյ Ակեբերանին և զայլոց Հարց։

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Բաղագս ձիւթոյ և ձևոյ դրոշմին։

Զիւթ այսր խորհրդոյ է օծումն Ճակատու նուիրելոյն՝ ձեռնադրութեամբ՝ի գլուխն։ Այլ զի մաշտոցք, ոչ Ղատինացն, ոչ Յունաց և ոչ մերքս ակնարկեն ինչ՝ի նօտրագիր աղդարարութիւնս զդրութենէ ձեռացդ, չեն ինչ զարմանք. զի օծումն ինքնին յայտ առնէ զդրութիւն աջոյ. քանզի յօծանել բուրվ զՃակատնուիրեցեալն՝ հարկ է պաշտօնէին գնել զաջն՝ի գլուխ նորա։ Այլ՝ի մեզ՝ թէպէտ և չիք ազդարարութիւն ձեռնադրութեանն, այլ յայտնապէս աւանդեալ կայ ուրոյն յաղօթսն՝ զոր պաշտօնեային յետ օծմանցն և այլոց ազօթարարութեանց և աղօթից ասէ. "Տէր Աստուած մարդասէր... ընդրկեա սմա՝ի ձեռնադրութենէս յայս՝ զպարգեւս խաղաղութեան Հոգւոյդ սրբոյ, և այլն"։ Այդ թերևս բաւական համարեալ իմաստուն պաշտօնէին։

Սակայն լուծանի և առարկութիւն ոմանց, զի՝ի սուրբ գիրս գրեթէ ամենայն ուրեք ձեռնադրութեամբ բացատրեալ է խորհուրդս այս, ուր՝ի մաշտոցս չիք ակնարկութիւն ձեռնադրութեան։ Զանգի և զօծմանէ քահանայութեան գիրք սուրբք չառնեն յիշատակ, էական մասամբն՝ այսինքն ձեռնադրութեամբ և եթ նշանակեալ զայն։ Այլ և օծութեանն յիշատակ՝ի գրոշմի՝ ոչ միայն՝ի բան առաքելոյն առ կորնթացիսն արարեալ է, զոր վերագոյն յիշատակեցաք, այլ և՝ գիրք յայտնապէս յիշատակեն զայն, և ընդհանուր ամենայն ազգաց սովորութիւն՝ի սկզբանէ և այսր զայս այսպէս հաստուցեալ

է առ մեզ։ Այսպիսի մաշտոցք նովին իսկ օծութեամբ և ընձեռնադրութեամբն յայտ առնեն, որպէս ասացաք։

Այսոցիկ մասն նիւթոյ մեռանին է ձէթ. այլքն ամենայն իւղք անուշունք, աւելի կամ նուազ ըստ տալոցութեան այլ և այլ ազգաց խառնեալ ընդ ձիթոյ՝ չեն ինչ կարևոր մասունք։ Այսոցիկ և օրհնութեան նորին, թէպէտ և պատրիարքաց և եպիսկոպոսաց պահեալ, այլ ըստ կարծեաց յոգունց աստուածաբանից՝ չէ յիշեալ թէևնէ խորհրդոյն, որպէս և ոչ օրհնութեան ջրոյ մկրտութեան. այլ երկաքանչիւր իսկ պատուիրեալ յեկեղեցւոյ, և ամենայն զգուշութեամբ պահելի։

Այսոցիկ ձև խորհրդոյս է բանն՝ զոր կատարիչ խորհրդոյն առ մեզ և առ Յոյնս յօծանել զձեռնադրեալսն ասէ. «Իւղ անոյշ ✠ հեղեալ յանուն Աբխատասի ՚ի վերայ քո, կնիք երկնաւոր պարգևացն»։ Այսոցիկ այլն ամենայն ձևք յօծանել զիւրաքանչիւր մասունս մարմնոյ, ամբողջական մասունք են։ Այսպէս և առ Յոյնս ձև էական այն է, զոր եպիսկոպոսն յօծանել զձեռնադրեալսն ասէ. «Կնքեմ զքեզ նշանաւ խաչի, և դրոշմեմ զքեզ մեռանաւս փրկութեան, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ»։ Իսկ աղօթքն՝ որ յառաջագոյն տարածմամբ ձեռաց զկնիքն արարեալ, մասն է ամբողջական։

ԳՕԴՈՒԱԾ Բ

Գաղափար արգասեաց դրոշմին։

Մասն է հաւատոյ մեր և խորհուրդս այս բերէ ընդ ինքն՝ որոց արժանապէսն ընդունին զայն. և որպէս մանուկ նորածինն՝ թէպէտ և մարդ ըստ էութեան, այլ տկար է ՚ի գործ, և ամենամբ տիոյն եղանի մարդ կատարեալ՝ կարող ՚ի գործ, այսպէս և մկրտեալն՝ թէպէտ և քրիստոնեայ, այլ անզօր է յաւաքինութիւնս. խորհուրդ դրոշմին տայ նմա զՀոգին սուրբ լրութեամբ եօթնարփեան ընդունացն զօրացուցիչ ՚ի գործ առաքինութեանց, և մանաւանդ ՚ի խոստովանութիւն քրիստոսական հաւատոց։ Այդգասիք այսր ընդունայ յայտնապէս երևի ՚ի

սուրբ առաքեալս. որոց չև զՅոգին սուրբ ընկալեալ, երկչոտք և տկարք էին. իսկ նովաւ զօրացան մինչև ցհեղումն արեան ի վերայ քրիստոսական հաւատոց: Եւ զի զնոյն Յոգի ի ձեռն սուրբ խորհրդոյս ընդունին հաւատացեալք, յայտ է ի սուրբ գրոց. "Յայնժամ եդին զձեռս ի վերայ նոցա, և առնուին Յոգի սուրբ,,. (գործ. ը. 17.) "Եւ ի գնել ի վերայ նոցա Պօղոսի ձեռն, եկն Յոգի սուրբ ի վերայ նոցա, խօսէին լեզուս և մարգարէանային,,. (գործ. ԺԹ. 5): Այս արտաքին նշանք, կարևորք ի սկզբան եկեղեցւոյ, ոչ էին էական արդեամբք ընծորհաց Յոգւոյն, վասն որոյ և դադարեցին: Այլ նեղքին և էական ընծորհք Յոգւոյն նոյն են միշտ, զոր փրկիչն մեր խոստացաւ առաքելոց, և ի ձեռն նոցա ամենայն հաւատացելոց. "Ահա ես առաքեմ զաւետիս Հօր իմոյ ի ձեզ. և դուք նստարուք ի քաղաքիդ Երուսաղէմ, մինչև զգենուցուք զօրութիւն ի բարձանց,,: (Ղ. Կ. ին. 49.) "Այլ առջիք զօրութիւն ի հասանել Յոգւոյն սրբոյ ի վերայ ձեր, և եղիջիք ինձ վկայք... մինչև ի ծագս երկրի,,. (գործ. ա. 8): Եւ զի ոչ առաքելոց ևեթ էր խոստումն այն փրկչին, այլ և ամենայն հաւատացելոց, յայտ է ի բանէ առաքելապետին. "Ապրեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ յանուն տեառն Յիսուսի Քրիստոսի ի թողութիւն մեղաց, և ընկալջիք զաւետիս Յոգւոյն սրբոյ, զի ձեզ են աւետիքս և որդւոց ձերոց, և ամենայն հեռաւորաց՝ զոր կոչեսցէ տէր Աստուած մեր,,. (անդ բ. 38):

Դարձեալ և խորհուրդս այս տպաւորէ կնիք անջնջելի որպէս զմկրտութեանն, ըստ բանի առաքելոյն. "Այլ որ հաստատեացն զմեզ ձեօք հանդերձ ի Քրիստոս, և օծ զմեզ, Աստուած է. որ և կնքեաց զմեզ, և ետ զաւհաւատչեայ Յոգւոյն ի սիրտս մեր,,. (Բ. Կոր. ա. 21): Յերտուղիանոս կոչէ զկնիքս զայս դրոշմ զինուորութեան Քրիստոսի. իսկ սուրբն Կիպրիանոս, սուրբն Աւուռնելիոս, սուրբն Լևոն, սուրբն Գրոտինոս և Գաւդորիոս կոչեն զայն՝ կնիք փրկութեան, կնիք արքունի, կնիք Քրիստոսի. և ի մեզ անուն իսկ խորհրդոյս նշանակէ կնիք:

ՅՕԴՈՒԱԾ Գ

Յաղագս պաշտօնեի և ընդունելութեան դրոշմին:

Բնիկ պաշտօնեայ խորհրդոյս եպիսկոպոսն է. բայց առ արեւելեայս վանս առաւելագոյն վտանգին անդրծմ վախճանելոյ, և վանս առաւելագոյն կարեւորութեան խորհրդոյն՝ զնակելոցն ի մէջ անհաւատից, սովորութիւն է և քահանայից պաշտել զայն: Վանս որոց և զհետ մկրտութեան յարեն զայն իսկ և իսկ, որպէս և արեւմտեայք առնէին մինչև ցերեքտասաներորդ դարս այլ նոքա արդ ի զարգանալ մանկանն և ի չափ հասակնել ընդունելոյ զսուրբ հաղորդութիւն, յայնժամ պաշտեն նմա զխորհուրդ դրոշմին, եթէ ոչ վտանգ մահու սպասեցէ կանխել:

Եւ ոչ սակաւ ուրեք առ արեւմտեայս իսկ ըստ պիտոյից ինչ՝ հրամանաւ Հռոմայ Հայրապետին լեալ է քահանայի պաշտել զխորհուրդս զայս. որպէս ցուցանեն զայս հրամանագիրք մեծին Գրիգորի, Ալեքսանդրոսի Բ. Ալիքսիոսի Դ. Յովաննու ԺԲ. Ուրբանոսի Ե. Լևոնի Ը. Գրիգորիոսի Զ. Ալեքսանդրոսի Ե. Ռեհնեդիկտոսի ԺԴ. Գլեմայ ԺԱ. Ռենեդիկտոսի ԺԴ. և այլոց քահանայապետից Հռոմայ. որպէս և ցարդ ի Հնդս և յայլ կողմանս անհաւատից, ուր սակաւք են եպիսկոպոսունք և ի Թաքստեան, նոյն իշխանութիւն է քահանայից:

Բայց Թէպէտ և մարթ իցէ քահանայի պաշտել զայս խորհուրդ, սակայն պարտ է նմա ի կիր արկանել զմեռան օրհնեալ յեպիսկոպոսէ, և չէ օրէն նմա իւրովի օրհնել զայն:

Խորհուրդ դրոշմին չէ ինչ անհրաժեշտ կարեւոր առ ի փրկութիւն որպէս զմկրտութեանն և զսպասաւորութեան. այլ կարեւոր է ըստ պատուիրանի, և մահուամբ մեղանչէ որ կամաւ զանց զնոսա առնիցէ:

Մկրտելոյ և եթէ օրէն է ընդունել զխորհուրդս զայս, զի մկրտութիւն դուռն է խորհրդոց. բայց չափահասից վանս արժանապէս ընդունելոյ զայն, պարտ է պատրաստել խոստովանութեամբ, և ի ընտրս Պատուոյ գոլ:

ԳԼՈՒԽ Դ

ՅԱՂԱԳՍ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Խորհուրդս այս կոչի և Պահոմութիւն, ՚ի գոհանալոյ փրկչին մերոյ զՅօրէ ՚ի սահմանելն զայն, և զի գարձեալ սովին ևեթ զարժանաւոր գոհութիւն մատուցանեմք զբարերարութեանցն Աստուծոյ։ Նոյն հաղորդութիւն կոչի, զի սովաւ կցորդիմք ընդ Քրիստոսի և ընդ միմեանս. “Օ՛ի մի հաց, մի մարմին եմք բազումք. զի ամենեքին ՚ի միոջէ հացէ անտի վայելեմք,,. (ա. կոր. Ժ. 17)։ Պոչի և օրհնութիւն վասն նուիրագործութեան հացին և բաժակի. “Բաժակն օրհնութեան, զոր օրհնեմք, ոչ ապաքէն հաղորդութիւն է արեանն Քրիստոսի,,. (անդ)։ Պոչի և պատարագ վասն պատարագելոյ Քրիստոսի խորհրդաբար ՚ի վերայ սեղանոյն, որպէս պատարագեցաւն ՚ի խաչին։ Պոչի և սպարզապէս Խորհուրդ ըստ առաւելազանցութեան, իբր գեր ՚ի վերոյ քան զայլ ամենայն խորհուրդս։

Հաղորդութիւնն է խորհուրդ սահմանեալ ՚ի Քրիստոսէ, որ բովանդակէ իսկապէս ընդ տեսակօք հացի և գինւոյ զմարմին և զարիւն՝ զՀոգի և զաստուածութիւն նորա ՚ի անուանդ հոգւոց։

Պրևելեան և արևմտեան եկեղեցիք ՚ի սկզբանէ և այսր խոստովանին և հաւատան, զի սա է Ճշմարիտ խորհուրդ. որպէս և են ՚ի սմա Ճշմարտիւ ամենայն յատկութիւնք խորհրդոյ։ Ո՛ի հացն և գինի յետ փոխարկելոյ իսկ ՚ի մարմին և յարիւն Քրիստոսի՝ պահեն զտեսակ իւրեանց, նշան զգալի։ Եւ նշանս այս ցուցանէ նախ զբաշխարանս փրկչին. “Պառնիցս անդամ ՚ի ձէնջ ուտիցէք զՀացս զայս և զբաժակս ըմպիցէք, զմահն տեառն պատմեցէք,,. (ա. կոր. ԺԱ. 26)։ Ցուցանէ դարձեալ և զընդունա Պատուոյ, զոր ՚ի ձեռն խորհրդոյս ընդունիմք. “Ալ ուտէ զՀացս զայս, կեցցէ յաւիտեան,,. (Յհ. Զ. 59)։

Եւ զի ՚ի Քրիստոսէ խորհուրդս այս է սահմանեալ, զայն բացայայտ աւանդեն սուրբ գիրք. “Ո՛ Յիսուս հաց,

*օրհնեաց և եբեկ, և ետ աշակերտացն և ասէ. Առէք կերայք, այս է մարմին իմ: Եւ առեալ բաժակ՝ գոհացաւ, ետ նոցա և ասէ. Արբէք ՚ի դմանէ ամենեքին, զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ ՚ի վերայ բազմաց հեղու ՚ի թողութիւն մեղաց ,,. (Մատ. ԻԶ. 26.)“ Ո այս արարէք առ իմոյ յիշատակի ,,. (Ղ Կ. ԻԲ. 19): Արդ՝ առ քանիս սահմանէ Քրիստոս զխորհուրդն, և տայ իշխանութիւն առաքելոց, և նոքօք եպիսկոպոսաց և քահանայից զնոյն խորհուրդ կատարելոյ:

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ա՛տ. Ա.—Ա. Ա՛յլաբանականք են ամենայն բանքն Քրիստոսի որ ՚ի Կափառնաում, առեալք ՚ի սքանչելեաց բազմապատկութեան հացին. և նշանակեն զհաւատս մահու նորա, որպէս և ինքնին յայտ առնէ յասելն (Յհ. Ջ. 52.) “Հացն զոր ես տաց՝ մարմին իմ՝ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի ,,: — Բ. Եւ վասն այսորիկ ես զըստ բառին իմացուած Հրէից ոչ յանդիմանեաց, քանզի շատ իսկ զիւրս իւր բացայայտեալ էր. այլ մանաւանդ հաստատեաց զբռնական մահ իւր՝ բաժանմամբ մարմնոյ և արեան իւրոյ որպէս կերակուր և ըմպելի: — Գ. Կա զի յառաջ քան զվերջին ընթրիսն խօսեցաւ Յիսուս զայսոսիկ, յորժամ էր իսկ մարթ Հրէից իմանալ զբանս նորա զհաղորդութենէ, վասն որոյ և ընդունայն խօսեցեալ լինէր:

Պե. — Ա. Ի բազմապատկութենէ հացին՝ որ օրինակ իսկ էր սրբոյ հաղորդութեանն՝ պատճառս էառ Քրիստոս ձառել զսուրբ խորհրդոյն, այլ ոչ եթէ այլաբանութիւն անտի առեալ: Վասնզի Հրեայք վասն ուտելոյ ՚ի կորստական հացէ անտի խնդրէին զնա, և ինքն առաջի դնէր նոցա զկերակուրն՝ որ միայ ՚ի կեանն յաւիտենից, զհացն Աշմարիտ՝ որ կեանս տայ աշխարհի, և որ առանց համեմատութեան գեր ՚ի վերոյն է քան զմանանայն: Եւ առ ՚ի բաց տանելոյ զամենայն իմանալ այլաբանական, յասելս է. “Ո՛վ ի մարմին իմ Աշմարիտ կերակուր է, և արիւն իմ Աշմարիտ ըմպելի է ,,:

Լակ մահուն իւրոյ անգանօր յիշատակ, առ ՚ի ցուցանել՝ զի զնոյն մարմին զենեալ ՚ի խաչի՝ ընդ տեսակաւ հացի տալոց էր ՚ի կերակուր վասն կենաց աշխարհի. զոր և յայտ առնէ յասելն՝ «Հացն, զոր ես տաց, մարմին իմ է»։

— ԲՈ. Նմիկ այդչափ քաջայայտ էր այլաբանութիւն Վրիստոսի՝ որպես նորազանդք համարին, որպես յոհաննեան գարուց և այսր ինքեանք ևեթ հասու եղեն այդմ, և ոչ ոք ՚ի հարց, ոչ ոք ՚ի մեկնչաց, և ոչ տիեզերական եկեղեցի կարաց ՚ի վերայ կալ իմաստից բանին. յայտ է թէ բռնի և կամակորեալ է այլաբանականդ այդ իմացուած։ Պանաւանդ զի զբռնական մահուանէն ընք և ոչ ակնարկութիւն ՚ի բանս անդ փրկչին, և նորաստեղծ իմն է յոհանէսէ և յերգելոյ զմարմին և զարիւն իմանալ զայն։

— Գ. Պրպէս յառաջ քան զսահմանել զխորհուրդ մկրտութեան խօսեցաւ Վրիստոս զայնմանէ (Յհ. Ճ.), նոյնպէս և զհաղորդութենէ կամեցաւ խօսել մինչ չև սահմանեալ զայն, առ ՚ի պատրաստելոյ զսիրտս և ընդմիտս հաւատացելոց առ երկոսին գլխաւորագոյնս ՚ի խորհրդոց։ Նմիկ իրեայք չև կարէին հասու լինել իւրեանց՝ զոր խոստանայր, պարտ էր նոցա առժամն հաւատալ՝ որոց յիւրումն ժամանակի մնայր նոցա հասու լինել, որպէս հաւատացինն առաքեալք։

Յհ. Զ. — Ը. Ո՞չ հոգևոր Ճաշակմանէ, այսինքն զհաւատոց է իմանալ զբանն Վրիստոսի. քանզի որոց Ճաշակեն խոստանայ անպայման զկեանս. արդ ոչ ամենեքեան՝ որք հաղորդինն՝ ընդունին զկեանս, այլ որ հաւատովքն հաղորդին։ — Ը. Ո՞այս ինքն իսկ Վրիստոս յայտ առնէ յասելն (64.) «Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ. զբանն, զոր ես խօսեցայ ընդ ձեզ, հոգի է և կեանք»։ — Գ. Վ՚ան որոյ և Պետրոս յասելն Վրիստոսի՝ «Մինէ և դուք կամիք երթալ, պատասխանի ետ. Տէր, առ ո՞վ երթիցուք, բանս կենաց յաւիտենականաց ունիս. և մեք հաւատացաք և ծանեաք՝ եթէ դու ես Վրիստոսն որդի Աստուծոյ»։ Վ՚ապա զայնցանէ ևեթ խօսի Վրիստոս, որք հաւատով զհացն զայն Ճաշակեն։

ՊԽ. — Ը. Վրիստոս խոստանայ զկեանս հաղորդե-

լոց ըստ օրինի, որպէս հաւատացելոց զփրկութիւն. ոչ անխտիր ամենայն հաւատացելոց, այլ ոմք հաւատանն ըստ օրինի. քանզի և դեւք հաւատան և սարսեն: Ո՛ւ ամենայն իսկ խորհրդոց ընդունելութիւն, և պատուիրանացն իսկ Աստուծոյ պահպանութիւն, եթէ ոչ ըստ օրինի առնիցին, խոստացելոց բարեացն ոչ պատահեն:

— Բ. Ոգի և կեանս Վարիստոս զբանս իւր յայտ առնէ, առ՛ի քաց տանելոց զնմաստ մարմնաւոր և սովորական կերակրոյ, և ոչ զՀոգեմարտութեան մարմնոյ իւրոյ. վասն որոյ սուրբն ( )գոտիկոս ասէ (Ճառ իէ. ՚է Յհ. Թիւ Ե.) "Ցերկր, և ոսրպէս մարմին ինչ ոչ օգնէ, ուր գու ինքն ասացեր՝ Ոչ ոտքէ ղմարմին էմ, ոանէ ղկեանսն յաւերժականս: Ինչ ոչ օգնէ, որպէս Ոգեացքն համացան... որպէս որ՛ի սպանդանոցի վաճառի, և ոչ որ կենդանին է,,: Ո՛ւ եթէ հոգի անդ զհոգևորն այլաբանէ, ապա և մարմնոյ զմարմնաւորն պարտ էր նշանակել, որ անտեղին է, և ոչ սակաւք յարդի նորաձանդից իսկ խոստովանին զանտեղութիւնս զայս:

— Գ. Պետրոս՛ի դաւանել անդ զաստուածութիւնն Վարիստոսի, ելից ընդ այլ առաքեալս զպայմանն՝ զոր պահանջէրն Վարիստոս անդստին՛ի սկզբանէ բանից, առ՛ի տալ նոցա զկերակուրն՝ որ մնայ՛ի կեանն յաւիտենականս. "Այս է գործն Աստուծոյ, զի հաւատասջիք յայն՝ որ առաքեացն զիս,,: Իսկ Ոգեացք, զի ոչ լցին զպայմանս զայս և ոչ հաւատացին զաստուածութիւնն Վարիստոսի, զրկեցան՛ի կերակրոյ անտի: Այսպէս և նախ քան զյարուցանելն զԼազար՝ խնդրեաց հաւատս՛ի Մարթայէ, հաւատալ՝ զի կարող էր յարուցանել զեղբայր նորա: Եւ՛ի պատասխանել Մարթայի. "Այո տէր, ես հաւատացի՝ եթէ դու ես Վարիստոս որդի Աստուծոյ,,, յարոյց զմեռեալն:

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Ջի մարմին և արիւն Քրիստոսի գոն իսկապես՝ ի սուրբ հաղորդութեան։

Ջի՝ ի սուրբ խորհրդեանս են իսկապէս և գոյացապէս մարմին և արիւն, հոգի և աստուածութիւն Քրիստոսի, ցուցանեն զայն սուրբ գիրք. նախ՝ ի խոստմանէն Քրիստոսի, երկրորդ՝ ի սահմանադրութենէն, երրորդ՝ ի բանից առաքելոյն զսուրբ հաղորդութենէ։

Վրկիչն մեր յետ ցուցանելոյ Իւրեից զառաքումն իւր առ՝ ի Հ՚ստուծոյ Իւրէ, և զի պարտ էր նոցա հաւատալ յաստուածութիւնն իւր, նախապատմէ զխորհուրդն մեծ՝ զոր սահմանելոցն էր, և ասէ. "Այս եմ հացն կենդանի՝ որ յերկնից իջեալ. եթէ ոք ուտիցէ՝ ի հացէ յայսմանէ, կեցցէ՝ ի յաւիտեան. և հացն՝ զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի։ Ածանէին ընդ միմեանս Իւրեայքն և ասէին. զիա՞րդ կարէ սա տալ մեզ զմարմին իւր ուտել,,. (Յհ. Ը. 51)։ Հ՚պա Իւրեայք զՀաշակմանէ մարմնոյն Քրիստոսի իսկապէս իմացան զբանն, զի այլաբանականին չէր մարթ խառնել զնոսա այնպէս։ Ասէ Քրիստոս փոխանակ հանդարտելոյ զնոսա և մեկնելոյ զբանս իւր՝ զի առակաբոսէր, ընդհակառակն և աւս հաստատէ զայն՝ ասելով. "Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձին։ Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենականս, և ես յարուցից զնա յաւուրն յետնում. զի մարմին իմ Ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ Ճշմարիտ ըմպելի է։ Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, յիս բնակեացէ, և ես՝ ի նմա։ Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր, և ես կենդանի եմ վասն Հօր. և որ ուտէն զիս, և նա կեցցէ վասն իմ։ Այս է հացն, որ յերկնից իջեալ. ոչ որպէս կերան հարքն ձեր զմանանայն, և մեռան. որ ուտէ զհացս զայս, կեցցէ յաւիտեան,,։ Այս ամենայն բացատրութիւնք հաստատէին զիմացուածք Իւրեից. ապա ուրեմն նոյն էին և

միտք Կրիտոսի, և կամէր զի ըստ ձայնին իմանայցեն զբանն, և մի այլաբանօրէն։ Կայ ասն որով և բազումք յաշակերտաց նորա սարտեան՝ ասելով. "Ահիստ է բանդ այդ, ոչ կարէ լսել զմա"։ Զգոյր տեղի գայթակղելոյ, և ոչ իսկ մարթէր գայթակղել նոցա, եթէ զՀաշակուժն զայն իմացեալ էին, ոչ իրապէս՝ այլ այլաբանօրէն և ըստ հաւատոյ։ Իսկ արդ խաբէր զնոսա Կրիտոս, և տարապարտ պատճառս տայր գայթակղութեան նոցա. քանզի լոյր. այլ դարձեալ վերստին հաստատէր զբանն՝ ասելով. "Ոչ գայթակղեցուցանէ զձեզ. իսկ արդ եթէ տեսանիցէք զորդի մարդոյ, զի երանիցէ ուր էր զառաջինն"։ Այս ինքն զի եթէ այժմ՝ մինչ առ ձեզս եմ՝ գայթակղիք, ոչքափ ևս առաւել գայթակղեսջիք յորժամ ոչ ևս իցեմ առ ձեզ. եթէ այժմն չհաւատայցէք զիս, ոչքափ ևս առաւել չհաւատայցէք յորժամ ոչ ևս տեսանիցէք զիս։ Արդ այսուիկ հաստատէ յայտնապէս զնկարագրական իմաստ բանին, այսինքն զկրական Հաշակուժն մարմնոյն. ապա թէ ոչ, ընդ ինչ ժամուարտոյն պարտ էր լինել նոցա հաւատալ յետ համբարձման իւրոյ քան յայնժամ։ Այլ ոչպէս մարթէր նմա թողուլ, զի բազումք յաշակերտաց իւրոց ուծանային՝ ի նմանէ նիւթական իմացուածով բանին, այն որ յանդիմանէրն զաշակերտս իւր՝ յորժամ զառակ իմոյն ոչ իմացան յայլաբանել նորա զաղանդոյ փաւխեցւոյն։ "Յայտնեցէ բազումք յաշակերտաց նորա զոգան յետս, և ոչ ևս շրջէին ընդ նմա"։

Այն՝ զոր խոստանայր Կրիտոս տալ իբրև գեր՝ ի վերոյ ինչ քան զմանանայն, եթէ ոչ մարմին իւր էր՝ այլ օրինակ նորին, ևս իւիք առաւելոյր քան զմանանայն. զի և մանանայն օրինակ էր սրբոյ հաղորդութեանն, և իբրև հաց՝ առաւել քան զայն, զի յերկնից իջեալ։

Այսպա ուրեմն ոչ է մարթ զխոստումն Կրիտոսի իմանալ այլաբանօրէն, առանց կամակորելոյ զբանս նորա։

Զնոյն հաստատէ Կրիտոս և՝ ի սահմանադրել ընթրհնորդն։ "Ահա մինչդեռ ուտէին նոքա, առ Յիսուս հաց, օրհնեաց և եբեկ, և ետ աշակերտացն և ասէ. Առէք կերայք, այս է մարմին իմ։ Ահա առեալ բաժակ,

գոհացաւ, եւ նոցա, և ասէ. Ա՛րբեք ՚ի դմանէ ամենեքին, զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ ՚ի վերայ բազմաց հեղու ՚ի թողութիւն մեղաց,,. (Ա՛ծն. խղ. 26):

Այլ էր մարթ բացայայտագոյն քան զայս յայտ առնել Ա՛րիստոսի զկրաւական ներկայութիւն մարմնոյ և արեան իւրոյ ՚ի տուրբ խորհրդեան. այս է մարմին իմ. այս է արիւն իմ: Ա՛նդհանուր կանոն է մեկնութեան տուրբ գրոց, առնուլ զբառս ըստ բնիկ նշանակութեան՝ ուր ոտրեք լինի հարկ առնլոց զայնս այլաբանօրէն. ապա թէ ոչ, ՚ի բաց բառնայր ամենայն վաւերականութիւն նոցա: Ա՛րդ լինք հարկ աստանօր այլաբանօրէն մեկնել զբառս սահմանադրութեան սրբոյ հաղորդութեան, ոչ ՚ի բնէ իրացն, ոչ ՚ի հրէական սովորութենէ ուստեք, և ոչ յաղթեցութենէ կամ ՚ի բայատրութենէ խօսողին. ընդէր լիցէ ապա թողուլ զբնիկ նշանակութիւն, և յայլաբանականն լինել ապաստան: Ա՛ի թէ խորհուրդս այս առաւել լիցէ զժուարահաս մարդկեղէն մտաց քան զանհասանելի խորհուրդ մարդեղութեան: Ա՛նառաւանդ զի ոչ զդուշնաքեայ իրաց բանք էին անդանօր այլաբանօրէն խօսելոյ, այլ նոր օրէնս, նոր ուխտ հաստատէր, և հարկ էր պարզ և յայտնի խօսել նմա, որպէս և ասէ. այս է մարմին իմ. այս է արիւն իմ: Յայտ է ապա զի չէ մարթ այլազգ իմանալ զբանքս, առանց կամակորելոյ. և որք այլազգն կամին իմանալ նորաձանգք՝ յերից դարուց հետէ նորանոր մեկնութիւնս անդադար հնարեալ, և տակաւին չկարեն ընդ իրեարս իսկ միաբանել:

Ի վերայ բանիցն Ա՛րիստոսի, զոր երեքին ևս աւետարանիչք միօրինակ ասանդեն՝ առանց ուրուք ՚ի նոցանէ զկարծեցեալ առակաբանութիւնն բայատրելոյ, յաւելու առաքեալն. "Ա՛յսուհետև որ ուտիցէ զհացս, կամ ըմպիցէ զբաժակս տեառն անարժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ և արեանն տեառն. փորձեսցէ մարդ զանձն իւր, և ապա ՚ի հացէ անտի կերիցէ և ՚ի բաժակէն արբցէ. զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ, դատաստանս անձին իւրում ուտէ և ըմպէ, զի ոչ խտրէ զմարմինն տեառն,,: (Ա՛. Կոր. ԺԱ. 27): Ա՛թէ որ զայս ամենայն ահագին ապառնալիս առաքեալն ՚ի վերայ օրինակի եւեթ մարմնոյն Ա՛րիստոսի կա-

մեզի մեկնել, բառնայ ընչանակութիւնս բառից և բայ-
ցատրութեանց:

Ա՛ղդ առ՝ի յայտնագոյն առնել զգօրութիւն այս ա-
մենայն բանից, անդուստ՝ի վերուստ համառօտեացուք
զվարդապետութիւնն Յրիստոսի արարեալ՝ի Կափառ-
նաւմ: Սկիզբն առնէ բանիցն՝ ասելով. "Նրթայք
գործեցէք, մի զկորստական կերակուրն, այլ զկեր-
կուրն՝ որ մնայ՝ի կեանն յաւիտենականս, զոր որդին
մարդոյ տացէ ձեզ,,: Ա՛հա որ լինչ պարտն էր Յրէից
գործել, այսինքն հաւատալ. ահա և նշանն՝ զոր նոքա
խնդրէին առ՝ի հաւատալ, այսինքն կերակուրն՝ զոր
խոստանայր Յրիստոս տալ նոցա: Եւ ապա առ՝ի ցու-
ցանել զմեծութիւն նշանին, բացատրէ զխոստացեալ
կերակրոյն զէութիւն, զյատկութիւնս, զարգասիս, և
զկարևորութիւն, և ասէ. "Հացն՝ զոր ես տամ՝ մար-
մին իմ է, զոր ես տամ վասն կենաց աշխարհի,,: Ա՛ար-
տընչէին ընդ միմեանս Յրեայք, և ասէին. զիա՞րդ կա-
րէ սա տալ մեզ զմարմին իւր յուտել: Եւ Յիսուս դար-
ձեալ բացայայտագոյն զնոյն բան հաստատէ. "Ա՛մէն
ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ
մարդոյ, և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յան-
ձին. որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, ունի
զկեանս յաւիտենականս... զի մարմին իմ ճշմարիտ
կերակուր է, և արիւն իմ ճշմարիտ ըմպելի է,,:

Եւ զի այս ամենայն բանք ոչ առակաւ ասացեալ են,
այլ ըստ բնիկ նշանակութեան, յայտ է նախ՝՛ի համե-
մատութենէն, զոր առնէ ընդ մանանայն և ընդ կեր-
Քանզի խորհուրդ սուրբ հաղորդութեան պէր՛ի վերոյ քան զամենայն խորհուրդս է, ըստ այնմ խնդրելոյն և պատրաստութիւնք յընդունօղս։ Ակնք՛ի պատրաստութեանց աստի հոգևորք են, այլք մարմնաւորք։ Կա՛ բևորացոյն քան զամենայն պատրաստութիւնս է մաքրութիւն խղճի մաց. պարտ է հաղորդելոյն չունել ինչ խիղճ մահուչափ մեղաց՛ի հաղորդելն. զի ահագին դատապարտութիւն է այնոցիկ՝ որ ծանր մեղօք՛ի սեղան անդր մատչին. յայտնի են առաքելական սպառնալիքն։ "Որ ուտիցէ զՀացս կամ ըմպիցէ զբաժակս տեառն անարժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ և արեանն տեառն. փորձեսցէ մարդ զանձն իւր, և ապա՛ի հացէ անտի կերիցէ, և՛ի բաժակէն արբցէ. զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ, դատաստանս անձին իւրեամ ուտէ և ըմպէ. զի ոչ խարէ զմարմինն տեառն,, (ա. կոր. ժա. 27)։ Կ՚ասա որ հաղորդին մահացու մեղօք, անսուրբ առնէ զմարմին և զարիւն տեառն, և խաչահանութեաց նորին հաւասար, ըստ բացատրելոյ Յաղոց, պարտաւոր գտանի։

Վասն որոյ որ՛ի մահուչափ մեղս է, պարտի նախ քան զսուրբ հաղորդութիւնն արբել զանձն՛ի մեղաց ապաշխարութեամբ. և թէպէտ զղջացեալ եւս իցէ, պարտ է նմա խոստովանիլ և ընդունել զարձակումն։ "Ո՛ր ոք այսուհետև Յուդաս եկեալ կայցէ, մի՛ ոք արծաթասէր. թէ չկայ աշակերտ՛՛ի բաց մեկնեացի, քանզի ընդունի զայնպիսինս տեղանս. Կ՚աշակերտօքս հանդերձ, ասէ, առնեմ զզատիկս։... Ո՛հտ դիր ազաչեմ, արքեպնական սեղան է, հրեշտակք սպասաւորեն սեղանոյն. ինքնին իսկ Թագաւորն հասեալ է՛ի սեղանն... պայ ընդ զբազմականօք, և ընդ ամենեսեան միշտ խօսի, և ասէ ցխղճականն. Ինկեր, զիա՞րդ կաս ասա որ ոչ ունիս հանդերձ, Ցասաց՝ թէ ընդէր բազմեցար,

այլ յառաջ քան զբաժանիլն՝ և մտանելոյ ևս անարժան համարեցաւ։ . . . Այս ասացուիկ որ՝ ի մեզան են, յաւուրս պատերազմի որոշեմք՝ ի բաց, և ապա զիսորհուրդն կատարեմք ,, ։ (Այեէ. հտ. ՟ը. Հատ. խՁ. և Այեա. Հատ. ը)։ Յարկ եւեթ պատարագելոյ, առ՝ ի չգոյէ խոտոր վանահօր, բաւական առնէ զկատարեալ զղջումն հանդերձ պատրաստ յօժարամտութեամբ վազապոյն խոստովանութեան։ Այլ զայդ ներելն մեզք ոչ արգելուն զհաղորդութիւնն. այլ զրկեն եւեթ՝ ի մանկ ընծայիցն խորհրդոյն, եթէ ուրուք սիրտ զակատեալ լոյծ՝ ի նոսին։ Այս ընդունելոյ զառաւտուն իւն ընծայիցն նորա, պարտ է մատչել՝ ի սեղան անդր տուրբ սրտիւ յամենայն մեզաց, անյար՝ ի ցանկութիւն ներելեաց իսկ մեզաց, կենդանի հաւատով, և ըղձիւք միանալոյ ընդ Քրիստոսի ջերմեռանդն սիրով և խորին խոնարհութեամբ։

Նոյն պատրաստութիւնն ըստ մարմնոյ առ տուրբ հաղորդութիւնն, և ծոմապահութիւն յամենայն կերակրոց և ըմպելեաց, ոչ առնուլ՝ ի կէս գիշերոյ և անդր՝ և ոչ գոյցն ինչ արբուծին դեղոյ կամ ջրոյ. Թէև Հայոց անընդունակ է պատուիրանս, և որ անծոմ հաղորդի՝ մահու չափ մեղանչէ։ Այլ միայն հիւանդաց օրէն է ընդունել առանց ծոմապահութեան զթոշակ երկնաչօք Հանապարհին, և գուն և կարի իսկ գուն ուրեք հարկ պատարագելոյ կամ զտուրբ խորհուրդն Հաշակելոյ կարէ ազատ առնել զքահանայն՝ ի պահպանութենէ պատուիրանիս։

ԳԼՈՒԽ Ե

ՑԱՂԱԳՍ ՍՐԲՈՑ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Պատարագ ըստ քրիստոնէական հաւատոյ է զոհ նուագոյ օրինացս, որով քահանայն նուիրէ Աստուծոյ զմարմին և զարիւն Քրիստոսի ընդ տեսակաւք հացին և գինւոյ։ Եւ է զոհ Հշմարիտ սահմանեալ՝ ի Քրիստոսէ. որ միանչ չեւ պատարագեալ՝ ի խաչին՝ մասոյց Աստուծոյ Նօր զմարմին և զարիւն իւր՝ ի նուէր, պատուիրեալով

աշակերտացն առնել միշտ զայն ՚ի յիշատակ մահուանն իւրոյ ։

Պատարագն է պաշտօն գերագոյն , Որմտուծոյ ևեթ պահեալ . վասն որոյ ՚ի մատուցանել պատարագ ՚ի տօնախմբութիւն կամ ՚ի պատիւ որբոյ , ոչ նոցա է իմաստալի մատուցանել զայն , այլ Որմտուծոյ՝ ՚ի յիշատակ նոցին , զբաւարարութիւն նոցա հայցելով , և յաղերս ընծայս առ Որմտուած վասն մեր ածելով ։ Եւ թէպէտ ՚ի ձեռն քահանայի մատչի պատարագ , այլ ինքն իսկ Քրիստոս է մատուցօղ պատարագին , ինքն է քահանայ և նոյն ինքն զոհ , ինքն է բաշխօղ և նոյն ինքն բաշխի՝ անձամբ զանձն ՚ի ձեռն պաշտօնէից իւրոց Քահանայ Որմտուծոյ նուիրելով ։ Այս քահանայն յանուն Քրիստոսի և ընդ Քրիստոսի մատուցանէ Որմտուծոյ զպատարագն . և Քրիստոս ընդոյն պաշտօն՝ զոր յայտնապէս կատարեաց ՚ի խաչին , կատարէ անտեսանելապար ՚ի վերոյ սրբոյ սեղանոյն ՚ի ձեռն քահանայից՝ զոր կացոյց յեկեղեցւոջ իւրում ։

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Զի պատարագ նորոյ ուխտիս է յաւուրկ և ձշմարիտ պատարագ։

Թէպէտ և Քրիստոս միանգամ մատոյց զանձն պատարագ՝ մեռանելով վասն փրկութեան մերոյ ՚ի սեղան խաչին , այլ քանզի միջնորդեաւոր էր քահանայութիւն նորա և ոչ դադարէր իւրով մահուամբն , ՚ի գլխերին՝ յորում մնանէր՝ կամելով Թողուլ յեկեղեցւոջ իւրում զոհ երևեալն , որ զպատարագ խաչին նորոգելով՝ զյիշատակ նորին միշտ ՚ի կատարած յաւիտեանց միջնորդութիւնն իւրոյ՝ ՚ի Թողութիւն հանապազորդ մեղաց մերոց , իբրև քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի մատոյց Որմտուծոյ զնոյն ինքն և զինուոյ զմարմին և զարիւն իւր առնել . և ՚ի բաշխել զայն առաքելոցն՝ ասելով՝ “Որմտուծոյ առարեք առ իմոյ յիշատակի ,, , կացոյց զնոսա և զյաջորդս նոցա քահանայս նորոյ ուխտին , մատուցանել զնոյն պատարագ , Այս այն պատարագ է , զոր առաջ տէր ՚ի ձեռն Մա-

ձլաքիայի մարգարէի. (ա. 12.) "Յաւելա տեղիս մատչին խունկք անուան իմոյ և պատարագ սուրբ, զի մեծ է անուն իմ ի հեթանոսս": Նա զայսմ սեղանոյ է զոր առաքեալն ասէ. (ա. կոր. Ժ. 20.) "Ոչ կարէք ի սեղանոյ տեառն վայելել, և ի սեղանոյ դիւաց": Նա այս պատարագ է, որոյ օրինակք ի հնումն էին ստուերակերպ ելիլքոցն և գառանց մատուցմունք, և սա ամենայնի նոցա լրումն է և ճշմարտութիւն:

Այլ քանզի այս վարդապետութիւն ոչ է ընդունելի նորաղանդից, զի ոչ զպատարագն սուրբ ընդունին, և ոչ զքահանայութիւն առաքելոցն սրբոց և զյաջորդաց նոցա, այլ մանաւանդ Թշնամանս պատարագին Քրիստոսի համարին զմեզ զայս, սուրբ ժողովն տրտեննատեան նզովիւք և բանադրանօք դատապարտեաց ըզնոսա և զմոլորութիւնս նոցա: Այնմի այս վարդապետութիւն յառաքելոց անտի ընդհանուր և հաստատուն աւանդութեամբ հասեալ առ մեզ, ակայի՛ ի սուրբ գրոց և՛ ի հայրց:

Ընթեռնումք ի գիրս ծննդոց, (ԺԴ. 18.) զի "Եւ քիսեդեկ արքայ Սաղիմայ եհան հաց և գինի, քանզի քահանայ էր Աստուծոյ բարձրելոյ": Այդ Քրիստոս ըստ նմին սուրբ գրոց, քահանայ է միանձնաւոր ըստ Մելքիսեդեկի, որպէս ասէ. "Այդուհետեւ տէր, և ոչ ևս զղջասցի, թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի": Ով և առաքեալն ի Քրիստոս յարէ զայս պատգամ. (եբր. Է. 3.) "Այսպէս և Քրիստոս ոչ եթէ անձին ինչ շուք եդ լինել քահանայապետ, այլ որ խօսեցաւն առ նա՝ թէ որդի իմ ես դու, ես այսօր ծնայ զքեզ. որպէս և ի միւսումն ասէ՝ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի": Այդ զՔրիստոս նկատե առաքեալն նախ իբրև քահանայապետ ըստ կարգին Մելքիսեդեկի վասն մատուցանելոյ նորա զինքն Ի՛նձ՝ ընդ տեսակօք հացին և գինւոյ, և երկրորդ՝ իբրև քահանայապետ միանձնաւոր, վասն նորոգելոյ նորա միշտ ի վերայ սեղանոյ մերոց զնոյն պատարագ մինչև ի կատարած յաւիտեանց: Ո՛չ այս այսպէս իմանան Ի՛նձ, Կիլեմէս աղեքսանդրացի, սուրբն Կիպրիանոս, Աւսեբիոս կեսարացի, սուրբն Ա՛մբրոսիոս, սուրբն Եպիփան, սուրբ Ոսկե-

թերանն, սուրբն ( )գոստինոս, (ի)ւոգոռետոս, և այլք
'ի Նմա։

Եւ 'ի ձեռն Մանլաքիայ ասէ տէր ցքահանայս Իս-
րայէլ. "Օ պատարագս ոչ ընկալայց 'ի ձեռաց ձերոց.
զի յարևելից մինչև 'ի մուտս արևու փառաւորեալ է
անուն իմ 'ի մէջ ազգաց, և յամենայն տեղիս մատչին
խունկք անուան իմոյ և պատարագ սուրբ. զի մեծ է
անուն իմ 'ի հեթանոսս, ասէ տէր ամենակալ,,։ Ընդ
յայտնապէս զպատարագէ նորոյ ուսմտիս են աստ բանք,
ոչ զաղօթից խօսի մարգարէն և ոչ զբարեգործու-
թեանց, որպէս նորաստանդիցին հաճոյ եղև իմանալ, այլ
զպատարագէն՝ որ յաջորդիցէ հնոցն, զոյս մերժէ. զը-
պատարագէն՝ որ 'ի հեթանոսս մատչելոցն է յարևելից
մինչև 'ի մուտս արևու։ Օ այս ևս այսպէս իմանան Նորք
առհասարակ։

Տէրունականքն իսկ բանք սահմանադրութեան խոր-
հըրդոյս զնոցն յայտ առնեն, զի փրկիչն մեր ոչ 'ի խոր-
հուրդ ևեթ հաղորդութեան սահմանէ զայն՝ այլ և 'ի
խորհուրդ պատարագի։ Օ ի ասելն՝ "Այս բաժակ է
նոր ուխտ իմով արեամբ վասն ձեր հեղլով,, և թէ
"Օ այս արարէք առ իմոյ յիշատակի,,, և այն գար-
ձեալ թէ "Ի թողութիւն մեղաց,,. յայտնապէս ցու-
ցանեն զի զնոյն նորին պատարագ ըստ իւրումն հրաման-
նատրութեան յառաջ բերեմք 'ի յիշատակ մահուան
նորա 'ի թողութիւն մեղաց մերոց։

Օ նոյն հաստատեն և կարգ և աղօթք սրբոյ պատա-
րագին ըստ ամենայն ազգաց հաւատացելոց. սակա-
ւագին ազգ առնել՝ թէ "Պատարագ Քրիստոս մատչի
զառն Աստուծոյ,,. և քահանային ասել՝ "Աստուր մեզ
զսրբիդ քո միածին քահանայապետ և պատարագ, վասն
զի ինքդ ես բաշխօղ, և նոյն ինքդ բաշխեի 'ի միջի մերում
միշտ անծախապէս,,. և այն թէ "Հոգութիւն և փա-
ռաբանութիւն մատուցանեմք քեզ, տէր Աստուած մեր,
վասն սուրբ և անմահ պատարագիս՝ որ 'ի վերայ սրբոյ
սեղանոյս. զի զսա մեզ 'ի սրբութիւն կենդանութեան
պարգևեացես,,. և "Զան մատուցեալ սուրբ և աս-
տուածային պատարագին՝ որ 'ի վերայ սրբոյ սեղանոյս,
զամէն աղաչեացուք,,։ Եւ այն թէ "Զի 'ի սրբել և 'ի
կեցուցանել զմեզ, որ ընդ Նօր նստիս և աստ պատա-

բագին ,,· և թէ "Վրիատոս պատարագեալ բաշխի՛ ի միջի մերում ,,· այլեւքն հանդերձ։ Այսուհետեւ աւելորդ է ածել զվկայութիւնս այլոց, որ սկսեալ՛ ի սրբոյն Յուստինոսէ մինչեւ ցյետինն՝ զնոյն վարդապետեն։

Վասն ձեռնադրելոյ և ամենայն հանդամանաց Ձեմարիտ պատարագի՛ ի խորհուրդս յայս բովանդակին։ Օ՛ի է նախ նուէրը զգալի իրաց, այսինքն մարմնոյ և արեան տեառն՝ որ կան ընդ տեսակօք հացին և գինւոյ։ Եւ զոհ, այսինքն Վրիատոս զենեալ՛ ի նուէր Աստուծոյ ։օր։ Եւ քահանայապետ մատուցօղ՝ նոյն ինքն Վրիատոս, որ՛ ի ձեռն պաշտօնէից իւրոց նորոգէ զպատարագ խաչին՛ ի միջի մերում։ Ել՛ ի բնական հանդամանս իւր կայ անդ Վրիատոս, այլ բանիւքն սրբադործութեան այս է մարդին եմ և այս է արիւն եմ, քաժանի խորհրդաբար մարմինն նորա յարենէ, կայ՛ ի վերայ սեղանոյ ընդ նշանակօք՝ որ ցուցանեն զքաժանումն մարմնոյ նորա յարենէն նեղգործեալ՛ ի վերայ խաչին. վասն որոյ ասէ տուրբ Պսակեբեանն. "Ի վերայ սրբոյ սեղանոյն զենեալ դնի Վրիատոս ,,· (տե՛ս անդէպութեան. Չաւ ժ՛ղ)։ Այս ևեթ է խտիր ընդ պատարագն՝ որ՛ ի վերայ խաչին, և ընդ պատարագն՝ որ՛ ի վերայ սեղանոյ, զի անդ հեղմամբ արեան մատուցաւ պատարագ՝ միանգամ մեռեալ վասն մեր· իսկ աստ կայ և միայ անմահ, և պատարագի անարիւն ընդ տեսակօք հացին և գինւոյ։ Վասն որոյ՛ ի մատուցանել մեր զպատարագս զոյս՝ չհամարիմք նոր ինչ հաստուցումն առնել Աստուծոյ վասն մերոյ փրկութեան, այլ զնոյն փրկանս՝ զոր եւս մեզ Վրիատոս՝ մատուցանել Աստուծոյ, որպէս ասեմք. "Ու զքոյս՛ ի քոյոց քեզ մատուցանեմք ըստ ամենայնի և յաղագս ամենեցուն ,,։ Վնդունայն են ապա նորազանդիցն ցնորսք, իբր թէ պատարագաւս այսուհիկ թ՛ չնաամանս պատարագի խաչին առնելիցեմք՝ անբաւական համարեալ զայն։ Վաթէթ իցէ ասել, թէ "·Վրիատոս Յիսուս՝ որ մեռաւն և է ընդաջմէ Աստուծոյ, որ և բարեխոս իսկ է վասն մեր ,,, (հա· Ը· 34·) ոչ դադարելոյն՛ ի բարեխոսութենէ վասն մեր՝ աճիւկ անբաւականութիւն աղօթիցն և պաղատանաց, զոր "յաւուրս մարմնոյ իւրոյ առ այն՝ որ կարողն էր ապրեցուցանել՝ ուժգին գոչմամբ և արտասուօք մատուցանէր ,,· (Եբր· Ե· 7)։ Ու վասն զի "Թէթ ոչ ոք ծնեալ

'ի ջրոյ և 'ի Հոգւոյ ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ», օրէն էր եղեալ ասել՝ թէ չէր քահանայապետական պատարագն Քրիստոսի որ 'ի խաչին, և այն սակս Թշնամանս ածէր։ Այլ պարտ է ասել, զի Քրիստոս միանգամ վասն մեղաց մատոյց զանձն 'ի խաչին պատարագ, և չդադարէ 'ի մատուցանելոյ զնոյն 'ի սուրբ խորհրդեան. և այս վասն անսահմանն զօրութեան այնր պատարագի, յորում անցեալք և ապագայք կցորդին 'ի մի. և որպէս անցեալք են պատրաստութիւնք նորին, նոյնպէս և ապագայք լրումն և արդասաւորութիւն նորին 'ի մեզ, Հ 'ի թէպէտ և փրկանք գերութեանս մերոյ ոչ կրկնին, սակայն վասն անբաւ արժանեաց նորին չդադարէ փրկիչն մեր 'ի գրաւաթափ առնելոյ զմեզ նոսա։ Հ 'ի այլ է կրկնութիւն իրիք վասն անբաւական զօրութեանն, և այլ միանգամեայ նորին վասն անբաւ զօրութեանն՝ որ կատարելութեան նորա և կատարութեան է յարացոյց։

ԳՕԴՈՒԱԾ Բ

Քաղաքս առաւձնական պատարագի որ 'ի բիւ։

Լութերականք էական մասն սրբոյ պատարագին համարելով զհաղորդութիւն հաւատացելոյ, ոչ օրինաւոր համարին զառանձնական պատարագս։ Այլ իսկ է՝ զի առաքեալք, և զհետ նոցին առաքելական Հայրք՝ որք 'ի գործս հալածանաց կեցին, ոչ երգովք և հանդիսիւ զսուրբ պատարագն մատուցանէին, այլ 'ի Թիւ. քայց առաջնիւքն պատարագին հաւատացեալք հաղորդէին սրբոյ խորհրդոյն։ Ի դադարել հալածանաց և 'ի յաճախել եկեղեցեաց, Թէպէտ և մեծահանդէս 'ի նոսա մատչէին պատարագք, այլ տակաւ նուազէր հաղորդելոցն Թիւ, մանաւանդ 'ի սկսանել գաղջութեան 'ի ներքս սպրդել։ Ի ման որոյ սուրբ Հայրք այլազգ ինն հնարեցան հաղորդս առնել զառաջնիւքայս սրբոյ պատարագին, առեմտեան եկեղեցւոյ համբուրիւն կցորդելով զամենասեան ընդ քահանային, իսկ արևելեան եկեղեցւոյ զնըշխարն ճեպաւուածոյ օրհնեալ բաշխելով ամենեցուն։

Սուրբ Լամբրոնայկին ի մեկնութեան սրբոյ պատարագին (497.) ասանդէ զայս, զի ատինացին ասելով. «Ղանզի նոքա նուրբ և անօսր ընթանան զայս շաւիղ և բազմաց անգիտելի, այսինքն զի ոչ տիրապէս Ճաշակեն ի սէրուննական սեղանոյն Ժողովուրդքն՝ բաշխելով քահանային, այլ այլ ինն նորաձև ունին օրէնք օտար յայլ քրիստոնէիցս շաւղաց։ Ի սան զի քահանայն, որ պատարագէ ի մէջ Ժողովրդեան, յետ Ճաշակման սուրբ մարմնոյ և արեանն՝ զսարկաւագն համբուրէ, իսկ նա ինքանէ և համբուրէ զմի ոք ի Ժողովրդենէն, և ի նմանէ ընդ ամենեսեան տարածի համբոյրն երկիւղիւ և հաւատով. և այսպէս միանան ամենեքեան ընդ քահանային, և նովաւ ընդ Աստուծոյ։ Ինձ թուի ի Ճարտարութենէ իմաստութեան գտեալ զայս հանձարել նոցին առաջնորդաց. զի յորժամ տեսին զեկեղեցի օրըստօրէ հեղգացեալս առ սրբոյ մարմնոյն Ճաշակումն... նայեցեալ ի տկարութիւնն, ոչ կամեցան զԺողովեալսն անբաժին ի Ժողովրդենէն առնել, այլ հաղորդին Քրիստոսի և միմեանց համբուրիւն։»...

«Իսկ Հռոմք ոչ այսպէս, այլ այլով օրինակաւ։ Զանգի զինչխար մնացուածոյ պատարագին բաշխէ քահանայն եկեղեցւոյն՝ առ ի նոյն միտս հայելով, այսինքն ի հաղորդութիւնն. զի որք ոչ ի սեղանն, գէթ նշխարի մնացուածոյն լինին արժանի, և մի Քրիստոսի եկեղեցին սակս մեղացն զատեալ մեկնեսցի ի հաղորդութենէ գլխոյն, այլ լինին այսու փոքրկացեալքն յատաքին նուիրեանէ փոքր ինչ նմին հաղորդեալք։ Իսկ որք մաքրեն զանձինս որպէս պարտ է, և յօժարամիտ բաղձանօք ի սէրուննական սեղանն ընթանան, երկոքին ազգք հաղորդեցուցանեն սրբոյ մարմնոյ և արեանն։ Այլ մուծին երկրորդ օրէնք՝ զինջանելով առ տկարութիւն Ժողովրդեանն. քանզի ի սկզբան ամենեքեան հաղորդէին պատարագին յամենայն օր, որպէս կայ է յառաքելոց և ի սրբոց Հարցն բանից։»

Զդ այս ամենայն կայ առնեն զինաման սրբոց Հարց և առաջնորդաց եկեղեցւոյ յօգուտ հաւատացելոց, այլ ոչ իւիք ցուցանեն զկարեւորութիւն հաղորդելոց նոցա յօրինաւորութիւն սրբոյ պատարագին։ Ո՞ի նոքին իսկ առ սբ Հայրապետք, որ ի տօնս Աւետ մեծամեծս մա-

տուցանէին յեկեղեցիս Հանդիսիս պատարագ, զօրհա-
նապազ առանձինն պատարագէին՝ որպէս ի վարս բազ-
մաց ի նոցանէ ե ընթեռնուլ, առանց ուրուք ընդ նոսա
հաղորդելոյ։ Եւ սա սահման և առ քահանայս կալաւ նոյն
սովորութիւն, հաղորդել և կամ պատարագել առանձինն
յաւուրս յորս չհասանէր նոցա կարգ պատարագելոյ
Հանդիսիս յեկեղեցւոջ. մինչև զեղծանել իսկ ոմանց
բարուք սովորութեամբն, և առանց քահանայական
սպասուց՝ ի միակեցական սենեակս իւրեանց ղօրք վա-
կեալք պատարագել. զորս կշտամբէ նոյն ինքն տուրբ
վարդապետն լամբրոնեան ի Թղթին իւրում առ Լեւոն
ակբայ։

Յայսմ ամենայնի յայտ է, զի հաղորդութիւն հա-
ւատացելոց ոչ էական մասն է սրբոյ պատարագին, այլ
հաղորդելոցն օգուտ կարևոր։ Վասն որոյ տուրբ ժո-
ղովն տրիդենտեան ասէ. "Ցղձալի էր զի առաջնիւքդ
սրբոյ պատարագին հաւատացեալք զօրհանապազ ոչ
ըղձիւք ևեթ՝ այլ և ընդունելութեամբ սրբոյ խորհըր-
դոյն հաղորդէին, որով ամենատուրբ պատարագին ար-
դասիք առատագոյն ի նոսա ձեղանէին։ Այլ զի ոչ միշտ
հաղորդին նոքա՝ այլ քահանայն ևեթ մատուցօղ պա-
տարագին հաղորդի, ոչ այնու պատարագքն այնոքիկ
իբր առանձնականք և իբր ոչ օրինաւորք՝ լսեն գատա-
պարտելիք, այլ գովելիք և ընդունելիք ժողովոյն"։ Եւ
ապա յաւելու սահմանել, զի "Ով զպատարագս՝
յորս քահանայն ևեթ հաղորդի խորհրդոյն՝ ոչ օրինա-
ւորս ասիցէ, վասն որոյ և խափանելիս, նզովեալ լինի"։

Եւ կարի իմաստութեամբ զայս այսպէս տուրբ ժո-
ղովն սահմանեաց։ Վասնզի գլխաւոր վախճան սրբոյ
պատարագին է փառս մատուցանել նուաւ Աստուծոյ,
և մաղթել քաւութիւն մեղաց, և վասն կենդանեաց և
մեռելոց ընդունել շնորհս, և վասն բարերարութեանց
նորա գոհութիւն մատուցանել։ Զդէպ այս ամենայն չու-
նին ինչ ընդ հաղորդութիւն ժողովրդեան։ Վասն որոյ
և՝ ի հնումն աւանդութեանց յայտ է, զի առանձինն ա-
տենին պատարագէին տուրբն Աթարիէլոս, տուրբն Գրի-
գոր Նարեկացի, տուրբն Նարսէհ, տուրբն Ամբրո-
սիոս, տուրբն Պաւղինոս և այլք, որպէս ցուցանեն քա-
ջահմուտ մատենագիրք՝ որք զարարողութեանց գրեցին։

Օնոյն հաստատեն և վկայութիւնք Նորց. յորոց առնլը Ասկեբերան (՚ի Ճառն Ջ. եէե.) կշտամբէ զհաւատացեալս վասն ոչ ուրուք ՚ի նոցանէ հաղորդելոյ ՚ի պատարագի. "Ի զուր ուրեմն հանապազորդ զենուանն լինի, վայրապար ինչ կայցեմք առաջի սեղանոյ, չիք ոք որ հաղորդի, չէ ոք որ յօրէնսն մերձենայցէ ,, :

Եւ առնլը Քրիսոստոմոս յորդորէ զհաւատացեալս առաջի կալ զօրհանապազ սրբոյ պատարագին, և գէթ ՚ի քառասնորդս նաղորդել խորհրդոյն : Նոյնպէս և առնլը Գրիգորիոս. (ա՝ Նեղսէս. գիրք Ջ. գլ. Ը. թիւ. 24): Եւ սահմանադրութիւնք քաղուածք են ժողովոյ վասն առաջնակայ լինելոյ հաւատացելոց յաւուրս տօնից սրբոյ պատարագին, և գոնեա երկուց կամ երից ՚ի տարւոջ հաղորդելոյ :

ԳՕԴՈՒԱԾ Գ

Քաղագս ևիւթոյ և ձևոյ խորհրդեան պատարագի :

Ոչ ևս աստ զհացէ և զգինւոյ և զբաւից սրբազործութեան են բանք, զորոց առացաք յառաջագոյն, (գլ. Ջ. յօդ. Ջ. է.) այլ զայնմանէ՝ զոր նուիրեմք Նստուածոյ պատարագաւ : Նորդ նիւթս այս ինքն է Նրիստոս, որոյ մարմին և արիւն ընդ տեսակօք հացին և գինւոյ իսկապէս կայ ՚ի սեղանի, և մատչի անարատ գառն Նստուծոյ : Տեսակք հացին և գինւոյ, ընդ որովք ծածկին մարմին և արիւն Նրիստոսի, սպասաւորեն ՚ի սուրբ խորհրդեանս առ ՚ի զգալի զնա կացուցանել. այլ ոչ ՚ի նոսա է էութիւն սրբոյ պատարագին :

Նսկ ձև, որով կատարի այն, է սրբազործութիւն՝ որ յառաջ բերէ զզօնն ՚ի սեղանի, և կացուցանէ զայն անդ իբրև զենեալ՝ խորհրդական բաժանմամբ մարմնոյն յարենէ : Վ՚ան որոյ խտիր ընդ խորհուրդ հաղորդութեան և ընդ խորհուրդ պատարագի այս է, զի առաջինն կատարի և ՚ի սրբազործել միայ ևեթ ՚ի տեսակացն, իսկ միւսն երկոցունց ևս տեսակացն կատարի սրբազործութեամբ : Եւ ըստ հանրապոյն կարծեաց՝ այս ևեթ բաւական է ՚ի կացուցանել զէութիւն խոր-

*հըրդոյ պատարագին. այլն ամենայն աղօթք և արարո-
ղութիւնք, որ յառաջ և ձինի սրբագործութեան, չեն
յէութենէ խորհրդոյն. և Ճաշակումն իսկ քահանային
համարի ամբողջական, և ոչ էական մասն նորին. թէ-
պէտ և այնպէս կարևոր, զի եթէ դէպ լինի քահա-
նային՝ որ մատուցանէ զպատարագն՝ ոչ ևս կարել Ճա-
շակել, պարտ է այլում ումեք քահանայի՝ եթէ չկայ
իսկ ծոմ՝ Ճաշակել զսուրբ խորհուրդն, և կատարել
զպատարագն։*

ԳՕԴՈՒԱԾ Դ

Բաղագս յատկութեանց և զօրութեանց խորհրդոյ պատարագին։

*Քանզի խորհուրդ պատարագին նոյն է ընդ այնմ՝ որ
՚ի խաչին մատուցաւ, և յեղանակ մատուցմանն ևեթ
զանազանի, խորհրդաբար ՚ի վերայ սրբոյ սեղանոյն կա-
տարելով, վասն որոյ և ամենայն յատկութիւնք այնր
պատարագի արդիւնանան ՚ի սմին. և է սա փառատրա-
կան, գոհացողական, մաղթողական և քաւչական։*

*Փառատրական, զի սուաւ գաստուածպետութիւնն
Ա՚ստուծոյ խոստովանիմք ՚ի վերայ ամենայն արարածոց,
և զորդին իւր միածին՝ խոնարհեալ ՚ի կերպարանս զո-
հի՝ գերազոյն քան զամենայն փառս մատուցանեմք մեծ-
վայելչութեան նորա։*

*Գոհացողական, զի սուաւ ևեթ զարժանին գոհու-
թիւն մատուցանեմք Ա՚ստուծոյ վասն ամենայն բարե-
բարութեանց՝ զորս հանապազ ընդունիմք ՚ի նմանէ։*

*Մաղթողական, զի փրկիչն մեր Ա՚ստուած զենեալ
խորհրդաբար ՚ի վերայ սրբոյ սեղանոյն՝ յանդիման առ-
նէ Ա՚ստուծոյ Հօր զպատարագել իւր ՚ի վերայ խաչին,
և բարեխօսէ վասն մեր. որով խորհուրդ պատարագին
հզօրագոյն է քան զամենայն կրօնական պաշտամունս
ընդունելոյ Ա՚ստուծոյ զինորհս՝ որոց կարօտիմքն, և ա-
և ըստ կենցաղական պիտոյից։*

*Եւ քաւչական կամ հաշտարար, զի սուաւ ընդունէ
մեզ Ա՚ստուած զապաշխարութիւն և զթողութիւն մե-
ղաց. "Ա՚յդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ ՚ի վերայ*

բազմաց հեղուս՝ ի թողութիւն մեղաց ,,· (Մտթ· ԻԶ· 28)։ Իսկ ոչ եթէ սուրբ պատարագաւս անընդմիջաբար ընդունիցիմք զթողութիւն մեղաց, այլ զի պարզևէ մեզ զընծորհս զղջման և դառնալոյ առ Աստուած, և պատրաստէ զսիրտ մեղաւորին՝ ի խորհուրդ ապաշխարութեան՝ որ սահմանեալն է՝ ի թողութիւն մեղաց յետ մկրտութեան գործեցելոց։ Ասէ սուրբ պատարագաւն ընդունիմք զքաւութիւն պատժոց մեղաց· վասն որոյ ոչ միայն վասն կենդանեաց, այլ և՝ ի Քրիստոս կատարելոց լինի՝ ի նմա յիշատակ։

Օգայս այսպէս ընկալան հաւատացեալք առհասարակ յամենայն ժամանակի, և այսպէս ուսուցին Հայրք ամենայն ազգաց, և պատարագամատոյց աղօթք և տարօղութիւնք արևելեայց և արևմտեայց զնոյն հաստատեն։ Այլ այս ամենայն ընդհանուր անքաւ սրբոյ պատարագին զեղանին՝ ի հաւատացեալս ըստ չափոյ պատրաստութեան իւրաքանչիւրոյ, և ըստ ողորմութեանն Աստուծոյ՝ զոր հասարակաց և իւրաքանչիւրոց առնէ որպէս և կամի։

ԳՕԴՈՒԱԾ Ե

Զաղագս պաշտօնէի սրբոյ պատարագին։

Քրիստոս ինքն է կատարիչ խորհրդոյն, ինքն է որ մատուցանէ և մատչի· այլ՝ ի ձեռն քահանայից կամեցաւ կատարել զայն, և նոքա ևեթ են պաշտօնեայք խորհրդոյս։ Օ՛ի առաքելոց ևեթ, և նոքօք յաջորդացն նոցին հրամայեաց փրկիչն· "Օ՛այս արարէք առ իմոյ յիշատակի ,,։ Վասն որոյ ժողովն տրիդենտեան նզովիւք դատապարտեաց զհակառակ սորին վարդապետութիւն նորաղանդից։ Սովորութիւն ամենայն ազգաց քրիստոնէից յառաքելոց և այսր, գիւք ձեռնադրութեանց, Հայրք և ժողովք զոյն հաստատեն։ Այս առաքեալն ասէ։ "Այսպէս համարեացին զմեզ մարդիկ իբրև զպաշտօնեայս Քրիստոսի, և հազարապետս խորհրդոցն Աստուծոյ ,,· (Ա· Կոր· Դ· 1)։

Հայց Լեպէտ և անարժանութիւն պաշտօնէին ոչ

ինչ տանանէ վաւերականութեան խորհրդոյն, որպէս՝ի վեր անդր ասացաք, սակայն եթէ որ՝ի մահուչափ մեղս մատուցանիցէ պատարագ, ծանուննա մեղանչէ՝ հանդոյն խաչահանուացս վարելով իշխանութիւն՝ի վերայ մարմնոյ և արեանն Քրիստոսի, և աստուածասպան իջցև զնոսա ըստ սրբոց Հարցն բացատրութեան գտանի։

ԳՕԴՈՒԱԾ Զ

Ցաղագս որոց մատուցանելի է պատարագս։

Օրէն է պատարագել նախ և առաջին վանս կենդանեաց. "Եւ արդ աղաչեմ նախ քան զամենայն առնել աղօթս, խնդրուածս, պաղատանս, գոհութիւնս, վասն ամենայն մարդկան. մանաւանդ վասն թագաւորաց և ամենայն իշխանաց, զի խաղաղութեամբ և հանդարտութեամբ վարեսցուք զկեանս մեր ամենայն աստուածպաշտութեամբ և սրբութեամբ։ Օ՛ի այն է բարի և ընդունելի առաջի փրկչին մերոյ Աստուծոյ, որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն և՝ի գիտութիւն Ճշմարտութեան եկեսցեն։ Օ՛ի մի է Աստուած, և մի միջնորդ Աստուծոյ և մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս, որ եւ զանձն փրկանս ընդ ամենեցուն,,. (ա. Տիմ. բ. 1)։ Պարտ եթէ առաքեալն վասն ամենայն մարդկան ասէ պատարագեալ զՔրիստոս՝ի խաչին, ապա և մեզ օրէն է զնոյն պատարագ վասն ամենեցուն մատուցանել. և եթէ յայնժամ՝ զի անհատատք էին թագաւորք և հալածիչք Քրիստոսի՝ պատուիրէ աղօթել վասն նոցա և գոհութիւն մատուցանել Աստուծոյ, և առաւել զարդիս օրէն իցէ մեզ վասն ամենայն մարդկան առնել զնոյն ըստ իւրաքանչիւր պիտոյից, անհատատից առ՝ի հատատս գալոյ, մեղաւորաց առ՝ի դարձ, արդարոց՝ի շնորհս, և վասն ամենեցուն փրկութեան։

Օրէն է դարձեալ և վասն ննջեցելոց մատուցանել պատարագ, քանզի ուղիղ հատատուկ՝ի Քրիստոս ննջեցելոց, որպէս և սարկաւագն ազդ առնէ։

Օրէն է և՝ի պատիս սրբոց մատուցանել պատարագս, վասն որոց և ամենեցուն նոցա առնլին՝ի նմա յի-

շատակը։ Ել որպէս ոմանք ձախողակի կարծեցին առ-
նել զյիշատակս նոցա՝ իբր թէ չև ևս հասեալ էին
նոքա ՚ի փառս, այլ յառաւելապոյն փառս նոցա, և զի
բարեխօսութեամբ նոցա մեզ ողորմեսցի՝ որ ՚ի սուրբս
հանգուցեալն է Ա՛ստուած։

Օ՞րում այսպէս և կարգինալ Պոնա վարդապետէ.
“Ա՛յլ զի ընդ ննջեցեալսն առնի յիշատակ և այնոցիկ՝
զորս կաթոլիկէ եկեղեցի... ընդ երանեալ երկնաքա-
ղաքացիսն մեծարէ, պարտ է լուծանել զընծայերսդոցն
վարանս, զի մի զնախանի սովորութիւնս ընդ այժմեա
համեմատեալ ՚ի կարծիս մոլորութեան ձգեսցեն զառ
՚ի սրբոց և յուղղափառ հաւատն սահմանեալ աղօթս։...
Օ՞ի ըստ նախնի սովորութեան եկեղեցւոյ՝ վասն ար-
դարոց իսկ և սրբոց, ևս և վասն մարտիրոսաց Հաստա-
տեր մատուցումն պատարագին. իբր ոչ եթէ աղօթե-
լով վասն նոցա, այլ առ ՚ի պատիւ և ՚ի յիշատակ նո-
ցա ,,։ Կարձեալ և Ա՛ննովկենտիոս Գ. Յուլմայ Հայ-
ոցապետ. “Ա՛ն ևս բազումք՝ որք ոչ անդէպ վարկանին,
քանզի փառք սրբոց առաւելուլ կարեն մինչև ցօր յե-
տին դատաստանին, մաղթել եկեղեցւոյ ողջմտութեամբ
զնոցա փառացն առաւելութիւն ,,։ Կարձեալ և մեծն
Կրիգոր ՚ի քանն Հայոնութեան՝ Ցեան ՚ի ներքոյ սե-
ղանոյն, և այլն. “Հայնմանէ ըմպեն՝ որում ծարաւին,
և օրինակաւ՝ որ գեռ անհաս է մեզ. յայնմ՝ զոր Հայ-
ցեալքն քաղցնուն, յառաջածանօթ լինելով յապեհան։...
Ա՛ռեալ առ ցանկացօղ Հոգիսն՝ թէ հանգերութք փոքր մի
ժամանակ, և յետանդեան անդ ցանկութեան՝ յառաջ-
գիտութեամբն սփոփանս միսիթարութեան մատուցա-
նել ,,։

Ա՛ծն Խոսրով ՚ի մեկնութեան պատարագի. “Ա՛սակ
եթէ ասիցէ ոք՝ թէ զինքդ և զարդարսն յիշատակէ
աստ իբրև զկարօտս, որոց և մեք իսկ ակն ունիմք բա-
րեխօսութեան նոցին, այսպէս իմասցիս։ Կանզի թէ-
պէտ փառաւորեցան նոքա և հանգեան, սակայն ոչ բը-
նաւ ՚ի լրումն հասին. այլ օրըստօրէ քաղցնուն, և զա-
ռաւելութիւն խնդրեն. վասն զի անմարմին փառացն,
յորս նոքա հասին, էէ Հնար թէ կատարումն լինի. քան-
զի իմաստութիւն է Հոգևոր և գիտութիւն աստուա-
ծային։ Ա՛յլ եթէ այսմ երկրաւոր գիտութեանս է

հնար թէ լուծին լինիցի, որչափ ևս առաւել այնմ՝ որ իմանալին է և աստուածային. այլ հանապազ օրըստօրէ փառաց՝ ի փառս վերանան, որպէս և հրեշտակք. զի յաւիտեան աւուր նոր գիտութիւն և իմաստք առնուն յԱստուծոյ: Ո՛ ան այսորիկ նախ նոցա հայցէ Պրիստոսի զոզորմութիւն, և ապա զայլսն յիշէ ,,:

ՅՕԴՈՒԱԾ Է

Զի վարք է քահանայիւն առաւելագոյս՝ ի նպաստ ոմանց վարուցանել զպատարագն, և զի առաւելագոյն այնուհետև հասանէ նոցա զօրութիւն սրբոյ պատարագին, երէ այլով մասամբք հաղորդեսցին իցէ նոցա արժանաւորութիւն:

Ճշմարտութիւն վարդապետութեանս գրեթէ մասն է հաւատոյ. զի հակառակն սորին վարդապետութիւն Պիտորեան ժողովոյն՝ պատասխարտեալ է՝ ի Պիսակ Ջ: Եւ՝ ի սովորութենէ ևս կաթոլիկէ եկեղեցւոյ ունի զհաստատութիւն. զի՝ ի սկզբանէ և այսր սովորութիւն է մատուցանել զսուրբ պատարագն վասն ոյոց խնդրեն, և զպատարագիս մատուցանեն. զոր և Տերտուլիանոս յիշատակէ՝ ի գիրս յաղագս ողջախոհութեան (գլ. ԺԱ.) և այլուր. և սուրբն Ոգոստինոս՝ ի գիրս խոստովանութեան ասէ (գիրք Թ.) պատարագս վասն մօր իւրոյ Մոնիկայ մատուցեալ. և այլ բազում օրինակս ածեն առ այս Ուենաւդոս, Ասեման, Մապիլեօն, և մանաւանդ Ոսմասինի՝ ի գիրս յաղագս պատարագոյ (մասն ԱԱ. գիրք Բ. գլ. ՀԵ): Այս եթէ պարտ է առաջնորդից աղօթել վասն ժողովրդոյ իւրեանց առաւել քան վասն օտարաց, ապա և պատարագս վասն նոցա մատուցանել. զի ըստ այսմ մասին չիք խտիր ընդ աղօթս և ընդ պատարագ:

ԱՌԱՔՈՒԹԻՒՆՔ

Ա՛տրկ. — ա. Սրբոյ պատարագին անսահմանն է զօրութիւն, վասն որոյ հաւասարապէս բաւէ ամենեցուն. նմին իրի հաւասարապէս վասն ամենեցուն կենդանեաց և ննջեցելոց մաղթել քահանայն անխտիր ՚ի պատարագի. իսկ որք զպատարագիսն մատուցանեն, ընդ ողորմութեանն ընդունին վարձս։ — բ. Ա՛րդեօք իցէ քահանայիս յիշատակել զոք առանձինն ՚ի պատարագի, այլ ամփոփել զզօրութիւն սրբոյ պատարագին ՚ի մի ոք՝ ընդդէմ իրաւանցն Ա՛ստուծոյ է։

պե. — ա. Սրբոյ պատարագին անսահմանելի է զօրութիւն ըստ արժանեացն, այլ ոչ ըստ արգասեաց. վի և ոչ պատարագին Ա՛րիստոսի որ՚ի վերոյ խաչին՝ անսահման եղեն արգասիք, վասն որոյ և ոչ ինչ օգնեցին սատանայի և հրեշտակաց նորա, զի ոչ կամեցաւ զայն Ա՛րիստոս։ Ա՛յդ եթէ ըստ օգնականութեանն սահմանելի է զօրութիւն պատարագին, ապա կարէ օգնել առաւել այնոցիկ՝ վասն որոց մատուցանի, եթէ այլով մասամբք հաւասար իցէ նոցա արժանաւորութիւն։

— բ. Սրբոյ պատարագին երկրակի են արգասիք. մի՝ հասարակաց ընդհանուր եկեղեցւոյ, զորոյ զդէմն առեալ քահանայն՝ մատուցանէ զպատարագն որպէս հասարակաց պաշտօնեայ։ Ա՛յս և այս արգասիք սեփական անձին քահանայի՝ որ զպատարագն մատուցանէ։ Ա՛յս երկրորդումնցս այսոցիկ միջնին իմն, որ՚ի կամս քահանային է, և հաղորդս առնէ այնմ՝ զոր ոք և կամի։ Ա՛յդ զոր առեմք վասն այսր կամ այնր ուրուք մատուցանել պատարագ, զայսմանէ է իմանալ՝ առանց ինչ բառնալոյ զհասարակաց և զսեփական անձինն մատուցողի զարգասիս սրբոյ պատարագին։ Ա՛ն որոյ ոչ ինչ ստանայ իրաւանցն Ա՛ստուծոյ այսուհետև քահանայն, որպէս ոչ ինչ հակառակ իրաւանց արքային գործէ՝ որ՚ի նմանէ ընկալեալ իշխանութիւն՝ բաշխէ իբրև՚ի նմանէ զողորմութիւն։ Ա՛յս զի է քահանային իշխանութիւնս այս ընդհեալ Ա՛ստուծոյ, յայտ է՚ի միջնջենաւորս սովորութենէ եկեղեցւոյ՝ զոր՚ի վեր անդր ցուցաք։

ԳԼՈՒԽ Զ

ՅԱՂԱԳՍ ԽՈՐՀՐԴՈՑ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Ապաշխարութիւն է զղջումն՝ ի սրտէ և ապաշաւ ընդ գործեցեալ մեղս, հանդերձ առաջադրութեամբ ոչ և ս գործելոյ։ Վասնզի որ ձշմարտիւն զղջայեալ իցէ, ոչ միայն գադրի՝ ի չարեացն գործեցելոյ՝ այլ և գադարէ՝ ի մեղաց։

*Այսպիսի էր մարգարէին զղջումն, որ ասէր։ «Վասն միայն մեղայ տէր, և չար առաջի քո արարի։ Ա՛ստա- կեցի ես՝ ի հեծութեան իմում, լուայր զամենայն գի- շեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։ Ո՛չ անօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ՝ առաջի իմ են յամենայն ժամ»։ Այսպէս և ամենայն ապաշխարողք՝ ի հին օրէնս զղջացան, և զայս ապաշխարութիւն քարոզէր Յովհան նախա- ճառօդ՝ ի սոյն և սուրբ գիրք յորդորեն զմեզ՝ ցուցանել լով զայն կարևոր՝ ի փրկութիւն, և անհրաժեշտ կա- րևոր այնոցիկ՝ որ՝ ի մահացու մեղս թշուառաբար պատ- նին անկեալ։ Ո՛չ ի «եթէ ոչ ապաշխարիցէք, ասէ Քրիս- տոս՝ ամենեքեանն նոյնպէս կորնչիջիք»։ (Ղ Կ. ԺԳ. 5)։ Եւ Եզեկիէլիւ ասէ (ԺԸ. 31.) «Դարձարուք, ընկեցէք յանձանց ձերոց զամենայն անպարկշտութիւնս ձեր... զի ոչ կամիմ զմահ մեղուցելոյն, այլ զի դարձ- ցի՝ ի Աստուածոյ իւրոյ չարաց, և կեցուսցէ զանձն իւր։ արդ եկայք դարձարուք և կեցէք»։

Նայց Վրիստոս խնամարկեալ՝ ի տկարութիւն մեր, յաւելդիւրացուցանել զապաշխարութիւն՝ վերառեալ զայն՝ ի սրբութիւն խորհրդոյ։ և ըստ այսմ՝ Ապաշխա- րութիւնն է խորհուրդ սահմանեալ՝ ի Վրիստոսէ, ո- րով ապաշխարողն խոստովանութեամբ և արձակմամբ յօրինաւոր քահանայէ՝ ընդունի զթողութիւն մեղաց գործեցելոյ յետ մկրտութեան։

Մորաղանդք ուրացան և զայս խորհուրդ։ վասն որոյ ժողովն տրիդենտեան նզովիւք զատապարտեաց և զայս

մելոցուն ինոցա, ըստ վարդապետուն եան սուրբ գլոց և Ոսկոյ։

Պանդխտին մեր ասաց ցՊետրոս. "Տաց քեզ զփականս արքայուն եան երկնից. և զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս,,. (Պօղ. ԺՁ. 19)։ Նա առ այլ առաքեալս յաւել. "Ո՛ր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս,,. (ԺԸ. 18)։ Պօղ իշխանուն իւն փակելոյ և բանալոյ զերկինս, արձակելոյ և կապելոյ յերկինս և յերկրի, բովանդակէ Տարկաւ զիշխանուն իւն ունելոյ և Թողլոյ զմեղս, և զայս ևս յաւել Պրինատոս բացատրել. "Ասպէս առաքեաց զիս Հայր իմ, և ես առաքեմ զձեզ։ Նա զայս իբրև ասաց, փչեաց Ի նոսա և ասէ. առէք Հոգի սուրբ՝ եթէ ումեք Թողուցուք զմեղս, Թողեալ լիցի նոցա, եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի,,. (Յհ. ե. 24)։ Պայս իշխանուն ոչ անձնական ինչ առաքելոցն էր, այլ յարակից ընդ առաքելուն եան՝ զոր տայր նոցա. որպէս և Ի խոստմանէն յայտ է լինելոյ ընդ նոսա մինչև Ի կատարած աշխարհի. զի առաքեալքն չկարէին մինչև Ի կատարած աշխարհի կեալ՝ վասն որոյ և յաջորդայ նոցա ասէ՝ զոր ասէն. "Տուաւ ինձ ամենայն իշխանուն իւն յերկինս և յերկրի, որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ. գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս... ուսուցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ,,. (Պօղ. ԻԸ. 18)։ Պայս այսպէս իմանան և Ոսկոյ առհասարակ, զորոց զվկայուն եանն տեսցուք Ի տողս։

Պրդ պրպէս օրէն էր եկեղեցւոյ զամենայն զիտելոյ զայնս. և զինչ անտեղի քան զայն կայցէ, կապել զոք կամ արձակել՝ առանց գիտելոյ Թէ իցէ արժանի կապից կամ արձակման։ Պարկ է ապա մեզաւորին առ ընդունելոյ արձակուածն՝ յայտնել զմեղս իւր քահանային և զղիջ իւր Ի մեզաց անտի, և զհաստատուն եան մտաց ոչ ևս մեզանչելոյ։ Պարկ է դարձեալ, զի գիտասցէ՝ Թէ Թողան մեզք իւր կամ ոչ։ Նա ահա խաստովանուն եանս այս, և զղջումն յայտնեալ, և խօսք քահանային արձակելոյ զմեղս, կացուցանեն

զխորհուրդ ապաշխարութեան սահմանեալ ի Քրիստոսէ, որում Թողուն մեղք, և դառնայ մեզաւորն ի շընորհս Աստուծոյ։ Այս Քրիստոս ի տալն զայս իշխանութիւն առաքելոց իւրոց և յաջորդաց նոցին՝ սահմանեաց զխորհուրդս զայս ապաշխարութեան։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Աստ. ա. Քրիստոս զքարոզելոյ և զիշխանութիւն եւ առաքելոց. զի ուր ասէն (Յհ. ե. 23.) "Եթէ ումեք Թողուցուք զմեղս, Թողեալ լինի նոցա,, յառաջ քան զայն ասէ. "Որպէս առաքեաց զիս Հայրն իմ, և ես առաքեմ զձեզ,,։ Եւ զայս քաջայայտ առնէ՝ յաւելեալ այսուր (Ա Ի. ին. 47.) "Քարոզել յանունն նորա ապաշխարութիւն և Թողութիւն մեղաց յամենայն ազգս,,։

Պե. Ի տէրունեան բանէն, որպէս առաքեաց զնա Հայր, զհետ գայ մանաւանդ՝ զի որպէս ինքն եկեալ էր, ոչ միայն առ՝ի վարդապետել և ուսուցանել՝ այլ և առ՝ի Թողուլ զմեղս, նոյնպէս և նովին իշխանութեամբք զաշակերտս իւր առաքէր առ՝ի քարոզել զաւետարանն և տալ Թողութիւն մեղաց՝ի ձեռն խորհրդոյ ապաշխարութեան։ Այսպէս՝ի սկզբանէ հետէ իմացաւ սուրբ եկեղեցի զբանս Քրիստոսի, և նովին իշխանութեամբն վարեցաւ. վասն որոյ տրիդենտեան ժողովն սահմանէ. "Եւ որ ասիցէ՝ Թէ զբան Քրիստոսի Առաքէ՛ հոգի սուրբ, ելնէ ոմէ ընդուցուք զնեղս՝ ընդեալ լիցի նոցա, և ելնէ զսուրբս ոանիցէ՝ կալեալ լիցի, ոչ զիշխանութեանէ կապելոյ և արձակելոյ զմեզս՝ի խորհուրդ ապաշխարութեան պարտ իցէ իմանալ՝ որպէս կաթոլիկէ եկեղեցի՝ի սկզբանէ և այսր իմացաւ, այլ կամակորեացէ զայն ընդդէմ սահմանադրութեան խորհրդոյս՝ իմանալ զքարոզելոյ զաւետարանն, նզովեալ լիցի,,։

Աստ. բ. — ե. Ասուրբ գիրք կցորդեն միշտ զապաշխարութիւն ընդ մկրտութեան. զոր օրինակ (գործ. ը. 38.) "Ապաշաւեցէք և մկրտեսցի իւրաքանչիւր ոք՝ի ձէնջ յանուն տեառն Յիսուսի Քրիստոսի՝ի Թողութիւն մեղաց,,։ — բ. Եւ զան որոյ սուրբն ( )գոսաինոս

(՝ի ընդունին ձձե. առ Նահիճ.) ասէ, զի որ ինչ յետ մկրտութեան՝ ի մարդկային տկարութենէ գործեցեալ մեղք՝ վասն մկրտութեանն թողանին։

պե. — ա. Սուրբ գիրք զապաշխարութիւն ընդ մկրտութեան կցորդեն վասն՝ի չափ հասեալոց, որպէս զի առ՝ի յօգուտ ընկալցին զմկրտութիւն՝ որ անօգուտն է առանց զղջման և դադարելոյ՝ի մեղաց. զի մկրտութիւն առանց ապաշխարութեան ոչ քաւէ զմեզս։ Նոյնպէս որ ինչ յետ մկրտութեան գործեցեալ մեղք, ոչ մկրտութեամբ՝ այլ ապաշխարութեամբ քաւին, որպէս յայտ է յօրինակէ Սիմոնի մոգին և կորնթացւոցն մծղնէի, զորս առաքեալք ոչ՝ի մկրտութիւն՝ այլ ապաշխարութիւն կոչեն։

բ. Նոյնպէս սուրբն ( )գոստինոս հեռաւոր պատճառ թողութեան մեղաց ասէ զմկրտութիւն. զի ոչք միանգամ չկոցեն մկրտեալ՝ անընդունակք են խորհրդոյ ապաշխարութեան. քանզի ասէ. "Ո՞ր ինչ օգուտ իցէ ապաշխարութիւն կամ յաւուրս ծերոյն՝ եթէ ոչ՝ի վերոյ գոյցէ մկրտութիւն, կամ յետոյ՝ եթէ ոչ կանխեսցէ մկրտութիւն,,։

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Գաղագս ճիւթոյ և ձևոյ խորհրդոյ ապաշխարութեանն։

Զղջումն, խոստովանութիւն և հատուցումն են իբր նիւթ խորհրդոյս։ Այլ հատուցումն՝ամբողջական և եթանման է, և ոչ էական. նախ՝ զի առանց այնորիկ կատարի խորհուրդն և թողութիւն մեղաց, և երկրորդ՝ զի՝ի հոգեվարս ոչ լինդրի ինչ հատուցումն։ Նոյնձև է բան քահանային. "Նա արձակեմ զքեզ յամենայն մանանակցութենէ մեղաց,,։

Այդ զղջումն է գարշել՝ի գործեցելոց մեղաց՝ հատուտուն կամօք ոչ ևս գործելոյ։ Այս պայման յամենայն ժամանակի համարեցաւ կարևոր, և առանց զըղջման չիք երբէք ուրեք լեալ թողութիւն մեղաց։ Նա է կարևոր անհրաժեշտ՝ի փրկութիւն այնոցիկ, որ՝ի մահու մեղս լցեն անկեալ։ Ո՞ւ հարկ է մեղաց կամ

կրել պատուհաս, և կամ քաւել ապաշխարութեամբ։ Աստուած ամենողորմ հանդերձ անսահման ողորմութեամբն իւրով չկարէ առանց այսորիկ անտես առնել զմեզս, զի իմաստութիւն նորա և արդարութիւն ընդդեմ բողոքեն. "Արի ոչ ապաշխարիցէք, ամենեքեան նոյնպէս կորնչիջիք"։ Ապա որ ոք մահուչափ ընդդեմ Աստուծոյ մեղանչէ, յաստուածային, ի բնական և ի դրական իրաւանց պարտական է դիմել յապաշխարութիւն՝ ի հատուցումն աստուածային արդարութեան։

Ողջումն, թէպէտ կատարեալ և թէ անկատար, պարտի գոլ ի սրտէ դերբնական և ընդհանուր։ Ի սրտէ, զի արտաքինն այն վեր ի վերոյ զկողջ ոչ է զղջումն. ոչպէս մեղքն ի սրտէ յառաջ գայ, նոյնպէս և զղջման պարտ է ի սրտէ ելանել՝ ատելութեամբ մեղաց։ "Խոր ձարձրք առ իս յամենայն սրտէ ձերմէ, պահօք և լալով և կոծելով. պատառեցէք զսիրտս ձեր, և մի զհանդերձս"։ (Յոել. բ. 12)։ Այլ թէպէտ և պարտ է զղջման գոլ նեղքին, այլ իբրև մանն խորհրդոյ ապաշխարութեան՝ պարտի գոլ և զգալի, այսինքն յայտնեալ արտաքին նշանօք, որպէս զի կարասցէ քահանայն դատել թէ լիցի՞ ապաշխարողն արժանի արձակման։

Պարտ է զղջման գոլ և դերբնական, այսինքն յառաջ եկեալ ի հաւատոյ. պարտ է մեղաւորին ատել զմեղս այնու՝ զի անհաճոյ է Աստուծոյ, այնու՝ զի ընդդէմ Աստուծոյ է թշնամանք։ Ապա զղջումն յառաջ եկեալ յամօթոյ, կամ յանուանարկութենէ, կամ յերկիւղէ դատաւորի, կամ ի հիւանդութենէ, ոչ է աստուածահաճոյ. այլ մերժէ զայն Աստուած ոչպէս զապաշխարութիւն Նինուէացոց։

Պարտ է զղջման գոլ և ընդհանուր, այսինքն ի վերոյ ամենայն մեղաց գործեցելոց՝ առանց ի բաց թողլոյ և ոչ մի։ Ուր որ ի մի եւեթ մահուչափ մեղս կամ յախտ ինչ մեղանչական զսկսեալ իցէ, չէ նա զղջացեալ. զի չէ մարթ ասել Չմարտասիս զմեղս ինչ ոչպէս թշնամանս Աստուծոյ, առանց ատելոյ և զայլն ամենայն՝ որ նոյնպէս թշնամանք են նմին։ Այլ զի զղջումն իցէ ընդհանուր, շատ է զի մեղաւորն միով եւեթ ներգործութեամբ զղջման ատեսցէ զամենայն ոչպիսի և իցէ մեղս նա, և ոչ է հարկ ի վերոյ միոյ միոյ ա-

րոյն առնել զղջումն և առաջադրութիւն, թէպէտ և լաւագոյն էին այս և օգտակարագոյն։

Սակայն և Ճշմարիտ զղջման աստիճանք են. է որ առաւել, և է որ նուազ ընդ գործեցեալ մեղս իւր զղջայ։ Կարէ ոք յօժարել՝ ի տալ և՝ ի կորուսանել զամենայն և զմահ իսկ յանձն առնուլ առ՝ ի չմեղանչելոյ ընդդէմ Աստուծոյ, սակայն չզգալ կսկիծ՝ ի սրտի ընդ մեղս իւր որպէս ընդ մահ սիրելւոյ։ Այլ կսկիծս այս և ապաշխարութիւն ցաւոց ոչ է կարևոր. շատ է Ճանաչել մօտ զի չարագոյն են մեղք քան զամենայն չարիս, և զոլ պատրաստ՝ ի կորուսանել զամենայն՝ քան անկանել՝ ի ընդդէմ Աստուծոյ. այս է տէրունականն քան. "Եթէ ոք գայ առ իս, և ոչ ատեայ զհայր իւր և զմայր և զկին և զորդիս և զեղբարս և զքոյր, և զանձն ևս իւր, ոչ կարէ իմ աշակերտ լինել,,. (Ղ Կ. ԺԴ. 26)։

Եւ քանզի հաստատութիւն մտաց կամ առաջադրութիւն ոչ ևս մեղանչելոյ է մասն Ճշմարիտ և անկեղծ զղջման, պարտ է և այնմ անկեղծ և Ճշմարիտ զոլ՝ հաստատուն և համապարփակ։ Պարտ է ապաշխարողն հրաժարել ոչ միայն՝ ի մեղաց, այլ և յամենայն մերձաւոր վտանգաց նոցին և՝ ի հրապուրանաց մեղաց։

Ո՞ զղջումն զանազանի՝ ի կատարեալ և յանկատար։ Կատարեալ է՝ որ՝ ի կատարեալ սիրոյն Աստուծոյ յառաջ գայ, այսինքն՝ ի սիրելոյ զԱստուած՝ ի վեր քան զամենայն ինչ՝ վասն գոլոյ նորա անբաւ բարի։ Իսկ անկատար է՝ որ յառաջ գայ յերկիւղէ դժոխոց և պատժոց։ Այլ կատարեալ զղջմամբ արդարանայ մեղաւորն մինչ չև իսկ խոստովանեալ զմեղսն, այլ հանդերձ ըղձիւք խոստովանելոյ։ Իսկ անկատարն ոչ արդարացուցանէ զնա առանց խորհրդոյ խոստովանութեան, այլ նուաւ բաւական է յարդարութիւն։

ԱՌԱՔԻՆՔ

Աւետ. Ա. Ադաքեանց Յոհաննէս առէ (ա. կոր. ԺԲ. 18.) "Երկիւղ ոչ գոյ՝ ի սէր, այլ սէրն կատարեալ՝ ի բաց մերժէ զերկիւղ. զի երկիւղ ընդ տանջանաւք է. իսկ որ երկնչին, չէ կատարեալ՝ ի սէրն,,։ Վասն որոյ և

Պօղոս ասէ. (հռ. ը. 15.) "Օ՛ր ոչ առէք զՀոգին ծառայութեան վերստին երկիւղ, այլ առէք զՀոգին որդեգրութեան,,: Այսպէս երկիւղ հակառակ է սիրոյ, և որ նուաճեան գործէ՝ չարաչար գործէ. վասն որոյ դարձեալ ասէ նոյն առաքեալ. (ա. կոր. ժգ. 3.) "Այլեւ սէր ոչ ունիցիմ, ոչ լինչ եմ, ոչ լինչ օգտիմ,,:

Պէ. Այրկիւղ հակառակ ասի սիրոյ իբր անկատար ե՛ղանակ հասանելոյ՛ի նպատակն, և ոչ եթէ իսկապէս հակառակ որպէս չար բարւոյ. ապա թէ ոչ, չյորդորէր զմեզ Քրիստոս երկնչել Այնմմէ: Վասն որոյ որ նուաճեան գործէ, անկատար գործէ, այլ ոչ չարաչար. զի և զՀոգի երկիւղի՛ի տեառնէ ընկալան Հրեայք՝ որպէս ուսուցանէ նոյն առաքեալ. և սիրոյ նուաճութիւն յայնժամ ածէ զդատապարտութիւն, յորժամ ախտասիրութիւն ընդ աստուածսիրութեան փոխանակիցէ, կամ առ՛ի չգոյէ սիրոյ՝ պատուիրանազանցութիւն՛ի նեղբս մտանիցէ,

Ա՛ստէ. Բ. Այրկիւղ՛ի պատժոյ՝ յանձնասիրութենէ պայ յառաջ. և որչափ որ առաւել երկնչի՛ի պատժոյ, առաւել է անձնասէր. այդ անձնասիրութիւն չար է և ցոյց մեղասիրութեան. վասն որոյ սուրբն ( )գոստինոս ասէ (ընդ. Հին. Թիւ ը.) "Որ երկնչին՛ի դժոխոց, ոչ՛ի մեղանչելոյ երկնչի, այլ յայրելոյ,,:

Պէ. Որոյ անձնասիրութիւն օրինաւոր աստուածատունկ՛ի մարդն, և որ ըստ այնմ գործէ՝ զի մի դատապարտեսցի, և առ երկիւղի կորուսանելոյ զյաւիտենական երանութիւն՝ խորշի՛ի մեղաց, բարւոք առնէ. և վասն այնորիկ յորդորէ զմեզ Քրիստոս երկիւղ, և սպառնայ պատուհաս. և սաղմոսերգուն աղօթէ. "Հաներ ոտս քո ընդ երկիւղ քո զմարմին իմ, զի՛ի դատաստանաց քոց երկեայց յոյժ,,: Ասէ բան սրբոյն ( )գոստինոսի հայի յանկարգ անձնասիրութիւն, որ զի՛ եթէ առ երկիւղի գեհենին խորշի ծառայաբար՛ի չարէ, այլ՛ի սրտէ յանկայ զչար. զորոյ երկիւղ սանձէ զձեռս, այլ ոչ և զսիրտ:

Ա՛ստէ. Գ. Այթէ կատարեալ զղջումն արդարացուցանէր զմեզաւորն, ընդունայն էր նմա այնուհետև խորհուրդ ապաշխարութեան, ընդունայն միաբանութիւն և արձակումն:

պէս. Կատարեալ ղէջումն ոչ արդարացուցանէ զմեզ առանց ընձեռեալ խորհրդոյ ապաշխարութեան. քանզի խորհուրդ ապաշխարութեան զօրէ և ընձեռեալ հանապազ մկրտութեան. վասն որոյ ոչ կամաւն զանց առնել զնոքօք՝ ոչ արդարանայ, և զընկալեալն իսկ կորուսանէ զարդարութիւն:

ՑՕԴՈՒԱԾ Բ

Յաղագս խորհրդական խոստովանութեան:

Խոստովանութիւն մեզաց, որ միւս մասն է ապաշխարութեան, է ամբաստանել մեզաւորին զմեզս իւր քահանայի՝ վասն ընդունելոյ ի նմանէ զարձակումն: Եւ ոչ այս խոստովանութիւն հրաման է աստուածային, և է մասն հաւատոյ՝ սահմանադրեալ զայն Քրիստոսի վասն այնոցիկ, որք յետ մկրտութեան անկանին ի մեզս: Ոչ այս այսպէս սահմանեաց Հոգւովն սրբիզենտեան ընդդէմ նովատեանցից, յորոց կէսք ոչ կարևոր համարին զխոստովանութիւն, այլք գիւտ մարդկային՝ միայնակաց եկեղեցւոյ և բեռն անտանելի: Եւ սակայն իսկ պարտ էր նոցա ի միտ առնուլ զաստուածային օրէնսդրութիւն խորհրդոյս: Ո՛ի ինչ իսկ մարթ էր այլապէս ընդ այսպիսի գժուարին օրինաց գրաւել զամենայն ազգս քրիստոնէից, յայտնելոյ կամակատ առն նմանելոյ իւրեանց պղատանին՝ ծածկապիտին Եւթ Ո՛ստուծոյ գիտելիս, եթէ ոչ նոյն ընդհէք աստուածային՝ որ զքրիստոնէական կրօնս գժուարինս մարդկեղէն բնութեան՝ ի վերայ վերոյ տակաց հեթանոսական ախտից և պղծութեանց կացոյց յաղթական, առնէր և զսա ընդունելի:

Վասն է արդ ածել զվկայութիւնս սուրբ գրոց և ընդդէմ նորա՝ ի հաստատութիւն խորհրդական խոստովանութեան: Ի քարոզել Պօղոսի Ա՛գրիպա՝ բազումք ի հեթանոսաց եկին ի հաւատս, և յաւելուն սուրբ գիրքն (գործոց ԺԶ. 18.) "Հազումք ի հաւատացելոց գային և խոստովան լինէին, և պատմէին զգործս իւրեանց,,: Ա՛յլ ոչ այսչափ միայն, այլ և զարդասիս դարձի և խոստովանութեան նոցա յաւելուն, զի "Հազումք

՝ի կախարդասարացն բերէին զգիրսն, այրէին առաջի ամենեցուն ,, :

Եւ առաքեալն Յակովբոս ասէ . (Ե . 16 .) "Խոստովան եղերուք միմեանց զմեղս ,, : Այլ թառս դժուարին չկարէ ցուցանել զհրապարակական խոստովանութիւն, այլ առանձինն ումեք, որ այն ինքն է առանձնական խոստովանութիւն :

Արդիս վարդապետն մեր՝ի մեկնութեան այսր բանին ասէ . "Այիմեանց, ասէ, խոստովան լերուք . ոչ՝ի հրապարակի, և ոչ՝ի փողոցամիջի, և ոչ առաջի բազմաց վկայից . այլ միմեանց, ասէ, այսինքն յանկեան միոջ զանխուլ՝ի լսողաց և՝ի տեսողաց, առ ոտս քահանայի միոջ . և ոչ վայրապար քահանայի, այլ յոյժ երկիւղածի և գիտնականի՝ որ գիտիցէ համառօտ բժշկապէս սպեղանիս կազմել վիրացն, և բժշկել զցաւս ոչուցն ... Այլ մարդոյ քեզ նմանող առեմ խոստովան լինել ըզմեղս քո, որ՝ի ներքոյ անկեալ կայ այնպիսի կարեաց՝ որպէս և դու, և գիտէ իւրով տկարութեամբն և զքոյն չափել, և մարդասիրութեամբ ուղղել . զի և ինքն կայ ոտն է Այստուծոյ մարդասիրութեանն, և նոյնին աղաչաւ և առ քեզ ներող գտանի ,, :

Եւ առաքեալն Յովհաննէս ասէ . (Ա . Ի . Ա . 9 .) "Եպա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա և արդար առ՝ի թողուլ զմեղս մեր ,, : Այդ զհաւատարմութիւն Այստուծոյ և զարդարութիւն առ՝ի թողուլ զմեղս՝ ոչ է մարթ այլազգի մեկնել առաջ քայց միայն զխոստովան լինելն իմանալով զխորհրդոյ ապաշխարութեան, Օ՜ի չիք այլ ուրեք խոստացեալ Այստուծոյ թողուլ խոստովանելոց զմեղս, քայց ուր ասացն առաքելոյն . "Օ՜ր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս ,, : Օ՜ր և Արդիս վարդապետն մեր՝ի սոյն միտս իմացեալ՝ի մեկնութեան այսր բանի առաքելոյս, ասէ . "Օ՜մայրն ամենայն քարեաց և զբաղկիզքն թողութեան մեղաց զխոստովանութիւնն՝ի ներքս մուծանէ, զոր Այստուած սիրէ և կամի ... Այնին իրի և աշակերտքն նորոյս և Հիմարտութեանս, ծանուցեալ՝ի Յոգւոյն պարգևաց զսորայս բարւոյ, ոչ միայն յորդորեն՝ այլ և օրինադրեն, գիտացեալ զգօրութիւն նորա՝ եթէ զկնի աւազանին ընդ հաց՝ անկեղծին չիք այլ

ինչ պատշաճագոյն յարուցիչ օգնական գտանել քան զխոստովանութիւնն ,,։

Այս գարձեալ, որպէս ՚ի վեր անդր ասացաք, փրկիչն մեր վիշեաց յառաքեալսն և ասէ. ,,Եթէ ունիք հաւատս զմանրագոյն՝ թողեալ լինի նոցա, եթէ զսարսուռ ունիցիք՝ կալեալ լինի ,,։ Այդ սովին քանիւ գատաւորս կացոյց Քրիստոս զառաքեալս և զքահանայս առ ՚ի գատել զմեղս. և որպէս զգատել զայնս կարելոյ՝ առանց գիտելոյ. և որպէս կապել կամ արձակել կամ ապաշխարանս ՚ի վերայ ածել՝ առանց գիտելոյ զծանրութիւն և զթիւս մեղաց։ Որպէս և ՚ի քաղաքական օրէնս է առնանել, զի հարկ է գատաւորին հարցփորձ և քննութիւն առնել յանցանաց՝ զորոց հասանէ նմա գատել և վճիռ հատանել։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆ Ք

Յաւել. ա. — ա. Անագաւոր ՚ի կայուցանել զգատաւորս՝ ոչ արգելու հպատակաց իւրոց գիմել առ Քինքն. վասն որոյ օրէն է մեղաւորաց գիմել առ Քինքն Քրիստոս, և ՚ի նմանէ ընգունել զթողութիւն մեղաց, ապա զնոքա հարկ խոստովանելոյ։ — բ. Այս գարձեալ Քրիստոս իշխանութիւն ետ արձակելոյ զմեղս, այլ ոչ գիտելոյ. որպէս յայտ է ՚ի վկրտութենէ, յորում թողութիւն լինի մեղաց՝ առանց խոստովանութեան։

Պե. — ա. Որչափ էր մեղաւորաց գիմել առանց խորհրդոյ ապաշխարութեան առ Քրիստոս, եթէ Քրիստոս ոչ էր այսպէս սահմանեալ. այլ քանզի այսպէս կամեցաւ սահմանել՝ զի ՚ի ձեռն խորհրդոյս լինի թողութիւն, ոչ ևս ազատ և ՚ի կամս մեղաւորին մնայ խոստովանութիւն։ Այս և յայլաբանութենէ փականացն յայտ է. զի ընդունայն է տալ ուժեք ՚ի ձեռն զբանալիս տան, եթէ ազատութիւն լիցէ ամենայն ուժեք մտանել անդր առանց բանալոյ։

— բ. Իշխանութիւն կապելոյ և արձակելոյ զմեղս հարկ առնէ գիտել զայնս, որպէս ցուցաք ՚ի վերոյ. և ոչ ինչ զօրէ ընդդէմ այսորիկ օրինակ վկրտութեան. զի որք չիցեն վկրտեալ՝ չեն հպատակք եկեղեցւոյ, և ոչ

է օրէն դատել՝ բայց միայն զհպատակս։ ԿրտուԹիւն դուռն է եկեղեցւոյ, և ընդ այն մտանեն անդր անհաւատք. չև մտեալ նոցա յեկեղեցի, օտարք են և ոչ հպատակք նորին։ Եւ դարձեալ՝ եկեղեցի՝ ի կրԹել և՝ ի պատրաստել զերախայս՝ ի մկրտուԹիւն, Ճանաչէ իսկ զհանդամանս հոգւոց նոցա։

Գործ. Ը. — ա. Առ սովրեք գտանեմք յորդորեալ առաքելոց զհաւատացեալս՝ ի խոստովանուԹիւն մեղաց. այլ մանաւանդ՝ ի վկայուԹիւն խաչի մահու Յիսուսեանց ապստալոյ զնոսա Պօղոս յասելն. (ա. կոր. ԺԱ. 28.) "Ոչինչ մարդ զանձն իւր,, Եւ "Քրիստոս խրատեաց զմեզ՝ առանց միջնորդի խնդրել՝ ի Նորա իւրմէ զԹողուԹիւն. "Եւ Թող մեզ զպարտիս մեր,,։ — բ. Եւ էէ իսկ հաւանելի՝ կամել Քրիստոսի՝ ի հնուհաց օրինս գնել՝ ի վերայ մարդոյ լուծ այնպիսի ծանր՝ որպիսի և ոչ յօրինս երկիւղի եդ՝ ի վերայ նորա Գաւուած։

Պե. — ա. Զբան Յակոբայ առաքելոյ, "Խոստովան եղերուք միմեանց զմեղս ձեր,, Նորք առհասարակ իմանան զհորհրդական խոստովանուԹենէ. մանաւանդ զի զայն կցորդէ ընդ վերջին օծմանն։ Այլ հաստատել ևս զի չգտանիցեմք ուրեք՝ ի տուրբ գիրս յորդորել առաքելոց զհաւատացեալս՝ ի խոստովանուԹիւն, ոչ զհետ գայ՝ զի չիցէ նոցա յորդորեալ։ Զի և ոչ ընդմանկունս գտանեմք ուրեք առաքելոց մկրտեալ, այլ յայտ է զի մկրտէին։ Զանգի առաքեալք քարոզեցին որ ինչ սահմանեաց և ուսոյց Քրիստոս. արդ յայտ իսկ է զի Քրիստոս սահմանեաց զհորհուրդս զայս, որպէս ցուցաք՝ ի վեր անդր, ապա և առաքեալք ուսուցին զայն հաւատացելոց. և զՊօղոսի պատուիրեն քննել զանձինս՝ պարտ է իմանալ ըստ օրինակին սահմանելոյ՝ ի Քրիստոսէ. և ինքն Քրիստոս պատուիրէ մեզ խընդրել՝ ի Նմանէ իւրմէ զԹողուԹիւն ըստ նմին օրինակի միջնորդաւ հոգւոյ ապաշխարուԹեան։ Զի և ոչ պատուիրէ անդ յանուն իւր խնդրել՝ ի Նմանէ իւրմէ զԹողուԹիւն, այլ յայտ իսկ է՝ զի ոչ ոք առանց շնորհացն Քրիստոսի հանդիպի ԹողուԹեան։

— բ. Սակ յաղագս ծանրուԹեան լծոյ խոստովանուԹեան պատաստանութիւնք նախ՝ զի աստ զարդեանց իրացն է խնդիրս, և ոչ Թէ արդեօք մնրԹ էր Քրիս-

տոսի դնել՝ի վերայ հաւատացելոց լուծ այնպիսի։ Այլ-
լորդ՝ զի առ համեմատութեամբ այնչափ զոհից և քա-
հանութեանց և մարմնաւոր ապաշխարութեանցն Հրէից՝
թեթեւագոյն արդեօք էին լուծս այս։ Այլ դարձեալ՝ զի
առաւտագոյն շնորհք դիւրեն մեզ զայն. և սիրովի ևս
քննութիւնս մեր խոստովանութեամբն և առաւելագոյն
վստահութեամբ ընդ Աղուէսին մեզաց իւրոց՝ի ձեռն
խորհրդական արձակմանն, որ զթերին զղջման ընտ. և
Յոյժ իսկ՝ի դէպ է սիրոյ օրինաց խոնարհ խոստովա-
նութիւն։

Վասզից ասել զանբաւ օգտութիւնս խոստովանու-
թեան՝ի սանձել զմեղուցեալն և յընկրկել՝ի մեզաց.
՝ի տալ նմա և յաւելուլ զօրութիւն և օգնականութիւն
՝ի վտանգս և՝ի փորձութիւնս՝ խորհրդով, խրատու,
աղաչարարութեամբ և խրախուսանօք Հարտար և խո-
հական խոստովանահօր, և՝ի հաստուցանել մխսամբ
ինն՝ խոնարհական խոստովանութեամբն՝ արհամարհա-
նաց եղելոց մեզօք՝ մեծվայելչութեան Աստուծոյ։

Աբէլ. գ. — ւ. Ընկնարին և Հիզպտիւ խոստովա-
նել զմեզս առ՝ի տկարութենէ յիշողութեան, և՝ի
չկարելոյ ընդարել ընդ ծանր և ընդ թեթև։ — ր. Վե-
տանգաւոր ևս է խոստովանութիւն, եթէ խոստովա-
նահայր՝ի լսել զզազրութիւնս, և եթէ խոստովանող-
դոյ՝ի յիշատակելն զայնս։

պէ. — ւ. Ոչ ինչ գժուարին խոստովանել զմեզս,
որպէս կամ՝ոչինչ եկեղեցի ուսուցանէ. զի ըստ այսմ՝
յետ փութաջան քննութեան խղճի մտոյ՝ ոչ աւելի
ինչ պարտ է մեզ խոստովանել քան զոր յիշեմքն, և
քան որչափ ինչ զծանրութիւն մեզացս Հանապէմք. և
օգնականութեամբ խոստովանահօր փարատին ամենայն
երկբայութիւնք և վարանք։

— ր. Վճիռք և սրբութիւն պաշտաման և սահմա-
նադրութիւնք փրկաւէտք պարսպեն ըստ բաւականին
զխոստովանահայրն, եթէ չիցէ՝ինամս կամաւոր անզգու-
շութիւն. իսկ ապաշխարօղք՝ եթէ արդարև զղջմամբ և
պատկառանօք՝ի խորհուրդ անդր մատչին, չիք և նոցա
վտանգ՝ի յիշատակելոյ զմեզս իւրեանց։

ԳՕԴՈՒԱԾ Գ

Վկայութիւնք ի Հարց ի հաստատութիւն խորհրդական խոստովանութեան:

Սուրբն Դիոնեսիոս արիսպագացի յառաջին դարու առ Դեմոփիլ՝ "Վրկիչն մեր գնէ ի վերայ ուսոց իւրոց զոչխարն մոլորեալ, և յուրախութիւն հրաւիրէ զհրեշտակս. քաղցր է առնոսա, որ ոչ ապահաստ առնեն զընտրհս իւր. ծագէ զարեգակն իւր ի վերայ բարեաց և չարաց, և զանձն իւր գնէ ի վերայ փախուցելոցն յիւրմէ: Ասէ դու գրես զդիմեալն առ ոսս քահանայի մերժեալ ի քաց, չգիտեմ ձրպէս ամպարիշտ գնա և մեղաւոր կոչեսցի, որ ի գարման չարեացն իւրոց ասէրն գալ: Նա ոչ միայն ի քաց մերժեալ էք գնա արհամարհանօք, այլ և թշնամանեալ զքահանայն մարդասէրն՝ որ կարեկցութեամբ ընկալեալ զապաշխարողն, և արդարացուցեալ է զամպարիշտն ,,:

Տերտուղիանոս յերկրորդ դարու ի գիրն յաղագս ապաշխարութեան. (գլ. Թ.) "Խոստովանութիւն թեթևացուցանէ զմեղս, որչափ ծածկելն զայնոսիկ ծանրացուցանէ. քանզի խոստովանութիւն է առհաւատչեայ կամելոյ փոխարինել Աստուծոյ, իսկ լռելն՝ ցոյց յամառութեան ի չարիս: Նա զի է ապաշխարութիւնս այս երկրորդ և միակ օձման հաշտութեան ընդ Աստուծոյ, պարտ է փութալ յայն. ոչ ի ներքս ևեթ ի սրբոտի առնելով զայն, այլ և գործով պաշտեալ. և գործս այս կոչի խոստովանութիւն, որով խոստովանիմք առաջի Աստուծոյ զմեղս մեր ,,:

Ածելոս (գլ. Ժ.) "Յամարիմ զի բազումք խուսեն ի խոստովանութենէ, կամ օր ի յօր յերկարաձգեն զայն, զի երկնչին յայտնել զգնացս իւրեանց, և առաւել փոյթ է նոցա զպատուոյ իւրեանց քան զփրկութենէ. Հանգոյն այնոցիկ՝ որ ի ծածուկ մասունս մարմնոյ ախտակրեալ, ծածկեն զայն ի բժշկաց, և յամաչելոյ անտի կորնչին: Նա որ օգուտ յամօթոյ ի թաքուցանել զյանցանս. ի մարդկանէ զմեղս ծածկելով,

կարելի՛ք ծածկել զայնսակիկ յ՝Յստուծոյ. լաւ էցէ ծածկել զատապարտեալ, քան արձակիլ յայտնի ,,։

Որոգինէս յերկրորդ գարու՝ ի Լատացիան. (Հատ ը.) “Պաշխարութիւն ընդունի զԹողութիւն մեղաց, ի ջամաչել մեղաւորին յայտնել քահանայի տեառն զմեղս իւր ,,։

Գարձեալ՝ ի սաղմոն լէ. (Հատ ը.) “Օ գոյշ լեր, տէս ում խոստովանիսգ. ծանիր նախ զբժիշկն՝ որում հանդերձեալ ես զհիւանդութիւն քո յայտնել, զի գիտասցէ ախտակցաբար կարեկցութեամբ հիւանդանալ ընդ հիւանդս, լալ ընդ լայօղս. որպէս զի զամենայն վստահութիւն ունիցիս՝ ի նա, զոր միանգամ ծանեար բժիշկ քաջահմուտ և կարեկից ,,։

Գարձեալ (՝ի Հատն ձ. ՝է Լուս. Թիւ ձ.) “Որ ինչ՝ ի ծածուկ գործեալ, որ ինչ քանիւ ևեթ և կամ՝ ի մարմ, զամենայն հարկ է յայտնել, զամենայն՝ ի վեր հանել ,,։

Յուրբն Աիպրիանոս՝ ի նմին երրորդ գարու. “Գանձի կենդանի հաւատք և երկիւղածութիւն է՝ ի նոսա, որք Թէպէտ և ոչ զոհեալ կռոց, և ոչ յետկար վկայութեան զայնմանէ ընկալեալ, վասն մտաբերելոյ ևեթ յայն՝ գան անկեղծութեամբ և զղջմամբ խոստովանել քահանային Յստուծոյ, յայտնեն նոցա զխիղճ մտաց իւրեանց, և զբեռն հոգւոյ իւրեանց՝ ի բաց դնեն։ ... Խոստովան լեալ ամենայն ոք զմեղս իւր մինչդեռ՝ ի կենցաղումն է, մինչդեռ ընդունելի է խոստովանութիւն նորա, մինչդեռ հաձոյ Յստուծոյ հատուցումն և Թողութիւն մեղաց՝ ի ձեռն քահանայի ,,. (յղ. գլ. ԽԹ ելոյ.)։

Եւ՝ ի կանոնս սրբոյ Յուստուրչին մերոյ (կան. իբ.) “ԵԹէ ոք՝ ի քահանայից զծածուկ խոստովանութիւն ուրուք յայտնեաց, անկցի յաստիճանէն, և՝ ի կարգէ պաշտօնէից մերժեսցի ,,։ Որ և երկրորդի՝ ի ժողովն Նիւսեսի աշտարակեցւոց (կան. է.) “Ոմն ոք՝ ի քահանայից յայտնիցէ երբեք զբան խոստովանողացն, նզովի՛ք լուծցի, և ամենայն իրօք ջնջեսցի՝ ի քահանայական ժառանգութենէ ,,։

Եւ՝ ի Յաձախասպատում գիրսն. “Օ աղտեղեալն և զախտացեալն հոգւով և մարմնով սրբէր ատյգ խոստովանութիւնն ըստ աւազանին ընծոհի. որ գայցէ յա-

պաշխարութիւն, գործակցութեամբ Հոգւոյն սրբոյ՝ լինի նորուն քնակարան ,,։

"Օ՛ի դատապարտեսցի՛ ի ձեռն ընտրհացն Քրիստոսի մեղքն և իշխանն մեղաց, և առցեն զկատարեալ առաջնութիւն փրկական խորհրդոցն՛ ի տապ խոստովանութեան և յապաշխարութեան ,,։

Ա՛յդ թէպէտ և վկայութիւնքս այսոքիկ Հարց առաջնոց դարուց բաւականք են՛ ի հաստատութիւն խորհրդական խոստովանութեան, այլ և՛ ի յաջորդ դարուց անտի ածցուք վկայութիւնս փոքր՛ ի շատէ։

Լակատանտիոս (՛ի գէրս կանոնաց. գլուք ՟ը. գլ. ԺՀ.) "Պատուած՛ ի միանձնաւորակից գթութենէ իւրմէ առնել՛ ի խնամել զկեանս մեր և զփրկութիւն, զապաշխարութիւն եդ մեզ առաջի Հայեմ Թլխատութեան. զի եթէ յայտնեացուք զխորս մեր, այսինքն եթէ խոստովանեացուք զմեղս մեր առաջի Պատուածոյ, գտցուք ընդ Թողութիւն՝ զոր յամառելոցն և որոց ծածկեն զգործեացեալն՝ ոչ ընդոհե Պատուած, այն՝ որ ոչ Հայի յերեսս իւրեան զմարդ, այլ՛ ի նեըքս՛ ի գաղտնիս սրտի ,,։

Աուրբն Պատանաս՛ ի բանն Ղուկայ. Օ՛ր արձակիցեք և այլն։ "Եթէ կապանք քո չկրեն արձակեալ, դիր զքեզ՛ ի ձեռս ուրուք յաշակերտաց Քրիստոսի. զի նոցա տուեալ է արձակել զօրութեամբ իշխանութեանն՝ զոր ընկալան՛ ի փրկչէն. Օ՛ր արձակիցեք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս. և՝ Եթէ ումեք Թողուցուք զմեղս, Թողեալ լիցի նոցա ,,։

Աուրբն Ատրսեէ առ Պիղոս. "Եթէ ոք՛ ի նոցանէ՝ որք յայտնիսի մեզս գտեալ իցեն՝ խոստովանեացի և զպատասխի, որ՛ ի գԹութենէն Պատուծոյ է առ իշխանութիւն կապելոյ և արձակելոյ՝ մարդասիրագոյն առ այնպիսին՝ առ՛ ի կարձել զժամանակ ապաշխարութեանն քան խոնարհ խոստովանութեան նորա գտանելոյ, ոչ է սազ տանել ,,։

Աուրբն Գրիգոր Նիւսացի՛ ի կանոնական Թղթին. (կան. ՟ձ.) "Մի զայլոց ինչ բարձեալ գաղտագողի, և ապա զմեզս իւր աւրհաստանեալ յայտնեացէ քահանայի, և յախտէ իւրմէ հրաժարեալ առաքինասցի, բժշկի՛ ի հիւանդութենէն ,,։

Ի՛ գարձեալ (ընդդէմ նոյն գաղտագողոյն). "Գուա, ո-

րոյ հիւանդ է հոգիդ, ընդէր ոչ առ բժիշկն փութաս. ընդէր ոչ յայտնես նմա խոստովանութեամբ զհիւանդութիւն քոյին ,,:

Առրբն Աւգբոսիոս՝ի սաղմոսն ձժէ. ,,Աւր ապաշխարէն, յաղէկ ամօթոյ, ՚ի բաց դնէ զշառաւղուռնանս խոստովանելոյ զմեղսն, յուսալ հասանելոյ փրկութեան ,,:

Նա դարձեալ ՚ի գիրս ապաշխարութեան. (գիրք ՟ը. գլ. ՟ղ.) ,,Նմէկ արդարանալ կամիս, խոստովան լեր ըզմեղս քո. զի ամօթզած խոստովանութիւն խզէ զկապանս մեղաց ,,:

Առրբ Ասկեբերանն յերրորդ գիրս քահանայութեան. (գլ. Ե.) ,,Վանզի եթէ զմտաւ ածիցէ ոք՝ եթէ քանիծն իցէ արգեօք, զի մարդ որ մարմին և արիւն զգեցեալ է՝ մերձ անցեալ կայ երանելի և անեղծ բնութեանն այնմիկ, յայնժամ գեղեցկապէս ՚ի միտ առցէ՝ եթէ քանի պատուոյ արժանի արարին զքահանայս շընորհք Հոգւոյն: Օ՜ի ՚ի նոցա ձեռն կատարին այսքիկ՝ այլոլքն հանդերձ, որք ոչ ինչ խոնարհագոյնք են քան զսոսա, և ՚ի մեր պատիւն և՚ի փրկութիւն ակնարկեն: Վանզի որք յերկրի աստ բնակեանան, և ՚ի սմին քաղաքավարին, յերկնաշնոյն սպասաւորութիւն կարգեցան, և իշխանութիւն նմին ընկալան՝ զոր և ոչ հրեշտակաց և ոչ հրեշտակապետաց ետ Ստուած. քանզի նոցա ոչ ասաց՝ Օ՜որ միանգամ կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս: Ստպաքէն և որք յերկրի տեառնք են, ունին և նոքա իշխանութիւն կապելոյ, այլ զմարմինս միայն. իսկ այս կապանք մերձին ՚ի նոյն ինքն Հոգին, և զերկինսիւք ՚ի վեր անցանեն. և զոր միանգամ աստ ՚ի խոնարհ գործեն քահանայք, նոցուն ՚ի բարձունս վճիռ հատանէ Ստուած, և զծառայիցն զգատակնիռ տէրն ինքնին հաստատէ. քանզի զինչ այլ՝ բայց եթէ բազմապակ զիշխանութիւն զերկնաւորացն ետ նոցա. զի որոց թողուցուք զմեղս, թողեալ լիցի ասէ. և զորոց ունիցիք, կալեալ լիցի: Նա արդ զինչ քան զայս իշխանութիւն բարձրագոյն: Օ՜ամենայն գատաստան ետ Հայր Որդւոյ. այլ ես տեսանեմ, զի զամենայնն ՚ի ձեռս նոցա ետ Որդին ,,:

Նա դարձեալ՝ ՚ի Յառ սամարուհւոյն և ՚ի մեկնու-

Թեան ծննդոց, (Հատ. Ե. գլ. Դ.) "Այլ ոտով երկընչելիքն, այնր աղագաւ կրեցոյ եմք պատուհաս. զի որ առնէին յայտնել մարդոյ զմեզս իւր, և ոչ առնէին գործել զայն առաջի Աստուծոյ, որ ոչն կամի խոստովանել և ապաշխարել, լցցի նախատանօք յաւուրն դատաստանի, ոչ առաջի միոյ ուրուք կամ երկուց՝ այլ յանդիման ամենայն աշխարհի ,,:

"Եթէ մեղաւորն փութացի խոստովան լինել զմեզս իւր, եթէ կամիցի յայտնել զվէրս իւր բժշկի՝ որ քաղցրութեամբ դարմանել գիտա, եթէ դեղս՝ինամանել ընդունել կամիցի, եթէ միայնումն խօսել զանխտել յամենայն ումեքէ՝ այլ խոստովանել նմա Աշխարհիս զամենայն մեղս իւր, դիւրաւ ընկալցի զբժշկութիւն. զի խոստովանութիւն մեզաց ջնջէ գիտաին ,,:

Ի բաց թողեալ զայլ ամենայն վկայութիւնս հարց, որ գիտէ առաջնոցն յամենայն դարս կացին, և որք յայտնագոյն ևս վարդապետեն զխորհրդական խոստովանութենէ, ածեմք աստ զկանոն ապաշխարութեան՝ի մաշտոցէ մերմէ, որ հնութեամբն և ըստ այլ ամենայն տեսութեանց՝ է հզօր՝ի յաղթահարել զառարկութիւնս նորաղանդից և աւր՝ի բերան առնել գիտասա:

"Այսպէս ֆահանայն յապենէ, և ղեղուեալն՝է ծուռը էջոցանէ. և ապաշխարողն ասէ. Ի՝եղայ ամենատուրբ Հրամայութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. մեղուցեալ եմ առաջի Աստուծոյ. խոստովանիմ առաջի Աստուծոյ և առաջի քո, Հայր սուրբ, զամենայն զմեզս իմ. քանզի մեղայ Աստուծոյ՝ խորհրդով բանիւ և գործով, կամաւ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ:

Այս ասէ որբէ որբէ ղեղեան յանուանէ, ըստ գործեալ է՝ի հարսրահարութենէն մարմնոյն և յորոգայնէ սպանանայէ. և ապա ասէ. Հայր սուրբ, զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան և բարեխօս առ միածին Որդին, զի խնդրութեամբդ՝ որ տուեալ է քեզ՝ արձակեսցես զիս՝ի կապից մեղաց իմոց աղաչեմ:

Այս ֆահանայն արասցէ ընդունելոյն ղեղայ ղեղուցելոյն, և այլ եղբ էրսայն՝ զապաշխարանս, որպէս և հրամայէ կանոնքն. և ապա տացէ արչխուհն՝ի ղեղայ:

Ողորմեսցի քեզ մարդասէրն Աստուած, և թող-

Թիւն ընդհեացէ ամենայն յանցանացդ քոց, խոստովանեցելոյն և մոռացելոյն։ Այլ ես՝ ի կարգէս քահանայութեան, իշխանութեամբ աստուածային հրամանաւն, Թէ զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս, նովին բանիւն արձակեմ (կամ արձակեալ եմ) ✠ զքեզ յամենայն մանաւկցուԹենէ մեղացդ, ՚ի խորհրդոց՝ ՚ի բանից և ՚ի գործոց, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Այլ դարձեալ տամ զքեզ ՚ի խորհուրդ սուրբ եկեղեցւոյ. զոր ինչ գործեացես բարիս, եղիցի քեզ ՚ի բարեգործուԹիւն և ՚ի փառս հանդերձեալ կենացն. ամէն։

Հեղուսն արեան որդւոյն Աստուծոյ, զոր եհեղ ՚ի խաչին, և ազատեաց զմարդկային բնուԹիւնս ՚ի գժոխոց, ազատեսցէ զքեզ ՚ի քո մեղացն։

ՑՕԴՈՒԱԾ Դ

Զի նոյն աշխատութիւն յայտ է և ՚ի հանրական և յանչեղլի առաքեալսն։

Պորտաղանդք յաղԹահարեալ ՚ի վկայուԹեանց աստուածընդդէմ հնուԹիւն խորհրդական խոստովանուԹեան, յաւելուն պնդել՝ Թէ զատ ինչ յիւրաքանչիւր կամ էր խոստովանուԹիւն և ոչ կարևոր, և Հնոսվկենտիոս Գ. յերեքտասաներորդ դարու ՚ի չորրորդ ժողովէն լատերանեան հրամայեաց իջեր զայն որպէս պարտս ամենեցուն։

Այլ նախ՝ ՚ի վկայելոյ Հարց յայտնի է, զի ընդ խորհուրդս եկեղեցւոյ իբրև պարտս ամենայն հաւատացելոց ընկալեալ էր խոստովանուԹիւն յամենայն ազգս քրիստոնէից, և ձև նորա և կարգ՝ ՚ի մաշտոցս սահմանեալ յառաջագոյն յոյժ քան զերեքտասաներորդ դար։

Արկրորդ՝ եԹէ չէր պարտ մեղուցելոց խոստովանել, ՚ի զուր էր այնուհետև Վրիստոսի տալ իշխանուԹիւն առաքելոց և յաջորդաց նոցին կապելոյ և արձակելոյ զմեղս։

Այս երրորդ՝ օրպէս էր հնար, զի յայնչափ այլոց քրիստոնէական համաւոր և ՚ի դիւրագոյն ՀգնուԹեանց և

առաքինութեանց ոչ մի ինչ իրրև անհրաժեշտ պարտք և կարևոր առ՝ի փրկութիւն առ ամենայն ազգս քրիստոնէից ընկալեալ, և զժուարագոյնս այս, և ըստ նորա զանդիման ասելոց անտանելի բեռն, ընդունելի լեալ ինչ ամենեցուն: Եւ եթէ՝ի [1] սահմանց հնազանդեալ և յաջեղեալ այս բեռն, ո՛րպէս և յարևելս լեալ ընդունելի. և ո՛րպէս ազգք բաժանեալք՝ի նոցանէ և նախանձընդդէմք՝ չիցեն ընդդէմ նոցին բռնկեալ, որոց այնպիսի և այնչափ վէճս զթութեանագունից յոյժ քան զայն ևս յաղթեալ:

Այլ ուրեմն հարկ է խոստովանել, զի խորհուրդս այս՝ի վերնատոսէ սահմանեալ, և յառաքելոց անտի առանդեալ, անընդհատ յաջորդութեամբ հասեալ է առ մեզ անժխտելի, և զի ոչ միայն օգտակարագոյն դեղ է և զարման յաստուածային իմաստութենէ սահմանեալ՝ի բժշկութիւն ախտացելոց մեղաց, այլ և հաստուցումն մեծ արհամարհութեան փառացն Աստուծոյ՝ի մեղաց անտի՝ ծայրագոյն խոնարհութեամբ մեղուցեալոյն. և այնչափ մեծ, որչափ ծանր է և զժուարին անձնասկրութեան մարդոյ:

ԱՌԱՔՈՒԹԻՒՆ Բ

Աշ. — ա. Ունի՞ք յիշատակութիւն՝ի վարս նախնի հաւատացելոց խոստովանելոյ յառաջ քան զվախճանն: — բ. Եւ ոչ խոստովանահարց՝ի հիւանդանոցս և՝ի բանակս զօրաց սահմանելոյ: — գ. Եւ ոչ յիշատակին առ հինս կրթութիւնք և հրահանգք խոստովանհարց:

Պխ. — ա. Պատճառք բազմապատիկք են այդր լռութեան. նախ՝ զի բազումք՝ի նոցանէ վկայական մահուամբ կատարէին: երկրորդ՝ զի անարատ վարուք կեանս յաղագաւարէին, և ներելեաց մեղացն չէր հարկ խոստովանութեան. երրորդ՝ զի պատմագիրք վարուց նոցա ոչ զամենայն ինչ առնեն մանրապատում, որք և ոչ զհաղորդել նոցա՝ի մահու յիշատակեն: Եւ գարձեալ՝ զի՝ի լռութենէ պատմադրաց ոչ է օրէն զնեա բերել ինչ ընդդէմ արդեանց իրացն, զոր՝ի վեր անդր ցուցաք.

մանաւանդ զի և ՚ի վարս ուրեք սրբոց, որպէս սրբոյն Աղեքսեայ, պատմի խոստովանութեամբ պատրաստեալ ՚ի մահ։

— Բ. Յանկեղանոցս և ՚ի բանակս զօրաց չիշխատակին և ոչ երիցունք կարգեալք ՚ի հոգևոր խնամս և ՚ի հաղորդութիւն հիւանդաց և զօրականին, սակայն գոյին. և որ յոյժ ցուցանէ, ցուցանէ ապաքէն և ոչ ինչ։

— Գ. Ինչք զսուրբ գիրս, զկանոնս եկեղեցականս և զսահմանադրութիւնս՝ փոխանակ կրթութեան և հրահանգաց ունէին. և որպէս տեսական աստուածաբանութիւն, նոյնպէս և քարոյականն տակաւ ՚ի յետնոց ածաւ ՚ի կարգ հրահանգաց։

ԳՕԴՈՒԱԾ Ե

Զի բարի է և օգտակար ներելնաց ևս մեղաց խոստովանութիւն, և ՚ի բարեպաշտից յառնելոյն ժամանակս ՚ի կիր արկեալ։

Վարդապետութիւնս այս ընդդէմ յանաչենեանց սահմանեցաւ ՚ի ժողովն տրիդենտեան, ըստ սրբոց Հարցն աւանդութեան։

Զկանոն սուրբն Կիպրիանոս ՚ի գիրսն՝ որ յաղագս գիմեցելոց, ասացն՝ զի "Հաւատացեալք և յաւուրս իւր զղեղն փրկական ևս և ՚ի դարման գոյն և թեթև վէրաց խնդրէին ՚ի քահանայից անտի խոստովանութեամբ։ Եւ սուրբն Յարսեղ ՚ի կանոնս իւր ասացն, զի սովորութիւն էր այս ՚ի կաւատատանս առ իւրովք ժամանակօք։ Եւ սուրբն Թէոդոսիոս ՚ի սաղմոսն զԹ. սաէ. "Ասիցեն իսկ խոստովանեալ, ունիցին ինչ տակաւին խոստովանելոյ"։ Եւ Ասալբէոն ՚ի վարս սրբոց բենեդիկտեանց, բազում վկայութեամբք ցուցանէ զառաջնոցն սովորութիւն, թէ զմիանձանց և թէ զաշխարհիկ հաւատացելոց, խոստովանելոյ յաշխարհս և զնելոյ ևեթ մեղս։ Օնոյն և Ասորինոս յաղագս աշխատութեան, և Ասարենիոս զնախանձի արարողութեանց, և այլք բազում հաւաստեօք հաստատեն։

ԳՕԴՈՒԱԾ Զ

Քաղաքս հաստոցման կամ ապաշխարանաց :

Ապաշխարանք ասի հաստուցումն Թշնամանացն Աստուծոյ՝ որ ՚ի մեղաց. և հարկ է առնել զհաստուցումն զայն աստուածային արդարութեան : Օ ի Թէպէտ և արձակմամբ քահանային յաւիտենական պատուհասս մեղացն Թողեալ, այլ կան և ինձ գրեթէ միշտ՝ պատիժք ժամանակաւորք՝ զոր հարկ է՝ կամ անդ ՚ի քաւարանի կրել, և կամ աստ ՚ի կեանս քաւել գործովք բարեաց և ապաշխարութեամբք : Օ այս ուղղափառ վարդապետութիւն ուրացեալ նորաղանդից, դատապարտեցան ՚ի ժողովն տրիդենտեան : Կանգի Կաւթի Թողան մեղք, ԿաԹանայ զայն ՚ի դիմաց Աստուծոյ չայտ առնելով. այլ զպատուհաս մեղացն խստիւ եհաս նման հաստուցանել : Ասվասիս և Ընդարձակ զԹերահաւատութեանն իւրեանց յանապատին ընկալեալ զԹողութիւն, այլ չկարացին մոռանել յերկիւղն աւետեաց ՚ի պատիժ մեղացն : Նա ազգ մարդկան առհասարակ Թէպէտ և Կրիստոսիս զհաշտութիւն ընկալեալ, այլ զպատիժս մեղացն կրէ զկարիս աղցաւոր կենցաղոյս և զմահ՝ որ Թոշակ մեղացն է ըստ առաքելոյն :

Կայց նոյն ուղղափառ հաւատք ուսուցանեն մեզ, զի զօրութեամբ վաստակոյն Կրիստոսի մարթ է մեզ առնել հաստուցումն արդարութեանն Աստուծոյ վասն մեզ զաց մերոց, և քաւել զպատիժս նոցին ժամանակաւորս ապաշխարանօք՝ զոր քահանայն խոստովանահայր սահմանէ մեզ, և զոր մեք մեզէն առնեմք, և համբերութեամբ վշտաց՝ զորս առաքէ մեզ տէր : Այսպէս նորաղանդքն կարծեն Թէ ապաշխարանքս մեր նուաստութիւն ածիցեն զարդեամբքն Կրիստոսի, զի առանց այսոցիկ մերքն զօրէին և ոչ ինչ. այլ և այնոքիկ կարևոր են՝ ըստ առաքելոյն բանի. "Կնուամ զպակասութիւնն նեղութեանցն Կրիստոսի ՚ի մարմնի իմում,,. (Կող. ա. 24.) Իբր ոչ եԹէ անքաւ արժանաւորութիւն վաստակոյն Կրիստոսի, որ առաւելեալն հատուցին զպարտս մարդ-

կութեանս, և որ բաւական էին ի փրկել բիւր աշխարհս, չիցեն իւրովի բաւականք, այլ զի խորհրդական միութեանն Քրիստոսի իբրև գլուխ ընդ անդամոցս իւրոց՝ պահանջէ և զգործակցութիւն մեր և զբարեբարակցութիւն ընդ նմա: Ոչ՝ թէ չարչարակից լինելոյ Քրիստոսի, զտանիմք որպէս անդամք անհաղորդք հոգւոյն ազդեցութեան. և զօրութիւն վաստակոյն Քրիստոսի ոչ գեղու ի մեզ: Ո՛չ որ օրինակ եթէ ոչ ոք մկրտիցի, ոչ սրբի ի սկզբնական մեղացս, վասն զի ի ձեռն մկրտութեան գեղու ի նա ամբաւ զօրութիւն վաստակոյն Քրիստոսի, զնոյն է իմանալ և զապաշխարութենէ. զի սակաւ հաղորդիմք վաստակոյն Քրիստոսի՝ ոչք քաւեն զպատիժս մեզաց, վասն որոյ և ըստ առաւելութեան և ըստ նուաստութեան ապաշխարանաց՝ առաւել կամ նուազ ազդէ ի մեզ զօրութիւն վաստակոց Նորա: Այս վարդապետութիւն է սրբոց Հարց առհասարակ արևելեայց և արևմտեայց. և նախնի կանոնք և ապաշխարանաց առհաւատչեայք են այսմ վարդապետութեան: Եւ ի սոյն ակնարկէ յայտնութածն զհետ արձակման. "Հեղումն արեան որդւոյն Աստուծոյ,, և այլն:

Վասն որոյ պարտ է քահանային դնել ապաշխարանս խոստովանելոյ՝ յառաջ քան զարձակումն, և նոցա յանձն առնուլ զայն: Յառաջին գործս քրիստոնէութեան մինչ չև կատարեալ ուրուք զապաշխարանս սահմանեալս ի քահանային՝ ոչ ընդունէր զարձակումն. այլ ապա յանձնառութիւն եւեթ ապաշխարողին բաւական համարեցաւ առ ի տալ զարձակումն, և զհակառակ վարդապետութիւնն մերժեաց եկեղեցի:

ԱՌԱՔԱԿՈՒԹԻՒՆՔ

Աստ. ա. Խոստանայ Աստուած բազում ուրեք թողուլ զղջացելոց զմեզս ի սպառ. (Ագ. խզ. 25.) "Ո մեզս քո այլ ոչ ևս յիշեցից,,. (Աղէկ. լզ. 12.) "Անօրէնութիւն անօրինին ոչ չարչարեսցէ զնա յաւուր յորում դառնայցէ յամենայն անօրէնութենէ իւրմէ... ամենայն մեղք իւր, զոր մեղաւ, մի յիշեսցին,,:

Արիստոս հատոյց առաւտապէս վասն մեղաց մերոց, ոչ ըստ յանցուածոյ մեր եւ ըստ յաւիտենական պատիժոյ, այլ եւ ըստ ժամանակաւորին. վասն որոյ չէք ուրեք ի նոր կտակարանս ապաշխարութիւն մեղաց եղեալ, ոչ մաքսաւորին, ոչ կնոջն մեղուցելոյ, ոչ ծառային պարտապանի, ոչ Պետրոսի, եւ ոչ այլոց։

Պաւղ. Եթէ այդ այդպէս էր, ոչ ածէր Տէառն պատուհաս, ոչ ի վերայ Դաւթի, ոչ Դաւիթ, եւ ոչ այլոց մեղաւորաց. քանզի վաստակք Արիստոսի ոչ այլազգ օգնեն մեզ, բայց հաղորդս նորին լինելով մեր՝ որպէս յիւրաքանչիւրոցն ցուցաք. այլ Արիստոս՝ որպէս ինքն իշխան տէր՝ կարէր թողուլ ամենից ի սպառ զհատուցումն՝ զոր պաշտօնեայքն նորա չկարեն. քանզի արտաքո էր, եւ տեսանէր զկատարեալ զիրէնց նոցա եւ զսէրն, նա ինքն իսկ Պետրոս ընդ բոլոր կեանս իւր ապաշխաբեալ՝ խաչիւ զկեանս իւր զրաւեաց. եւ զայլոցն եւս թէպէտ եւ լեցն սուրբ գիրքն, այլ չգիտեմք թէ ազատ լեալ իցեն յատպաշխարանաց. գիտեմք եւս ստուգիւ, զի Պօղոս ապաշխարանս ծանուներ եղ կորնթացւոց մծղնէին։

Հարկ. Բ. Նա պրպէս իցէ հնար յաւիտենական պատժոյ թողութիւն, առանց թողութեան ժամանակաւորին՝ որ թեթեւագոյն չէ քան զայն՝ առանց հատուցման։

Պաւղ. Յաւիտենական պատիժ մեղաց զկնաւորապէս գրկուածն է Յիսուծոյ, յորմէ քաժանեալ միանգամ մեղաւորն կամօք իւրովք՝ ոչ եւս կարէ ետ մահուն կարէ ստանալ զայն, որպէս որ մեռանին՝ ոչ եւս կարէ կեալ. այլ ցորչափ ի կեանս է մեղաւորն, կարէ Արիստոսիս հաշտել ընդ Յիսուծոյ, եւ նովին իսկ հաշտութեամբն բառնի պատիժն յաւիտենական։ Իսկ ժամանակաւորն պատիժ՝ հատուցումն է արդարութեանն Յիսուծոյ, զոր պարտի մեղաւորն հատուցանել աստ կամ անդ. որպէս որ գողանայն լինչ, պարտի հատուցանել զգողանն։

Հարկ. Գ. Նա ոտ լինչ պահանջի հատուցումն յապաշխարողաց, ուր ի մկրտելոց չպահանջի լինչ։

Պաւղ. Օ՛, որպէս տիրեներեան ժողովն պատասխանէ, մկրտութեամբն եղանիմք նոր արարած՝ վերածնեալք Արիստոսիս յաւազանէն. վասն որոյ եւ լիուլի ամենայն մեղաց մերոց լինի թողութիւն։ Իսկ ոտ ըն-

ԳՕԴՈՒԱԾ Է

Յաղագս արձակման և գօրութեան խորհրդոյ ապաշխարութեան:

Արձակումն է վՀիւ Թողութեան մեղաց ապաշխարողին, և իսկապէս արձակէ այնուհիկ քահանայն զմեղս նորա, և ոչ որպէս ոմանք մոլորեցան կարծել՝ Թէ արձակումն յայտ առնէ զԹողութիւն մեղաց: ՎՀիւ է այն աստուածային իշխանութեան, զոր ետ ՎՀրիստոս քահանային. և որպիսի և իցէ ձև արձակմանն, Թէպէտ ցուցական և Թէ մաղԹողական, յարձակել քահանային՝ Թողուն մեզ ապաշխարողին: Օ՛ի ոչ ասաց ՎՀրիստոս. զոր յայտ առնիցէք կամ հաստատիցէք արձակեալ յերկրի, այլ զոր արձակիցէք. վասն որոյ և քահանայն ասէ "Եւ ես աստուածային հրամանաւն արձակեմ զքեզ":

Օ՛ զօրութեամբ այսր խորհրդոյ ամենայն ուր և իցէ մեղաց լինի Թողութիւն, և չիք մեղք՝ զոր չկարէ ստիպել, ի խոստովանել մեղուցելոյն Ճշմարիտ զղջմամբ: Տէրունեանն հրամանն Օ՛ր դադիպ ոչ զոք ի բաց առնու, ոչ խտիր առնէ մեղապարտից, հասարակաց խոստանայ Թողութիւն ամենեցուն որ դառնան առ նա. "Ոչ կամիմ զմահ մեղաւորին, այլ զդառնալ նորա և զկեալ,: Եթէ գարձցի և ես անպարիշտն առ աէր, և յուսացի յաղորմութիւն նորին՝ որ վասն փըր-

կուԹեան ամենեցուն յանձն էառ զմահ, ամենայն մեղք նորա՝ որչափ և ծանուննք իցեն և բազումք՝ Թողլին նմա. "Եւ այս է քառուԹիւն մեզաց մերոց, և ոչ եւս է մերոյն միայն՝ այլ և ամենայն աշխարհի ,,. (ա. Յհ. բ. 2):

Այսպարև ուրեք ուրեք՝ ի սուրբ գիրս են ինչ բանք՝ որ Թուին ցուցանել զմեզս ինչ անԹողլի, որպէս այն որ զՅովին սուրբ հայհոյիցէ: Այլ այս եւանակ բանից զայժ զժուարուԹիւնն յայտ առնէ. որպէս տէրն մեր ասաց զմեծատանց. "Դիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատան յարքայուԹիւն Աստուծոյ մտանել ,,. որ Թուի անհնարին ցուցանել զիրըկուԹիւննոցա, այլ զդժուարուԹիւն եւեԹ փրկուԹեան նոցա յայտ առնէ. զի են և մեծատունք բազումք և Թագաւորք փրկեալք և սուրբք: Այս այսպէս իմանան՝ Թէ որք առհասարակ, և եկեղեցի վասն ամենեցուն փրկուԹեան աղօԹէ, և վասն ամենեցուն որպիսի և իցէ մեղաց սահմանէ ապաշխարանս, յայտ է Թէ կարելի համարեալ զԹողուԹիւն նոցա:

Այլ ասա զօրուԹիւն խորհրդոյ ապաշխարուԹեան է կենդանագործել զվաստակս, որ ի ջնորհս Աստուծոյ նախ քան զմեղանչելն ատացեալ՝ և մեղօքն կորուսեալ լինեն: Զանգի առաքեալն զգաղատացիս Թերացեալս ի հաւատոց խրախուսէ ի յոյս անցելոց վշտակրուԹեանցն, ի հաստատել նոցա անդրէն ի հաւատս: Այսպէս ասէ և Երանելոյն զայն բան առաքելոյն. (գաղ. դ. 4.) "Զինչ չափ անցք անցին ընդ ձեզ զուր, եԹէ իցէ զուր ,,:

Այլ Թէպէտ և ամենայն ժր և է մեղաց լինել քառուԹիւն, և յաւիտենական պատժոց ԹողուԹիւն, սակայն որպէս վերագոյն ասացաք՝ ինայ մեղուցելոյն կրել զժամանակաւոր պատուհաս մեղացն աստ կամ անդ, և եԹէ ոչ աստ գործովք ապաշխարուԹեան հատուցանէ զայն, հատուսցէ անդ մինչև ցյետին քննուն:

ԱՌԱՔԻՆՔ

Ուրբ. — ա. Աստուծոյ է Թողուլ զմեզս, իսկ քահանային յայտ առնել եւեԹ զայնոսիկ Թողեալ. զի Թողուլզմեզս նշանակէ ևս յայտ առնել զԹողուԹիւնն,

որպէս Պրիստոս ցկինն մեղաւոր առաց (Ղ Դ. Ճ. 48.) "Ազատեալ լեցին քեզ մեղք քո,, . որոյ Թողեալ իսկ էին մեղք յառաջագոյն: Նա այս իսկ է պաշտօն դատաւորի, յայտ առնել զյանցաւորութիւն կամ զանմեղութիւն ուրուք ըստ օրինաց: — Բ. Ասանաւանդ զի Պրիստոս զքահանայս ոչ մեղաց կացոյց դատաւորս, այլ մեղաւորաց՝ յասելն. "Նմին ումեք Թողուցուք զմեղս ,,:

Պե. — Ա. Պրիստոսի բանն յառաջ և յետոյ զնոյն ունէր զօրութիւն և նշանակութիւն. զի յասելն ցԱնձն՝ "Ազատեալ լեցին սմա մեղք իւր բազում ,,, ելիցէ իսկապէս զմեղս կնոջն. և յասել ցկինն՝ "Ազատեալ լեցին քեզ մեղք քո ,,, զնոյն հաստատեաց:

— Բ. Պրիստոս զքահանայս ոչ դատաւորս եւԹ կացոյց ապաշխարողաց, այլ և իշխանութիւն ետ նոցա՝ իբրև փոխանորդաց իւրոց՝ արձակել զնոսա 'ի մեղաց, որպէս ուսուցանէ Ժողովն տրիդենտեան: Ա՝ան որոյ Պրիստոս դատաւորս կացոյց զնոսա մեղաւորաց, զի քննեսցեն զյօժարութիւնս կամաց նոցա, և ըստ այնմ կարասցեն կապել կամ արձակել. և հաստատի այս տեղեկան բանիւն (Ա՝պր. ԺԸ. 18.) "Զոր կապիցէք երկրի, եղիցի կապեալ երկինս. և զոր արձակիցէք երկրի, եղիցի արձակեալ երկինս ,,:

ՅՕԴՈՒԱԾ Ը

Յաղագս պաշտօնի խորհրդոյ ապաշխարութեան:

Պարտ է խոստովանահօր ունել կրկին իշխանութիւն. առաջին այն է՝ զոր ունի 'ի ձեռնադրութենէ, և այս բաւական է 'ի կարևոր եւԹ ժամանակի. այլ քանզի իշխանութիւն արածելոյ զոչխարս՝ եպիսկոպոսաց է, պարտ է նոցա մանաւորել զիշխանութիւն և զիրաւունս իւրեանց քահանայի՝ առ 'ի կարելոյ նմա արձակել զմեղաւորս, որ է ծայր հովուական իշխանութեան: Ա՝ստանց երկրորդիս այսորիկ իշխանութեան ոչ միայն չէ օրինաւոր արձակումն, այլ և ոչ վաւերական: Պանզի արձակել և կապել՝ դատաւորական է իշխանութիւն.

արդ ոչ ոք կարէ գաւռել՝ զորս չէին ընդ իշխանութեամբ
իւրով, ապա և ոչ քահանայի օրէն է կապել և արձա-
կել զորս են ընդ իշխանութեամբ եպիսկոպոսի՝ առանց
անելոյ ի նմանէ հրամանի։

Այսու զհետ գայ և այն, զի քահանայապետն Հռով-
մայ և պատրիարքութիւնք և եպիսկոպոսունք կարեն պա-
հել անձանց զիրաւունս արձակման մեղաց ինչ ծանուն,
զորս չէին մարթ քահանայից արձակել՝ բայց միայն ի
կարևոր ժամանակի, զի մի գուցէ ոք առանց արձակման
մեռանիցի։

Այս և յընդհանուր սովորութենէ առաջնոց գա-
րուց քրիստոնէութեան քաջայայտ է, զի որպէս | ու-
սոս (ի Հառն յաղագս մեղաց և ապաշխարանաց. գլ. ը.) և
Մարտենիոս (գիրք ա. մասն ը. գլ. չ. յօդ. չ.) ցու-
ցանեն, ի սկզբանէ՝ եպիսկոպոսաց միայն պահեալ էր
կապել և արձակել. ապա ի բազմանալ հաւատացելոց՝
տուաւ ի նոցանէ իշխանութիւն և միանձանց. և ոչ ոք
յայլոց քահանայից ունէր զիշխանութիւնս զայս։

Վասն այսր ամենայնի և ժողովն տրիդենտեան սահ-
մանեաց զերկուսին և զայսոսիկ վարդապետութիւնս
զորոց ասացաք։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆ Ը

Ընդդէմ Ա. Քահանայից ամենեցուն կրկին իշխա-
նութիւնք ձեռնադրութեամբն ընդունին. մի՝ յիրական
մարմինն Քրիստոսի, միւս և՝ ի խորհրդականն, այս-
ինքն ի հաւատացեալս՝ որ նովին իսկ հպատակք նոցա
եղանին, առանց պիտոյից խոստովանահայրական իրա-
ւանց։ Այլ թէ ոչ, աստուածայինն իշխանութիւն ոչ
ինչ զօրէր առանց մարդկայնոյ իշխանութեան, և չէր
պարտ քահանային յարձակիլն առնել՝ իշխանութեամբն
աստուածային հրամանաւն, այլ եպիսկոպոսին հրամանաւ։ Այս-
ոչ զօրէ առնել՝ թէ ժողովուրդն եպիսկոպոսին է հպա-
տակ, որպէս ոչխար իւրում հովուին. զի ի գալ խո-
նարհել հաւատացելոյն յոտս քահանային, լինի նմա
հպատակ։

Պե. Քահանայն ընդունի ապաքէն ձեռնադրու-

թեամբն իշխանութիւն արձակելոյ. այլ ոյպէս՝ի վեր անդր ասացաք, չկարէ զիշխանութիւնն զայն՝ի կիր արկանել՝ բայց միայն՝ի վերայ հպատակաց. վասն որոյ կաթուղիկէ եպիսկոպոսին հրամանին՝ որոյ ոչխարք են հաւատացեալք։ Արդարև այս իշխանութիւն՝ է ոյպէս պայման՝ի կիր արկանելոյ զառաջինն ընկալեալ՝ի ձեռնադրութենէ. և չէ օրէն հաւատացելոց իւրաքանչիւր ընտրել իւրեանց ըստ կամի դատաւորս, ոյպէս և ոչ՝ի քաղաքական ատենի օրէն է այս. այլ անկ է նոցա ընտրել զոք՝ի քահանայից, որոց հնգէ առեալ իշխանութիւն՝ի Թեմական եպիսկոպոսէ։

Ընդդէմ. Քրիստոս առանց սահմանելոյ եւ իշխանութիւն քահանայից, արձակել անխտիր յաւիտեան մեղաց զապաշխարօղս. վասն որոյ չէ օրէն եպիսկոպոսաց վերապահել անձանց զարձակումն իրիք իրիք՝ի մեղաց։

Պէս. Այլ է, ոյպէս ասացաքս, ունել իշխանութիւն, և այլ՝ի կիր արկանել զայն. և ոյպէս եպիսկոպոսին է տալ քահանայի զհպատակս իւր առ՝ի գաւել, նոյնպէս օրէն է նմա սահմանել և զգաստս, և զկարևոր ինչ յայնցանէ պահել իւրումն գերագոյն իշխանութեան, ոյպէս և՝ի քաղաքական օրէնս է սովորութիւն։

ՅՕԴՈՒՄԱԾ Թ

Վաղագս ապաշխարողաց։

Զխորհուրդ ապաշխարութեան ոչ է մարթ ընդունել այնոցիկ, որ չիցեն միտեալ. զի միտութիւն դուռն է ամենայն խորհրդոց. և եկեղեցի՝ի վերայ իւրոցն ևեթ վարէ իշխանութիւն, ոյք միտութեամբ՝ի նեղբս մտանեն յեկեղեցի, և ոչ զարտաքինս. "Օ՛ի կայ իմ և զարտաքինան դատել ,,. (ա. Կոր. Ե. 12)։ Նակ միտելոց ամենեցուն՝ որ՝ի չափ հասեալ իցեն, եթէ չիցեն և ա ծանուցս մեղուցեալ, մարթ է խոստովանել զմեղս նեբելիս՝ առ ընդունելոյ զշնորհս խորհրդոյն։ Օ՛ի թէպէտ և չիցեն պարտք խոստովանելոյ զնեբելիս, այլ օգ-

տակար է խոստովանել զայնս՝ որպէս ՚ի վեր անդր ա-
սացաք։

Իսկ որով՚ի մահուչափ մեղս կայցեն, ոչ միայն ՚ի պա-
տուիրանէ հարկ է նոցա խոստովանել, այլ և զի չիք նո-
ցա այլ հնարք փրկութեան։ Ստորդոյ և եթէ ապաշ-
խարութեան մարթ է դարձուցանել զնոսա ՚ի ընտրհս
Աստուծոյ։ Այլ որ ինչ զմկրտութենէն ասացաք, ըզ-
նոյն և զայսմանէ է իմանալ. զի ուր ուրեք չգուցէ ոք
քահանայ, և կամ չկարէցէ ոք խոստովանել որժմ և
իցէ խափանաճուռ, ընուն զտեղի խորհրդոյն իզձք և եթէ
խոստովանելոյ հանդերձ կատարեալ զղջմամբ։ Վարթ
իսկ է, զի ոք կատարեալ զղջմամբ չև իսկ խոստովա-
նեալ և արձակեալ՝ դարձցի ՚ի ընտրհս Աստուծոյ. այլ
ոչ ազատի այսուիկ ՚ի պարտուց խոստովանութեան։

Իսկ որ ինչ խնդրինն առ անթերի խոստովանութիւն,
բարոյականին է ուսուցանել։

ԳՕԴՈՒԱԾ Ժ

Գաղագս ևերոդոսեան։

Ասացաք ՚ի վեր անդր, զի մեղուցելոյ՝ որք ՚ի ձեռն
խորհրդոյ ապաշխարութեան ընդունին զթողութիւն
մեղաց և ազատութիւն ՚ի յաւիտենական պատասխա-
նոյ, հասանել կրեալ զժամանակաւոր պատուհաս
մեղացն ՚ի հատուցումն աստուածային արդարութեան։
Գաւելաք զի և ապաշխարանք ՚ի խոստովանահօրէ այսր
աղագաւ սահմանին ապաշխարողաց։ Այլ քանզի այ-
սոքիկ կարի դուշնաքեայք են առ ծանրութեամբ մե-
ղաց, ամենողորմն Աստուած հոգացաւ ընտրել եկեղե-
ցւոյ իշխանութիւն ներելոյ զպատիժն զայնոսիկ ըստ
մասին կամ բոլորովին։ Ի սան որոյ սահման ներողու-
թեան է՝ Ներումն ժամանակաւոր պատժոյ, որ յետ
թողութեան մեղաց և յաւիտենական պատուհասի՝
մնայ քաւելի։

Եւ քանզի նորադանդք առհասարակ ուրանան զայս
վարդապետութիւն, պարտ է մեզ աստստին ՚ի սկըզ-
բանէ սահմանել որ ինչ ՚ի վարդապետութեանս յայս-

միկ հաւատոյ են մասունք, և զայն՝ ոչ ինչ ընդունելի ևեթ է։

Ի հաւատոյ է՝ զի գոյ յեկեղեցւոջ տուեալ Հոգւոյն Ծոյ իշխանութիւն ընդունելոյ ներողութիւնս, և զի այսոքիկ փրկաւէտք են։ Ասկ զի օգնեն և ննջեցեալոց, և զի գոն յեկեղեցւոջ գանձք վաստակոյն Քրիստոսի և սրբոցոյ՝ զորս գլխոյն եկեղեցւոյ, և եպիսկոպոսաց՝ ըստ սահմանեալ կանոնաց՝ իշխանութիւն է բաշխելոյ, և զի այսոքիկ զօրեն ի նեղքին և սաեինի առաջի Հոգւոյն Ծոյ, վարդապետութիւնք ևեթ են ընդունելիք։

ՅՕԴՈՒԱԾ ԺԱ.

Զի գոյ յեկեղեցւոջ տուեալ Հոգւոյն Ծոյ իշխանութիւն ներելոյ զպատիժս մեղաց, և զի փրկաւէտ իսկ է այս հաւատոցելոց։

Վարդապետութիւնս այս ոչ նոր ինչ է, այլ անդրբտին յերկուտասանեւորդ գարէ Պետրոս Դ. ետ յեռուլ զայս ի գաւանութիւն հաւատոյ. և զհետ գոյ տէրունական խոստմանն առ Պետրոս՝ Թէ տացի քեզ զիշխանս արքայութեան երկնից, և զոր միանգամ կապեսցես երկրի՝ եղիցի կապեալ երկինս. և զոր արձակեսցես երկրի՝ եղիցի արձակեալ երկինս ,,։ Նա դարձեալ առ ամենայն առաքեալս. ,,Ամէն ասեմ ձեզ. զի զոր կապիցէք երկրի՝ եղիցի կապեալ երկինս, և զոր արձակիցէք երկրի՝ եղիցի արձակեալ երկինս ,,։ (Մատ. ԺԸ. 19։ ԺԸ. 18)։ Ոչ ի ըստ քննական իւրուն ընդանակութեան ցուցանէ սա ոչ միայն զթողութիւն մեղաց և զյաւիտենական դատապարտութեան, այլ և զներումն ժամանակաւոր պատժոյ՝ որ նուազ քան զառաջինան է. և չինչ ինչ պատճառ ամփոփելոյ զնշանակութիւն տէրունական խոստմանն, այլ մանաւանդ ընդհակառակն։

Ոչ ի եկեղեցի՝ ի սկզբանէ հետէ այսպէս իմացեալ և այսպէս՝ ի կիր էարկ զայս իշխանութիւն։ Զանգի Պօղոս զմծղնեաց կորնթացին հրամայեաց ,, զօրութեամբն Քրիստոսի մատնել սատանայի՝ ի սատակումն մարմնոյ, զի ոգին ապրեսցի յօրն տեառն մերոյ

Յիսուսի Քրիստոսի ,, . (ա . կոր . Ե . 3 .) և յետ միոյ ամի արձակեաց զնա ի պատուհասէն՝ գրելով անդրէն առ կորնթացիս . (բ . կոր . ը . 6 .)՝ Ը ատ է այնպիսւոյն պատուհասն այն՝ որ ի բազմաց անտի է . այսուհետև նմին հակառակ՝ մանաւանդ շնորհել ձեզ նմա . . . զի եթէ ումեք շնորհիցէք , և ես . քանզի և ես եթէ շնորհիցեմ , զոր ինչ շնորհիցեմին , վասն ձեր ի դէմս Քրիստոսի ,, : Այս զայս բան սուրբ Յակեբեբանն , Մեծապատուոյ , Մեծիմաստ և այլք ի սոյն միտս նեբոզուեան իմանան :

Այս զի սովին մտօք եկեղեցի Քրիստոսի իմացաւ միշտ զայս՝ յայտ է ի կարգէ արձակման ապաշխարողաց . զի յառաջին դարուց հետէ ըստ վկայելոյ արժանահատատ մատենագրաց , որ և ի Դ . ժողովէն Կարթագինեայ յիշատակեալ , ապաշխարողք՝ որ ի սկզբան առաքելոց խոստովանէին՝ ի մեծի հինգշաբաթի առնուն արձակէին յամենայն ապաշխարանաց , ներելով նոցա եպիսկոպոսաց զինացուածս պատժոց մեղացն :

Այս դարձեալ , որպէս վկայեն Տերտուղիանոս և սուրբն Կիպրիանոս , եպիսկոպոսունք ըստ աղաչանաց մարտիրոսացն ներէին ապաշխարողաց զպատիժս մեղացն : Վասն որոյ և Ա . ժողովն Նիկիոյ ի ժբ կանոնին ասէ . ,, Զ րէն լինի եպիսկոպոսաց ներողագոյնս վարել ընդ ապաշխարողս ,, :

Այս եթէ այս այսպէս է , և եկեղեցի սուրբ ըստ այսմ ի սկզբանէ հետէ վարեալ , յայտ է թէ օգտակար ի փրկութիւն հաւատացելոց համարեր զայն : Այս արդարև ըստ օրինի և ըստ պարտուպատշաճ պայմանաց վարեալ սովաւ , որպէս և արդիւնք իրացն վկայեն , եւ անդն ի հաւատացեալս արծարծանի , և կենդանանան ի նոսա հաւատք յոյս և սէր :

ԱՌԱՔՈՒԹԻՒՆՔ

Ա՛ռաք . Ա . Յանն Քրիստոսի , Օ՛ր արդիւնէր , և այլն , հայի ի խորհուրդ ապաշխարութեան՝ որով ի ընծայս Աստուծոյ դառնայ մեղաւորն , և ոչ է մարթ ձգել զայն յիշխանութիւն առաւտաձեռնելոց ներողու-

թիւնս։ Այլ ոչ կորնթացւոյ մծղնէին օրինակ զօրէ ինչ ՚ի հաստատուԹիւն վարդապետուԹեանդ. զի զնա ա֊ռաքելոյն բանադրեալ էր նախ, և ապա ընկալաւ զնա ՚ի հաղորդուԹիւն։

Պե. ԻշխանուԹիւն փականաց, ոչ ՚ի թողուԹիւն ևԹէ մեղաց՝ այլ և ՚ի թողուԹիւն պատժոց մեղացն հայի. որով եկեղեցի վարեցաւ միշտ, ոչ միայն ՚ի խոր֊հուրդ ապաշխարուԹեան կապելով և արձակելով, այլ և արտաքոյ այնր ատենի բանադրելով և լուծանելով զբանադրանս, և ներելով զառաժամանակեայ ապաշխա֊րանս։ Վասնզի առաքեալն զմծղնեայ կորնթացին, ոչ միայն բանադրեաց՝ այլ և պատուհասեաց զնա, մատ֊նելով զնա սատանայի ՚ի սպանո֊ած մարմնոյն (ա. կոր. Ե. 5.) որ ոչ ԹեԹև ինչ է պատուհաս։ Վասն որոյ և յընդունել զնա անդրէն ՚ի հաղորդուԹիւն՝ ընդհեաց նմա զպատուհասն, և զայն ՚ի բէմս Վրիստոսի. (բ. կոր. բ. 10)։

Պա֊ռաւ. Բ. — Ս. Վ նաւակատր է վարդապետուԹիւն ներողուԹեանց, զի անփոյթ առնէ զհաւատացեալս յա֊պաշխարուԹիւն և ՚ի ՁգնուԹիւնս։ — Բ. Այլ նուազէ ՚ի նոսա զերկիւղ մեղանչելոյ՝ դիւրին զգեղն պատրաս֊տեալ. զի համբուրիւ ևԹէ խաչի, այցելուԹեամբ ի֊ւիք, և սակաւ ինչ աղօԹիւք մարթ լոկ ԹողուԹեան պատժոց մեղաց հանդիպել. — Գ. Այլ ոչ ընդ արդա֊րուԹեան և ընդ ողորմուԹեանն Վստուծոյ մարթ է միաբանել զվարդապետուԹիւնդ զայդ. քանզի բա֊զումք ըստ հանգամանաց տեղւոյ և ժամանակի չկարեն ընդուել զպայմանս շնորհի ներողուԹեանց, որպէս ոմք հե֊ռի ՚ի Ներումայ և յԱտալիոյ գտանիցին։

Պե. — Ս. ՆերողուԹիւնք ՚ի վերայ յաւելուն ա֊պաշխարանաց խոստովանուԹեան, և պահանջեն զՀո֊գի զղջման և բաղձանաց հատուցանելոյ ըստ կարի ար֊զարուԹեանն Վստուծոյ զարհամարհանս՝ որ ՚ի մեղաց անտի։ Վյսանց այսոցիկ պատրաստուԹեանց սրտի՝ ոչ է ընդունել ներողուԹիւն, և մանաւանդ զվնասակատարն. և այս ևԹէ անաստուգուԹիւն ընդունելուԹեան, բաւա֊կան է առ ՚ի չգտազարելոյ յայլոց ապաշխարուԹեանց և ՚ի ՁգնուԹեանց. և արդիւնք ևս իրացն յայտ առնեն, զի այնոքիկ առաւելապէս պարապեն ՁգնուԹեանց և ա֊

պաշխարութեան՝ որք խնդրեն զնեղոյսութիւնս, քան որք անփոյթն առնեն զնոքօք։

— ԺԲ. Եւ ոչ նուազէ վարդապետութիւնս այս զերկիւղ մեղանչելոյ. քանզի ոչ օք կարէ ընդունել ներողութիւն, եթէ չիցէ նորա Ճշմարիտ զղջումն ընդ մեղսն գործեցեալս, և հաստատուն առաջադրութիւն ոչ և ս գործելոյ։ Այս ուրեմն դիւրութիւն դեղոյն օգնէ մանուանդ ի յորդորել զհաւատացեալս ի Ճշմարիտ զիղջ և ի խորշումն ի մեղաց։

— ԺԳ. Վարդապետութիւնս այս հակառակէր ասացքէն արդարութեան և ողորմութեանն Աստուծոյ, եթէ հեռաւորքն այնոքիկ հաւատացեալք չկարէին այսուհետև իւիք ընդել զԹերին։ Այլ արդ նախ յայն սակս չնորհէ եկեղեցի ազգի ազգի Ժնարս և եղանակ ընդունելոյ զներողութիւնս, զի ամենայն որ ամենայն ուրեք կարասցէ հաղորդս լինել չնորհացն։ Եւ զարձեալ՝ զի որոց պակասէ չնորհն այն, առատագոյնս Աստուած պարգևէ նոցա չնորհս ներքինս ըստ ըղձից նոցա. զյօժարութիւն ևեթ սրտի և զհաւատարմութիւն խնդրէ ի մէնջ Աստուած՝ որպէս կարևոր պայման և առհաւատչեայ ընդունելութեան ներողութեանց, զայլն ամենայն զարտաքին օժանդակութիւնս գիտէ ինքնին ընդել։

ԳՕԴՈՒԱԾ ԺԲ

Զի ներողութիւնք գործեն և ի ներքին առնելի առաջի Աստուծոյ։

Ի վերաստացելոցս զՀետ գայ, զի եթէ իշխանութիւնս այս եկեղեցւոյ ի տէրունականն յայն խոստումն է հաստատեալ՝ որպէս իմանան զայն Ժարք, ապա աստուածային է իշխանութիւնն այն, և գործառութ ոչ միայն յարտաքին առեն եկեղեցւոյ՝ այլ և ի ներքնումն առաջի Աստուծոյ։ Եւ նոյն իսկ առաքելոյ չնորհեցն ի դէմս Պետրոսի, յայտ առնէ զիղջութիւն պատժոց մեզաց յառեալն Աստուծոյ. զի եթէ եկեղեցական պատժոց միայն էր իղջութիւն, բաւական էր առ այն իշխանութիւնս, և չէր հարկ զիմանալոյ Պետրոսի ի մէջ բերել։

Օ՞ստն յայտ առնեն և աղօթք արձակմանն ապաշխա-
րողաց յաւագ հինգշաբաթի աւուր, խնդրելով յԱ-
ստուծոյ զթողութիւն պատժոց ապաշխարողաց, և "Ո-
թևացուցանել զբեռինս մեղաց նոցա ,,:

Կարձեալ՝ զի եթէ յարտաքին ատենի միայն և յե-
կեղեցական պատժոց եւեթ արձակէին այսուիկ ապաշ-
խարողք, միանգամայն մանաւանդ լինէր նոցա այն՝ թող-
լով յանտես զպատուհաս մեղացն, յորոց մարթէր նո-
ցա աստ ապաշխարելովն զերծանել:

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ

Ա՛ռաջի. Ապաշխարողութիւնքս սահմանեալ են փո-
խանակ թողութեան նախնեացն կանոնական ապաշխա-
րանաց: Ա՛րդ թողութիւն կանոնական ապաշխարանաց
ըստ արտաքին ատենի եւեթ եկեղեցւոյ էր. ապա նե-
րողութիւնք ոչ զօրեն՝ի ներքին ատենի: Զեւ իսկ այժ-
մու ներողութեանցս յարևնման է ձևոյ թողութեան
կանոնական ապաշխարանաց, զի ընդհին սովորաբար
վանն եօթն ամաց եւ նոյնչափ եւս փառատոնդպաց:

Պե. Ի ընդհել առաքելոյն զներողութիւն՝ չեւ ևս
սահմանեալ էին կանոնական ապաշխարանք, որպէս
յայտ է և յայլոց վկայութեանց եկեղեցական պատ-
մութեան: Ա՛յլ զարձեալ՝ զի ապաշխարանքն այնոքիկ
սահմանեալ էին ոչ միայն յարտաքին ատենի առ՝ի շի-
նութիւն գայթակղելոց, այլ եւ՝ի հատուցումն մեղաց.
քանզի էին ամբողջական մասունք խորհրդոյ ապաշխա-
րութեան: Ա՛ սան որոյ ձևն այն ներողութեանց յարև-
նման թողութեան կանոնական ապաշխարանաց յայտ
առնէ, զի որպէս ապաշխարանքն այնոքիկ սահմանեալ
էին և՛ի քաւութիւն պատժոց մեղաց առաջի Ա՛ստու-
ծոյ, նոյնպէս և ներողութիւնքս են:

ԳՕԴՈՒԱԾ ԺԳ

Զի գլխոյն Եկեղեցւոյ և եպիսկոպոսաց իշխանութիւն է՝ի վերայ անսպառ գանձոյ վաստակոց Քրիստոսի և սրբոց՝ առանձնոյց Եկեղեցւոջ, ևս և՝ի նպաստ ննջեցելոց:

Գիտելի է նախ՝ զի վաստակք սրբոց յանբաւ և յանսպառ գանձս վաստակոցն Քրիստոսի յաւելուն, ոչ վասն անբաւականութեան վաստակոց փրկչին՝ յոր զամենայն արժանս իւրեանց ընդունին սրբոցն վաստակք, այլ զի Աստուած՝ի ձեռն այնոցիկ՝ վասն չարչարանացն սրբոց ընդ Քրիստոսի՝ առաւել և մեզ ողորմեսցի. Այլ զբաւականութենէ վաստակոցն Քրիստոսի՝՝ի հատուցումն պատժոց մեզաց չիք երկբայել: Սակ ընդ սրբոցն և վաստակոց առաւելուլ քան զպէտս փրկութեան նոցա՝ ոչ ոք երկբայեսցի յածել զմնաւ որչափ ինչ Տիրամայրն կրեաց, որչափ ինչ սուրբ առաքեալքն և հայրապետք և անապատականք և վկայք: Զորոց զվաստակս սուրբ Եկեղեցին՝՝ի ներբողեանս սրբոցն Յովհաննէսի և Աթանասի կոչէ գանձս հոգևորս անկորնչանս. և սուրբն Աբրոսիոս ընդ նմա (յղ. ապաշխ. գլուխ ա. գլ. ժե.) համարի զայնոսիկ զօրաւորս՝՝ի թողութիւն պատժոց մեզաց մերոց:

Եւ զի գանձքս այսոքիկ՝՝ի մատակարարութիւն եկեղեցւոյ տուեալ են, ակնարկէ առաքեալն յասելն (ՃԲ. կոր. Ե. 18.) "Եւտ մեզ զպաշտօն հաշտութեան,,: Զի այս անսահման եղանակ բացատրութեան՝ զամենայն ազգ թողութեան յինքն բովանդակէ. և մանաւանդ յաւելեալ յայն զվարդապետութիւն հաղորդութեան սրբոց, զոր յետ այնորիկ (գլ. Ը. 14.) յաւելու առ՝՝ի յորդորել զկորնթացիսն Ճոխս՝ ողորմել աղքատացն որ Երուսաղէմ, որպէս ասէ. "Հաւասարութեամբ յայժմու ժամանակիս՝ ձեր առաւելութիւնդ՝՝ի նոցա պակասութիւնն, զի և նոցա առաւելութիւնն եղիցի՝՝ի ձերում պակասութեանդ,,: Այսինքն զի ձեր ըստ մարմնաւոր գոյիցդ հաւասարել զնոսա ընդ ձեզ, և նոքա ըստ հոգևոր վաստակոցն հաւասարեսցեն ըզ-

ձեզ ընդ ինքեանս. որպէս և զՊրիստոսէ փոքր մի յառաջ ասացեալն էր. "Ալ ան ձեր աղքատացաւ որ մեծատունն էր, զի դուք նորա աղքատութեամբն մեծասջիք։" Եւ զոր յաւելուն թէ "Որ ինչ շնորհիցեմ ձեր ի դէմս Քրիստոսի," յայտ առնէ ըստ Յոյն և ըստ Լատին մեկնչաց. Զայս ներումն արարի և առնեմ ի դիմաց Քրիստոսի և իշխանութեամբ նորա իբրև պաշտօնեայ նորա, ոչ այլազգ քան զոր ինքն շնորհեաց ինձ առնել։

Զոյն հաստատէ և վկայէցն, որք ուսան ի Քրիստոս հաւատոց բանտարկեալ կային, աղերս առ եպիսկոպոսունս արկանել գրով՝ առ ի ներումն պատժոց ապաշխարողաց։ Զոր յայտ է և այն՝ զի եպիսկոպոսաց հնուց էր իշխանութիւն բաշխելոյ զշնորհս զայս ի թեմի իւրեանց, և զկնի եկեղեցւոյ ի համօրէն եկեղեցւոջ։ Զայս ժողովն լատերանեան ամիոփեաց զայս իշխանութիւն եպիսկոպոսաց ուստի զեղծանելոյ ամանց ի նոցանէ այնուհետև, և եթող ի նոսա զիշխանութիւն քառասնից աւուրց, և ի նաւակատիս օծութեան եկեղեցեաց՝ տարեւոր աւեթ իշխանութիւն բաշխելոյ զշնորհս պատժոց թողութեան։

Զայսցանէ զհետ բերէն աստուածաբանք և զմիւս վարդապետութիւնն ի նպաստ ննջեցելոց վարելոյ ըզնոյն գանձս անտպառելիս։ Զանգի ընկալեալ միանգամ՝ զի իշխանութիւն է եկեղեցւոյ ի վերայ գանձուց վաստակոյն Քրիստոսի, և զի հաղորդութիւն է ընդ զինուորեալ և ընդ չարչարակիր եկեղեցի, զհետ գայ զի կարէ նա որպէս ազօթել վասն ննջեցելոց՝ նոյնպէս և զվաստակս Քրիստոսի ի ձև մաղթանաց առաջի առնել Աստուծոյ վասն նոցա, որպէս զի կամ քոլորովին և կամ ըստ մասին քաւեսցին պատիժք մեղաց նոցա. "Զի և ննջեցեալքն հաւատացեալք՝ անդամք են եկեղեցւոյ," ասէ աւետն (Գաղատ. Պաուղ. Առաք. գլ. Ը)։

ԱՌԱՔԻԹԻՆՔ

Գլուխ Ա. — ա. Սուրբք զվարձս վաստակոց իւրեանց ընկալան լիուլի, և ոչ՝ ի միտս ուրուք՝ ի նոցանէ անկաւ՝ զայլոց ևս պարտս հատուցանել նոքօք։ — բ. Եւ քանզի Կրիտաոս առաւելեալն զպարտս մեր հատոյց, աւելորդք են վաստակք սրբոց՝ ի հատուցումն, և նուազ զուխ իւն իսկ ածեն զօրութեան վաստակոցն Կրիտաոսի։

գլ. — ա. Վաստակք սրբոց՝ որպէս արժանիք վարձուց՝ ընկալան լինելի զվարձս, այլ իբրև փոխարինք՝ յաւելուն քան զպէտս իւրեանց. քանզի վարձք՝ զՀետ գան վաստակոց, իսկ հատուցումն՝ պարտեաց։ Ոչ ինչ հարկ ներգործութեամբ զմտաւ ածել սրբոց զՀատուցումն մեզաց այլոց. այլ քանզի եղբայրսիրութեամբ սիրտ նոցա վառեալ էր, գան գործէին օգնել ամենայնիւ այլոց, և իբրև որդիք սրբոց եկեղեցւոյ՝ զանձինս և զգործս իւրեանց բոլորանուէր կամաց նորա և գիտաւորութեան ընծայէին։

— բ. Ոչ ինչ աւելորդ վաստակք սրբոց՝ ի հատուցումն պարտուց, որպէս և ոչ մերքս են աւելորդք. զի Թէպէտ և անբաւ են փոխարինքն հատուցեալք՝ի Կրիստոսէ, այլ չափով հաղորդս լինիմք այնոցիկ՝ ըստ համեմատութեան վաստակոց և արժանեաց մերոց։ Այսու և ոչ նուազութիւն ածեն զօրութեան վաստակոցն Կրիստոսի, որպէս և ոչ քարեխօսութիւն սրբոց՝ զօրէ իւրաքանչիւր տեղւոջն ասացաք։ Այլ եթէ վաստակք սրբոց ոչ ինչ յաւելու զօրութիւն վաստակոցն Կրիստոսի, զի կատարելոյն յաւելուած՝ նուազութիւն է. այլ վաստակք նոցա օգնեն մեզ առաւելապէս հաղորդս լինելոյ զօրութեան վաստակոցն Կրիստոսի. և այն քան պարշաճի եւեթ, և ոչ քան արժանեաց, որպէս ուսուցանէ ուղղափառ վարդապետութիւն։

Գլուխ Բ. — ա. Ո՞չ ինչ խափր իցէ ընդ ներողութիւն ընկալեալ՝ի նպաստ ննջեցելոց, և ընդ աղօթս մատուցեալս վասն նոցա։ — բ. Անաւանդ զի անպիտելի է՝ թէ արդեօք ընկալցի Աստուած զներողու-

Թիւնն զայնոսիկ ՚ի նպաստ նոցա։ — գ. Ալ ասն որոյ զարմանք էն՝ զի հռոմէական եկեղեցի չնորհէ սեղանոց ումանց ներողութիւն լուակատար, որպէս զի մատուցմամբ սրբոց պատարագին ՚ի վերայ նորա՝ ազատել հոգւոյն այնոսիկ ՚ի քաւարանէ վասն որոյ մատչի պատարագն։

պխ. — ւ. Ստիր մեծ է ընդ աղօթս մատուցեալս վասն ննջեցելոց և ընդ ներողութիւնս ընկալեալս ՚ի նպաստ նոցա. զի որ աղօթէն, ոչ ինչ հատուցանէ. իսկ ներողութեամբ առնի հատուցումն ՚ի ձեռն եկեղեցւոյ վաստակօքն Քրիստոսի և սրբոց։

— բ. Կրնգիտելի է ներողութեանցն օժանդակել այսմ կամ այնմ հոգւոյ առանձինն, այլ ոչ ընդհանրապէս. զի ընդունելի է միշտ Աստուծոյ որ ինչ ՚ի զիմաց և հրամանաւ եկեղեցւոյ մատուցանի. վասն որոյ առաւել օժանդակեն ներողութիւնք վասն որոյ մատուցանին քան այլոց, եթէ հաւասար իցէ երկաքանչիւրոցն արժանաւորութիւն, և չիցէ ինչ խափան զօրութեան նոցա ՚ի կողմանէ նորին՝ վասն որոյ մատուցանին։

— դ. Ոչ յանիրաւի զարմանայիցէ ոք ընդ չնորհել հռոմէական եկեղեցւոյ ներողութիւնս յաղագաւորութիւն այսր կամ այնր հոգւոյ ՚ի քաւարանէ, եթէ չիցէ տեղեակ պայմանաց չնորհին։ Զի որպէս Տէպէրլանտիա ցուցանէ (յղ. պապարփաց. մասն ք. յօդ. Ժ. թիւ 4.) սեղանք այսոսիկք ՚ի սկզբանէ և այսր գտանին սահմանեալ, որ և արտօնագիրն անուանին։ Այս Ռենեդիկտոս ԺԴ. հայրապետն Հռոմայ համաձայն Վրիմոլի պոլի ԺԴ. քաղաքին (՚ի սահմանադր. թիւ ԺԶ.) զերաքանչիւրն չնորհիս. զի ոչ այլ ինչ է, քայց ՚ի գանձուց եկեղեցւոյ չնորհել պատարագաւն՝ մատուցեալ ՚ի վերայ այնր սեղանոյ, որչափ ինչ կարևոր է յաղաքութիւն հոգւոյն՝ վասն որոյ մատչի, եթէ կամք իցեն Աստուծոյ ազատել զնա։

ԳԼՈՒԽ Է

ՅԱՂԱԳՍ ԽՈՐՀՐԴՈՑ ՎԵՐՋԻՆ ՕԳՄԱՆ

Վերջին օճումն կոչի կարգ օճումն Հիւանդաց, առ այլումք և կանխագոյն օճումբք՝ որ ի խորհուրդ միրոնաւթեան և ազնուի. և է սա խորհուրդ սահմանեալ ի Վերնատոսէ վասն մահացու հիւանդաց, առ ի քաւել զմնացուածս մեղաց նոցա, տալ զօրութիւն համբերելոյ ի տագնապ մահուն, և կեանս իսկ՝ եթէ օգտակար իցէ նոցա կեալ։

Ա՝նացորդք մեղաց, զոր սրբեն շնորհք վերջին օծմանն, են տկարութիւնք մնացեալք ի սկզբնական և ի ներգործական մեղաց, այսինքն յօժարութիւն ի չարն, հեղգութիւն առ բարին, թեառն իմն՝ որ հակէ զհոգի և դժուարին առնէ նմա յերկնայինս ի վեր ուղղել ըղձիս, տրտմութիւն և անձկութիւն՝ որ ի հոգեվարս անդ տագնապեն զհոգի և մղեն ի թերայուսութիւն։

Յանխիք հաւաստիս եթէ ուրուք ի նախնի հերեսիսվաց ուրացեալ իցէ զխորհուրդս զայս, բայց նորաղանդք ուրացան և զայս, վասն որոյ ժողովն տրիդենտեան դատապարտեալ զմոլորութիւն նոցա, սահմանեաց և զսա Ձչմարիտ խորհուրդ՝ ի յեօթանեցունց խորհրդոց եկեղեցւոյ։

Ա կայէ այժմ նախ՝ առաքեալն Յակոբոս. (Ե. 14.) "Հիւանդանայցէ՞ ոք ի ձէնջ, կոչեսցեն զերիցսունս եկեղեցւոյն, և աւրհնեցեն ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն տեառն. և աղօթքն հաւատովք փրկեսցէ զհիւանդեալն. և եթէ մեղս ինչ իցէ գործեալ՝ թողցին նմա։" Առաքեալն բացատրէ աստ զերեսին և պայմանս, որ ըստ ամենեցուն հաւանութեան կացուցանեն զխորհուրդս։ Այս՝ նշան զգալի կամ արարողութիւն՝ իւղոյն օծումն, աղօթք և ձև. երկրորդ՝ շնորհք հոգւոյն ի սփոփումն ցաւոցն և ի քաւութիւն մեղաց. և երրորդ՝ սահմանադրութիւն աստուածային, որ միայն կարէ ներգործել շնորհս և զօրութիւնս այսպիսիս։ Ոչ

և Աղոթենէս և այլք՝ ի Հարց բազումք այսպէս իմացեալ՝ հաստատեն զաստուածային սահմանադրութիւն խոր-
հըրդոյս. և սուրբ Ասիեբեւրանն յերրորդ գիրս քահա-
նայութեան ասէ. "Ընդ ոչ զմարմնոյ մահն՝ ի զա-
ւակացն կարող էին՝ ի բաց տանել, և ոչ զերկեալ
հասեալ ախտն փարատել. իսկ սոքա (փոհանայք) զխո-
ԹացեալՀոգին և զի մահ վտանգեալն բազում ան-
գամ փրկեցին. ումանց ԹԵԹևագոյնս յարդարելով ըզ-
պատուհասն, և այլոց ումանց և ոչ խուն մի Թողլին ան-
կանել. ոչ վարդապետութեամբ ևեԹ և խրատու, այլ
և աղօԹից օժանդակութեամբ. զի ոչ միայն վերստին
ծնանին սոքա զմեզ, այլ և յետ այնորիկ զգործեալ
մեղս իշխանութիւն ունին քաւելոյ. քանզի հիւանդա-
նայցէ ոք՝ ի ձէնջ, ասէ, կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն
և այլն ,,:

Նայց Թողեալ զբազմապատիկ վկայութիւնս Հարց Նունայ և Ասինայ, զմերոյն ածցուք: Սուրբն Ա-
կար Հայրապետ Լուսաւորչին գրէ առ սուրբն Ա՛ր-
ԹահանէսՊուսաւորչին մերոյ. "Օ՛ւրդ օծման
մեռելոյն և հիւանդացն վկրտելոյ առանձնակ օրհնեա-
յեն քահանայքն և եպիսկոպոսունք ,,:

Եւ Ամաստասերն Յոհան կանոնագրէ այսպէս. "Ա՛ր-
ժան է զհիւանդացն ձէԹ՝ քահանային օրհնել ըստ իւ-
րում աղօԹիցն, և ըստ բաւականութեան պահանջե-
լոց ժամուն պիտոյից ,,:

Եւ Սուրբն՝ ի պատմել զվախճան սրբոյն Ներսիսի
պարԹևի գիւրոյ վարդապետին՝ ասէ. "Ի կատարել
ամենեցունց նաւաստարդն, ՚ի պաշտաման անուշահոտ իւ-
ղին՝ հանդերձ աստուածահաճոյ աղօԹիւքն, ծերունւոյն
՚ի Ս՛րիստոս աւանդեալ ,,:

Ասդիս վարդապետ՚ի մեկնութեան կաԹողիկեայց.
"Ա՛ջինն իւղ և մեծ պատիւ գիւղն աւազանին... զոր
մեռանն սուրբ անուանեմք... և այլ իւղ օծութեան ե-
րախայից ըստ օրհնութեան քահանայից, և այլ հի-
ւանդաց ,,:

Յոհան Հայրապետ մանդակունի. (Ճառ ԻԷ.) "Ի՛ն-
քեանք մոլորեալք են, Թողեալ զՆստուծոյ, զաղօԹանն և զիւղն օծմանն՝ զոր պատուիրանք Հրամայե-
ցին հիւանդին, և զպահս և զաղօԹս ցաւածին, և ին-

քեանք յուսուեցա և ՚ի գիր զառաջին ։ ։ ։ Զ՚ինչ հրամայեն մեզ պատուիրանք Աստուծոյ . ոչ ապաքէն ամենայն գործոց մերոց գնացէն հրամայէ պահապան և յօրինիչ , հիւանդացոյ աղօթս և օծումն իւղոյ ,, ։

Ապա ետոսրով ՚ի մեկնութեան ժամագրոյ ՚ի մէջ բերեալ զբան առաքելոյն՝ հիւանդանայցէ ոք ՚ի ձէնջ , և այլն , ասէ . “ Զգալի մարմին զգալապէս և գինւով բժշկութեանն սիրէ ըստ թանձրութեան մարմնոյն . իւղն յօրինակ շնորհացոյ Հոգւոյն սրբոյ տուաւ , որ անեղութեաբար գնեղբլին մարդն մաքրէ , և յայտնապէս արտաքին մարմնոյն առողջութիւն պարգևէ՝ որք հաւատով գան ,, ։

Ներսէս շնորհալի ՚ի մեկնութեան կաթուղիկեացոյ ՚ի նոյն բան առաքելոյն . “ Կայցէ թէ ներգործել զայս աղօթիցն էր զօրութեան , օծման իւղոյն առ ինչ պէտս բժշկութեանն կարօտանային ։ Յայտ է թէ գի յերկուց եղեալ մեր , ամենայն ինչ գգալի է և խմանալի փրկութեանն առիթք՝ գոյգ էութեանս , որպէս ջուր և Հոգի , հաց և Գաւազան . ըստ այսմ առյես զօծանելն իւղով , ուր տպաւորէր շնորհք բժշկութեան մարմնոյն , որ ըստ նմանի նիւթ , և Հոգւոյն ներգործէր ՚ի ձեռն խմանալի աղօթիցն ,, ։

Ալիտիոս գանձակեցի . (՚ի կան . լիբ . Սոյ երէցոյդ ժողովեն .) “ Յորմէրդն վերջին օծման հիւանդաց անխափան կատարեցոյ իւղով օրհնելով ՚ի քահանայէն , որպէս կանոնեալ է յառաջ ժամանակաւ և մեծ հայրապետն Յովհաննէս իմաստասէր յաջորդն Աթիս կաթուղիկոսէ ,, ։

Ասան որոյ և Յովսէս վարդապետ , Աեծոքայ վանից առաջնորդ , տեսանելով զի առ տգիտութեան և անհոգութեան երիցանց ոմանց յաւուրս իւր սկսեալ էր խափանել խորհուրդս այս վերջին օծման , որ աղագաւ բամբասեալ էր ազգս մեր յօտար ազգաց , ՚ի ձեռագիրս մաշտոցի վիւամ՝ որ պահի ՚ի մերում մատենադարանի , յեռու ՚ի սկիզբն կանոնի օծութեան հիւանդաց գնորատս զայս . “ Կայցէ դուք ընկալարուք զսա իբրև զտախտակն Աովսեսի և զաւետարանն Քրիստոսի . և մի ոք պախարակեսցէ զսա , զի ՚ի վաղուց ժամանակաց նախատինս կրեաք յազգաց քրիստոնէից , և

այսօր ետ զսա Յ.ստուած ՚ի ձեռս մեր. և որ ոչ ընդունի զսա, պատասխանի ինքն տացէ Վրէիատոսի Յ.ստուծոյ մերոյ ,,։

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ Ք

Յ.ԱՐԿ. Ա. Յ.ռաքեալն Յակոբոս օծմամբ հիւանդաց ոչ այլ ինչ իմանայ քան զպատմեալն յառաքելականէն (Ա՛ԻԱ. Ձ. 13.) “( )ծանէին իւղով զբազումս հիւանդս, և բժշկէին զնոսա ,,. որ ոչ էր խորհուրդ։ Այլ գլխաւոր զօրութիւն օծմանն հաղորդել զհոգեւոր շնորհս բժշկութեան։

ՊԽ. ( )ծումնն պատմեալ յառաքելականէն՝ օրինակ էր խորհրդոյս, որպէս ուսուցանէ Ժողովն տրիդենտեան. վասն որոյ և օծօղն անգ, և օծեալ, և զօրութիւն օծմանն այլ ՚ի Հիմարտութենէն. այն զմարմնաւոր շնորհէր առողջութիւն, իսկ սա շնորհէ զհոգևոր։ Ո՛չ է թէ զմարմնաւոր բժշկութենէ էին բանք առաքելոյն Յակոբայ, զհետ գայր անտեղի խաստս այս. Հիւանդանայցէ ոք ՚ի ձէնջ, . . . կոչեսցեն զերիտասնս եկեղեցւոյն. . . եթէ ունիցի հիւանդութիւն, թողցի նմա, որ անմահ բանք լինէին։

Յ.ԱՌԱՔ. Բ. Յ.ռաքեալն աղօթից ընծայէ զզօրութիւն օծմանն. “Եւ աղօթքն հաւատով փրկեսցեն զհիւանդեալն ,,. ապա ոչ ինչ կարևոր է օծումն։

ՊԽ. Յ.ղօթից՝ որպէս ձևոյ խորհրդոյն ընծայէ առաքեան զզօրութիւն նորա, և ոչ զհետ գայ անտի աւետարդութիւն օծմանն՝ որ է նիւթ խորհրդոյն, առանց որոյ չիք խորհուրդ։ Յ.յսպէս ՚ի սկզբանէ և այսր իմացաւ եկեղեցի զբան առաքելոյն, և զայս կալաւ միշտ աստուածութիւն։

Յ.ԱՌԱՔ. Գ. Նայց յառաջին ջրեղէնն զարս չիք ՚ի վարս սրբոց յիշատակ խորհրդոյս։

ՊԽ. Յառաջնոց անտի զարուց աճապ ՚ի վեր անդր զսրբոյն Յ.ակարայ անժխտելի վկայութիւն. և մարթէր ասել և ևս գՅ.ովհննէս, զՅ.իսուսի անտխոքացն, զՅ.ակեբեբրանէն, զՆնոավկենտեայ, զԿիւրղի աՅլեքսանդրացւոյ, զ( )գոստինոսէ և զՅ.եծէն Կիւիգոլի.

այլ մեք զազգային վկայութիւնս ընտրեցաք: Եւ ոչ զլռութիւն պատմագրաց վարուց սրբոց ընդունիմք, թէ պէտ և ոչ ինչ՝ ի լռութենէ օրէն կոչ յուցանել: Զանազի և մերս Աւրիւն՝ ի վարս սրբոյն Ահակայ, և Աւրիգոր տուրընեցի՝ ի վարս Գեպոտիանոսի՝ զվերջինն օծումն նոցա պատմեն. նոյնպէս և՝ ի վարս սրբոյն Գրգենտեայ և սրբուհւոյն Վատիլդեայ դշխոյի և այլոց՝ պատմի պաշտել խորհրդոյս: Ամանաւանդ զի՝ ի նախնի դարս բազումք վկայութեամբ կատարէին զկեանս, և ոմանք մինչև ցմահ յապաղէին զմկրտութիւն, որոց ոչ պաշտէր խորհուրդս այս:

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Ցադրագս ևիթոյ և ձևոյ և զօրութեանց խորհրդոյ վերջին օծման:

Եկեղեցի՝ ի քանից առաքելոցն Յակոբայ ընկալեալ ուսուցանէ՝ զինուիթ խորհրդոյ օծմանս է ձէթ օրհնեալ յեպիսկոպոսէ: Եւ արդարև օծումն ձիթոյ օրինակ է ընտրեցեալ սուրբ Հոգւոյն, որ անտեսանելաբար հեղեալ՝ ի հոգի հիւանդին. և որպէս զօրութեամբ ձիթոյ մեղմին ցաւք մարմնոյ, նոյնպէս և ցաւք հոգւոյ զօրութեամբ խորհրդոյս: Եւ դարձեալ՝ զի ձէթ զուարթացուցիչ է և տաճիչ քոյոյ՝ ի լուսաւորութիւն զգալի աչաց. իսկ օծումն ընտրեցեալ հոգւոյ և՝ ի լուսաւորութիւն իմանալի աչաց: Այլ որպէս նիւթ խորհրդոյ մկրտութեան է ջուր, նոյնպէս և խորհրդոյ վերջին օծման է ձէթ օրհնեալ յեպիսկոպոսէ: Այլ օրհնութիւնս այս՝ ըստ հանրագոյն կարծեաց աստուածաբանից՝ ոչ է էական մասն խորհրդոյն, որպէս և ոչ օրհնութիւն ջրոյն՝ ի խորհուրդ մկրտութեան. այլ կարևոր ևեթ՝ ի պատուիրանէ, զորով չէ օրէն զանց առնել, և վարել ձիթով՝ որ չիցէ օրհնեալ:

Եւս առաւել չէ և չէ օրէն բնաւ իսկ զձիթոցն զանց առնել, և առանց օծման՝ աղօթիւք ևեթ, և որով և իցէ աղօթիւք կատարել զխորհուրդն: Ո՛չ ի օծումն, յորմէ խորհուրդն ընդունի զանուանակոչութիւն, զոյգ ընդ սահմանեալ աղօթից՝ կէութենէ խորհրդոյն է,

և որ զանց առնէին զնովաւ՝ Թերի առնէ զխորհուրդն, նա և ունայնացուցանէ. զի որպէս ասացաք՝ առանց նիւթոյ զգալի նշան լինելոյ՝ խորհուրդ ոչ է։

Իսկ ձև խորհրդոյս են բանքն, զորս ասէ քահանայն յօծանել զնուրաքանչիւր մասունս մարմնոյ։

Եկեղեցւոջ Ա՝եղիազարու ըստ ամբրոսեան արարողութեան յաւուրս սրբոյն Անաւետարայ, և՛ի գրիգորեան մաշտոցին տպագրեալ՛ի Ա՝ենարդոսէ, ձև խորհրդոյս այլ է յայժմուս ձևոյ՝ որով վարինն լատինացիք. զի սկսանի այն համաձայն մերում նախնի ձևոյ՝ "( )ծանեմ զքեզ իւղով սրբով,, և այլն։

Օ օրութեամբ այսր խորհրդոյ քաւին, ոչ միայն մեղք ներելիք և միացուածք մեղաց խոստովանելոց, այլ և եթէ լցեն հիւանդին մեղք անգիտութեան. զի ասէ սուրբ Ա՝գուստինոս. "Ա՝արի է չարիել ումեք կամ չձանաչել զամենայն մեղս իւր՝ առ՛ի կարելոյ սրբել զայնոսիկ ապաշխարութեամբ... յորոց հարկ է նմա յելս՛ի կենաց սրբիլ խորհրդոյս այսուիկ,,։

Վարձեալ և քաջալերի սուքա հիւանդն՛ի յոյս փրկութեան, և զօրանայ ընդդէմ փորձութեանց դիւին՝ որ՛ի հոգեվարս անդնեղէ զնա անհամբերութեամբ ցաւոց, և արհաւրօք մահուն։

Ը նարհէ և սա խորհուրդս այս առողջութիւն մարմնոյ, եթէ լցէ օգտակար հոգւոյ հիւանդին։

ՑՕԴՈՒԱԾ Բ

Յաղագս պաշտօնեի և ընդունելոցս խորհրդոյս։

Եպիսկոպոսաց և քահանայից է պաշտօն օծանել զհիւանդս. սարկաւագաց իսկ չէ օրէն լինել ձեռներէց յայն։ "Կոչեսցեն զերիցունս եկեղեցւոյն,,։

Հիւանդաց եթէ մկրտելոց չափահասից օրէն է մատակարարել զխորհուրդս զայս. և քանզի մի՛ի զօրութեանց սորա է ընդունել կեանս հիւանդին, որպէս ասացաք, աստի զհետ գայ՝ զի և օրէն է կրկնել զօծումն Թիւնն յառողջանալ հիւանդին և՛ի մուսանգամ անկանել՛ի հիւանդութիւն ծանր։

Պարտ է ընդունելեաց խորհրդոյս գոլ ՚ի ջնորհս Աստուծոյ. այլ ՚ի կորուսանել յանկարծ հիւանդին զըզգայութիւն, խնդրին ՚ի նմա՝ առ ՚ի տալ զօծումն՝ որ ինչ առ ՚ի տալ զարձակումն։

Վասպիտ և խորհուրդս այս չիցէ անհրաժեշտ կալեալ առ ՚ի փրկութիւն, այլ ըստ պատուիրանաց պարտք են ամենայն ումեք ընդունել զայն ՚ի վտանգաւոր հիւանդութեան։ Եւ ժողովրդապետաց անհրաժեշտ պարտք են մատակարարել զայն. զի մարթ իսկ է հիւանդին ՚ի դէպս ինչ՝ զօրութեամբ խորհրդոյս հասանել փրկութեան։

ԳԼՈՒԽ Ը

ԾԱՂԱԳՈՒ ԿԱՐԳԻ ՔԱՀԱՆԱՑՈՒԹԵԱՆ

Է յեկեղեցւոջ Քրիստոսի սահմանեալ ՚ի նմանէ քահանայութիւն երևելի ՚ի սպաս աստուածային պաշտամանց, զանազանեալ բազմովին յաշխարհական կարգէ. և դասակարգութիւն աստիճանաց՝ որ տակաւ մատչին ՚ի քահանայութիւն անդր. և յիշատակին ՚ի սուրբ գիրս եպիսկոպոսունք, երիցունք, և սարկաւագունք։ Ի սկզբանէ եկեղեցւոյ և այսր՝ արևելեան և արևմտեան եկեղեցիք հաւատային զայս սրբազան դասակարգութիւն որպէս մանն ուղղափառ հաւատոյ և որպէս սահմանադրութիւն աստուածային։

Կարգ ասին աստիճանք իւրաքանչիւր եկեղեցական դասակարգութեան, և ձեռնադրութիւն՝ արարողութիւնն, որով ընդունի ոք զկարգ՝ առաւել կամ նուազ իշխանութեան ՚ի սպասաւարկութիւն աստուածային պաշտամանն։

Յօժնեակ զանազանին կարգք. քահանայութիւն՝ որոյ ծայր և լրումն է եպիսկոպոսութիւն, սարկաւագութիւն, կիսասարկաւագութիւն, ջահընկալութիւն, երգիծեցուցչութիւն, ընթերցողութիւն, և դռնապանութիւն։ Յերեքեան առաջին կարգք կոչին աւագք և սրբազանք, և քառեակ յետինք՝ սեպհին կամ փոքր աստիճանք։ Իսկ խուզումն հերաց կամ հերակտրութիւն,

սաղմոսերգուԹիւն և աւելածուԹիւն՝ ոչ են կարգք, այլ պատրաստուԹիւն և սկիզբն աստիճանաց։

Ա՛րդ մասն է հաւատոյ զի սրբազան կարգն կամ ձեռնադրուԹիւն է Հմայարտապէս խորհուրդ՝ ի նոր օրէնս, որպէս և ժողովն տրիդենտեան սահմանեաց ընդդէմ նորատանգից։ Զի ասէ առաքեալն յՏիմոԹէոս. (Ա. Տիմ. ա. 6.) "Ա՛ման որով յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհան Ա՛ստուծոյ, որ են՝ ի քեզ՝ ի ձեռնադրուԹենէ իմմէ,,։ Եւ դարձեալ (ա. Տիմ. գ. 14։) "Ա՛յլ անփոյթ առներ զշնորհացդ՝ որ են՝ ի քեզ, որ տուաւ քեզ մարգարէուԹեամբ՝ ի ձեռնադրուԹենէ եպիսկոպոսուԹեան,,։ Եւ՝ ի գործս առաքելոց ընԹեռնումք, զի առաքեալք ձեռնադրեցին եօԹն սարկաւագունս, "Որոց կացուցին առաջի առաքելոցն, և աղօԹս արարեալ եդին՝ ի վերայ նոցա զձեռս,,։ (գործ. գ. 6)։ Պատմի դարձեալ անդ (ժգ. 22.) զի Պօ՛ղոս և Ա՛ռնաբաս "Ձեռնադրեցին նոցա ըստ եկեղեցեաց երիցունս,,։ Եւ առաքեալն ասէ. (եփես. դ. 11.) "Եւ նա ետ զոմանս առաքեալս, զոմանս մարգարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս և վարդապետս,,։ Ա՛րդ յայս ամենայն վկայուԹեանց՝ ի յայտ գան ամենայն պայմանք՝ որ կացուցանեն խորհուրդ ՁեռնադրուԹիւն. այսինքն արարողուԹիւն խորհրդաւոր՝ որ է ձեռնադրուԹիւնն, զօրուԹիւն տալով շնորհս, և աստուածային սահմանադրուԹիւն՝ որ միայն կարէ տալ շնորհս՝ ի ձեռն արտաքին արարողուԹեան։ Ա՛յժմ որով՝ Հարկ առհասարակ յամենայն ժամանակի, և ամենայն եկեղեցիք՝ ի սկզբանէ և այսր հաստատեցան զսա խորհուրդ ՁեռնադրուԹիւն սահմանեալ՝ ի Ա՛յրիստոսէ։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ա՛տ. — ա. Ա՛յրիստոս զառաքեալս իւր ոչ ձեռնադրեաց։ — բ. Եւ շնորհքն՝ զոմէ խօսի առաքեալն՝ ոչ է շնորհք սրբազործ, այլ ձրի պարգև՝ զոր ասէ տալեաւ ՏիմոԹեայ ՖրեզբուերուԹեամբ. (ա. Տիմ. դ. 14)։

Պէ. — ա. Ըստ ամենայն, զոր արարն Ա՛յրիստոս, պատմի յաւետարանս. և դարձեալ զի ինքն տէր ամե-

նայնի էր, առանց արտաքին արարողութեան և կարող էր տալ առաքելոյ զշնորհս քահանայութեան։ Նակ զի սահմանեաց զԽորհուրդ կարգի քահանայութեան, քահայայտ է՝ ի վկայութենէ առաքելոյն, և յընդհանուր աւանդութենէ։

— ՚Ը. Շնորհք մարգարէութեան ոչ՝ ի բաց մերժէ զսրբարարն. վասն զոյ Պօղոսեան՝ ի մեկնութեան այնր բանի առաքելոյն կոյսդէ վերկոսեան. “Յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհն Աստուծոյ, զշնորհս Հոգւոյն՝ զոր ընկալար վերակացութեան եկեղեցւոյ և նշանագործութեան,,։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Թէ ոյք չհօրանեցուանց կարգաց իցեն խորհուրդք։

Զկնք երկբայել զի քահանայութիւն՝ է Հնմարտապէս խորհուրդ, և տպաւորէ կնիք՝ ի ձեռնադրեալն։ Նայց զեպիսկոպոսութենէ տարաձայնին աստուածաբանք. բազումք՝ ի նոցանէ համարին զի եպիսկոպոսութիւն չիցէ ուրոյն՝ ի քահանայութենէ խորհուրդ, զի ոչ յաւելու կնիք նոր, այլ զի տայ ևեթ նմա ընդարձակագոյն իշխանութիւն՝ որպէս ծայր և լուսին քահանայութեան։ Նյլ հաստատակաց կարծիք այն են, զի եպիսկոպոսութիւն է խորհուրդ ուրոյն՝ ի քահանայութենէ. զի առաքեալն՝ ի Հոգւոյն սրբոյ համարի զաստիճան եպիսկոպոսութեան, յաւելն առ նոսա, “Ո՛ զգոյշ կացէք անձանց և ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս՝ հովել զԺողովուրդ տեառն, զոր ապրեցոյց արեամբ իւրով,,. (Գործ. ի. 28)։ Նւրբն Դիոնեսիոս արիսպագացի, Տերտուղիանոս, սուրբն Կլեմէս ածէքսանդրացի, Նպիփան, սուրբն ( )գոստինոս, և այլք՝ ի Հարց, զայս այսպէս համարին. և կարգ ձեռնադրութեան եպիսկոպոսի յար և նման այլոց կարգաց ձեռնադրութեամբ կատարի և խնդրուածովք շնորհայն Աստուծոյ՝ ի վերայ ձեռնադրելոյն։ Նյս ամենայնիւ, քանզի չկնք ինչ վճիռ եկեղեցւոյ զայսմանէ, ոչ է վարդապետութիւնս այս՝ ի հաւատոց։

Վասն սարկաւագութեան միաբանին գրեթէ ամենայն աստուածաբանք, զի է խորհուրդ. քանզի կատարի ձեռնադրութեամբ և աղօթիւք, որպէս Վտեփանոս հանդերձ սարկաւագակիցօքն, "Զոր կացուցին առաջի առաքելոցն, և աղօթս արարեալ՝ եդին ՚ի վերայ նոցա զձեռս,,: Եւ առաքեալն ընդ ձեռնադրութեան կոչէդ զաստուածայինն ընդրկս. "Լրծարծել զընդորհան Ստուծոյ, որ են ՚ի քեզ ՚ի ձեռնադրութենէ իմմէ,,: Եւ սուրբն Պղնատիոս աստուածազգեաց գրէ առ զմիւռնացիս, "Վատուել զսարկաւագունս որպէս ՚ի հրամանէ Ստուծոյ պաշտօնեայս,,: Եւ Թէպէտ երեքին այսքիւք՝ եպիսկոպոսութիւն, քահանայութիւն և սարկաւագութիւն այլ և այլ խորհուրդք են, այլ ընդ միոյ քահանայութեան անուամբ՝ որպէս մի ինչ համարին:

Իսկ կիսասարկաւագութիւն Թէպէտ և աստիճան սուրբ, այլ ըստ հաստատակաց կարծեաց՝ ոչ է խորհուրդ, որպէս և ոչ չորեքեան ստորին աստիճանք:

ԱՌԱՔԿՈՒԹԻՒՆՔ

Ընդ. ա. Վարդ սարկաւագութեան սահմանեալ էր առ ՚ի պաշտել զսեղանս և հոգաբարձու լինել այրեաց, որպէս յայտ է՚ի գործոց առաքելոց. (զ. 3.) վասն որոյ ոչ է պատշաճ ընդ սուրբ կարգս համարել զայն:

Պե. Վարկաւագութեան սկիզբն ՚ի հարկաւորութենէ անտի եղև, այլ ոչ եթէ սկիզբն այն և պատճառք կացուցանեն զէութիւն նորա: Եւ Թէպէտ զայս, սրբազանք էին սեղանքն՝ զորս սարկաւագունք պաշտէին յեկեղեցւոջ, զի անդանօր մատչէր պատարագ. վասն որոյ առաքեալն և աւանդութիւն աստուածայինն ուսուցանեն մեզ՝ զի սուրբ էր կարգ պաշտօնէիցն այնոցիկ:

Ընդ. բ. Վիսասարկաւագութիւն և փոքր աստիճանք անծանօթք են ՚ի նախնի եկեղեցւոջ. քանզի ՚ի սկզբան անդ եպիսկոպոսունք զյարմարաւորս ՚ի ժողովրդենէ կացուցանէին երջիչս կամ սաղմոսասացս և կամ ընթերցօղս:

Պե. Պատքէն ՚ի սուրբ գիրս չիք յիշատակ փոքր աստիճանաց և կիսասարկաւագութեան. բայց նախնի

Հարք՝ Տերտուղլիանոս, Կիպրիանոս, Աւռնելիոս և այլք յիշատակեն զայս իբրև քաջածանօթս. յորմէ օրէն ի զՀետ բերել, զի յառաքելոց կամ յեկեղեցւոյ՝ ի սկզբանէ անտի սահմանեցան իբր աստիճանք վերելից՝ ի քահանայութիւն։ Ա՝ ասն որոյ Եպիսկոպոսունք զյարմարաւորս կացուցանէին՝ ընծերոցս կամ սաղմոսերգուս՝ ոչ վայրապար, այլ տալով նոցա զկարգ պաշտաման. քանզի Աւռնելիոս և Կայիոս քահանայապետք որպէս աստիճանս՝ ի քահանայութիւն յիշատակեն զայս. և Ժողովն Կարթագինեայ գումարեալ յամին 398, սահմանէ զձև տալոյ նոցա զկարգս, և զտրբութիւն այնոցիկ ընծայէ եպիսկոպոսի։ Ա՝ յսդ եթէ կարգ նշանակէ արարողութիւն սրբազան, որով աւանդի իշխանութիւն հոգևոր առ եկեղեցական պաշտամունս, ապա նախնիք զաստիճանս զայսոսիկ ոչ վարկպարազի ինչ պաշտօն համարէին, այլ պատրաստութիւն՝ ի կարգ քահանայութեան։

ԳՕԴՈՒԱԾ Բ

Ցառագս ևխթոյ և ձևոյ խորհրդոյ կարգին։

Ա՝ստուածաբանք ոչ միաբանին՝ ի նիւթ և՝ ի ձև այսր խորհրդոյ. Հանրագոյն կարծիք զձեռնադրութիւն ևեթ և զզուգակից նմին բանս՝ "Ա՝ստուածային և երկնաւոր շնորհք,, և այլն. Համարին նիւթ և ձև խորհրդոյս։ Ա՝սոյց այլք յաւելուն և զտուչութիւն սպասուց՝ որով ձեռնադրեալն հանդերձի զսուրբ պաշտամունն կատարել, և զկոչդ նմին բանս՝ "Ա՝ր իշխանութիւն,, և այլն։ Ա՝յն իսկ, որ զերկրորդս ևեթ զայս համարին էական մասն խորհրդոյն՝ իբր բովանդակելով յինքեան և զձեռնադրութիւն։

Ա՝սոյց չիք երկբայել՝ զի էութիւն խորհրդոյս է՝ ի ձեռնադրութեան, որով սուրբ գիրք Ա՝յրք և Ժողովք բացատրեն միշտ զկարգ եպիսկոպոսութեան, քահանայութեան և սարկաւագութեան։ Ա՝ռաւ և հաւաստի իսկ բարոյապէս, զի այն ևեթ ինչ նիւթ խորհրդոյս. քանզի ոչ սուրբ գիրք, ոչ Ժողովք, և ոչ Ա՝յրք առաջ-

նոց ինուանց գարուց յիշատակեն ինչ զտուչութիւն սպասուց։ Եւ ժողովն տրիդենտեան՝ ի ԻԳ գումարման (գլ. Գ.) ասէ. "Արիցուք ըստ օրինի կաթարին ձեռնադրութեամբ եպիսկոպոսի,,։ Եւ Յոյնք ձեռնադրութեամբ ևեթ տան զկարգ, և չիք առ նոսա տուչութիւն սպասուց, սակայն չեղև երբէք տարակոյս զվաւերականութենէ կարգաց նոցա։ Հարկ է սպա ընդունել զի ձեռնադրութիւն ևեթ է նիւթ խորհրդոյս, և յարակից ևեթ նմին բանք՝ ձև սորին։ Նայց զգուշութեամբ և զտուչութիւն սպասուցն և զօծումնն պարտ է կատարել, որպէս զամբողջական մասունս բնաւից իսկ խորհրդոյ։

ԳՕԴՈՒԱԾ Գ

Յաղագս զօրութեանց արբոյ կարգին։

Գլխաւոր զօրութիւնք խորհրդոյս են կնիք և ընտրք։ Պանդխտ խորհուրդս այս որպէս զմկրտութենէն և ըզպրոշմի տպաւորէ կնիք անջինջ՝ ի հոգւոջ ձեռնադրեցեալն, որով որոշի յաշխարհականաց։ Ասա որոյ չիք ուրեք օրինակ, զի եկեղեցի զքահանայս դարձեալ յօրացութենէ կամ եկամուտս՝ ի հերետիկոսաց, վերստին ձեռնադրեալ լոկ կամ ձեռնադրիւք. բայց եթէ երկբայելի կամ անվաւեր լոկ ձեռնադրութիւն նոցա որպէս նորադանդիցն։

Լոկ ընտրք սրբոյ կարգին կրկնակի են. մի՝ աճուն սրբարար ընտրից, յորում պարտ է գալ նուիրելոյն, զի կենդանեաց է խորհուրդս։ Եւ այս առաւել կամ նուազ ըստ իւրաքանչիւր պատրաստութեան պարգևի ընտրի, առ՝ ի յարդարել զնոսա արժանագոյնս կարգին՝ զոր հանդերձեալ են ընդունել։ Եւ միւս ևս՝ ընտրք խորհրդոյն, առ՝ ի կատարել բարւոք և սրբութեամբ և յօգուտ անձանց զսրբազան պաշտամունս։ Լոկ զառաջինն սրբարար ընտրս ըստ պատահման ևեթ մարթ է տալ խորհրդոյս, որպէս և զայլոց խորհրդոցն առասցաք։

ՑՕԴՈՒԱԾ Դ

Յաղագս պաշտօնեի խորհրդոյս և նուիրելոց :

Եպիսկոպոսունք եւեթ են պաշտօնեայք սրբոց կարգաց. զի նոցա միայն է ձեռնադրել եպիսկոպոսունս, քահանայս և սարկաւագունս։ Զի՝ի սուրբ գիրս չիք ուրեք քահանայից ձեռնադրել քահանայս կամ սարկաւագունս, այլ առաքելոց եւեթ և՝ի նոցանէ ձեռնադրեալ եպիսկոպոսաց՝ ձեռնադրել եպիսկոպոսունս և քահանայս և սարկաւագունս։ Եւ առաքեալն առ Տիմոթէոս և առ Տիտոս, որ եպիսկոպոսունք էին, գրէ հրահանգս ընտրութեան նուիրելոց եպիսկոպոսութիւն,՝ի քահանայութիւն և՝ի սարկաւագութիւն։

Զոյն և կանոնք առաքելականք, ժողովք, Հարք, և յամենայն ժամանակի սովորութիւն արևելեան և արևմտեան եկեղեցեաց հաստատեն։

Իսկ ուր կիսասարկաւագի, կամ առաւել ևս քան զորից փոքր աստիճանաց, հասարակաց կարծիք են աստուածաբանից՝ զի մարթ է և լոկոյ քահանայի անսովոր հրամանաւ լինել կարգացս այսոցիկ պաշտօնեայ։

Ուրանց եւեթ օրէն է ընդունել զկարգ, և արանց միայնոց. զի և ոչ երախայի ձեռնադրութիւն է վաւեր. քանզի միտումն դուն է խորհրդոյ։ Իսկ դրօշմ՝ի պատուիրանէ եւեթ է կարևոր առ ընդունելութիւն կարգի, և ոչ ըստ վաւերականութեան. և որ դիտումեամբ ընդունի զկարգ չև դրօշմեալ, ապաքէն ծանր մեղք են, այլ վաւեր է ձեռնադրութիւնն։

Ո՛չ ձեռնադրութիւն մանկան չև՝ի չափ հասելոյ կէսք անվաւեր համարին. իսկ այլք՝ թէ վաւեր է, այլ ոչ անկանի ձեռնադրեալն ընդ պարտեօք չափահասից ձեռնադրելոց։ Յանրագոյն է երկրորդս այս կարծիք, և ըստոյգ դատեալ՝ի Կենեդիկտոսէ ԺԴ։

Կայց Թէպէտ և նուիրեալն կամ ձեռնադրօղ հեթեթիկոսք լցեն կամ ուրացօղք կամ բանադրեալք, և կամ ընդ որով և լցէ ծանր յանցանօք, վաւեր է ձեռնադրութիւնն Թէ և անօրէն. և այնպիսի անջնջելի է

կինիք եպիսկոպոսական, զի և ոչ ինքն իսկ եկեղեցի կարօղ է բառնալ՝ ի նմանէ զիշխանութիւն կարգին։ Ո՛չ ի խորհուրդս այս ոչ իբրև զապաշխարութեանն է, յորում եկեղեցի կարէ ամփոփել զիշխանութիւն քահանային, և ոչ որպէս զպսակի՝ զոր կարեն անվաւեր կացուցանել արգելք։

Ո՛չ ևս մեղանչէ և որ փոփոխէն զկարգ ձեռնադրութեան, այլ վաւեր է դարձեալ ձեռնադրութիւնն. քանզի եպիսկոպոսութենէ, յոր չէ մարթ ձեռնադրել զոք՝ որ չիցէ քահանայ։

ՑՕԴՈՒՄԸ Ե

Ցաղագս փոքր աստիճանաց։

Յառաջագոյն քան զտուչութիւն փոքր աստիճանաց պատրաստէ եպիսկոպոսն զնուիրեալս խաչանիշ հերակրտութեամբ, և տալով նոցա հրաման սաղմոսերգութեան եկեղեցւոջ և աւետածութեան։ Եւ թէպէտ ըստ օրինի աստիճանաց՝ ի հատանել զհերան՝ յարէ զձև պաշտամանն՝ "Օ՛ որ եղաւոյէ,,, և այլն. նոյնպէս և՝ ի տալ զաւետն ասէ՝ "Ո՛՜ երկնաւոր Խ՜ն ճոխրել զնիկեղեցի,,, և այլն. որ են օրպէս նիւթք և ձևք պաշտամանն՝ յոր կարգէ զնոսա, այլ ոչ սաղմոսերգութիւն և ոչ աւետածութիւն ընդ կարգս կամ ընդ աստիճանս համարին. այլ՝ ի գոնապանութենէ սկսանի եկեղեցական դասակարգութիւն։

Դռնապանին պարտք են բանալ և փակել զեկեղեցի, վասն որոյ աւանդէ նմա եպիսկոպոսն զբանալիս։ Ի ԺողովԱրիմինեայ յամին 398. յիշատակի այս իբր աստիճան եկեղեցական. և Դրիգոր Նազիանզացի և սուրբն Գրիգորիոս Համարին՝ ի վերջ կոյս ջորջորդ դարու ընկալեալ եկեղեցւոյ զայս կարգ։ Նիւթ և ձև կարգիս է տուչութիւն բանալոյ, և յարակից բանքն՝ "Նայոէս որ,,, և այլն։

Նոքին պաշտօն է ընթեռնուլ եկեղեցւոջ զսուրբ գիրս արտաքոյ պատարագի, Հառընտիրս և յայսմաւուրս, և ուսուցանել զքրիստոնէական վարդապե-

տուեալ ։ Ա. յս ևս յիշատակի անդամին ՚ի ջորտոդ գարե ՚ի ժողովն Կարթագինեայ, և ՚ի միում ՚ի թղթոց սրբոյն Կիպրիանոսի. յիշատակեն զայն և Գրիգոր Նազիանզացի, Աթեոդորետոս, Սոկրատ և Սոզոմենոս ։ Եւ Յուլիանոս ուրացողն ընկալեալ էր զկարգ ընթերցողութեան ։ Եւ Ա. գաթանգե՛ղոս ասէ (634), զի Ղուսաստիկ հայրն մեր "Կացոյց զկարգս երիցանց և սարկաւագաց և անագանոսաց ,, ։

Կիւթ և ձև կարգիս է տուչութիւն առաքելական գրոց, և յարակից բանք եպիսկոպոսին՝ Ա՛ռ պէտս պայս, և այլն ։

Արդիւնեցուցչին պաշտօն է հալածել զդևս ՚ի հաւատացեալոց կամ յերախայից ։ Ա՛յս իշխանութիւն ետարձ եկեղեցի և ՚ի քահանայից ևս, և ոչ ոք արդ առանց հրամանի եպիսկոպոսին կարէ երդմնեցուցանել զդևս ։ Ա՛ի՝ զի դուն ուրեք թէ գտանիցի արդ ստուգիւ ոք դիւահար. և միւս ևս՝ զի դժուարին է, ոչ միայն անփորձ կո՛ընբիկոսի՝ այլ և երիցանց, ճանաչել թէ արդարև իցէ ոք դիւահար ։ Ո՛յն ՚ի արբ և ժողովք աւանդեն յառաքելական դարուց հետէ լեալ յեկեղեցւոջ զայս կարգ. զոր յիշատակէ և Տերտուլիանոս ։

Կիւթ և ձև կարգիս է տուչութիւն մաշտոցի, և յարակից բան եպիսկոպոսին՝ Ա՛ռէք և ամփոփեա զբերեալս ասա ՚ի դիս տո. տաս տէղ հրամանդ. և այլն ։

Ա՛ահնկալին պաշտօն է օգնել կիսատարկաւագին, լուցանել զջահս, և պատրաստել զնուէրս պատարագի զհաց և զգինի ։ Կիւթ և ձև կարգիս է տուչութիւն աշտանակի մոմեղինաւ, և դատարկ ժամանոցի, հանդերձ յարակից բանիւքն՝ Ա՛ռէք զշղթանահս, և այլն. Ա՛ռ զձեռնոցս, և այլն ։ Ա՛յս ևս կարգ յիշատակի ՚ի ժողովն Կարթագինեայ ՚ի ջորտոդ դարու. և ջրից ևս աստիճանաց նուէրք և ձևք անդամին յայնմ՛հետէ պաշտեին որպէս և արդ, առանց նրանք փոփոխութեան ։

ԳՕԴՈՒԱԾ Զ

Քաղաքս կիսաստարկաւագին և սարկաւագի:

Սկիզբն սուրբ աստիճանաց է կիսաստարկաւագու-
թիւն, պաշտօն կիսաստարկաւագի է սպասաւորել սար-
կաւագին՝ի բեմն, պատրաստել զսկիհն և զմաղզմայ, ըն-
ծեռնուլ զառաքելական գիրս՝ի պատարագի, և լուա-
նալ զկտաւս սեղանոյն, Նախակոպոսն զինի ձեռնա-
դրութեան և աղօթիցն՝ զգեցուցանէ նմա հանդերձ
պարի, և ուրար յահեակ բաղուկն. և տայ նմա զսկիհ
և զմաղզմայ դատարկ և զամենայն սպասս սրբոյ պա-
տարագին, և ասէ. "Տե՛ս յո՛ր կողմն երթեալ ես,,, և
այլն: Կարգ կիսաստարկաւագին վաղեմի է յոյժ. սուրբն
Ներսէս Հռոմէայ հայրապետ յերրորդ դարու յիշէ
զայս՝ի թղթին առ Փաբիոս անտիոքացի. և սրբոյն Ա-
պրհատոսի՝ի նմին դարու պատմի ձեռնադրեալ կիսա-
սարկաւագ զՍպտատոս: Յիշատակեն զայն և ժողովն
Նէոկեսարիոյ յամին 305. Ի աւոդիկեայ յամին 366. և
Կարթագինեայ յամին 398. և առաքելական կանոնք՝
որ՝ի նմին դարու խմբագրեցան:

Կիսաստարկաւագութիւն առ Յովնա ընդ փոքր աստի-
ճան դասի, և առ Ի աստինս իսկ մինչև յերկոտասանե-
րորդ դար համարեր այնպէս: Այլ արդ և առ Ի աստինս
և առ մեզ համարի ընդ սուրբ կարգս, և՝ի վերայ ածէ
ձեռնադրելոյն զպարտս ժամերգութեան և զխնջոյենաց
ուր ժուժկալութեան:

Կարկաւագին պաշտօն է անմիջապէս սպասաւորել
քահանային՝ի պատարագի, և ընծեռնուլ զաւետա-
րանն: Նշխանութիւն է նմա խնկարկելոյ և բերելոյ
զսկիհ հանդերձ սուրբ խորհրդովքն, և հրամանաւ եպիս-
կոպոսի բաշխել ևս զայն ժողովրդեան, և մկրտել, և
քարոզել: Կարգ սարկաւագութեան կատարի ձեռնա-
դրութեամբ եպիսկոպոսին, և յարակից բանիւն՝ Ո՛ր-
պոսաճայէն ևս երէնաւոր ընդհ. և ապա տայ նմա եպիս-
կոպոսն ուրար յահեակ ուս, և զաւետարան և զգուր-
վան:

Յիշատակին ՚ի գիրս և սարկաւագութիւք ըստ հինն սովորութեան եկեղեցեաց, մանաւանդ ՚ի Յունաստան. զորս յիշատակէ և Պղինիոս ՚ի հռչակաւոր Թղթին առ Տրայիանոս։ Սոքա կարծեալ էին յառանձին հրահանգս կանանց և ՚ի տեսչութիւն նոցա. և ըստ Եպիփանու (հեր. հլթ.) գործ էր նոցա զննապանութիւն յեկեղեցւոջ ՚ի կոչմն կանանց, պատգամաւորութիւն ՚ի ժամանակի հալածանաց յեպիսկոպոսէն կամ ՚ի ժողովրդապետէ առ հաւատացեալս, առընթերակայութիւն կանանց ՚ի մկրտութեան առ ՚ի մերկացուցանել և զգեցուցանել զնոսա, և առ ՚ի ջնջել զիւղն օծութեան, և այլն։ Եւ և վասն նոցա ձեռնադրութիւն, որպէս նշանակէ Ժողովն Եւոդիկեայ ՚ի կանոնն ԺԸ, զրեթէ նովին արարողութեամբ. այլ ոչ իբրև աստիճան առ ՚ի կարգ քահանայութեան, որում անընդունակ են կանայք։ Օ՛ի առաքեալն և ոչ ուսուցանել յեկեղեցւոջ ներէ նոցա. և ոչ Տիրամօրն իշխանութիւն էր քահանայական. և եկեղեցի դատապարտեաց միշտ զմարկուսեանս, զմոնտանեանս և զկողբիտեանս, որ ձեռնադրէին զկանայս։ Եւ եթէ ուրեք ՚ի գիրս յիշատակին քահանայութիւք և եպիսկոպոսութիւք, պարտ է իմանալ զկանայս երիցանց և եպիսկոպոսաց՝ կանամբեաց յառաջ քան զընդունելութիւն սրբոյ կարգին։

ՅՕԴՈՒԱԾ Լ

Յաղագս կարգաց քահանայութեան և եպիսկոպոսութեան։

Պաշտօն քահանային է պատարագել, օրհնել ոլ ինչ ՚ի պէտս են ժողովրդեան, քարոզել, և մատակարարել զխորհուրդս, բայց յայնցանէ՝ որ պահեալ են եպիսկոպոսին։ Այլ զայս ամենայն՝ հրամանաւ եպիսկոպոսի, զի եպիսկոպոսաց է արածել զհօտ Քրիստոսի, և նոքա են տեսուչք եկեղեցւոյ։

Կարգ քահանայութեան կատարի ձեռնադրութեամբ եպիսկոպոսին և յարակից քանիւն՝ Պոռոճայնն և երէսաւոր ընդդէմ։ Եւ ապա տայ նմա եպիսկոպոսն զսկիհ և զմաղզմայ հանդերձ նուիրօք, այսինքն հայիւ և գինեաւ,

և զնշխանութիւն կապելոյ և արձակելոյ ի մատուցանելն զպօտին։ Որ Լատինք ի վերջ ուրոյն ձեռնադրութեամբ տան զնշխանութիւնն զայն ի հնգից դասուց հետէ։

Եպիսկոպոսութիւն է լրումն և կատար քահանայութեան. և պաշտօն նորա է՝ հսկել, ձեռնադրել և օծանել։ Որ ինչ մեռանաւ կատարի՝ եպիսկոպոսայ է պաշտօն, և մկրտել և դրոշմել, և զկին և զմաղզմայ զսեղան և զեկեղեցի օրհնել. և հրամանաւ նոցա է՝ զի զոմանս ի պաշտամանց աստի վարեն քահանայք, մինչև և դրոշմել իսկ, և զկին և զմաղզմայ օծանել, որ առ Լատինս չէ օրէն։

Որ մկրտութիւնէ յայտնապէս վկայէ Տերտուլիանոս, զի եպիսկոպոսաց է պաշտօն, և նոցա հրամանաւ մկրտեն քահանայք և սարկաւագունք. (յղ. դէպ. գլ. ժէ)։

Եպիսկոպոսունք աստուածային իրաւամբք իշխեն քահանայից. զի յաջորդք են առաքելոց, որք իշխէին եօթանասան և երկուց աշակերտացն՝ որոց յաջորդք են քահանայք։ Եւ առ եպիսկոպոսունս ասէ առաքեալն. (գործ. ե. 28.) "Որ գոյշ կացէք անձանց և ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչ՝ հովուել զԺողովուրդ տեառն, զոր ապրեցոյց արեամբ իւրով"։ Եւայն առաքեալ գրէ և առ Տիմոթէոս (ա. Տիմ. ե. 19.) "Որ երիցու է չարախօսութիւն մի ընդունիցիս, բայց եթէ երկուք և երիւք վկայիւք"։ Ի բանից աստի քաջայայտ է, զի եպիսկոպոսունք ոչ միայն ժողովրդեան՝ այլ և քահանայից են տեսուչք և դատաւորք, որ յայտարար է իշխանութեան ի վերայ դատելոցն։ Եւ այս է ի սկզբանէ հետէ սովորութիւն արևելեան և արևմտեան եկեղեցեաց։

Իսկ քորեպիսկոպոսունքն յիշատակեալք՝ ըստ հանրագոյն կարծեաց՝ էին երիցունք գիւղից և աւանաց, որ արդ առաջնորդք անուանին. և չէր նոցա առանձին կարգ, այլ իշխանութիւն հովուելոյ զբնակիչս գիւղից յանձնելոց նոցա, և տալոյ զփոքր աստիճանս, որպէս ցարդ աբբայից Վենեդիկտեանց է իշխանութիւն։

Կարգ եպիսկոպոսութեան կատարի որպէս զքահանայութեանն ձեռնադրութեամբ եպիսկոպոսի, և յայտակից զանուն՝ "Պատուական և երկնաւոր ընծիդ"։

և այլն։ Բայց ձեռնադրութիւն եպիսկոպոսի կատարի սակաւաքա՛ր յերից եպիսկոպոսաց, այսինքն երկուց այլոց եպիսկոպոսաց առընթեր կալով ձեռնադրողին, և ձեռա՛ն ի վերայ նուիրելոյն դնելով։

Նոյնպէս սրբութիւն և գիտութիւն նախդրի՛ն նուիրեալ՝ ի կարգ եկեղեցական, զայնցանէ բարոյականին է՛ ձառել։

ԳԼՈՒԽ Թ

ՅԱՂԱԳՍ ՊՍԱԿԻ ԿԱՄ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

Ձամուսնութիւն մարթ է նկատել որպէս զայն քաղաքական և որպէս խորհուրդ։ Որպէս զայն քաղաքական է միաւորութիւն առն և կնոջ, որով պարտին կեալ միշտ՝ ի միասին։ Այս պարտք յառաջ գան՝ ի խոստմանէ երկոցունց առ միմեանս, և դնեն՝ ի վերայ նոցա կապան անլուծանելի մինչև ցմահ միոյն յերկոցունց։ Յայսմ միաւորութեան և՛ ի խոստման հաստատի էութիւն ամուսնութեան, և է վաւեր մինչ չև խակ լցեալ ամուսնութեանն։

Բայց խոստումն անվաւեր է, եթէ որ խոստանայն՝ ի կատարումն խոստմանն ինչ ապիկար. և այս ապիկարութիւն կարէ յառաջ գալ ոչ միայն՝ ի բնութենէ, այլ և յօրինաց. այսինքն՝ եթէ խոստումն նոցա կամ միոյ՝ ի նոցանէ ինչ ընդդէմ աստուածային կամ բնական կամ եկեղեցական և կամ քաղաքական օրինաց։

Սուրբ է ամուսնութիւն, զի է աստուածադիր։ "Ա՛ր բու և էգ արար զնոսա, ասէ. և օրհնեաց զնոսա Աստուած և ասէ, աճեցէ՛ք և բազմացարո՛ւք,,։ Եւ դարձեալ. "Ոչ է բարւոք մարդոյդ միայն լինել, արասցուք զմա օգնական ըստ զմա,,։ Եւ դարձեալ թէ "Երկնեաց տէր Աստուած զկողն՝ զոր առ Ադամայ՝ ի կին, և ած զնա առ Ադամ, և ասէ Ադամ. Այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց, և մարմին՝ ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ։ Վասն այնորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր իւր, և երթիցէ զհետ

կնոջ իւրոյ, և եղիցին երկուքեան ի մարմին մի ,,. (Ծն. ա, քե):

Ո՞այս բան կէսք ի Հերեսիոսէտաց իմանան հրաման, պարտս ի վերայ դնելով ամենեցուն ամուսնանալոյ. վասն որոյ և ընդդէմ աստուածադիր օրինաց Համարեցան զկուսութիւն, դէմ ընդդէմ այնոցիկ աղանդաւորացն, որք ծայրայեղ ի միւս կողմն մոլորեալ՝ պիղծ Համարէին զամուսնութիւն: Ակեղեցի սուրբ ի միջահամմանին կացեալ, սուրբ զերկոսեան իսկ Հաստատեալ՝ և զամուսնութիւն և զկուսութիւն. զառաջինն իբր օրէնս աստուածադիր, զի առաքեալն ասէ. "Եթէ ամուսնանայցես, ոչ մեղաւ. և եթէ ամուսնանայցէ կոյսն, ոչ մեղաւ ,,. (ա. կոր. է. 28): Իսկ զերկրորդն՝ զի գովեալ է ի Վհիատոսէ իբր կատարեալագոյն քան զամուսնութիւն. "Ո՛չ ամենեքեան բաւական են այդմ բանի, այլ որոց տուեալ է... են նեղբինիք՝ որ զանձինս իւրեանց արարին նեղբինիս վասն արքայութեան երկնից. որ կարօղն է տանել, տարցէ ,,. (Մտթ. ժթ. 12): Եւ առաքեալն ասէ. (ա. կոր. է. 38.) "Որ ամուսնացուցանէ զկոյսն իւր, բարւոք առնէ. և որ ոչն ամուսնացուցանէ, լաւ և առնէ ,,:

Իսկ որպէս խորհուրդ նկատեալ զամուսնութիւն, սրբէ այն զմիաւորութիւն առն ընդ կնոջ, և տայ նոցա զչնորհս կարևորս առ ի սրբութեամբ կեալ ի միասին: Վհիատոս նպատակ ամուսնութեան ըստ բնական միաւորութեան՝ է սերունդ ազգի մարդկան. այլ Վհիատոս ամբարձ զայն ի սրբութիւն խորհրդոյ՝ առ ի սրբել զամուսինս և զորդիս նոցա, և արար զայն օրինակ միաւորութեան իւրոյ ընդ եկեղեցւոյ, և նշանակ սիրոյն իւրոյ ընդ մեզ:

ԳՕԴՈՒԱԾ Ա

Թէ իցէ արդարև խորհուրդ ի նոր օրէնս ամուսնութիւն:

Թէպէտ և ամուսնութիւն էր խորհուրդ ինչ ի հին օրէնս, սակայն չրեայք զանազանէին զայն ի քաղաքական գաշանոյ, և աստուածային ինն Համարէին զայն

իբր օրինադրութիւն արարչին՝ ըստ քնութեան և ըստ պիտոյից մարդկան։ Ա՛ստն որոյ օրհնութեամբ և կրօնական արարողութեամբ առնէին զհարսանիս։ Ա՛ստուած իսկ օրհնեաց զնախահաճնօզայն մերոց զհարսանիս՝ յասելն. “Ա՛ճեցէ՛ք և բազմացարո՛ւք,,։ Եւ Նոյ պուհէլ օրհնեաց զհարսանիս Սառայի դստեր Իւրոյ ընդ Տուբիայ, և ասէ. (Տոբ. է. 15.) “Ողորմածն Ա՛ստուած աջողեսցէ ձեզ՝ ի բարիս... ահաւասիկ ըստ օրինացն Մովսիսի ա՛ռ զնա, և տա՛ր զնա առ հայր քո. և օրհնեաց զնոսա,,։ Եւ ոչ սակաւք՝ ի Նայոց նկատեալ զհարսանիս Ադամայ ընդ Եւայի իբր օրինակ հանդերձեալ միաւորութեանն Քրիստոսի ընդ հարսին իւրում եկեղեցւոյ, կոչեն զայն խորհուրդ։

Ասկ զի հարսանիք՝ ի նոր օրէնս Ձեմարիտ խորհուրդ է՝ ի Քրիստոսէ սահմանեալ, ուսուցանեն մեզ զայն սուրբ գիրք։ Քանզի ասէ առաքեալն առ եփեսացիս. (Է. 25.) “Ա՛նդր, սիրեցէք զկանայս ձեր, որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր մատնեաց վասն նորա... որ սիրէ զկին իւր, զանձն իւր սիրէ. զի ոչ ոք երբէք ատեայ զանձն իւր, այլ սնուցանէ և դարմանէ զնա, որպէս և Քրիստոս զեկեղեցի. զի անդամք եմք մարմնոյ նորա, ՚ի մարմնոյ նորա և յոսկերաց նորա։ Ա՛ն այսօրիկ Թողցէ այր զհայր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքին ՚ի մարմին մի։ Խորհուրդս այս մեծ է, այլ ես ասեմ ՚ի Քրիստոս և յեկեղեցի,,։ Ա՛յս քան առաքելոյն, խորհուրդս այս մեծ է, յայտնապէս զհարսանեաց է. զի զհեր առն կնոջ կոչէ խորհուրդ և նշանակ սիրոյ փրկչին ընդ եկեղեցւոյ. վասն որոյ և սիրոյ նոցա պարտ է հանդիպիլ նմին գոլ սուրբ և կատարեալ. “Ա՛նդր, սիրեցէք զկանայս ձեր, որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի,,։ Ա՛նդ այս միաւորութիւն, և սէր այսպիսի ոչ յաջողէ առանց շնորհացն Ա՛ստուծոյ, և առանձինն և յարտաքս շնորհաց, զոր հարսանիքն ինքնին չկարեն տալ՝ բայց զօրութեամբ սահմանադրութեանն Քրիստոսի։ Ա՛պա ուրեմն առաքեալն հարսիւ խորհուրդ Ձեմարիտ զհարսանիս։ Ա՛յսպէս իմացան զայս քան առաքեալն և Նայք փլորենտեան և արիզենտեան ժողովոց։ Եւ սուրբն Ա՛գնատիոս աստուածազգեաց հայրապետն ասէ՝ ի Թղթ

թէին առ սուրբն Պօղիկարպոս. "Ալք ամուսնանալն կա-
մին հաւատացեալք, պարտ է նոցա հրամանաւ եպիս-
կոպոսին առնել զհարսանիս, որպէս զի ամուսնութիւն
նոցա լիցի ըստ Աստուծոյ,,: Եւ Տերտուլիանոս ասէ.
(առ կին ե-ր. գլուխ ը.) "Եւ ոմն որ կարացէ պատմել
զերջանկութիւն հարսանեաց՝ զոր եկեղեցի զօդէ, նուէր
սրբոյ պատարագին հաստատէ, օրհնութիւն պսակին
կնքէ, հրեշտակք աւետարանեն, և Հայրն երկնաւոր
վաւերացուցանէ,,:

Ասպա անդստին ի սկզբանէ եկեղեցւոյ համարէր
սուրբ լինչ և խորհուրդ առ հաւատացեալս ամուսնու-
թիւն, և պաշտօնէիւք եկեղեցւոյ, և հրեշտակաց առ-
ընթերակայութեամբ, և Հօրն երկնաւորի հաճու-
թեամբ կատարէր: Ալ ասն որոյ ի կանոնիկոս մեր ասի
(ի կան. առաք. լը.) "Արգելցին առաքեալքն և եդին
հաստատութեամբ՝ եթէ որպէս ի սկզբանէ զուգեաց
(Ադամ-Եվ) ամուսնութեամբ զմարդն, և օգնական ա-
րար ումեանց, և օրհնեաց զնոսա, նոյնպէս սահմանեալ
և հաստատեալ հրաման առաքելական՝ սրբութեամբ
զուգել զամուսնութիւն, և օրինօք ի ձեռն աջոյ քա-
հանայութեան և օրհնութեամբ զուգեսցին,,:

Նոյնպէս և Ալրոգինէս, (Հատ. ը. ի Ադոլ.) սուրբն
Ադամանս, (ի Ընդդէմ առ Ադմոնիոս.) Ասկեբերան, (ի
Յնոանդս Հատ. կը.) սուրբն Հպիփան, (հերձ. կէ.) սուրբն
Ակուրեղ աղեքսանդրացի. (ի Յոհ. գլուխ ը., գլ. իբ.)
սուրբն Նարսեղ (վեցօր. գլ. է.) և այլք ի Հարց հա-
մարին ընտրս բերել հարսանեաց, և ամուսնաց անհա-
ւատարմութեամբ անսուրբ առնել զօրհնութիւն քա-
հանային. և համառօտիւ՝ խորհուրդ համարին զայն:

Եւ առ ամենայն ազգս քրիստոնէից ի սկզբանէ և այսր
կրկին զայլ խորհուրդս օրհնութեամբ քահանային կա-
տարին հարսանիքք, որպէս և վկայեն որ ի մաշտոցս անդ
աղօթք օրհնութեան հարսանեաց, և խրատք հարսին
և փեսայի պատրաստել խոստովանութեամբ առ խոր-
հուրդն:

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ա՛տ. ա. — ա. Ընդարձակ է՛ի բանից չորց ցուցանել՝ զի պատկին իցէ խորհուրդ. քանզի նոքա բազում ուրեք խորհուրդ կոչեն զայն լայնաբար ըստ բանի առաքելոյն (Եփես. գ. 32.) «Խորհուրդս այս մեծ է», ուր զՔ՛ամայ ընդ Նւայի հարսանեացն են բանք՝ որ ոչն էր խորհուրդ, որպէս և ոչ խորայեւլացւոցն ամուսնութիւնք՝ զորս չարք կոչեն խորհուրդ։ — բ. Ո՞վ է եթէ չէմարտիւ խորհուրդ համարէին զպատակ, պարտ էր նոցա՛ի դէմս ածել զայն հերետիկոսացս՝ որք պիղծ համարէին զամուսնութիւն։

Պա. — ա. չարք ըստ մտաց սուրբ եկեղեցւոյ խոսէին. և զի եկեղեցի համարի խորհուրդ զպատակ՝ յայտ՛ի մաշտոցայ ամենայն ազգաց քրիստոնէից է. վասն որոյ և ասեն զայն չարք վերառեալ՛ի Քրիստոսէ՛ի ընտրս, և բաղդատեն զայն ընդ մկրտութեան և ընդ կարգի քահանայութեան։

Ընդամայ ընդ Նւայի ամուսնութիւն օրինակ էր Քրիստոսի ընդ եկեղեցւոյ միաւորութեանն. և քանզի օրինակս այս և յամենայն հարսանիս է, նմին նշի չարք և զիսրայեւլացւոց ամուսնութիւնս խորհուրդ կոչեն։ Ա՛յլ քանզի՛ի հարսանիս քրիստոնէից ոչ զտիպ ևս եթ և զօրինակ նկատեն, այլ զկատարումն միաւորութեանն Քրիստոսի ընդ եկեղեցւոյ՝ կարի այլազգ նշանակութեամբ խորհուրդ կոչեն զպատակ քրիստոնէական։

— բ. Իսկ ընդդէմ հերետիկոսաց, որ մերկ զլխով անգոնէին զամուսնութիւն ընդդէմ սուրբ գրոց, ոչ ինչ զօրէր ցուցանել զայն հաստատեալ խորհուրդ՛ի Քրիստոսէ։

Ա՛տ. բ. Ձկը յօրհնութեան պատկին յիշատակ ինչ ընտրեաց որպէս յայլ խորհուրդս. և եթէ եկեղեցի ընդ խորհուրդս համարէր զայն, ոչ լաւագոյն քան զայն ուսուցանէր զկուսութիւն։

Պա. Այն իսկ օրհնութիւն պատկին յանուն միաւորութեան Քրիստոսի ընդ եկեղեցւոյ յայտ առնէ ընդ ընտրս խորհրդոյն։ Այլ եկեղեցի նախապատ զկուսու-

թիւն և զժուժկալութիւն ոչ քան զխորհուրդ պսակին, այլ քան զամուսնական կեանս լսատ առաքելոյ բանին. (ա. կոր. է. 38.) "Ոլ ամուսնացուցանէ զկոյսն իւր, բարւոք առնէ. և որ ոչ ամուսնացուցանէ, լաւ և առնէ,,:

ԳՕԴՈՒԱԾ Բ

Բաղագս ևիտրոյ և ձևոյ և պաշտօնեի խորհրդոյ պսակին:

Ապաքէն խորհրդոյ հարսանեաց հինն և խարխափ խոստումն և դաշինք են, և խոստման և դաշնի պարտ է օրինաւոր գոլ և վաւեր: Ոչ ամի ի դաշն անվաւեր՝ չէ մարթ հաստատել խորհրդոյն, յայտ միաբանին ամենեքեան. միաբանին ևս գրեթէ առհասարակ աստուածաբանք, զի նիւթ խորհրդոյս են դաշինք. այլ թէ ըստ որմէ տեսութեան դաշինքն իցեն նիւթ, զայսմանէ չմիաբանին: Ոչնք զանազանեալ զդաշինս ի խորհրդոյ, համարին զայնս նիւթ, և զօրհնութիւն քահանային ձև. այլք բազումք զօրհնութիւն հարսանեաց համարեալ կարևոր ի պատուիրանէ և ոչ յէութենէ խորհրդոյն, ասեն բավանդակել դաշանցն զնիւթ և զձև խորհրդոյն: Ումանք հաստատեն զնիւթն ի տալ միմեանց հարսին և փեսայի զիրաւունս ի վերայ իրերաց, և զձև՝ յընդունել նոցա զայն իրաւունս. իսկ ումանք ընդնիւթ և զձև համարին ի բանս կամ ի նշանս, որովք երկաքանչիւր տան զհաւանութիւն իւրեանց իրերայ. այսինքն՝ զի տուչութիւն բանիցս զնիւթ, և ընդունելութիւն նոցին զձև խորհրդոյն կացուցանեն:

Ոսկ յաղագս պաշտօնէի պսակին հաւաստի է, զի քահանային է օրհնել զպսակ հրամանաւ եպիսկոպոսի կամ ժողովրդապետի, և զի յամենայն ժամանակի օրհնութիւնս այս ի ձեռն քահանայի կատարէր և կատարի առ հաւատացեալս: Ոյն որով պարտ է պսակին կատարել առաջի քահանայի, որոյ իցէ իշխանութիւն ընկալեալ եպիսկոպոսէ: Ոյլ խնդիր է՝ թէ արդեօք իցէ իրաւունք խորհրդոյն իցէ օրհնել քահանային զպսակն: Ոչ իցէ իրաւունք խորհրդոյն համարին զայն այնո-

քիկ յաստուածդաբանից, որք զնիւթ և զձև դնեն ՚ի գաշինս երկաքանչիւրոցն, վասն որոյ և պաշտօնեայ խորհրդոյն համարին զփեսայն հարսին, և զհարսնն փեսային։ Ա.յլ ըստ արևելեան եկեղեցեաց և ըստ այլոց բազմաց աստուածդաբանից, պաշտօնեայ խորհրդոյն է քահանայն՝ որպէս և բանք մաշտոցին յայտ առնեն, և ձև՝ բան նորա՝ ‘‘Ա՛սպ աստուածդային հրամանէն,,, և այլն. իսկ նիւթ՝ գաշինքն։

ԳՕԴՈՒԱԾ Գ

Գաղափար որ ինչ խնդրին առ վաւերականութիւն պսակին։

Պսակն անվաւեր է առանց գաշնի, գաշն հիմն է և խարխիսխ խորհրդոյն. հարկ է ապա՝ զի հարսն և փեսայ չլինեն անկարօղք առ ՚ի հարսանիս. և ՚ի գաշինն՝ որով խոստանան ամուսնանալ ընդ միմեանս՝ իցեն առանց պայմանք վաւերականութեան։ Ա՛պա նախ քան զամենայն կարևոր է հաւանութիւն երկաքանչիւրոցն. զի չիք գաշն առանց հաւանութեան։ Ա՛ւ հաւանութեանս այսմիկ պարտ է գոլ ներքին և իրական, և ոչ կեղծ և վեր ՚ի վերոյ. պարտ է գոլ յայտնի և փոխադարձ և տուեալ երկուստեք ազատօրէն։

Ա.յլ և ոչ գաշն օրինաւոր քաւական է առ խորհուրդ պսակին առանց մկրտութեան. զի մկրտութիւն դուռն է խորհրդոց, և մկրտեալք եթէ կարեն ընդունել զխորհուրդ պսակին։ Հարսանիք հրէից և անհաւատից են ապաքէն օրինաւորք ըստ գաշնին, այլ ոչ որպէս խորհուրդ։ Ա՛ետև եթէ այր կամ կին անհաւատ՝ գայցէ ՚ի հաւատս, և չկամիցի բնակել ընդ առն կամ ընդ կնոջ անհաւատի վասն թշնամանելոյ նորա զհաւատս իւր և կամ ոչ խաղաղութեամբ վարելոյ ընդ իւր, կարէ բաժանիլ ՚ի նմանէ։ Վասն սոյ առաքեալն. (ա. կոր. է. 15.) ‘‘Ա՛պա եթէ անհաւատն մեկնիցի, մեկնեսցի. զի ոչ ինչ հարկ ՚ի վերայ կայ եղբօրն կամ քեռ յայնպիսի իրս. քանզի ՚ի խաղաղութիւն կոչեաց զմեզ Ա՛ստուած,,։ Ա՛րդ այսու բանիւ մեկնէ առաքեալն զնանրակաւն օրէնսն՝ զոր յառաջ եդ ամուսնացելոց մի

երբեք մեկնել՝ի միաբանց, և՝ի մեկնելն իսկ ըստ հարկի՝ անայր կամ անկին մնալ մինչև ցմահ միւսոյն։ Իսկ ասա ոչ է հարկ, ասէ, հաւատացեալ ամուսնոյ այնպէս ծառայանալ անհաւատ ամուսնոյն, զի՝ի կալ մնալ նորա մեկնել կամ հակառակութեամբ բռնադատել զամուսինն հաւատացեալ՝ի մեկնել, հարկ էցէ սակս նեղութեամբ բնակել ընդ նմա, կամ դարձի նորա սպասել, կամ՝ի չհաշտեն՝ անամուսին կեանս վարել։ Այլ յետ ջանալոյ ամենայն հնարիւք հաճել զանհաւատն՝ ազատ է յիրաւանց նորա նաև ըստ ամուսնական կապանացն, և կարօղ ընդ այլում ամուսնանալ։ Այսպէս իմանան զայս բան առաքելոյն Իսկեբերան, Ամբրոսիոս, Թեոդորոս, և այլք՝ի յոյն և՝ի լատին հարց։

Յայս վարդապետութիւն հաստատեալ են կանոնք եկեղեցականք և սովորութիւն հաւատացելոց, որով հաւատացեալն ազատաբար մատչի յայլ ամուսնութիւն՝ի բաժանել անհաւատ ամուսնոյն, կամ՝ի բառնալ նորա զիշխողութիւն ամուսնական կենակցութեան։ Նա աստի քաջայայտ է, զի ամուսնութիւն անհաւատից, թէպէտ և օրինաւոր, այլ ոչ է խորհուրդ. զի եթէ խորհուրդ էր, միայն անլուծանելի՝ի մեկնել իսկ անհաւատ ամուսնոյն, և հաւատացելոյն չէր մարթ ամուսնանալ ընդ այլում ցոլջափ կենդանի կայր ամուսինն անհաւատ։ Յայց հարսանիք հերետիկոսաց և հերձուածողաց խորհուրդ են, և անլուծանելի՝ի կատարել նոցա զայն ըստ եկեղեցական օրինաց և արարողութեան, թէպէտ և չընդունիցին զայն ինքեանք իբրև խորհուրդ։

Զի ընդունելոյ զընծայն խորհրդոյ պսակին, պարտ է պսակելոցն գոլ՝ի ընծայս Աստուծոյ. և որ որ խղճիւ մահուամբ մեղաց պսակեսցի, ոչ միայն զրկի՝ի ընծայից պսակին, այլ և մեղս սեղանապատութեան գործէ։ Զի կենդանեաց է խորհուրդս, և ոչ տայ սրբարար ընծայս՝ առ՝ի հաշտութիւն մեղաւորին ընդ Աստուծոյ, այլ աձուն ընծայից, և զօրութիւն բարւոք և սրբութեամբ կատարելոյ զպարտս ամուսնական կենաց։ Ապականեալն մարթ է և խորհրդոյս այսմիկ տալ ըստ պատահմանն և սրբարար ընծայս, (քան տասցելոցն՝ի գլ. ա. յօդ.

Ե) ։ Ա՛ւ դարձեալ՝ եթէ անարժանապէս ոք զխորհուրդս զայս ընկալցի խղճիւ ծանր ինչ մեղաց, և ապա ապաշխարութեամբ դարձցի՛ ի ընծայս Աստուծոյ, ըստ հանապագոյն կարծեաց, ընդունի զընծայս խորհրդոյն՝ զոր խափանեալ էր մեղօքն ։ Ոչնոյն իմա և զայլսոյ խորհրդոց, որ վասն կենդանեաց։

Ա՛ւ վաւերականութիւն պսակի պահանջի դարձեալ՝ զի իցէ ըստ օրինաց եկեղեցւոյ, և զի չիցեն՛ ի միջի արգելք՝ որ անվաւեր առնիցեն զայն կամ անարժան ։ Ոչ ոքոց բարոյականին ե Ձառել ։

ԱՌԱՔԻՒՆՔ

Ա՛ռաք. ա. — ա. Ա՛մուսնութիւն անհաւատից ըստ բնականն և ըստ աստուածայինն իրաւանց անլուծանելի է, զի օրինակ է միաւորութեանն Քրիստոսի ընդ եկեղեցւոյ ։ — բ. Ա՛ւ վարդապետութիւն Քրիստոսի և առաքելոց ընդհանուր ամենեցուն արգելու զլուծումն ամուսնութեան, առանց՛ի բաց տանելոյ զանհաւատս ։

պէ. — ա. Խորայելացւոցն ևս հարսանիք անլուծանելի էին և օրինակ միաւորութեանն Քրիստոսի ընդ եկեղեցւոյ, այլ Աստուած հրաման ետ գիր ատելոյ զանի տալ և արձակել զկանայս ։ Ա՛ն օրոյ ասեմք զի լուծումն ամուսնութեան ընդդէմ է երկրորդական իրաւանց բնութեան և ոչ նախնականին. ապա թէ ոչ, չէր ներեալ Աստուծոյ՛ ի ձեռն Մովսէսի զարձակումն ։

— բ. Ա՛ւ արդապետութիւն Քրիստոսի և առաքելոց ընդհանուր է զամենայն հարսանեաց, այլ նոյն ինքն առաքեալն՛ ի դէմս Քրիստոսի՛ ի բաց առնու պայմանաւ զանհաւատիցն, որպէս յուշաք՛ ի վեր անդր ։

Ա՛ռաք. գ. Կան առաքելոյն այնպէս մեծին է, զի չէ մարթ անտի՛ ի միտ առնուլ զայդ բացառութիւն ։

պէ. Եթէ արդարև մեծին էր բան առաքելոյն, նովին իսկ առաւել պարտ է իմանալ զայն ըստ իմացուածոյ Հարց և սրբոց եկեղեցւոյ, և ոչ ըստ առանձին մերոց. և մեկնիչք քաջահմուտք յուցանեն՛ ի Հարց անտի Յունաց և Լատինացւոց յայտնի զմիտս առաքելոյն որպէս և եդաք ։

Ա՛ռել. գ. Հարսանիք ոչ լուծանին վասն հերձուա-
ծողութեան, ասպա և ոչ վասն անհաւատութեան, զի
նոյն պատճառք վասն երկաքանչիւրոցն՝ ի միջի կան։ Ել
լուծանին դարձեալ վասն ընութեան՝ որ ուղղակի և
հակառակ է ամուսնութեան քան զանհաւատութիւն։
Պե. Ել նոյն պատճառք կան՝ ի միջի վասն հերձուա-
ծողութեան և ընութեան, որ ինչ վասն անհաւատու-
թեան։ Ղանզի հերձուածողին և ընացողի պսակ օրհ-
նեալ և լրացեալ՝ անլուծանելի է որպէս խորհուրդ կա-
տարեալ. իսկ անհաւատին ամուսնութիւն թէպէտ և
չքանարիւտ, այլ օրինակ ևեթ է խորհրդոյն, և ջնջի ըզ-
նոյն հաստատութիւն։

ԳՕԴՈՒԱԾ Դ

Զի օրեն է եկեղեցւոյ սահմանել արգելս ինչ պսակի։

Ա՛յս վարդապետութիւն ընդդէմ նորաղանդից սահ-
մանեցաւ՝ ի ժողովն տրիդենտեան։ Ա՛ս պատճառք, որով
ուրանան նոքա զայս իշխանութիւն եկեղեցւոյ, վասն
զի զամուսնութիւն չհամարին խորհուրդ՝ այլ քաղա-
քական դաշնադրութիւն ևեթ։ Ա՛ստ քանզի ցուցաք
՝ի վեր անդր զի ամուսնութիւն հաւատացելոյ է՝ չնա-
րին խորհուրդ սահմանեալ՝ ի Ա՛քրիստոսէ, ասէ ըզ-
հետ գայ և իշխանութիւն եկեղեցւոյ՝ ազատ ամենևին
յարչխատական օրինաց, զոր ուրանան նոքա։

Ո՛չայս այսպէս սահմանէ և ժողովն տրիդենտեան
հաստատեալ՝ ի բանս սուրբ գրոց, և յանընդհատ ա-
նդրադարձութիւն եկեղեցւոյ յառաքելոց և այսր։ Ո՛ր ա-
ռաքեալն Պօղոս նախ զտէրունական հրամանն առաջի
առնէ կորնթացւոյ (ա. կոր. է. 10.) "Ա՛յլ կանամ
բեայն պատուիրեմ, ոչ ես՝ այլ տէր, կնոջ յառնէ մի
մեկնել. ապա եթէ մեկնեսցի՝ անայր մնասցէ, կամ
անդրէն ընդ առն իւրում հաշտեսցի. և առն զկին իւր
մի թողուլ,,։ Ա՛ւ ապա յաւելու. "Ա՛յլոց ես պա-
տուիրեմ, ոչ եթէ տէր. եթէ ոք եղբայր՝ կին ունիցի
անհաւատ, և նմա հաճոյ լիցի բնակել ընդ նմա, մի
թողցէ զնա. և կին որ ունիցի այր անհաւատ, և նմա

կամ իցէ քննակեալ ընդ նմա, մի Թողցէ զնա ... ապա եթէ անհաւատն մեկնիցի, մեկնեսցի ,, : Այս ինքն զի յաղագս այլակրօն ամուսնացելոց ոչ սահմանեաց ինչ տէր, այլ եթող եկեղեցւոյ իւրաքանչիւր սահմանել ըստ պահանջելոց ժամանակին. վասն որոյ զԹողեալն ի տեառնէ՝ ես ինքն բացայայտեալ սահմանեմ, որպէս լուաք Յովհաննէս սրբոյ Թուի ինձ համեմատ օրինաց հաւատոյ և սիրոյ : Այսպա ուրեմն համարէր առաքեալն ունել եկեղեցւոյ իշխանութիւն՝ օրէնս և արգելս դնելոց պատկի :

Սուրբն Ղգնատիոս աստուածազգեալ գրէ ի Թղթին առ սուրբն Պօլիկարպոս. "Պարտ է ամուսնացս հրամանաւ եպիսկոպոսին առնել զհարսանիս զի ըստ Աստուծոյ լինիցին, և մի ըստ ցանկութեան. և ամենայն ինչ ի փառս Աստուծոյ ,, :

Եւ Տերտուղիանոս (յղ. պահէ. գլ. ժգ.) յիշէ զարգելս հարսանեաց ընդ անհաւատս, և ասէ. "Ոչ օրէնս առնել մեզ հարսանիս ընդ անհաւատս ,, : Եւ այլուր (առ ամուսին էր. գիրք բ. գլ. Թ.) "Անկեղեցի յօրինէ զհարսանիս ,, :

Ընդ այս բանք յայտ առնեն, զի է իշխանութիւն եկեղեցւոյ ի վերայ հարսանեաց : Ապա որոյ ժողովն Նիւսիոյ յամին 305. արգելու զինամուեաց ընդ միմեանս ամուսնութիւն, և որոյ ընկալեալ իցեն զսուրբ աստիճան :

Յոյնպէս և ժողովն Նէոկեսարիոյ յամին 314. սահմանէ զայս կանոն. "Որ երկուց եղբարց լեալ իցէ կնութեան, մի արձակեացի ի մահու իսկ առանց լուծանելոյ զամուսնութիւն ,, :

Եւ ժողովն Գանգատիոյ սահմանէ առևանգելոց՝ և զի և յետ հարսանեաց՝ դառնալ առ այնոսիկ, որոց յառաջագոյն խոստեցեալ իցեն :

Եւ սուրբն Նարսէհ ի կանոնական Թղթին առ Աքմ փիլոքիոս՝ պոռնկութիւն համարի զհարսանիս կրօնաւորաց և եկեղեցականաց :

Այս իշխանութիւն սահմանելոյ օրէնս և արգելս հարսանեաց՝ տեսանի միշտ յաջորդաբար եկեղեցւոյ. և ըստ այնմ սահմանադրութեան դատին ցարդ ամենայն եկեղեցիք զվաւերականութիւն և զօրինաւորութիւն ամուսնութեան :

Կն և յաշխարհական պետութեանց սահմանեալ օրէնք, և յաւելուն ևս ուրեք ուրեք ՚ի վաւերականութիւն կամ յանվաւերութիւն ամուսնութեան՝ նկատեալ զայն որպէս դաշն քաղաքական, մանաւանդ վասն ինդրոյ և իրաւանց յաջորդութեան և ժառանգութեան զաւակաց։ Այլ եկեղեցի ցայնվայր ևեթ լսէ նոցա, ցորվայր համաձայնք նոցին իւրոցն օրինաց. իսկ զանհամաձայնն մերժեալ է և մերժէ միշտ, հակառակ կացեալ Թագաւորաց և ինքնակալաց, և պաշտպան կացեալ աստուածային իրաւանց։ Ո՛չ դաշն ամուսնութեան, որպէս ասացաք, չէ պարզապէս քաղաքական՝ այլ վերաւեալ ՚ի Քրիստոս ՚ի խորհուրդ եկեղեցւոյ, և խորհրդոց ամենայնի իշխան և մատակարար եկեղեցի է։ Այլ քանզի ինդիրք այսպիսիք չեն երբեք լեալ յարևելս և յաղթիս մերում, վայրապար համարիմք յերկարել զայսցանէ։

ԳՕԴՈՒԱԾ Ե

Քաղագս բազմակնութեան։

Հարսանիք ՚ի սկզբանէ սահմանեցան միոյ առն ընդ միում ևեթ կնոջ։ Այս միութեան հակառակ է ունել այլ և այլ կանայս միանգամայն կամ յաջորդաբար։ Զաջինն կոչի բազմակնութիւն, միւսն երկրորդ ամուսնութիւն որ է ամուսնութիւն այրեաց։

Ո՛ ամուսնութիւն այրեաց ներէն օրէնք, ոչ միայն յերկրորդ հարսանիս, այլ և յերրորդ և ՚ի չորրորդ, և այլն. քանզի ասէ առաքեալն (Ա. Կոր. Է. 8.) "Այց ամուրեացն և այրեաց ասեմ, լաւ է նոցա թէ կացցեն իբրև զիս. ապա թէ ոչ ունիցին ժոյժ, ամուսնասցին. զի լաւ է ամուսնանալ քան զջեռնուլ"։ Այրուն թէպէտ լաւ ևս համարի զժուժկալութիւն, այլ ոչ դատապարտէ զերկրորդ հարսանիս. մանաւանդ ներէ իսկ զայն յայտնապէս յասելն. "Կին կապեալ է ցորչափ ժամանակս կենդանի է այր նորա. ապա եթէ ննջիցէ այր նորա, ազատ է ում կամիցի ամուսնանալ, բայց միայն տերամբք"։

Այս է վարդապետութիւն Հարց և ժողովոց, և ըստ

այամ վարդապետութեան վարեցաւ միշտ ընդհանուր եկեղեցի: Սակ որք՝ ի չարչ հակառակս ինչ Թուին ասել երկրորդ հարսանեաց, զայն ըստ մտաց առաքելոյն է իմանալ, այսինքն զի լաւագոյն և կատարեալագոյն է կալ և մնալ յայրիութեան, մանաւանդ որոց որդիք ի ցեն, քան միւսանգամ ամուսնանալ, զի մի ծուխ դժընդակ՝ ի մէջ մօրուն կամ հօրուն և ըրջուաց, և՝ ի մէջ նոցին իսկ ըրջուաց ծխիցի:

Սակ բազմակնութիւն է ունել միանգամայն այլ և այլ կանայս, զորոց Սամեք ետ զառաջինն օրինակ նախ քան զքրիստեղէն: Սակ յայսկոյս ջրհեղեղին ներեաց Աստուած զբազմակնութիւն. զի և արք բարիք՝ Աբրահամ և Յակոբ նախ քան զմովսիսական օրէնս, և՝ ի մովսիսական իսկ օրէնս Դաւիթ և այլք կալան այլ և այլ կանայս միանգամայն: Ասով քաջայայտ է զի չէր արգելեալ բազմակնութիւն՝ ի բնական օրինաց: Նայց Վրիստոս զարձոյց զամուսնութիւն յառաջին կարգն, ասով Եւթ կնաւ շատանալոյ: Սայն որոյ՝ ի նոր օրէնս աստուածային պատուիրանաւ արգելեալ է բազմակնութիւն: Սուեր յանդգնեցաւ վարդապետել և զայս մոլորութիւն, մանաւանդ՝ ի մեկնութեան ծննդոց, թէ ոչ և մի օրէնք արգելուն զբազմակնութիւն: Այս և մոլորութիւն նորա դատապարտեաց ժողովն տրիդենտեան:

Ի հարցանել փարիսեցւոց թէ արժանի իցէ առն զկին իւր արձակել, պատասխանի ետ Վրիստոս. "Ոիցէ ընթերցեալ ձեր՝ թէ որ հաստատեացն՝ ի սկզբանէ, արու և էգ արար զնոսա, և ասէ. վասն այսորիկ թողցէ այր զհայր և զմայր, և երթիցէ վհեա կնոջ իւրոյ, և եղիցին երկոքեան՝ ի մարմին մի,,. (Ա՛ՈՒ. ԺԹ. 4): Ա՛րդ՝ ի բազմակնութեան, ոչ երկուք՝ այլ բազումք լինին՝ ի մարմին մի. վասն որոյ ասէ Տերտուղիանոս. (ՅՂ. ԹՈՓՔՍԼՈՒԵԱՆ.) "Սամեք նախ երիւս ածեալ կանայս, զերեսին զուգեաց՝ ի մարմին մի,,: Սայն որոյ յառաքելոց անտի և այսր՝ աստուածային ամենայն եկեղեցիք կալան հաստատուն զօրէնս զայս ընդդէմ բազմակնութեան անտնօրինելի, և համարին զայն պոռնկութիւն: Յայտնի և զայս վարդապետութիւն՝ ի յաջորդ յօդուածիս է տեսանել:

Խակ կնոջ այլ և այլ արս ունել չէք երբէք լեալ նե-
րելն, զի ուղղակի հակառակ է քննական օրինաց. մի՝ զի
խափանէ զորդեծնութիւն, և միւս ևս՝ զի անստոյգ կա-
ցուցանէ զհայրութիւն, որով խափանէ զդաստիարա-
կութիւն որդւոց։

ԾՕԴՈՒԱԾ Զ

Զի անկռծանելի են հարսանիք։

Ա.րձակել զկին ոչ ուրեք է տեսանել՝ ի սուրբ գիրս
յառաջ քան զմովսիսական օրինս. Ա՛ստուած՝ ի ձեռն
Մովսիսի ներելով հրաման ետ այսմ, վասն խստասըր-
տութեան Իւրեից ըստ տէրունական բանին։ Ա՝ ասն ո-
րոյ թոյլտուութիւնս այս վասն խափանելոյ զմեծագոյն
չարիս էր, ուստի և նուազութիւն կատարելութեան։
Վ՝րիստոս փրկիչն մեր, որ առ՝ի կատարել զօրէնս եկն,
զայս ևս օրէնս դարձոյց յառաջին կարգն և կատարե-
լագործեաց։

Պսակ քրիստոնէից լծացեալ, ոչ ևս լուծանի. մահ
ևեթ հարսին կամ փեսայի կարէ լուծանել զայն։ Ա՛ն
ոչ շնութիւն կարէ լուծանել, որպէս Յովնք կարծեն.
զի՝ ի հարցանել փարիսեցւոց ցտէր՝ եթէ արժան իցէ
ումեք արձակել զկին իւր ըստ ամենայն ինչսս, այս-
ինքն որ ինչ յանցանս և գործեալ իցէ կնոջն, ետ պա-
տասխանի. (Մ՝ատ. ԺԹ. 3.) “Ո՞ր Ա՛ստուած զու-
գեաց, մարդ մի՛ մեկնեացէ։ Ա՛յեն ցնա. Խակ Մովսէս
ընդէր պատուիրեաց մեզ տալ թուղթ մեկնելոյ և ար-
ձակել։ Ա՛յ ցնոսա. Մովսէս վասն խստասրտութեան
ձերոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր. այլ՝ ի
սկզբանէ ոչ եղև այնպէս։ Ա՛սացց ասեմ ձեզ, զի ամե-
նայն որ արձակէ զկին իւր, և ոչ վասն պոռնկութեան,
և առնիցէ այլ, շնայ. և որ զարձակեալն առնէ՝ շնայ,,։

Ա՛րդ այսու բանիւ յայտնի է տեսանել, զի հարսա-
նիք անլուծանելի էին՝ ի սկզբանէ, ապա յաստուածային
իրաւանց ամուսնութիւն է անլուծանելի։

Դարձեալ ասէ. (Մ՝ուկ. Ժ. 11.) “Ա՛ւթէ այր ար-
ձակեացէ զկին իւր, և արասցէ այլ, շնայ. և կին եթէ

ելլել յառնէ իւրմէ, և եղիցի առն այլումբ, ընայ ,, : Եւ այլուր դարձեալ. (Ա Է. ԺՇ. 18.) "Ումեքնայն որ արձակէ զկին իւր և առնէ այլ, ընայ. և որ զարձակեալն առնէ, ընայ ,, : Ընդհանուր են պատգամքս տէրունական, և ոչ դէպս լինէ՝ի բաց առնուն : Այսպէս զի վասն պոռնկութեան ևս եթէ բաժանիցին այր՝ի կնոջէ, երկոքին ևս կապեալ մնան, չև մին՝ի նոցանէ մեռեալ : Այնպէս միջարկեալ՝ի տեառնէ բանն և ոչ վասն պոռնկութեանն՝ զարձակելն և եթ առնէ օրինաւոր, ոչ և զառնել այլ կին, որպէս՝ի միւս բանիցն է յայտ : Որ և առաքեալն բացայայտէ առ կորնթացիս. (Ա. Կոր. Է. 10.) "Այլ կանամբեացն պատուիրեմ, ոչ ես՝ այլ տէր, կնոջ յառնէ մի մեկնել. ապա եթէ մեկնեսցի, անայր մնասցէ :... Կին կապեալ է ցորչափ ժամանակս կենդանի է այր նորա. ապա եթէ ննջեցէ այր նորա, ազատ է ում կամիցի ամուսնանալ ,, : Եւ այլուր ասէ. (Հա. Է. 2.) "Կանղի կին առնակին՝ի կենդանի այր իւր կապեալ կայ օրինօք. իսկ եթէ մեռանիցի այրն, արձակեալ է յօրինաց առնն ,, :

Այդ եթէ չէ օրէն առն՝ յետ արձակելոյ իսկ զկին իւր՝ առնուլ այլ կին, որչափ ևս առաւել չիցէ օրէն այլ և այլ կանայս միանգամայն ունել : Այսպա ուրեմն և ըզբազմակնութիւն և զապօրէնն արուելսն օրէնք քրիստոսականք :

ՅՕԴՈՒԱԾ Է

Զի՝ի դէպս լինէ օրեն է ևկեղեցւոյ, առանց յոռնանելոյ զպատակ, բաժանիլ ևեթ զայր՝ի կնոջէ :

Կանղի սահման է տրիդենտեան ժողովոյ. զի "Որ ոք ասիցէ՝ եթէ սխալէ եկեղեցի՝ի հաստատելն օրինաւոր զբաժանումն առն՝ի կնոջէ վասն այլ և այլ պատճառաց ըստ առաքեալսն և ըստ քննակութեան առժամանակ մի և կամ՝ի սպառ, նզովեալ լինի ,, :

Ոմանք են գլխաւոր պատճառք, որոց վասն օրէն հաստատի եկեղեցի բաժանել զայր՝ի կնոջէ կամ զկին յառնել : Ա՝ախ՝ վասն պոռնկութեան միոյ յերկոցունցն. և

այս յայտ է՝ ի տերունական բանէն. զի եթէ չէ մարթ իմանալ զայն՝ ի միանջենաւոր լուծումն հարսանեաց, ապա հարկ է իմանալ՝ ի բաժանումն առժամանակեայ: Երկրորդ՝ ուրացութիւն միոյ յամուսնաց, վտանգաւ միւսոյն ևս գայթակղութեան. զի հրամայէ Քրիստոս խլել զակն, և զաջ՝ ի բաց հատանել, եթէ իցեն պատճառք գայթակղելոյ. և առաքեալն պատուիրէ՝ յառնէ հերձուածոյէ հրաժարել. (Տիտ. գ. 10): Երրորդ՝ որ գՀետ գայ երկրորդին, եթէ իցէ մին յամուսնաց հրապոյրք մեղաց միւսումն: Չորրորդ՝ երկոցունց ևս հաւանութիւն մեկնելոյ յիրերաց առ՝ ի կրօնաւորել, ըստ տերունեան բանին. "Ոչ ամենայն որ ոք եթող զկին կամ զորդիս... վասն անուան իմոյ, հարիւրապատիկ առցէ, և զկեանն յաւիտենականս ժառանգեսցէ,,: (Մտթ. ժթ. 29): Մարթ է և վասն ընդունելոյ առն զկարգ քահանայութեան բաժանել ամուսնաց՝ երկաքանչիւրոցն հաւանութեամբ. այլ ըստ եկեղեցական կանոնաց՝ պարտ է յայնժամ կնոջն ևս կրօնաւորել, և կամ եթէ անցեալ իցէ զաւուրբք՝ զուխտ մշտնջենաւոր ժուժկալութեան առնել առաջի եպիսկոպոսի:

Ո՛չ հանդուրժութիւնս զայս տեսական աստուածբանութեան, զոր ըստ տկարութեանս իմոյ յօրինեցի, կնքեմ խոստովանութեամբ սրտի և մտաց, զի եթէ ինչ՝ ի սմա ոչ ըստ ողջամիտ վարդապետութեան իցէ սպրդեալ յանզգաստս և ոչ՝ ի կամաց, անընդունելի է և ինձ, ոյր բովանդակ զգիրս զայս արկանեմ ընդ դատաստան կաթուղիկէ Հռովմէական սուրբ եկեղեցւոյ:

ՅԱՆԿ

ՃՈՒՏ Թ. Յաղագս մարդեղութեան 5
ՄԱՍՆ Ա. Յաղագս աւետեաց և ակնկալութեան Մեսիային . 6
ԳԼ. Ա. Զի խոստացաւ Աստուած 'ի հին օրէնս զՄեսիան, և նմա յամենայն ժամանակի ակնկալեալ ճնային Հրեայք 7
Առարկութիւնք 9
ԳԼ. Բ. Զի Մեսիան խոստացեալ յԱստուծոյ և ակնկալեալ 'ի Հրէից մի և եթ ոք էր 11
Առարկութիւնք 13
ԳԼ. Գ. Զի ժամանակ գալստեան խոստացելոյ Մեսիային հաւաստեաւ և ճշգրտիւ սահմանեալ է 'ի սուրբ գիրս 14
Առարկութիւնք 15
ԳԼ. Դ. կանխատեսութիւն Յակոբայ նահապետի զժամանակէ գալստեան Մեսիային 17
Առարկութիւնք 18
ԳԼ. Ե. Մարգարէութիւն Դանիէլի զժամանակէ գալստեան Մեսիային 19
Առարկութիւնք 22
ԳԼ. Զ. Մարգարէութիւնք Անգեայ և Մաղաքիայ զժամանակէ գալստեան Մեսիային 23
Առարկութիւնք 25
ԳԼ. Է. Զի որ ինչ նշանք 'ի մարգարէիցն ընծայեալք Մեսիային՝ ցուցանեն յայտնապէս զգալուստ նորա . 26
Առարկութիւնք 29
ԳԼ. Ը. Զի Յիսուս Նազովրեցի ճշմարիտ Մեսիան է խոստացեալ 'ի սուրբ գրոց և ակնկալեալ 'ի Հրէից . 32
Առարկութիւնք 33
ԳԼ. Թ. Զի գաւտակնիքն ընդդէմ Քրիստոսի յանիրաւի և ոչ ըստ գաւտաստանական օրինաց տուեալ, և ան-

զԹաբար 'ի կատարուածն ածեալ, ապացոյց էր զոլոյ նորա ձշմարիտ Մեսիա 37

Առարկութիւնք 40

ՄԱՄՆ Բ. *Յաղագս խորհրդոյ մարդեղութեան ընդդէմ հերետիկոսացն 43*

ԳԼ. Ա. *Յաղագս աստուածային բնութեանն Քրիստոսի . 44*

Առարկութիւնք 47

ԳԼ. Բ. *Յաղագս մարդկային բնութեանն Քրիստոսի . . 52*

ՅՕԳ. Ա. *Զի Բանն Աստուած զմարդկային բնութիւն համագոյակից մերում էառ ամբողջ և անթերի . . 53*

ՅՕԳ. Բ. *Զի մարմինն Քրիստոսի ձշմարիտ էր և հաւատեաւ, և ոչ առ աչօք ինչ և կեղծ . . . —*

Առարկութիւնք 54

ՅՕԳ. Գ. *Զի մարմինն Քրիստոսի ոչ 'ի յերկինից ածեալ և ոչ օդեղէն ինչ է, այլ նիւթեղէն, մարդկային և առեալ 'ի կուսէն 55*

Առարկութիւնք 56

ՅՕԳ. Դ. *Զի Բանն Աստուած էառ և զՀոգի բանական . 57*

Առարկութիւնք 58

ՅՕԳ. Ե. *Զի Քրիստոս ըստ մարդկային բնութեանն պայմանի 'ի նեղքոյ անկեալ էր կրից և ցաւոց . . . 59*

Առարկութիւնք 60

ՅՕԳ. Զ. *Թէ իւր ապականացու և իւր անապական ասիցէ մարմինն Քրիստոսի 61*

ՅՕԳ. Է. *Զի 'ի մեռանելն Քրիստոսի, անբաժանելի էր աստուածութիւն նորա եթէ 'ի Հոգւոյն, և եթէ 'ի մարմնոյն 64*

ՅՕԳ. Ը. *Զի 'ի Հոգւոյն սրբոյ յղացաւ Քրիստոս, և ծնաւ 'ի կուսէն, անարատ մնալով կուսութեան նորա . 66*

Առարկութիւնք 68

ԳԼ. Գ. *Յաղագս երկուց բնութեանցն անձնաւորապէս միաւորութեան 'ի Քրիստոս 70*

ԳԼ. Դ. *Յաղագս զի մի եւեթ անձն է 'ի Քրիստոս, և այն աստուածային 72*

Առարկութիւնք 75

ԳԼ. Ե. *Զի կոյս Մարիամ ձշմարտապէս կոչի և է աստուածամայր 78*

Առարկութիւնք 80

ԳԼ. Զ. *Զի Քրիստոս բնութեամբ է որդի Աստուծոյ, և ոչ ըստ որդեգրութեան 83*

Առարկութիւնք 85

ԳԼ. Է. *Յաղագս զանազանութեան երկուց բնութեանցն 'ի Քրիստոս յետ անձնաւորապէս միաւորութեանն . 88*

Առարկութիւնք · · · · · · · 95

ՑՕԴ· Ա· Արդեօք սուրբն Կիւրեղ և սուրբն Լեւոն լոյծն միաբան 'ի վարդապետութեան, կամ սուրբ Ժողովն Քաղկեդոնի ընդ սուրբ Ժողովոյն Եփեսոսի · 98

ՑՕԴ· Բ· Արդեօք օրէն լոյծ ասել զՔրիստոս յերից գոյացութեանց · · · · · · · 100

ՑՕԴ· Գ· Չի ընդունելի է պարտաւորութիւն կամ միաձնակատնութիւն 'ի Քրիստոս · · · · · 102

ՑՕԴ· Դ· Արդեօք օրէն լոյծ, որպէս ասեմքն Աստուած մարդացեալ, ասել նոյնպէս և մարդ աստուածացեալ· 104

ԳԼ· Ը· Յաղագս այլ և այլ կամաց ևնեργործութեանց Քրիստոսի · · · · · · · 108

Առարկութիւնք · · · · · · · 112

ԳԼ· Թ· Յաղագս ազատութեանն Քրի ըստ մարդկութեան · 115

ԳԼ· Ժ· Յաղագս մարդկային մտացն Քրիստոսի · · 117

ԳԼ· ԺԱ· Յաղագս հաղորդութեան յատկութեանց 'ի Քրիստոս · · · · · · · 119

Առարկութիւնք · · · · · · · 122

ՑՕԴ· Ա· Չի մարթ է ուղղափառապէս ասել զմի յԵրրորդութենէն խաչեալ մարմնով · · · · 125

ՑՕԴ· Բ· Յաղագս երկբսրբեան սրբասացութեանն · · 127

ՑՕԴ· Գ· Մարթ լոյծ արդեօք ողջմտութեամբ ասել զաստուածութիւն կամ զբնութիւն բանին մարմնացեալ · · · · · · · 132

ԳԼ· ԺԲ· Չի պարտ է աստուածայինն ընծայել պաշտօն մարդկութեանն Քրիստոսի · · · · · 134

ԳԼ· ԺԳ· Յաղագս իշխանութեանցն Քրիստոսի · · · 137

ԳԼ· ԺԴ· Յաղագս վաստակոցն Քրիստոսի 'ի հաստուցումն մեղաց մարդկան · · · · · · · 141

Առարկութիւնք · · · · · · · 143

ԳԼ· ԺԵ· Յաղագս պէսպէս պաշտամանց · · · · 148

ՑՕԴ· Ա· Յաղագս պաշտաման սրբոյ խաչին · · · 149

Առարկութիւնք · · · · · · · 152

ՑՕԴ· Բ· Յաղագս յարգութեան սրբոյ · · · · 153

Առարկութիւնք · · · · · · · 155

ՑՕԴ· Գ· Յաղագս յարգութեան նշխարաց սրբոց · · 162

Առարկութիւնք · · · · · · · 164

ՑՕԴ· Դ· Յաղագս յարգութեան պատկերաց · · · 167

Առարկութիւնք · · · · · · · 169

ՑՕԴ· Ե· Յաղագս գերյարգութեան Տիրամօրն · · · 172

ԳԼ· ԺԶ· Յաղագս պատճառի մարդեղութեան · · · 178

ԳԼ· ԺԷ· Յաղագս հարկի մարդեղութեան · · · · 180

ԳԼ· ԺԸ· Յաղագս պատշաճողութեան մարդեղութեան · 183

ԳԼ· ԺԹ· Զի զնորհուրդ մարդեղութեան ոչ է մարթ ցուցանել լուսով բանի, այլ և ոչ ընդդէմ է այն լուսոյ բանին 188

ՁԱՈ Ժ· Յաղագս շնորհաց 190

ՄԱՄՆ Ա· Յաղագս ներգործական շնորհաց, և բաժանումն նորին 193

ԳԼ· Ա· Յաղագս կարևորութեան շնորհաց . . . 195

ՑՕԴ· Ա· Զի առ ամենայն և իւրաքանչիւր գործս փրկութեան կարևոր են շնորհք ներքին լուսոյ և ազդեցութեան Հոգւոյն սրբոյ 195

Առարկութիւնք 197

ՑՕԴ· Բ· Զի ՚ի պայմանի անկեալ բնութեանս չկարէ մարդ առանց շնորհաց Աստուծոյ ճանաչել բազում ինչ ՚ի բնական Ճշմարտութենանց, և ոչ զամենայն պատուխանա Աստուծոյ կատարել, և ոչ փորձութեանց ծանունց յաղթել 200

Առարկութիւնք· 202

ՑՕԴ· Գ· Զի առանց լուսոյ և ազդեցութեան ներնատակ Հոգւոյն սրբոյ չկարէ մարդ՝ ոչ հաւատալ և ոչ յարատևել ՚ի հաւատս 204

Առարկութիւնք· 206

ՑՕԴ· Դ· Զի կարօղ է մարդ ՚ի պայմանի անկեալ բնութեա առանց նպատակից շնորհացն Աստուծոյ ճանաչել զՃշմարտութիւնս ինչ բնականս, կատարել զորինս ոչ դժուարինս բնութեան, և յաղթել բարոյապէս թեթև փորձութեանց . . . 210

Առարկութիւնք· 211

ՑՕԴ· Ե· Զի կարէ այր անհաւատ առնել ինչ բարոյապէս բարի, վասն որոյ ոչ ամենայն գործք անհաւատից չարք են կամ մեղք 212

Առարկութիւնք· 215

ՑՕԴ· Զ· Զի կարէ մարդ ներգործական շնորհօք՝ միանչ և իսկ արդարացեալ՝ առնել գործս բարիս գերբնապէս. վասն որոյ ոչ ամենայն գործք մեղաւորաց են մեղանչականք 217

Առարկութիւնք· 218

ՑՕԴ· Է· Զի չկարէ արդարն առանց առանձինն շնորհացն Աստուծոյ զգուշանալ յամենայն կեանս իւր յամենայն մեղաց, ևս և ՚ի ներքինէս· 219

Առարկութիւնք· 221

ՑՕԴ· Ը· Զի չկարէ արդարն առանց առանձինն շնորհացն Աստուծոյ յընկալեալ արդարութենանն յարատևել 224

Առարկութիւնք 225
ՅՕԴ. Թ. Զի ձրի են ամենևին ընծայքն, և ոչ իւիք բնական գործով մարթ է արժանաւորել այնմ, ոչ ըստ վաստակոց և ոչ ըստ պատշաճի . . . 227
Առարկութիւնք 228
ԳԼ. Ը. Յաղագս էութեան և բաժանմանն ներգործական շնորհայ ըստ գործակցութեան ազատ կամաց . . 231
ՅՕԴ. Ա. Յաղագս գոյութեան գործունեայ շնորհաց . . 232
ՅՕԴ. Բ. Թէ յորմէ՞ւմ իմիք գործունեայ շնորհայն կոչէ զբուսութիւն 234
ՅՕԴ. Գ. Զի գործունեայ շնորհքն ոչ հարկաւորեն զկամն . 237
Առարկութիւնք 239
ՅՕԴ. Դ. Զի գործունէութիւն շնորհաց ոչ՝ ի հաւանութենէ կամաց է, ոչ՝ ի պատեհութենէ ուսոյք, և ոչ՝ ի բնական ինչ նախաշարժութենէ . . . 241
ՅՕԴ. Ե. Զի գործունէութիւն շնորհաց՝ ի համազոր քաղցրութեան է 244
ԳԼ. Գ. Յաղագս բաւական շնորհաց 249
ՅՕԴ. Ա. Զի գոն խնդալէս բաւական շնորհք . . . 250
Առարկութիւնք 251
ՅՕԴ. Բ. Եցէ երբէք զի բաւական շնորհք լինիցին արդասաւոր 253
Առարկութիւնք 254
ԳԼ. Դ. Յաղագս տուչութեան շնորհաց 255
ՅՕԴ. Ա. Զի արդարոց ամենեցուն պարգևին շնորհք կարևորք՝ ի պահպանութիւն պատուիրանացն Աստուծոյ . 255
Առարկութիւնք 257
ՅՕԴ. Բ. Զի հաւատացելոց ամենեցուն մեղաւորաց, ևս և յամառելոց՝ ի մեղս և կուրացելոց, սայ Աստուած բաւական շնորհս՝ ոչ միայն առ՝ ի զգուշանալ յառաւելագոյնս մեղանչելոց, այլ և առ՝ ի զգալ՝ ի գործեցելոցն մեղաց 258
Առարկութիւնք 259
ՅՕԴ. Գ. Զի անհաւատից իսկ առհասարակ պարգևին բաւական շնորհք առ՝ ի փրկութիւն . . . 262
Առարկութիւնք 264
ՅՕԴ. Դ. Բովանդակութիւն ասացելոցս զբաւական և զգործունեայ շնորհաց 266
ՅՕԴ. Ե. Զի յաստուածակոյս կոչմանէ պատրաստեալ է և մանկանց անկնութք վախճանելոց նպատաս բաւական առ՝ ի փրկութիւն 267
Առարկութիւնք 268
ՄԱՄՆ Բ. Յաղագս արքարար շնորհաց 269

ԳԼ· Ա· Յաղագս էութեան արքայարի շնորհացդ, կամ արդարանալոյ մեղաւորի · · · · · · · 271

ՅՕԳ· Ա· Զի յարդարանալ մեղաւորին՝ մեղք նորա իսկապէս թողեալ, և ջնջին 'ի սպառ · · · 272

ՅՕԳ· Բ· Զի մեղաւորք ոչ թողութեամբ եւեթ մեղաց արդարանան, այլ և շնորհօք և սիրով որ 'ի սիրտս նոցա 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ հեղանին և ունայնանան · · · · · · · · · 273

ԳԼ· Բ· Յաղագս որ ինչ պատրաստութիւնք առ արքայարի շնորհս են կարևորք · · · · · · 276

ՅՕԳ· Ա· Զի առ 'ի առանալ զարդարութիւն՝ բաց 'ի հաւատոց խնդրին և այլ պատրաստութիւնք, զի հաւատք եւեթ չեն բաւական յարդարութիւն · 277

ՅՕԳ· Բ· Զի հաւատք՝ որ խնդրի առ 'ի առանալ զարդարութիւն՝ ոչ է վստահութիւն եւեթ 'ի թողութիւն մեղաց, այլ ճշմարիտ խոստովանութիւն ամենայնի՝ որ ինչ յԱստուծոյ յայանեալ · · · 279

ԳԼ· Գ· Յաղագս յաւակութեանց արդարութեան · · 281

ՅՕԳ· Ա· Զի ոչ ոք առանց յայանութեանն Աստուծոյ կարէ վստահ լինել առուգութեամբ հաւատոյ ընդ արդարութիւն իւր, վասն որոյ և ոչ պարտ է նմա հաւատալ իբրև 'ի հաւատոց՝ զի էյէ արդարացեալ · · · · · · · · · 281

Առարկութիւնք· · · · · · · 283

ՅՕԳ· Բ· Զի զընկալեալն արդարութիւն մարթ է պահել և գործովք բարեաց աճեցուցանել, վասն որոյ և ոչ յամենեսեան հաւատար է այն · · · · · 285

ՅՕԳ· Գ· Զի մարթ է կորուսանել զարդարութիւն, և կորնչի այն մահուշափ մեղօք · · · · · · 287

ԳԼ· Դ· Յաղագս վստահոց · · · · · · · 288

ՅՕԳ· Ա· Զի արդարք գործովք բարեաց, զորս գործեն շնորհօք, արժանաւորին յաւիտենական փառաց և յաւելուածոյ նորին · · · · · · · 290

Առարկութիւնք· · · · · · · 292

ՅՕԳ· Բ· Որ ինչ առ վստահս կարևոր պայմանք · · 294

ՅՕԳ· Գ· Յաղագս թէ որ ինչ իրաց կարէ ոք արժանաւոր լինել վստահովք · · · · · · · 296

ՅՕԳ· Դ· Յաղագս պատճառաց սրբարար շնորհացդ · · 298

ՃԱՌ ԺԱ· Յաղագս խորհրդոց առհասարակ · · · · 299

ԳԼ· Ա· Յաղագս թէ քանի և որք էցեն խորհուրդք 'ի նոր օրէնս · · · · · · · · · 300

Առարկութիւնք· · · · · · · 302

ՅՕԳ· Ա· Յաղագս նիւթոյ և ձևոյ խորհրդոց · · · 305

ՅՕԴ· Բ· Յաղագս արդասեաց խորհրդոց · · · · 306
Առարկութիւնք · · · · · · · 308
ՅՕԴ· Գ· Յաղագս որ ինչ պատրաստութիւնք առ ընդունելութիւն խորհրդոց կարևորք · · · · 312
ՅՕԴ· Դ· Յաղագս պաշտօնէից խորհրդոց · · · · 313
ՅՕԴ· Ե· Որ ինչ պատրաստութիւնք կարևորք ՚ի պաշտօնեայն· 314
Առարկութիւնք· · · · · · · 316
ԳԼ· Բ· Յաղագս մկրտութեան · · · · · 317
Առարկութիւնք· · · · · · · 318
ՅՕԴ· Ա· Յաղագս նախոյ և ձևոյ մկրտութեան · · · 320
ՅՕԴ· Բ· Յաղագս արդասեաց մկրտութեան · · · 322
Առարկութիւնք· · · · · · · 323
ՅՕԴ· Գ· Յաղագս պաշտօնէից մկրտութեան · · · 325
Առարկութիւնք· · · · · · · 326
ՅՕԴ· Դ· Յաղագս երախայից · · · · · · 328
Առարկութիւնք· · · · · · · 329
ԳԼ· Գ· Յաղագս դրոշմի · · · · · · 334
Առարկութիւնք· · · · · · · 335
ՅՕԴ· Ա· Յաղագս նախոյ և ձևոյ դրոշմին · · · · 338
ՅՕԴ· Բ· Յաղագս արդասեաց դրոշմին · · · · 339
ՅՕԴ· Գ· Յաղագս պաշտօնէից և ընդունելեաց դրոշմին · · 341
ԳԼ· Դ· Յաղագս հաղորդութեան · · · · · 342
Առարկութիւնք· · · · · · · 343
